



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

ԽԱՉԻԿ ԲԱԴԻԿՅԱՆ

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵՁՎԻ
ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ
ՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ**

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 2008

ՀՏԴ 809 198.1 (07)
ԳՄԴ 81 23 ց7
Բ 145

*Տպագրվում է Երևանի «Հրաչյա Աճառյան» համալսարանի
գիտական խորհրդի որոշմամբ
Գիրքը տպագրության է երաշխավորել Երևանի «Հրաչյա
Աճառյան» համալսարանի հայոց լեզվի ամբիոնը*

*Խմբագիր՝ Բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ Շողիկ Ստեփանյան
Գրախոս՝ Բանասիրական գիտությունների թեկնածու
Զարիկ Աղաջանյան*

Բաղիկյան Խ. Գ.

Բ 145 *Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսությունն տեսության
և գործնական աշխատանքների ուսումնական ձեռնարկ: 2008,
364 էջ:*

*Բուհական ձեռնարկում շարահյուսությունն տեսության տե-
սական հարցերի հետ առաջին անգամ տրվում են նաև գործ-
նական աշխատանքներ, յուրաքանչյուր թեմայից ու ենթաթե-
մայից հետո տրվում են ամփոփիչ հարցեր ու առաջադրանքներ
և հանձնարարվում են վարժություններ:*

ԳՄԴ 81 23 ց7

ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Լեզուն մարդկանց փոխադարձ կապի ու հաղորդակցման միջոց է. մարդիկ հաղորդակցվում են թե՛ բանավոր և թե՛ գրավոր լեզվով: Գրավոր լեզուն միջոց է նաև սերունդների կապի համար, որի միջոցով մարդիկ իրենց փորձն ու գիտելիքները հաղորդում են գալիք սերունդներին, իրենք էլ հաղորդակից են լինում նախորդ սերունդների թողած գիտական ու մշակութային ժառանգությունը:

Լեզուն ամբողջական համակարգ է. այն կառույց է, որը համեմատվում է շենքի հետ: Ինչպես որ շենքի կառուցման համար անհրաժեշտ են շինանյութեր, և այդ շինանյութերը մշակող ու հղկող, ձևավորող ու շարող վարպետներ, այդպես էլ, որպես լեզվի շինանյութ, ծառայում են հնչյուններն ու բառերը: Իսկ դրանց ձևավորման՝ նախադասություն ու խոսք կառուցելու վարպետի դերը կատարում է **քերականությունը՝** իր հղկված ու մշակված օրենքներով ու կանոններով: Քերականությունն ունի երկու բաժին՝ **ձևաբանություն**, որն զբաղվում է լեզվի անվանողական միավորներով՝ **բառերով** ու դրանց ձևափոխություններով և **չարահյուսություն**, որն զբաղվում է բառակապակցություններով և բառերից **նախադասություններ** կազմելու հարցերով:

Մենք խոսում ու հաղորդակցվում ենք նախադասություններով, որոնք կազմված են բառերից՝ քերականական համապատասխան կանոններով. դա այն է, ինչ լեզվաբանություն մեջ կոչվում է **չարահյուսություն**:

Ասվեց, որ նախադասությունները կազմվում են բառերից, որոնք անվանում են առարկաներ, հատկանիշներ, երևույթներ, գործողություններ: Օրինակ, հետևյալ բառերն առանձին-առանձին միտք չեն արտահայտում. **հայ, լեզու, աշխարհ, հնազույն, ինքնատիպ, և, է, բայց** երբ այդ բառերը քերականորեն ձևափոխությունների ենթարկվում՝ Նոլովում ենք, խոնարհում և կապակցում ենք իրար հետ, ստանում ենք ամփոփ միտք, հասկանում ենք, թե ինչի մասին է խոսքը, խոսողը ինչ է ուզում ասել. ահա այդ միտքը՝

Հայոց լեզուն աշխարհի հնագույն և ինքնատիպ լեզուներից է:

Այս ամփոփ միտք արտահայտող նախադասությունն մեջ կան բաներ, որոնք իրար հետ են սերտ կապի մեջ՝ **Հայոց լեզու, աշխարհի լեզուներ, հնագույն ու ինքնատիպ լեզուներ:**

Ընդգծվածները բառակապակցություններ են, որոնք մտնում են նախադասություն կազմի մեջ, հետևաբար շարահյուսություն քննությունն նյութ են: Այստեղից էլ՝

Շարահյուսությունը քերականության այն բաժինն է, որն ուսումնասիրում է նախադասություններն ու բառակապակցությունները, նրանց կազմությունը, տեսակներն ու կիրառությունները խոսքում:

Առաջադրանք 1. Բերված բառերը այնպես կապակցե՛ք իրար հետ, որ ավարտուն, ամփոփ միտք ստացվի:

Ժամանակ, ակունքներ, գալ, դու, իմ, հայ, լեզու: Երգվել, պահանջել քեզ, և, փոխանցել, սերնդեսերունդ, սրբություն, որպես: Երգվել, արյուն, ու, ավյուն, տանել, հաղորդել, գալիք, սերունդ: Դու, պահել, դար, շարունակ, մեր, ազգ:

Առաջադրանք 2. Բառերի անկարգ դասավորությունը այնպե՛ս կարգավորե՛ք ու կապակցե՛ք, որ միտք ստացվի:

և, հայկական, աշխարհ, գիր, հնագույն, է, գրերից, ինքնատիպ: 405 թիվ, է, Մեսրոպ Մաշտոց, այն, ստեղծել: պահել, գիր, մեզ, հայոց շարունակ, դարեր: պարտավոր, մենք, ենք, ու, սիրել, սովորել, հանձնել, գալիք, այն, սերունդներ: առաջին, է, նախադասություն, հայերեն. «Ճանաչել զիմաստություն և զխրատ, իմանալ զբանս հանձարոյ»:

ԼԵԶՎԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐ ԵՎ ԿԱՂԱՊԱՐՆԵՐ

Ասվեց, որ լեզուն կառուցվածքային համակարգ է, իսկ յուրաքանչյուր կառուցվածք ունի իր մակարդակներն ու կաղապարները: Դրանք հատուկ են նաև լեզվին:

ԼԵԶՎԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ

Լեզվական մակարդակները լեզվի կառուցվածքի առանձին բաղադրիչներն են, որոնք փոխկապակցված են իրար հետ (ցածրից

բարձր) և ծառայում են միևնույն նպատակին՝ կազմել նախադասություն և կապակցված խոսք:

Լեզվական մակարդակներն են՝

Հնչույթային – սրա միավորներն են **Հնչույթները**, որոնցով կազմվում են նվազագույն իմաստակիր միավորներ (բառեր, ածանցներ, վերջավորություններ):

ձևույթային – անմիջապես գերադաս է **Հնչույթայինին**. սրա միավորները **ձևույթներն** են, որոնք իմաստի ու ձևի միասնություն կազմող նվազագույն միավորներն են և լինում են **Հիմնական** (արմատներ) և **երկրորդական** (ածանցներ, վերջավորություններ, հոգեր):

Բառային – այս մակարդակի միավորները **բառերն** են՝ **խոսքի մասերը**:

Ձևաբանական մակարդակը միաժամանակ գերադասվում է **բառային** ու **ձևույթային** մակարդակներին. սրա միավորներն են **քերականական ձևերը**, որոնք ստեղծվում են բառերի ու քերականական ձևույթների համակցություններով: Այս մակարդակը ծառայում է **չարհչուսական** մակարդակի միավորներ կազմելուն:

Շարահյուսական մակարդակը անմիջապես գերադասվում է **ձևաբանականին**, ինչպես նաև բառայինին. սրա միավորները **բառակապակցություններն** ու **նախադասություններն** են:

Վերչարահյուսական (տեքստային) – Սա լեզվական կառուցվածքի ամենաբարձր մակարդակն է, որի միավորներն են՝ **պարբերությունը, ասույթը, տեքստը**:

ԼԵԶՎԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐ (ՄՕՃԵԼԵԾ)

Սա լեզվի կառուցվածքային միավոր է, լեզվի բաղադրիչ տարրերի հետևողական շարքն է, այն հատուկ է լեզվի բոլոր մակարդակներին, ըստ այդմ էլ լինում է **բառակազմական, ձևաբանական, չարահյուսական**:

Բառային մակարդակում քննվում են լեզվի բառակազմական կաղապարները՝ բառի **հիմնական** և **երկրորդական բառակազմական** ձևույթները, այսինքն՝ բառակազմական կաղապարները կազմվում են **արմատներից, հոդակապից և ածանցներից** (խաղող + ա+ գործ + ություն):

Ձևաբանական մակարդակում գործ ունենք բառաձևի **հիմք + վերջավորություն** կաղապարի հետ: Բառահիմքը կարող է լինել **պարզ**

(Ջուր-ը, ջր-ի, ջր-ից, ջր-եր, ջր-եր-ի, ջր-եր-ից) և բաղադրյալ (ջրաման-ը, ջրաման-ից, ջրաման-ներ-ից):

Պետք է մեկընդմիջտ հիշել, որ **ածանցները** նույնպես մտնում են **բառահիմքի մեջ** (անմարդասիրություն-ից, դժբախտություն-ը):

Ըստ վերջավորությունների քանակի, պարունակության էլ հիմքերը կարող են լինել **պարզ հիմք** (եբբ ունի մեկ վերջավորություն) և **հարաբերական հիմք** (եբբ ունի մեկից ավելի վերջավորություններ, որոնք հիմքին միանում են հետևյալ հաջորդականությամբ՝ հոգնակերտ մասնիկներ, հոլովական ձևույթներ և հոդեր (դասագրք + եր + ից + ս, լեռ + ներ + ը):

Քայական վերջավորություններն են (գր-ել, գր-ած, գր-ող, գր-ելիս, ...) և խոնարհման վերջավորությունները:

Շարահյուսական մակարդակի կաղապարներն էլ կազմվում են բառաձևերից՝ իրենց ձևափոխություններով ու քերականական կարգերով: Շարահյուսական մակարդակում գործ ունենք հետևյալ կաղապարների հետ՝

Քանի որ նախադասությունը ամենից առաջ բնորոշ է ստորոգման քերականական կարգը, հետևաբար շարահյուսական հիմնական կաղապարն է **ԵՆԹԱԿԱ + ՍՏՈՐՈԳՅԱԼ** (Գարունը եկավ: Եղանակը տաք է: Զյունը ջուր դարձավ):

ՈՐՈՇԻՉ + ՈՐՈՇՅԱԼ (խելացի ուսանող, խմելու ջուր, կարմիր վարդ, ծաղկած ծառ):

ՀԱՏԿԱՑՈՒՑԻՉ + ՀԱՏԿԱՑՅԱԼ (ուսանողի գիրք, գրքի թերթ, հոր զավակ, քո պատասխանը, խոսողի ելույթը):

ՍՏՈՐՈԳՅԱԼ + ԽՆԴԻՐ կամ **ՊԱՐԱԳԱ** (Երեխան ցնցուղով ջրում է ծաղիկները):

Շարահյուսական կաղապարները գործում են նաև **բառակապակցություններում** (ազատ և կայուն), վերաիմաստավորված և ոչ վերաիմաստավորված:

Շարահյուսական կաղապարը իր մեջ ներառում է լեզվական միավորների վերևում նշված բոլոր մակարդակներն ու կաղապարները, որովհետև բառը մի կողմից բառային միավոր է, մյուս կողմից ձևաբանական և շարահյուսական միավոր՝ խոսքի մաս և նախադասություն անդամ:

Այստեղից էլ՝ որպես շարահյուսություն նվազագույն միավոր՝ **ԾՆՄ**, դիտվում է բառը, իսկ շարահյուսություն առավելագույն միավոր՝ **ՇԱՄ**, նախադասությունը:

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ*

Յուրաքանչյուր լեզու, որպես համակարգ, ունի իր շարահյուսական կապակցություն միջոցներն ու եղանակները, որոնք անշուշտ տարբերվում են իրարից:

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ – Բառերը իրար հետ միանալու և նախադասություններ կազմելու համար կապակցվում են 4 միջոցներով՝

1. **Ձևույթային** – Սրա տակ քննվում են թեքույթավորումը, հերթագայությունը (բառերի թեքումը), ինչպես նաև **հոգնակերտ ու առկայացման** ցուցիչները:

2. **Բառային** – Սրա տակ քննվում են սպասարկու բառերը՝ **կապերն** ու **շաղկապները** որպես կապակցություն միջոց:

3. **Շարահասություն** – Սրա դերը բառակապակցությունների և նախադասություն կազմող միավորների (բառերի) տվյալ լեզվի համար ընդունված կարգն է (սրա մասին խոսվելու է նախադասության և նրա անդամների առնչությամբ):

4. **Հնչերանգը** նույնպես կապակցություն միջոց է. առանց հնչերանգային ավարտվածության նախադասություն չկա: Հնչերանգով է պայմանավորված խոսքի ուրիշը, տեմպը, մեղեդայնությունը, խոսքերանգը, դադարը և տրամաբանական շեշտը (սրա մասին նույնպես խոսվելու է «Նախադասություն» բաժնում):

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ – Սրանք նույնպես 4-ն են՝ **Համաձայնություն, առդրություն, խնդրատություն և շարահարություն** կամ **զոդվածություն**:

1. **Համաձայնություն** – Սա այն եղանակն է, երբ նախադասության նաև բառակապակցության ստորադաս անդամը գերադասին համապատասխանում է քերականական կարգերով՝ **դեմքով, թվով, հոլովով**:

2. **Առդրություն** – Այս դեպքում ստորադաս անդամը գերադասից կախվածության մեջ չէ (որոշիչ + որոշյալ, ստորոգյալ + պարագա):

3. **Խնդրատություն** – Սա կապակցության այն եղանակն է, որի դեպքում լրացումը (ստորադաս անդամը) գերադաս անդամի (հիմնականում բայ-ստորոգյալի) թելադրանքով զրկվում է որևէ հոլովով կամ ձևավորվում է կապերի միջոցով (Խոսում են Լոովա հին-հին քաջերից կամ քաջերի մասին):

* Սրանք վերաբերյալ մանրամասնորեն տե՛ս Ա. Պապոյան, Խ. Բաղդիկյան, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, ԵՊՀ, 2003 թ., էջ 5-37:

Խնդրառուծյունը հատուկ է հիմնականում բայերին. այն լինում է ուժեղ և թույլ: Ուժեղը հատուկ է հատկապես ներգործական ու կրավորական սեռի բայերին: Խնդիրներ են առնում նաև մյուս խոսքի մասերը:

Արժույթ – Արժույթը բայի կապակցելիությունն է ենթակաների, խնդիրների ու պարագաների հետ (Գ. Ջահուկյան): Ըստ այդմ էլ բայերը կարող են լինել **զրոարժույթ** – սրանք միադիմի բայերն են, որոնք ենթակա էլ չեն ունենում (մթնել–մթնեց, ցրտել–ցրտեց, շոգում է–շոգ է), **միարժույթ** – սրանք վերացական (դառնալ, թվալ, համարվել...) և որոշ չեզոք սեռի (ենթարկվել, ամաչել, վախենալ, հմտանալ...) բայերն են, **բազմարժույթ** – սրանք այն բայերն են, որոնք կարող են մի քանի խնդիրներ ու պարագաներ ստանալ (դիտել, պատկել, դիմավորել, հեռանալ...):

4. **Շարահարուծյուն և զորում** – Այս եղանակը հատուկ է թե՛ պարզ և թե՛ բարդ նախադասություններին. եթե դրանց բաղադրիչ միավորները կապակցվում են շաղկապներով, ուրեմն **զորվածավոր** են, իսկ առանց դրանց շարահարական են:

ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ*

Մեզ չընթացած անձերը, առարկաներն ու երևույթները ունեն իրենց հատկանիշները. օրինակ **ծառը** կարող է ծաղկած լինել, տերևաթափ լինել, աշնանային լինել, չորացած լինել, բերքատու լինել և այլն: Ուրեմն առարկայի և դրան բնորոշ հատկանիշի անվանումների համատեղ գործածությունը **բառակապակցություն** է, այսպես՝ **ծաղկած ծառ, բերքատու ծառ, աշնան ծառ, չորացած ծառ** և այլն: Կամ երեխան կարող է խելոք լինել, ընթերցասեր լինել, կարող է կարդալ, խաղալ և այլն: Այստեղ էլ ասենք, որ **զործողությունը նույնպես հատկանիշ է, որը հատուկ է առարկային:**

Այժմ տեսնենք, թե ի՞նչ է **բառակապակցությունը** և ի՞նչ է **նախադասությունը:**

Վերևում բերված օրինակներում (ծաղկած ծառ, կարդացող երեխա) ունենք առարկա և անձ իրենց բնորոշ հատկանիշներով, հե-

* Ինչպես ոտս, այնպես էլ հայ լեզվաբանություն մեջ միասնական կարծիք չկա **բառակապակցությունների** բնորոշման, դրանց տեսակների, նախադասության մեջ դրանց՝ նախադասության անդամների հետ ունեցած փոխհարաբերությունների և այլ հարցերի վերաբերյալ: Գրքում մենք առաջնորդվել ենք ակադեմիկոս Վ. Վինոգրադովի տեսությունը (տե՛ս **В. В. Виноградов, Вопросы изучения словосочетаний (Вопросы языкознания, М., 1954, № 3)**).

տևաբար, դրանք բառակապակցություններ են, իսկ երբ առարկայի հատկանիշը վերագրվում, կապվում է այդ առարկային, այս դեպքում ստանում ենք նախադասություն: Հատկանիշի վերագրումը կոչվում է ստորոգում. այն կատարվում է օժանդակ բայերի կամ վերացական բայերի ու բայական վերջավորությունների միջոցով: Համեմատենք ձախակողմյան և աջակողմյան շարքերը:

Մաղկած ծառ	Մառը ծաղկած է (ծաղկել է, կծաղկի):
բերքատու ծառ	Մառը բերքատու է (բերք է տալիս, կտա):
խելոք երեխա	Երեխան խելոք է (խելոքացավ, կխելոքանա, խելոք կդառնա):

կարդացող երեխա **Երեխան կարդում է (կկարդա, կարդալու է):**

Ձախ կողմում ունենք բառակապակցություններ (առարկա+ հատկանիշ), իսկ աջ կողմում ունենք նախադասություններ, որտեղ հատկանիշը ստորոգման միջոցով (օժանդակ բայ, բայական վերջավորություն և վերացական բայ) վերագրվել է տվյալ առարկային, և միտք է արտահայտվել, մինչդեռ ձախ կողմի շարքում մտքեր չեն արտահայտված:

Հետևաբար նախադասությունը միտք արտահայտող միավոր է, ունի ստորոգում և անկախ գործածություն: Իսկ բառակապակցությունը միտք չի արտահայտում, չունի ստորոգում և հանդես է գալիս նախադասության կազմում: Այն ունի անվանողական արժեք:

Բառակապակցությունը տարբերվում է նաև բառից. տարբերությունն այն է, որ բառակապակցությունը միաբառ լինել չի կարող. այն երկու կամ ավելի լիհմաստ բառերի կապակցություն է, որից մեկը գերադաս անդամ է, իսկ մյուսը կամ մյուսները նրան լրացնող ստորադաս անդամներ են, ինչպես Ազգային ժողով, Գիտությունների ակադեմիա, Երևանի պետական համալսարան, միջնակարգ դպրոց, խոսքը կտուրը գցել, ականջին օղ անել, ծծմբաթթու գազ և այլն:

Այսպիսով, բառակապակցությունը կարելի է սահմանել այսպես՝

Երկու կամ ավելի լիհմաստ, ստորադասական հարաբերություն արտահայտող, նախադասության մեջ մեկ անդամի դեր կատարող, կամ առանձին հանդես եկող, անվանողական արժեք ունեցող բառախումբը կոչվում է բառակապակցություն:

Սահմանումից որոշակիորեն երևում է, որ՝

ա) Բառակապակցությունը միաբառ լինել չի կարող.

բ) Բառակապակցության անդամները իրար նկատմամբ պետք է

գտնվեն ստորադասական հարաբերություն մեջ, այսինքն՝ անդամներից մեկը պետք է լինի **գերադաս**, մյուսը կամ մյուսները նրա (կամ իրար) **լրացում**(ներ): Բառակապակցությունները վերլուծելի են իրենց ներսում:

գ) Բառակապակցության անդամը պետք է նյութական բովանդակություն ունեցող խոսքի մաս լինի և դառնա նախադասություն անդամ:

դ) Բառակապակցությունը նախադասության մեջ սովորաբար հանդես է գալիս մեկ անդամի պաշտոնով, այն կարող է հանդես գալ նաև առանձին վերնագրերի կամ բաղադրյալ տերմինների տեսքով:

ե) Բառակապակցության անդամը պետք է անվանողական արժեք ունենա. քանի որ այն համարժեք է բառերին:

Վարժություն 1: Բերված բառերով կազմե՛ք բառակապակցություններ:

բնություն, ծառ, ծաղիկ, գետակ, անտառ, դպրոց, դասարան, ուսուցիչ, աշակերտ, առաջադիմություն, գնահատական, դասագիրք, դասամիջոց, փողոց, տուն:

Վարժություն 2: Բերված բառակապակցություններն օգտագործե՛ք նախադասությունների մեջ:

մայրենի լեզու, հայրենի տուն, բարձրագույն դպրոց, սեր մայրական, սիրելի ընկերոջը, խաղով տարվել, ընկերական հանդիպում, ութերորդ դասարան, մտավոր աշխատանք, գյուղացի Համբո, հանդիպում դպրոցում, ընթերցասեր աշակերտ:

Վարժություն 3: Բերված տեքստերում ընդգծե՛ք բառակապակցությունները:

Մայրենի լեզուն ոչ միայն պետք է սիրել, այլև այն պետք է մաքուր պահել:

Տարրական դասարաններից պետք է հետևել լեզվի մաքրությունը: Բարձր դասարաններում պետք է հարստացնել սրբազան մայրենին:

Երբ գարուն է լինում՝ տաքանում են Օրանջիայի քարերը և խլեղները պառկում են տաք քարերի վրա, ծաղկում են մասուրի ծառերը, բացվում են վայրի վարդերը, մի բարակ արահետ Օրանջիայի ձորակը միացնում է հինավուրց գյուղին (ԱԲ):

Դավոյենց Առաքելը, եզան կաշվից տրեխները հագին, մի առավոտ աչքի տակով նայեց ծաղկած ձորակին, ուր նախրից ետ մնացած երկու հորթ էին արածում: Երկու շաբաթ անց Մանասը քար ու կիր էր թափում, ոտքերը, մինչև ծնկները վեր քաշած, ցելա էր շինում, ուստան էլ տաշած քարերն էր շարում (ԱՔ):

Կապ և կապի խնդիր կաղապարը բառակապակցությունն չպետք է համարել, որովհետև կապը լիմաստ խոսքի մասն է:

Բառերի հետ համեմատած, բառակապակցությունն ավելի է կոնկրետացնում տվյալ առարկայի, երևույթի, հատկանիշի իմաստը: Այսպես՝ սեղան բառը ամենաընդհանուր իմաստն ունի, մինչդեռ եթե այն դառնում է բառակապակցության անդամ, կոնկրետանում է նրա իմաստը՝ աշակերտական սեղան, ճաշի սեղան, ուսուցչական սեղան, կլոր սեղան, խոհանոցի սեղան, երկրաչափական սեղան, սեղան զցել, սեղան ղեկավարել, սեղանի կառավարիչ և այլն:

Բառակապակցությունները տարբերվում են նաև հարադրավոր բառերից, որոնք մեկ շեշտ են ստանում և համարվում շարահյուսական մեկ միավոր՝ ցույց տալ, մոտ գալ, վեր կենալ, ելույթ ունենալ, աղ ու հաց, նիստ ու կաց և այլն: Մինչդեռ բառակապակցությունների բոլոր անդամներն առանձին շեշտեր են ստանում (կարկաչուն վտակ, ութերորդ դասարան, գրական խմբակ, «Գրական թերթ», ուղտը գդալով ջրել, կոկորդիլոսի արցունքներ, աստծու գառ, ջրի գին և այլն):

Վարժություն 4: Բերված բառակապակցություններն օգտագործե՛ք նախադասությունների մեջ:

Ոսկեղենիկ մայրենի, առաջին ուսուցիչ, Մեսրոպ Մաշտոց, Սահակ Պարթև, Հայոց գրերի գյուտ, Ազգային մատենադարան, Տարոն գավառ, Հացեկաց գյուղ, Ոսկեծղի Եղիշե, Հայկական հարց, Հայոց պետականություն, «Գրական թերթ»:

Առաջադրանք: Բերված բառակապակցություններից մի քանիսով, ձեր ընտրությամբ, գրե՛ք փոքրիկ շարադրություն:

ԲԱՌԱՎԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Բառակապակցությունները դասակարգվում են 3 հատկանիշներով.

1. Ըստ կազմության.
2. Ըստ գերադաս անդամի խոսքիմասային պատկանելության.

3. Ըստ բաղադրիչների կապակցվածությունն աստիճանի:

1. Ըստ կազմություն բառակապակցությունները լինում են երկանդամ և բազմանդամ: Երկանդամները կազմված են լինում երկու լինմաստ բառերից, որոնցից մեկը գերադաս է, մյուսը՝ նրա լրացումը, ինչպես՝ մայրենի լեզու, միջնակարգ դպրոց, ավագ ջոկատավար, աշակերտական տետր, Սահմանադրական դատարան, Պետական դումա, Ազգային ժողով, ընկերական ժամանց:

Բազմանդամ բառակապակցությունները, որ ունեն երեք և ավելի բաղադրիչներ, մեծ մասամբ երկբաղադրիչ բառակապակցությունների ընդլայնման արդյունք են, որտեղ երկբաղադրիչին հավելվող անդամը կամ անդամները լրացնում են ոչ թե երկանդամի գերադաս բառին, այլ երկբաղադրիչ կառույցին. այսպես՝ մայրենի լեզու երկանդամ կառույցի վրա է ավելանում դարերի խորքից եկած բառակապակցությունը, և ստացվում է դարերի խորքից եկած մայրենի լեզու բազմանդամ բառակապակցությունը: Այդպես էլ՝ միջնակարգ դպրոց և մասնագիտական թեքումով միջնակարգ դպրոց և այլն:

Իհարկե, սա չի նշանակում, թե բոլոր բազմանդամ կառույցները երկանդամների հավելման արդյունք են: Բազմանդամներից շատերը ինքնուրույն կառույցներ են: Դրանք հանդես են գալիս՝

ա) Բաղադրյալ անվանումների տեսքով (Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Մեծ Բրիտանիայի Ազգային Թագավորություն, բարձրագույն ուսումնական հաստատություն, Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարան, Հայաստանի Հանրապետության Ազգային գրադարան և այլն):

բ) Վերնագրերի տեսքով («Սարսափելի գիշերվա առավոտը» (Րաֆֆի), «Մի դալար բողբոջ չորացած ծառի մոտ» (Մուրացան), «Մեր դասախոսների այցելությունը Իտալիա», «Հանդիպում համալսարանում»: («Առաքյալ», Հր. Աճառյանի համալսարանի ամսաթերթ):

գ) Դերբայական դարձվածների մեծ մասը նույնպես բազմանդամ բառակապակցություններ են (գիրք կարդալ, գիրք կարդալիս, ծառի տակ քնած, մտքում կարոտով երգող):

Օրինակ նախադասություններով՝

Կժերն առած՝ թուլալով ջուրն են իջնում աղջիկներ (ՀԹ):

Ամբողջ կյանքը իր ժողովրդի երգարվեստին նվիրած Կոմիտասը իր տաղանդի հզոր ուժով ապացուցեց հայ ժողովրդի՝ ազգային երաժշտություն ունենալը:

դ) Բաղմանդամ բառակապակցությունների մի տեսակն են նաև **դարձվածների** (դարձվածային միավորների) մի մասը: Բերենք դարձվածների մի երկու օրինակ.

Ձեռ ու ոտ է ընկել մըջունն անտառում՝

Նա մի ծղոտ է տուն տանում:

Քամի է ընկել տերևի քիթը...

Ծաղիկը **թուխս է նստել**, տերև, աչքդ **լուս (ՀՍ):**

Համո Սահյանից բերված այս նախադասություններում դարձվածներ են՝ **ձեռ ու ոտ ընկել, քամի ընկնել քիթը, թուխս նստել, աչքդ լուս** բառակապակցությունները, որոնք իրենց իսկական խմաստներով չեն գործածվել:

Գարձվածների մասին խոսվելու է կայուն բառակապակցությունների մեջ:

2. **Ըստ գերադաս անդամի խոսքիմասային պատկանելության** – Ըստ այն հատկանիշի, թե տվյալ բառակապակցության գերադաս անդամը՝ լրացյալը, ինչ խոսքի մաս է, բառակապակցությունները լինում են՝ **գոյականական, ածականական, բայական, թվականական, մակբայական, դերանվանական:**

Ա. ԳՈՑԱԿԱՆԱԿԱՆ – Այս բառակապակցության գերադաս անդամը որևէ **գոյական է**: Գոյական գերադաս անդամ ունեցող բառակապակցությունը կարող է տարբեր խոսքի մասերով արտահայտված լրացումներ ունենալ. դրանք կարող են արտահայտվել՝

Գոյականի տարբեր հոլովներով. օրինակներ՝

ուսուցիչ Կարապետյան, **գոհար** աստղեր, **ոսկի** աշուն (ուղղական), **երեխայի** բնավորություն, **աշնան քամի**, **ծովի** հառաչ (սեռական), **բրդից** գուլպա, **ծղոտից** գլխարկ, **քարից** տուն (բացառական), **համով** կարկանդակ, **ակնոցով** երիտասարդ, **չալվարով** աղջիկ (գործիական), **հանդիպում դպրոցում**, **անցուդարձ միջանցքում**, **կոխվ փողոցում** (ներգոյական):

Ածականների տարբեր տեսակներով. օրինակներ՝

կանաչ գարուն, **գեղեցիկ** այտեր, **ուսանողական** տոմս, **լավագույն** ցանկություն, **անթառամ** ծաղիկ, **հայրական** տուն:

Թվականի բոլոր տեսակներով. օրինակներ՝

«**Ժններորդ ալիք**» (Այվազովսկու հայտնի կտավը), **քսանմեկերորդ** դար, **երկու** հանձնարարություն, **երկուական** գիրք, **աչակերտների երկու երրորդ** մասը:

Անկախ դերբայներով. օրինակներ՝

Անորոշ դերբայի սեռական հոլովով՝ խմելու ջուր, գրելու թուղթ, վերանորոգվելու ավտոմեքենա:

Հարակատար դերբայով՝ ծաղկած ծառ, քնած երեխա, կոտրված բաժակ:

Ենթակայական դերբայով՝ հոսող ջուր, երգող թռչուն, տեղացող անձրև:

Որոշ դերանուններ նույնպես կարող են գոյականական բառակապակցության գոյական գերադաս անդամի լրացում լինել: Օրինակ՝ բոլոր մարդիկ, յուրաքանչյուր աշակերտ, ոչ մի պատասխան, համայն աշխարհ, ո՞րերորդ անգամ, որքա՞ն ժամանակով, ամբողջ գիշեր, ոմն Պողոսյան և այլն:

Բ. ԲԱՅԱԿԱՆ բառակապակցություններն ավելի մեծ տարածում ունեն. սրանց գերադաս անդամը **անկախ դերբայներն** են, որոնց որպես լրացումներ կարող են հանդես գալ գոյականները (սիրել դպրոցը, հասնել առաջավորներին, դժվարություններից խուսափող, տարվել երաժշտությամբ, դպրոցում մոռացված), ածականները (գեղեցիկ արտասանել, լավ կարգալ, ուրախ դիմավորել, զգույշ արտահայտել, հաճույքով լսել), դերանունները (օգնել բոլորին, հարգել միմյանց, հասկացնել յուրաքանչյուրին, չհավատալ ոչ մեկին), դերբայները (կարդալիս չխոսել, երգելով աշխատել, պառկած չկարդալ, սոված չքնել): Մակբայով (մտերմաբար դիմավորել, արագ քայլել, դանդաղ խոսել, շուտ հասնել, հեռու չգնալ, վերևից նայել և այլն):

Ճիշտ է, **կապերը**, որպես թերիմաստ խոսքի մաս, բառակապակցության անդամ չեն դառնում, բայց դրանք կարող են հանդես գալ գոյականական և բայական բառակապակցություններում: Դրվելով հոլովված բառերի վրա, այն կապում են գերադաս անդամների հետ: Օրինակներ՝

պայքար հանուն արդարության, վերադասի կողմից առաջադրված, առանց գրքի չգնալ դպրոց, ընկերոջ փոխարեն աշխատել, բարձրանալ բեմի վրա, աշխատել ծնողների հետ և այլն:

Հիշել – Յանկացած բայական բառակապակցություն կարող է արտահայտվել ստորոգումով և վերածվել նախադասության:

Օրինակ՝

Քամուց քշվել
Ուղարկել ընկերոջը
Ականջին օդ անել

Քամուց քշվեց (կքշվի, պիտի քշվի):
Ուղարկեց ընկերոջը:
Ականջիդ օդ արա՛:

Գ. ԴԵՐԱՆՎԱՆԱԿԱՆ բառակապակցությունները սակավ են (համարյա բոլորը, **գրեթե** այսքանը, մոտավորապես այդքանը, այդ ամենը, այս ամենը, **գրեթե** ոչինչ և այլն):

Դ. ՄԱԿԲԱՑԱԿԱՆ բառակապակցությունները նույնպես շատ չեն: Մակբայականի գերադաս անդամ **մակբայը** կարող է լրացվել մեկ այլ մակբայով, ածականով, թվականով, գոյականով (չափազանց արագ, անհամեմատ դանդաղ, շատ հեռու, քիչ վերև, արտակարգ բարեկամաբար, եղբոր պես սիրելի, թռչունից արագ, կրիայից դանդաղ, ավելի մտերմաբար և այլն):

Ե. ԹՎԱԿԱՆԱԿԱՆ բառակապակցություններն ավելի սակավ են (մոտավորապես հիսուն, ավելի քան քսանհինգ, գրեթե տասից-տասներկու և այլն):

Վարժություն 5: Բերված բառակապակցություններում ընդգծե՛ք գերադաս անդամները և գրե՛ք, թե ինչ խոսքի մասերով են արտահայտվել:

Գյուղացի Համբո, Համով գրույց, երգչախմբային ընկերություն, շատ ուրախ, կարդալու գիրք, առաջին հարված, խելքից պատուհաս, ոտքով չըջել, մոտավորապես այսքանը, մտերմաբար գրուցել, հեռու փախչել, հանդիպում տանը, գրեթե ոչինչ, մայրենի բարբառ, ուսուցչի կողմից առաջադրված, երկրաչափական մարմին:

Վարժություն 7: Բերված բառակապակցություններում ընդգծե՛լ լրացումները և նշե՛լ, թե ինչ խոսքի մասերով են արտահայտվել

Ձորավար Անդրանիկ, երգահան Կոմիտաս, բանաստեղծ Համո Սահյան, երգող ձայնավնակ, բարգավաճած Հայաստան, առաքելական եկեղեցի, ընկերական հանդիպում, ոսկե ձկնիկ, երգելու տրամադրություն, մորթուց գլխարկ, թանով ապուր, առաջին հարված, տասներեք աշակերտ, չափազանց արագ, մոտավորապես տասից-տասներկու, ինչ-որ հարցադրում, կիսով չափ զրագետ, ցնծությունը արտասանել, Արարատյան դաշտ, երկրորդ կիսամյակ:

Վարժություն 8: Վերևում բերված երկու վարժությունների բառակապակցությունները խմբավորե՛լ ըստ գերադաս անդամների խոսքիմասային պատկանելիության, ընդգծե՛լ դրանք:

Ն մ ո լ չ` Համով գրույց – գոյականական, մտերմաբար գրուցել – բայական, շատ արագ – մակբայական:

Առաջադրանք 1: Ձեր ցանկությամբ բերված վարժություններից ընտրե՛ք 5 բառակապակցություն և դրանցով կազմե՛ք նախադասություններ:

Առաջադրանք 2: Գրե՛ք փոքրիկ շարադրություն՝ օգտագործելով ձեզ ծանոթ կամ վարժություններում բերված բառակապակցություններից մի քանիսը:

3. Ըստ բառակապակցության բաղադրիչների կապակցության սերտության աստիճանի բառակապակցությունները լինում են ազատ և կայուն:

Ազատ են այն բառակապակցությունները, որոնց բաղադրիչները կարելի է հեշտությամբ իրարից անջատել ու գործածել այլ բաղադրիչների հետ, այսինքն՝ դրանք պատրաստի կաղապարներ չեն, կազմվում են խոսողության ընթացքում: Այսպես օրինակ՝ **պատանի բարեկամ, առաջին կարգ, քաղցր հայացք, զբաղվել ընթերցանությամբ** բառակապակցությունների բաղադրիչները տարրալուծելի են. դրանց ստորադաս անդամները՝ **լրացումները, կարող են այլ գերադաս անդամների հետ գործածվել երիտասարդ բարեկամ, հինգերորդ կարգ, թիթու հայացք, զբաղվել երաժշտությամբ:** Այդպես էլ վերևում բերված բառակապակցությունների գերադաս անդամները կարող են գործածվել՝ ուրիշ ստորադաս անդամների հետ՝ **պատանի բանասեր, առաջին կուրս, քաղցր ժպիտ, տարվել ընթերցանությամբ, մինչդեռ կայուն բառակապակցությունները այդպես չեն:**

Կայուն են այն բառակապակցությունները, որոնք կազմված են մշտապես իրար հետ գործածվող բաղադրիչներով և մեկ իմաստ են արտահայտում, սրանք խոսելու ընթացքում չեն կազմվում. դրանց համար լեզվում ստեղծվել են պատրաստի կաղապարներ, որոնք տարրալուծվելիս, ամբողջական կառույցը կորցնում է իր իմաստը, քանդվում են կառույցները: Ահա կայուն բառակապակցությունների մի քանի օրինակներ.

ինչպես՝ **մազնիսական դաշտ, ծծմբական թիթու, առաջին աստիճանի հավասարում, եզան լեզու (բույս), գառան դմակ (խաղողի տեսակ), առյուծի բաժին (մեծ կտոր), Ազգային ժողով, Նախարարների խորհուրդ, մեջներով սև կատու անցնել, ջրից չոր դուրս գալ, աբիլլեսյան գարշապար, դանայիդյան տակառ, կրակե չապիկ և այլն:**

Կայուն բառակապակցությունները բաժանվում են երկու խմբի՝

1. ոչ վերաիմաստավորված և

2. **վերախմաստավորված**. վերախմաստավորված ասելով պետք է հասկանալ միայն դարձվածները (դարձվածային միավորներ):

**ՈՋ ՎԵՐԱԽՄԱՍՏԱՎՈՐՎԱԾ՝ ՍՈՎՈՐԱԿԱՆ
ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒՔՑՈՒՆՆԵՐ**

Ոչ վերախմաստավորված բառակապակցություններում ընդհանուր իմաստի փոխարեբացում չկա. կապակցության յուրաքանչյուր անդամ գործածվում է իր բուն իմաստով. օրինակ՝ **պատանի բարեկամ, առաջին կարգ կապակցություններում պատանին** մնում է պատանի, **բարեկամը՝** բարեկամ, **առաջինը** մնում է առաջին, **կարգը՝** կարգ: Բացի դրանից երկու բառերի իմաստների գումարումից նոր իմաստ չի առաջացել, ինչպես դա լինում է **վերախմաստավորված բառակապակցություններում**, որտեղ կապակցության իմաստը չի բխում բաղադրիչների իմաստների գումարից: Օրինակ՝ **աչքերին թոզ փչել** կապակցության մեջ ոչ **աչքն** է աչք, ոչ **թոզը՝** թոզ և ոչ էլ **փչելը** փչել է նշանակում, այլ այդ երեք բառերի համատեղ գործածվելուց բոլորովին այլ իմաստ է ստացվել՝ **խորամանկաբար խաբել**:

Ոչ վերախմաստավորված կայուն բառակապակցություններով անվանվում են՝

ա) Աշխարհագրական անունները (Մասիս սար, Սևանա լիճ, Հայկական Պար, Հեռավոր Արևելք, Արարատյան դաշտ, Հյուսիսային սառուցյալ օվկիանոս և այլն):

բ) Երկրների, պետությունների, մարզերի, քաղաքների, գյուղերի, թաղամասերի բաղադրյալ անվանումները (Հայաստանի Հանրապետություն, Լեռնային Ղարաբաղ, Մեծ Բրիտանիա, Վերին Սասնաչեն, Նորք-Մարաչ թաղամաս և այլն):

գ) Պետական կառավարման մարմիններն ու գերատեսչությունները (Ազգային ժողով, Առաջին ատյանի դատարան, Միացյալ ազգերի կազմակերպություն, Անվտանգություն խորհուրդ, Պետական դոմա և այլն):

դ) Մարդկանց բաղադրյալ հատուկ անունները (Տիգրան Մեծ, Աշոտ Երկաթ, Արչակ Երկրորդ, Զենով Օհան, Պետրոս Առաջին և այլն):

ե) Գիտական բաղադրյալ տերմինները (էլեկտրական դաշտ, լուգարիթմական քանոն, ծծմբական թթու, դերբայական դարձված, անվանաբայական ստորոգյալ և այլն):

զ) գրքերի, թերթերի, ամսագրերի, ստեղծագործությունների անվանումները, վերնագրերը («Գևորգ Մարգպետունի», «Վերք Հայաստանի», «Գրական թերթ», «Հայոց աշխարհ», «Մայրենի լեզուն դպրոցում», «Հինգերորդ սիմֆոնիա», «Եռաձայն պատարագ», «Արարատյան դաշտի առավոտը» և այլն):

է) Կառավարության կողմից տրվող կոչումների, չքանչանների, պարգևների անվանումները («Մեսրոպ Մաշտոց» չքանչան, «Մայրական փառք» մեդալ, «Վաստակավոր ուսուցչի» կոչում, «ՀՀ ժողովրդական արտիստի» կոչում և այլն):

ը) Այս տեսակի մեջ են մտնում նաև սովորական բառային իմաստներով բաղադրյալ անվանումները (չտապ օգնություն, գթություն քույր, պատի թերթ, հարսանյաց սրահ և այլն):

ժ) Ոչ վերաիմաստավորված բառակապակցությունների մի տեսակն էլ **դերբայական դարձվածն** է, որը, ինչպես բոլոր բառակապակցությունները, նախադասության մեջ հանդես է գալիս մեկ անդամի պաշտոնով, բայց շարահյուսորեն վերլուծելի է իր ներսում: Սա ցույց տանք մեկ օրինակով՝

Բազմած լուսնի նուրբ շողերին.

Հովի թևին թռչելով՝

Փերինները սարի գլխին

Հավաքվեցին գիշերով (ՀԹ):

Այս պարզ ընդարձակ նախադասության գլխավոր անդամներն են **փերինները** ենթական և **հավաքվեցին** ստորոգյալը, իսկ ձևի պարզայի պաշտոնով հանդես են եկել **բազմած լուսնի նուրբ շողերին** և **Հովի թևին թռչելով** դերբայական դարձվածները, որոնց գերադաս անդամներն են **բազմած** և **թռչելով** դերբայները՝ իրենց լրացումներով, իսկ **սարի գլխին**-ը գոյականական բառակապակցություն է, որի գերադաս անդամն է **գլխին** գոյականը:

Վարժություն 9: Բերված նախադասություններում ընդգծել՝ բառակապակցությունները՝ նշելով ազա՞տ են, թե՞ կայուն:

Արեգակնային համակարգության մոլորակներից մեկն էլ Երկիրն է (Դաս.): Հայ ժողովուրդն ստեղծել է դարերից եկող ճոխ լեզու (Ավ. Իս.):

Ազգային դպրոցները ազգային ոգու հենարաններից ամենաուժեղն են:

Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», Եղիշեի «Վարդանանց պատերազմը», Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանին» Հայոց պատմության բարձր սյուներից են (Ավ. Իս.):

Սևանա լիճը լեռնային Հայաստանի զմրուխտյա մարգարիտն է:

Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի պատի թերթին այս անգամ նվիրված էր Հայ գրերի գյուտի 1600-ամյակին:

Վարժություն 10: Բերված բառակապակցություններից մի քանիսն օգտագործե՛ք նախադասությունների մեջ.

Սուրբ ծննդյան տոներ, Հայոց լեզվի բառազանձ, մայրենի լեզվի գեղեցկություն, Կոմիտասի անվան զբոսայգի, Հյուսիսային պողոտա, Ազգային մատենադարան, Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական համալսարան, շտապ օգնության ավտոմեքենա, ճանապարհային երթևեկության կանոններ, Խաղաղության համալսարհային խորհուրդ, Եվրոմիության անդամ:

Վարժություն 11: Բերված նախադասություններում ընդգծե՛ք դերբայական դարձվածները, նշել, թե նախադասության մեջ ինչ անդամների դեր են կատարում:

I

Ամբողջ կյանքը իր ժողովրդի երգարվեստին նվիրած Կոմիտասը մահկանացուն կնքեց 1935 թ. հոկտեմբերի 21-ին Փարիզում: Փարիզում Կոմիտասն ապացուցեց Հայ ժողովրդի ազգային սեփական երգ ու երաժշտություն ունենալը:

Լուսինն Ջաքարյանը Կոմիտասի երգերը կատարում էր աշխարհից կտրված, ամբողջ էությունը ոգի դարձած:

Սուրբ Մաշտոցը, Հայ ժողովրդին գիր ու գիրք տալով, դարձավ աշխարհի մշակույթ ստեղծող լուսավոր այրերից մեկը:

Ազգային այբուբենը լավ իմացող և մայրենի լեզվով մտածող ու խոսող մարդու համար հայրենիքը սեփական մարմնի մի մասն է:

Մայրենի լեզուն չիմանալը և անընդհատ սովորել չցանկանալը համազոր են ազգային ինքնասպանության:

II

Արագածի փեղերին մոտենալիս օդը դառնում է ավելի թափանցիկ ու զով: Այժմ բոլորիս փափազը ժողովրդի համար բարեկեցիկ կյանք ստեղծելն է:

Ծերունի Մովսեսի գալուց հետո կարծես մի ծանր քար ընկավ նրա սրտից: Մինչև վարազների ջրի գալը Ավին ստիպված էր նստել մամոտած քարի վրա:

Անպայման պիտի փնտրեմ ու գտնեմ քեզ՝ ձեռքերդ համբուրելու և երախտագիտությունն հայտնելու:

Ձնայած ամառվա շոգից հողը ճաքճաքած լինելուն՝ էլի նախիրը հանգստանում էր ժայռի շվաքում: (ՄԳ):

Նա շատ էր տխրել՝ լսելով իր վաղեմի հակառակորդի գալու լուրը:

Վրաններից մի մարդ՝ մանգաղը գոտու մեջ խրած, գլուխը փաթաթած կեղտոտ թաշկինակով, մահակին հենվելով, բարձրացավ բերդի քարափը... Ֆետրե գլխարկով մարդուն օջախի մոտ նստած կինը թվում էր քրմուհու՝ եռոտանու առաջ ծխի շարժումները գուշակող (ԱԲ):

Առաջադրանք: Ձեր ընտրություններ, օգտագործելով 5 դերբայական դարձված, կազմե՛ք 5 նախադասություն և ցո՛ւյց տվե՛ք, թե դրանք ինչ անդամների դեր են կատարում:

ՎԵՐԱԻՄԱՍՏԱՎՈՐՎԱԾ ԿԱՑՈՒՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴԱՐՁՎԱԾՆԵՐ

Ինչպես ասվեց, բառակապակցությունների մի տեսակն էլ դարձվածներն են (Դարձվածային միավորներ), որոնք լեզվի թե՛ բանավոր և թե՛ գրավոր խոսքին տալիս են գեղեցկություն ու պատկերավորություն, լեզվի աղն ու համեմունքներն են և ոճական մեծ արժեք ունեն:

Ի տարբերություն սովորական բառակապակցությունների, դարձված կազմող բաղադրիչներն իրենց սովորական իմաստներով հանդես չեն գալիս. դրանք կապակցության մեջ ձեռք են բերում փոխաբերական իմաստներ, և ամբողջ կառույցի իմաստը չի բխում նրա բաղադրիչների իմաստների գումարից. այն բոլորովին նոր իմաստ է ձեռք բերում:

Օրինակ, վերին արտի ցորեն դարձվածում ոչ արտ կա, ոչ ցորեն,

և ոչ էլ վերին, այլ ամբողջ կապակցությունը նշանակում է ընտրյալ, ամենալավը («Պատկերը բանաստեղծության վերին արտի ցորենն է»,- գրում է «Գրական թերթը»):

Կամ՝ մեջներով (արանքով) սև կատու է անցել դարձվածում կատվի, նրա գույնի և անցնելու մասին ոչ մի խոսք չկա, այլ դրանով նշվում է մտերիմների հարաբերությունների սրվելը, իրարից նեղանալը (Գագիկի ու Արթուրի արանքով սև կատու է անցել՝ իրար հետ չեն խոսում):

Այս հիմնավորումով էլ բառակապակցությունների այս տեսակը կոչվում է վերախմաստավորված:

Լեզվաբանության մեջ կա մի առանձին բաժին, որն զբաղվում է դարձվածների կազմության, դրանց տեսակների ու ոճական արժեքների ուսումնասիրությամբ. այդ բաժինը կոչվում է դարձվածաբանություն:

Իսկ ինչպե՞ս է սահմանվում դարձվածը կամ դարձվածային միավորը.

Դարձվածը երկու կամ ավելի բառերից կազմված պատկերավոր գաղափար կամ միտք արտահայտող վերախմաստավորված պատրաստի, վերարտադրելի բառակապակցություն է կամ նախադասություն:

Սահմանումից հստակորեն երևում է, որ՝

1. Դարձվածը միաբառ լինել չի կարող.
2. Դարձվածի բաղադրիչ միավորները՝ բառերը, հանդես են գալիս ոչ թե իրենց իսկական՝ ուղղակի իմաստներով, այլ փոխաբերական:

3. Դարձվածը կազմվում է ոչ թե խոսելու պահին, ինչպես ազատ բառակապակցությունները, այլ դրանք լեզվում եղած պատրաստի կառույցներ (բլոկներ) են: Որոնք վերարտադրվում են խոսողի, գրողի կողմից՝ նկնելով խոսքի իրավիճակից, դրա տեղին գործածելուց, օրինակ. խոսելու պահին, երբ հարկ է լինում նշել մեկի քաջությունը, բերվում է լեզվում պատրաստ եղած առյուծի սիրտ ունի դարձվածը, կամ վախկոտության համար՝ նապաստակի լեղի ունի:

4. Դարձվածները հանդես են գալիս երկու տեսքով. դրանց մի մասը համարժեք է բառերին և կոչվում է անվանողական, իսկ մյուս մասը համարժեք է նախադասություններին և կոչվում է հաղորդակցական:

ԴԱՐՁՎԱԾՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

1. ԱՆՎԱՆՈՂԱԿԱՆ դարձվածներ – սրանք Համարժեք են բառերին և սովորական բառակապակցությունների նման լինում են՝

ա) Գոյականական – սրանց գերադաս անդամը գոյական է, իսկ նրան լրացնող անդամները կարող են լինել գոյականներ, ածականներ, թվականներ և այլ խոսքի մասեր: Օրինակ՝

արջի ծառայություն – օգուտի փոխարեն վնաս տվող արարք,
չան ու կատվի բարեկամություն – անհաշտ, ամբարիշտ ընկերություն,

փոթորիկ մի բաժակ ջրում – ոչնչից շատ աղմուկ,

Ձախորդ Փանոս – անհաջող, բախտը չբերող մարդ,

Հինգերորդ անիվ – ավելորդ, ոչ պիտանի բան և այլն:

բ) Բայական – Բայական դարձվածի գերադաս անդամը անորոշ գերբայն է: Այս տեսակը ամենատարածվածն է: Օրինակ՝

խոսքը կտուր գցել – խոսակցություն նյութը մտածված փոխել,

խոփը քարին դեմ առնել – անհաջողության հանդիպել, ձախողվել, բուրդը (բմբուլները) քամուն տալ – խիստ քննադատել, հաղթել,

ձեռ ու ոտ ընկնել – խնդրել, աղերսել, օգնություն հայցել,

չան քթից ջուր խմել – խիստ չարչարվել, տառապել և այլն:

գ) Ածականական – այս դեպքում պարտադիր չէ, որ դարձվածի գերադաս անդամը ածական լինի. ածականի իմաստն արտահայտում է ամբողջ դարձվածը: Օրինակ՝

Աստծու գառ – շատ խելոք,

սատանայի ձուռ – շատ չար ու խորամանկ,

կրակի գին – շատ թանկ,

ջրի գին – շատ էժան,

ցամաք ձորի աղվես – խիստ նիհար,

մի կողը տարած – չճանաչ, անուշադիր,

մի ծառի պտուղ – իրար շատ նման և այլն:

դ) Մակբայական – Մակբայական դարձվածում նույնպես պարտադիր չէ, որ նրա գերադաս անդամը որևէ մակբայ լինի. մակբայի իմաստն արտահայտում է ամբողջական դարձվածը: Օրինակ՝

քթի տակ – շատ մոտիկ,

յոթ սարի հետևում – շատ հեռու,

երկու քայլի վրա – ոչ հեռու, մոտիկ,

ծոխ թևով – արագություն, շտապ կարգով:

պոչ խաղացնելով – խորամանկելով, շողոքորթելով, ոչ չիտակ, էջի գատկին – երբեք, ոչ մի անգամ և այլն:

ե) Եղանակավորող – սրանք խոսողի դրական, բացասական կամ երկբայական վերաբերմունքն են արտահայտում խոսքի, նախադասությունների նկատմամբ: Օրինակ՝

**Աստված ողորմած է – լավ բանի հույս ունենալ,
գլխիս վրա, աչքիս վրա – խնդրեմ, համեցեք,
մեր մեջ ասած – միայն մեզ համար, ուրիշները չիմանան,
աչքդ բարին տեսնի – ասվում է լավ ակնկալիքի ցանկություններ:
խոսքը շաքարով կտրեմ – խոսքը ընդհատելու բանաձև,**

2. ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ դարձվածներ – Հաղորդակցական դարձվածները հարաբերակից են նախադասություններին, այսինքն՝ ունեն ստորոգում՝ հատկանիշի վերագրում ենթակային. ունեն ենթակա և ստորոգյալ:

Սրանք հանդես են գալիս ինչպես պարզ, այնպես էլ բարդ նախադասությունների տեսքով:

Պարզ նախադասության օրինակներ.

Պատը ծակ է – Զգո՛ւյշ, մեզ լսողներ կան (գաղտնի խոսակցության դեպքում):

Լեզվի տակին փուշ չկա – Գաղտնիք չի պահում, ամեն ինչ կարող է սանկ:

**Այս խմորը շատ ջուր կվերցնի – Դեռ շատ բաներ կարող են լինել:
Մախաթը պարկում չի մնա (չես թաքցնի) – Գաղտնիքը մի օր կբացահայտվի:**

Բանը (բանդ) բուրդ է – Գործը (գործերը) վատ են, անհաջողություն:

Բարդ նախադասությունների օրինակներ.

Ճրագով ման գաս՝ չես գտնի – Նիստ հազվադեպ, գրեթե չճարվող բան:

**Քիթը բռնես՝ հոգին կտա – Ասվում է շատ նիհար մարդու մասին:
Սոխ չես կերել՝ սիրտդ ինչու կմրմռա – Եթե որևէ բանի մեղսակից չես, ինչո՞ւ ես անհանգստանում. ինչո՞ւ ես վատ զգում:**

Արև լինի՝ ուրիշին լույս չի տա – Չափազանց անբարյացակամ մարդու մասին, չկամ, ժլատ մարդ:

Հոգին ուզես՝ չի խնայի – (նախորդի հատկանիշը) խիստ բարյացակամ, օգնություն պատրաստ, բարեբար, բարեգործ մարդու մասին:

Վարժություն 12: Բերված բալլադից դուրս գրել՝ դարձվածները. որոշել տեսակները (անվանողական են, թե՞ Հաղորդակցական) և գրել՝ թե ինչ խոսքի մասերով են արտահայտված գերադաս անդամները:

I

Ես մի հրաշք աղջիկ տեսա...
Ասես իրոք թուել էր նա
Մեր Գոյայի* վրձնի քթից...
...Ջահել էի, դեռ երևի,
Ու չէր անցել քթիս քամին,
Խելքս դրի քթիս խելքին,
Նա իմ քթից բռնած տարավ...
Մեկը ուներ տափակ մի քիթ,
Պաշտոն տվին մի օր նրան.
Քիթը ցցեց ու քթի տակ
Ծիծաղում էր նրանց վրա.
Հազար անգամ հասկացրին,
Որ հերիք է, չի՛ կարելի.
Խելքի չեկավ բոլորովին
Եվ իր էչն էր քշում էլի:

II

Ջեռ քաչեցին խրատելուց,
Կհասկանա, ասին, մարդ է.
Ոտքը քարին առավ մի օր,
Փլվեց գետին, քիթը ջարդեց:
... Այս նորեկը շատ էր սիրում
Սրան, նրան խայթել, նրան բոթել,
Գործերի մեջ սրա, նրա
Շատ էր սիրում քիթը խոթել:

* Գոյա Ֆրանսիսկո (1746–1828) – իսպանացի Հայտնի նկարիչ, Հեղինակն է «Մերկ Մախան», «Կապրիչիոս» և բազմաթիվ այլ նկարների (ՀԱՀ Հատ. 3, Եր., 1977, էջ 154–155):

Քիթս կախած, մտամոլոր
Ոտքով մի կերպ տուն գնացի...
Ձեռն հանդիպել անքիթ մարդու,
Հավատացե՛ք, ճիշտ եմ ասում,
Բայց արի ու տես, որ շատ հաճախ
Քթածակն է մեզ պակասում (Ոգնի):

Առաջադրանք 1: «Ոգնի» շարաթաթերթից դուրս գրե՛լ 10 դարձ-ված, որոշե՛լ դրանց տեսակները և գերադաս անդամները:

Առաջադրանք 2: Ձեր ընտրությունները բերված բալլաղից դուրս գրե՛ք 10 դարձված և գործածե՛ք ուրիշ նախադասությունների մեջ:

Առաջադրանք 3: Կազմե՛լ 5-ական նախադասություն սովորական՝ ոչ վերախմաստավորված և վերախմաստավորված դարձվածային բառակապակցություններով:

ԴԱՐՁՎԱԾԱՑԻՆ ԲԱԶՄԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Ինչպես սովորական բառերը, այնպես էլ դարձվածները լինում են մենիմաստ և բազմիմաստ: Մենիմաստ են այն դարձվածները, որոնք միայն մեկ իմաստով են հանդես գալիս, ինչպես կրակի գին – թանկ, ջրի գին – էժան, ականջին օղ անել – միտքը պահել, լավ հիշել, ձեռ ու ոտ ընկնել – խնդրել և այլն:

Բազմիմաստ դարձվածները մեկից ավելի իմաստներ են ունենում, օրինակ՝ իրար հասնել դարձվածն ունի և իրար օգնելու, սատար կանգնելու (ղժվարություն օրերին մարդիկ իրար են հասնում, օգնում են իրար) և իրար հետ կռվելու իմաստ (...ու իրար են հասնում Սարոն ու Մոսին (ՀԹ)):

Ձախ գնալ դարձվածը Յ իմաստ ունի՝ անհաջողություն մատնվել, ապրանքը կողմնակի ճանապարհով իրացնել և ճիշտ ճանապարհից շեղվել:

Բառերի նման դարձվածներն էլ կարող են ունենալ հոմանիչային և հակահիչային շարքեր:

Հոմանիչային դարձվածների օրինակներ՝

Հոգին (մեկի) բուռը հավաքել –

Հոգին (մեկի) ջուրը դնել –

Դռանը (մեկի) կացին կախել –

Պատին դեռ անել (մեկին)–

Օձի քթից ջուր խմեցնել –



Մեկին շատ նեղել, նեղ վիճակի մեջ դնել:

Ցամաք ձորի աղվես -
Քիթը բռնես՝ հոգին կտա -
Վիզը տանձի պոչ է դարձել -
Միւր գնացել, ոսկորն է մնացել -
Շատ է տեսել, քիչ է կերել -



Ասվում է խիստ նիհար մարդու մասին:

Դարձվածային հականիշներ.

Երկինք բարձրացնել - գետնին հավասարեցնել,
Քթի տակ - յոթ սարի հետևում,
Թռչունի թևով - կրիայի քայլերով,
Խոփը քարին առնել - բախտը բերել,
Կրակի գին - ջրի գին և այլն:

Դարձվածները կազմվում են ամենատարբեր առարկաների ու երևույթների անվանումներով.

Մարդու մարմնի մասերի անվանումներով (գլխի ընկնել, աչքից գցել, ձեռքը կարճ, ոտ ու ձեռ ընկնել, սիրտը կորեկի հատ դառնալ, լեզուն երկար, աչքը ծակ...):

Կենդանիների ու թռչունների անվանումներով (առյուծի բաժին, շան բախտ ունենալ, նապաստակի սիրտ ունենալ, արծվի աչք, ծոփ կաթ, հավի խելք...):

Գունանուններով նույնպես հարյուրավոր դարձվածներ են կազմվում (սև հագնել, կանաչ ախպեր, կարմիր արև, կանաչ ճանապարհ, վարդագույն ակնոցներով նայել), դեղին քարտ ցույց տալ, դեմը կանաչ լույս վառել:

Դարձվածները գործածվում են կյանքի բոլոր բնագավառներում և խոսքի բոլոր ոճերում:

Վարժուիթյուն 13: Դո՛ւրս գրել դարձվածներն իրար տակ, գրե՛լ դրանց բացատրուիթյունները և գտնե՛լ հոմանիշներն ու հականիշները (եթե ունեն):

I

...Եվ ինՖարկտ էլ չեն ստանում. որովհետև սիրտ չունեն: Սրտիցս արյուն է կաթում, սիրտս կտոր-կտոր է լինում, երբ տեսնում եմ քար սրտերի պատճառով ժողովրդի սիրտը բերնին է հասել, սիրտը լցվել

է, սիրտը ցավում է, սիրտը պղտորվել է, ժողովրդի սրտին դանակ տաս՝ արյուն չի գա:

Լեզուս չի բռնում ասել, բայց ո՞ւմ է պետք լեզուն... Իշխանությունները օձի լեզու ունեն. անընդհատ լեզու են թափում, լեզվին զոռ են տալիս, ժողովրդին լեզվակոխ են անում, նրանց լեզվի տակ ոսկոր չկա, ժողովրդի բերանը իբր լեզու են դնում, բայց վերևից լեզու են հանում ժողովրդի վրա. ժողովուրդն էլ մայրենի լեզվով ասում է. «Այ ձեր լեզուն պապանձվի, հա՛...»:

II

Իշխանությունները անընդհատ թող են փչում ժողովրդի աչքին, ժողովրդի աչքում՝ լավերին զցում: Գորտի պես աչքներս ջուր կտրեց սրանց խոստացած ջրիկ խոստումներին և ջրի սպասելով, իսկ սրանք բերանները ջուր են առել, լռել...

Երբ ասում ենք՝ ձեր աչքի վերև հոնք կա, դառնում ենք նրանց աչքի փուշը: Էն գլխեն աչք են դրել ժողովրդի փողին: Աչքով աչք չունեն մեզ նայելու: Տեղն է մեզ. աչքն էլ են հանում, անում են, որովհետև աչք ենք փակում իրենց աչքակապովյան վրա: Աչքերիս չեմ հավատում, բայց իրոք՝ աչքդ թեքեցիր, բանիդ տերը չես: Իշխանությունների աչքը դուրսն է: Լավ է ասում ժողովուրդը. «Վա՛յ ձեր աչքը դուրս գա հա՛ ... միաչքանի կիկլոպներ»:

III

Եթե ականջ ունեք, ականջ դրեք, լսեք, ուղտի ականջում քնած մի՛ մնացեք... Ժողովրդին ականջ չեն դնում, ժողովրդի ասածները ականջի ետև են զցում, ժողովրդի ասածները մի ականջով մտնում, մյուսով դուրս են գալիս: Կոմունիստների ականջը կանչի, թող խուլ իշխանությունը ականջին օղ անի, որ մի օր ժողովուրդը իշխանությունների ականջը կքաչի, և մեր ականջները վերջապես կդինջանան:

Մի բերան էլ խոսենք բերանի մասին: Մեկին ասի՝ նախարար կդառնաս, ասաց՝ «բերանդ խեր բաց», ժողովուրդը բերանը բաց սպասում է, բայց ոչ ոք չի նայում ժողովրդի բերանին. թուքը ցամաքել է, դանակը ոսկորին է հասել: Ոչ մեկի բերանը չես կարող փակել. բերանիդ գոլն են ուզում իմանալ՝ տեսնեն ով է իր բերանը մի բան զցում, բերանի ծամոն են դարձել, որովհետև ժողովրդի բերանից

են կտրել, բայց քանի մեր բերանում չունչ կա, սրանց բերանին պիտի գանք: (Ողնի):

Առաջադրանք

սիրտ, լեզու, աչք, ականջ, բերան բառերով կազմեցե՛ք ուրիշ դարձվածներ, որոնք չկան բերված վարժություններում:

Ա մ փ ո փ ի չ Հ ա Ր Գ Ե ր

1. Ի՞նչ է բառակապակցությունը, ի՞նչ է դարձվածը:
2. Ի՞նչ հիմունքներով են դասակարգվում բառակապակցությունները:
3. Ի՞նչ է դերբայական դարձվածը:
4. Ի՞նչ են դարձվածները, ինչպե՞ս են դրանք դասակարգվում:
5. Ի՞նչ է նշանակում դարձվածային բազմիմաստություն:

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Մարդիկ խոսում, հաղորդակցվում են նախադասությունների միջոցով, որոնք կազմվում են բառերից՝ քերականական համապատասխան կանոններով:

Վերևում տեսանք, որ բառերն ու բառակապակցությունները անվանողական արժեք ունեն, միտք չեն արտահայտում, այլ անվանում են առարկաներ ու հատկանիշներ, մինչդեռ նախադասությունները, որ կազմվում են բառերից ու բառակապակցություններից, միտք են արտահայտում: Օրինակ, հետևյալ առանձին բառերը մինչև քերականական փոփոխությունների չենթարկվեն, իրար կողքի համապատասխան օրենքներով չդասդասվեն, ամբողջական, ավարտուն հնչերանգ չստանան և հատկանիշը ստորոգումով չվերագրվի առարկային, միտք չի արտահայտվի.

ծագել, մանուկ, արև գարուն

Այստեղ նախ պետք է որոշվի ենթական, այն է **արև**, որը պետք է ը որոշիչ հոգը ստանա և գրվի ուղղական հոլովով, այնուհետև պետք է որոշվի ստորոգյալը, որը **ծագելու** հատկանիշը վերագրի արևին, կատարի **ստորոգում**, իսկ դրա համար **ծագել** անորոշ դերբայը պետք է խոնարհվի՝ գրվի սահմանական եղանակի ներկա ժամանակի եզակի թվով, **գարուն** գոյականը գրվի սեռական հոլովով, **մանուկ** բառը գրվի **արև** բառի վրա և կազմի **մանուկ արև** բառակապակցությունը: Միայն այս դեպքում է հնարավոր բառերը իրար կողքի դասավորել և նախադասություն ստանալ:

Ծագում է մանուկ արևը գարնան (ՎՄ):

Ինչպես ասվեց, նախադասություն կազմող բառերն էլ պետք է իրար կողքի գրվեն տվյալ լեզվում ընդունված բառերի, նախադասություն անդամների համապատասխան դասավորությամբ: Օրինակ՝ ստորև բերված բառերի ոչ կանոնավոր դասավորությամբ միտք չի արտահայտվի:

է, մանուկ, գարնան, ծագում, արևը:

Նախադասություն կազմող բառերի իրար նկատմամբ ճիշտ դասավորությունը կոչվում է **չարադասություն**:

Նախադասությունն ավարտուն տեսք ստանալու համար պետք է

ունենա նաև ավարտուն Հնչերանգ, որը դադարն է. այն գրավոր խոսքում արտահայտվում է վերջակետով: Եթե «Ծագում է մանուկ արևը զարնան» նախադասությունն արտաբերենք առանց Հնչերանգային ավարտվածություն, նրա միտքը կիսատ կմնա: Վ. Միրաքյանը իր միտքն ավարտում է դրան հաջորդող մյուս տողով՝ «Կովկաս լեռների ձյունի պատնեչից», և նախադասությունը ավելի ամբողջական տեսք է ստանում, ու Հնչերանգն էլ ավարտվում է պատնեչից բառից հետո.

Ծագում է մանուկ արևը զարնան
Կովկաս լեռների ձյունի պատնեչից:

Մենք վերևում բերել ենք միայն առաջին տողը և Հնչերանգն էլ ավարտել ենք զարնան բառից հետո, նորից ստացվել է ավարտուն միտք՝ ինքնուրույն նախադասություն:

Սակայն եթե ավարտուն Հնչերանգով արտաբերենք «Կովկասյան լեռների ձյունի պատնեչից» տողը, նախադասություն չենք ստանա, որովհետև դրանում չկա ստորոգում, չկան ենթական ու ստորոգյալ, որպեսզի ստորոգում կատարվի, չկա նաև ավարտուն Հնչերանգ:

Հնչերանգային ավարտվածությունը հատուկ է ինչպես պարզ ու բարդ նախադասություններին. այնպես միակազմ նախադասություններին, որոնք հաճախ արտահայտվում են նաև մեկ բառով՝ **Մթնեց: Լուսացավ: Ցուրտ է: Կովել: Չգիջել...**

Հնչերանգը միակազմ և պարզ նախադասություններում ունի սկիզբ և ավարտ, այսպես՝

Մրնճ: Ածձրևում է. Առյւել: Ընդրճ՝ մյուսն կարմիր զարնան:

Իսկ բարդ նախադասություններում Հնչերանգը համապատասխան տեղերում ցածրանում է կամ բարձրանում, բայց ավարտին է հասնում նախադասության վերջում: Հնչերանգը ցույց տանք կորագծերով՝

Ը՛ սո ևս ինչպե՛ս վեր կհանձն գհում: Ա՛յր ևս ինչպե՛ս ուրիշ տեղ մնամ (ՀԸ)

Ով Արա.բաա ունի պատում, Իր մալթր լեռում չի մոռանա (ՀԸ):

Առաջին նախադասություն կեսում հնչերանգն իջել է, երկրորդի կեսում բարձրացել է:

Այս բոլոր հատկանիշներից ելնելով՝ նախադասությունը կարելի է սահմանել այսպես՝

Նախադասությունը ստորոգումով, հնչերանգային ավարտվածությամբ և բառերի կանոնավոր դասավորությամբ (կամ առանձին բառով) ձևավորված միտք արտահայտող լեզվական հաղորդակցման նվազագույն միավոր է:

Վարժություն 1: Բերված առանձին բառերը (առանց տեղերը փոխելու) ենթարկե՛ք քերականական ձևափոխությունների և ստորոգման միջոցով ստացե՛ք ավարտուն նախադասություններ:

Գարուն, վճիտ, երկինք, սահել մի սպիտակ ամպ:

անհաս, բարձունք լողալ, արև ոսկեգօծ շողեր:

Ես, հասկանալ, գիտենալ, որ աշխարհ, մի լավ, բան, լինել:

Ամեն, մի, բառ, ունենալ, իր, գաղտնիք:

Այս, տարի, գարուն, շուտ, գալ, և, ուրախացնել, մենք:

Վարժություն 2: Բերված խառը բառերը այնպես դասավորե՛ք (ճիշտ չարադասել), որ նախադասություններ ստացվեն:

լանջով, մարդիկ, իջնում էին, սար, ապառաժոտ:

խորհուրդները, Արամը, հոր, հիշում էր, լավ:

կրկին, խավար, մենություն, զնդանից

հպարտ ու ես հզոր վերադարձա:

Փակում է, մեծ, տան, մայրիկը, դռները, բոլոր:

Բուսել են, ալպիական, բացատում, մանուշակները:

Դպրոցի, երեկո, մեր, կազմակերպվել է, հանդիսավոր:

Վարժություն 3: Բերված խառը բառերը ենթարկե՛ք քերականական փոփոխությունների, ճիշտ չարադասել և ստանալ նախադասություններ:

սիրել, եմ, Հայաստան, բառ, անուշ, ես, արևահամ, իմ

Դիլան դային, ծեր, մտնել, հնձան, Սոնա ու հիշել:

Հազրո, նստել, քար օջախ

հող, երկիր, հիշել, կորած, ու:

է, ժողովուրդ, հայոց, երգահան, Կոմիտաս, մեծ:

ՆԱՆԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Կառուցվածքային տեսակետից նախադասուլթյունները միատեսակ չեն. մի դեպքում իրենց կազմում ունենում են միայն գլխավոր անդամներ՝ **ենթակա ու ստորոգյալ**, մյուս դեպքում ենթական ու ստորոգյալն ունենում են **լրացումներ**, մի այլ դեպքում կարող են մեկ գերադաս անդամ ունենալ, մի ուրիշ դեպքում էլ ունենում են մեկից ավելի ստորոգումներ, արտաբերվում են նաև տարբեր հնչերանդներով: Ըստ այդմ էլ նախադասուլթյունները դասակարգվում են տարբեր հիմունքներով:

ԵՐԿԿԱԶՄ ԵՎ ՄԻԱԿԱԶՄ ՆԱՆԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լեզվում ավելի մեծ տարածում ունեն **երկկազմ** նախադասուլթյունները. սրանց առանձնահատկուլթյունն այն է, որ իրենց կազմում ունեն **ենթակա և ստորոգյալ**, որոնք կարող են հանդես գալ ինչպես առանց լրացումների (Գարունը եկավ: Ծառերը ծաղկեցին: Աչակերտը կարդում է), այնպես էլ կարող են լրացումներ ունենալ: (Այս տարի ցանկալի գարունը շուտ եկավ: Մեր պարտեզի տերևաթափ ծառերը փարթամորեն ծաղկեցին: Առաջին դասարանի աչակերտը սիրով կարդում է իր մանկական գրքերը):

Պարզ համառոտ նախադասուլթյուն. եթե երկկազմ նախադասուլթյունը կազմված է միայն գլխավոր անդամներից, կոչվում է համառոտ (տե՛ս բերված օրինակները):

Պարզ ընդարձակ է այն երկկազմ նախադասուլթյունը, որը բացի ենթակայից ու ստորոգյալից ունի նաև լրացումներ՝ թեկուզ մեկը (Երեխան գիրք է կարդում):

Միակազմ նախադասուլթյուններ – Միակազմ են այն նախադասուլթյունները, որոնցում կա մեկ **գերադաս** անդամ. այն կամ **դիմավոր** բայ է, կամ որևէ գոյական, ածական, թվական, կամ անորոշ դերբայ: Դրանք կարող են լինել ինչպես **միաբառ** (Մթնեց: Աշուն: Ապրել:), այնպես էլ կարող են ունենալ լրացումներ (Ոսկի աշուն: Ապրել մարդավայել կյանքով):

Միակազմ նախադասուլթյունների մասին խոսվելու է առանձին:

Վարժուլթյուն 4: Բերված պարզ համառոտ նախադասուլթյունները դարձրե՛ք պարզ ընդարձակ.

Ձմեռն անցավ: Եկավ գարուն: Թռչունները վերադարձան: Նրանք

ճշվում են: Երեխաները շինում են: Զագուկները ծլվում են: Լսվում է երգը: Ծրջապատը կենդանացել է: Մարդիկ ուրախ են: Սկսվում են արձակուրդները: Դպրոցականները ցնծություն մեջ են: Ամառ է գալիս: Ամեն ինչ գեղեցիկ է:

Վարժություն 5: Բերված պարզ ընդարձակ նախադասությունները համառոտե՛ք, թողե՛ք միայն ենթականերն ու ստորոգյալները:

I

Պատանի Շուբերտը նվագում էր աշխարհից կտրված, իր երաժշտությունը տարված: Լեփլեցուն շքեղ դաշիճը թնդում էր ծափողջույններից: Կարծես մարդիկ տեղերում անէացել էին: Երաժշտությունից կարծես դաշիճի կտուրը վեր էր բարձրանում: Երաժշտությունը տարված ունկնդիրները հազիվ էին զսպում իրենց հիացմունքը: Վերջապես համերգը կամաց-կամաց մոտենում է ավարտին: Ունկնդիրները դուրս են գալիս դաշիճից ու խոնկում են մուտքի մոտ. նրանք ուզում են ավելի մոտիկից տեսնել տաղանդավոր երաժշտին:

II

Երեկոն թանձրանում էր Ավարայրի դաշտավայրում: Պարսից զորքը ափերից ելած, փրփրաղեզ գետի պես սկսեց գունդ առ գունդ առաջանալ դեպի ճակատի գիծը՝ Տղմուտ գետի եզերքը: Գետի այսափնյա եզերքին տարածվեց հայկական գունդը: Երկու բանակների միջև գոյացավ մի լայն անջրպետ:

Վարդանը, չրջապատված նախարարներով, բարձրացավ կորընթարզ բլրի գագաթը: Հայերի ձախ թևի դիմաց թանձրանում էր զորքերի մի ուժեղ համագունդ: Հարավարևելյան կողմում կանգնեց պարսից հեծելազորը:

Վարդանը անհասկանալի հանգիստ ու անշտապ սկսեց դասավորել զորաբանակը: Զախ թևում նա առաջարկեց Ատոմին: Ատոմը ապչեց, երբ կենտրոնում նշանակվեց Ներչապուհը: Վարդանը խորագնին նայեց Ատոմին ու ասաց կիսաձայն.

– Կլինես վերջապահում, իշխանի՛կ:

– Հրամանքդ, սպարապե՛տ, – չչնջաց Ատոմը հնազանդ:

Առաջադրանք 1: Բացատրե՛ք, թե իմաստային ինչ առավելու-

Թյուններ ունեն ընդարձակ նախադասությունները:

Առաջադրանք 2: Ձեր կազմած ընդարձակ նախադասություններով հորինե՛ք փոքրիկ շարադրություն:

ՊԱՐՁ ԵՎ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ասվեց, որ նախադասության հիմնական հատկանիշներից մեկն էլ ստորոգումն է, որը հենց ստորոգյալն է, որ հատկանիշ է արտահայտում և այդ հատկանիշը վերագրում է ենթակային, որով էլ միտք է արտահայտվում: Ուրեմն՝ նախադասության պարզ և բարդ լինելը պայմանավորված է ստորոգյալների քանակով, **եթե նախադասությունը մեկ ստորոգյալ՝ ստորոգում է ունենում, ուրեմն պարզ է, եթե ստորոգյալների թիվը մեկից ավելի է, հետևաբար նախադասությունը բարդ է:**

Օրինակ՝

Նստել եմ մեր պատի տակ

Մեջքը մաշված քարին (ՀՄ):

Այստեղ մեկ ստորոգյալ կա՝ **նստել եմ**, հետևաբար **պարզ նախադասություն է**, բայց Համո Սահյանը շարունակում է իր միտքը՝ այն համալրելով մեկ ուրիշ նախադասությամբ՝

Հնձած խոտի բույր է բերում

Սարից փախած քամին:

Այստեղ ավելացավ ևս մեկ ստորոգում՝ **բույր է բերում**, և ստացվեց **բարդ նախադասություն**, այստեղից էլ՝ **քանի ստորոգում, այնքան նախադասություն:**

Հիշի՛ր՝

1. Բարդ չպետք է համարել բազմակի ենթականերով ու բազմակի լրացումներով նախադասությունները, ինչպես՝

Այնտեղ էին նրանք... Վարուժանը խոհուն,

Սիամանթոն՝ հայացքն ուղղված դեպի երկինք (ԳՄ):

Պարիսպների գլխին բույն էին դրել ցինն ու ազոավը (ԱԲ):

2. Բարդ չպետք է համարել կրկնվող դիմավոր բայերով արտահայտված նախադասությունները, ինչպես «**Լինում է, չի լինում մի թագավոր է լինում:** Այս թագավորի տղան **գնում է, գնում** ճշմարտությունը չի գտնում»:

3. Նախադասությունը բարդ չպետք է համարել նաև, երբ որոշ բառաձևեր ու եղանակավորող բառեր հանդես են գալիս բայական տեսքով ու գործածվում են դիմավոր բայերի հետ, ինչպես՝

Կարծես թե դարձել եմ ես տուն (ՎՏ):

Ասես մի հին երգ է հնչում իմ հոգում (ԳՍ):

Կարծես համալսարանից եմ Ձեզ ճանաչում: Երևակայիր ճիշտ է: Հասկանալի է, որ մեկ ենթակա, երկու կամ ավելի ստորոգյալներ ունեցող նախադասությունը կլինի բարդ, որովհետև ունի բազմակի ստորոգյալներ.

Օրինակ՝

Նորից երգում, մորմոքում է աստվածային Կոմիտասը:

Կախարդում ու մոգում է աստվածային Կոմիտասը (ՊՍ):

Սոնան օձի պես կեռումեռ արեց, փորձեց ազատվել նրա բազուկների օղակից, կարոտով խնդրեց, խոստացավ... (ԱԲ):

Երկկազմ նախադասությունների դեպքում, ինչպես տեսնում ենք, դժվար չէ որոշել պարզն ու բարդը, իսկ միակազմ նախադասությունների բարդությունը որոշվում է միակազմ գերադաս անդամների քանակով՝ լինի այն անվանական միակազմ, թե բայական:

Օրինակ՝

Սև գիշեր և հուշեր և խոհեր անհամար,

Մոռացված երազներ, շուշաններ թառամած...

Տրտմություն մենավոր՝ միաձայն, միալար (ՎՏ) :

Ձսիրել, չտխրել, չափսոսալ – Հեռանալ (ՎՏ):

Սրանք բոլորն էլ բարդ միակազմ նախադասություններ են:

Թե՛ պարզ և թե՛ բարդ նախադասությունների համար պարտադիր է ավարտուն հնչերանգը:

Վարժություն 6: Գտնե՛լ պարզ և բարդ նախադասությունները, ցույց տալ, թե քանի պարզ նախադասություններից են կազմված բարդերը:

I

Ինչքան ցավ եմ տեսել ես,

Նենգ ու դավ եմ տեսել ես,

Տարել, ներել ու սիրել,

Վատը լավ եմ տեսել ես (ՀԹ):

Վերջացավ...

Կյանքս մաշվեց, վերջացավ:
Ինչ հույս արի՛ փուչ էլավ.
Ինչ խնդուլթյուն՝ վերջը ցավ (ՀԹ):

Աչուներ ձորն է մտնում
Ձորերի միջով (ՀՄ):

Իմ մահով ոչինչ չի փոխվի կյանքում,
Եվ չի պակասի կյանքում ոչինչ (ՀՄ):

II

Լուսթյուն կա Կաքավաբերդի ավերակներում: Միայն ձորի մեջ աղմկում է Բասուտա գետը, քերում է ափերը և հղկում հունի կապույտ որձաքարը: Իր նեղ հունի մեջ գալարվում է Բասուտա գետը, ասես նրա սպիտակ փրփուրի տակ ոռնում են հազար գամփոններ և կրծում քարե շղթաները:

Պարիսպների գլխին բույն են դրել ցինն ու անգղը: Հենց որ բերդի պարիսպների տակ ոտնաձայն է լսվում, նրանք կոնչյունով աղմկում են, թռչում են բներից և ահարկու պտույտներ անում բերդի կատարին: Ապա բարձրանում է արծիվը:

Առաջադրանք 1. Կազմե՛ք 3-ական պարզ համաոտտ, պարզ ընդարձակ, բարդ և այդքան էլ՝ միակազմ նախադասություններ:

Առաջադրանք 2. Ձեր կազմած պարզ նախադասությունները դարձրե՛ք բարդ նախադասություններ (կարող եք օգտագործել համադասական և ստորադասական շաղկապներ):

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ՀՆՁԵՐԱՆԳԻ

Հնչերանգը նույնպես նախադասություն կարևոր հատկանիշներից է. տարբեր նախադասություններով խոսողն արտահայտում է իր վերաբերմունքը իրականության նկատմամբ, ըստ այդմ էլ՝ խոսողը դրանք արտաբերում է տարբեր հնչերանգներով: Մի դեպքում խոսողը չեզոք հնչերանգով պատմում, ներկայացնում է որևէ դեպք, իրողություն, մի այլ դեպքում նա հարցում է անում ինչ-որ բանի մասին, մի երրորդ դեպքում իր կամքն է թելադրում, կամ որևէ բան առաջարկում, կարող է արտահայտել իր հոգեկան ապրումները, ցանկությունը, ինչպես նաև զարմանքն ու բացականչությունը: Ըստ այսմ էլ

նախադասությունները ըստ հնչերանգի լինում են 5 տեսակ՝ պատմողական, հարցական, հրամայական, ըղձական* և բացականչական:

Այս 5 տիպի նախադասություններն իրենց հերթին լինում են համատոտ և ընդարձակ, պարզ և բարդ, երկկազմ և միակազմ, դիմավոր և անդեմ, հաստատական և ժխտական: Յուրաքանչյուր տեսակն ունի իր կառուցվածքային առանձնահատկությունները, բառաքերականական ձևավորումները և հնչերանգային դրսևորումները:

ՊԱՏՄՈՂԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս տիպի նախադասություններով խոսողը պատմում է որևէ դեպքի, իրադարձությունից մասին, հաստատում կամ ժխտում է այն: Այս տիպի նախադասությունների հնչերանգը չեզոք է, առանց լարվածությունից, սկսվում է 0 (զրո) կետից, մի քիչ բարձրանում է և նորից իջնում նույն կետին: Սրանցում տրամաբանական շեշտը սովորաբար ընկնում է ստորոգյալի վրա. հատուկ նպատակներով այն կարող է անցնել այլ անդամների կամ ոչ անդամների վրա:

Պատմողական նախադասությունների ստորոգյալներն արտահայտվում են բայի բոլոր եղանակներով, բացի հրամայականից:

Օրինակ՝

Սահմանական եղանակի բոլոր ժամանակներով՝

Ձմռան մի գիշեր կար մի հարսանիք,

չրճվում էր անգուսպ ամբոխը գյուղի (ՀԹ):

Իմ պապը տնկել է

Մեր գյուղի շիվերը,

Իմ պապը պայտել է

Մեր գյուղի ձիերը (ՀՄ):

Ես սիրում եմ մթնշաղը նրբակերտ (ՎՏ):

Ոչ անձրև է գալիս,

Ոչ արև է անում,

Ոչ ամպրոպի հոտ կա,

Ոչ երաչտ (ՀՄ):

* Նախադասությունների ըղձական տեսակն ընդունում է նաև դոցենտ Ֆ. Խլղաթյանը (տե՛ս նրա կազմած դպրոցական դասագրքերը):

Հարկադրական եղանակով՝

...Ու պոետներ, որ չեն պղծել իրանց շուրթերն անեծքով,
Պիտի գովենք քո նոր կյանքը՝ նոր երգերով, նոր խոսքով (ՀԹ):
Պիտի երթան առաջ Հիմի, պիտի առնեն քաղաքը Հին (ԵԶ):

Ենթադրական եղանակով՝

Դուռը քո դիմաց միշտ բաց կլինի (ՀՍ):

Դու կգաս, ու ես այլևս չեմ լինի,

Զի լինի քո Հին տունը, չի լինի նաև չունը (Գարուն):

Ըղձական եղանակի բայերով նույնպես կարող են պատմողական նախադասություններ կազմվել, եթե արտաբերվեն չեզոք հնչերանգով.

...Գուցե մեր բախտից Քարակապում մի քարի տակ նստած լինի (ԱԲ):

Մութ սենյակում նստեմ միայնակ ու բաց անեմ հիշողություններիս կծիկը:

Պատմողական նախադասության ստորոգյալը կարող է լինել նաև անվանաբայական:

Օրինակ՝

Ես բանաստեղծ եմ, հավերժի որդի (ՀՇ):

Հրաչյա Աճառյանը համաշխարհային ճանաչում ունեցող լեզվաբան է (էդ. Աղայան):

Վարժություն 7: Ընդգծե՛ք պատմողական նախադասությունների ստորոգյալները, ցույց տվե՛ք, թե բայի որ եղանակներով են արտահայտվել կամ ինչ խոսքի մասով:

I

Էջմիածնի հինավուրց վանքի խուցը, որի մեջ տեղավորվել էր Անդրանիկ Օզանյանը, քարե դագաղի էր նման: Պատի մեջտեղում մի մոմ էր վառվում. նրա լույսը կարմիր էր:

Անդրանիկը կրնկի վրա բացեց դուռը: Թուչնակը ներս նետվեց: Անդրանիկը թեթևություն զգաց, իր հոգին կարծես ձգտում էր ճախրել հեռավոր բարձունքները: Շրջապատում խորհրդավոր լուծություն էր:

Զորավարը հագնվեց, ուղղեց համազգեստը և գնաց տաճար:

Տաճարը լցված էր այրվող ճարպի թանձրությունով: Թվաց՝ խեղդվողի աղաղակներ փվեցին ու փչրվեցին որձաքարն հարթ հատակին:

Ո՞վ էր խեղդվողը: Հաջորդ օրը կիրակի էր. նա չտապ տուն եկավ. ծանր իջավ ձիուց, բարձրացավ սանդուղքով, հանեց այծենակածը, մեկնեց դեռատի օրիորդին, որը գեղեցիկ էր ու զվարթ: Անդրանիկը գոտուց արձակեց նաև սուրը:

– Սուրս պահ տուր Երվանդին, ասա յուզի, որ ժանգը չբռնի: Կուզեմ իմ սուրը մնա այստեղ՝ Հայաստանում, տեսնում եմ, որ սուրս էլ պետք չի գալու ինձ. թող մնա այստեղ: Իմ փափագը պիտի կատարվի, և ես ինձ լավ կզգամ, կհիշեմ, որ մի մասունք ունեմ այստեղ (ըստ Ս. Խանդանդյանի):

II

Ես պիտի դուրս գամ դեպ հրապարակ,
Առանց քնարի, անդարդ խոսքերով
Ես պիտի գոչեմ, պիտի բողոքեմ,
Խավարի ընդդեմ պատերազմելով (ՄՆ):

Մթնեց: Ծերունին լուռ չարչարանքով
Մի քանի կոճղեր դրեց կրակին,
Նորից բարևեց իր երկրի կարգով
Ու բարի մաղթեց ջահել ղոնաղին (ՀԹ):

Ասում են, թե դու այնպես,
Մոռացել ես ինձ այնպես,
Որ երբ անունս են տալիս,
Հազիվ միտդ եմ գալիս (Ավ. Իս.):

Առաջադրանք 1: Կազմե՛ք երկուական նախադասություն բայի սահմանական, ենթադրական, հարկադրական, ըղձական եղանակներով և անվանաբայական ստորոգյալով:

Առաջադրանք 2: Կազմե՛ք 5 նախադասություն, որոնց ստորոգյալները լինեն բայի ժխտական խոնարհումով, ինչպես նաև անվանաբայական ստորոգյալներով:

ՀԱՐՑԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հարցական նախադասությունն ձևավորման հիմնական միջոցը Հարցական Հնչերանգն է, որը համընկնում է տրամաբանական շեշտի հետ և դրվում է նախադասության ցանկացած անդամի (ինչպես նաև ոչ անդամի) վրա:

Հարցական նախադասություններում Հնչերանգը բարձրանում է Հարցում արտահայտող բառի վրա և աստիճանաբար իջնում է:

Հարցական Հնչերանգով կարող են արտաբերվել բոլոր նախադասությունները, ըստ որում, խոսողը կարող է Հարցական Հնչերանգով արտաբերել ցանկացած բառը: Այսպես՝ «Բերդի քարերի մոտ բուսել էր ալպիական մանուշակը» պատմողական նախադասությունը հեշտությունամբ կարելի է դարձնել Հարցական՝ Հարցումը վերագրելով ցանկացած անդամի:

Օրինակ՝ Բերդի քարերի մոտ էր բուսել ալպիական մանուշակը (Թե՞ ուրիշ տեղ):

Բերդի քարերի մոտ բուսե՞լ էր ալպիական մանուշակը (Թե՞ չէր բուսել):

Բերդի քարերի մոտ ալպիական մանուշա՞կ էր բուսել (Թե՞ ուրիշ ծաղիկ):

Բերդի քարերի մոտ ալպիական մանուշա՞կն էր բուսել (Թե՞ չուշանը):

Նկատելի է, որ Հարցական Հնչերանգը սերտորեն կապված է օժանդակ բայի հետ. նայած թե խոսողը որ բառն է ուզում Հարցականով արտաբերել, նրանից հետո էլ դնում է օժանդակ բայը:

Եթե Հարցական նախադասության մեջ կա **Թե** շաղկապ, Հարցման նշանը դրվում է **Թե**-ից առաջ եղած բառի վրա, **Թե**-ին հաջորդող բառի վրա Հարցական նշան չի դրվում. այն դրվում է **Թե** շաղկապի վրա:

Օրինակ՝ Հիմա ո՞ւր ես գնալու, աշխատանքի՞, **Թե**՞ գրադարան:

Զգիտե՞մ՝ վարդերից ո՞րն ընտրե՞մ, կարմի՞րը, դեղի՞նը, **Թե**՞ հենց վարդագույնը:

Հարցական նախադասությունները մեծ մասամբ ձևավորվում են Հարցական դերանուններով, որոնց վրա էլ ընկնում է նախադասության տրամաբանական շեշտը՝ գումարվելով Հարցական Հնչերանգին:

Օրինակներ՝

Ինչո՞ւ չես խոսում, իմ օր ու արև, կյանք ու ջան որդի:

Դու իմ գերեզմանը ինչո՞ւ ես խլում... (ՀԹ):

Որտե՞ղ է ընկած

Այն քարը Հիմի,

Որ հողիս վրա

Շիրիմ պիտ լինի (Ավ. Իս.)

Ինչի՞ց է, որ Հայաստանում

Ջրերը չեն հանգստանում:

– Ինչպե՞ս, ինչպե՞ս հանգստանան...

Նրանք չունեն ապաստարան (ՀՄ):

Հարցական նախադասությունների ստորոգյալները նույնպես արտահայտվում են բայի տարբեր եղանակներով, բացի հրամայականից:

Օրինակ՝

Սահմանականով – Ո՞ր երկրի սրտում թախիժ կա այսքան (ՎՀ):

Ի՞նչ ես դեռ վիճում, վճռում, վարանում,

Հողից կտրված ի՞նչ ես վերանում (ՍԿ):

Ո՞ւմ սիրտն է հեծում մոայլ գիշերին

Ձմռան հողմերից ծեծված (Ավ. Իս.):

Ենթադրականով – Կգա՞ս, իմ ընկեր, գնանք դեպի սար (ՀԹ):

Կկարողանա՞նք վերծանել ժայռի այս հինավուրց արձանագրությունը (Մամուլ):

Երկու ժամից կավարտե՞նք այս աշխատանքը:

Հարկադրականով – Պիտի գնա՞նք թատրոն, թե՞ ոչ: Նա պետք է իմանա՞ այս մասին, պե՞տք է նրան տեղյակ պահել:

Ըղձականով – Գնա՞մ հայրիկին կանչեմ: Սաղա՞նք այս սենյակում:

ՀԱՐՑԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Սովորաբար խոսողը հարցադրումը կատարում է մի քանի նպատակներով՝ մի դեպքում ցանկանալով իմանալ իրեն ոչ հայտնի անձի, իրի, իրադարձությունների մասին, մյուս դեպքում խոսողը ցանկանում է հարցադրումով ունկնդիրների ուշադրությունը բեռել ինչ-որ անձի, դեպքի, երևույթի, կամ ինչ-որ բանի վրա, որը հայտնի է ունկնդիրներին, մի երրորդ դեպքում հարցական նախադասություններով ցանկություն, հեզնանք, արհամարհանք, հորդոր, հանդիմանություն, ինչպես նաև խնդրանք է արտահայտվում:

Հարցադրման այս տարբեր իմաստներով էլ հարցական նախադասությունները կարելի է բաժանել 3 կարգի՝ բուն կամ հավաստիական հարցում, հոնտորական կամ ճարտասանական հարցում և լրացական հարցում:

Բուն հավաստիական հարցում – Սա հարցման այն տեսակն է, երբ խոսողը ցանկանում է իր հարցի պատասխանն իմանալ, տեղեկություն ստանալ, իր չիմացածի մասին.

– Ի՞նչ նոր լուր ունեք Արցախից:

Ազգային ժողովը ե՞րբ է լսելու ավանդների վերադարձման հարցը:

Ո՞վ քեզ հրավիրեց Միջազգային գիտաժողովի:

Նման դեպքերում սովորաբար հարցերին պատասխաններ են տրվում:

Որոշ դեպքերում էլ թեև խոսողը որոշ տեղեկություններ ունի իր հարցադրման անձի, դեպքի, իրադարձության մասին, սակայն ցանկանում է ավելի ստույգ դարձնել դրանք, պարզել իր համար ոչ այնքան հավաստին:

Օրինակ՝

– Ուրեմն Աչո՞տն է եղել նախահարձակը. չէի սպասում:

Ասում են ավտոմեքենա եք շահել, ճի՞շտ է:

Լսել եմ, որ Արցախը միացնում են Հայաստանին, հավաստի՞ է արդյոք, թե՞ ցանկություն:

Երբեմն էլ հարցին հարցով է պատասխանվում:

– Իսկ դուք, տղանե՛ր մեզ չպետք է օգնեք այս գործում: – Ինչո՞ւ չէ, հապա ինչպե՞ս:

– Իսկապե՞ս նա ձեզ վիրավորել է: – Բա ի՞նչ է արել. այն էլ՝ խիստ:
– Բոլորս ենք մասնակցելու կարիներտի հարադրմանը: – Դա էլ
հա՞րց է:

Նման դեպքերում հարցով հարցումին պատասխանելը կարող է
փոխարինվել այո, ոչ պատասխանական բառերով, ինչպես նաև
իհարկե, անշուշտ, անկասկած, անպայման, թերևս և նման
եղանակավորող բառերով:

Օրինակ՝

– Երեխանե՛ր, պատրա՞ստ եք ստուգողական աշխատանք գրե-
լու: – **Իհարկե՛,** վաղուց եք նախազգուշացրել:

– Իսկ աղջիկները կմասնակցե՞ն մեր արշավին: – **Անպայման, մեծ**
սիրով:

– Կիրակի օրը կարո՞ղ ենք միասին ցուցահանդես գնալ: – **Թերևս,**
վատ չի լինի:

– Մեր դասարանը մասնակցելո՞ւ է շաբաթօրյակին: – **Անպայման,**
ընկե՛ր Հակոբյան:

Հավաստիական հարցման ժամանակ հաճախ նաև բացասական
պատասխան է տրվում **ոչ, բնավ, ամենևին, երբեք, ոչ մի դեպքում**
պատասխանական բառերով:

Օրինակ՝

– Պատրա՞ստ եք ստուգողական աշխատանք գրելու: – **Ո՛չ, չէիք**
նախազգուշացրել:

– Սո՛նա՛, չէի՞ր ցանկանա վաղը գալ քննություն: – **Բնա՛վ, երբե՛ք:**
Ես այսօր եմ պատրաստ:

– Թումանյանի ստեղծագործություններից որևէ մեկը ձանձրա-
ցե՞լ է: – **Ամենևին:**

Այսպիսի նախադասություններում սովորաբար կիրառվում են
նաև **մի՞թե, արդյո՞ք, չի՞նի՞ թե** երկբայական եղանակավորիչները,
որոնք մի դեպքում տարակուսանք են արտահայտում (**Մի՞թե վեր-
ջին պոետն եմ ես – ՎՏ**), մի այլ դեպքում՝ զարմանք, անհանգստու-
թյուն (**Չի՞նի՞ թե պապիկին մի բան է պատահել**), երրորդ դեպ-
քում՝ երկմտություն (**Արդյոք խոսքի տերը կլինի՞ տնօրենը**) և այլն:

Հոնտորական (ճարտասանական) հարցում – Սա հարցման այն
տեսակն է, երբ հարց տվողը պատասխանի չի սպասում. նա լավ
գիտի իր հարցի պատասխանը, սակայն դիմում է ունկնդիրներին

Հարցումով՝ նրանց ուշադրությունը հատկապես հրավիրելու այն խնդիրների վրա, որոնք չատերին են հուզում կամ հետաքրքրում:

Օրինակ՝

Ինչո՞ւ են իրենց հայրենիքին ու հողին կառչած մարդիկ հեշտու-
թյամբ թողնում իրենց դարավոր երկիրը («Ազգ» օրաթերթ):

Քերենք Հոնտորական հարցման գեղարվեստական օրինակներ.

Հիմի է՞լ լոենք, եղբարք, հիմի է՞լ.

Երբ մեր թշնամին իր սուրն է դրել

Իր օրհասական սուրը մեր կրծքին,

Ականջ չի դնում մեր լաց ու կոծին,

Ասացե՛ք, եղբարք հայեր, ի՞նչ անենք,-

Հիմի է՞լ լոենք: (Ռ. Պատկանյան):

Գարուն է, անուշ գարուն,

Դու ինչո՞ւ չկաս, մեր երգի վեհափառ,

Կաքավն է երգում սարում,

Կանչում է՝ ե՛կ, Կոմիտաս (Սարմեն):

Իջնում ես հայոց լեռներեն,-

Ինչո՞ւ չես խոսում հայերեն (ՆԶ):

Ինչո՞ւ են մարդիկ գինն իրենց գանձի

Իմանում միայն կորցնելուց հետո (ԼՍ):

Ինչպես դժվար չէ նկատել, Հոնտորական հարցումը աշխուժաց-
նում է խոսքը, լարում է ունկնդիրների ուշադրությունը: Այս հարց-
ման դեպքում շատ հաճախ խոսողը, Հոնտորը ինքն էլ պատաս-
խանում է իր հարցին:

Ո՞վ կթողնի, որ ազատ ձեռներեցը ազատ գործի: Ո՛չ ոք, նրա
ձեռքը հազար բռնող կա (Մամուլ):

Ո՞վ է տվել էն լրբին սար.

Սարն ամենքինս է հավասար (ՀԹ):

Լրացական հարցում – Հարցման այս տեսակով երբեմն ավելի է
սրվում հարցի բնույթը, երբեմն խոսողը կրկնակի հարցադրում է
անում՝ դրանով ավելի հաստատելով իր միտքը:

Օրինակ՝ Ես ինչպե՞ս չմասնակցեմ այդ հարցի քննարկմանը. չէ՞ որ դա լուրջ հարց է (ուրեմն պիտի մասնակցեմ):

– Ինչո՞ւ ես հրաժարվում, չէ՞ որ գնալը մեզ համար էլ օգտակար կլինի (ուրեմն չպետք է հրաժարվես):

Այս հարցադրումով կարող է արտահայտվել նաև **խնդրանք** (Տղա՛ ջան, չէի՞ր օգնի այս ճամպրուկը մեքենա բարձրացնել: Գի՛րքդ կտա՞ս երկու օրով):

Արտահայտվում է նաև **զարմանք** (Ինչպե՞ս թե իրենց հողերը մեզ չեն տա – ԴԴ):

Լրացական հարցման մի տեսակն էլ այն է, որում պատասխանը թաքնված է հարցադրողի խոսքում.

– Մենք կարծեմ հին ծանոթներ ենք, ճիշտ չէ՞:

Աճառյանը Սորբոնի համալսարանում է սովորել, այնպես չէ՞:

Ջեկուցողը ի՞նչ նոր բան ասաց որ. բոլորն էլ հայտնի բաներ էին:

Վարժություն 8: Որոշե՛ք հարցական նախադասությունների տեսակները: Ընդգծե՛ք ստորոգյալները և ասե՛ք, թե բայի որ եղանակով են արտահայտվել:

I

Ո՞ւր կորան...

Մոտիկներս ո՞ւր կորան,

Ինչքան լացի, ձեն տվի

Ձեն չտվին, լճու կորան (ՀԹ):

Ո՞վ է ձեռքով անում, ո՞վ,

Հեռվից անթիվ ձեռքերով՝

– Ջան, հայրենի անտառներ,

Դուք եք կանչում ինձ ձեր քով (ՀԹ):

Խայամն ասավ իր սիրուհուն. – «Ոտքդ զգույշ դիր հողին

Ո՞վ իմանա, որ սիրունի բիբն ես կոխում դու հիմի» (ՀԹ):

Ի՞նչ իմանաս ըստեղծողի գաղտնիքները անմեկին (ՀԹ):

– Որսկա՛ն ախպեր, ասա, յարար
Ո՞վ է հարսը իմ բալիս,
Ո՞վ է գրկում չոր գլուխը
Իմ մարայիս, իմ լալիս (Ավ. Իս.):

Մի՞թե դու չէիր, հայրենիք իմ հեգ,
Որ տայգաներից, մի՞թին յուրդերից ... (Ավ. Իս.):

II

Ո՞ւր գնամ հիմա և ո՞ւր թափառեմ,
Երբ ամեն ճամփա ձեր տունն է բերում,
Ո՞ր հեռուներում կարոտս մարեմ,
Երբ քոնն են հավետ մոտիկն ու հեռուն (ՎԴ):

Տարիներս, տարիներս,
Ո՞ւր մնացին տարիներս...
Ո՞ւր գնացին խեղճ ու կրակ,
Ոտաբորիկ տարիներս (ՀՍ):

Ի՞նչ անեմ: Աչքերս փակեմ,
Անրջեմ... ու բացեմ նորից:
Զգիտեմ՝ ո՞ւր եմ հասնելու,
Զգիտեմ՝ ե՞րբ եմ հասնելու (ՀՍ):

Ծաղիկներն ինչո՞ւ այսքան վիշտ ունեն,
Այսքան վիշտ ունեն, բայց լեզու չունեն (ՀԾ):

... Ու մինչև այսօր չգիտես գտա՞վ, թե՞ դեռ չի գտել (ՀԾ):

Եվ ես խորհում եմ, խորհում անդադար՝
Ի՞նչ պիտի լինի վիճակը ազգիս.
Պիտի կորչի՞ հայն ստեղծարար,
Թե՞ պիտի ապրի ինչպես այս Մասիս (Սարմեն):

Վարժություն 9: Բերված երկխոսության մեջ որոշել, թե որ հարցական նախադասություններն են պատասխան պահանջում, որոնք են ճարտասանական:

Եկեղեցական երգչախմբի ղեկավարն առաջինն էր, որ նկատեց ութամյա Ֆրանց Շուրբերտին, ընկալեց նրա տաղանդը.

– Ի՞նչ է անունդ,- հարցրեց Հոլցերը:

– Ֆրանց:

– Որտե՞ղ ես բնակվում:

– «Կարմիր խեցգետին» է կոչվում մեր տունը:

– Դու տանը երաժշտությունը զբաղվո՞ւմ ես, դաշնամուր ունե՞ք:

– Ո՛չ:

– Մե՞ծ է ձեր ընտանիքը:

– Ապրում եմ մորս, հորս, երեք եղբայրներիս ու քրոջս հետ:

– Վաղը հորդ հետ կգաս,- պատվիրեց Հոլցերը:

Հայրը դժգոհ էր որդուց: Այդ բանը նա չլիաբացրեց Հոլցերից:

– Գիտե՞ք դեպի ուսումը սեր չունի լակոտը, իսկ երաժշտությունով փոր չես կշտացնի այս դարում:

– Դուք չե՞ք սիրում ձեր որդուն: Ինչո՞ւ չեք ուզում մտածել նրա ապագայի մասին:

– Այդ ե՞ս չեմ սիրում իմ որդուն...

– Նա ծնվել է երաժշտության համար...

Առաջադրանք 1: Ձեր տետրերում գրե՛ք 3-ական բուն (հավաստիական), ճարտասանական և լրացական հարցական նախադասություններ:

Առաջադրանք 2: Գրե՛ք 5 պատմողական նախադասություն և դրանք փոխակերպե՛ք հարցական նախադասություններով:

ՀՐԱՄԱՏԱԿԱՆ (ՀՈՐԴՈՐԱԿԱՆ) ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եթե հարցական նախադասություններով խոսողը տարբեր նպատակներով հարցում է կատարում որևէ անձի, իրի, երևույթի ու դրանց հատկանիշների վերաբերյալ, ապա հրամայական-հորդորական նախադասություններով իր ցանկությունը, կամքը, խնդրանքը, հրամանն ու առաջադրանքն է արտահայտում, երբեմն էլ հորդորում, հրահրում է որևէ գործողություն կատարելու կամ չկատարելու, որևէ հարց, խնդիր լուծելու կամ չլուծելու:

Հրամայական նախադասությունների ձևավորման ամենակարևոր հատկանիշները չեչտն ու հնչերանգն են, ինչպես նաև բայի հրամայական եղանակը: Սրանցում չեչտը համընկնում է տրամաբանական չեչտին և սովորաբար դրվում է հրամայական եղա-

նակներով արտահայտված բայ-ստորոգյալների վրա: Անհրաժեշտությամբ դեպքում այն դրվում է նաև այլ անդամների ու բառերի վրա, և դրանք արտաբերվում են ավելի բարձր տոնայնությամբ. իրենց ձայնային ուժգնությամբ առանձնանում են մյուս բառերից ու բառակապակցություններից:

Օրինակ, համեմատենք հետևյալ նախադասությունները՝

Մի՛ գնա: Զգնա՛ս:

Մի՛ գնա: Զգնա՛ս:

Վերցրո՛ւ պայուսակը ու դպրոց գնա՛: **Վերցրո՛ւ պայուսակը ու դպրոց գնա՛:**

Եթե ձախ կողմի նախադասությունները արտաբերենք բարձր տոնայնությամբ և ուժգնացող շեշտերով, դրանք կլինեն **հրամայական**, իսկ եթե այդ նույն նախադասություններն արտաբերենք ավելի թույլ հնչերանգով, ավելի մեղմ տոնայնությամբ, կլինեն **խնդրանք, հորդոր**, նույնիսկ դրանց կարելի է հավելել **խնդրում եմ** առանձին նախադասությունը:

Այսպես՝ մի՞թե Նաչատուր Աբովյանը կարգադրում, հրամայում է իր «Պարապ վախտի խաղալիքը» գրքին, որ գիրքը գնա մարդամեջ: Նա խնդրում, հորդորում է իր գրքին:

Գնա՛՛ իմ խեղճ գիրք՝ գնա՛՛ մարդամեջ,

Գլուխդ քաշ գցի՛ր, մի՛ նեղանար հեշ:

Ականջդ փակի՛ր, սիրտդ լեն բռնի՛ր,

Ինչ ասեն, խոսեն, տա՛ր ու համբերի՛ր:

Մինչդեռ սրան բոլորովին հակադիր հնչերանգով է արտաբերում Ավետիք Իսահակյանը իր «Ռազմակոչը»: Նա հրամայում, կարգադրում է հայրենիքի կտրիճ զավակներին ու քաջ ժողովրդին, որ «հագնեն-կապեն զենքեր ու զրահ» ու պաշտպան կանգնեն մեր հայրենիքին՝

... Ելե՛ք, զարթնեցե՛ք, կանգնեցե՛ք արթուն,

Գխոցե՛ք, քնում են գետերն ու քամին,

Սակայն չի քնում երբեք թշնամին:

Բերված օրինակներից պարզորոշ երևում է, որ հրամայական եղանակի բայերով բերված նախադասությունները մի դեպքում հրաման ու կոչ են արտահայտում, մյուս դեպքում՝ խնդրանք,

պահանջ, առաջադրանք: Հետևաբար այս տիպի նախադասությունները կարելի է կոչել **հրամայական-հորդորական:**

Հրամայական նախադասություններ – Այս ենթատեսակի նախադասություններով արտահայտվում է **հրաման, կարգադրություն, պահանջ, անհրաժեշտաբար կատարվող գործողություն, ինչպես նաև մերժում, չկատարվող, արգելվող գործողություն, եղելություն:**

Հրաման – **Ջարկեցե՛ք** անդուլ, անգութ, անխնա,

Ջնջեցե՛ք աշխարհն՝ ապական ու հին,

Թող քարը քարի վրա չմնա՛,

Ողջը **մատնեցե՛ք** հրին ու մահին (ՎՏ):

Թռե՛ք, բազեններ, **սուրացե՛ք**, տանկե՛ր, դեպի թշնամին (ՆԶ):

Պատասխան տուր ինձ, մատնի՛չ սևաչյա (ՀԹ):

Կարգադրություն – **Պարի՛ր**, քամի՛, այգում այս մերկ, **ոռնա ու լաց, Տա՛ր**, մի՛ թողնիր, քամի, անսանձ – ոչինչ, ոչինչ (ՎՀ):

– **Մտի՛ր ջուրը** և մաքրվի՛ր Համիդի տված աղտեղություններից,– կարգադրեց Այվազովսկին շանը (Վազներ):

– **Կարգի՛ բերեք** ննջարանը և **անցե՛ք տողանի**,– կարգադրեց խմբի ավագը:

Պահանջ – **Հա՛ց բերեք**, **արա՛ղ բերեք** քեռի խնչանի համար (ՀԹ):

Մի՛ խառնեք մեզ ձեր վայրի արջի ցեղերին (ՎՏ):

Ելե՛ք, **զարթնեցե՛ք**, **կանգնեցե՛ք արթուն** (Ավ. Իս.):

Արգելք, մերժում – **Դե**, **մոռացի՛ր քո տազնապը թաքուն**,

Ու շատ մի՛ թախծիր այդպես իմ մասին.

Եվ ճամփի վրա ամեն իրիկուն

Մի՛ կանգնիր՝ հագած չորերը քո հին (ՎԳ):

– Իմ քորփա էրեխին էն անիրավ աշխարհքը մի՛ գցիր, չե՛մ ուզում,– լայիս էր կինը (ՀԹ):

Իշխաններ՛, **չծախե՛ք** մեր հայրենիքը, **չուրանանք** մեր հավատը (ԴԳ):

Հորդորական նախադասություններ – Այս տիպի նախադասություններում շեշտվածությունն ավելի մեղմ է, հնչերանգը՝ ցածրա-

ցող. դրա շնորհիվ էլ խոսողը ոչ թե հրաման ու կարգադրություն է անում. այլ մի դեպքում խնդրում է, մյուս դեպքում՝ հորդորում, խոնարհարար պահանջում: Նույնիսկ խնդրանքը, աղերսանքը, մաղթանքը հնչերանգի տարբեր ելևէջումներով են պայմանավորված: Օրինակ, Պարույր Սևակը հետևյալ նախադասությամբ, որն ունի շատ մեղմ տոնայնություն, իսկապես օգնություն է հայցում Սուրբ Մարիամից:

Օգնի՛ր ինձ, Մարիա՛մ, բարեխոս եղի՛ր իմ և իմ միջև...
Իսկ Սարմենը Կոմիտասի ներկայությունն է տեսչում՝
Կաքավն է երգում սարում,
Կանչում է՝ ե՛կ, Կոմիտա՛ս,
Նստի՛ր քո չինարի տակ,
Մրմնջա «Ծիրանի ծառ»,
«Անտունի», «Ծիծեռնակ»:

Բերենք հորդորականի մի քանի տեսակներ.

Խնդրանք, աղերսանք, հորդոր -

Քո՛ւն եղիր, բալա՛ս, աչքդ խո՛ւփ արա...

Սո՛ւրբ Աստվածամայր, բայիկիս քո՛ւն տուր (ՌՊ):

Դարձի՛ր ինձ մոտ, վերադարձի՛ր դու նորից (ՎՏ):

Արի՛, եղբայր, փառաբանե՛նք մեր քաղցրաբառ հայոց լեզուն (ՆԶ):

– Լսի՛ր, հայր, ընդունի՛ր տառապյալ որդուդ աղաչանքը, մի՛ արատավորի՛ր Մամիկոնյանների պայծառ անունը հավիտենական ամոթով (Բաֆֆի):

Պատգամ – Լսի՛ր, որդիս, պատգամ որպես

Սիրող քո մոր խոսքը սրտանց (ՍԿ):

Եկո՛ւր, որդյա՛կ, հայրենի տունդ շենցո՛ւր (ԴՎ):

Կոչ, հրավեր – Արի՛, իմ սոխա՛կ, թո՛ղ պարտեզ, մերին,

Տաղերով քո՛ւն բեր տղիս աչերին (ՌՊ):

Արի՛, բլբո՛ւլ, խոսի՛ր բարըն, օրհնվի՛ր քո էկած սարըն (Ս–Ն):

Եկե՛ք, քույրե՛ր՝ սեզ սարերի

Չքնաղազե՛ղ ոգիներ,

Եկե՛ք, ջահել սիրահարի

Սերը ողբանք վաղամեռ (ՀԹ):

Հորդորական նախադասությունների մի տեսակն էլ դասագրքերում տրվող **առաջադրանքներն** են, որոնցով աշակերտներից պահանջվում է տրված վարժություններից դուրս գրել, ասենք, անկանոն բայերը, առանձնացնել հրամայական նախադասությունները և այլն:

Բացի բայի հրամայական եղանակից հրամայական բնույթի նախադասություններ կարող են կազմվել նաև բայի մյուս եղանակներով.

Սահմանական – Գնում ես տո՛ւն և վե՛րջ,- կարգադրեց հայրը:
– **Վաղը գնալո՛ւ ենք** որսի,- ասաց ընկերս,- **չուչանա՛ս:**

Ենթադրական – Կարգին կհագնվե՛ս, վզկապդ էլ կկապե՛ս: Ծուռ կվերադառնա՛ս ու կպատմե՛ս ներկայացման մասին՝ ովքե՞ր էին խաղում (ՊՂ):

Հարկադրական – Պետք է նախ աշխատե՛ք, հետո մտածե՛ք բարիքները վայելելու մասին:

Զպետք է թո՛ւյլ տանք, որ ուզածն անի:

Ըղձականով – Դուք ղենքով կովե՛ք, մենք՝ խոսքով...

– **Թողնե՛նք հրաչքները, գնա՛նք,** տե՛ր արքա, **գնա՛նք քո ցավին** (ՀԹ):

Թո՛ղ միշտ ծածանվի ազատություն զրոշը Մասիսի ձյունապատ գագաթին:

Հրամայական-հորդորականներ են լինում նաև **միակազմ** նախադասությունները՝

Զուրը չտեսած՝ մի՛ բորեկանա (Ժող.):

Մի՛ հավատա կնոջ երդումին... (Ավ. Իս.):

Հետևե՛լ իմ օրինակին: Պատրա՛ստ լինել հարձակման: **Երբեք չնահանջե՛լ:**

Կետադրություն – Հրամայական և հորդորական նախադասություններում հրաման, կոչ, պահանջ արտահայտող ստորոգյալների վերջին վանկի ձայնավորի վրա շեշտ է դրվում (այն կարող է դրվել նաև այլ բառերի վրա) : Օրինակ, «Հիմա շարադրությունդ գրի՛ր» նախադասության շեշտը դրված է **գրի՛ր** բայ-ստորոգյալի վրա, բայց կարելի է ընդգծել նաև ժամանակը՝ **Հիմա՛** գրիր և ոչ թե հետո, կամ պահանջվի, որ շարադրությունը գրի և ոչ թե մեկ ուրիշ բան, այդ

ղեպքում շեշտը դրվում է շարադրութիւնն բառի վրա՝ շարադրութիւնդ գրիր: Այս ղեպքում գործ ունենք տրամաբանական շեշտի հետ, որը համընկնում է հրամայականի հետ:

Արգելականի ղեպքում միշտ շեշտվում է մի արգելականը՝ մի՛ գնա, մի՛ խաղա: Իսկ հարադիր բայերի ղեպքում շեշտվում է առաջին հարադիրը՝ մո՛տ արի, վե՛ր կաց, առա՛ջ գնա. «Վե՛ր կաց վեր. իգիթ»:
«Գո՛ւրս եկեք կրկին շիրմից, խավարից»:

Վարժութիւն 10: Արտագրե՛ք հրամայական նախադասութիւնները և որոշե՛ք դրանց տեսակները. բո՞ւն հրամայական են, թե՞ հորդորական:

Զարկեցե՛ք, դարբիններ կոանը, սալին,
Զարկեցե՛ք կոանը՝ շղթայքն ամրանան,
Անիծյալ արքայի կապանքն ամրանան...
Մենք էլ չենք զարկելու երկաթի սալին,
Թո՛ղ կրծեն գամփոքերը ոտքիդ շղթաներ,
Արձակվեն բազուկներդ, և դու աշխարհին
Գո՛ւրս արի բերելու կոտորած, ավեր (Հ. Հովհաննիսյան):
Հեռացի՛ր, աշո՛ւն, համրորեն լացող,
Ողջո՛ւյն քեզ մրրի՛կ, ահեղաչաչուն,
Ողջո՛ւյն քեզ կովի առաջին հնչուն՝
Լույսի պես կարող, խոսքի պես խոցող...
Գրկի՛ր իմ հոգին մարտի ցնծությամբ,
Բորբոքի՛ր սիրտս, ազատությա՛ն երգ,
Շողա՛ մոայլուն, ըղձալի՛ եզերք:
Որոտա՛, չաչի՛ր, փոթորկավե՛տ ամպ (ՎՏ):

Վարժութիւն 11: Գտե՛ք հրամայական նախադասութիւնները, որոշե՛ք տեսակները և ցո՛ւյց տվեք, թե ստորոգյալներն ինչով են արտահայտվել:

Ազատությա՛ն զանգ, դու վե՛հ ղողանջե՛
Կովկասյան վսեմ, վես բարձունքներից,
Ինչպես մրրիկ՝ չաչե՛, շառաչե՛
Մինչև սիգապանծ ազատն Մասիս (Ավ. Իս.):
Շառաչե՛ք ուժգին, կաղնիներ՝ հզոր,
Խուլ վրնջացե՛ք, նժույգներ՝ խիզախ,
Մրրկի նման զարկեցե՛ք շեփոր,

Դեպի ուղղված դաշտ, դեպ հերոսացում...

Վանեցե՛ք հեռու թշնամուն վայրագ (Ավ. Իս.):

– Մի՛ խոսիր այդպես խրատական ոգով, տեր Վահանյաց,- խստորեն հանդիմանեց կաթողիկոսը... Հավաքեցե՛ք բոլոր կովոզներին այստեղ: Կովե՛լ և տեղի՛ չտալ... Եղածով դիմադրե՛լ: – Դե՛հ ճանապարհ,- հրամայեց Արտակը (ԳԳ):

– Մի՛ լար, աղջիկս,- քա՛ղ եղիր... Այս փորձանքն էլ կանցնի,- հորդորեց նրան Զոհրապը: – Տո՛ւն գացեք.. Ժամանակ մի՛ կորսնցրեք,- դիմեց նրանց Զոհրապը:

– Զոհրա՛պ, բա՛ն մը ըրե, որ ինձի ալ տանին: Ինչո՞ւ մեզի կրաժնեն (ՊԶ):

Առաջադրանք 1: Զեր կարդացած ստեղծագործություններից բերե՛ք հրամայական նախադասություններ և բացատրե՛ք տեսակները:

Առաջադրանք 2: Ինքներդ կազմեցե՛ք տարբեր տեսակի հրամայական նախադասություններ և ասացե՛ք, թե ինչպե՞ս են կազմվել, բայի ո՞ր եղանակներով, կամ ստորոգյալները ինչո՞վ են արտահայտվել: Բացատրեցե՛ք կետադրությունը:

ԸՂՁԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ըղձական նախադասությունները պետք է տարբերել բացականչականներից մի քանի հիմնավորումով.

1. Ըղձական նախադասություններն արտահայտում են խոսողի փափագը, իղձը, տենչանքը, ցանկությունը, օրհնանքներն ու անեծքները, մինչդեռ բացականչական նախադասություններն արտահայտում են հիացմունք, ուրախություն, զարմանք, բացականչություն, հանդիմանություն, ամսոսանք, վախ, հեզնանք և այլն:

2. Ըղձականների հնչերանգը համեմատաբար հանգիստ է, խաղաղ, զգացմունքային, մինչդեռ բացականչականների հնչերանգը ավելի բարձր է, պոռթկուն (Վահ, էսքան էլ չար լինի մարդ), երբեմն էլ՝ ահազանգող ու ահաբեկող (Հեյ, այդ ի՞նչ եք անում...):

3. Եթե բացականչականներում առատորեն են գործածվում ձայնարկություններն ու վերաբերականները, ապա ըղձականներում դրանք սակավադեպ են:

Այս երկու տեսակի ընդհանրությունն այն է, որ երկուսում էլ ստորոգյալներն արտահայտվում են հիմնականում ըղձական եղանակի բայերով:

Հիշենք Գեղամ Սարյանի բոլորիս կողմից սիրված «Մարտիկի երգը» (Թուչեի մտքով տուն...) Հրաշալի բանաստեղծությունը, որը գրված է միայն ըղձական եղանակի բայերով, և որի համար խիստ մեղեդային երաժշտություն է գրել շնորհալի երգահան Աշոտ Սաթ-յանը:

Բերենք օրինակներ նախ ըղձական եղանակի բայերով.

Ելնեմ, ողջույն տամ բոլորին այսօր,

Երգելով չրջեմ փողոցից փողոց,

Տամ ու բաժանեմ կարոտներս բոց,

Ում որ հանդիպեմ, ում տեսնեմ այսօր (Վ. Գրիգորյան):

...Եվ Ջարենցը համբուրի չրթունքները քո մեռած (ԵՉ):

Ըղձական նախադասություններում մեծ կիրառություն ունի լինել բայի ըղձական անցյալի ապառնին, որով ավելի է ընդգծվում խոսողի ցանկությունը, երազանքը:

Օրինակ՝

Լինեիր մենակ ես ու դու

Գետի կանաչ եզերքին,

Ու խառնեիր քո հոգու

Մրմունջները իմ երգին (ԳՍ):

Լինեք, այնպես լինեք, որ ինքը հնձվոր լինեք, նրանց արտը հնձեք, Սոնան հաց բերեք իրեն, Շապիկը քրտներ, և քրտնած նստեք կողքին (ԱԲ):

Հրաչք լինեք, կրկնվեք այն հրաչքն իրական,

Առուն ստվերս տանեք ջաղացպանի աղջկան (ՀՍ):

Լինեք հեռու մի անկյուն,

Լինեք արդար մանկան քուն.

Երագի մեջ երջանիկ

Հաչտ ու խաղաղ մարդկություն (ՀԹ):

Լինեի չորան սարերում հեռու,

Գայիր, անցնեիր վրանիս մոտով... (ՎՏ):

Ըղձական նախադասութիւններում, հատկապես ժողովրդախոսակցական լեզվում, առատ գործածութիւն ունեն **երնեկ, երանի, երանի թե, ուր է, ուր է թե** զգացմունք արտահայտող բառերը:

Օրինակներ՝

երնեկ, երնեկ երազ լինիմ,

Թռնիմ մոտդ, մայրի՛կ ջան (Ավ. Իս.):

երնեկ ունենամ հազար ու մի կյանք,

հազարն էլ սրտանց քեզ մատաղ անեմ (Ավ. Իս.):

երանի թե մի օր հանկարծ Քանաքեռից իջնեիր

եվ քո սիրած Նորքում կանգնած Երևանին նայեիր (Սարմեն):

Ուր է թե մի հրաշք լիներ, ու նորից ջահելանայինք (ԳԹ):

Ըղձական նախադասութեան ստորոգյալը կարող է արտահայտվել նաև ըղձականի ժխտական ձևերով՝

Չգայիր էլի, չհանդիպեիր, խաղաղված անդորրս չվրդովեիր (ԳԹ):

Երանի չգնայի ու այդ տեսարանին ներկա չլինեի:

Ըղձական նախադասութիւններով են արտահայտվում բարեմաղթանքները՝

Ոսղաղութիւնն ձեզ, մեր անբախտ պապեր... (ՀԹ):

Բարի՛ ճանապարհ, վարդապե՛տ, վերադա՛րձ բարի (Կոստան Զարյան):

Գնա՛ս բարով, վարժապե՛տ, բարի՛ ճանապարհ, վերադա՛րձ բարի (ԽԴ):

Օրհնանքներ՝

Երկար կյանք ունենաս, որդի՛: Աստված քեզ բարի՛ բախտ տա: Հող բռնե՛ս ոսկի դառնա, յոթ՞ որդով սեղան նստես, մեկը հազար դառնա (ժողովրդական օրհնանքներ):

Անեծքներ՝

Լավ օր չտեսնես: Յամաք հացի կարոտ լինես: Աստված պատիժդ տա և այլն:

Ըղձականով են արտահայտվում նաև հայհոյանքները...

Ըղձական նախադասութեան ստորոգյալները կարող են արտահայտվել նաև ենթադրական և հարկադրական եղանակների բայերով.

Ենթադրական՝

Թե դու, սիրելի՛ս, ինձ մոտ լինելիք,

Մենք կկանգնեինք,

Ու չքեղ մի փունջ,

Ոչ երկու, երեք... փնջերն այդ բոլոր

Ես կնետեի գիրկդ, սիրելի՛ս (ՎԴ):

Կգնայինք գյուղ, մի լավ կհանգստանայինք, կտեսնեինք մեր հա-
րազատներին:

Կգայիր, կնստեինք, կվերհիչեինք մեր մանկությունը... նորից
կջահեղանայինք:

Հարկադրականով՝

Դու պիտի ծաղկիս, երկի՛ր հայրական,

Քո ոգով, ոճով և բարձրագլուխ,

Դու պիտի հնչես, հնչես հաղթական,

Իմ հին հայ լեզու՝ քաղցր ու սրտաբուխ (Ավ. Իս.):

**Պիտի մի անգամ էլ վանա ծով գնամ, պիտի Աղթամարում նորից
մոմ վառեմ ու նոր մեռնեմ (Սարմեն):**

**Վարժություն 12: Հաշվե՛ք՝ քանի՞ ըղձական նախադասություն
կա Հ. Շիրազի «Թագադրում» բանաստեղծության մեջ: Շիրազի գոր-
ծածած ըղձական եղանակի մի քանի բայերով կազմե՛ք նոր նախա-
դասություններ:**

Ելնեմ՝ ծաղկումն է ձնծաղիկների,

Ձյունից ինձ նայող աչերն համբուրեմ:

Գնամ հետևից ծիծեռնակների՝

Նրանց հետ ետ գամ՝ գարունը բերեմ,-

Բարձրանամ կապույտ գահը լեռների՝

Արևն իբրև թագ իմ գլխին առնեմ,-

Հագնեմ ծիրանին արշալույսների,-

Գարնան թագավոր ինձ թագադրեմ:

Եվ հրովարտակ արձակեմ մի խիստ,

Որ աղբյուրները հավերժ կարկաչեն,

Որ ծաղկեն լեռներն իմ արևանիստ,

Որ ծով դաշտերը հավերժ կանաչեն,

Որ գարունները գան ու չգնան,

Որ հավերժանան գմբուխտ դրախտով,

Որ բեկվի իմ դեմ խորհուրդը մահվան,
Որ մարդը ցնծա հավերժի բախտով...

Վարժություն 13: Ավետիք Իսահակյանի «Ավիլին» բանաստեղծուծյան ըղձական նախադասուծյունները փոխակերպե՛ք պատմողական նախադասուծյուններով.

Ն մ ու չ՝ Կյանքիդ ուղին լինի պայծառ – Կյանքիդ ուղին պայծառ է:

Ամեն քայլդ՝ ազնիվ, արդար – Ամեն քայլդ ազնիվ ու արդար է:

Լինես խոհուն, լինես գիտուն,
Եվ ունենաս սիրտ զգայուն:
Լինես բարի և անբասիր,
Ընկերներիդ սրտով սիրես,
Երբ քեզ տեսնեն, ուրախանան.
Միչտ օգնելու լինես պատրաստ
Տանջվող մարդուն և ընկերին:
Անդավաճան, անհուն սիրով
Հայրենիքիդ լինես պաշտպան...

Վարժուծյուն 14: Համո Սահյանի Հետևյալ երկու քառատողը վերածե՛ք ըղձականի:

Մանգաղը քարին մնաց,	Ոչ անձրև է գալիս,
Ճիպոտը մնաց կամին,	Ոչ արև է անում,
Բառաչեց եզր կալում	Ոչ ամպրոպի հոտ կա,
Ու թողեց լուծն ու սամին:	Ոչ երաչտի...

ԲԱՑԱԿԱՆՁԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՑՈՒՆՆԵՐ

Ինչպես ասվեց «Ըղձական նախադասուծյունների» բաժնում, բացականչականները նույնպես զգացմունքային են և արտահայտում են խոսողի ուրախուծյունը, ցնծուծյունը, հիացմունքն ու զարմանքը, ափսոսանքն ու վախը, հեզնանքն ու դժգոհուծյունը, նաև՝ կոչն ու բացականչուծյունը: Սրանց ձևավորման միջոցը նույնպես հնչերանգն է: Բայց ի տարբերուծյուն ըղձականների, սրանց հնչերանգը ավելի բարձր է, ավելի երկարաձգված: Գրավոր խոսքում

այն արտահայտվում է երկարացման նշանով (‘) և կարող է դրվել նախադասություն ցանկացած անդամի (նաև ոչ անդամի) վրա՝

– **Հեյ վա՛րս կոտորան իմ թևերս,**
Ընկա գիրկդ, Ալազյա՛դ
Ա՛խ, մեծ սրտիդ սեղմեմ սիրտս.
Լամ, արուն լամ, Ալազյազ ... (Ավ. Իս.) :

Բացականչական նախադասությունների ստորոգյալները կարող են արտահայտվել՝

1. Սահմանական եղանակի տարբեր ժամանակների բայերով:

Օրինակ՝
Եկա՛ն, եկա՛ն, բերի՛ն, բերի՛ն,
Մեր կողբադին գնաց Սասուն,
Կանայք բերեց քառսուն-քառսուն (ՀԹ):

Յարիս տարա՛ն, ջանիս տարա՛ն,
Հոնգուր-հոնգուր կուլամ ես (Ավ. Իս.):

– **Գալի՛ս եմ, գալի՛ս, մի՛ վախենա,-** ձայն տվեց որսորդ Ավին (ՎԱ):

2. Հրամայական եղանակի բայաձևերով, որոնք ոչ թե հրաման են արտահայտում, այլ բացականչություն, ահագանգ:

Օրինակ՝
Մի եկե՛ք, եկե՛ք, տեսաք, թե ինչ է կատարվում այստեղ:
– **Դո՛ւրս իմ տնից, սևերե՛ս,**
Ետ չնայե՛ս դեպի մեզ... (ՀԹ):

3. Ենթադրական և հարկադրական եղանակներով՝

Կգնա՛ս, կգնա՛ս, դու խելոք ես: Կգնա՛ս ու ասածս կանե՛ս:
Դու պիտի վերադառնաս, և վերջ...

4. Ըղձական եղանակի բայաձևերով՝

Ախր ես ինչպե՞ս վեր կենամ, գնամ... (ՀՄ):
Ձի լինի՞ր դրանից միշտ հեռու մնաս...

Ձայնարկությունները բացականչական նախադասությունների էությունն են. ձայնարկություն պարունակող գրեթե բոլոր նախադասությունները բացականչական են, որովհետև ձայնարկություններն անպայման արտաբերվում են շեշտման կամ հարցման հնչերանգով, որը վերաբերում է ամբողջ նախադասությանը:

Ձայնարկությունների, ինչպես և ըղձական եղանակի բայերի հետ սովորաբար հանդես են գալիս **կոչականներ**, որոնք նույնպես շեշտվում են, և նախադասությունը կրկնակի շեշտադրություն է ստանում:

Բերենք օրինակներ:

Հեյ, ո՞ւր ես, Դավիթ, հայոց պահապան,

Քարը պատույի, դո՛ւրս արի մեյդան (ՀԹ):

Հեյ ջան, հեյ ջան, լանջե՛ր մարջան,

Մատա՛ղ լինի հոգիս ձեզ... (Վ. Աղասյան):

Ա՛յ իմ Արա՛ղ, ջուրդ վարար,

Սիրուն յարիս յարար տեսա՞ր (Հ. Հովհ.):

Հարցա-հարաբերական դերանունները նույնպես առատություններ են գործածվում բացականչական նախադասություններում՝ նույնպես շեշտվելով:

Օրինակ՝

Մանկություն իմ քնքչագին,

ես քեզ ինչպե՞ս մոռանամ (Սարմեն):

Հեյ ճամփանե՛ր, ճամփանե՛ր,

Անդարձ ու հին ճամփաներ,

Ո՞վքե՛ր անցան ձեզանով,

Ո՞ւր գնացին, ճամփանե՛ր (ՀԹ):

Ո՞ւր է քո հրեղեն ձին,

Ո՞ւր է քո հոր թուրկեծակին (ՀԹ):

Բացականչական նախադասություններում մեծ կիրառություն ունեն նաև **կեցցե՛, ողջո՛ւյն, ափսո՞ս, երանի՛** ձայնարկությունները՝

Ափսո՞ս, Անո՛ւշ, սարի՛ ծաղիկ,

Ափսո՞ս իզիթ քո յարին... (ՀԹ):

Ողջո՛ւյն, ողջո՛ւյն ձեզ, արի՛, բարի՛ ընկերներ (ՀԹ):

Կեցցե՛ կատուն, որ իր փորի համար մուկ է բռնում (ՄՆ):

Ինչպես դժվար չէ նկատել բերված օրինակներից, բացականչական նախադասությունները թե՛ կառուցվածքային և թե՛ հնչերանգային տեսակետից միատարր չեն. դրանց մեջ կան թե՛ պարզ և թե՛ բարդ, թե՛ միակազմ և թե՛ երկկազմ, այդպես էլ պատմողական, հարցական, հրամայական ու ըղձական նախադասություններ. դրանց տարբերակման հիմնական միջոցը բանավոր խոսքն է՝ իր տրամաբանական շեշտով, հնչերանգային ելևէջումներով ու խոսողի անհատական վերաբերմունքով:

Ըստ այս ամենի, միևնույն նախադասությունը կարելի է արտաբերել տարբեր Հնչերանգներով, որով էլ պայմանավորված կլինի նրա բնույթը:

Դժվար չէ նաև նկատել, որ միևնույն խոսքում հանդես են գալիս մի քանի Հնչերանգային նախադասություններ. այս դեպքում կունենանք **համակցված** նախադասություններ: Օրինակ, Ավետիք Իսահակյանի հետևյալ քառատողում կան և՛ ըղձական, և՛ հարցական, և՛ պատմողական, և՛ հրամայական նախադասություններ:

Ինչ որ ցանկաս՝ կուզե՞ս լինիմ,
Լինիմ երկինք ու երկիր,
Լինիմ ծով, ժայռ, արև, լուսին,
Միայն, միայն ինձ սիրիր:

Վարժույթուն 15: Առանձնացրե՛ք բացականչական նախադասությունները և բացատրել դրանց ստորոգյալների արտահայտությունը:

Քո հողին մեռնեմ, անգի՞ն հայրենիք,
Ախ քիչ է, թե որ մի կյանքով մեռնեմ,
Երնեկ ունենամ հազար ու մի կյանք,
Հազարն էլ սրտանց քեզ մատաղ անեմ (Ավ. Իս.):

Ափս՞ս, ախ, հազա՛ր ափսոս,
Իմ կարոտ-կարոտ աչքերին,
Իմ արցունք-արցունք խոսքերին.
Ծով թափած իմ ծով-ծով սիրուն,
Ախ, ափս՞ս, հազա՛ր ափսոս (ՍԿ):

– էս է, որ կա... ճիշտ ես ասում, թասդ բե՛ր,
– էս էլ կերթա՛ Հանց երազում, թասդ բե՛ր,
Կյանքն հոսում է տիեզերքում զնգալեն.
Մեկն ապրում է, մյուսն ըսպասում. թասդ բեր (ՀԹ):

Վարժույթուն 16: Տարբեր Հնչերանգի հետևյալ նախադասությունները արտաբերե՛ք բացականչական Հնչերանգով:

Այբուբեն չէ սա՛՝ Բերդ է անմատույց,
Գանձ է աննվաճ... Նախահիմքն է մեր,
Շողը մեր հույսի, Ոգին մեր ճարտար (Գ. Էմին):
Ո՞ւր գնացին ծաղիկները. Սո՛ւս, քնած են հողի տակ (ՀԹ):
Զյուն է գալիս, ձմեռն է մեռնում,
Զյան անցած ճամփով՝ զվարթ ու անվիշտ

Գարունն է գալիս, աշխարհը բռնում: (ՀՇ)

Ես ինչ եմ ուզում, որ բերես դու ինձ...

Ոչինչ... Ախ, միայն ոչինչ չտանես,

Միայն չխլես Ու քո անզիջում հողմերին չտաս

Այս սերը (ՎԳ):

Ստուգիչ հարցեր

1. Ի՞նչ եք հասկանում նախադասությունների հնչերանգային տեսակներ ասելով:

Ըստ հնչերանգի նախադասությունները քանի՞ տեսակ են լինում:

2. Հրամայական նախադասությունների ի՞նչ ենթատեսակներ գիտեք:


3. Ի՞նչ է հոետորական հարցումը:

4. Ըղձական և բացականչական նախադասությունները ինչո՞վ են տարբերվում իրարից:

Առաջադրանք 1: Բերե՛ք 2-ական նախադասություն նշված հնչերանգով և հնարավորության սահմաններում փոփոխեք դրանց հնչերանգները:

Առաջադրանք 2: Ըղձական հնչերանգի նախադասություններով գրեցե՛ք մի փոքրիկ շարադրություն:

Առաջադրանք 3: Բանավոր պատմեցե՛ք, թե ի՞նչ երազանքներ ունեք և ի՞նչ եք ուզում դառնալ:



ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թե՛ գրավոր և **թե՛** բանավոր խոսքում ենթակա և ստորոգյալ ունեցող՝ **երկկազմ** նախադասություններին զուգահեռ գործածվում են նաև այնպիսի նախադասություններ, որոնցում բացակայում է **ենթական** կամ **թե՛** **ենթական** և **թե՛** **ստորոգյալը**, բայց հաղորդակցվողները շատ լավ հասկանում են իրար: Նախադասությունների նման տեսակը կոչվում է **միակազմ կամ միակենտրոն**:

Միակազմ նախադասությունների ձևավորման հիմնական միջոցը **ավարտուն հնչերանգն** է, որը կարող է լինել պատմողական, հարցական, հրամայական և ըղձական, ինչպես երկկազմ նախադասություններում: Միակազմ նախադասություններն էլ լինում են համառոտ և ընդարձակ, պարզ և բարդ:

Նախադասությունների այս տեսակը ավելի շատ ոճական արժեք ունի. այն մի տեսակ կարճում է խոսքը, ասելիքը դարձնում է ավելի դիպուկ ու պատկերավոր:

Միակազմ նախադասությունները 3 տեսակ են՝ **դիմավոր միակազմ (անենթակա)**, **անդեմ** և **բառ-նախադասություններ**:

ԴԻՄԱՎՈՐ ՄԻԱԿԱԶՄ (ԱՆԵՆԹԱԿԱ) ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անենթակա է այն նախադասությունը, որը չունի ենթակա և հնարավոր չէ այն վերականգնել:

Ունի մեկ գերադաս անդամ՝ ստորոգյալ:

Օրինակ՝

Մթնեց: Լուսացալ: **Անձրևելու է:** Ցուրտ է: **Արդեն մթնել է:**

Սրանք ավարտուն հնչերանգով նախադասություններ են, որոնց ստորոգյալները չունեն ենթականեր և հնարավոր չէ դրանք վերականգնել:

Ենթականեր չունեն նաև հետևյալ միակազմ նախադասությունները՝

Ասում են՝ ուրին աղջիկ էր ինձ պես (ՀԹ): **Զանգը տվին:** Լույսը **անջատեցին:**

Սրանք **անենթակա** են. որովհետև հայտնի չեն գործողություններ կատարողները, **թե ովքեր** են ասում (ուրին աղջիկ էր ինձ պես), **ով** կամ **ովքեր** զանգը տվին կամ լույսն անջատեցին:

Հիշի՛ր – անենթակա նախադասությունները չպետք է շփոթել զեղչված ենթականերով նախադասությունների հետ, որովհետև զեղչվածի դեպքում հասկանալի է, թե ով է գործողություն կատարողը, և հեշտությամբ կարելի է ենթական վերականգնել, ինչպես՝

Հիշում եմ դեմքը քո ծեր,

Մա՛յր իմ անուշ ու անզին (ես եմ հիշում):

Լսի՛ր, որդիս, պատգամ որպես... (դու լսիր):

Անենթակա նախադասությունը կոչվում է նաև **անորոշ դիմավոր**, որովհետև նախադասությունն ունի դիմավոր բայով ստորոգյալ, բայց ենթական անորոշ է:

Անենթակա նախադասություններն ունեն իրենց ենթատեսակները.

Վիճակային – Անենթակաների այս տեսակը նշում է մթնոլորտային երևույթներ (Ամպել է: Անձրևում է: Սաստիկ փոթորիկ է ու մրրիկ: Ցուրտ է և այլն), օրվա պահեր (Լուսանում է: Առավոտ է: Գիշեր էր դառնաչունչ քամիով և այլն):

Այս տիպի նախադասություններ են նաև ժամանակի վերաբերյալ Հարց ու պատասխանները.

– Ժամը քանի՞սն է: – Ժամը տասներկունս է:

– Այսօր ամսի քանի՞սն է: – Այսօր ամսի քսանհինգն է:

Անենթակա են համարվում նաև՝ **Քունս տանում է: Ուշքը գնում է** (մի բանի համար): **Խիղճս տանջում է: Լացող կգա: Վրաս դող է գալիս***: Սրանց ստորոգյալները համարվում են հարադիր բայեր:

Ընդհանրական – Այս տիպի անենթակա նախադասություններում ստորոգյալներն ունեն բայի բոլոր դեմքերը, ժամանակները, բայց դրանցում խոսքը վերաբերում է ոչ թե կոնկրետ անձերի, այլ ընդհանուրին:

Բերենք օրինակներ:

Բայի 1-ին դեմքի հոգնակի թվով:

Ծերանում ենք, Պարո՛ւյր Սևակ, ծերանում ենք, սիրելի՛ս (ՊՍ):

Ծնվում ենք ականա, ապրում ենք զարմացած, մեռնում կարոտով (Ավ. Իս.):

Հոգնել ենք, եղբա՛յր, այս անիրավ աշխարհից (Ոգնի):

* Տե՛ս Ս. Գյուլբուրդյան, Ժամանակակից Հայոց լեզու (չարահայտություն), պարզ նախադասություն, Ե., 1988, էջ 124:

Բայի 2-րդ դեմքի եզակի թվով՝

**Խարխուլ մակույկով հանձնվի՛ր ծովին, քան թե հավատա կնոջ
երգումին (Ավ. Իս.):**

Աչքդ թեքեցի՛ր՝ բանիդ տերը չես...

Ու չես իմանում՝ որ կողմը թռչես (ՀԹ):

Գիտունի հետ քար քաշի, անգետի հետ փլավ մի ուտի (Ժող.):

**Գլուխ ես կոտրում ու գլուխ չես հանում: Մտածում ես, մտածում
ու ճարը չես գտնում:**

**Բայց 3-րդ դեմքի հոգնակի թվով (սրանք մեծ մասամբ ժո-
ղովրդական առած-ասացվածքներ են):**

Մի ձեռքով երկու ձեռքով չես բռնի:

Ձուկը ծովում բազար չեն անի:

Մեխի գլխին բռունցքով չեն խփի:

Ուղտը գդալով չեն ջրի և այլն:

**Բայի հոգնակի 3-րդ դեմքով են արտահայտում նաև բուն անորոշ
դիմավորները՝**

**Ձեզ հեռախոսի մոտ են կանչում: Մեկ ամսով գործուղում են
ուղարկում:**

Յարիս տարան, ջանիս տարան,

Հոնգո՛ւր-հոնգո՛ւր կուլամ ես (Ավ. Իս.):

Ասում են, թե մոտենում է նրա վերջը: Սուտ են ասում (ՊՍ):

**Թոշակ են տալիս: Ջրի վարձն են ուզում: Ճանապարհները փակել
են և այլն:**

**Անենթակա նախադասություններ են կազմվում նաև որոշ չեզոք,
երբեմն էլ ներգործական բայերից կազմված կրավորականներով:**

Օրինակ՝

**Այս հեռախոսով չի խոսվում: Այս աթոռի վրա չի նստվում: Այդ
մասին մամուլում գրվել է: Ձեր մասին արդեն խոսվել է:**

**Մարդ բառը անորոշ առումով գործածվելիս նորից անենթակա
նախադասություն է դառնում՝**

Մարդ կա ելել է շալակն աշխարհի,

Մարդ կա աշխարհն է շալակած տանում (ՊՍ):

**Մարդ ես, խոսքիդ տերը եղիր: Մարդ ինչ անի, իրեն կանի: Մարդ
չգիտի գլխին ինչ է գալու: Մարդ ուզում է գլուխն առնի, կորչի:**

Այս նախադասութիւններում խոսքը վերաբերում է ոչ թե կոնկրետ մեկին՝ մի մարդու, այլ՝ բոլորին:

Վարժութիւն 17: Յույց տվե՛ք անենթակա նախադասութիւնները և բացատրե՛ք, թե ինչով են արտահայտվել դրանք:

Լոուիթյուն է, մութ է, այնտեղ, սակայն իմ

Սրտում արդեն արշալույս է՝ հարութիւն (ՎՏ):

Աշուն է. Օրերը ցրտում են... Անձրև է կրկին (ՎՏ):

Գիշեր է և լուսիթյուն, Լոուիթյուն է իմ հոգում... (ՎՏ):

Աշուն է, անձրև ու մշուշ... Դուրսը ցուրտ է հիմա... (ՎՏ):

Երեկ գարուն էր, աշուն է այսօր (Ավ. Իս.):

Կեսօր էր արդեն, երբ հասա մեր գյուղը, տոթ էր, թանձր մշուշ...

Իրիկուն էր, հրակարմիր իրիկուն (ԵՉ): Դուրսը աստղալից գիշեր էր (ԱԲ):

Կայծակին է տալիս: Ծուտով անձրև կանի: Օրը ցրտեց:

Այստեղ չի նստվում: Խավարի մեջ դժվար է կարդացվում: Այս բանալիով չի բացվում: Ջի լսվում:

Վարժութիւն 18: Գտե՛ք անենթակա նախադասութիւնները և որոշե՛ք, թե դրանց ստորոգայլները բայի ո՞ր դեմքով են արտահայտված:

Ասում են, իբրև, խարույկի վրա

Ջահել ըմբոստի մի սիրտ են այրել,

Ասում են, իբրև, մոխիրը նրա

Խարույկից հանել ու մորն են տարել (ՀՇ):

Քանի առուն չես թռել, հոպ մի՛ ասա: Ջուրը չտեսած մի՛ բորիկանա (ժող.): Ամեն ասածի չեն հավատա: Ամեն դուղուկի տակ պար չեն գա: Եղունգ ունես գլուխդ քորի՛ր (ժող.): Մարդ ես՝ այս նեղ օրերին գլուխդ պահի՛ր (ժող.):

Ծույլ ես՝ սոված կմնաս: Մինչև չաչխատես, չես ուտի: Տասը չափիր, մեկ կտրիր: Քանի լեզու գիտես՝ այնքան մարդ ես:

Քեզ ասում են՝ մոտ արի (մի հոգի է խոսողը և խոսողն էլ ինքն է):

Ի՞նչ ես կարծում, կատակո՞ւմ են քեզ հետ (հարցնողը մեկն է):

Առաջադրանք 1: Հիշե՛ք մի քանի առած ու ասացվածք և ցո՛ւյց տվե՛ք, թե անենթակա նախադասութիւնների ստորոգայլները ինչով են արտահայտվել:

Առաջադրանք 2: Հետևյալ բառերով կազմե՛լ անենթակա նախադասութիւններ:

Աշուն, անձրևախառն քամի, ցրտել, խավար գիշեր, միայնակ ճամփորդ, աստիճանաբար լուսանալ, թախծոտ արև, տեղին անծանոթ:

ԱՆԴԵՄ ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ի տարբերություն անենթակա նախադասությունների, որտեղ կա զիմավոր բայ, կամ վերադիր և հանգույց, անդեմ նախադասություններում դրանք բացակայում են. սրանցում կա մեկ **գերադաս անդամ**, որը կամ **անորոշ դերբայ է (Կովել: Չգիջել:)**, կամ որևէ **անուն խոսքի մաս՝ մեծ մասամբ գոյական (էջմիածին: Միրզ ու փոշի:)**: Ըստ այսմ էլ անդեմ նախադասությունները լինում են երկու տեսակ՝ **բայական և անվանական:**

Այս նախադասությունների ձևավորման հիմնական միջոցը նույնպես **հնչերանգն է:**

Բայական անդեմ նախադասություններ

Այս անդեմ նախադասության գերադաս անդամը **անորոշ դերբայն է**, որն արտաբերվում է ավարտուն հնչերանգով և դառնում է առանձին նախադասություն (**Չծխել: Չաղմկել: Կարգի բերել դասարանը: Զգուշանալ վիրուսային հիվանդություններից:**):

Ինչպես երևում է բերված օրինակներից, բայական անդեմ նախադասությունը կարող է լինել **համառոտ և ընդարձակ**, կարող է հանդես գալ նաև բարդ նախադասության կազմում:

Բերենք օրինակներ:

Ճանաչե՛լ զիմաստություն և զխրատ.

Իմանալ զբանս հանճարոյ (Հայատառ առաջին նախադասությունը):

Ապրե՛լ, ապրե՛լ, այնպես ապրել,

Որ սուրբ հողդ երբեք չզգա քո ավելորդ ծանրությունը:

Ապրե՛լ, ապրե՛լ այնպես ապրել,

Որ դու ինքդ էլ երբեք չզգաս քո սեփական մանրությունը (ՊՍ):

Քնել, թուլացնել մարմինը, բոլոր հոգսերից գոնե երկու-երեք ժամով թոթափվել և քնել (Պ. Զելթունցյան):

Բայական անդեմ նախադասություններով արտահայտվում է պա-

Հանջ, հրաման, կոչ, կարգադրություն, առաջադրանք, հանձնարարություն, ցանկություն, հարցում, իդձ, փափագ և այլն:

Կոչ, պահանջ՝

Մի՛չտ սովորել և անաղա՛րտ պահել մայրենի լեզուն:

Միչտ պատրա՛ստ ներկայանալ դասերին և երբե՛ք չուշանալ:

Ստեղծե՛լ նոր աշխատատեղեր մարդկանց բավարարել աշխատանքով:

Հրաման, կարգադրություն՝

Առանց հանձնարարությունը կատարելու տուն չգնա՛լ: Անցնել դասարան:

Վերցնե՛լ բահերը և գործի անցնել: Զրե՛լ ծաղիկները: Չաղմկե՛լ և չխոսե՛լ:

Առաջադրանք, հանձնարարություն

Արտագրե՛լ հատվածը և ընդգծե՛լ ներգործական սեռի բայերը:

Դիմավորել հյուրերին և առաջնորդե՛լ Մատենադարան:

Լա՛վ նախապատրաստվել քննություններին:

Իդձ, ցանկություն, փափագ

Մոռանա՛լ, մոռանա՛լ ամեն ինչ

Ամենին մոռանա՛լ,

Չսիրե՛լ, չխորհե՛լ, չափսոսա՛լ -

չեռանա՛լ... (ՎՏ):

Դուրս գալ ու թափառել մաքուր օդում. ընկնել երազների գիրկը:

Երկընտրանք, երկմտություն, հարցում՝

Լինե՞լ, թե՞ չլինել - սա է խնդիրը (Թարգմ.):

Գնա՞լ, թե՞ մնալ, դժվար է կողմնորոշվել:

Ո՞ւր գնալ սովորելու և որտե՞ղ աշխատել: Ինչպե՞ս տեղավորվել աշխատանքի:

Վարժություն 19: Որոշե՛ք, թե ի՞նչ են արտահայտում բերված բայական անդեմ նախադասությունները:

Բարձրացնե՛լ ուսման որակը: Հետևե՛լ առաջավորների օրինակին: Լսե՛լ մեծերին և հոգատա՛ր լինել փոքրերի նկատմամբ:

Կատարե՛լ տնային հանձնարարությունը: Արտագրե՛լ բերված հատվածը և նշանակե՛լ կետադրությունը: Բերված տեքստից դո՛ւրս

գրել անենթակա և անդեմ նախադասությունները, որոշել՝ դրանց տեսակները:

Կապվել՝ ամրագրություններով ու հետևել ուղեկցորդուհու կարգադրությունը: Չչտապել և տեղերից վե՛ր չկենալ: Սպասել լրացուցիչ կարգադրության:

Մաքատե՞լ, ինչի՞ համար: Ախր ինչպե՞ս թողնել հայրենի տունը: Ո՞ւր գնալ:

Վարժություն 20: Վերևի վարժության միջից ջոկե՛ք այնպիսի նախադասություններ, որոնք հնարավոր լինի դարձնել սովորական, երկկազմ նախադասություններ:

Ն մ ու շ՝ – Սպասել լրացուցիչ կարգադրության: – Սպասեցե՛ք լրացուցիչ կարգադրության:

Վարժություն 21: Բերված երկկազմ նախադասությունները վերածե՛ք բայական անդեմ նախադասությունների (կարելի է բառերի տեղափոխություն կատարել):

Ն մ ու շ՝ – Փողոցն անցե՛ք միայն անցումներով: – Փողոցն անցնել միայն անցումներով:

Աշխատեցե՛ք անաղարտ պահել մայրենի լեզուն:

Հանձնարարությունները կատարեցե՛ք, նոր տուն գնացե՛ք:

Ուշադիր եղեք ծերերի և երեխաների նկատմամբ:

Փողոցն անցե՛ք միայն անցումներով: Անցե՛ք կանաչ լույսի տակով:

Հոգատար եղեք դպրոցական գույքի և դասագրքերի նկատմամբ:

Ախր ես ինչպե՞ս վեր կենամ, գնամ:

Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ (ՀՄ):

Անվանական անդեմ նախադասություններ

Անվանական անդեմ են այն միակազմ նախադասությունները, որոնց գերադաս անդամը որևէ գոյական է, կամ անուն այլ խոսքի մաս: Սրանք չունեն ոչ միայն դիմավոր բայ կամ անորոշ դերբայ, չունեն նաև ենթակա, բայց ունեն ավարտուն հնչերանգ և միտք են արտահայտում, այն էլ սեղմ ու հակիրճ միտք: Այդ է պատճառը, որ անվանական անդեմ նախադասությունները գործածվում են գեղարվեստական գրականության մեջ, երբ պետք է լինում խոսքը կարճել և նրան տալ հանդիսավորություն ու պատկերավորություն: Օրինակ, բոլորովին տարբեր հուզականություն ու գեղագիտական արժեք

ունեն՝ «Լճույս զվարթ» և «Փառահեղ տեսարան» անդեմ նախա-
դասությունները, քան թե դրանք արտահայտված լինեին
սովորական երկկազմ նախադասություններով, ենթադրենք այսպես՝
«Հիմա թող զվարթ լույս լինի»:

կամ՝

«Մեր դեմ բացվեց փառահեղ տեսարան»:

կամ՝

Ինչի նման կլիներ, եթե Վահագն Գավթյանը իր հետևյալ հրաչալի
քառատողը արտահայտեր սովորական՝ ենթակա-ստորոգյալ ունե-
ցող նախադասությամբ:

Ահա այդ քառատողը՝

Մի փոշոտ, փափուկ ճամփա,

Փշատի սաղափ ծառեր,

Մի կապո՛ւյտ, կապո՛ւյտ, երկինք,

Ու արև, արև, արև...

Անվանական անդեմ նախադասության գերադաս անդամը հիմ-
նականում հանդես է գալիս գոյականի ուղղական հոլովով՝

Սև գիշե՛ր և հուշե՛ր, և խոհե՛ր անհամար,

Մոռացված երազնե՛ր, շուշաննե՛ր թառամած,

Խնդություն՝ հեռացած և՛ անցած, և՛ անդարձ,-

Տրտմություն մենավո՛ր, միաձայն, միալար... (ՎՏ):

Ինչքա՛ն սեզ քնար, քանի՛ տավիղներ,

Ինչքա՛ն հնչյուններ, մտքեր երազուն (ՊՍ):

Գոյականների հետ (կամ առանց գոյականների) կարող են գոր-
ծածվել նաև թվականներ՝

Ութ հարյուր ութսունմեկ թիվ: Էջմիածին: Միրզ ու փոշի:

451 թիվ: Ավարայր: 1915 թիվ: Ապրիլի 24...

Կոչականը նույնպես կարող է գերադաս անդամ դառնալ, եթե
բայի հետ չի համաձայնում՝

Կապո՛ւյտ աղջիկ, ագաթի ու կաթի պես հոգեթով,

Լուսամփոփի պես աղջիկ (ԵԶ):

Երկի՛ր Հայաստան, իմ գագաթ, իմ լույս,

Հոգմերին տրված դարավոր իմ ձյուն (ՎԳ):

Գոյականների, ինչպես նաև դերանունների հետ կարող են հանդես

գալ նաև ահա և ահավասիկ բառերը՝

Ահա և մեր գետը, մեր զուլալ գետը: Ահա և ես: Ահավասիկ և Փարիզը:

Անվանական նախադասություններ են նաև **անվանումները՝ «Սասունցի Դավիթ»** կայարան: Վանաձոր: Երիտասարդական թատրոն: «Գրական թերթ», «Ոգնի» և այլն:

Այս տիպի նախադասություններն արտահայտում են նաև **հարցում, հրաման, կոչ, բարեմաղթանք** և այլն:

Բերենք մի քանի օրինակներ.

Լուսթյուն... Ինչի՞ համար:

Ինչպիսի՞ հրաշալի տեսարան:

Ո՛չ մի ձայն: Լուսթյուն: Հանգի՛ստ: Բարի՛ ճանապարհ: Բարի լույս:

Ողջո՛ւյն, ողջո՛ւյն ձեզ, հին ու նոր, արի, բարի ընկերներ (ՀԹ):

Խաղաղություն ձեզ, մեր անբախտ պապեր (ՀԹ):

Քիչ չեն նաև ժխտական բնույթի անվանական նախադասությունները, որոնք ձևավորվում են **ոչ մի ժխտական դերանվամբ:**

Ոչ մի արձագանք: Ոչ մի պատասխան: Ոչ մի ուշադրություն:

Ոչ մի հանճար, ոչ մի տաղանդ, ոչ մի քանքար՝

Ով որ Պոլսում եղեռնական այդ գարնան կար (ՊՍ):

Վարժություն 22: Գտե՛ք անվանական անդեմ նախադասությունները, ընդգծե՛ք գերադաս անդամները և ասացե՛ք, թե ինչով են դրանք արտահայտված:

Դանդաղ սահում են օրերը դժկամ,-

Անձրև՝ ու քամի՛,- տրտունջ ու թախիծ (ՎՏ):

Որքա՛ն բոցեր, վարդե՛ր վառման,

Խնդություններ՝ անդարձ կորած... (ՎՏ):

... Ահա՛ լեռները, ուր գիչերել եմ... Ահա՛ մեր ջրաղացի առուն... Ցամաքած է նա վաղուց: Ահա՛ մեր հողերը և պարտեզները (Ավ. Իս.):

1913 թվական: Հոկտեմբեր ամիս: Թուրքիայի մայրաքաղաք... Թուրքերի քթի տակ... Մեծ տոնահանդես՝ նվիրված հայ գրերի գյուտի 1500-ամյակին և հայոց տպագիր գրքի 400-ամյակին (Պ. Զեյթունցյան):

– Ահա՛ նրանք՝ Դանիել Վարուժան, Սիամանթո, Ռուբեն Սևակ,

Կոմիտաս վարդապետ, Արչակ Չոպանյան, Գրիգոր Զոհրապ, Էլի ուրիշներ և մեծ բազմություն... (Ըստ Պերճ Զեյթունցյանի):

Վարժություն 23: Որոշե՛ք, թե ինչ լրացումներ ունեն անվանական նախադասությունների գերադաս անդամները:

Ութսունմեկ թիվ: Վաղարշապատ: Էջմիածին:

Միրզ ու փոշի: Անխիղճ արև:

Շողամրցում Մասիսների, Արագածի:

Սրբագործված հին-հին քարեր:

Եվ Մայրս Արաքս: Եվ Մայր տաճար:

Տաճարի շուրջ՝ սուրբ-սուրբ վանքեր,

Հնչող,

Շնչող,

Կանչող զանգեր...

Եվ ճեմարան՝ մտքի կաճառ (ՊՄ):

Վարժություն 24: Առանձնացրե՛ք բայական և անվանական նախադասությունները:

Անաղարտ պահել և միշտ զարգացնել ոսկեղենիկ մայրենին:

Մայիսյան ջինջ ու հստակ առավոտ: Պայծառ արև:

Նախապատրաստվել քննություններին, կրկնել թեմաները:

Խնայել խմելու ջուրը և գրելու թուղթը: Զրել ծառերն ու ծաղիկները:

Գյումրի քաղաք. ահա պապիկիս ծննդավայրը՝ մշտապես սիրելի:

Քաղաքի կենտրոն՝ գեղեցիկ ծառուղիներ՝ գեղեցիկ ծաղիկներով:

Ինչպես կողմնորոշվել այս դժվար կացություն մեջ. ի՞նչ անել:

Վարժություն 25: Ավետիք Իսահակյանի հուշերի այս հատվածից առանձնացրե՛ք հաստատական և ժխտական անդամ նախադասությունները:

... Իմ հայրենի Շիրակի դաշտում եմ: Ահա մեր գյուղի հանդերը, ուր աղջիկների և տղաների հետ բանջար էինք քաղում: Ահա լեռներ, ուր գիշերել եմ... Ահա մեր ջրաղացի առուն... Ցամաքած է նա վաղուց: Ոչ մի ծառ ու թուփ... Ոչ մի հետք իմ՝ քարերի վրա խզրզումներից: Ահա մեր հողերը և պարտեզները ... Ոչ մի հետք իմ պապիկից: Նվիրական վայրեր, ուր անցան իմ մանկությունը և պատանեկության առաջին տարիները:

Ահավասիկ Իսահակյանի նվիրական հուշերը:

Բառ-նախադասութիւններ

Միակազմ նախադասութեան այս տեսակը հատուկ է երկխոսութիւններին, որի ընթացքում խոսակիցը հաստատում, ժխտում կամ երկբայական վերաբերմունք է արտահայտում խոսքի նկատմամբ: Վերևում նշված միաբառ նախադասութիւններից (Լուսացավ: Մթնեց: Ձխտել:) տարբերվում է նրանով, որ սրանք կարող են լրացվել նաև այլ բառերով, բայց բառ-նախադասութիւնը չի կարող ծավալվել. սրանք լինում են **այո կամ ոչ, ինչպես նաև որոշ վերաբերականներ՝ իհարկե, անշուշտ, գուցե, թերևս, հավանաբար, ըստ երևույթին, հազիվ թե, համեմայն դեպս** և այլն:

Բերենք համապատասխան օրինակներ.

– Երեխանե՛ր, պատրա՞ստ ենք վաղվա շաբաթօրյակին:

– Այո՛, իհարկե:

– Ոչ մեկը չի՞ բացակայելու:

– Ո՛չ:

– Մեր ծնողներին տեղյակ պահե՞լ եք այդ մասին:

– Անշո՛ւշտ:

– Արթո՛ւր, դու կարո՞ղ ես ձեր հարեանի բահը խնդրել մի քանի ժամով:

– Հավանաբար:

– Հասմիկ, կարո՞ղ է եղբայրդ մասնակցի մեր շաբաթօրյակին:

– Հազիվ թե, ընկե՛ր Սարգսյան: Նա պարապմունքի է գնալու:

Բառ-նախադասութիւն են լինում նաև **ինչո՞ւ չէ, ո՞վ ասաց, մի՞թե, ճի՞շտ** և նման հարցական բառերը:

Օրինակ՝

– Գազիկ, կօզնե՞ս ինձ այս գրքերը տուն տանել:

– Ինչո՞ւ չէ:


– Անահի՛տ, կարո՞ղ է այսօր դասդ չես սովորել:

– Ո՞վ ասաց: Ես ամեն օր էլ դասերս պատրաստ եմ գալիս դպրոց:

– Ասում են Հրաչյա Աճառյանը մոտ 50 լեզու գիտեր:

– Մի՞թե:

Միակազմ նախադասությունների դժապատկերը



Հ ա Ր Գ Ե Ր

1. Որո՞նք են միակազմ նախադասությունները, ինչո՞վ են տարբերվում երկկազմներից:
2. Քանի՞ տեսակ են միակազմ նախադասությունները:
3. Որո՞նք են անենթակա նախադասությունները, քանի՞ ենթատեսակ ունեն:
4. Անդրադաս միակազմ նախադասությունները ինչո՞վ են տարբերվում անենթականներից, քանի՞ ենթատեսակներ ունեն:
5. Որո՞նք են բայական, որո՞նք են անվանական անդրադասությունները:
6. Որո՞նք են բառ-նախադասությունները. ի՞նչ են արտահայտում դրանք:


ՊԱՐՁ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Շարահյուսությունից հիմնական առանցքը պարզ նախադասությունն է՝ իր գլխավոր ու երկրորդական անդամներով և մեկ ստորոգումով: Պարզ նախադասությունից սխեմայով են կառուցվում բարդ նախադասությունները՝ իրենց բաղադրիչ նախադասություններով և երկու կամ ավելի ստորոգումներով:

Ասվել է, որ նախադասությունները կազմվում են բառերից և բառակապակցություններից, իսկ բառերի առանձին խմբերը մեկ ծանոթ 10 խոսքի մասերն են, որոնցից 6-ը (գոյական, ածական, թվական, դերանուն, բայ, մակբայ) դառնում են նախադասության անդամներ, իսկ 4-ը սպասարկու դեր են կատարում (կապ, շաղկապ, վերաբերականներ և ձայնարկություններ): Թեև սրանք նախադասության անդամներ չեն դառնում, բայց վճռական դեր են խաղում նախադասությունների ձևավորման գործում. այսպես կապերն ու շաղկապները քերականական իմաստներ են արտահայտում, իսկ վերջին երկուսը արտահայտում են խոսողի մտածական և զգացական վերաբերմունքը:

Նշված 6 խոսքի մասերը նյութական իմաստ ունեն և դառնում են նախադասության զանազան անդամներ՝ ենթակա, ստորոգյալ (նաև ստորոգելի), որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ և խնդիրներ ու պարագաներ, ըստ որում, ենթական ու ստորոգյալը կոչվում են գլխավոր անդամներ, իսկ մյուսները՝ երկրորդական անդամներ (լրացումներ): Երկրորդական անդամներն էլ կարող են ունենալ իրենց լրացումները, որոնք կոչվում են լրացման լրացումներ:

Այսպիսով, պարզ նախադասության գծապատկերը կունենա հետևյալ տեսքը՝



Ե Ն Թ Ա Կ Ա

Ենթական նախադասությունն այն **գլխավոր** անդամն է, որին դիմավոր բայով վերագրվում է որևէ **հատկանիշ**, **գոյություն**, **վիճակ**, **գործողություն**, այսինքն՝ որի հետ կատարվում է **ստորոգում**:

Հատկանիշ ասելով պետք է հասկանալ ինչպես ենթակայի ով կամ **ինչ**, **ինչպիսին**, **քանիսը** լինելը (Կոմիտասը մեծ **երաժիշտ է**: Երկինքը **խաղաղ է**: Ընկերս **դու ես**: Նրանց **թիվը քսանվեց էր**), այնպես էլ՝ **գործողությունը** որպես հատկանիշ (Գետը **հոսում է**: Աշակերտը **կարդում է**: Ծառը **ծաղկել է**):

Ենթական զրվում է ուղղական հոլովով, եզակի և հոգնակի թվերով, գոյականի որոշյալ և անորոշ առումներով և անձի դեպքում պատասխանում է **ո՞վ**, **ովքե՞ր**, իրի դեպքում՝ **ի՞նչ**, **ինչե՞ր** հարցերին (սրանք նաև՝ հոգերով):

Ենթակաները լինում են **միակի** (Գիշերն եկավ, զով հովն ընկավ – Ավ. Իս.) և **բազմակի** (Մարեր ու ձորեր ծաղկել են: Ուսուցիչներն ու աշակերտները մասնակցում են շաբաթօրյակին):

Ենթակայի արտահայտությունը

Քանի որ ենթական անձի կամ առարկայի անվանում է, որին հատկանիշ է վերագրվում, հետևաբար այն արտահայտվում է գոյականներով, առարկայանիշ դերանուններով և այլ խոսքի մասերով, եթե դրանք հանդես են գալիս գոյականաբար, այսինքն հոգ են ստանում, հոլովվում են և կարող են գործածվել հոգնակի թվով:

1. **ԳՈՏԱԿԱՆՈՎ** – Ենթակայի պաշտոնում գոյականը հանդես է գալիս իր բոլոր տեսակներով՝ հատուկ և հասարակ, պարզ և բաղադրյալ, չնչավոր ու անչունչ, որոշյալ ու անորոշ, եզակի և հոգնակի:

Օրինակներ՝

Մասիսը Հայաստանի խորհրդանիշն է:

Կոմիտասը Հայ երգը ներկայացրեց աշխարհին:

Մայրենի լեզվով խոսում է **առուն** (ՆԶ):

Լուսնյակն անուշ ցուցլաց (Ավ. Իս.):

Ինչ սարի **արծիվ** կհասնի քաջին (ՀԹ):

Հետևյալ նախադասություններում ենթականերն արտահայտված են գոյականների հոգնակի թվերով, որոշյալ և անորոշ առումներով՝

Բարբարոսներ շատ կզան ու կանցնեն անհետ... (ՎՏ):

Ներս վագեցին մանուկները ու կանչում են հորն շտապ (Պուշկին):

Վերջին ձյուններն էլ ահա հալ ընկան... (ՎՄ):

Բազմակի ենթակաների օրինակներ.

Սարեր ու ձորեր իրար երեսի նայում են, ժպտում ամպի մշուշով

Գեյ ու աղվես եկան հանդից, ազահ սիրտը լափեցին (ՀԹ):

Միևնույն ստորոգյալի հետ կապված ենթակաները կոչվում են բազմակի:

**Վարժություն 26: Դո՛ւրս գրե՛ գոյականներով արտահայտված են-
թակաները՝ դիմացը գրելով անձ են անվանում, թե իր, հատուկ են,
թե հասարակ, եզակի են, թե հոգնակի, պարզ են, թե բաղադրյալ,
որոշյալ են, թե անորոշ:**

I

Փոքրիկ տղան մի վարդ տեսավ (Գյոթե):

...Ծովն է մտնում գաղտագողի Ամեն գիշեր մի տղա (ՀԹ):

**«Գրական թերթը» հոգված է տպագրել, որտեղ Կոմիտաս վար-
դապետը գնահատվել է ըստ արժանվույն:**

**Ֆերենց Լիստը սովորում էր հռչակավոր վարպետների մոտ: Երբ
թրթոում էր այգաբացը, նրա փոքրիկ սենյակը լցվում էր հոգեգմայլ
հնչյունների վարար հեղեղով... Նրան թվում էր, թե աշխարհն է իր
մեջ նվագում (ՀՂ):**

**Թավ հետքեր երևացին ձյան վրա: Ավին մի հետքով գնաց ու
տեսավ, որ հեռվում աղվես կա: Մինչև կրակելը աղվեսները փախան:
Այդ Ավու համար վատ նշան էր. որսը հաջող չպիտի լիներ: Նրան
թվաց, թե Մթնաձորում մի սատանա է քրքջում... Մի անգամ էլ նա-
յեց Ավին անցած ճամփին, ոչ Պանինը երևաց, ոչ էլ՝ չնեբրը... Թվաց,
թե ձյունի ծանրությունից մի ձյուղ կտորվեց: Ետ նայեց. մի մարդարոյ
արջ էր կանգնել մի քիչ հեռու... Բերդանը որոտաց. կրակոցի ձայնին
ձորերն արձագանք տվին (Ըստ Ա. Բակունցի):**

II

Ծագում է մանուկ արևը գարնան

Կովկաս լեռների ձյունի պատնեշից.

Ջարթնում են մեկ-մեկ սարերն աննման

Ձմռան անվրդով քնի մշուշից:

Ահա Լալվարի վիթխարի ուսին
Բազմում է արփին թարմացած ուժով,
Սարեր ու ձորեր իրար երեսի
Նայում են ժպտում ամպի մշուշով...
Վերջին ձյուններն էլ ահա հալ ընկան,
Արտասովեց իսկույն լեռների հսկան.
Ամեն մի ձորից աղբյուր է հոսում,
Ամեն մի թփից բլբուլ է խոսում...
Զմռան փարախից հովվական երգեր
Զեփյուռի թևով սարերն են թռչում:
Ծաղկալից աշխարհ անվերջ ձորերի
Բացվում է գեղուլթյան ոգին Գուգարքի
Շնչում է գարնան բույլով անաղարտ... (Վահան Միրաքյան):

Առաջադրանք: Կազմե՛ք նախադասություններ՝ հետևյալ գոյականները գործածելով որպես ենթականեր. լեզու, Արաքս, Մասիս սար, Սևանա լիճ, մայրաքաղաք Երևան, Մատենադարան, համերգասրահներ, դահլիճներ, համերգներ, ներկայացումներ: Դպրոցի տնօրեն, ութերորդ դասարանի աշակերտներ, հանդես, դպրոցամերձ այգի, կիրակնօրյա հանգիստ, դպրոց, դասագիրք, դասամատյան:

2. **ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐՈՎ** – ենթակայի պաշտոնում հանդես եկող դերանուններն անձանիչ են կամ փոխարինում են առարկաներին:

ա) Անձնական դերանունները որպես ենթակա (եզակի և հոգնակի թվերով) .

Օրինակ՝ **Ես** երգիչ եմ, երկնի թիթեռ (Ավ. Իս.): **Մենք** փող զարկինք (ՄՊ):

Դու մեր երգի վեհափառն ես (ԳԹ): **Դուք** լավ եք սովորում:

Նա մեր երգը մաքրեց օտարաբանությունից: **Նրանք** ընթերցասեր են:

Ենթականեր են դառնում նաև **ինքս, ինքդ, ինքը, իրենք** անձնական դերանունները.

Ինքս կզբաղվեմ այդ հարցով: **Ինքդ** ես արել, **ինքդ** էլ պատասխան տուր:

Այս դերանունները կարող են հանդես գալ նաև **ես, դու, նա** դերանունների և սրանց հոգնակի թվերի հետ. այս դեպքում սրանք իրարից չեն տրոհվում որպես բացահայտիչ-բացահայտյալ՝

Ես ինքս կզբաղվեմ այդ հարցով: **Դուք ինքներդ** եք նախաձեռնել,

ինքներդ ավարտեցե՛ք, իրենք այստեղ անելիք չունեն:

բ) Ցուցական դերանուններից որպես ենթակա հանդես են գալիս առարկայանիչ դերանունները՝ եղակի և հոգնակի թվերով:

Օրինակ՝

Սա մեր գյուղն է, դա էլ՝ իմ հայրական տունը:

Սրանք իմ սիրած գրքերն են: Դրանք իմ մտերիմ ընկերներն են:

Էն ո՞վ է, նանի, որ կանչում է մեզ (ՀԹ):

գ) Հարցահարաբերական դերանուններից ենթականեր են դառնում անձի և իրի անուններին փոխարինողները:

Օրինակ՝ Ո՞վ քեզ ծեծեց, Մարո՛ ջան,

Ո՞վ անիծեց, Մարո՛ ջան (ՀԹ):

Ի՞նչը կհաղթի կյանքում հերոսին (ՀԹ):

Ի՞նչ կա քաղաքում, դե պատմի՛ր, տեսնեմ (ՀԹ):

Ով Արարատ ունի սրտում, իր մայր լեզուն չի մոռանա (ՀՇ):

Դրանք հուշարձաններ են, որոնք վկայում են մեր բազմադարյան ինքնությունը (ԳԹ):

դ) Որոշյալ ու անորոշ դերանուններով.

Օրինակ՝

Բոլորս նույնն ենք ասում: Յուրաքանչյուրը գիտի իր գործը:

Մենք ամենքս հյուր ենք կյանքում (ՀԹ):

Ոմանք հողն են փորում, ոմանք ծառեր տնկում, ինչ-որ մեկն էլ չորուկներն է հավաքում:

Ոչ մեկը չեղավ, որ իմանա դարդերս (Ավ. Իս.):

Ոչ ոք ըսավ՝ հե՛գ տղա, արդյոք ինչո՞ւ կմխա (ՊԴ)

Ոչինչ չկար մերկ անտառում: Ոչինչ չէր երևում նաև հեովում:

Վարժություն 27: Դուրս գրե՛ք դերանուններով արտահայտված ենթակաները, գրե՛ք դրանց տեսակը և թիվը:

Ես եմ հիմա մի պոետ, իմ անունը Չարենց,

Պիտի հիշվի դարերում, պիտի լինի բարձր ու մեծ (ԵԶ):

Մենք խաղաղ էինք մեր լեռների պես,

Դուք հողմերի պես խուժեցիք վայրա՛ց (ՀՇ):

Դու պիտի հնչե՛ս, հնչե՛ս հաղթական,

Իմ հի՛ն հայ լեզու քա՛ղցր ու սրտաբուխ (ՆԶ):

Ի՞նչ կա քաղաքում, դե պատմի՛ր տեսնեմ,

Իմանամ՝ ես էլ ուրիշին ասեմ (ՀԹ):

Ամեն մեկն իր կյանքից էր պատմում (ՀՄ):

Զի հասկացել նրան ոչ ոք ու չի հասկանա:

Ոչ ոք չի լսում տազնապղ, Սաքո'... (ՀԹ):

Ողջը կդառնա կրակի բաժին...

Ոչինչ կմնա պատերից բացի (ՆԶ):

Ինչքա՞ն հուր կա իմ սրտում, բոլորը քեզ (ԵԶ):

Եվ դժբախտ է նա և մեռած, ով երգ չի հասկանում ու չի սիրում (Ավ. Իս.):

Ովքեր սիրում են, չեն կարող չար լինել:

Մի օր սա եկավ թե՛ չորան Չատին

Ոչխարը թաքուն իմ հանդն է քաշել (ՀԹ):

Առաջադրանք: Հետևյալ դերանուններով կազմե՛ք նախադասու-
թյուններ (լավ կլինի հիշել գրական օրինակներ). Ես, դու, ինքներս,
իրենք, մենք ամենքս, սա, սրանք, դա, դրանք, ո՞վ, ովքե՞ր, ով, ովքեր,
որոնք, ամեն մեկս, բոլորդ, ամեն մեկը, ոմանք, ոչինչ, ոչ մեկը:

Ենթակայի պաշտոնով կարող են հանդես գալ նաև **հատկանշային իմաստ** արտահայտող բառերը՝ **փոխանվանաբար** գործածվելիս, այսինքն՝ երբ հանդես են գալիս գոյականաբար, հոդ են ստանում և հոլովվում են. դրանք են **ածականը**, **թվականը** և **անկախ դերբայները**:

Ածականը որպես ենթակա:

Ենթակայի դերում սովորաբար հանդես են գալիս փոխանվանաբար գործածվող որակական **ածականները՝** իրենց 3 աստիճաններով:

Օրինակներ՝

Ու կատարվեց էն խոսքն ահա,

Թե ուժեղից ուժեղը կա (ՀԹ):

էստեղ ինչն է գլխավորը՝

Ուժեղի մոտ միչտ էլ թույլն է մեղավոր (ԱԹ. Խնկ.):

Որոյակ, չարը չար վախճան կունենա (Խիկար):

Մրցումներում հաղթեց **ավելի ուժեղը**: **Լավագույնը** լավի թշնամին է:

Թվականի բոլոր տեսակներն էլ փոխանվանաբար կարող են հանդես գալ ենթակայի պաշտոնում:

Երկուսն էլ հայ են, ունեն մի հավատ... (ՀԹ):

Միդնեյի մրցումներում հայ մարզիկներից շահեցին **երեքը**, **չորրորդը** չմասնակցեց լսադին (Լրաբեր):

Ութերորդ դասարանի աշակերտների երկու երրորդը հարվածային է: **Երկուականը** կրավարարի մեզ մինչև կիսամյակի վերջը:

Քանակական թվականներից առանց փոխանվանաբար գործածվելու ենթակայի դերում հանդես են գալիս թվի վերացարկված անվանումները: Օրինակ՝ **Հինգ անգամ հինգ** հավասար է քսանհինգի (այդատեղ **հինգ անգամ հինգ**-ը ենթակա է): **Հինգը** կենտ թիվ է, **չորսը՝** զույգ և այլն:

Անկախ դերբայներից 3-ը նույնպես հանդես են գալիս ենթակայի պաշտոնով:

Ա ն ո Ր Ո Շ դերբայն ունի առարկայական նշանակություն. այն օժտված է գոյականին հատուկ քերականական կարգերով և ենթակայի դերում հանդես է գալիս որպես գործողություն անուն:

Օրինակներ՝

Կատուցելը մեր ժողովրդի անբաժան ուղեկիցն է:

Լռելը ոսկի է, **խոսելը՝** արծաթ (ժող.):

Կարդալը զարգացնում է մարդուն, իսկ դասական երաժշտություն **լսելը** ազնվացնում է նրան: **Ծխելը** վնասակար է առողջությանը:

Պատասխանելս գոհացրեց ուսուցչին: **Վերադառնալը** ուրախացրեց բոլորիս:

Ե ն թ ա կ ա յ ա կ ա ն դերբայը գործողության հետ ունի նաև **առարկայական իմաստ** (**Աշխատողը** սոված չի մնա: **Փնտրողը** կգտնի):

Հ ա Ր Ա Կ Ա Մ Ա Ր դերբայը որպես ենթակա նույնպես փոխանվանաբար է հանդես գալիս:

Օրինակ՝

Անցածն էլ ետ չի գալու (ՀԹ): **Հնձածը** խոտ չի^օ (Հր. Մաթ.):

Առաջադրանք

1. Անորոշ, ենթակայական և հարակատար դերբայներով կազմե՛ք երկուական նախադասություն:

2. Հետևյալ դերբայները գործածե՛ք որպես ենթականեր՝

ա) սովորել, աշխատել, կարդալ, խաղալ,

բ) հոգնած, քնած, վաստակած, հաղթած,

գ) կարդացող, երգող, արտասանող, նվագող:

Վարժություն 28: Բերված նախադասություններից դո՛ւրս գրեք ենթակաները և ասացե՛ք, թե ինչով են արտահայտվել:

Լևոնի հանկարծակի երևալը զարմացրեց ներկաներին (Շիրվ.):
Գեղեցիկը միշտ էլ հաճելի է: Նվագողը մի պատանի էր՝ իտալական

լայնեզր գլխարկով (Ն-Դ): Լավ սովորելը կուրախացնի ծնողներին: Արծաթը մետաղ է: Նինվեն մայրաքաղաք էր: Երգողը հիացրեց ներկաներին: Կարդացող երեխան բանիմաց կլինի: Լավ պարող տղան իմ ընկերն է: Կառուցելը մեր ազգային հպարտությունն է: Գրածդ շարադրությունը շատ հաջող էր: Գրածդ պետք է մրցանակի արժանանա:

Ենթակայի դերում ինքնանվանողաբար կարող են հանդես գալ նաև **չթեքվող խոսքի մասերը**, այս դեպքում **ը, ն** հոդերը տվյալ բառերից անջատվում են միություն գծիկով (-):

Օրինակներ՝

Արագ-ը ձևի մակրայ է: **Վաղուց**-ը չպետք է շարաչափել: **Դեպի**-ն իսկական կապ է, **վրան**-ն՝ անիսկական: **Կամ**-ը տրոհական շողկապ է, **բայց**-ը՝ հակադրական: **Ախ**-ը ձայնարկություն է: Քո **իհարկե**-ն բոլորովին հավաստի չէ և այլն:

Բառերի քերականական ձևերը նույնպես կարող են հանդես գալ ենթակայի դերում, ինչպես՝ **Գիտեմ**-ը սահմանական եղանակի բայ է և ոչ ըղձական: **Գնացի**-ն բայի անցյալ կատարյալ ժամանակն է: **Հերոսություն**-ը «հերոսություն» բառի գործիական հոլովն է և այլն:

Ենթակայի պաշտոններով կարող են հանդես գալ ինչպես սովորական բառակապակցությունները (**Ազգային ժողովը** ավանդների վերաբերյալ որոշում ընդունեց: **Եզան լեզուն** օգտակար բույս է:), այնպես էլ **դերբայական դարձվածները** (**Տողերի արանքում գրելը** նրա սովորությունն է: **Դասերից երկար բացակայողը** շատ բան բաց կթողնի):

Դարձվածային միավորները նույնպես կարող են ենթակա դառնալ: **Օրինակ՝ Ծտի հետևից հրացան կրակելը** հիմարություն է:

Աչք մտնողը աչքի ընկավ, աչք կհանի (**ՊՍ**):

Ջրից չոր դուրս եկողը թաց տեղ չի պառկի (**ՈւԴ Բ**):


Վերջապես որպես ենթականեր կարող են հանդես գալ նաև **ամբողջական նախադասությունները**, թե՛ պարզ և թե՛ բարդ:

Օրինակներ՝

Ռադիոյի հաղորդած «**Վաղը առանց տեղումների եղանակ է սպասվում**»-ը սուտ դուրս եկավ:

«**Չմեռնեի՝ Անին մերը տեսնեի, մեռնեի՝ Սևանը ցամաքած չտեսնեի**»-ն Ավետիք Իսահակյանի բաղձանքն էր:

Ենթակայի արտահայտության գծապատկերը



Վարժություն 29: Տրված բառակապակցություններով կազմե՛ք նախադասություններ՝ դրանք գործածելով որպես ենթականեր:

Հայաստանի Հանրապետություն, Սահմանադրական դատարան, «Իններորդ ալիք», ածխաթիթու գազ, մեծ փառք բերել, արջի ծառայություն մատուցել, գլխի ընկնել, ուժեղ քամուց կտրված ծառ, նախապես պայմանավորված խոստում, Զախորդ Փանոս, Աչոտ Երկաթ, գեղեցկության սրահ, «Երեկ ես դասի չէի եկել»-ը...:

Ստուգիչ հարցեր

1. Ինչպե՞ս ենք սահմանում ենթական:
2. Ենթական ի՞նչ խոսքի մասերով է արտահայտվում:
3. Ի՞նչ է խոսքի մասի փոխանվանարար գործածվելը:

Առաջադրանք

1. Անկախ դերբայները գործածե՛ք որպես ենթականեր:
2. Զեր իմացած դարձվածներից մի քանիսը դարձրե՛ք ենթականեր:

Ս Տ Ո Ր Ո Գ Յ Ա Լ

Ստորոգյալը երկկազմ նախադասության այն գլխավոր անդամն է, որն արտահայտում է ենթակայի հատկանիշը և այն վերագրում՝ ստորոգում է ենթակային:

Հիշիր՝ Հատկանիշի ենթակային վերագրելը կոչվում է ստորոգում:

Հատկանիշ ասելով պետք է հասկանալ նաև գործողություն՝

Ծաղիկներն արթնացան գիշերվա նիրհից (ԱԲ):

Կաթի սերը քաչել եմ, դրել եմ հովին՝ սառի (Ավ. Իս.):

Սարեր ու ձորեր իրար երեսի

Նայում են, ժպտում ամպի մշուշով (ՎՄ):

Հատկանիշ ասելով բնականաբար հասկանում ենք առարկայի որակական, քանակական, առարկայական հատկություն, ինչպես՝ Երևանը գեղեցիկ է: Երկինքը կապույտ է: Արթուրը դասարանում առաջինն է: Նրանց թիվը տասն է: Կոմիտասը հայ երգի վեհափառն է: Իմ ընկերը դու ես: Իմ նպատակը սովորելն է:

Ինչպես երևում է բերված օրինակներից, ստորոգյալն արտահայտվում է կամ դիմավոր բայերով (արթնացան, քաչել եմ, դրել եմ, սառի, նայում են, ժպտում են), կամ դիմավոր բայերի հետ նաև այլ խոսքի մասերով (գոյական, ածական, թվական, դերանուն, անկախ դերբայ և անպայման էական բայ (նա իմ ընկերն է, իմ ընկերը դու ես...)) կամ վերացական բայ (Նա իմ ընկերը դարձավ: Կղզին կոչվեց Ալթամար):

Հետևաբար, ըստ ձևային արտահայտությունից ստորոգյալը լինում է երկու տեսակ՝ բայական (պարզ) և անվանաբայական (բաղադրյալ)*:

Բայական ստորոգյալներին տրվում են՝ **ի՞նչ է անում (լինում), ի՞նչ է անելու (լինելու), ի՞նչ է արել (եղել), ի՞նչ արեց (եղավ), ի՞նչ պիտի անի (լինի), ի՞նչ կլինի** հարցերը:

***Ծանոթություն:** Պարզ և բաղադրյալ տերմինները նպատակահարմար չեն երկու առումով.

Նախ՝ աշակերտները (նաև ուսանողները) պարզ ստորոգյալ ասելով, այն հաճախ շփոթում են բայի միայն պարզ ժամանակաձևերով արտահայտված ստորոգյալների հետ (գրեցի, գրեմ, գրի՛ր, կգրեմ), իսկ բայի բաղադրյալ ժամանակաձևերով արտահայտվածները (գրում եմ, գրելու եմ, գրել եմ...) համարում են բաղադրյալ ստորոգյալ:

Երկրորդ՝ բաղադրյալ տերմինը շատերը շփոթում են հարադիր և զուգադիր բայերով կազմված ստորոգյալների հետ, որոնք նույնպես պարզ ստորոգյալներ են, այսպես՝ բայական (անց են կենում, գնում, վեր կացավ գնաց, քչեց-տարավ, թողեց գնաց, Կար-չկար մի թագավոր կար):

Այս առումով ճիշտ են այն լեզվաբանները, որ պարզ ստորոգյալը կոչում են բայական, իսկ բաղադրյալը՝ անվանաբայական (այդպես է նաև ռուսական լեզվաբանությունը):

Անվանաբայական ստորոգյալներին տրվող հարցերը պայմանավորված են ենթակային վերագրվող հատկանիշներով՝ **ո՞վ է, ի՞նչ է, ովքե՞ր են, ինչե՞ր են, ինչպիսի՞ն են, ի՞նչ եղավ, ի՞նչ դարձավ, որտե՞ղ է, ե՞րբ էր, որքա՞ն է, ո՞րերորդն է** և նման հարցերի:

Հ ի չ ի ր` կամ, գիտեմ, ունեմ, արժեմ պակասավոր բայերով արտահայտված ստորոգյալները ոչ մի հարցի չեն պատասխանում:

Օրինակ՝

Հարդի հոտ կա քո ձորերում (ՀՍ): Ուննութում կան այս գրքերից:

Այն կինն էլ ուներ խշխշան չորեր... քորոցը նարնջագույն գլուխ ուներ (ԱԲ): Անտառը ծանոթ էր նրան, գիտեք, թե որտեղ է սիրում բույն դնել ու կանչել միրհավը (ԱԲ)... **Գիտե՞ք, թե ինչ է կատարվում:**

Չգիտեմ՝ որտեղից է գալիս

Ձութակի հեկեկանքը տխուր (ՎՏ): Չգիտենք, թե ինչ ասենք:

Վարժություն 30: Հետևյալ բառերը գործածե՛ք նախադասությունների մեջ որպես ստորոգյալներ կամ ստորոգելիներ:

Կառուցել, ուղևորվել, հանգստանալ, վերադառնալ, պատմել (բայական), շնորհալի, ոսկեգույն, բանաստեղծ, նա, հոգնած, երգող, առաջին, տասներեք (անվանաբայական):

Առաջադրանք

Նույն բառերից մի քանիսը օգտագործելով՝ կազմել փոքրիկ գրույց, նկարագրություն (պարտադիր չէ, որ նշված բոլոր բառերը ստորոգյալներ լինեն):

Ն մ ու չ` Շնորհալի բանաստեղծն առաջինն էր, որ պատմեց հետաքրքիր ուղևորությունների մասին:

ԲԱՑԱԿԱՆ ՍՏՈՐՈԳՑԱԼ

Բայական ստորոգյալն արտահայտվում է խոնարհված բայի հարացուցային բոլոր ձևերով (պարզ, համադրական կամ վերլուծական), բոլոր եղանակներով ու ժամանակներով:

Սահմանական՝

Ժայռից մասուր է կաթում,

Կարմիր սարսուռ է կաթում (ՀՍ):

Լուսինեն նվազում էր աշխարհից կտրված, գերում էր ունկնդիրներին (ԳԹ): Անտառում ամպի ծվեններ կային (ԱԲ): Գարունը եկավ, հավքերը եկան (ՀԹ):

Ը դ ձ ա կ ա ն ՝

Թռչեի մտքով տուն... Տեսնեի այն առուն (ԳՄ):

Հրաչք լինեի, կրկնվեի այն հրաչքը իրական,

Առուն ստվերս տանեի ջաղացպանի աղջկան (ՀՄ):

Ե ն թ ա դ ր ա կ ա ն ՝

**Կգար, կնստեի կողքիս ու իր անուշ պատմությունը կաներ էրզրի
ու հողի մասին (Մ. Գալչ.):**

Օձի կծածը կլավանա, լեզվի կծածը չի լավանա (Ժող.):

Հ ա ր կ ա դ ր ա կ ա ն ՝

Աչուդ Սայաթ-Նովի նման ես երգ ու տաղ պիտի ասեմ (ԵԶ):

**Ես պիտի գոչեմ, պիտի բողոքեմ՝ խավարին ընդդեմ պատերազմ-
մելով (ՄՆ):**

Հ ր ա մ ա յ ա կ ա ն ՝

Գնա՛, իմ խեղճ գիրք, դնա՛ մարդամեջ (Խ. Արուվյան):

Հեռացի՛ր, մոռացի՛ր, մի՛ հիշիր,

Ինձ այդպես, քրոջ պես մի՛ գլթա (ՎՏ):

**Վարժություն Յ1: Դո՛ւրս գրե՛ք բայական ստորոգյալները՝ դիմացը
գրելով, թե բայի որ եղանակի որ ժամանակով են արտահայտվել:**

Կիսարթուն քամին կտուրից թռչում,

Ցանկապատին էր հենում կոնակը:

Անթեղի վրա կատուն էր ննջում՝

Լպստելով չրթունքն ու դունչը (ՀՄ):

Դու պիտի ծաղկես, երկիր հայրական...

Դու պիտի հնչես, հնչես հաղթական,

Իմ հին հայ լեզու՝ քաղցր ու սրտաբուխ (Ավ. Իս.):

Գնա՛, իմ քարավանս և քայլի՛ր մինչև օրերի վերջը (Ավ. Իս.):

Ելնեմ, ողջույն տամ բոլորին այսօր,

Երգելով չրջեմ փողոցից փողոց (Վ. Գրիգորյան):

Ոսկաղություն ծիծառներն իրենց թավիչ թևերին

Հինգ նոր գարուն կրբենն, նոր ցնծություն կլինի (Ս. Գրիգորյան):

Կաճի երկիրը քեզ հետ, կմեծանաս դու,

Ժամանակը կարծաթի մազերդ մի օր (ԳՄ):

Առաջադրանք

**Բերված բայերը խմբավորել ըստ եղանակների և դրանցով կազմել
մեկական նախադասություն:**

Նախապատրաստվում էր, կարդաց, կառուցում ենք, կհանգստա-
նամ, պիտի գնամ, չեմ հրաժարվի, Լսի՛ր, մի՛ գնա, թո՛ղ լինի, կար-
դացե՛ք:

Բայական ստորոգյալներն արտահայտվում են նաև բայերի երկրորդական բաղադրյալ ժամանակներով: Սրանք կազմվում են համակատար, հարակատար ու կատարելի դերբայներով և լինել բայի խոնարհված ձևերով (այս ձևերը ժամանակակից հայերենում քիչ են գործածվում):

Բերենք մի քանի օրինակ.

Ժուկով-ժամանակով Հնդկաստանի Բենարես քաղաքում տիրելիս է լինում Ուքանա Թագավորը (ՀԹ): Մինչև տեղ է հասնում հարսանիքավորները գնացած են լինում (ՀԹ): Երբ գյուղից գնալու է լինում, համբուրելիս է լինում կնոջն ու երեխաներին (Շիրվ.):

Բայական ստորոգյալներ են նաև հարադրական բայերով կազմվածները՝

Պտույտ է գալի չքնաղ տիրուհին (ՀԹ):

Օրոր էր ասում աշունն անտառին.

Բայց անտառի քունը չէր տանում (ՀՍ):

Զուգադրական բայերով կազմվածները նույնպես բայական ստորոգյալներ են

... Մեռնեմ-պրծնեմ էս օրից,

Բալքի առնեմ դադար քուն (ՀԹ):

Ասում-խոսում են դեսից-դենից, ու գիշերն անցնում է (ՊՂ):

... Մարոն ատեց իր մարդուն,

Փախավ, եկավ ետ հոր տուն (ՀԹ):

Առնել-տալ չունեք, նրա համար եղած-չեղած մի հաշիվ էր (ՊՂ):

Առաջադրանք

Տրված բայերով կազմե՛ք մեկական նախադասություն.

առաջ գնալ, կարդալիս է լինում, ականջ դնել, թողնել-հեռանալ, վեր է կենում գնում, տուր թե կտաս, մոտ գալ, ասել-խոսել, գնում է գնում, լինում է, չի լինում:

Վարժություն 32: Բերված հատվածից դեմ-դիմաց դո՛ւրս գրեք ենթականերն ու ստորոգյալները. ենթակաները ընդգծե՛ք մեկ, ստորոգյալները՝ երկու գծով:

Եղնիկը ընտելացել էր մեզ, սովորել էր մեր տանն ու դռանը: Մի գիշեր սարերից անսանձ փչում էր քամին, եղնիկը ծառա էր լինում: Երեխաներս վախից կուչ էինք եկել, մինչդեռ եղնիկը դողում էր սարսոտում, աչքերը կայծակին էին տալիս: Նա ականջ էր դնում անտառի հուժկու շառաչին ու խոսում էր նրա հետ մայրենի լեզվով: Անտառը կանչում էր նրան, ընկերների ազատ վազքն էր տեսնում: Մի փոքր հետո ավելի սաստկացավ քամին... Մեկ էլ աղմուկով բացվեցին լուսամուտի փեղկերը, և մի ուժգին շառաչ ներս խուժեց. եղնիկը

Հանկարծակիի եկավ ու թռավ-փախավ: (Ըստ Ավ. Իսահակյանի):

ԱՆՎԱՆԱԲԱՑԱԿԱՆ ՍՏՈՐՈԳՑԱԼ

Իսկ ինչո՞ւ **անվանաբայական**. անվանումը պայմանավորված է այս ստորոգյալի կազմութեամբ, այն իր կազմում անպայման ունի որևէ անուն խոսքի մաս (գոյական, ածական, թվական, դերանուն, անկախ դերբայ) և (եմ, ես, է, էի, էիր, էր... Հանգույց) կամ որևէ վերացական բայ՝ **լինել, դառնալ, թվալ, համարվել, հանդիսանալ, կոչվել, առաջադրվել, ձևանալ, ստանալ, նշանակվել, մնալ, երևալ** և այլն:

Այսպիսով անվանաբայական ստորոգյալը կարելի է սահմանել այսպես՝

Հատկանիչ արտահայտող որևէ բառով և հանգույցով (բայով) արտահայտված ստորոգյալը կոչվում է անվանաբայական:

Հիշիր՝ **Անվանաբայական ստորոգյալը միաբառ լինել չի կարող:**

Անվանաբայական ստորոգյալի կազմութեան մեջ մտնող, հատկանիչ արտահայտող բառը կոչվում է **ստորոգելի**, իսկ այդ հատկանիչը ենթակային վերագրող, կապող բայը՝ **հանգույց:**

Հարկ է նշել, որ վերացական բայերից մի քանիսը որոշ կառույցներում կարող են հանդես գալ նաև **նյութական** իմաստով ու դառնալ **բայական ստորոգյալ**, բայց ստորոգելիի հետ գործածվելիս կորցնում են իրենց **նյութական իմաստը** և դառնում են **էական** կամ **վերացական** բայեր:

Քննենք հետևյալ օրինակները՝

«Տնօրենի գործը լավ ընթացք ստացավ» (այստեղ **ստանալ**-ը նյութական իմաստից զուրկ է՝ վերացական, հետևաբար, **անվանաբայական ստորոգյալի հանգույցն է**): Հաջորդ նախադասութեան մեջ «Տնօրենը Հանրապետութեան նախագահից պատվոգիր ստացավ» նույն **ստանալ** բայը նյութական իմաստ ունի, ներգործական սեռի բայ է, հետևաբար՝ **բայական ստորոգյալ է**:

Անվանաբայական ստորոգյալի ստորոգելին արտահայտվում է՝

1. **Պոյականի ուղիղ և թեք ձևերով.**

Ուղղական

Քո երգի մեջ գութանի վար է,

Ծիրանի ծառ է ու խնկի ծառ,

Սիրավոր լոր է ու Սոնա յար է,

Թուխ այտի խալ է ու ծնկի ծալ (ՀՄ):

Կոմիտասը մեր ժողովրդի հպարտութունն է, նրա գործը՝ մեր

անսպառ հարստությունը (Ալ. Իս.): Աճառյանի կատարածը մեծագույն սխրանք էր (Ռ. Զարյան):

Ուղղականով արտահայտված ստորոգելին կարող է ձևավորվել նաև կապով: Օրինակ՝ Մայրս աշխատում է որպես ուսուցչուհի: Նա ներկայացավ որպես լրագրող:

Սեռական – Այս հոլովով գրված ստորոգելին ունի թե՛ որոշչային և թե՛ հատկացուցչային հատկանիշ բաժակը ջրի է: Պահարանը հագուստի է:

Հետաքրքիր է, դու ի՞նչ մտքի ես:

Տրական – Տունը գյուղի ծայրին է: Գիրքը սեղանին է: Ծիտը ծառի ճյուղին է:

Բացառական – Տունը քարից է: Արթուրը մեր դասարանից է: Օդին թթից է:

Գործիական – Երեխան շնորհքով է: Միրզը համով է: Խաչապուրին պանրով է:

Ներգոյական – Տնօրենը տեղում չէ, դասարանում է: Փողը գրպանումն է:

Ածականով՝ ձուխ է հայոց լեզուն, և առատորեն կվարձատրվի նա, ով կուսումնասիրի այն: Մեր լեզվի բառապաշարը շատ հարուստ է, այն ունի մոտ 250 հազար բառ:

Թվականով՝ Դասամատյանում ես առաջինն եմ, դու իններորդը: Մեր դասարանի աշակերտների թիվը քսանհինգն է: Կատարածդ տրված առաջադրանքի մեկ երրորդն է:

Դերանուններով՝ Ես եմ հիմա մի պոետ, իմ անունը՝ Չարենց (ԵՉ): Հիմա խոսքը քոնն է: Ասածդ ոչինչ է: Մեր տունը այստեղ էր: Ընկերս դու ես:

Անկախ դերբայներով՝ Բոլորիս նպատակը լավ սովորելն է: Դա կարողալ չէր: Ընկերս լավ խնդիր լուծող է: Սոնան լավ սովորող է: Երեխան քնած է: Հոգնած եմ:

Մակբայներով՝ Մեր դպրոցը այնքան հեռու չէ, մոտ է: Մեքենայի ընթացքը արագ է: Աշխատելու ժամանակը հիմա է:

Օրինակներ վերացական բայերով. Հայաստանը անկախ Հանրապետություն հռչակվեց 1991 թ. սեպտեմբերի 21-ին:

Եվ այն օրվանից դրա համար

Կղզին կոչվեց Ախթամար (ՀԹ):

Խնջույք է սարքել Թմկա տիրուհին,

Ցերեկ է արել խավար գիշերը,


Հեղեղի նման հոսում է գինին,

Ու քեֆ է անում Զավախքի տերը (ՀԹ):

Անվանաբայական են նաև անորոշ դերբայ + խոնարհված բայ կառույցները, քանի որ անորոշ դերբայը խոսքում հանդես է գալիս գոյականին հատուկ շարահյուսական պաշտոններով, այսպես՝

ցանկանում եմ աշխատել, մտադիր է վերադառնալ, ուզում է գնալ, պատրաստվում եմ ելույթ ունենալ, կաշխատեմ շուտ վերադառնալ և այլն:

Ահա ստորոգյալի գծապատկերը.



Առաջադրանք 1: Բերված նախադասություններում բայական ստորոգյալները դարձրե՛ք անվանաբայական.

Ն մ ու չ – Մեսրոպ Մաշտոցն ստեղծել է Հայերեն այբուբենը:

Մեսրոպ Մաշտոցը Հայերեն այբուբենն ստեղծողն է:

Ծովը Հանդարտվել էր:

Արցախյան պատերազմի ժամանակ բոլոր երիտասարդները զինվորագրվեցին:

Երկինքը խաղաղվեց, օրը պայծառացավ, զբոսաշրջիկները Հանգստացան սաղարթախիտ ծառի տակ:

Բանվորները փողոցը ծառապատեցին:

Առաջադրանք 2. Հետևյալ Հարադիր բայերը նախադասություններում գործածե՛ք որպես ստորոգյալներ.

գրույց անել, լաց լինել, մոտ գալ, ներս մտնել, խույս տալ, բաց անել, ականջ դնել, երես տալ, իրար անցնել, թողնել-փախչել, երգել-պարել:

Վարժություն 33. Դո՛ւրս գրեք անվանաբայական ստորոգյալները և գրե՛ք, թե ստորոգելիները ինչ խոսքի մասերով են արտահայտված, իսկ Հանգույցները հական բայե՞ր են, թե՞ վերացական:

I

Ջրվեժը, ժայռի գմբեթից կախված գանգ է վիթխարի,

Առվակը, գանգի լեզվակից կախված, պարան է ձորում (ՀՄ):

Մրցումներում ես եմ առաջինը, իսկ դու առաջինն ես սովորելու մեջ:

Օղբ մաքուր էր, արցունքի պես ջինջ,

Գիշերը ամպամած էր ու մռայլ:

Հրաչյա Աճառյանը 562 լեզուների ուսումնասիրող դարձավ իր տիտանական աշխատանքի շնորհիվ: Նա գիտությունն ահաբառակ էր: Մեծ էր ավելի, քան եղավ:

– Գետի ջուրը խմելու չէ, զգույշ կլինեք, չխաբվեք,– զգուշացրեց տեղանքին լավ ծանոթ խմբապետը:

– Կացարանները հեռու չեն, շուտով կհասնենք, երկու կիլոմետրի վրա են, մի կես ժամից տեղ կհասնենք ու հանգիստ կառնենք,– Հանգստացրեց արշավի պետը:

Գյուղում Ավին լավ որսորդի համբավ ուներ... Մի օր էլ լուր տա-
րածվեց, թե ազատութիւն է ընկել:

Գյուղը հին հաշիվներ էր մաքրում, բայց կեր ու խում կար հա-
րուստ տներում: Գյուղը հսկումի մեջ էր՝ մինչև լուսաբաց ահագանգի
պատրաստ...:

Պետին երկյուղ չէր անում, նա գյուղի գործերին չէր խառնվում.
նրան մարդատեղ չէին դնում... Ջահելները պիտի սրախսսեին, թե
Պետին լավ թնդանոթ կնետի, կամ հրաման կտա... Պետին այլակերպ
էր դարձել... Պետին սիրտ չարավ կալերի կողմը նայելու... Աղբյուրի
մոտ Զառի աքիրն էր, որ կովը բերել էր նախիրին խառնելու: Պետին
մտքից հանել չէր կարող մի ձեռքը չորացած պառավ աղջկան: Նա
մեխվել էր նախիրին. նախիրից դուրս ուրիշ գործ չուներ:

– Այն անդարդ մարդ, սալդաթ էլ չի գնալու, – ասում էին շատերը
(Ըստ Ա. Բակունցի):

**Վարժութիւն 34. Արտագրե՛ք հատվածը. բայական ստորոգյալ-
ները ընդգծե՛ք մեկ, անվանաբայականները՝ երկու գծով:**

Կյանքն ընթանում էր եռուն աշխատանքի մեջ: Հասմիկն արդեն
դարձել էր Գուրգենի օգնականը... Գուրգենն սկսեց քայլել սենյակում,
ապա մոտեցավ Հասմիկին... Հեզնանքը Հասմիկի տարերքն էր...
Ամառվա երեկոյի այս ժամերն էին, որ արևը մայր էր մտնում... Գուր-
գենից հետո խոսողը պիտի լիներ Հասմիկը...

Հանկարծ նա այլայլվեց:

– Հիվա՞նդ ես, – հարցրեց Գուրգենը:

– Ո՛չ, գիտեմ որ խոսողը ուրիշն է: Ես առաջինն էի, բայց ոխակի
չգիմեցի: (Ըստ Մ. Արազու):

Առաջադրանք 1.

**Կազմե՛ք մեկական նախադասութիւն որպես վերադիրներ գոր-
ծածելով մեկական գոյական (ցանկացած հոլովով), ածական,
թվական, 3 տարբեր դերանուններ, 3 տարբեր դերբայներ:**

Առաջադրանք 2.

**Կազմե՛ք 3-ական բայական և անվանաբայական ստորոգյալներով
նախադասութիւններ:**

Հ ա ր ց ե ր

1. Նախադասությունների անդամն է կոչվում ստորոգյալ:
2. Ի՞նչ է ստորոգումը (բերե՛ք օրինակներ):
3. Ստորոգյալի քանի՞ տեսակ գիտեք:
4. Ինչո՞ւ բայական և անվանաբայական և ոչ թե պարզ ու բազաղրյալ ստորոգյալ:
5. Ի՞նչ է ստորոգելին, ի՞նչ խոսքի մասեր կարող են դառնալ ստորոգելիներ:
6. Ի՞նչ է Հանգույցը. ինչո՞վ է այն արտահայտվում:
7. Թվե՛ք վերացական բայերը:

ԵՆԹԱԿԱՅԻ ԵՎ ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Համաձայնությունը՝ իբրև քերականական կապակցություն եղանակ, առաջին հերթին բնութագրական է նախադասության գլխավոր անդամներին:

Գոյական ենթական և ստորոգյալը համաձայնում են **թվով**, **իսկ դերանուն** ենթականի դեպքում՝ նաև **դեմքով**, այսինքն՝ ենթականի դեմքն ու թիվը պարտադրվում են ստորոգյալին, հետևաբար, ստորոգյալը կախվածություն մեջ է ենթականից:

Թվային Համաձայնություն

Որպես կանոն, նախադասության ենթական ու ստորոգյալը համաձայնում են **թվով**. եզակի ենթականի հետ դրվում է եզակի ստորոգյալ, հոգնակիի հետ՝ հոգնակի:

Օրինակներ՝

Ցաված սիրտս երգեր Հյուսեց.

Երգեր՝ անուշ ու տխուր,

Վիշտս հավից, արցունք հոսեց՝

Վճիտ, ինչպես ջինջ աղբյուր (Ավ. Իս.):

Լույսն է մեռնում, օրը՝ մթնում,

Մուլթը տնից տուն է մտնում (ՎՏ):

Անուշ դաշտերը պատեց կապույտ մեզ,

Տխուր երեկոն զարկել է վրան.

Միրտս կարոտով կանչում է քեզ (ՎՏ):

Բերված բոլոր օրինակներում ենթակաները եզակի թվով են
գրված, ստորոգյալները համաձայնել են նրանց հետ:

Հետևյալ օրինակներում ենթակաները հոգնակի թվով են գրված,
ստորոգյալները՝ նույնպես

Հավքերի պես երգերս թռան,

Հովերի հետ զնացին,

Արցունքներս ցողեր դառան,

Վարդի ծոցում շողացին (Ավ. Իս.):

Աստղերն են ժպտում լուսեղեն նազով...

Սարերի ետևում շողերը մեռան...

Ծաղիկներն ահա քնքուշ փակվեցին,

Բացվեցին երկնի ծաղիկներն անհաս (ՎՏ):

Ընկերներս մեկիկ-մեկիկ

Կորան այս լայն ճամփաներին (ՍԿ):

Հավաքական գոյականներով արտահայտված ենթակաների հետ
ստորոգյալը գրվում է եզակի թվով՝

Օրինակ՝

Բանակը պատրաստ է հարձակման, տե՛ր իմ (ԳԳ):

Ժողովուրդը քնած առյուծ է, որ զարթնեց, էլ չի քնի (Ժող.):

Իսկ եթե հավաքական գոյականներով ենթական հոգնակի թվով է
գրվում, ստորոգյալը նույնպես հոգնակի է գրվում:

Օրինակ՝

Բանակներդ արչավեցին Բեռլին տանող ճամփաներով,

Արյունահեղ կովից ելան սարերի պես բաց ճակատով (ՀԾ):

Աշխարհի ժողովուրդները պայքարում են խաղաղության համար:

Բազմակի ենթակաների հետ ստորոգյալը գրվում է հոգնակի
թվով՝

Եթե բախտն ու վայելքները քեզ ժպտան,

Օտար մարդիկ քեզ սիրաբար ողջուն տան,

Գուցե ես լամ բախտիդ համար, ի՛մ անզին (ՎՏ):

Անց են կենում սեր ու խնդում, զեղեցկություն, գանձ ու գահ,

Մահը մերն է, մենք՝ մահինը, մարդու գործն է միշտ անմահ (ՀԹ):

Սարեր ու ձորեր իրար երեսի

Նայում են, ժպտում ամպի մշուշով (ՎՄ):

Արթուրը, Տիգրանը և Հասմիկը մեր դասարանի գերազանցիկներն են:

Բոլորը, ամենքը դերանուններով արտահայտված ենթակաների հետ ստորոգյալը նույնպես **Հոգնակի** թվով է դրվում՝

Կարծես, թե դարձել եմ ես տուն.

Բոլորը առաջվանն են կրկին (ՎՏ):

Մենք ամենքս հյուր ենք կյանքում (ՀԹ):

Սրանք են **Թվային** համաձայնությունների դեպքերը:

Բակառություն: Հայերենում, հատկապես խոսակցական լեզվում ու բարբառներում կան նաև ենթակայի ու ստորոգյալի **Թվային** անհամաձայնությունների դեպքեր, երբ եզակի ենթակայի հետ դրվում է հոգնակի ստորոգյալ և հակառակը: Կապակցությունն այս եղանակը կոչվում է **բակառություն**, որը հատուկ է գրաբարին:

Անհամաձայնությունն օրինակներ՝

Աչակերտների մեծ մասը բարձր զնահատականներով **հանձնեցին** քննությունները:

Բազմության մեծ մասը չարժեցին դեպի հրապարակ:

Ճիշտ կլինե՞ր ստորոգյալը դրվեր եզակի թվով, որովհետև **մասը եզակի է:**

Բակառություն է նաև, երբ ենթական հոգնակի թվով է, ստորոգյալը՝ եզակի:

Օրինակներ՝

Այնքան սպասեցի՝ **աչքերս ջուր դարձավ:** Ուտքերս ցավում է, չեմ գնա:

Բակառություն մի տեսակն էլ այն է, երբ բազմակի ենթակաների հետ է ստորոգյալը դրվում եզակի թվով:

Օրինակներ՝

Ձյուն ու ցուրտ եկավ. առու, գետ լռեց

Դիլան դայուն **հաճելի էր** սիմֆոնիայի տերևների խշշոցը, վազերի օրորը և հնձանի դոնակի ճոռոցը:

Խնդճ մարդու **կաշին ու ոսկորն է մնացել:**

Սակայն, երբ ենթակաները չեղտվում են առանձին-առանձին, ստորոգյալը դրվում է **հոգնակի** թվով:

Գիրն ու գրականությունը իմ կյանքի անբաժանելի ընկերներն են եղել:

Արմենակ Շահնուրադյանը, Վահան Տեր-Առաքելյանը և Տիգրան Նալբանդյանը կոմիտասի ամենասիրելի սաներն են եղել (ԳԹ):

Անեղական գոյականներով արտահայտված ենթակաների հետ ստորոգյալները դրվում են եզակի թվով:

Օրինակ՝

Ֆիլիպինները առատ երկիր է: Ալպերը հրաշալի բուսականություն ունի: Ամերիկայի Միացյալ Նահանգները կընդունի Հայոց ցեղասպանությունը:

«Վարպատները» ֆուտբոլի ուժեղ թիմ է:

Եթե հոգնակի թվով ենթական որևէ ստեղծագործության անուն է, ստորոգյալը դրվում է եզակի թվով:

Օրինակ՝

Վահան Տերյանի «Մթնշաղի անուրջները» լույս է տեսել 1908 թվականին, Թիֆլիսում:

Գարեգին Սևունցի «Գերիները» հետաքրքրությամբ է կարդացվում:

Զորջ Բիգելի «Մարգարիտներ որոնողները» լավում է մեծ հաճույքով:

Վարժություն 35: Բերված նախադասություններում փոփոխե՛ք ենթակաների ու ստորոգյալների թվային համաձայնությունը:

Ծաղիկներ, բացվե՛ք նրա ճանապարհին, ով ոչ մի ծաղիկ չի տրորել (ՀԾ):

Մեր հեքիաթի հերոսը մի քաջ երիտասարդ էր:

Մենք դեռ աշակերտներ ենք, մեկ տարի հետո կդառնանք ուսանողներ:

Դու, սիրելի՛ դպրոցական, մեր երկրի ապագան ես:

Մենք վաղուց ենք կարդացել Րաֆֆու «Սամվել» պատմավեպը:

Մրցումներում ուժեղները հաղթեցին թույլերին:

Առաջադրանք

Յուրաքանչյուր, բոլորս, ամենքը, ամեն մեկը, ամբողջը, ո՞վ, ի՞նչ, ոչինչ, ոչ մեկը դերանուններով կազմեցե՛ք մեկական նախադասություն:

Դիմային Համաձայնություն

Ենթակայի և ստորոգյալի դիմային Համաձայնությունը շատ կանոնիկ է. կանոններից չեղումներ չկան:

Բայական ստորոգյալի Համաձայնությունը պայմանավորված է դերանվամբ արտահայտված ենթակայի դեմքով, իսկ անվանաբայական ստորոգյալի դեպքում Համաձայնությունը կատարվում է Հանգույցների հետ: Այսպես՝

ա) Անձնական դերանվան առաջին դեմքով արտահայտված ենթակայի հետ ստորոգյալը դրվում է առաջին դեմքով (եզակի և հոգնակի):

Օրինակ՝

Իմ երազների ծվենները տաք

Ես թողել էի

Բարձունքի ծաղկած ծառերի վրա (ՀՄ):

Ես կանգնած եմ վայրի ժայռի կատարին (ՎՏ):

Մենք փող զարկինք, և արձագանքն ահավոր

Երկրից երկիր որոտաձայն շառաչեց (ԵԶ):

Մենք ճամփա ընկանք առավոտ ծեգին (ԵԶ):

բ) Անձնական դերանվան երկրորդ դեմքով արտահայտված ենթակաների հետ ստորոգյալը նույնպես դրվում է երկրորդ դեմքով (եզակի, հոգնակի):

Օրինակ՝

Գնա, ի՛մ որդյակ, աշխարհքս անցի՛ր,

Պանծալի անուն **Մեծի դու ստացի՛ր** (ՌՊ):

Դուք էլ, սարի սիրո՛ւն ծաղկունք,

Թաքուն մի ցավ ունեք լուռ... (ՀԹ):

գ) Ստորոգյալը երրորդ դեմքով է դրվում, եթե ենթական արտահայտված է երրորդ դեմքի անձնական դերանվամբ, կամ այլ դերանուններով (եզակի, հոգնակի):

Օրինակ՝

Նա եղավ մեր առաջին ուսուցիչը: Նա ստեղծել է հայերեն տառերը: **Նրանք գրեցին** մեր ժողովրդի պատմությունը: Այսօր **ո՞վ է բացակայում: Ինչո՞ւ բոլորդ չեք** գրում: **Ոչ ոք չի բացակայում:**

Ստորոգյալը երրորդ դեմքով է դրվում, եթե որպես ենթակա հանդես են գալիս գոյականները կամ գոյականաբար գործածված ուրիշ խոսքի մասեր:

Օրինակ՝

Գրքերի աշխարհը տիեզերք է անեղր (ԵՁ): Գիրքը գիտությունն աղբյուր է. Հ. Թումանյանն ու Կոմիտասը ծնվել են նույն թվին՝ 1869-ին: Գարունը հայերեն է գալիս, Ձյունը հայերեն են լալիս (ՀՄ):

Եթե ենթակաները արտահայտում են տարբեր դեմքերի դերանուններով, ստորոգյալը համաձայնում է դրանցից մեկին, ըստ որում դեմքով ամենամոտիկին և դրվում է հոգնակի թվով: Օրինակ՝

Կապույտ, հատակ երկնքի տակ գնում էինք ես ու դու (Գ. Զահուկյան): Դու և նա ե՞րբ կկատարեք այս գործերը: Ես ու դու ենք պայմանավորվել: Մենք, դուք և նրանք միասին ենք դպրոցի տարածքը բարեկարգելու:

Վարժություն 36: Բերված հատվածից դո՛ւրս գրեք ենթականերն ու ստորոգյալները և ցո՛ւյց տվե՛ք դիմային ու թվային համաձայնությունը:

Լուսնի շառագույն սկավառակը երևաց... Սևանի վրա լուսնունք էր տիրում: Ծարժումը դադարեց: Ճրագները հանգել էին: Մատուռներն ու եկեղեցիները կարծես նիրհում էին այնպես, որ ծովակի ափածիր օրոր էին երգում նրանց համար: Լուռ անցուղարձ էր անում մի բարձրահասակ մարդ... Կղզու աշխարհիկ բնակիչներից մեկն էր նա: Նրան թվում էր, թե աշխարհը նիրհում է խաղաղ քնով...

– Ինչո՞ւ, ինչո՞ւ հասա ես նվաստության այս աստիճանին,– գոչեց հանկարծ անծանոթը: Նա ոչինչ չէր գգում, ոչինչ չէր լսում և հանկարծ տեսավ, որ իրեն է մոտենում շղարչով ծածկված մի կին:

– Ո՞վ է սա,– ձայն տվեց նա և, իսկույն ճանաչելով, վեր թռավ տեղից,– թագուհի, այս դո՞ւ ես,– հարցրեց մեղմ ձայնով:

– Այո՛, ի՛մ սիրեցյալ թագավոր,– պատասխանեց վերջինս,– կամենում էի քեզ տեսնել: (Ըստ Մուրացանի):

Վարժություն 37: Ընդգծե՛ք ստորոգյալները, ցո՛ւյց տվե՛ք դրանց տեսակները և թվային ու դիմային համաձայնությունները:

Հիշում եմ՝ քանի դեռ այս ուխտադրուժ պատերազմը չէր սկսվել, ամբողջ երկրում ոչ ոք իմ գոյության մասին չգիտեր, ոչ ոքի պետք չէր՝ ես կամ, թե չկամ: Ոչ մեկն ինձ երբեք չէր խնդրում, որ մեջտեղ ընկնեմ: Ես միշտ էլ նույն մարդն եմ եղել...

Հերոս դառնալու համար ուշքները գնում է: Այդ մարդիկ փորձում են գլխի ընկնել, թե ինչ է լինելու դրա վերջը: Ես ուզում եմ ասել, թե վերջը ինչ է գալու իրենց գլխին: Նրանց կյանքները մազից էր կախված, չէին մտածում, որ հերոս դառնալու փոխարեն կարող է հանգուցյալ դառնան:

... Դիցուք թե կիզիչ շոգից ծարավել ես ու կեսօրին գաղտագողի ջուր խմելու ես դուրս եկել. դա կոչվում է ինքնագլուխ բացակայություն, որը շատ լուրջ հանցանք է: Եթե եղած թոհուրոհի մեջ գլուխը չկորցնես, ուրեմն ինձանից պինդ ես:

Ես ընդհանրապես ամբարիշտ չեմ, բայց հանկարծակիի էլ չեմ գալիս, որովհետև ամեն ինչի մատնների արանքով եմ նայում: Ոչինչ անել չես կարող (ԹՆԺ):

ԵՆԹԱԿԱՅԻ ԵՎ ԱՏՈՐՈԳՅԱԼԻ ՇԱՐԱԳԱՍՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես ասվել է, շարադասությունը նախադասություն կազմում եղած բառերի (նախադասության անդամների և ոչ անդամների) իրար նկատմամբ ունեցած հարաբերությունն է՝ դասավորություն կարգը, այն հիմնականում պայմանավորված է տրամաբանական շեշտով ու հնչերանգով:

Շարադասությունը լինում է **կայուն** (սովորական) և **չըջուն** (ինվերսիա):

Ենթակայի և ստորոգյալի շարադասությունը նույնպես լինում է **սովորական** (երբ ենթական դրվում է ստորոգյալից առաջ. սա ընդունված կարգն է) և **չըջուն** (երբ ստորոգյալն է դրվում ենթակայից առաջ. սա ունի ոճական արժեք):

Սովորական շարադասության օրինակներ.

Հագրոն նստել է օջախի քարին,

Հիշում է կորած երկիրն ու հողը (ՀՄ):

Խնձորն իր ծառից հեռու չի ընկնում:

Նաիրին խաղողի որթ է հնագույն (ԳԷ):

Արևդ հայերեն է ծագում:

Ծառերդ հայերեն են ծաղկում (ՀՄ):

Սակայն, եթե միշտ ենթական ստորոգյալից առաջ դրվեր, մեր լեզուն կլիներ չոր ու միապաղաղ, չէր ունենա այն հմայքն ու գե-

ղեցկութիւնը, եթե գրողը, բանաստեղծը չդիմեն շրջուն շարադասութեան, որը նպատակ ունի խոսքը դարձնել ավելի կենդանի ու արտահայտիչ, բանաստեղծական ու երաժշտական: Ահա թե ինչու հատուկ նպատակներով մեր գրողներն ու ստեղծագործողները ստորոգյալն են դնում ենթակայից առաջ:

Նշենք, թե ինչ նպատակով ենք դիմում շրջուն շարադասութեան:

ա) Գրողն ու ստեղծագործողը շրջուն շարադասութեան են դիմում, երբ ցանկանում են ընթերցողի ուշադրութիւնը հրավիրել գործողութեան, եղելութեան, իրավիճակի, բնութեան երևույթների նկարագրութեան վրա՝ հատուկ ընդգծելով դրանք: Բերենք նման օրինակներ, որոնցով լի է մեր գեղարվեստական խոսքը:

Լսվում է կաքավի թավ երգը: Անտառի խորքում կանչում է միրհավը (ԱԲ): Գեղեցիկ է Սևանը լուսաբացին: Զարթնում է շամբուտների փետրավոր բնակչութիւնը (ՎԱ):

Ծագում է մանուկ արևը գարնան

Կովկաս լեռների ձյունի պատնեշից.

Զարթնում են մեկ-մեկ սարերն աննման

Ձմռան անվրդով քնի մշուշից (ՎՄ):

Ծփում է ծովն այեծածան,

Ծփում է սիրտը տղի,

Գոռում է ծովն ահեղաձայն.

Նա կովում է կատաղի (ՀԹ):

Լուսակերտ է ապարանքը Թաղմորի,

Անապատում որպես երազ ոսկեհչուս.

Յոթն հարյուր սյունի վրա մարմարի

Սլանում է աշտարակը երկնասույգ (Ավ. Իս.):

բ) Ստորոգյալը ենթակայից առաջ է դրվում հատկապես բանաստեղծական խոսքում՝ բանաստեղծութիւնը հանգավորելու, ինչպես նաև այն ռիթմավորելու նպատակով.

Օրինակ՝

Դոփում են, դոփում են, դոփում են ձիերը.

Մթի մեջ դոփում են, խփում են պայտերը...

Գնում են, գնում են, գնում են ձիերը (ԵՁ):

Գոռում են, դողում Թմկա ձորերը,

Կանգնած է Թաթուլ Շահի հանդիման,

**Ջարկում են, զարկվում դուշման գորքերը՝
Արյունը հոսում էն Քոփ նման (ՀԹ):**

**Ծանր նստել է քարափը ձորում՝
Հյուրընկալ տերը մանկության ձորի:
Ճակատից քարե քրտինք է ձորում,
Ուսից կախված են մամուռ ու մորի (ՀՍ):**

**Լիներ հեռու մի անկյուն,
Լիներ մանկան արդար քուն (ՀԹ):**

գ) Ժողովրդական ստեղծագործություններում՝ հեքիաթներում, բալլադներում, լեգենդներում խոսքին դինամիզմ, աշխուժություն հաղորդելու նպատակով հաճախ նորից ստորոգյալը նախորդում է ենթակային:

**Օրինակ՝ Լինում է մի սար, էն սարում մի ծառ,
էն ծառում՝ փչակ, փչակում մի բուն,
Բնում երեք ձագ, ու վրեն կկուն (ՀԹ):**

**Լինում է, չի լինում, մի թագավոր է լինում... Գնում է զնում թա-
գավորի փոքր որդին ու հանդիպում է անտառապահին (ժող.
հեքիաթ):**

**Ուշագրություն՝ Պետք է հիշել մի քանի դեպքեր, երբ են-
թական պարտադիր կարգով ստորոգյալից առաջ է շարադասվում:**

Այդ դեպքերից են՝

ա) Հարցահարաբերական դերանուններով արտահայտված են-
թակաները բացառապես նախադաս են դրվում:

Օրինակ՝

Ինչը կհաղթի կյանքում հերոսին (ՀԹ):

Ո՞վ դեմը կերթա, ո՞վ կոխվ կանի:

Բայց ո՞վ կտա էն վայելքը (ՀԹ):

Ովքե՞ր են ցանկանում մասնակցել ծառատնկմանը:

Ի՞նչ կա տանը:

Ով Արարատ ունի սրտում, Իր մայր լեզուն չի մոռանա (ՀԾ):

**Ովքե՞ր չեն եղել Մատենադարնում, քիչ բան կիմանան հայկական
մշակույթի մասին (ԳԹ):**

Ինչը մի ժամանակը հեքիաթ էր, իրականություն դարձավ:

բ) Փոխանվանաբար ենթակայի դերում հանդես եկող խոսքի

մասերն ու բառակապակցությունները նույնպես նախադաս են դրվում, այս դեպքում դրանք անպայման հոգ են ստանում:

Օրինակներ՝

Ծիրանագույնը թագավորական զգեստի գույնն է:

Իններորդը հայկական այբուբենի Թ տառն է:

«**Տակ**»-ը նախապես եղել է գոյական: «**Իհարկե**»-ն հաստատական վերաբերմունք է արտահայտում: «**Վայ**»-ը զգացում արտահայտող ձայնարկություն է:

Առաջին հայացքից **փոքրիչատե պարզունակ թվացողը** մանրազնին ուսումնասիրություն ընթացքում աստիճանաբար բարդանում է:

զ) Անվանաբայական ստորոգյալների դեպքում նկատելի է մի կարևոր հանգամանք. եթե հանգույցը հեռանում է ստորոգելիից և դրվում է ենթակայի կամ այլ անդամի վրա, հենց այդ անդամն էլ դառնում է ստորոգելի:

Օրինակ՝

Ես եմ հիմա մի պոետ, **իմ** անունը՝ **Չարենց** (ԵՉ):

Այստեղ **պոետը** ենթական է, **ես եմ**-ը՝ անվանաբայական ստորոգյալը, իսկ՝ «**Ես հիմա մի պոետ եմ**» նախադասություն մեջ **պոետ եմ**-ն է դառնում անվանաբայական ստորոգյալ:

Այդպես էլ «**Քեղեցիկ է Ծովասարը**» և «**Ծովասարն է գեղեցիկ**»:

«**Սա իմ հայրական տունն է**» և «**Սա է իմ հայրական տունը**»:

Իսկ եթե անվանաբայական ստորոգյալի հանգույցը զեղչված է, ենթակայի նախադաս դիրքը պարտադիր է:

Օրինակ՝

Դու, **Արագած**, **ալմա՛ստ վահան**

Կայծակեղեն թրերի,

Քաղաթներդ՝ բյուրեղ վրան

Թափառական ամպերի (Ավ. Իս.):

Առաջին նախադասություն մեջ զեղչված է **ես** հանգույցը (վահան, ես), իսկ երկրորդ նախադասություն մեջ զեղչված է **են** հանգույցը (վրան են):

Դու հողածին, **դու** և **աստված**,

Դու և **հաղթող**, **դու** և **պարտված (ՀՍ):**

Այստեղ, երկու դեպքում էլ զեղչված է **ես** հանգույցը:

դ) Ենթական ստորոգյալից պարտադիր կարգով առաջ է դրվում

Հեղինակի խոսք-նախադասություն մեջ, եթե այն դրված է ուրիշի ուղղակի խոսքից առաջ:

Օրինակ՝

Ավետիք Իսահակյանն ասել է. «Յուրաքանչյուր գրագետ մարդ պարտական է իր ուսուցչին»:

«Ավետարանը» սովորեցնում է. «Միշտ բարություն արա, և դեմդ կգա»:

Իսկ եթե ուրիշի ուղղակի խոսքն է նախորդում Հեղինակի խոսքին, այդ դեպքում Հեղինակի խոսք-նախադասություն մեջ ստորոգյալն է պարտադիր նախորդում ենթակային: Օրինակ, փոխենք բերված նախադասությունների կառուցվածքը. այսինքն Հեղինակի խոսքը տանենք ուրիշի խոսքից հետո:

«Յուրաքանչյուր գրագետ մարդ պարտական է իր ուսուցչին», - ասել է Ավետիք Իսահակյանը:

«Միշտ բարություն արա, և դեմդ կգա», - սովորեցնում է «Ավետարանը»:

Ինչպես դժվար չէ նկատել, Հեղինակի խոսքում ստորոգյալը պետք է լինի ուրիշի ուղղակի խոսքին ավելի մոտիկ, որպես այդ երկու խոսքերը կապակցելու միջոց:

Վարժություն 38: Փոփոխե՛ք բերված նախադասությունների ենթակաների և ստորոգյալների շարադասությունը, սովորականը դարձրե՛ք չրջուն, չրջունը՝ սովորական.

Երգում է քամին, լալիս է նորից... Անհույս ու անվերջ մղկտում է նա...

Այս մութ գիշերում այնքան կա թախիժ, Այնքան տրտունջ ու զանգատ կա հիմա (ՎՏ):

Ես ձեզ ասում եմ՝ կգա ոգու սով,

եվ դուք կքաղցեք ճոխ սեղանի մոտ (Ավ. Իս.):

Դու մի հավատա ժպտուն աչքերին,

Շատ անգամ նրանք ծաղիկներ են վառ (ՀԹ):

Թռչում են երգերս նրան ընդառաջ,

Ցնորքներս աշխույժ պարում են իմ շուրջ (ՀԹ):

Առաջադրանք: Բացատրե՛ք, թե շարադասական փոփոխություններից բանաստեղծությունները պահե՞լ են իրենց արտահայտչականությունն ու հանգավորումը:

Վարժություն 39: Բացատրե՛ք, թե բերված օրինակներում շարադասության ո՞ր դեպքերն են.

Մենարոպ Մաչտոց ասաց՝ որդիս,
էլ ինչով ես հույսը բերդիս,-
էլ հայրենիք ինչո՞ւ եկար,
Թե պիտի խոսես օտար լեզվով (ՀԾ):

Եվ արցունքիս միջից վհատ ինձ նայեցին ու անցան
Սիամանթոն, Խջեղարեն որպես մի զույգ ծիածան (ՀԾ):

Կինն է իշխում, ոչ թե մայրը. այս է ցավը իմ երգի (ՀԾ):

Հնձան է մտնում ծեր Դիլան դային՝

Հոգում հեռավոր օրերի ցավը.

Եվ հուշերի մեջ թևին է տալիս

Իր ձեռքից թռած ոսկե միրհավը (ՀՍ):

Ես սիրում եմ մթնշաղը նրբակերտ (ՎՏ):

Ո՞վ է անվերջ հեծեծում, Ո՞վ է կանչում այդպես ուչ (ՎՏ):

Վարժություն 40: Գրե՛ք ուրիշի ուղղակի խոսքով 4 նախադասություն, որտեղ հեղինակի խոսքում 2 ենթակաները լինեն նախադաս, երկուսը՝ չրջուն:

Առաջադրանք: Ձեր իմացած բանաստեղծություններից հիշե՛ք օրինակներ և ասացե՛ք, թե որ տողերում ենթակայի ու ստորոգյալի ինչպիսի՞ շարադասություն կա. փոփոխեցե՛ք դրանց տեղերը:

Վարժություն 41: Հետևյալ բառերը քերականորեն փոփոխե՛ք և կազմե՛ք նախադասություններ՝ սովորական և չրջուն շարադասություններ:

Մենք, բնություն, բարեկամներ: Հիշել, դեմք, քո, ծեր: Երբ, բացվել, գարուն, սարեր, սկսել, կանաչ, հագնել: Բարձրացնել, ուսում, առաջադիմություն: Անաղարտ, պահել, լեզու, մայրենի: Մեր, մատյաններ, լինել, սուրբ ու, նիզակ, ավելի, զորեղ: Սուրբ, Մաչտոց, լինել, մեր, առաջին, ուսուցիչ:

Հ ա Ր Գ Ե Ր

1. Ի՞նչ է համաձայնությունը:

2. Ինչպե՞ս է կատարվում ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը:

3. Դիմային համաձայնությունյան մեջ շեղումներ կա՞ն, թե՞ ոչ (բերել օրինակներ):

4. Ինչպե՞ս է կատարվում թվային համաձայնությունը, ի՞նչ շեղումներ կան:

5. Ի՞նչ է բակառուծյունը (օրինակներ):

6. Ի՞նչ է շարադասությունը, ո՞րն է սովորական, ո՞րը չըջուն շարադասությունը:

7. Ինչո՞ւ են բանաստեղծները դիմում չըջուն շարադասության:

8. Որո՞նք են կայուն շարադասության դեպքերը:

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

Միայն գլխավոր անդամներով կազմված պարզ համառոտ նախադասություններով ծավալուն մտքեր չեն արտահայտվում. խոսողը, գրողը, համառոտ նախադասություններով չեն կարող իրենց զգացմունքներն ու հույզերը լրիվ արտահայտել:

Ահա թե ինչու գլխավոր անդամների հետ հանդես են գալիս նաև այդ անդամները պարզաբանող, լրացնող, դրանց էությունը բացահայտող անդամներ, որոնք կոչվում են **լրացումներ** կամ **երկրորդական անդամներ**: Սրանք էլ իրենց հերթին ունենում են իրենց պարզաբանող անդամները, որոնք էլ կոչվում են **լրացման լրացումներ**:

Նախադասության երկրորդական անդամները մի կողմից լրացնում են գոյականով հանդես եկող ենթակայի կամ այլ անդամների (ստորոգելի, խնդիրներ, պարագաներ) էությունը, հատկանիշը, պատկանելությունը, իսկ մյուս կողմից, լրացումների մեկ այլ խումբ լրացնում է խոնարհված բայով հանդես եկած ստորոգյալին, ինչպես նաև անդամ բայերով արտահայտված այլ անդամների հատկանիշները:

Ըստ իրենց այս գործառույթների էլ լրացումները բաժանվում են երկու խմբի՝ **գոյականական անդամների լրացումների՝ որոշիչ, հատկացուցիչ ու բացահայտիչ և բայական անդամի լրացումների՝ խնդիրներ ու պարագաներ**:

Որ իսկապես համառոտ նախադասությամբ միայն փաստը, իրողությունը կարելի է ներկայացնել, երևում է ցանկացած համառոտ նախադասության մեջ, բայց երբ նույն նախադասությունը համալրվում է լրացումներով, նույն միտքը հարստանում է, պարզաբանվում է, գեղարվեստական գրականության մեջ շուրջ ու հմայք է ստանում, և խոսքը վերածվում է արվեստի: Դիմենք թեկուզ երկու օրինակի. ինչի՞ նման կլինեն, եթե Ավետիք Իսահակյանն իր «Ասպետի սերը» բալլադն սկսեր համառոտ նախադասությամբ՝ «Կրնակվեր մի աղջիկ», բայց նա ներկայացնում է նաև աղջկա

ինչպիսին լինելը, երբ և որտեղ բնակվելը՝

Հին ժամանակ իր ամբողջում ոսկեղեն
Կրնակվեր հուր ու հրաչք մի աղջիկ...

Կամ համառոտենք Թումանյանի «Ախթամար» լեգենդի հենց առաջին նախադասությունը՝ «... Մտնում է մի տղա»։ Ոտուքը զրկվեց իր հմայքից ու գեղագիտությունից, մինչդեռ իր լրացումներով այն գեղագիտական մի հրաշալի պատկեր է՝

Ծիծաղախիտ Վանա ծովի
Փոքրիկ գյուղից առափնյա
Ծովն է մտնում զաղտագողի
Ամեն գիշեր մի տղա:

**Վարժություն 42: Համառոտե՛ք հետևյալ ընդարձակ նախադասու-
թյունները:**

Կաքավաբերդի գլխին տարին բոլոր ամսվ է նստում: Բերդի ատամ-
նաձև պարիսպները կորչում են սպիտակ ամպերի մեջ, միայն սևին են
անում բարձր բուրգերը: Միայն ձորի մեջ աղմկում է Բասուտա գետը,
քերում է ափերը և հղկում հունի կապույտ որձաքարը: Իր նեղ հունի
մեջ գալարվում է Բասուտա գետը, ասես նրա սպիտակ փրփուրի
տակ ոռնում են հազար գամփոներ և կրծում քարե չղթաները:

Պարիսպների գլխին բույն են դրել ցինն ու անզոր:

Կաքավաբերդի բարձունքի միակ ծաղիկը ալպիական մանուշակն
է՝ ցողունը կաքավի ոտքի պես կարմիր, ծաղիկը՝ ծիրանի գույն:
Ծաղկեփոշու մեջ թաթախված գունավոր բզեզին մանուշակը ճոճք է
թվում, աչխարհը՝ ծիրանագույն բուրաստան:

Ու կոռնկների քարավանը նորից

Անուշ կարկաչով գարուն է բերում,

Ջերմ շունչն է ելնում տաք, փխրուն հողից,

Ժայռի ծերպերից մեխակն է բուրում (Ավ. Իս.):

Եվ մութ այրերից մամոտ ժայռերի,

Թավուտ ծմակի լոին խորքերից,

Մանուկ հասակիս հնչուն ծիծաղի


Արձագանքն ահա լսում եմ նորից (ՀԹ):

Առաջադրանք: Ինքնուրույն կազմե՛ք կամ ծանոթ ստեղծագործու-
թյուններից հիշե՛ք 3-ական համառոտ և ընդարձակ նախադասու-
թյուններ:

Վարժություն 43: Ընդարձակե՛ք բերված նախադասությունները:

Աշուն էր: Պոկվում էին տերևները: Կեռասենինները մրսում էին: Ժպտում էր արևածաղիկը: Դիլան դային նստել էր: Արևը ջերմացնում էր: Դոնակը ճռնչում էր: Երգում էր միրհավը:

Առաջադրանք: Հետևյալ գծապատկերով կազմե՛ք 5-ական նախադասություն:



Գոյականական անդամի լրացումներ

Գոյականական անդամի լրացումները պարզաբանում են գոյականով կամ գոյականաբար գործածված այլ խոսքի մասերով Հանդես եկող ոչ միայն ենթակաների, այլև այլ անդամների (**վերադիրներ, խնդիրներ ու պարազաններ**) որակական ու քանակական հատկանիշները, դրանց պատկանելությունը, սերումը, ծագումը, ինչպես նաև ավելի ստույգ են դարձնում, բացահայտում են այդ անդամների էությունը, ով կամ ինչ լինելը:

Քննարկենք հետևյալ պարզ ընդարձակ նախադասությունը՝

«Երիտասարդ շինարարները վերանորոգում են հինավուրց Երևանի՝ մեր մայրաքաղաքի գեղեցիկ շենքերը»:

Այստեղ **շինարարները** ենթական ունի **երիտասարդ** որոշիչ-լրացումը, **մայրաքաղաքը** բացահայտում է Երևանի ինչ լինելը, **մեր** լրացումը ցույց է տալիս, թե ում է պատկանում մայրաքաղաքը, **հինավուրց** լրացումը որոշում է Երևանի տարիքը. **վերանորոգում են**

ստորոգյալն էլ ունի իր լրացումը՝ **չենքերը**. սա էլ ունի իր երկու լրացումները՝ **Երևանի** և **գեղեցիկ**:

Գոյականական անդամների լրացումներն են՝ **որոշիչը**, **հատկացուցիչը** և **բացահայտիչը**:

Ո Ր Ո Շ Ի Ջ

Որոշիչը նախադասության գոյականով կամ գոյականաբար առնված այլ խոսքի մասով արտահայտված որևէ անդամի **որակական, քանակական, վիճակային** հատկանիշներ արտահայտող լրացումն է: Նախադասության այն անդամը, որն ունի որոշիչ, կոչվում է **որոշյալ**:

Որոշիչը պատասխանում է **ինչպիսի՞ր, ո՞ր, որքա՞ն, ինչքա՞ն, ո՞րերորդ, քանի՞երորդ, նաև՝ ինչի՞ց, ինչո՞վ** հարցերին:

Որոշչի արտահայտությունը

Որոշիչն արտահայտվում է՝

1. **Ածականով** – Որոշիչն արտահայտվում է թե՛ որակական և թե՛ հարաբերական ածականներով, երբ դրվում է գոյականի վրա՝

Ես իմ **անուշ** Հայաստանի **արևահամ** բառն եմ սիրում (ԵԶ):

Նորից երգում, մորմոքում է **աստվածային** կոմիտասը (ՊՍ):

Առաջին նախադասության մեջ **անուշ** և **արևահամ** որոշիչները **որակական** ածականներ են, երկրորդում **աստվածայինը** հարաբերական ածական է:

Հի չի՛ր՝ **Ածականը** բայի վրա դրվելիս լինում է **ձևի պարագա**:

Օրինակ՝ Փոքրիկ երեխան **քաղցր** ծիծաղում է:

Լուսինն **Ջաքարյանը** **չատ** **անուշ** էր երգում:

«Սասուն» պարային խմբի տղաները **գեղեցիկ** են պարում:

Բերված նախադասություններում **քաղցր**, **չատ** **անուշ** և **գեղեցիկ** ածականները **ձևի պարագայի** պաշտոն են կատարել:

Բերենք ածականների որոշչային կիրառությունների ուրիշ օրինակներ.

...Այ **սիրո՛ւն** աղջիկ, այ դու **կարմրաթուշ**, **թխամա՛զ** Անուշ (ՀԹ):

Մի ուրու անցավ, մի **գունատ** աղջիկ՝ **ճերմակ** չորերով (ՎՏ):

Զիզզազ ճանապարհը տանում էր **մութ** ու **խավար** կացարանը:

Մի **ծերուկ** ձկնորս և իր **պառավ** կին բնակվում էին **մեծ** ծովի ափին (Թարգմ.):

Մեր լեռնային արչալույսի զով շունչը կա քո երգերում,
Անմահական գարուն ես դու, աշուն չկա քո երգերում (ՆԶ):

Վարժուիթյուն 44: Դո՛ւրս գրեք որոշիչներն իրենց որոշյալների հետ. կազմե՛ք որակական ածականների համեմատուիթյան աստիճանները:

Մեր Երևանը երփնավառ՝
Տուֆերի մի չքեղ քաղաք,
Ունի չենքեր վեհակամար,
Որմեր վսեմ, գեղաքանդակ.
Եվ փողոցներ՝ արձակ ու լայն,
Ճառագայթներ արեգակի,
Ջրերի կանչը քաղցրաձայն՝
Մրմնջուն երգը ջուլթակի,
Կրծքին լույսերը անհամար
Նման բազմակն մանյակի,
Ամեն մի ակը լուսավառ՝
Հեքն է Ջանգվի մի կոհակի (Գ. Սարյան):

Առաջադրանք. Ձեր իմացած բանաստեղծուիթյուններից հիշե՛ք մի քանի նախադասուիթյուն, որոնցում կան ածականներով արտահայտված որոշիչներ:

2. **Թվականով** – Եթե ածականներով արտահայտված որոշիչներն արտահայտում են որակական հատկանիշ, ապա թվականով արտահայտվածները՝ **քանակական** և **կարգային** հատկանիշներ: Գոյականների վրա դրվելիս թվականների բոլոր տեսակները **որոշչի** պաշտոն են կատարում: (Բայերի հետ գործածվելիս դրանք կլինեն պարագաներ):

Թվական որոշիչների օրինակներ.

Հայաստանն ունեցել է **տասներկու** մայրաքաղաք (ՀԺՊ):

Մոցարտը **յոթ** տարեկանում գրել է **չորս** սոնետ:

Հազար չեփոր հնչեն թող այս առավոտ.

Հազար թմբուկ խփեն թող այս առավոտ (Գ. Սարյան):

Այվազովակու «**Իններորդ** ալիք» կտավը գլուխգործոց է:

Յուրաքանչյուր նստարանին նստում են **երկուական** աշակերտ:

3. **Դերանունը որպես որոշիչ** – Որոշչի պաշտոնով կարող են հանդես գալ միայն ածականներին ու թվականներին փոխարինող դերանունները: Անձնական և փոխադարձ դերանունները որոշիչներ չեն դառնում:

Ցուցական դերանուններով՝

Ինչե՛ր ասես, որ չեն արել այս ձեռքերը,
Պսակվելիս ո՞նց են պարել այս ձեռքերը՝
Ի՞նչ նազանքով,
Երազանքով (ՊՍ):

Այդ տարբերակը դժվար է: Այն երգը երգի՛ր:

Որոշյալ և անորոշ դերանուններով՝

Ամեն վայրկյան սիրով տրտում
Ասում եմ ես՝ մնաք բարով (ՎՏ):

Ուրիշ երգեր են հնչում իմ սրտում... (ՎՏ):

Հրաչյա Աճառյանը գիտեր մի քանի լեզուներ:

Հարցահարաբերական դերանուններով՝

Աչո՛ւն, քեզ ի՞նչ քնքշությամբ,

Ի՞նչ խոսքերով երգեմ (ՎՏ):

Ինչքան որ հուր կա իմ սրտում – բոլորը քեզ.

Ինչքան կրակ ու վառ խնդում – բոլորը քեզ (ԵԶ):

Ժխտական դերանուններից որոշչի պաշտոն է կատարում միայն ոչ մի դերանունը՝

...Եվ որ այլևս ոչ մի ժողովուրդ,

Ոչ մի ազգ ու ու ցեղ

Պատմության քափից ու սև մրուրից չթունավորվի (ՊՍ):

4. Դերբայը որպես որոշիչ – Որոշչի շարահյուսական պաշտոնում հանդես են գալիս միայն անկախ դերբայները (բացի համակատարից):

Անորոշ դերբայի միայն սեռական հոլովն է որոշչի դեր կատարում (խմելու ջուր, գրելու թուղթ, կարդալու գիրք, խաղալու տրամադրություն):

Մ, գարնան ամիս, արելու ապրիլ,

Գու, որ բերում ես ծաղիկներ ու կյանք,

Ինչո՞ւ դու դարձար մահվան տարելից (ՍԿ):

Հիշի՛ր Անորոշ դերբայի տրական հոլովը դառնում է նպատակի պարագա (Երեխան նստեց շարադրություն գրելու: Գնացի ջուր խմելու): Այն դառնում է նաև հանգման խնդիր՝ Հետևիք երեխայի ձիշտ կարդալուն:

**Հարակատար դերբայը որպես որոշիչ՝
Իմ կարոտած սրտի համար ոչ մի ուրիշ հեքիաթ չկա...
...Մեր հին սաղի լացակումած լարն եմ սիրում (ԵԶ):
Դադրած, բեզարած յար ջան,
Ամպերն ելան, դե՛հ արի (Ավ. Իս.):**

**Ենթակայական դերբայով որոշիչն արտահայտում է առարկայի՝
ընթացքի մեջ եղող, գործող հատկանիշ (երգող շատրվաններ, հոսող
ջուր, վազող ձի):**

**Տաճարի շուրջ սուրբ-սուրբ վանքեր՝
Հնչող, շնչող, կանչող դանգեր...
...Դու հանգրվան, կանչող փարոս (ՊՄ):**

**5. Գոյականը որպես որոշիչ – Գոյականի 4 հոլովները (բացի տրա-
կանից, հայցականից և ներգոյականից) նույնպես հանդես են գալիս
որոշչի պաշտոնում:**

**Ուղղականով՝
Մայր Արաքսի ափերով քայլամուտը գնում եմ (ՌՊ):
Հայաստան, երկի՛ր դրախտավայր,
Դու մարդկայնո ցեղիս օրրան (Միրզա-Վանանդեցի):**

**Զորավար Անդրանիկի, երգահան Կոմիտասի, բանաստեղծ Թու-
մանյանի անունները հայ ժողովրդի երբեք չխամրող անուններից են:**

**Սեռականով՝
Սեղանի վրա դրված են թեյի, սուրճի և գարեջրի բաժակներ:
Պատի ժամացույցը փչացել է, իսկ սեղանի ժամացույցն աշխա-
տում է:**

Օհան ամին երեխայի բնավորութունն ուներ: Աղջկա ձայն ուներ:

Ուշագրու թյուն

**Սեռականով դրված գոյական որոշիչը չպետք է շփոթել հատ-
կացուցչի հետ, որը ցույց է տալիս պատկանելություն և պատաս-
խանում է ո՞ւմ և ինչի՞ հարցերին (աչակերտի գիրքը, գրքի թերթը),
իսկ որոշիչը ցույց է տալիս առարկայի տեսակն ու որակը և պա-
տասխանում է ինչպիսի՞ և ո՞ր հարցերին (թեյի գդալ, ջրի բաժակ):**

**Բացառականով (մորթուց մուշտակ, բրդից գուլպաններ, կավից
կուլա):**

Գործիականով (համով միրգ, թանով ապուր, մսով կարկանդակ):

6. Մակրայը սակավ ղեկաքերում է որոշչի դեր կատարում (երբ դրվում է բայանուն գոյականների վրա):

Տոմսերի արագ սպառումը համերգի հաջողության նշան էր:

Զիու դանդաղ ընթացքը ինչ-որ բան էր նախազգուշացնում:

Քննիչի կրկին հարցաքննումը համբերությունից հանեց ամբաստանյալին:

7. Կապը և կապի խնդիրը միասին նույնպես որոշչի դեր են կատարում՝

Փրփուրի պես լավաչը շատ դուր եկավ Վիլյամ Սարոյանին (ԳԹ):

Լեռան վրայի ձյունը հալվելու միտք չունեք (ՊՂ):


Սեփականաշնորհման մասին որոշումը ժողովուրդը լավ չընդունեց:

8. Բառակապակցությունները՝ այդ թվում դերբայական դարձվածներն ու դարձվածային միավորները նույնպես կարող են հանդես գալ որոշչի պաշտոնով՝

Աչուն էր՝ տերևաթափով, արևի նվազ ջերմությամբ, դառնաչունչ քամիով (ԱԲ):

Ամբողջ կյանքը լեզվաբանությունը նվիրած Հրաչյա Աճառյանը եզակի մարդ էր: Գույնը պատի ծեփ դարձած որսորդը մի պահ վարանեց (ՎԱ):

Որոշչի արտահայտության գծապատկերը



Վարժություն 45. Ընդգծե՛ք որոշիչները և գրե՛ք, թե ինչ խոսքի մասերով են արտահայտված:

I

Առավոտ էր. Արարատյան դաշտի լուսապայծառ առավոտներից մեկը:

Արևի առաջին ճառագայթների ներքո՝ Մասիսի սպիտակափառ գագաթը փայլում էր վարդագույն շողքերով, որոնք աչք էին շլացնում: Արագածի պսակաձև գագաթը չէր երևում: Նա դեռ պատած էր ձյան պես ճերմակ մշուշով, որպես մի ամոթխած հարսիկ, որ սքողում էր յուր դեմքը անթափանցիկ շղարչով: Կանաչազարդ դաշտավայրը, ցողված վաղորդյան մարգարիտներով, վառվում էր ծիածանի ամենանուրբ գույներով: Փչում էր մեղմ հովիկը, ծաղիկները ժպտում էին, դալար խոտաբույսերը ծփում ու ծածանվում էին, դաշտի խաղաղ տարածությունը օրորվում էր սքանչելի ալեկոծությունը:

... Սպիտակ արագիլը, կարմիր ոտները հորիզոնական դիրքով ուղիղ մեկնած, լայն թևքերով թափահարում էր՝ չտապելով դեպի Արաքսի մորուսները:

Ձեռնասուն եղջերուները, վայրի վիթն ու այծյամը դուրս էին եկել Նոսրովի արքայական անտառներից և ազատ, համարձակ վազվզում էին չրջակա մարգերի վրա:

Ամեն առավոտ, երբ ծագում էր տվնջյան լուսատուն, նրա առաջին ճառագայթները ողջունում էին շինական աղջիկների աշխատանքը: Կարմիր, դեղին, կապույտ ծաղիկները սփռված էին լինում այգիներում (Րաֆֆի):

II

Քաղաքակրթության որևէ լեզու, որ արդեն կազմակերպվել է, որն ունի իր սեփական գրականությունն ու արտահայտման անհրաժեշտ բոլոր միջոցները, համառորեն հարստանում է նույնիսկ ամենադժվար պայմաններում: Դրա պերճախոս մի օրինակն է հայերենը (Անտուան Մեյե):

Ոչ մի ազգ գոյություն իր կամքն ավելի ուժեղ չի արտահայտել երկու հազար տարվա ընթացքում, որքան հայ ազգը: Ոչ մի ազգ ավելի համառությունը չի պահպանել և ավելի խնամքով չի մշակել սեփական լեզուն (Անտուան Մեյե):

...Ոչ մի դար չկարողացավ մոտենալ ոսկեղենիկ լեզվին և հինգերորդ դարի հայերենը ամեն դարի և ամեն ժամանակի համար եղավ լեզվի դասական օրինակ (Հր. Աճառյան):

III

Մ... Տալիթա...

Քո բիրլիական անունն եմ սիրում...

...Ու երբ իր նեղլիկ բառն շապիկն է աշխատում հագնել, թվում է հիմա հեթանոսական՝

Նույնիսկ անպարկեշտ (ՊՄ):

Ախ, ձիերս, ձիերս... Գագաթներից, հողմերից

Թևեր խլած ձիերս, Սուրբ ափերից Աստծո

Երկինք խմած ձիերս (ՀՍ):

Ճերմակ հրաշք էր ծառը խնձորի,

Մանուշակները՝ փշրված աղոթք (ՎԳ):

Էյ, կանա՛չ ախպեր, Էյ, ճանա՛չ ախպեր,

Արի՛, քեզ հետ բեր արևի շողեր (ՀԹ):

Որոշի և որոշալի կապակցությունը

Հայերենում որոշիչն ու որոշյալը սովորաբար չեն համաձայնում, դրանց կապակցությունն եղանակը առողրությունն է:

Այսպես՝ խելոք աչակերտ, խելոք աչակերտի, խելոք աչակերտով, և խելոք աչակերտներ, խելոք աչակերտների, խելոք աչակերտներով:

Սակայն մի քանի դեպքերում որոշիչն ու որոշյալը համաձայնում են թվով. հոգնակի որոշիչների հետ դրվում են հոգնակի որոշյալներ հետևյալ դեպքերում՝

ա) երբ գոյականով կամ ածականով արտահայտված որոշիչները կրկնվում են՝

Փունջ-փունջ աղջիկներ սարերը ելան՝

Վիճակ հանելու աշխույժ երգերով (ՀԹ):

Մանր-մունր հարցերի մասին խոսեցին: Խելոք-խելոք առաջարկներ էլ եղան:

բ) Երբ բազմակի որոշիչները վերաբերում են միևնույն որոշյալին:

Կարմիր, դեղին ու վարդագույն մեխակներ նվիրեցինք դասղեկին:

Մեր ժողովուրդը լավ ու վատ, տխուր և ուրախ օրեր չատ է տեսել:
գ) Երբ որոշյալները բազմազանություն են արտահայտում՝

Գույնզգույն ծաղիկներով դիմավորեցին արցախյան Հերոսին:

Ազգային ժողովում բազմաթիվ ու տարաբնույթ հարցեր քննարկվեցին:

Որոշյալը եզակի թվով է դրվում, երբ որոշիչն արտահայտված է թվականով՝

Երկու ընկեր իրիկնապահին հրացան առած անտառ գնացին:

Տասը տուփ լուցիկի գնեցի: Տասներեք գիրք գնեցի:

Քառասունհինգ աշակերտ գովասանագիր ստացավ:

Սակայն, եթե թվական որոշի ու որոշյալի արանքում ուրիշ որոշիչներ են ընկնում, որոշյալը դրվում է հոգնակի թվով՝

Երկու հասակակից ընկերներ որսի գնացին:

Տասներեք նոր գրքեր գնեցի:

Քառասունհինգ առաջադեմ աշակերտներ գովասանագրեր ստացան:

Այս օրենքը, սակայն, պարտադիր չէ:

Որոշի և որոշյալի շարադասությունը

Ինչպես ասվել է, շարադասությունը նախադասություն կազմող բառերի՝ իրար նկատմամբ ունեցած դասավորությունն ընդունված կարգն է. այն լինում է սովորական և շրջուն:

Սովորական շարադասությամբ որոշիչները դրվում են որոշյալներից առաջ՝

Ծեր Օհան ամին ծխում էր **համբերանքի** չիրուխը ու միտք էր անում **անարդար** աշխարհի մասին:

Այստեղ **ծեր** և **Օհան** որոշիչները դրվել են **ամին** ենթակայից առաջ, **համբերանքի** որոշիչը դրվել է **չիրուխը** ուղիղ խնդրից առաջ, իսկ **անարդար** որոշիչը դրվել է **աշխարհի մասին** վերաբերություններից առաջ:

Եթե որոշյալն ունի որակական և հարաբերական ածականներով արտահայտված որոշիչներ, նախ դրվում է հարաբերականով արտահայտվածը, ապա՝ որակականը՝

Վրանների կողմն էր բարձրանում մի մարդ՝ գոտկում պողպատե փայլուն մանգաղը (ԱԲ):

**Հայրական հին տունը անմոռաց հիշողություններ է արթնացնում
իմ մեջ (ՊՂ):**

Քարե բարձր պարիսպը անանցանելի էր:

**Ի գիտություն – Եթե որակական ածականը դրվի Հարաբերա-
կանից առաջ, կվերագրվի Հարաբերականին, ինչպես՝ բարձր քարե
կամուրջը, հին Հայրական տունը, կամ փայլուն պողպատե մանգաղը:**

**Եթե որոշյալն ունի թվականով ու ածականով կամ գոյականով
արտահայտված որոշիչներ, նախ դրվում է թվականով արտահայտ-
վածը՝**

**Երկրորդ Համաշխարհային պատերազմում զոհվեցին քառա-
սունույթ հազար հայ մարտիկներ (Մամուլից):**

**Արցախյան հերոսամարտում նահատակվեցին մոտ յոթ հազար
երիտասարդ ազատամարտիկներ (Մամուլից):**

**Եթե որոշիչների դերում հանդես են գալիս դասական և քանակա-
կան թվականներն իրար հետ, նախ դրվում է դասական թվականը:**

Օրինակ՝

Առաջին երկու ձիավորը քաղաքի մարդիկ էին:

**Դերանուններով և անկախ դերբայներով արտահայտված որո-
շիչները նույնպես նախադաս են դրվում:**

Օրինակներ՝

**Այս գիրքը ավելի հետաքրքիր է: Ինչպիսի՞ տեսարան... Ոչ մի պա-
տասխան: Ծաղկած ծառին քար չեն գցի: Խմելու ջուրը պետք է
խնայել: Հոսող ջուրը մաքուր կլինի:**

**Շրջուն շարադասություն – Շատ հաճախ, հատկապես բանաս-
տեղծական խոսքում որոշիչը որոշյալից հետո է դրվում, որի շնորհիվ
խոսքը դառնում է ավելի քնարական ու գեղեցիկ. այն նաև հան-
գավորում է բանաստեղծությունը:**

Օրինակ՝

Ձմրուխտ երգեր, երազներ չքեղ

Գարնան վարդերի հետ եկան, գնացին.

Համբույր ծաղկաբույր և սեր հրաշագեղ

Գարնան հովի հետ եկան, գնացին (Ավ. Իս.):

... Այդ ո՞վ խափանեց կածանը շաղոտ (Վ.Գ):

Դու երգի ծով ես անափ.

Ես՝ քո մի կաթիլը կյանքում.

Գու ծառի բուն ես կանաչ,
ես՝ ճյուղ, որ քեզնով է ծաղկում (Գ. Էմին):

Մենակության մեջ, գիշերում անքուն,
Հիշում եմ կրկին դաշտերը անծայր (ՎՏ) :

Եթե ետադաս որոշիչները մեկից ավելի են, որոշյալներից տրոհվում են բուժ նշանով:

Օրինակ՝

Իրիկունն եկավ, տնետուն մտավ,
Վառեց ճրագներ՝ կարմիր ու պայծառ...

Գիշերն էլ եկավ ու քնածններուն

Բերեց երազներ՝ նխշուն ու զառ-վառ (Ավ. Իս.):

Վերջին ձիավորը քթի տակ մոմոում էր մի երգ՝ մեկամաղձոտ ու հուսահատ (ԱԲ):

Ետադաս բառակապակցություններով ու դերբայական դարձվածներով արտահայտված որոշիչները նույնպես տրոհվում են բուժով:

Բերենք մեկական օրինակ.

Դրսում կանգնած են ճամբարի պետը և բժիշկը՝ սև ակնոցներով ու սպիտակ խալաթով (ԳՄ):

Գլուխները թափահարելով ու ձյունը ճեղքելով՝ գոմերն էին իջնում ոչխարները՝ օրերով սոված ու ցրտից կուչ եկած (ՍՆ):

Միջադասի դեպքում նման որոշիչները տրոհվում են ստորակետերով՝

Կանաչազարդ դաշտավայրը, ցողված վաղորդյան մարգարիտներով, վառվում էր ծիածանի ամենանուրբ գույներով (Րաֆֆի) :

Վարժություն 46: Դո՛ւրս գրե՛ք որոշիչները իրենց որոշյալների հետ և նշե՛ք որոշիչների շարադասությունը:

Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում,
Մեր հին սազի ողբանվազ, լացակումած լարն եմ սիրում,
Արնանման ծաղիկների ու վարդերի բույրը վառման
Ու նաիրյան աղջիկների հեղաձկուն պարն եմ սիրում:

Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսե,
Արեն ամռան ու ձմեռվա վիշապաձայն բուքը վսեմ,
Մթում կորած խրճիթների անհյուրընկալ պատերը սև
Ու հնամյա քաղաքների հաղարամյա քարն եմ սիրում (ԵԶ):

II

Ես կզոհվեմ սուրբ դաշտում,
Որ չգիպչեն հայոց լեզվին
Ժամանակներն անկշտում (ՀՇ):

Դու պիտի ծաղկես, երկիր՝ հայրական,
Քո ոգով, ոճով և բարձրագլուխ,
Դու պիտի հնչես, հնչես հաղթական,
Իմ հին հայ լեզու՝ քաղցր ու սրտաբուխ (Ավ. Իս.):

Ես ընկա անդունդները խավար,
Իմ ցնո՛րք, քեզ եմ կանչում.
Մոռացա ուղիներս պայծառ,
Իմ սրտում դառը մութն է շնչում (ՎՏ):

Վարժություն 47: Ընդգծե՛ք որոշիչները, ցո՛ւյց տվե՛ք բառերո՞ւմ են արտահայտված, թե՞ բառակապակցություններով, որոշե՛ք դրանց կապակցությունն ու չարադասությունը: Բացատրե՛ք կետադրու-թյունը:

Ափսո՛ս, որ երգը՝ սրտերի և հոգիների համար գրված, այդպես շուտ էր ավարտվում (ԹՆԺ):

Զօր ու գիշեր մրրկաչունչ անապատում վայում էր քամին՝ չարագուշակ ու խորհրդավոր (ԹՆԺ): Հեռվում հազիվ նկատվում էին Մոկաց սարերը, Ռշտունյաց ու Շատախի բարձրաբերձ լեռնաշխարհը, Նաիրյան չնաշխարհիկ մի համայնապատկեր (ԹՆԺ):

Ոչխչան չորերով մի աղջիկ ման էր գալիս սաղարթախիտ ծառերի արանքում... Անտառի մթին խորքերում սուր ձայնով կտկտացնում էր կտցարը (ԱԲ):

Հինավուրց անտառը ծանոթ էր Դիլան դայուն, անտառում բարձրաբերձ ու սաղարթախիտ ծառեր կային... Դարավոր փտած ծառերի կիսաչոր ճյուղերը մամոտտել էին, և կիսախավարի մեջ կարծես բրդոտ արջեր լինեին՝ ետևի ոտքերի վրա կանգնած... Միրհավը հանգիստ քուջուջ անելով, փոխում էր արնագույն տոտիկները և կեռացած կտուցով քրքրում լորենու՝ անձրևից արդեն փափկած տերևները:

Դիլան դային կոխ էր տալիս քամուց ու արևից չորացած տերևները: Նա հասավ Յուրտ աղբյուրը: Նշան բռնեց որսորդական հրա-

ցանով, ու խոր ձորերը որոտացին չրջապատը խլացնող ահեղ արձագանքով: Դիլանը տեսավ, թե ինչպես արնոտ միրհավը մամոտ քարից վայր ընկավ:

Աչքերն արյունով լցված անտառապահի որսկան շունը մեկ նայում էր տիրոջը, մեկ՝ երկյուղից դողացող Դիլան դայուն (Լստ Ա. Բակունցի):

Վարժություն 48: Ընդգծե՛ք որոշիչները: Նշանակե՛ք տեքստի կետադրությունը:

Հայր սուրբ ասաց Վարուժանը փոքրիկ աթոռակը դնելով նրա դիմաց գուցե սա մեր վերջին հանդիպումն է: Ուրեմն թող իմ ձայնս միշտ հնչե քո ականջներուդ մեջ: Դուն պարտավոր ես երգել առույզ ձայնով ամբողջ կոկորդով առողջ թոքերով երգել ու երգել նաև երգեցնել: Դուն ինձմե լավ գիտես որ հայ երգը մեր երկրորդ այբուբենն է դուն իրավունք չունիս կիսատ ձգելու: Մահը եթե կուգես գիտենալ կիսատ մնացած երգն է: Ամեն նահատակված հայի դիմաց երգ միայն այսպես... Տեսնենք ինչպես ընդամենը մեկ հայ կմնա աշխարհիս երեսին ան ալ թանգարանին մեջ:

Լո՛ւս Վարուժան խոսեց Կոմիտաս վարդապետը ես դեռ ահագին գործեր ունեմ ընելու գիտես աթոռակին նստելով շարունակեց Կոմիտասը: Մյուս տարի Փարիզում հայկական ժողովրդական և հոգևոր երաժշտության վերաբերյալ մի քանի ղեկուցում պիտի կարդամ միջազգային կոնգրեսում համերգներ պիտի տամ Բեռլինում Շվեյցարիայում Վենետիկում Կահիրեում... Գիտես որն է իմ առաջին նպատակս ապացուցել որ հայն ունի սեփական երգ ու երաժշտություն (Լստ Պերճ Զեյթունցյանի):

ՀԱՏԿԱՑՈՒՑԻՉ

Հատկացուցիչը նախադասության այն անդամն է, որը ցույց է տալիս գոյականով կամ գոյականաբար գործածված ենթակայի կամ այլ անդամի պատկանելությունը, վերաբերությունը, սերումը, ծագումը: Նախադասության այն անդամը, որն ունի հատկացուցիչ, կոչվում է **հատկացյալ**:

Հատկացուցիչը միշտ դրվում է սեռական հոլովով և պատասխանում է **ո՞ւմ, ինչի՞ր, ինչերի՞ր** հարցերին: Հատկացուցիչը **ը և ն** հոդեր չի ստանում, ստանում է **ս և դ**:

Օրինակ՝

Մարտիրոս Սարյանի նկարը կախված է պատից:

Այս նախադասություն մեջ կարելի է ցույց տալ հատկացուցչի 3 իմաստները՝

1. **Սերում և ծագում** – Մարտիրոս Սարյանի նկարած նկարը:

2. **Պատկանելություն** – որևէ նկար, որ գնել կամ նվեր է ստացել Մարտիրոս Սարյանը, այսինքն՝ նկարը պատկանում է նրան:

3. **Վերաբերություն** – պատից կախվածը Մարտիրոս Սարյանի դիմանկարն է:

Հատկացուցիչն արտահայտվում է՝

ա) **Գոյականով՝**

Կոմիտասի երգերն ու **Թումանյանի** ստեղծագործությունները կապրեն այնքան, որքան հայ ժողովուրդը (Ավ. Իս.):

Անտառապահի որսկան շունը մեկ նայում էր տիրոջը, մեկ՝ Դիլան դայուն (ԱԲ):

Ընկերոջս գիրքը ինձ մոտ է: **Ամսվա** վերջը մոտենում է:

բ) **Առարկայանիչ դերանուններով.**

Օրինակ՝

Իմ մայր հայրենիք, դու սրտիս մեջ ես (ՀԾ):

Ամրակուռ է մեր հոգին՝ դարերի դավակ (ՎՏ):

Իմ ուսուցչուհի, **իմ** դասղեկ, **իմ** մայր,

իմ իմաստություն հոգեթով մատյան,

Ձեր խորհուրդներով եմ իմաստնացել,

Ձեր տված կրթությունը եմ մարդ դարձել (Սկսնակ բանաստեղծ):

Անձնական դերանունների առաջին և երկրորդ դեմքերի փոխարեն որոշյալների վրա հաճախ գրվում են ս և դ հոգերը, այսպես՝

իմ գիրքը → **գիրքՍ**, **մեր** սրտերը → **սրտներՍ**,

քո պատասխանը → **պատասխանԳ**, **ձեր** պատասխանը → **պատասխաններԳ**:

Գրական օրինակ՝

Վշտից նորից **մեռավ** հայր**Ս**,

Ասաց՝ որդի**Ս**, **թե** կուզես՝

հոգը **թեթե** լինի վրա**Ս**,

Տունս կիսատ չթողնես (ՀԾ):

Հիշի՛ր Պետք է խուսափել ս և դ հոգերը դերանունների հետ գործածվող սխալ ձևերից, ինչպես՝

ես իմ խոսքՄ եմ ասում, դու քո խոսքԴ ես առաջ տանում:

Այլ դերանուններով՝

Սրա գույնը դուրեկան չէ: Դրանց տեղերը պետք է փոխել:

Ո՞ւմ ձայնն եմ լսում: Ինչի՞ համն ես նախընտրում. տանձի՞, թե՞ խնձորի: Բոլորիս պատասխաններն էլ բարձր գնահատվեցին: Ոչ մեկի խոսքը չլսեցին:

գ) Գոյականաբար գործածված այլ խոսքի մասերով՝

Ածական – Բարու համբավը շուտ է տարածվում: Մեծի խոսքը լսի՛ր:

Թվական – Առաջինի պատասխանը հաջող էր: Հինգի քառակուսին քսանհինգ է:

Դերբայներով – Աշխատածիս մի մասը գրքերի եմ տալիս: Խոսողի ձայնը ցածր է:

Բառակապակցություններով – Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն ընդունվեց միաձայն: Բարձր սարի կատարից հոսող ջրի ձայնը հեովից է լսվում:

Վարժություն 49: Ընդգծե՛ք հատկացուցիչները և որոշե՛ք, թե ինչ խոսքի մասով են արտահայտված:

Մեր թաղի տղաները ֆուտբոլի թիմ էին կազմել: Խաղում էին հատկապես օրվա վերջին: Իմ հագուստը սպորտի հարմար չէր, ֆուտբոլի գնդակ էլ չունեի. ինձ չէին վերցնում թիմի կազմում: Մորս կամքին հակառակ ու իմ սպասածների հույսերով տարված, ես ընկերներիս միջոցով գնդակ ձեռք բերեցի, լավ խաղացողի ու աջ պաշտպանի համբավ ձեռք բերեցի և շուտով առաջինի համբավը վայելեցի:

Առաջադրանք: Բերված որոշիչներն ու որոշյալները օգտագործե՛ք նախադասությունների մեջ:

Դպրոցի տնօրեն, դասարանի ավագ, առաջավորի փորձ, կարգուկանոնի հետևող, բոլորի պահանջը կատարող, մեծի խոսքը հարգող, լավ սովորողի օրինակ:

**Հատկացուցչի և Հատկացյալի կապակցությունն ու
չարադասությունը**

Հատկացուցչին ու Հատկացյալը սովորաբար դրվում են անփոփոխ ձևով. որոշիչ-որոշյալի նման այս դեպքում կապակցության եղանակը նորից **առդրությունն է** (ոմանք այն համարում են **խնդրատություն**, որովհետև հատկացուցչը դրվում է **սեռական հոլովով**):

աչակերտի	{	գիրք	գրքեր
		գրքի	գրքերի
		գրքից	գրքերից
		գրքով	գրքերով
		գրքում	գրքերում

Ինչպես որոշչի ու որոշյալի, այնպես էլ Հատկացուցչի և Հատկացյալի չարադասության երկու դեպքերն էլ (**սովորական և շրջուն**) հարազատ են հայերենին: Սակայն շրջուն չարադասությունը ավելի հատուկ է բանաստեղծությանը:

Սովորական չարադասությամբ Հատկացուցչը դրվում է Հատկացյալից առաջ:

Օրինակ՝

Լեզուն **ազգի** հոգեկան գանձն է: **Մեր** մատյանները եղան սրից ու նիզակից ավելի գորեղ, եղան վահան, **գոյություն** ասպար (Ավ. Իս.):

Հայոց մայրերը սյուն են ու խոյակ,

Մատուռ սրբացած, **օջախի** կրակ (ԳԹ):

Շրջուն չարադասությունը, ինչպես ասվել է, խոսքին հաղորդում է հուզականություն ու վայելագեղություն:

Օրինակ՝

Ես քո սրտի մեջ վառում եմ ահա

Հուրն՝ **ազատության և իրավունքի**,

Կանգնեցնում եմ բազուկդ ահա,

Ինչպես ռխակալ օձն **անապատի** (Ավ. Իս.):

Ուր էլ լինեմ՝ չեմ մոռանա ես ողբաձայն երգերը **մեր** (ԵԶ):

Ետադաս Հատկացուցչը, ետադաս որոշչի նման, եթե բազմակի է,

տրոհվում է **բուժով**, իսկ մյուս անդամներից ստորակետով չի տրոհվում:

Բարդինները մեր տան բակի ու փողոցի՝ խշշում էին խաղաղ (ՎԳ):
Ընկերները՝ իմ և Աշոտի մեզ շատ օգնեցին այս դժվար գործում:

Հիշի՛ր՝ Բառակապակցություններով արտահայտված, այսպես կոչված աստիճանավորված հատկացուցիչներն ունեն կայուն շարահասություն, դրանցում մի հատկացուցիչը մյուսի համար հատկացյալ է: Եթե դրանցում կա տեղանուն, ապա այն դրվում է սկզբում, որից հետո, ըստ աստիճանականության, իրար են հաջորդում մյուսները:

Օրինակ՝ Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ղեկանի տեղակալի ձայնն է:

Հայաստանի Հանրապետության Ազգային ակադեմիայի նախագահություն վերջին որոշումն ուշացած էր:

Վարժություն 50: Գտե՛ք հատկացուցիչները, գրե՛ք՝ ինչ խոսքի մասերով են արտահայտված և ինչպիսի շարահասություն ունեն:

Բարձրանում ենք Մեծ Լոռեցու ապրումների կախարդական օրրանը: Մեր դեմ երփներանգ արտեր են՝ անուշաբույր ծաղիկներով, արտույտների, կտցարների գարնանային երգերով, ծղրիղների անուշ ձայնով: Քամին օրորում է արտերի ծաղիկները, նոր թփակալվող ճյուղերը ծառերի... Ահա և ջուրը գուլալ լճի՝ իր մեղմ պեկոծությամբ: Զուլալ ֆոնի վրա հորիզոնի՝ բարձրագահ բազմել են սիգապանծ լեռնագագաթները Լալվարի, Զաթինդաղի, Ղարախաչի ու Քոչաքարի: Նայում ես չուրջդ ու ըմբռնում, թե ինչն է իմաստավորել Լոռու բանաստեղծի մանկության աշխարհը և իմաստը կյանքի (Նվարդ Թումանյան):

Ինչո՞ւ ուղեցիր, որ ապավինենք մտքի կանթեղին,
Հակառակ ղեպքում մարեինք պիտի լույսը մեր կանթեղի,

Ու մեր սրտերի ոսկևոր լույսը պիտի մարեինք,
Լույսը ողկույզի, լույսը խավարի... (ՎԳ):

Աղբյուրներ՝, իմ աղբյուրներ, շատ եմ եկել ձեզ այցի
Մուժ վիհերի եզերքով, կածաններով քարայծի (ՀՍ):

Բացահայտիչը ցույց է տալիս նախադասութեան՝ գոյականով կամ առարկայանիչ դերանունով արտահայտված որևէ անդամի ով կամ ինչ լինելը: Բացահայտիչ ունեցող անդամը կոչվում է բացահայտյալ:

Ի տարբերություն որոշչի ու հատկացուցչի, որոնք դրվում են թե՛ նախադաս և թե՛ ետադաս, բացահայտիչն ունի կայուն շարադասութուն. այն միշտ դրվում է բացահայտյալից հետո և պատասխանում է նրան տրվող հարցին:

Բացահայտիչը միշտ համաձայնում է բացահայտյալի հետ թվով և հոլովով. դերանունների դեպքում՝ նաև դեմքով: Դիմային համաձայնությունների դեպքում կարող են հանդես գալ նաև ս և դ հոգերը. ս-ն դրվում է առաջին դեմքի եզակի և հոգնակի թվերի հետ՝

Ես՝ լավ սովորողս, պարտավոր եմ օգնել իմ ընկերներին:

Մենք՝ շինարարներս, պետք է որակով կառուցենք:

Դ հոգը դրվում է երկրորդ դեմքի եզակի և հոգնակի թվերի հետ՝

Դու՝ առաջավորդ, պետք է օգնես ընկերներիդ:

Դուք՝ աշակերտներդ, պետք է ենթարկվեք դպրոցական կարգ ու կանոնին:

Բացահայտիչը բացահայտյալից անջատվում է բուժ նշանով, իսկ նախադասութեան մյուս անդամներից՝ ստորակետով:

Բացահայտիչը լինում է 3 տեսակ՝ սովորական, մասնական և պարզայական:

Սովորական բացահայտիչ

Սովորական բացահայտիչն իր բացահայտյալի կրկնությունն է այլ բառերով կամ բառակապակցություններով:

Օրինակ՝

Երևանը՝ Հայաստանի մայրաքաղաքը, շատ է գեղեցկացել:

Հասմիկը՝ ընկերուհիս, գերազանցիկ է:

Բացահայտյալը նույնպես կարող է բաղադրյալ բառերով կամ բառակապակցություններով արտահայտվել:

Օրինակ՝

Մեսրոպ Մաշտոցը՝ հայերեն տառերի ստեղծողը, տաղանդավոր գիտնական է:

Իմ առաջին դասարանի ուսուցչուհին՝ մազերին արդեն ձյուն իջած ընկեր Սաթիկը, մեզ միշտ մայրենի լեզվի գովքն էր անում:

Մասնական բացահայտիչ

Մասնական բացահայտիչը լիովին չի կրկնում իր բացահայտյալին, այլ դրսևորում է նրա մի կողմը, մի հատկանիշը. այն բացահայտյալի հետ կապվում է որպես, իբրև, ինչպես բառերով և ունի ազատ շարադասութուն:

Օրինակ՝

Գեղամը՝ իբրև ընկեր, իրեն արդարացնում է, և

Իբրև ընկեր՝ Գեղամն իրեն արդարացնում է:

Որպես լավ մարզիկի՝ ընտրեցին Արթուրին, և Արթուրին ընտրեցին՝ որպես լավ մարզիկի:

Ուշագիշտ եղի՛ր – **Որպես, իբրև, ինչպես** բառերով կապակցվող վերադիրները կամ պարադաները չպետք է չփոթել մասնական բացահայտիչների հետ:

Օրինակ՝

Մայրս աշխատանքի ընդունվեց որպես ուսուցչուհի:

Ապրիլի յոթը հայտարարվել է իբրև մայրության օր:

(Այստեղ վերադիրներ են):

Ես դիմեցի նրան իբրև ավագ ընկերոջ: Անծանոթը դիմեց ինձ որպես տեղացու (այստեղ հիմունքի պարադաներ են):

Երկու դեպքում էլ չեն տրոհվում:

Պարազայական բացահայտիչ

Պարազայական բացահայտիչներն ավելի են կոնկրետացնում, ավելի որոշակի են դարձնում գործողության կատարման տեղը և ժամանակը՝

Այսօր՝ ժամը 3-ին, քեզ կսպասեմ Հանրապետության հրապարակում՝ շատրվանների մոտ, չուչանաս:

Հավաքը տեղի կունենա վաղը՝ մայիսի 1-ին, ժամը 10-ին Մատենադարանի մոտ՝ աստիճանների վրա:

Մի անգամն էլ՝ շատ տարիներ առաջ, ճոնչաց այգու դուռը (ԱԲ):

Պարազայական բացահայտիչների կետադրությունը նույնն է՝ բուժ և ստորակետ:

Հիշի՛ր՝ Բացահայտիչը բացահայտյալից տրոհվում է բուժով, իսկ նախադասության մյուս անգամներից՝ ստորակետով:

Ստորակետը չի դրվում հետևյալ դեպքերում՝

ա) Երբ բացահայտիչը դրված է սեռական հոլովով և հատկացուցի դեր է կատարում, ինչպես՝

Անդրանիկ Օզանյանի՝ Հայ մեծ զորավարի անունը կապրի իր ժողովրդի հետ: Հայ մեծ երաժշտի՝ Կոմիտասի համբավը հասել էր Բուրգերի երկիր:

բ) Երբ բացահայտիչից հետո որևէ կապ է դրվում, ինչպես՝

Գոհարի՝ ընկերուհուս հետ համերգ գնացի: Գեղամի՝ ընկերոջս համար մի նոր գիրք՝ գնեցի: Մեր ուսուցչուհու՝ ընկեր Սարգսյանի մասին լավ են խոսում ամենուրեք:

գ) Երբ բացահայտիչից հետո դրվում է օժանդակ բայ կամ հանգույց, ինչպես՝ Անին՝ մեր հին մայրաքաղաքն է ունեցել ջրմուղ և կոյուղի: Մեր տասներկուերորդ մայրաքաղաքը՝ Երևանն է շեն ու գեղեցիկ:

դ) Երբ բացահայտիչից հետո դրվում է էլ հավելական շաղկապը, ինչպես՝ Ընկերս՝ Գեղամն էլ է իմ տարիքին: Մեր երկրորդ քաղաքը՝ Գյումրին էլ շատ հին պատմություն ունի: Որպես անվանի գիտնականի՝ Վիկտոր Համբարձումյանն էլ համաշխարհային հռչակ է վայելում:

Վարժություն 51: Գտե՛ք բացահայտիչները, որոշե՛ք դրանց տեսակը, ցո՛ւյց տվե՛ք համաձայնությունը և բացատրե՛ք կետադրությունը:

I

Մենք՝ ես ու Միքայելը, անցանք երկաթուղու գիծը զարտուղի կաճանով՝ այդ նեղիկ ճանապարհով: Վաղորդյան արեգակի գունդը՝ որպես ճառագայթների մի խուրձ, ոսկեզօծում էր բարձրաբերձ լեռների կատարները՝ վայրի թռչունների հավաքատեղին: Հանդիպակաց կողմում՝ հարթության վրա, երևում էր մոտակա գյուղը: Գյուղի բնակիչները՝ այդ հոգնաբեկ մարդիկ, դեռ արևածագից առաջ սկսել էին իրենց ամենօրյա անվերջանալի աշխատանքը (ԹՆԺ.):

II

Ավարտվեց իտալացի հռչակավոր կոմպոզիտորի՝ Ջուզեպպե Վերդիի օպերան՝ «Տրավիատան»:

Հանդիսատեսը՝ Վերդիի ստեղծագործությունների երկրպագուն, չէր թողնում դահլիճը. որոտընդոստ ծափահարություններով նա մի քանի անգամ բեմ հրավիրեց աշխարհահռչակ երգչուհուն՝ Գոհար Գասպարյանին: Նրա երկրպագունները՝ ահել ու ջահել, դեպի դուրս՝ դեպի փողոց, շտապեցին, խոնվեցին թատրոնի առաջ՝ մուտքի մոտ՝

երգչուհուն ավելի մոտիկից տեսնելու: Վերջապես՝ կես ժամից հետո, երևաց սիրելի երգչուհին՝ իրենց կուռքը: Մի երիտասարդ՝ որպես ավելի ջերմ երկրպագու, նրա ոտքերի տակ շաղ տվեց ծաղիկների մի խուրձ, համբուրեց ձեռքն ու կանգնեց կողքին՝ Տիգրան Լևոնյանի մոտ:

Ամփոփիչ վարժություններ: Դո՛ւրս գրեք զոյականական անդամի լրացումներն իրենց լրացյալների հետ և որոշե՛ք տեսակները և շարադասությունը:

I

Կանաչ դաշտի պարզ հողիկը

Շահի ոսկե քյոչքից լավ է:

Քրտինքովդ կերած հացը

Սուլթանների ճաշից լավ է (Ավ. Իս.):

Եղեգնյա գրչով երգեցի փառքեր,

– Քեզի ընծա, ի՛նչ հայրենիք –

Սոսյաց անտառեն էի գայն կտրեր...

– Քեզի ընծա, հի՛ն հայրենիք –

Եղեգնյա գրչով երգեցի քուրմեր

Ընդ եղեգան փող լույս ելաներ (ԴՎ):

Ցուրտ հեռուներում՝ անլուելի

Կրկեսների մեջ, սրտով մոլոր

Երազում էի քո սիրելի

Եվ մեղմ երգերը՝ որպես օրոր (ՎՏ):

Վարդանի որդին՝ Ջոհրակը, ծանր սաղավարտն ուղղելով, իջավ բարձր բլրի գագաթից և ցածում՝ հարթության վրա, միամիտ ու հավատող աչքերով մի անգամ էլ վեր նայեց հորը՝ Վարդանին, և երիտասարդի սիրտը մրմոսաց:

Կարծես մանուկ Ջոհրակն էր... Վարդանը լավ էր հասկանում, որ իր սիրասուն զավակին ուղարկում է մահի դեմ...

Հայոց աշխարհի խորախոր ձորերից ու կանաչ դաշտերից խումբ-խումբ, երբեմն էլ ստվար զանգվածներով գալիս էին հայ գյուղացիները՝ զինված ամեն ինչով՝ բահերով ու թիակներով ... զորացնում էին կովող զորամասերը... Այսպես անցան օրեր, տարիներ, անցան բազում դարեր ... (Լստ Դ. Դեմիրճյանի):

II

Ահա և մարգարիտի պես գեղատեսիլ Վենեստիկը՝ ծովահայաց ու գմբուխտյա: Զրին բազմած հեքիաթային այս գեղադիր քաղաքում

ամեն ինչ գեղեցիկ է. գմբեթարդ ու հոյաչեն պալատներ ու դղյակներ, զարդարված մակույկներ ու դանդաղընթաց գոնդոլներ: Այս հրաշակերտ բացօթյա հինավուրց թանգարանի ամենագեղեցիկ ու հյուրընկալ կենտրոնը սուրբ Մարկոսի հրապարակն է՝ չրջապատված ճարտարապետական անկրկնելի գլուխգործոցներով, որոնցից մեկի գլխին բարձրացել է թևավոր առյուծը՝ պատմական Վենետիկի անմոռաց խորհրդանիշը:

– Մի՞թե այս բոլորը մարդկային մտքի ու ձեռքի արգասիք են, որոնց երկնապաց տաճարներն ու աչք չլացնող պալատները կարծես քարացած երաժշտություն լինեն, – հրապարակում չրջելիս ասաց Փարիզը նվաճած երգահան Կոմիտասը մտերիմ ընկերոջը՝ գրող ու քննադատ «Անահիտ» գեղարվեստական հանդեսի հրատարակիչ ու խմբագիր Արչակ Չոպանյանին:

– Շատ ճիշտ համեմատություն արեցիք, Հայր սուրբ: Ձեր երգերն էլ հնչյունավորված ճարտարապետական կոթողներ են՝ նույնպես մարդկային մտքի ու հոգու անմոռաց պոռթկուն էր: Ճիշտ է ասված, որ ճարտարապետությունը քարացած երաժշտություն է:

Ո. Բաղիկյան, «Կոմիտասը՝ ինչպիսին եղել է»:

III


Երեք հարյուր տարվա պատմություն ունեցող Մխիթարյան միաբանությունը իր հոգևոր գորությունամբ և գիտություն լույսով միշտ իրեն է ձգում ոչ միայն հայ, այլև այլազգի բազմաթիվ գիտություններով ու արվեստներով զբաղվող մտավորականների:

Վենետիկ ինքնատիպ քաղաքի հայելանման լճակում այցելուներին աչքը շոյող Սուրբ Ղազար կղզին օտարները Հայոց կղզի կոչեցին: Այստեղ Կոմիտասին ու Արչակ Չոպանյանին ընդունում են գրկաբաց ու կարոտով: Հայր սուրբը առաջին անգամ էր լինում այս մոլեռանդ հավատացյալ ու անդրդում աշխատող միաբաններին մոտ և զարմացած էր նրանց կատարած գիտական հսկայական ու մնայուն աշխատանքներով:

Երեք չաբաթ վայելելով չքնաղ Իտալիան՝ իր անասելի գեղեցկություններով, թերթելով նվիրյալ միաբանության հարուստ գրադարանն ու մատենադարանը՝ ուսումնասիրելով հայկական խազերը, Հայոց երգի մեծ վեհափառը՝ անմահ Կոմիտասը, նորից վերադառնում է Եվրոպա՝ Շվեյցարիա, ապա և Փարիզ (**Ո. Բաղիկյան**):

Հ ա ր ց ե ր

- 1. Նախադասությունների կրկնողական անդամները քանի՞ խմբի են բաժանվում:**
- 2. Որո՞նք են գոյականական անդամի լրացումները:**
- 3. Ի՞նչ է որոշիչը, ի՞նչ խոսքի մասերով է այն արտահայտվում:**
- 4. Ի՞նչ է հատկացուցիչը, ինչո՞վ է արտահայտվում:**



5. Ի՞նչ է բացահայտիչը, այն քանի՞ տեսակ է լինում:

ԲԱՅԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

Եթե գոյականական անդամի լրացումները դրվում են գոյական-ներով արտահայտված ցանկացած անդամի վրա, ապա բայական անդամի լրացումները դրվում են դիմավոր բայերի, ինչպես նաև անկախ դերբայների վրա. վերջին դեպքում դրանք կոչվում են **կողմնակի անդամներ՝** դրանց թվում նաև **կողմնակի ենթական** և **կողմնակի ստորոգելին**, որոնք կապվում են անկախ դերբայների հետ:

Ըստ այն հանգամանքի, թե դիմավոր ու անդեմ բայերի առարկաների՞ հետ են առնչվում, թե՞ գործողությունից հատկանիչների ու հանգամանքների, ըստ այդմ էլ՝ բայական անդամի լրացումները բաժանվում են երկու մեծ խմբերի՝ **խնդիրների** և **պարագաների**: Առարկաների հետ առնչվող լրացումները կոչվում են **խնդիրներ**, իսկ հանգամանքների հետ առնչվողները՝ **պարագաներ**:

ԽՆԴԻՐՆԵՐ

Խնդիր լրացումները ցույց են տալիս ենթակայի գործողությունից հետ կապված կամ գործողությունը մասնակցող առարկաներ և պայմանավորված են բայի **սեռի** թելադրանքով. ներգործական և կրավորական սեռի բայերի հետ կապված լրացումները կոչվում են **սեռի խնդիրներ**, իսկ բայիմաստի հետ կապված լրացումները՝ **ընությունից խնդիրներ**:

Խնդիրների գործառությունից հանդես են գալիս անձեր և առարկաներ, առարկայանիչ դերանուններ, ինչպես նաև գոյականաբար գործածված այլ խոսքի մասեր:

Սեռի խնդիրները պայմանավորված են **ներգործական** և **կրավորական բայերի** պահանջներով. ներգործական սեռի բայերով կազմված նախադասությունը կոչվում է **ներգործական (ակտիվ) նախադասություն**, սրա խնդիրն էլ՝ **ուղիղ (կրող) խնդիր**, կրավորական սեռի բայով կազմված նախադասությունը կոչվում է **կրավորական (պասիվ) կառուցվածքի նախադասություն**, իսկ նրա խնդիրն էլ՝ **ներգործող խնդիր**:

Ներգործական և կրավորական նախադասությունները փոխակերպելի են. այսպես՝ «Աշակերտները սիրում են ուսուցչին» և

«Քամին կոտրեց ծառը» ներգործական կառուցվածքի նախադասու-
թյունները հեշտությամբ փոխակերպվում են կրավորական կառույց-
ների, ուսուցչին և ծառը ուղիղ խնդիրները դարձնելով ենթականեր,
իսկ աչակերտները և քամին ենթակաները՝ ներգործող խնդիրներ՝
«Ուսուցիչը սիրվում է աչակերտներից (աչակերտների կողմից)» և
«Ծառը կոտրվեց քամուց»:

ՍԵՌԻ ԽՆԴԻՐՆԵՐ

ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐ

Ուղիղ խնդիրը բայական անդամի այն լրացումն է, որը դրվում է
բայի ներգործական սեռի պահանջով, այսինքն՝ իր վրա է կրում
ենթակայի կատարած գործողությունը և միշտ դրվում է հայցական
հոլովով (բացառությամբ մասնական ուղիղ խնդրի, որը դրվում է
բացառական հոլովով՝ «Յարս էլ խմե՞ց էդ ջրից»), «Հաճախ եմ լսում
Կոմիտասի երգերից», «Ճաշակեցի՞ր մեր այգու խաղողից»:

Ուղիղ խնդիրների ձևավորման հարցում կարևոր նշանակություն
ունեն բառերի իմաստային հատկանիշները, այսինքն՝ այն ա՞նձ է,
թե՞ իր, չնչավո՞ր է, թե՞ անշունչ, անձի՞ առում է, թե՞ իրի, որոշյա՞լ
է, թե՞ անորոշ: Քննենք դրանք:

**Հիշի՛ր՝ Անձի և իրի առումները դիտարկվում են հայցական հո-
լովում՝ ուղիղ խնդիր դառնալիս:**

Իրի անունները, որոշյալ, թե անորոշ առումներով որպես ուղիղ
խնդիրներ ձևավորվում են ուղղականաձև հայցականով և պատաս-
խանում են ի՞նչ, ինչե՞ր հարցերին՝

Ոստին իր որսը խորովել դեռ չգիտեր,
Մենք աստվածներ էինք ձուլում
Ու վայելում գինի (ՆԶ):

**Հանեցե՛ք ձեր դիմակները, պարոնա՛յք, բավական է կատակեր-
գություն խաղաք (ԳԹ):**

Անձի առումների ուղիղ խնդիրը ձևավորվում է տրականաձև
հայցականով և պատասխանում է ո՞ւմ հարցին՝

Ես սիրում եմ մայրիկին, ես չեմ ուզում լինել կին (ՀԹ):

Աչակերտը հարգում է ուսուցչին: Ուսուցիչը գնահատեց աչակեր-
տին:

Անորոշ առման դեպքում անձի անվան ուղիղ խնդիրը ձևավորվում

է թե՛ ուղղականաձև և թե՛ տրականաձև հայցականով՝

Նա սիրում է մի գեղեցիկ **աղջկա**, և Նա սիրում է մի գեղեցիկ **աղջիկ** (վերջին դեպքում անձը դիտվել է իրի առումով): Այդպես էլ՝ **Մամիկոնյանը** ծնում է **հերոսներ**:

Կենդանիների անունները ուղիղ խնդիր դառնալիս, հատկապես անորոշ առումով, դրվում են **ուղղականաձև** հայցականով՝

Մի հավք զարկի ես մի օր (ՀԹ):

Գյուղում պահում էինք երկու **կով** և հինգ **ոչխար**: Մի **չուն** ունեինք:

Որոշյալ առման դեպքում դրվում են և՛ **ուղղականաձև** (Մի օր սա եկավ՝ թե չորան **Ջատին** **ոչխարը** թաքուն մեր հանդն է քաշել – ՀԹ), և՛ **տրականաձև** (Պանինի շները հալածում էին խրտնած **պախրային** – ԱԲ):

Եթե կենդանին կամ անշունչ առարկան անձի անվան փոխարեն է գործածվում, դրվում է **տրականաձև** հայցականով՝ Տղան փաղաքչում է **չնիկին**, սիրում է **նրան**: Աղջիկը սիրում է **տիկնիկին**, կերակրում է **նրան**:

Եթե անձն է գործածվում իրի փոխարեն որպես ուղիղ խնդիր, ապա այն դրվում է **ուղղականաձև** հայցականով՝

Սհան ամին որդեգրեց մի որբ **տղա** (Ավ. Իս.):

Հիվանդի համար **բժիշկ** կանչեցին: Հրամանատարը մի քանի **սպաներ** հրավիրեց:

Ով **Կոմիտաս** չի սիրում, **Սևակ** ու **Շիրազ** չի կարդում, էլ ի՞նչ հայ է:

Ուղիղ խնդիր են ստանում նաև ՅՆ պատճառական ածանց ունեցող բոլոր բայերը՝

Նստեցնում է քեզ մի երկու բաժակ

Տաք ջուր խմեցնում կամ **մի թաս օղի...** (ՀԹ):

Ինձ շատ մի լացացնի, ես շատ եմ լացել (ՀԹ):

Ուղիղ խնդրի իմաստային առումները – Ներգործական սեռի բայերի բառային տարբեր իմաստներով պայմանավորված՝ ուղիղ խնդիրները ցույց են տալիս գործողությունների և առարկաների միջև տեղի ունեցող տարբեր հարաբերություններ:

ա) Ենթակայի գործողություն հետևանքով մի բան է ստեղծվում, առաջանում՝ որպես գործողության արդյունք՝

Ջանացել ենք մենք ամենքի համար,

Շինել ենք կամուրջ, կապել ենք կամար (ՊՍ):

Շինարարները կառուցեցին Հյուսիսային պողոտան: Սոնան սուրճ պատրաստեց:

բ) Ենթակայի գործողության հետևանքով փոխվում է առարկայի տեսքը, վիճակը, ձևը, դրությունը և այլն: Օրինակ՝ Բժիշկը բուժեց հիվանդին: Գյուղացին մշակում է հողը: Թշնամին այրեց կամուրջը, ավերեց գյուղի տները:

գ) Ուղիղ խնդիրը չի ներգործվում, ենթակայի գործողությունից փոփոխության չի ենթարկվում և ոչ էլ դրա արդյունքն է՝

Ու մարդիկ ինձ տեսնելով, իրենց հոգնած աչքերում

Տեսան ուրիշ մի աշխարհ, Գարուն տեսան նորարույր (ՀԾ):

Սիրում եմ քեզ, Հայո՛ց լեզու՝ Մայրիկիս պես անուշ ես դու (ՀԾ):

Ծեր քահանան ոչ մի աղոթք չէր հիշում: Մոռացավ ընկեր, աղաթ ու աշխարհ (ՀԹ):

Պետք է հիշել, որ կան նաև կրկնասեռ բայեր, որոնք ուղիղ խնդիրներ կարող են ստանալ սահմանափակ կիրառություններում, օրինակ՝ աշխատել բայը չեզոք է (Աշխատում եմ համալսարանում: Աշխատում են անդադար՝ զօր ու գիշեր):

Բայց Շիրվանդադեն ասում է՝ «Հայց աշխատելու համար ինձ գցեցի Բաբու», կամ «Հիմա բոլորն են ձգտում փող աշխատել» (Ոգնի):

Ապրելը չեզոք բայ է, բայց ցավ ապրել, վիշտ ապրել: Այդպես էլ նայել բայը՝ (նայել ծառին, մեքենային, մարդուն), բայց՝ նայել կինոնկար, հեռուստացույց:

Ծանոթություն: Որոշ լեզվաբաններ (Վ. Առաքելյան, Ռ. Իշխանյան) ընդունում են նաև ներքին ուղիղ խնդիր. սա այն խնդիրն է, որն ունի նույն բառարմատը, ինչ որ բայը: Օրինակ՝ Սոնան մեռավ երեխայի վրա, և լաց լացեցին նրա մայրը, ամուսինը, բարեկամները (ԱԲ): Հառաչանքով սրտի խորքից խոսք էր խոսում աստծու հետ (ՀԹ): Ռամիկը պետք է իր կոփվը կոպի (ԴԴ):

Վարժություն 1: Առանձին-առանձին արտագրել անձ և իր ցույց տվող ուղիղ խնդիրները իրենց ստորոգյալների հետ: Ցույց տալ նաև անձի և իրի առումները, ինչպես նաև որոշյալ և անորոշ առումները:

Մայրերն են պահել մեր հայոց լեզուն,
Երբ մանուկներին օրոր են ասել...
Նրանք չեն զիջել մեր երգն ու լեզուն
Բիրտ հազկերտներին, սուլթանին, ցարին...

Հայ գիրքն ու մանկան սեղմած կրծքներին՝
Հպարտ են ապրել նրանք աշխարհում...
Եվ ձեր ձեռներն եմ համբուրում, մայրե՛ր,
Սրբություն սրբոց եք դուք իմ հոգում,
Պահպանեցե՛ք միշտ հայերենը մեր,
Որ հար հավիտյան մնանք աշխարհում (ԳՄ):

Մթնեց: Ծերունին լուռ չարչարանքով
Մի քանի կոճղեր դրեց կրակին.
Նորից բարևեց իր երկրի կարգով
Ու բարի մաղթեց ջահել ղոնաղին (ՀԹ):

Ուզում էի գրկել ու համբուրել ընկերներիս, և բոլոր մարդկանց, և քարերն ու սարերը: Եվ տիեզերքի բոլոր աստղերը՝ համբուրել էի ուզում: Եվ զգում էի ինձ բոլոր արարածների և բոլոր իրերի մեջ անմեկին ու անբաժան... Վերադարձավ մեր ընկերներից մեկը, որ Սենոյի հետ գնացել էր գյուղի բոստաններից մի բան թոցնելու: Հետաքրքիր նայում էինք, թե հովակը ինչ բարիք պիտի թափեր մեր առաջ (Ավ. Իս.):

Ես քեզ սիրում եմ, այնքան եմ սիրում, որքան չէր սիրում Լեյլին Մեջնունին: Ես քեզ սիրում եմ, այնքան եմ սիրում, որքան չէր սիրում թիթեռը ճրագին, սոխակը՝ վարդին, աշխարհն արևին և բույսը՝ հողին (Վրթ. Փափազյան):

Վարժություն 2. Որոշել, թե բացառական հոլովով դրված լրացումներից որո՞նք են մասնական ուղիղ խնդիրներ:

Սմբատն իրավունք չունի իր զավակներին կտակելու հոր ժառանգությունից: Մարությանը համոզված էր, որ այդ ժառանգությունից իր կինն էլ կստանա... Շատերն սկսեցին ազահաբար ուտել սեղանին շարված ուտելիքներից, խմել գինուց: Մուխանը գինուց թափել էր սպիտակ սփռոցին: Թղթախաղից Միքայելը բոլորովին այլափոխվել էր (Ալ. Շիրվ.):

Մոտենալով ականակիտ աղբյուրին՝ առատորեն լվացվեցա, խմեցի սառը ջրից և սեղան պատրաստեցի մեր պաշարներից (Մուր.):

Առաջադրանքներ

1. Կազմեցե՛ք երեքական նախադասություններ՝ անձերը օգտագործելով իրերի և իրերը անձերի առումներով:

2. Կազմեցե՛ք երկուական նախադասություններ, որոնցում ուղիղ խնդիրները մի դեպքում լինեն գործողություն արդյունք, մյուս դեպքում փոփոխություն կրեն ենթակաների գործողություններից և երրորդ դեպքում՝ ուղիղ խնդիրները մնան անփոփոխ:

Հարցեր

1. Ստորոգյալի որ լրացումն է կոչվում ուղիղ խնդիր:

2. Իրի և իրի առման դեպքում ուղիղ խնդիրը ո՞ր հոլովին է նման, անձի և անձի առման դեպքում՝ ո՞ր:

3. Ի՞նչ են ցույց տալիս մասնական ուղիղ խնդիրները և ո՞ր հոլովով են դրվում:

ՆԵՐԳՈՐԾՈՂ ԽՆԴԻՐ

Ինչպես ասվեց, ներգործող խնդիրը նույնպես պայմանավորված է բայի սեռով, այն սեռի խնդիր է և միշտ դրվում է **կրավորական** սեռի բայերի պահանջով:

Ի տարբերություն ուղիղ խնդրի, որի դեպքում ենթակայի գործողությունն է անցնում անձի կամ առարկայի վրա, ապա ներգործողի դեպքում միշտ հակառակն է՝ ենթական ինքն է կրում մի ուրիշ անձի կամ առարկայի գործողության ազդեցությունը. **հմատ**, **Դուռը բացվեց քամուց**: Ժողովուրդը սիրում է **Անդրանիկին**, և Քամին բացեց դուռը: **Անդրանիկը** սիրվում է ժողովրդից (կողմից):

Դժվար չէ նկատել, որ ուղիղ խնդիրները դարձել են ենթականեր, ենթակաները՝ ներգործող խնդիրներ: Այս դեպքում քերականական ենթակաները ավելի պասիվ են:

Ներգործող խնդիրները հիմնականում դրվում են **բացառական** հոլովով և պատասխանում են **ումից, ինչից** հարցերին: Անձերի դեպքում մեծ մասամբ հանդես է գալիս նաև **կողմից** կապը: Այս կապը կարող է դրվել նաև անձնավորված իրերի դեպքում (Մեղադրյալը դատապարտվեց դատարանի կողմից: Նախագահի առաջարկը հավանություն արժանացավ Ազգային ժողովի կողմից):

Ներգործող խնդիրը դրվում է նաև **գործիական հոլով**՝ Աղջիկը հնայված էր երիտասարդով: Սար ու ձոր ծածկվել էր ձյունով: Դեպքի

վայրը անմիջապես չըջապատվեց ոստիկաններով:

Լեոնե՛ր, ներչնչված դարձյալ ձեզանով՝
Թնդում է հոգիս՝ աշխուժով լցված (ՀԹ):

Հիշի՛ր՝ Ներգործող խնդիրը չպետք է չփոթել միջոցի խնդրի և պատճառի պարագայի հետ, որովհետև ներգործող խնդիրը գործողություն կատարողն է և փոխակերպելիս դառնում է ենթակա (տե՛ս վերևի օրինակները), մինչդեռ միջոցի խնդրի և պատճառի պարագայի դեպքում փոխակերպելի չեն: Օրինակ՝ «Նա ազնիվ աշխատանքով էր ուզում վերականգնել իր հեղինակությունը» նախադասությունն մեջ աշխատանքով-ը միջոցի խնդիր է: (Երեխան կարմրել էր **ամոթից**: Արջը մոնչում էր **ցավից**: Շնիկը սրթարթում էր **ցրտից**;) նախադասություններում ընդգծված բառերը ներգործող խնդիրներ չեն, այլ պատճառի պարագաներ, որովհետև բայերը չեն կարող Վ ածանցն ստանալ (դա հնարավոր է մեկ դեպքում, եթե չեզոք սեռի բայերի մեջ ավելացնենք ՅՆ ածանցը՝ Ցավը մոնչացնում էր արջին):

Վարժություն 3: Ներգործական նախադասությունները դարձրե՛ք կրավորական, իսկ կրավորականները՝ ներգործական:

Մեղմաշարժ հոսանքը հանգստացնում է ներվերս: Վալերոյի գլխավորած ջոկատը բնիկների կողմից սիրով է ընդունվում: Վալերոն նրանց ծերերի կողմից նշանակվում է համայնքի առաջնորդ: Կյանքի վերջին նա իր կարապի երգը երգեց: Կյանքի վերջին շողը լուսավորեց Մարկոս Ալիմյանի հողագույն դեմքը: Ամպերը ծածկում են քար ու պարիսպ: Կիզիչ արևից ժայռերն ասես բոցավառվել էին: Վարդանի դեսպան սեպուհը վրաց Միհրդատ թագավորի կողմից ընդունվեց պալատի դահլիճում: Ուրախալի լուրը հաղորդվեց Ջարգարյանի կողմից:

Առաջադրանքներ

1. Գնահատե՛լ, առաջադրել, սիրել, հարգել, գովաբանել, լուսավորել, ստեղծել, ատել, վարկաբեկել, սիրաշահել բայերով կազմեցե՛ք ներգործական և կրավորական նախադասություններ:

2. Ձեր ձեռքի տակ եղած գեղարվեստական գրքերից դուրս գրեցե՛ք հինգական ներգործական ու կրավորական կառուցվածք ունեցող նախադասություններ:

ԲՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Եթե սեռի խնդիրները պայմանավորված են ներգործական և կրավորական սեռերի պահանջով, ապա բնության խնդիրները անտարբեր են սեռերի նկատմամբ և դրվում են բայիմաստների բառային պահանջով. դրանք դրվում են հիմնականում **չեզոք**, ինչպես նաև ներգործական ու կրավորական բայերի վրա: Բնության խնդիրներն արտահայտվում են գոյականների, առարկայանիչ դերանունների և գոյականաբար առնված այլ խոսքի մասերի **տրական, ցուցական, գործիական, մասամբ էլ ներգոյական** հոլովներով, ինչպես նաև **հոլովակապային կառույցներով**:

Այս բայերի բառային բազմիմաստությունը բնության խնդիրները լինում են՝ **հանգման, մատուցման, վերաբերություն, միջոցի, անջատման, սահմանափակման, բաղկացություն և այլ տեսակներ**:

ՀԱՆԳՄԱՆ ԽՆԴԻՐ

Հանգման խնդրի իմաստային առումները չափազանց շատ են, բայց բոլորն էլ միավորվում են **հանգման անվան տակ**, որովհետև դրանցում կան **հանգելու, մոտենալու, փարվելու, կաշելու, առնչվելու, հաղորդվելու** և նման իմաստներ, և բոլորն էլ ձևավորվում են **տրական** հոլովով, պատասխանում են **ո՞ւմ, ինչի՞ն հարցերին**:

Հանգման խնդիրը ցույց է տալիս իմաստային տարբեր հարաբերություններ.

ա) Այն անձը կամ առարկան, որին հանգում, մոտենում, դիպչում է որևէ անձ կամ առարկա. **օրինակներ՝ նահապետը մոտեցավ մեզ բոլորիս և դիմեց բազմությունը: Պիտի փարվեմ չքնաղ լանջիդ (Ավ. Իս.): Կինը մոտեցավ օջախին: Մոտեցանք Արամին:**

բ) Այն անձը կամ առարկան, որին համաձայնում, հպատակվում, նմանվում, հնազանդվում, ենթարկվում, հակառակվում է մեկ ուրիշ անձ կամ առարկա: **Օրինակ՝ Օտար երեխան չէր հնազանդվում և չէր համակերպվում նոր դաստիարակչուհուն (Գպ.): Ժողովականները համաձայնեցին ելույթ ունեցողի կարծիքին (Ազգ.): Հետևիք մեծերի լավ օրինակին: Երեխան նմանվում է ծնողներին (Գպ.):**

գ) Այն անձը կամ առարկան, որին տենչում, կարոտում, փափագում, օգնում, հավատում, ունկնդրում է որևէ անձ կամ առարկա՝ **Սիրտս փափագում է իմ հողին ու ջրին (Ավ. Իս.): Կարոտում եմ իմ ազնիվ բարեկամներին (ԳԹ):**

Հավատում ես քո **երազներին**: Նայում է շահը անտեր **գահուլքին** ու տենչում **տիրուհուն**: Հիմնադրամը օգնում է նաև **Թոշակատուներին** (Եթեր):

դ) Այն անձը կամ առարկան, որին ձուլվում, կապվում, փաթաթվում, միացվում, խառնվում, Հյուսվում է մեկ ուրիշ անձ կամ առարկա: Օրինակ՝ Երեխան փաթաթվեց մորն ու լաց եղավ: Լավն էլ վատին է խառնվում ու ձուլվում **անցյալին** (Գպ.): Աղջնակը արդուկը միացրեց **Հոսանքին** ու սեղմեց Հագուստի **Թաց տեղին**:

ե) Հանգման խնդիր են առնում նաև բաժանորդագրվել, ազդել, վստահել, դավել, նախանձել, կենտրոնանալ բայերը՝ Բաժանորդագրվել **ամսագրին**, վստահել **ընկերոջը**, նախանձել **Հարևանին**, կենտրոնանալ **մի բանի վրա**, ազդել **ընկերոջ** վրա և այլն:

զ) Հանգման խնդիր են առնում նաև վարժվածություն, տեղափոխություն, գերադասություն, Համապատասխանություն իմաստ ունեցող մի շարք բայեր՝ Վարժվել **եղանակին**, ընտելանալ **միջավայրին**, ՀՀամապատասխանել **պահանջին**, իշխել **մարդկանց...**

է) Հանգման խնդիրները ձևավորվում են նաև կապով ու կապի խնդրով՝ Հարձակվել **Թշնամու վրա**, բողոքել **դատավճռի դեմ**, սխալ վարվել **ընկերոջ նկատմամբ...**

ը) Անվանաբայական (բաղադրյալ) ստորոգյալները նույնպես Հանգման խնդիր լրացումներ կարող են ստանալ. այս դեպքում վերադիրները մեծ մասամբ ածականներ են լինում (գործին **անտեղյակ**, ցավին **անտարբեր**, շատերին **օտար**, ճշտին **Համազոր**):

Վարժություն 4: Գտնե՛լ Հանգման խնդիրները և բացատրե՛լ նրանց հետ կապված բայերի բառային իմաստները.

Կեսօրն անցավ, էլ ի՞նչ մնաց,
Օրը մոտ է մայրամուտին,
Ստվերները կամաց-կամաց
Փաթաթվում են արահետին...
Քիչ է մնում Հասնեն արտին

* Մատուցման խնդիրը առանձնացնում են Վ. Առաքելյանը (Հայերենի շահույթություն, 1956, հտ. Ա, էջ 294), Ակադեմիական քերականությունը (Ժամանակակից Հայոց լեզու, 1976, հտ. 3, էջ 232, Ս. Աբրահամյան, Ն. Պառնայան, Հ. Օհանյան, Ս. Բաղդիկյան) և Ռ. Իշխանյանը (Արդի Հայերեն շարահյուսություն, Ե., 1986, էջ 206):

Եվ ուր որ է՝ փարվեն իրար...
Ու նայելով ստվերներին
Ու հասկերին քո երազուն՝
Ուժ ես տալիս քո թևերին
Եվ չես վատնում վայրկյանը դուր (ՀՍ) :

Լեոնաշղթան երկրից քերում,
Սառնում է ծովն անափ ծովին (ՆԶ):

II

Տղան լոք արավ, հասավ դռանը, հենվեց նստարանին, բռունցքը դանդաղ մոտեցրեց չուրթերին և սկսեց կրծոտել մատիտի ծայրը: Լեզվի ծայրն առավ գրաֆիտի սառնությունը: Մտքում ինչ-որ բան թրթռաց, և դանդաղ մոտեցավ լուսամուտին, բաց արեց փեղկը և նայեց դրսում խաղացող երեխաներին: Գուրս եկավ, խառնվեց նրանց, ու որոշեցին այցելել իրենց հիվանդ ընկերոջը, որն անտեղյակ էր վերջին օրերի անցուդարձին և չէր սպասում ընկերների այցելությունը:

Առաջադրանքներ

1. Տրված բառերը նախադասությունների մեջ գործածեք կապերի հետ. ծանոթանալ, ուշադրություն դարձնել, հայացքը հառել, անտարբեր լինել, հավատ ունենալ, կյանքը տալ, ընդհարվել:
2. Ինքնուրույն կազմել հինգական նախադասություններ, որոնցում հանգման խնդիրները լինեն անձնանուններ և դերանուններ (կարող եք դիմել նաև կապերի օգնությունը):

ՄԱՏՈՒՑՄԱՆ ՈՆԴԻՐ

Դպրոցական և բուհական դասագրքերում մատուցման խնդիրը չեն զանազանում հանգման խնդրից և դրանք քննում են միասնաբար՝ հանգման անվան տակ: Մինչդեռ թե՛ քերականորեն և թե՛ տրամաբանորեն այդ երկու խնդիրները տարբերվում են*:

Քերականական տարբերությունն այն է, որ ի տարբերություն հանգման խնդիրների, որոնք հիմնականում դրվում են չեզոք սեռի բայերի պահանջով (մոտենալ մեքենային, հանդիպել ընկերոջը, հասնել ծառին, հանդիմանել ուսանողին), մատուցման խնդիրները հիմ-

նականում պայմանավորված են **ներգործական**, երբեմն էլ **կրավորական** սեռի բայերով (Հյուրերին միրգ մատուցել, գիրքը Հանձնել գրադարանին, ջուրը տրվեց երեխային):

Ինչպես դժվար չէ նկատել **մատուցել**, **Հանձնել**, **տրվել** բայերը ներգործական սեռի են և պահանջել են **կրկնակի խնդիրներ՝ ուղիղ և մատուցման**:

Տրամաբանական տարբերությունն էլ այն է, որ չեզոք սեռի բայերը ուղիղ խնդիրներ չեն պահանջում: Տրամաբանորեն **տալ**, **Հանձնել**, **մատուցել**, **մատակարարել**, **բացատրել**, **հաղորդել**, **ասել**, **նվիրել**, **առաջարկել**, **պարգևել**, **ընծայել**, **մատնել**, **ընձեռել**, **վճարել**, **ավանդել**, **կտակել**, **վաճառել**, **ծախել** և նման բայերը իմաստներով տարբերվում են չեզոք բայերից:

Այս երկու խնդիրների համատեղման և մի անվան տակ քննելու ելակետը միայն դրանց **տրական** հոլովով դրվելն է, մինչդեռ տրականի հետ սրանք ունենում են նաև **հայցականով** ուղիղ խնդիրներ և **կրկնակի** հարցերի էլ պատասխանում են:

Մատուցման խնդիրը ցույց է տալիս՝

ա) այն անձը կամ առարկան, որին տրվում, Հանձնվում, մատուցվում է ուրիշ առարկա կամ անձ: Օրինակներ՝ **Բժշկուհին երեխային Հանձնեց մորը**:

Ցավը տվեց սարերին՝ սարերը չտարան...

Ցավը տվեց մարդուն՝ մարդը տարավ (ՀՇ):

Լույսի հրձվանքը տվեց երկնքին...

Վեհության խինդը լեռներին տվեց...

Դայլայը տվեց հավք ու հովերին (ՀԾ):

Սոնան սուրճը մատուցեց հյուրերին: Փոստատարը նամակը Հանձնեց տիրոջը:

բ) Այն անձը, առարկան, որին ասվում, հաղորդվում, հայտնվում, ձեռնվում, առաջարկվում, վստահվում է որևէ բան՝

Այս օրվանից Հանձնում եմ քեզ հայոց լեզուն հազարազանձ (ՍԿ):

Դու հայրենիք տվիր հային, որ դրախտ է աչքիս թվում,

Դու չես թողնի մեր Արարատ լեռն էլ պանդուխտ մնա հեռվում (ՀԾ):

Աստված քեզ կրկին անգամ պարգևեց ինձ, անգին Սամվել (Բաֆ.): Լավ վարպետը իր **գիտելիքները** փոխանցում է սաներին:

«Փարոսը» օգնութիւնն է բաժանում կարիքավորներին: Իմ գաղտնիքը վատահում եմ իմ մոտիկ ընկերոջը:

գ) Մատուցման խնդիր են ընդունում ՅՆ ածանցով կազմված որոշ բայեր, որոնք կրկնակի խնդիրներ են ստանում (Մայրը դաս է սովորեցնում երեխային: Երեխան ճաշ է կերցնում տիկնիկին: Սոնան կաթ է խմեցնում եղբորը):

գ) Մատուցման խնդիրը ձևավորվում է նաև անորոշ դերբայ + տալ կադրապարով՝ Պապիկը նամակը կարդալ տվեց թոռնիկին: Մայրը շուրը լցնել տվեց ծաղիկներին:

Ծանոթութիւն: Օգուտի (չահի) կամ վնասի խնդիր

Մ. Արեղյանը գրում է. «Տրական հոլովը ցույց է տալիս այն առարկան, որի համար կամ նկատմամբ կա կամ լինում է մի բան» և բերում է հետևյալ օրինակները՝ «Ուրիշին փոս փորողը ինքը կընկնի մեջը»: «Ուրիշի աչքը քեզ համար լույս չի տա» և այլն:

Վերլուծութիւնների ժամանակ նման օրինակներ քիչ չեն հանդիպում, ինչպես՝ «Հայրենիքի համար, այս աղջկա համար արժե կովել ու մեռնել» (ԳՍ): «Ոմում ենք կովող քաջերի փառքին» (ՀԹ): «Արտադրամասն աշխատում է ի վնաս ձեռնարկութեանը» (Մամուլ):

Վարժութիւն 5: Դուրս գրել մատուցման խնդիրները իրենց բայերի հետ. մատուցման խնդիրներն ընդգծել մեկ, ուղիղ խնդիրները՝ երկու գծերով:

Մենք նոր իմաստ ու լույս տվինք
Աշխարհաչեն աշխատանքին (ՆԶ):

Ու սրտիս մեջ մեկը ինձ
Խոսք է ասում մտերիմ (Ավ. Իս.):

Արձակ դաշտերի ամայութեան մեջ նա մեղմ շշնջաց,
Կարծես թե սիրո քնքուշ խոսք ասաց նիրհող դաշտերին (ՎՏ):

Դպրոցի տնօրենը գովասանագրեր հանձնեց ուսման առաջավորների (Դպ.): Հյուրերին առատորեն մատակարարում էին ոստրե (բարձրորակ ձուկ) և որսի միս: Երեխաները ծաղկեփունջը նվիրեցին իրենց սիրելի դասղեկին: Ծնորհայի արվեստագետ Թովմաս Պողոսյանին շնորհեցին «Մովսես Խորենացի» շքանշան:

Վարժուիթյուն 6: Առանձին-առանձին խմբավորել հանգաման և մատուցման խնդիրները իրենց խնդրառու բայերի հետ և ասել, թե ինչով են արտահայտված:

Մյուս օրը՝ վաղ առավոտյան, արդեն մոտենում էին իրենց զորամասին... Կես ժամ անց նրանք մոտեցան զորամասի հրամանատարին ու նրան հանձնեցին վերևից եկած հրամանը, որտեղ ասված էր, որ պետք է զինվորներին բաժանել տոնակա զգեստները... Մանկականությունը, սակայն, աչքերին չէր մոտենում: Դրանք ասես կյանքն արդեն ապրած մեկից վերցրել, տվել էին նրան: Ընդունվելուս կապակցությունը ինձ կոչիկներ նվիրեցին: Վերջապես հասան ընկերոջ տանը. տուն հրավիրեցին. հյուրերին կոնյակ ու սուրճ հյուրասիրեցին, մրգեր մատուցեցին և դուրս գալուց առաջ հուշանվերներ տվեցին ու խնդրեցին իրենց պատգամը հայտնել բացակայող մտերիմներին:

Առաջադրանքներ

1. Հետևյալ բայերով կազմել հանգաման կամ մատուցման խնդիրներ պահանջող նախադասություններ. **հավել, հանդիմանել, հարվածել, դեմ առնել, հաղորդել, սպասարկել, դիմագրավել, նայել, տեսնել, ասել, նվիրաբերել, սևեռել:**
2. Տրված բայերով կազմել այնպիսի նախադասություններ, որոնք պահանջեն կրկնակի խնդիրներ՝ ուղիղ և հանգաման. **հանձնել, մատուցել, տալ, բացատրել, հաղորդել, ընծայել, մատնել, վճարել, ավանդել, ապացուցել, նետել, պարզեցնել, ընձեռել, ասել, վաճառել, պարզաբանել, խոստանալ:**
3. Ինքներդ հիշե՛ք կամ կազմե՛ք շահի կամ վնասի խնդիրներ պարունակող նախադասություններ: **Օրինակ՝ Հայրենիքի համար կյանքներս էլ կտանք (ԴԴ): Նա «խոստովանեց» ի վնաս ընկերոջը (Մամուլ):**

ԱՆՁԱՏՄԱՆ ԽՆԴԻՐ

Անջատման խնդիրը բոլորովին հակադիր է տրական հոլովով դրվող խնդիրներին, եթե տրականով դրված խնդիրները ցույց են տալիս հանգում, մատուցում, հպում, ձուլում, օգուտ, վնաս և այլն, ապա անջատման խնդիրները ցույց են տալիս դատում, անջատում, հեռացում, բաժանում, առանձնացում և այլն:

Անջատման խնդիրը դրվում է **բացատրական** հոլովով և պատասխանում է **ուժի՞րց, ինչի՞րց** հարցերին: Օրինակներ՝ **Շատ բանից է մեզ**

գրկել վայրենին, Բայց մենք չենք գրկվել մեր բերանի **Համից** (ՊՍ): Հայոց վշտի **ուռնուց** կտրած սուրբ սրինգով Կոմիտասը Հայ երգը հնչեցրեց ամբողջ աշխարհում (էջմիածին): Անկարելի եղավ ծաղիկը ջուրով ծաղկավաճառից (ՎՓ): Ոչ մի ժանիք ինձ չի բաժանի իմ անդուլ **դարից**: Ազատվեց Հին **կապանքից** Հոգիս վիթխարի ցավով (ԵԶ):

Ես քեզնից դառնացած հեռացա,
Ես քեզնից հեռացա ու լացի (ՎՏ):

Անջատման խնդիրը ցույց է տալիս նաև այն անձը կամ առարկան, որից մի բան է բխում, ստացվում, լսվում, խնդրվում՝ **Ոնեղ** աղքատի հոգին դուրս գա՝ **քարից, հողից** հաց քամն (Ավ. Իս.): Հաց չենք ուզում **ձեզանից**, հող տվեք մեզ ձեր **տանից**: Օլտան **աղբյուրից** ջուր է առել... (ՀԹ): Ես իմ **մեծերից** եմ լսել ... (ՀԹ):

Անջատման խնդիրներ են նաև անձ ու առարկա նշող գոյականները, որոնցից ծագում, սերում, առաջանում են այլ անձեր ու առարկաներ՝ Հայ ժողովուրդը սերվել է **Թորգոմա** նահապետական **տոհմից** (ՀՆ): Նա ծնվել է ազնիվ **ցեղից** (ՀՆ): Երեխան աշխատասիրությունը ժառանգել է իր **հորից**, հումորի զգացումը՝ **տատիկից**:

Շատ հաճախ անջատման բնության խնդիրը չփոթվում է բացառականով դրվող սեռի ներգործման խնդրի հետ, երբեմն էլ՝ տեղի պարագայի հետ. այս վերջին դեպքում դրանց զանազանները դժվար չէ՝ պարագայի դեպքում տրվում է **որտեղի՞ց** հարցը (Քաչեց արևը ծիլերը **հողից**: Ձյունի փաթիլներ իջան **վերևից**):

Մինչդեռ անջատման և ներգործման խնդիրները զանազանելու համար պետք է դիմել բայերի սեռերին՝

Ծփաց կանաչը, ծածանվեց **հովից**
Արտերի թավիչ հորձանքը սիրով (ՀՇ):

Այստեղ երկվություն չի կարող լինել, որ **հովից** լրացումը ոչ թե անջատման խնդիր է, այլ ներգործող, որովհետև այն հեշտություններ փոխակերպվում է ենթակայի, իսկ **ծածանվեց** կրավորական սեռի բայն էլ՝ **ծածանեց** ներգործական սեռով՝ Հովը ծածանեց հորձանքը: Կամ Արևից խանձվում են այգիներն ու մարգերը:

Անձի կամ անձի առման դեպքում բնականաբար նման երկվություն չի առաջանում, ինչպես՝ «Նամակ ստացավ ընկերոջից»: «Երեսխան տիկնիկը խլեց չնիկից»:

Վարժություն 7: Անջատման բնության խնդիրները դուրս գրել իրենց ստորոգյալների հետ և ասել՝ ինչո՞ւ են տարբերվում ներգործող սեռի խնդիրներից.

Քո ձյունագեղ բարձունքից
Արևի հոտ է գալիս,
Աղբյուրներիդ արցունքից
Արևի հոտ է գալիս

Բայց մամուռից ու սունկից
Արևի հոտ է գալիս:
Բայց նրանց քիվ ու քունքից
Արևի հոտ է գալիս (ՀՄ):

Բայց պինդ է հոգիս... Ու ոչ մի ժանիք
Ինձ չի բաժանի իմ անդուլ դարից,
Ինչպես ոչ մի ուժ ինձ չի բաժանի
Իմ շոնգալից, պայծառ քնարից (ԵԶ):

Իրոք,
Ի՞նչ է իմ գործը,
Եթե ոչ ջոկել
Ոչ թե կեղծիքը ճշմարտությունից,
Այլև տարբերել սուտը կեղծիքից,
Ճիշտը ճշմարտից և ճշգրտից,
Գու՞թը՝ խղճալուց...
Ես տարբերում եմ մուժը մշուշից
Ու մառախուղից մեզն եմ տարբերում (ՊՄ):

Վարժություն 8: Տետրի էջի ձախ կողմում արտագրեցե՛ք անջատման, աջ կողմում ներգործող խնդիրները՝ իրենց ստորոգյալների հետ:

Ես քեզնից դառնացած հեռացա (ՎՏ): Տետրից մի թուղթ պոկեցի: Արևից չորացել էին նորատունկ սածիլները: Խուսափի՛ր ստախոսներից: Անջատվի՛ր շարքից: Քարանձավներն են քրտնել ամայության սարսուռից (ՀՄ): Վաստակաչատ դերասանուհին մեծարվում է ժողովրդի կողմից: Նույնիսկ քարե պատն է շիկնում կիզիչ ճառագայթներից: Խեղճ աղքատի հոգին դուրս գա՛ քարից, հողից հաց քամի (Ավ. Իս.): Փիլոն հայացքը փախցրեց Վասակից (ՆԶ): Ես ստեղծեցի Ադամին հողից և քեզ կրակից (Ավ. Իս.): Ուզում եմ թեթևանալ ճնշող մտքերից: Հեռացի՛ր ինձանից:

Առաջադրանք

Տրված բայերով կազմել անջատման և ներգործող խնդիրներով նախադասություններ՝ զրկել, մեկուսացնել, խնդրել, պահանջել, զատել, բաժանել, վախեցնել, ջոկել, խուսափել, տարբերակել, կառուցել, ծածկել, սիրվել, հարգվել, շնորհվել:

ՄԻՋՈՑԻ ԽՆԴԻՐ

Միջոցի խնդիրը ցույց է տալիս այն առարկան կամ անձը, որով, որի միջոցով կամ օգնություններ ենթական կատարում է իր գործողությունը: Այս խնդիրը զրվում է **գործիական հոլովով**, ինչպես նաև ձևավորվում է **միջոցով, շնորհիվ** կապերով և պատասխանում է **ու՞մով, ի՞նչով** հարցերին: Միջոցի խնդիրները կարող են զրվել ամենաբազմազան իմաստներ արտահայտող բոլոր սեռերի բայերի հետ՝

Հայոց վշտի ուռնետց կտրած սուրբ սրինգով կոմիտասը հայ երգը հնչեցրեց ամբողջ աշխարհում («էջմիածին»): Այս սրինգի միջոցով նա հազարավոր սրտեր հուզեց և դրանով էլ նվաճեց Եվրոպան ու Բուրգերի երկիրը (ն. տ.):

Նրանով է մրմնջացել հայ պանդուխտը՝ վերքն իր սրտի (ՍԿ):

Դու մեր սրբություն՝ կնքված **Մեսրոպով, Նարեկացիով** անվաճ ու յուզված:

Ջուր ես խմել **ոսկե թասով** ժողովրդի պարզ սրտից (ՊՍ «Անլուբի ...»):

Միջոցի խնդիրներ են առնում նաև մարդու հոգևոր ու մտավոր վիճակը, տրամադրություններն ու հույզերն արտահայտող բայերը (հպարտանալ, զմայլվել, շլանալ, զբաղվել, գայթակղվել, հրապուրվել, մխիթարվել, պարծենալ, ուրախանալ...):

Մոցարտը դեռ մանկուց է զբաղվել **երաժշտությամբ** (ՎԲ): Բոլորս ենք հիանում մեր Հյուսիսային պողոտայի **գեղեցկությամբ** (ԳԹ): Իսկ ո՞վ չի զմայլվել Ալեքսանդր Թամանյանի՝ նմանը չունեցող **ճարտարապետությամբ**: Շատ մի՛ հրապուրվիր աղջկա միայն **գեղեցկությամբ**. սրտով գատի՛ր:

Միջոցի խնդիրը չպետք է չլիթել **գործիականով** զրվող որոշ **ձևի պարագաների** հետ, որոնք **պարագայական խնդիրներ** են: Համեմատենք հետևյալ նախադասությունները՝ Երեխան ծաղիկները ջրում է **ցնցուղով** (դուլլով) – ինչո՞վ (միջոցի խնդիր) և Երեխան ծաղիկները ջրում է **բերանով** (ձեռքի ամիով) – ինչպե՞ս:

Վերջին դեպքում ավելի ընկալելի է գործողություն կատարման ձևը, քան միջոցը (Այս մասին խոսվելու է քիչ հետո՝ պարագայական խնդիրների մեջ):

Վարժություն 9: Դո՛ւրս գրել միջոցի խնդիրներն իրենց խնդրառու բայերի հետ, որոշել բայերի սեռը:

Վերջերս մեքենայով գնացինք Լուսակերտ, մտանք կարի արտադրամաս. մի տեղ մեքենաներով կտավ էին գործում, մի ուրիշ տեղ մկրատներով ձևում էին զանազան հագուստներ, հաջորդ բաժնում կանայք նուրբ մատներով, թել ու ասեղով կտրում էին նուրբ զգեստներ, չորրորդ արտադրամասում էլեկտրական արդուկներով արդուկում էին գրանք ու սալյակներով տեղափոխում պահեստ (Մամուլ):

Այնտեղ, որտեղ հայ ժողովուրդը չի կարողացել հաղթել սրով, հաղթել է գրով ու գրականությունամբ, կամքով ու արիությունամբ... Իսկ հայ գյուղացին վարել է հողը արորով, փափկացրել է քարն իր քրտինքով, արցունքով ու այրամբ (Ըստ Գ. էմինի):

Առաջադրանքներ

1. Տրված բայերով կազմել միջոցի (նաև ուղիղ) խնդիրներով նախադասություններ: Հպարտանալ, պարծենալ, հրապուրվել, զարդարել, նկարել, գրել, հարդարել, հարթել, հնձել, հերկել, ուղևորվել, ոգևորվել, մտահոգվել, կրել:

2. Տրված գոյականները գործածել որպես միջոցի խնդիրներ. (կարող եք գործածել նաև կապեր ու կապական բառեր) ընկերներ, ուսուցիչ, քանոն, կոմբայն, մատուցարան, տրոլեյբուս, ինքնաթիռ, բրիչ, հավատարմագիր, գրքեր, դուք, բոլոր, մենք, քերականություն, գրականություն, ֆիզիկա, քիմիա:

ՎԵՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐ

Վերաբերության խնդիրը նշում է այն անձը կամ առարկան, որի մասին, որի վերաբերյալ խոսվում է, որի նկատմամբ կատարվում է գործողություն: Այն հիմնականում դրվում է բացառական հոլովով, ինչպես նաև ձևավորվում է մասին, վերաբերյալ, շուրջ, նկատմամբ, հանդեպ և նման կապերով ու կապի խնդիրներով և պատասխանում է ումի՞ց, ինչի՞ց, ո՞ւմ մասին, ինչի՞՞ վերաբերյալ, ինչի՞՞ առթիվ հարցերին:

Վերաբերության խնդիրներ են առնում հիմնականում ասացական

և մտածական բայերը (ասել, խոսել, պատմել, գրուցել, գանգատվել, բամբասել, կարծիք հայտնել, դատել, երգել և նման բայեր):
Օրինակներ՝

Երգել են նրանք մեր ցորեն հացից,

Մեր խինդ ու լացից, մարտում ընկածից (ՊՍ «Անլուելի...»)

Խոսում էին անվերջ մեր երջանիկ կյանքից

Եվ երգերից մեր նոր, որ պիտի գան (ՎՏ):

Ի՞նչ կա քաղաքում, դե պատմիր տեսնեմ... մեռնող-ապրողից,
Թանկ ու էփանից կամ նոր դուրս եկած գազելից, բանից (ՀԹ):

... Ու պատմում էր նա հուրի-փերիններից, զմրուխտ զուշից (ՀԹ):

Հարսը շատ էր գանգատվում սկեսուրից ու բամբասում էր նրանից
(ԲԽ):

Վերաբերության խնդիր է առնում նաև անտեղյակ ածականով
բաղադրյալ ստորոգյալը՝ «Մայրը բոլորովին անտեղյակ էր որդու
հետ պատահածից» (ԳԹ):

Վերաբերության խնդիրն արտահայտվում է նաև հոլովակապային
կապակցություններով, ինչպես՝ Անդրանիկի մասին ժողովուրդը խոսում է որպես մեծ հայրենասերի (ԳԹ): Խորհեցեք մի պահ թռչելու մասին, Խորհեցեք ծաղկի ու ծովի մասին (ՎԴ): Այդ գործի վերաբերյալ իրարամերժ կարծիքներ կան (Ազգ): Ձեկուցման շուրջ ծավալվեց մտքերի աշխույժ փոխանակություն (ԳԹ): Դրամաշորթի անձի առթիվ քրեական գործ է հարուցվել (Երկիր): Քո հանդեպ բողոքներ չկան (ԲԽ):

Պետք է զգոն լինել. վերաբերյալ իսկական կապի փոխարեն հաճախ գործածում են վրա անիսկական կապը, որը մեղանչում է արդի հայերենի դեմ. նույնիսկ որոշ մարդիկ հաճախ են «կանգ առնում այս կամ այն խնդրի ու հարցի վրա» փոխանակ խոսելու այս կամ այն հարցի ու խնդրի մասին, կամ վերաբերյալ: «Ձեկուցողը կանգ առավ նաև առօրյա խնդիրների վրա» (ՀՀ): «Ես կփորձեմ կանգ առնել ձեր տված հարցերի վրա» (Հեռուստ.):

Դեպի կապը նույնպես հաճախ ճիշտ չի գործածվում՝ «Հայրը անտարբեր էր դեպի երեխան» (փոխանակ՝ երեխայի նկատմամբ): «Վատ վերաբերմունք ունես դեպի ուսուցիչը» (փոխանակ՝ ուսուցիչ հանդեպ կամ վերաբերյալ):

Առաջադրանքներ

1. Առօրյա թերթերից դուրս գրել վերաբերության խնդիրների մի քանի օրինակներ:

2. Անօրյա թերթերից ու հեռուստատեսությունից գրի առնել վերաբերություն խնդիրների վերաբերյալ սխալ գործածված օրինակներ:

ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԽՆԴԻՐ

Այս խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որով սահմանափակվում, մասնավորեցվում է ենթակայի գործողությունը, կամ ինչ-որ հատկանիշ: Այն լինում է ոչ միայն բայերի, այլև ածականների լրացում: Այսպես, եթե ուսուցիչը ծնողին ասում է, որ նրա երեխան թույլ է մաթեմատիկայից, դա չի նշանակում, թե երեխան ընդհանրապես թույլ է. նրա թույլ լինելը սահմանափակվում է մեկ առարկայով: Այստեղ սահմանափակման անուղղակի խնդիրը մաթեմատիկան է, որ թույլ ածականի լրացումն է:

Սահմանափակման խնդիրը դրվում է բացառական, գործիական և ներգոյական հոլովներով, ինչպես նաև կապական կապակցություններով և պատասխանում է ինչի՞ց, ինչո՞վ և ինչո՞ւմ հարցերին:

ա) **Բացառական** հոլովով՝ Այժմ բոլոր ֆակուլտետներում ընդունելություն քննություն են հանձնում նաև օտար լեզվից: **Խեղքից** պատուհաս մարդիկ էլ կան: **Տեսողությունից** չեմ բողբօում, խեղճանում են լսողությունից:

բ) **Գործիական** հոլովով՝ «Լավ է կույր լինել աչքով, քան մտքով» (Եղիշե): Չարենցը մի առիթով ասել է. «Կուզենայի աղջիկս դեմքով մորը քաշեր, խելքով՝ հորը: Հակառակը եղավ» (Հուշերից):

գ) **Ներգոյական** հոլովով՝ Այս մի հարցում քեզ արդարացնում ես, մյուսում՝ ոչ: Երեխան աշխատանքում շատ լավ է, սովորելում է ծուլանում:

դ) արտահայտվում է նաև կապային կառույցներով՝ Երիտասարդ պրապորչիկը նետաձգության մեջ լավ է, թույլ է սովորելու մեջ (Հայ գինվոր): Ուրիշների նկատմամբ լավ եք վերաբերվում, իրար նկատմամբ անտարբեր եք:

Առաջադրանք.

Նշված հոլովներով և կապերով ինքներդ կազմե՛ք երկուական օրինակներ:

ԲԱՂԿԱՑՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐ

Բաղկացություն խնդիրը մատնանշում է այն առարկան, նյութը, որից կազմվում, բաղկանում, գոյանում է մեկ այլ առարկա՝ Գետեր են գոյանում վտակներից: Գինին պատրաստում են խաղողից: Երևանի Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին կառուցվեց Անիի բաց գույնի սրբատաշ տուֆից: Սանկտ Պետերբուրգի էրմիտաժ թանգարանը բաղկացած է իրար հետ կապված հինգ շենքերից և հազարավոր ցուցասրահներից:

«Հայաստանի երկնքի փոթորիկներից ու կայծակներից է շինված Հայի բնույթը, հոգին» (Ավ. Իս.):

Առաջադրանք

Ինքներդ կազմե՛ք բաղկացություն խնդիրների օրինակներ:

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ (ԲԱՂԿԱՑՈՒԹՅԱՆ) ԽՆԴԻՐ

Այս խնդիրը ցույց է տալիս երկու կամ ավելի անձերի կամ առարկաների հատկանշային համեմատություններ. այն միշտ դրվում է բացառական հորիզով՝ Մասիսը բարձր է Արագածից: Գյումրին հին է Երևանից: Երբեմն համեմատում են երկու կամ երեք, չորս մեծ գրողների և վիճում են, թե ո՞վ է նրանցից մեծը: Ընկերս՝ Գեղամը, մեծ է ինձանից: Տիգրանը խելոք է Արամից: Առյուծը ուժեղ է վագրից:

Առաջադրանք.

Ինքներդ կազմե՛ք համեմատության խնդիրների օրինակներ:

Ամփոփիչ հարցեր

1. Որո՞նք են բայական անդամի լրացումները: Ի՞նչ են ցույց տալիս խնդիրները, ի՞նչ են ցույց տալիս պարագաները:
2. Որո՞նք են սեռի խնդիրները, որո՞նք՝ բնության (թվարկեցե՛ք):
3. Ի՞նչ է ուղիղ խնդիրը, ինչո՞վ է այն պայմանավորված: Մասնական ուղիղ խնդիրը ի՞նչ առանձնահատկություններ ունի:
4. Ի՞նչ է ներգործող խնդիրը, ինչո՞վ է այն պայմանավորված:
5. Որո՞նք են բնության խնդիրները, ի՞նչ առնչություն ունեն բայի սեռի հետ:
6. Ինչո՞վ են իրարից տարբերվում հանգման և մատուցման խնդիրները:

7. Ի՞նչ խնդիրներ են դրվում **բացառական** հոլովով:

8. Ո՞ր հոլովներով է դրվում և էլ ինչպե՞ս է արտահայտվում **վերաբերության** խնդիրը:

9. Ի՞նչ հոլովներով է դրվում սահմանափակման խնդիրը:

10. Ի՞նչ են ցույց տալիս և ինչպե՞ս են արտահայտվում **բաղկացության** և **համեմատության** խնդիրները:

Ամփոփիչ վարժություններ

I

Առանձնացրե՛ք սեռի խնդիրները բնության խնդիրներից և նշե՛ք տեսակները:

Հազրոն նստել է օջախի քարին,
Հիշում է կորած երկիրն ու հողը,
Տխուր նայում է Հայկական պարին
Եվ նվագում է ծիրանի փողը (ԱԲ):


Ես քեզնից դառնացած հեռացա,
Ես քեզնից հեռացա ու լացի (ՎՏ):

Դուրս եկավ, ճոճեց բարակ մարմինը որպես եղեգ և կաքավի մանր քայլերով սուրաց դեպի հնձանը (ԱԲ):

Աղքատություն ես սիրեցի, խեղճի լացը, հառաչանք,
Ես քնարս նվիրեցի վիշտ երգելու և տանջանք (Հ. Հովհ.):

Մովսեսը պատմում էր Արաբոյի և Աղբյուր Սերոբի կռիվներից (ՀՔ): Տարեց տղամարդիկ խմբով նստում էին արևահայաց ու խոսում էին անցած, գնացած օրերի մասին (ՀՔ): Սիրանուշի գերեզմանից (Կահիրե) մի բուռ հող եմ բերել որպես մասունք: Ցնցուղը ձեռքին նա ծաղիկներն էր ջրում և հատիչով ծառերի չոր ճյուղերը հեռացնում: Դառնությունք էր հիշում մանկությունը: Յուրտը վնաս էր տվել ծառերին ու բանջարեղենին: Այդպես էլ չկարողացա լամել այն պղտոր ջրից: Չկարողացա նաև ճաշակել նրա առաջարկած բարիքներից:

Լույսի հրճվանքը տվեց երկնքին,
Կապույտ ծիծաղը ծովին ծավալեց,
Ճերմակ ժպիտը սփռեց ձյուներին,



Վ Ե Հ Ո ւ թ յ ա ն
լսինդը լեռներին
տվեց,
Գ ա շ տ եր ի ն՝
կանաչ ժպիտը
գարնան,
Գ ա յ լ ա յ լ ը
տվեց Հավք ու
Հովերին (ՀԾ):

II

Բ Ե Ր Վ ա ծ
նախադասութուննե
րում անվանե՛ք
խնդիրները և որոշե՛ք
խնդրառու բայերի
սեռը:

Հ ա ն Ե ս ի
ը ն տ ա ն ի ք ը
բաղկացած էր
տասներկու շնչից,
իսկ բնակարանը՝ մեկ
թոնրատնից: Այս
մեկը գերադասվում է
մյուսներից: Արաքսը
ջրառատ է Արփայից:
Մայրս հաճախ էր
գանգատվում իր
անցյալից ու ներկա
կյանքից: Նոր էր
նամակ ստացել
որդուց, երբ փոս-
տատարը նրան
հանձնեց մյուս

որդուն ծառայության
կ ա ն չ Ե լ ու
ծանուցազիրը: Թեև
երեխան ուսման մեջ
ծուլանում էր, բայց
չատ էր օգնում մորը
տնային գործերում:
Սառույցը կոտրում էր
քլունգով, իսկ ձյունը
մաքրում իր
պ ա տ ր ա ս տ ա ծ
թիակով: Ասում են՝
պտուղը ծառից հեռու
չի ընկնում: Հավատա
ինձ, որ անգոր եմ
տիրել իմ հոգուն: Չեմ
հավատում քո
խոսքերին: Համերգին
կատարեցին նաև
Արամ Խաչատրյանի
և Առնո
Բ ա բ ա ջ ա ն յ ա ն ի
դ ա շ ն ա մ ու ր ա յ ի ն
ս տ ե դ ծ ա գ ո Ր ծ ու -
թյուններից: Կուզեի
նմանվել շատերին,
բայց չեմ վստահում
նրանց: Պետք է գրվի
եղած անցուդարձի
մասին, խոսվի
քաղաքում կա-
տ ա Ր Վ ո Ղ
վ եր ա փ ո թ խ ու մ ն եր ի
մ ա ս ի ն: Անտարբեր
չպետք է լինել նաև
թ ե Ր ու թ յ ու ն ն եր ի
նկատմամբ:

Վարդերս ինչո՞ւ
տվիր ուրիշին.
նրանցով էի ես շնչում
միայն: Նրանցով էի
կյանքին կամրջվում,
նրանցով էի հրճվում,
ա ն ր ջ ու մ :
Կամուրջներս դու
ինչո՞ւ այրեցիր:
Վարդերս չկան,
փշերն են միայն,
սիրտս արնոտող
հուշերն են միայն:
Թուփս խոով է. աչքը
չի բացում, խնդրում,
Լալիս եմ, ոչինչ չի
ասում: Վարդերս
ինչո՞ւ տվիր ուրիշին
(ՎԲ):

ՊԱՐԱԳՎԱՆՆԵՐ

Եթե բայական անդամի **խնդիր** լրացումները ցույց են տալիս գործողութայան հետ կապ ունեցող **առարկաներ** (ուղղակի և անուղղակի), ապա բայի լրացում **պարագաները** ցույց են տալիս գործողութայան հետ կապ ունեցող **հանգամանքներ՝** որակական և քանակական (տեղ, ժամանակ, ձև, նպատակ, պատճառ, պայման, հիմունք, հակառակ հիմունք, չափ, քանակ և այլն):

Հիշենք, որ ինչպես խնդիրները, այնպես էլ պարագաները լրացնում են ոչ միայն դիմավոր բայերին, այլև բայի **անդամ ձևերին՝** անկախ դերբայներին, այդպես էլ՝ որոշ ածականների, բայանուն գոյականների, մակբայների և այլն:

Պարագաներն արտահայտվում են՝ **մակբայներով, գոյականների հոլովաձևերով, ածականներով, անկախ դերբայներով, հատկանշային դերանուններով, կապերով ու կապի խնդիրներով և բառակապակցություններով՝** Մեքենան արագ է սլանում, Նա միշտ այդպես է խոսում, Երեխան վազելով դպրոց գնաց: և Ուտքով տուն գնացի: Բերված բոլոր օրինակներում ընդգծված բառերը ձևի պարագաներ են՝ առաջին երեքը արտահայտված ոչ գոյականներով, իսկ չորրորդը՝ **ուտքով** գոյականով: Ըստ այդմ էլ Մանուկ Աբեղյանը պարագաները բաժանում է երկու խմբի՝

1. **բուն պարագաներ** (սրանք մակբայներով և այլ խոսքի մասերով հանդես եկող պարագաներն են),

2. **պարագայական խնդիրներ** (սրանք գոյականների հոլովված ձևերով կամ հոլովակապային կառույցներով հանդես եկող պարագաներն են):

Մ. Աբեղյանը շատ որոշակի գրում է. «**Բուն պարագաները** արտահայտվում են **մակբայներով** և իբրև մակբայ գործածված **ածականներով**, օրինակ՝ Կամաց խոսեցե՛ք: **Երբեք** մեկին չեմ նախանձում ես աշխարհում: Պարագայական **խնդիրները** արտահայտվում են **գոյականով՝** մենակ կամ որևէ կապով: Օրինակ՝ «Նա քաղաքից վերադարձավ **պուղ**», «Մարդը պետք է **խղճմտանքով** խոսի»: Եվ նույն տեղում Աբեղյանը բացատրում է՝ «Ինչքան էլ **քաղաքից** (որտեղի՞ց, ինչի՞ց)» և **պուղ** (որտե՞ղ, ո՞ւր) լրացումները խոսքի մեջ տեղի պարագա են նշանակում, բայց և այդպես **քաղաքից** բացառական հոլովն ու **պուղ** ուղղական-հայցական հոլովը կատարե-

լապես պահում են իրենց կենդանի հոլովական նշանակութունը, հետևաբար քաղաքից ու գյուղ լրացումները չի կարելի իսկական պարագաների, այսինքն՝ մակբայների մեջ դնել, դրանք գոյականներով արտահայտված պարագայական խնդիրներ են»:

Այս դեպքում կարող է հարց առաջանալ, թե ինչու պարագայական խնդիրները պարագաներից չեն անջատվում և որպես խնդիրներ չեն դիտվում:

Այս հարցի պատասխանը նույնպես տալիս է նրբանկատ հայագետը: Նա ասում է. «Նման լրացումները խնդիրներ են, որովհետև պահում են իրենց հոլովական ձևերը և հոլովական հատուկ նշանակութունները: Մյուս կողմից, սակայն, դրանք պարագաներ են, որովհետև խոսքի մեջ դրվելով բայի վրա՝ կորցնում են իրենց առարկայական իմաստը»*:

Նկատելի է, որ մարմնի մասերի անվանումներով արտահայտված լրացումները հիմնականում ձևի պարագաներ են:

Քննենք հետևյալ նախադասությունները՝

«Զբոսաշրջիկները երևանում շրջեցին մեքենայով» և «չրջեցին ոտքով»:

Այստեղ ոտքով-ի դեպքում տրվում է ինչպե՞ս հարցը (ինչպե՞ս շրջեցին), ուրեմն՝ այն ձևի պարագա է՝ արտահայտված գոյականի գործիական հոլովով, իսկ շրջեցին մեքենայով-ի դեպքում սովորաբար տրվում է ինչո՞վ հարցը, հետևաբար այն միջոցի խնդիր է, բայց կարելի է տալ նաև ինչպե՞ս հարցը (ինչպե՞ս շրջեցին) այս դեպքում նույն մեքենայով գոյականը կլինի ձևի պարագա:

Երկու դեպքում էլ, գործ ունենք պարագայական խնդիրների հետ:

Առարկայական և պարագայական խնդիրների տարբերակման հիմնական միջոցը հարցադրումն է. քանի որ առարկայական խնդիրները գոյականներ են, ուրեմն պետք է պատասխանեն գոյականների խնդիրը հարցերին (ի՞նչ, ո՞ւմ, ինչի՞նչ, ումո՞վ, ինչո՞վ, ումի՞ց, ինչի՞ց), իսկ պարագայական խնդիրները քանի որ մտածվում են որպես հատկանիշներ, վիճակներ, հանգամանքներ, պատասխանում են մակբայներին և դրանց հարաբերակից բառերին տրվող հարցերին (ո՞ւր, որտե՞ղ, ե՞րբ, ինչքա՞ն, որքա՞ն, ինչպե՞ս, ինչո՞ւ, ինչի՞ հիման վրա, ի՞նչ նպատակով, ի՞նչ պատճառով և այլն):

* Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965, էջ 382:

Բերենք բուն պարագաների և պարագայական խնդիրների բնագրային օրինակներ.

Բուն ձևի պարագա՝

Մենուիթյան խավար զնդանից կրկին,

Ես վերադարձա հզոր ու հպարտ (ՎՏ):

Դու անհոգ նայեցիր իմ վրա (ՎՏ):

Պարագայական խնդիր ձևի պարագա՝

Աշխենը հոգով ու սրտով նվիրված էր իր սիրելիին (Բաֆ.):

Սայաթ-Նովան ամպի նման տխուր մնաց (ԵԶ):

Բուն տեղի պարագա՝

Ամենուրեք տիրում էր տխուր, անապական դատարկություն (Բաֆ.):

Դեմը քաղաքն էր տարածվել հազարամյա (ԵԶ):

Պարագայական խնդիր տեղի պարագա՝

Յուպը ձեռքիս գեղը մտա, Անցա յարիս տան ճամփով (Ավ. Իս.):

Ծաղիկ ես սարում, անտառում, արտում (ՎՏ):

Առաջադրանք.

Ինքներդ կազմեցե՛ք 5-ական բուն պարագաներ և պարագայական խնդիրներ:

ՏԵՂԻ ՊԱՐԱԳԱ

Տեղի պարագան բայ-ստորոգյալի (կամ անկախ դերբայի) այն լրացումն է, որը ցույց է տալիս այն տեղը, որտեղ կատարվում է, դեպի ուր ուղղված է, որտեղից սկսվում է, որտեղով ընթանում է ենթակալի գործողությունը: Այն պատասխանում է ո՞ւր, որտե՞ղ, դեպի ո՞ւր, որտեղի՞ց, որտեղո՞վ, մինչև ո՞ւր և նման հարցերին:

Տեղի պարագան արտահայտվում է՝ տեղի մակբայներով ու զրանց հարաբերակից դերանուններով, գոյականների բոլոր հոլովներով (բացի ուղղականից ու սեռականից), տեղ ցույց տվող կապերով ու կապի խնդիրներով և բառակապակցություններով.

1. Տեղի մակբայներով՝ **Ամենուրեք** տիրում էր երգ ու ծիծաղ (ՊՂ): Բարձրանում էին **վերև**, իջնում էին **ներքև**, կորուսյալին չէին գտնում (ՍԳ): **Առաջ** ու **ետ** էին անում, էլի չէին տեսնում (ն. տ.):

2. Ցուցական և հարցահարաբերական դերանուններով՝ Ո՞ւր

գնացին ծաղիկները, Որտե՞ղ է ընկած այն քարը Հիմի, Ո՞ր հողիս վրա չիրիմ պիտ լինի (Ավ. Իս.): Չգիտեմ՝ որտեղից է գալիս ջութակի հեկեկանքը տրտում (ՎՏ):

3. Գոյականի 5 հոլովներով.

ա) Տրական՝ **Կաքավաբերդի գլխին տարին բոլոր ամպ է նստում (ԱԲ):**

Դուռն չեմին յարիս տեսա, մոլորվեցի երա՞զ է սա (Ժող. երգ):

Փերինները սարի գլխին հավաքվեցին գիշերով (ՀԹ):

Գլխարկը դրեց **գլխին**, թիկնոցն առավ **ուսերին**, ակնոցը դրեց **աչքերին** (ՊՂ):

բ) Հայցականով՝ Ուսուցիչը դասարան է մտնում՝ թխաչյա ու ցոլակն մանուկներին հայոց գրերը սովորեցնելու (ՀՔ): Եվրոպայից Կոմիտասը վերադարձավ **Հայաստան**՝ իր սիրելի ժողովրդին ծառայելու: **Հնձան** է մտնում ծեր Դիլան դային (ԱԲ): Հայ լեռները բարձրանում են **մինչև աստղերը**, ձորերը և սուզվում են **մինչև երկրի անդունդները** (Ավ. Իս.):

գ) Բացառականով՝ Տուն էին դառնում գյուղի **աղբյուրից** երեք մայրերը կծերը ուսերին (ՍԿ): Թևը ջարդած հավքի նման դուրս թռավ Սոնան հնձանից (ԱԲ): ...էն **Թմկա բերդից** Թաթուլն է իջնում (ՀԹ):

դ) Գործիականով՝ Մայր Արաքսի **ափերով** քայլամոլոր գնում եմ (ՌՊ):

Սարերով ու լայն դաշտերով սլանում է դիվիզիան (Ժող. երգ): ...Անցա յարիս տան ճամփով (Ավ. Իս.): **Միջանցքով** անցավ տնօրենը:

ե) Ներգոյականով՝ **Մթնաձորում** այժմ էլ թավուտ անտառներ կան (ԱԲ): Ծաղկել ես սարում, անտառում, արտում, Ուրիշ երգեր են հնչում իմ սրտում (ՎՏ):

4. Տեղի պարագան արտահայտվում է նաև կապական կառույցներով (մեջ, դեմ, դիմաց, տակ, վրա, ներս, դուրս, դեպի, առաջ, մինչև, միջև, մոտ, ներքո և տեղ ցույց տվող նման կապերով)՝ **Ամպի տակից** ջուր է գալիս (ՀԹ): **Բնության մեջ** ոչ մի իր արժեքը չունի... (Ավ. Իս.): **Գյուղից դուրս** մի հին մատուռ կա (ՊՂ):

5. Տեղի պարագան արտահայտվում է նաև բառակապակցություններով՝ **Ինչպես մի հեղեղ վեր կենար հանկարծ երկրնքի մթնածամպերից** իջներ (ՀԹ): **Զանգեզուրի երկնաքեր ժայռերի ծերպերում** բույն են դրել ցինն ու արծիվը (ՎԳ):

Վարժուիթյուն 1: Առանձնացնել տեղի պարագաներն իրենց ստորոգյալների հետ և ասել գոյականների ո՞ր հոլովներով են դրված կամ ինչո՞վ են արտահայտված:

Հավքն արթնացավ ծառին, Քարայծն ելավ քարին, և ինձ մի պահ թվաց՝ քարերի տակ քնած դարերը վեր թռան (ՀՍ): Գալիս է հոտը՝ ներին առջևից, գամփոը ետևից, Ուղտը մի թևից, Թուխպը մի թևից (ՀՍ): Հանգստանում էր հողմը բացատում (ՀՍ):

Եթե լույսը չլիներ Էդիսոնի գլխում, որտեղի՞ց պիտի բխեր էլեկտրական լույսը (ԳՀ): Լեռներից իջնող քամին մտավ ծառերի սաղարթների մեջ, ծառերը սկսեցին խոսել աստղերի հետ (ԳՀ): Հանճարեղ վանականը իր խցիկում տեղավորեց ողջ աշխարհը և այնտեղից խոսեց աստվածների հետ (ԳՀ):

Ախր ուրիշ տեղ հայրեններ չկան, Ուրիշ տեղ հորովել չկա, Ուրիշ տեղ սեփական մոխրում սեփական հոգին խորովել չկա (ՀՍ):

Արնոտել է ոտքը ճամփին քարքարոտ,
Մանգաղն ուսած, գաղթի մախաղը մեջքին,
Դեռ քայլում է սարով, ձորով, աշխարհով՝
Քելե՛, լաո՛, քելե՛ հրթանք մըր հերգիր (ՍԿ):

Նրանք գալիս էին բարձրավանդակի տափաստանից, որի մեջտեղ աղամանդի նման ջինջ լիճն էր՝ քարոտ ափին՝ հին գյուղը, որի կիսավեր վանքը քարափից ցուք էր գցում ջրերի վրա, և թվում էր, թե ջրերի տակ սուզվել է մի մեռած վանք, ու սպիտակ բաղբըրը գիշերում են նրա մոայլ խորանում (ԱԲ):

Վարժուիթյուն 2: Վերևում բերված օրինակներից առանձնացնել բուն պարագաները և պարագայական խնդիրները (ձեր ընտրություններ):

ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՐԱԳԱ

Ժամանակի պարագան ցույց է տալիս ենթակայի կատարած գործողությունների կատարման ժամանակը, նրա տևողությունը, սկիզբն ու ավարտը: Այն արտահայտվում է ժամանակի մակբայներով, գոյականի 5 հոլովաձևերով, որոշ անկախ դերբայներով, որոշ դերանուններով, գոյականների ու թվականների, ինչպես նաև կապային կապակցություններով, բառակապակցություններով և դարձվածային

միավորներով ու պատասխանում է **Ե՞րբ, երբվանի՞ց, մինչև Ե՞րբ, ինչքա՞ն ժամանակ, քանի՞ րոպեով, ժամով, օրով, տարով և այլն:**

Ժամանակի պարագան արտահայտվում է՝

1. Ժամանակի մակրայներով՝ **Առաջ** դիտի՛ր, **հետո՞** դատի՛ր (Ավ. Իս.): **Վաղուց-վաղուց** ես դու ինձ մոտացել (ՀԹ): **Այժմ** պատասխան տուր **երեկվա** արածներիդ համար (ՊՂ): **Երեկոյան** տուն դարձանք դատարկաձեռն (ՎԱ):

2. Գոյականի տրական, հայցական, բացառական, գործիական և ներգոյական հոլովներով

ա) Տրականով՝ Քննություններն սկսվում են **Հունիսին: Մայիսին** բացվում է վարդը, սոխակն երգում անուշակ: Դասերն սկսվում են **ժամը իննին: Կեսգիշերին** հնչեց հեռախոսազանգը: **Ամռանը** զնալու ենք հանգստանալու:

բ) Հայցականով՝ **Ձմռան մի գիշեր** կար մի հարսանիք (ՀԹ): **Գիշերը** ձյուն եկավ: **Ամեն տարի** բնական աղետներ լինում են: **Մի տարի** ընկերներով որսի զնացինք:

գ) Բացառականով՝ **Այսօրվանից** հանձնում եմ քեզ հայոց լեզուն հազարագանձ: **Մենք** ամենքս հյուր ենք կյանքում **մեր ծննդյան փուչ օրից** (ՀԹ): **Նա մանկությունից** էր արվեստի սիրահար: **Երկու ժամից** կվերադառնամ:

դ) Գործիականով՝ Ժուկով-ժամանակով երկրի վրա եղել է մի բարի թագավոր (Ժող. հեք.): Գալիս էին աշկարա՝ **օրը ցերեկով** (ՂԱ): Սոված, պատած շորերով, կորչում էր **նա օրերով** (ՀԹ):

ե) Ներգոյականով՝ Ավարայրի ճակատամարտը տեղի է ունեցել **հինգերորդ դարում: Այդ դարում** էլ ստեղծվել են հայոց գրերը: **Երագումս** մի մաքի մոտս եկավ հարցմունքի (ՀԹ): **Ներկա օրերում** էլ ինչ սև քնար... (ՄՆ):

3. Որոշ անկախ դերբայներ նույնպես դառնում են ժամանակի պարագա՝ **Ուտելիս** չեն խոսում: **Գրելիս** ուշադիր եղիր (համակատար): **Հասնելով** բերդի ավերակներին՝ նստեցինք հանգստանալու: **Ավարտելով** գործս՝ տուն եկա (անորոշ): Դեռ **ջուրը չտեսած** մի՛ բորիկանա: **Զին չառած** մտուր չեն կապի (հարակատար):

4. Ժամանակի պարագան ավելի հաճախ հանդես է գալիս կապային կառույցներով՝ **առաջ, հետո, անց, ժամանակ, անգամ, ի վեր, միջոցին, նախքան, պահին, մոտ, օրոք** կապերի հետ գործածվելով: **Մի քանի օրինակներ՝ Ոոսելուց առաջ** պետք է մտածել: **Վերջին խոսքի վրա** դանգը հնչեց: **Զանգը տալուն պես** մտանք լսարան:

Մինչև ուշ գիշեր աշխատում էի: Նախքան գիրք գրելը հողվածներ էի գրում: Ժամանակ կապական բառը ավելի շատ է գործածվում՝ Զմեռ ժամանակ տաք են հագնվում: Ուտելու ժամանակ չեն խոսում: Հին ժամանակ լավ չէինք ապրում:

Վարժուիթյուն 3: Որոշել, թե ժամանակի պարագաները ինչո՞վ են արտահայտված և գոյականների ո՞ր հոլովներով են դրված:

Մանկուիթյունս հիշելիս՝ սիրտս լցվում է գինով.
Ես մի ընկեր ունեի Լիպո անունով (ԵԶ):

Երբ կհոգնես, կգաղաղես աշխարհից՝
Դարձիր իմ մոտ, վերադարձիր դու նորից (ՎՏ):

Մեզ տեսնելուն պես՝ եղնիկը ցատկեց տեղից ու սրընթաց փախավ (ՎԱ):

Այդ ամբողջ օրը իմ հոգին լցված էր բուռն զգացումներով ... Երեկոյան ես հեռագիր ստացա. մի ծանր նախազգացում այդ գիշեր ինձ գրկեց քնից: Առավոտյան ես հրաժեշտ տվեցի Եղիչ Զարենցին: Բա՛ ժանվելիս նորից ողջագուրվեցինք... Ես այլևս Զարենցին չտեսա և էլ չլսեցի նրա ձայնը (Նորենց):

Իրիկնապահին մի անգամ էլ երևաց գյուղը: Մյուս օրը քաղաք մտան (ՀԹ): Մթնածորում այժմ էլ թավուտ անտառներ կան, ուր ոչ ոք չի եղել... Թվում է, թե այդ մոռացված մի անկյուն է այն օրից, երբ դեռ մարդ չկար (ԱԲ):

Լուսաբացին նա բարձրացավ կախաղան (ՎՏ): Վաղուց նրանք սպասում են ինձ: Կեսօրին լավում էր արևավառ աղջիկների և հարսների խաղողաքաղի զրնգուն երգը: Կարծես ընդմիջտ դադարել էր այն ընդհանուր եռանդը, որ տարվա այդ միջոցին լինում էր Արաբատայան դաշտում... չինականներն չտապում էին տեղ հասնել ժամանակից առաջ (ՍԶ):

Վարժուիթյուն 4: Ստորև բերված նախադասուիթյուններից դո՛ւրս գրել կապերով ու կապական բառերով ձևավորված ժամանակի պարագաները՝ իրենց լրացյալներով և որոշել կապվող բառերի հոլովները:

Զնծադիկների երևալուն պես գալիս էին արագիլները (Ավ. Իս.):
Մենք կայինք նաև նրանից առաջ և դարեր առաջ (ՊՍ): Աշխատեցինք մինչև երեկո (ՊՂ):

Մթնածոր տանող միակ արահետն առաջին ձյունի հետ փակվում էր. մինչև գարուն ոչ մի մարդ ոտք չի դնում անտառներում ... Գիշերվա հետ որսի են ելնում Մթնածորի բնիկները: Պանինը շներին կշտացնելուց հետո վերադառնում է տուն... Հարուդին տարան ճամփա դրին մինչև գյուղի վերջը: Հաթամի աղջիկն այդ նամակն ստանալուն պես տուն է վազում, երեկոյան դեմ հայտնում է մորը (ԱԲ): Փոքր ժամանակ երեխաները առաջին անգամ լսում են Թումանյանի, Աղայանի, Խնկո ապոր ոտանավորները: Վաղուց ի վեր չէի լսել այդ մասին:

Առաջադրանքներ

1. Բերված երկու վարժություններից դուրս գրել/հինգական բուն պարագաներ և պարագայական խնդիրներ:

2. Կազմել նախադասություններ հետևյալ կապական կառույցներով՝ այդ օրից ի վեր, կոմունիստների ժամանակ, Կարեն Դեմիրճյանի օրոք, ՀՀԾ-ի ժամանակ, նախքան սովորելս, խոսքի վրա, այն օրից ի վեր, մեզանից հետո...

ՁեՎԻ ՊԱՐԱԳԱ

Ձևի պարագան ցույց է տալիս, թե ինչպես, ինչ եղանակով, ինչ կերպ է կատարվում գործողությունը. այն արտահայտվում է ձևի մակրայներով, որակական ածականներով, ցուցական և հարցահարաբերական դերանուններով, գոյականի տարբեր հոլովաձևերով, անորոշ և հարակատար դերբայներով, կապական բառերով ու բառակապակցություններով (դերբայական դարձվածներով ու դարձվածային միավորներով): Ձևի պարագան պատասխանում է՝ ինչպե՞ս, ի՞նչ ձևով, ի՞նչ կերպ հարցերին:

1. Ձևի մակրայներով՝

Բարբարոսներ շատ կգան ու կանցնեն **անհետ**,
Արքայական խոսքը մեր կմնա **հավետ** (ՎՏ):

Դանդաղ է քայլում հոգնատանջ իմ ձին: Ուզում եմ մեկին **քնքշորեն** սիրել (ՎՏ): Ծովն է մտնում **գաղտագողի** ամեն գիշեր մի տղա (ՀԹ): **Արագ** ես վարգում քո ձին:

2. Ձևի պարագայի պաշտոնում առատորեն հանդես են գալիս որակական ածականները՝ **Անուշ** նիրհեցին ծով, անտառ ու լեռ: **Ննջեցին անուշ** երկինք ու երկիր: ... Կանգնիր **հպարտ**՝ որպես լույս

լեռն է մեր կանգուն (ՎՏ): Ո՞ւր գնացին՝ խեղճ ու կրակ, ոտաբորիկ տարիներս (ՀՍ): **Ծանր** նստել է քարափը ձորում (ՀՍ):

Ճիշտ է, բայերի հետ գործածվելիս որակական ածականները ձևի պարագայի պաշտոն են կատարում, հանդես են գալիս **մակերայաբար**, բայց որպես խոսքի մաս մնում են ածականներ և ոչ թե վերածվում են մակերայների, ինչպես կարծում են որոշ լեզվաբաններ:

3. Դերբայներից ձևի պարագայի գործածությունը հանդես են գալիս՝

ա) **անորոշ դերբայի** գործիական հոլովը՝ Երկու փետուր օրորվելով վայր ընկան աչնան տերևի նման (ԱԲ): Հնձանի առաջ խոխոջալով հոսում էր առվակը (ԱԲ): **Երգելով** իջավ բեմից ու շնջալով ասաց... (ՍԳ):

բ) **Հարակար դերբայը՝ Հոգնած** նայում եմ ճամփաներին, սերմնացանները չդարձան տուն (ԳՍ): Ես քեզնից դառնացած հեռացա (ՎՏ): Պիտի պարեն խելագարված:

Ծանոթություն: Ձևի պարագայի դեր են կատարում նաև այնպիսի կառույցներ, որտեղ հարակատար դերբայը զեղչված է լինում: Օրինակ՝ Դասողեկին մոտեցավ երեխան՝ ծաղկեփուռն ձեռքին (զեղչված է բռնած դերբայը): Նստած միտք էր անում Դիլան դային՝ ականջը սիմֆոնիային խշռոցին (զեղչված է պահած դերբայը):

4. Ձևի պարագայի դերում հանդես են գալիս նաև ցուցական և Հարցահարաբերական դերանուններ՝

Ախր ես ինչպե՞ս վեր կենամ, գնամ,

Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ...

Ախր ես ինչպե՞ս ապրեմ առանց ինձ (ՀՍ):

Դու ինձ այնպես ես սիրում, Որ կարծես չես սիրում (Ավ. Իս.):

Էսպես է ասել հնուց էդ մասին Փարսի բլրուր՝ անմահ Ֆիրդուսին (ՀԹ):

5. Այս դերում կարող են հանդես գալ գոյականի գործիական և ներգոյական հոլովները՝ Մեր սուրը փառքով դրեցինք պատյան (Ավ. Իս.): Ես ժպիտով մահիս կզնամ (ՀՇ): **Քաջուլթյամբ** հաղթեցինք: **Ուրախությամբ** ընդունեցինք (գործիական) :

Գոյականի ներգոյական հոլովը ավելի սակավ կիրառություն ունի՝ Երեխան դասը մտքում է կարգում: Կան մարդիկ, որ քթում են խոսում:

Գոյականների կրկնությունը կազմված մակրայներով նույնպես ձևի պարագաներ են կազմվում՝ Եվ անապակ գինին չիթ առ չիթ ծորում էր մատների արանքով (ԱԲ): Եվ կարդում էր ապագայի ոսկետառ գիրքը էջ առ էջ (Ավ. Իս.):

6. Ձևի պարագան արտահայտվում է նաև կապային կառույցներով (պես, նման, ինչպես, որպես, անկախ, վրա, տակ): Օրինակներ՝ Մանկություն օրեր երազի նման անցաք, գնացիք (ՄՆ): Արևի պես, երկիր իմ կմնաս վառման (ՎՏ): Գյուղի գլխը բեղի տակ ծիծաղում էր ու քայլում թաթերի վրա (Սն):

7. Դերբայական դարձվածներն ու դարձվածային միավորները նույնպես մեծ կիրառություններ ունեն այս պաշտոնում. այդպես էլ՝ սովորական բառակապակցությունները՝

**Մանուշակներ ոտքերիս ու շուշաններ ձեռքերիս,
Ու վարդերը այտերիս, ու գարունը կրծքիս տակ...**
Սարից իջա ես քաղաք (ՀՇ):

**Հայացքն ուղղած դեպի երկինքը անսահման,
Կանգնել էր Կոնիտասը, ինչպես տաճարի սյուն (ԳՍ):**

**Ուրիշների պնակները լիզելով ու ընկերոջ տակը փորելով Հասավ
իր նպատակին՝ աթոռի տիրացավ:**

Վարժություն 5: Ընդգծել ձևի պարագաները և ասել, թե ինչ խոսքի մասերով կամ ինչպիսի բառակապակցություններով են արտահայտված:

Աշխարհից հեռու մի գյուղում, եղեգնյա մի սրինգ կտրած,
Արև է երգել ու գարուն այս հիվանդ, հանճարեղ պատանին (ԵԶ):

Մեջքի վրա պառկած՝ գուշակություններ է անում: Հարցերը լուծում է ոտքի վրա: Ինչպես եք ապրում, դու ձեզնից պատմիր (ՀԹ): Սիրով ընդունեց առաջարկս: Ուշադրությամբ էինք լսում նոր դասախոսին: Նա գեղեցիկ էր խոսում և լավ էր բացատրում դասը: Մարդ պետք է հույսով ապրի ու հույսով մեռնի (Ավ. Իս.): Երբ մարդ իր հայրենակցի հետ մայրենի լեզվով չի խոսում, կարծում է, թե սուտ է խոսում (Ավ. Իս.): Միմոնն արագ արձակեց ձիու կապերը: Գյուղացիները շունչները պահած, անսահման հետաքրքրությամբ դիտում էին (ԱԲ): Դանդաղ է քայլում հոգնատանջ իմ ձին (ՎՏ): Արևը փայլում էր մերթ ընդ մերթ: Ազվեսն ինձ խաբեց անուշ խոսքերով ու

տանում է ինձ համոզելով (Աթ. Խնկ.): Աչքերդ ամուր փակիր, ինձ քնքուչ գրկիր (ԳԹ): Զեռ ու ոտ ընկնելով՝ գործդ առաջ չես տանի: Խոսքը կտուրը գցելով՝ գլուխդ չես ազատի:

Վարժուիթյուն 6: Վերևում բերված վարժուիթյունից դո՛ւրս գրեք ածականներով արտահայտված ձևի պարագաները և կազմեցե՛ք ուրիշ նախադասուիթյուններ՝ նույն ածականները դարձնելով որոշիչներ:

Առաջադրանք: Կազմեցե՛ք նախադասուիթյուններ՝ որպես ձևի պարագաներ գործածելով հետևյալ բառերն ու բառակապակցուիթյունները՝ հոգնել, հոգնած, բարեկամաբար, հերոսուիթյամբ, քաջի պես, մեծերի օրինակով, ընկերներին հետևելով, գաղտագողի, անուշ, խելոք, հրով ու սրով, մտքում կարդալով:

ՆՊԱՏԱԿԻ ՊԱՐԱԳԱ

Նպատակի պարագան ցույց է տալիս գործողուիթյան կատարման նպատակը և պատասխանում է ինչո՞ւ, ինչի՞ համար, ի՞նչ նպատակով հարցերին:

Արտահայտվում է՝

1. Անորոշ դերբայի տրական հոլովով՝ Կոմիտասը Մանթաշովի հովանավորուիթյամբ գնաց Բեռլին սովորելու: Երեխաները իջան գետը լողանալու: Ընկերներով գնացինք ամառանոց՝ հանգստանալու և գետից ձուկ բռնելու:

2. Անորոշ դերբայով կազմված դերբայական դարձվածներով՝ Վարագներն իջնում էին ջուր խմելու: Աղջիկները գնացին դաշտ՝ ծաղիկ քաղելու:

3. Գոյականի տրական հոլովով՝ Գնացի զեկուցման: Երեխան գնաց հացի: Գյուղն էին իջել հովիվ պատանիք՝ աղջիկ տեսնելու, պարի ու կոխի (ՀԹ):

4. Արտահայտվում է նաև համար, հանուն, նպատակով կապերով ու իրենց խնդիրներով՝ Նպատակին հասնելու համար միջոցների մեջ խտրուիթյուն չէր դնում: Կոմիտասը ընկերով հետ Հաոխ՝ գնաց նոր երգեր հավաքելու նպատակով: Հանուն ինչի ենք պայքարում՝ արդար ընտրուիթյունների:

Վարժուիթյուն 7: Դո՛ւրս գրել նպատակի պարագաները և ասել, թե ինչով են արտահայտվել, որոշել կետադրուիթյունը:

Առավոտյան ընկերներով իջանք քաղաք զրոսանքի: Նախ մտանք Մատենադարան՝ ծանոթանալու մեր Հին ձեռագիր մատյաններին: Բարձր տրամադրություններ դուրս եկանք այդ ինստիտուտից և ուղևորվեցինք դեպի Մ. Սարյանի տուն-թանգարան՝ մեկ անգամ ևս հաղորդակցվելու գույների գեղեցիկ աշխարհին, վրձնի մեծ վարպետի արվեստին: Այստեղից իջանք Հանրապետություն հրապարակ՝ մեկ անգամ ևս զմայլվելու անմահ Թամանյանի անմրցելի ճարտարապետությամբ, ապա բարձրացանք պատկերասրահ՝ դիտելու տարբեր ազգերի նկարիչների վրձնահարված կտավները:

Ու դաշտ եմ ելնում ես կրկին ահա,
Ինչպես հնձվորն է ելնում հնձի (ԵԶ):

Եկել եմ նորից այս վայրերն այցի (ՀՄ):

Առաջադրանք: Գրե՛ք փոքրիկ շարադրություն՝ նպատակի պարագաներով:

ՊԱՏՃԱՌԻ ՊԱՐԱԳԱ

Ստորոգյալի այս լրացումը նշում է այն հանգամանքը, որը պատճառ է դառնում ենթակայի գործողության կատարման համար. այն արտահայտվում է գոյականի բացառական, գործիական, անորոշ դերբայի բացառական հոլովներով, կապական կառույցներով, բառակապակցություններով և պատասխանում է **ինչո՞ւ, ինչի՞ց, ի՞նչ պատճառով** հարցերին:

Պատճառի պարագան արտահայտվում է՝

1. Գոյականի բացառական հոլովով՝ **Նեղճը դողալով, անհույս կռացավ, դարդից չորացավ՝ ուռնի դարձավ (ՀԹ):** Լեզուն կարող է սարսափից լալկվել, կապ ընկնել **ահից (ՊՍ):**

Այս այն քարերը, ծանր քարերը, ամռան շոգից շիկացել, արևից կիզվել, մի կաթիլ ջրի տենչից այրվել են, սառնամանիքից ճաքվել, կիսվել, ճյունամրրիկից հողմահարվել են (ՎԴ): Քո վատ բնավորությամբ հաջողության չհասար:

2. Անորոշ դերբայը բացառական հոլովով՝ **Շտապելուց թև են առել, դարձել թեթև թիթեռներ (ՀԹ):** Նեղճ մայրը այրվում էր կարոտից ու լալուց (ՊԳ): Շատ կարդալուց հոգնել էր, շատ խոսելուց՝ ձանձրացել (ՈՂՆի):

3. Արտահայտվում է նաև պատճառով, հետևանքով, ձեռքից, երե-

սից կապական բառերով՝ Առատ ձյան հետևանքով հեղեղատներ առաջացան: Կարկուտի պատճառով ծառապտուղը սակավ եղավ: Արթուրը տուժեց ընկերոջ երեսից:

4. Տարբեր կառուցվածքի բառակապակցություններով՝ Մամիկոնյան իշխանը վաղուց հասկացած լինելով այդ ճշմարտությունը, նրանց թողել էր իրենց կամքին (Րաֆ.):

Ցնծություն ձայնից, ծափերի զարկից

Շարժվում են, դողում պատեր ու օձորք (ՀԹ):

Հիշի՛ր համար, շնորհիվ, առթիվ կապերը պատճառի պարագայի նպատակով ճիշտ չէ գործածել: Այդ կապերը ձևավորում են հիմունքի պարագաներ, իսկ համար կապը՝ նաև նպատակի: Օրինակ, սխալ է ասել «Աշոտին պատժեցին չարություն համար», «Նա նկատողություն ստացավ բացակայությունների շնորհիվ» և այլն:

Առաջադրանք. Տրված բառերով կազմեցե՛ք պատճառի պարագաներով նախադասություններ՝ սարսափ, վիշտ, ուրախություն, հուզմունք, անհաջողություն, բացակայություն, շատախոսություն, կարդալ, երգել, բացականչել, վազել, քնել, պատճառով, երեսից, ձեռքից, պատճառաբանությունամբ...

ՀԻՄՈՒՆՔԻ ՊԱՐԱԳԱ

Սա բայական անդամի այն լրացումն է, որ ցույց է տալիս գործողության կատարման հիմունքը, այսինքն՝ այն անձը, առարկան, հանգամանքը, որ նախադրյալ է հանդիսանում որևէ գործողության, եղելության իրականացման համար: Այն դատողության, մտքի փաստական հիմունքն է: Այս պարագան պատասխանում է **ինչի՞ց, ի՞նչ հիմունքով, ինչի՞ հիման վրա** հարցերին և արտահայտվում է՝

1. Գոյականի բացառական և գործիական հոլովներով՝ Հրաչյա Աճառյանը իր՝ քառասուն տարի չտեսած ընկերոջը ճանաչում է դռան հետևից լսվող **ձայնից**: Օտար մարդկանց ճանաչում էր **հագուստից ու գլխարկից** (բացառական):

Ներսես Մեծը կայսեր հրամանով աքսորված էր Պատմոս անմարդարենակ կղզին (Րաֆ.): Ներկայացա ձեր **կարգադրությունամբ**: Ուտիկանները ղեռ հեռվից ճանաչվում են իրենց **համազգեստով**: Եկա հորս **պահանջով**:

2. Հիմունքի պարագան արտահայտվում է նաև ըստ, չնորհիվ, հիման վրա, առիթով, համաձայն, կարծիքով, նայած կապերով ու կապի խնդիրներով՝ Ըստ ունկտորի կարգադրություն՝ քննություններն ավարտվելու են հուլիսի սկզբներին: Համաձայն Ազգային ժողովի որոշման՝ այս տարի վերադարձվելու են ավանդները: Իմ կարծիքով նա արժանի էր դրան: Խնդիրը լուծվեց ուսուցչի բացատրություն հիման վրա:

Համար կապը նույնպես կարող է հիմունքի պարագա ձևավորել: Օրինակ՝ Հաջող ելույթի համար պատգամավոր առաջադրվեց: Ընկերասիրության համար ենք հարգում մեր ավագին:

Կապական կարույցներն իրեն հիմունքի պարագաներ գործածվելիս նախադաս և ետադաս կիրառությունը տրոհվում են բովանդակ:

Առաջադրանք. վերևում նշված կապերով ու պապական բառերով ինքներդ կազմե՛ք հիմունքի պարագայով նախադասություններ:

ԶԻՋՄԱՆ (ՀԱԿԱՌԱԿ ՀԻՄՈՒՆՔԻ) ՊԱՐԱԳԱ

Այս պարագան իմաստով փաստորեն հակադրվում է հիմունքի, պատճառի և պայմանի պարագաներին: Այն հիմնականում արտահայտվում է կապերով ու իրենց խնդիրներով. ահա այդ կապերը՝ Հակառակ, չնայած, չնայելով, փոխանակ, փոխարեն, թեև, հանդերձ:

Բերենք նշված պարագաներին հակադիր օրինակներ.

ա) **Հիմունքի պարագա՝** «Համաձայն իմ սովորության՝ դասերից հետո գրադարան եմ գնում»: **Հակառակ հիմունքի՝** «Հակառակ իմ սովորության՝ դասերից հետո այսօր գրադարան չգնացի»:

բ) **Պատճառի պարագան՝** «Ձյան ու բքի պատճառով Գեղամը գյուղ չգնաց»: **Հակառակ հիմունքի՝** «Ձնայած ձյանն ու բքին՝ Գեղամը գյուղ գնաց»:

գ) **Պայմանի պարագա՝** «Մենք պետք է հանդիպեինք՝ նրա ծնողների թույլտվությամբ»: **Հակառակ հիմունքի՝** «Մենք չհանդիպեցինք՝ չնայած նրա ծնողների թույլտվությամբ»:

Բերենք բնագրային օրինակներ՝ **Եվ արտերի փոխանակ՝** Հորովելը գեղջուկի դահլիճներում է հնչում. **Բաց երկնքի փոխանակ՝** Շրթունքները պանդուխտի բեմերից են մրմնջում (ՊՄ): **Հակառակ մեր ցանկության՝** կառապանը թեքվեց դեպի ձախ (ՎՓ): Ի հակադրություն եղած փաստերի՝ դատարանը սխալ վճիռ կայացրեց (Իրավունք): Հե-

դափոխական երգիչ չլինելով հանդերձ՝ Վարուժանը համոզված էր սակայն, որ մի օր կճայթի ամպրոպը (ՊԶ):

Հակառակ հիմունքի՝ դիջման, պարագաները տրոհվում են բուխ նշանով:

Առաջադրանք.

Կազմե՛ք հիմունքի, պատճառի և պայմանի երկուական նախադասություններ և դրանք դարձրե՛ք Հակառակ հիմունքի պարագաներ:

ՊԱՅՄԱՆԻ ՊԱՐԱԳԱ

Պայմանի պարագան նշում է այն հանգամանքը, որով պայմանավորված է ենթակայի գործողությունը և պատասխանում է ո՞ր դեպքում, ի՞նչ պայմանով հարցերին:

Այս պարագան հիմնականում ձևավորվում է անորոշ դերբայի տրական և գործիական հոլովներով, ինչպես նաև դեպքում և պայմանով կապական բառերով: Օրինակ՝ «Լավ աշխատելով միայն արդյունքի կհասնես» և «Լավ աշխատելու դեպքում միայն արդյունքի կհասնես»: «Դասերից չբացակայելով գիտելիքներ կստանաս» և «Դասերից չբացակայելու դեպքում գիտելիքներ կստանաս»:

Պայմանով կապական բառով ձևավորվող օրինակներ՝ «Կզամ քեզ մոտ գիրքս վերադարձնելու պայմանով»: «Շուտ վերադառնալու պայմանով միայն կարող եմ ընկերակցել քեզ»:

Այս պարագան երբեմն էլ ձևավորվում է գոյականի սեռական-տրական հոլովով և նշված կապական բառերով՝ «Ճիշտ դաստիարակության դեպքում երեխան լավ մարդ կդառնա»: «Կարելի է ձեզ օգնել հնարավորության պայմաններում»:

Առաջադրանք: ընկերասեր լինելու դեպքում, լավ աշխատելու պայմանով, խոստումդ կատարելու պայմանով, ինձ լսելու դեպքում, նրանից հրաժարվելու դեպքում, հնարավորության դեպքում կաղապարներով կազմեցե՛ք նախադասություններ:

ՉԱՓ ՈՒ ՔԱՆԱԿԻ ՊԱՐԱԳԱ

Այս պարագան բնութագրում է գործողությունը՝ չափի, քանակի, աստիճանի, տևողության տեսակետից և պատասխանում է ինչքա՞ն, որքա՞ն, քանի՞ անգամ, ի՞նչ չափով հարցերին: Այն արտահայտվում է՝

1. **Չափ ու քանակի մակբայներով՝ Դու նորից եկել ես, ի՞նչ անեմ (ՎՏ): Նորից չեն սիրում, սիրում են կրկին (ՊՍ):** Շարմաղ բիբին անընդհատ լալիս էր (ԱԲ): **Բազմիցս** խոսվել է այդ մասին: **Չայրացավ անչափ շատ ուշանալու համար:** Ամանը լցվել է **կիտով չափ:** **Դարձյալ ճիշտ չես ասում: Կրկնակի վճարեցի...**

2. **Ցուցական և հարցահարաբերական դերանուններով՝ Որքան ենք մենք խաղացել, իրար սիրել ու ծեծել (ՀԹ): Էնքան մնացի, աչքս ջուր դառավ (ՀԹ): Ինչքան կուգեք, այնքան կատանաք: Այդքան չեն խոսի:**

3. **Թվականներով ու գոյականի տարբեր հոլովների գուգորդուլթյամբ՝ Գիրքն արժե հազար դրամ, տետրը՝ երկու հարյուր: Անցել էինք մոտ հիսուն կիլոմետր, այդքան էլ պետք է գնայինք: Տասն անգամ չափիր, մեկ անգամ կտրիր (Ժող.):**

Հիշի՛ր **Բազմիցս** մակբայի հետ **անգամ** բառի գործածությունը կուպիտ սխալ է, որովհետև **բազմիցս** բառի իմաստի մեջ արդեն **անգամ**-ը առկա է:

Վարժություն 8: Դուրս գրել չափ ու քանակի պարագաները և դրանցով կազմել նոր նախադասություններ: Ես բազմիցս եմ դիմել Ձեզ նույն հարցով, երկու անգամ էլ եղել եմ նախարարի մոտ: Չափազանց շատ է խոսվել այս մասին, բայց ի՞նչ, բոլորովին անարդյունք: Փոթորիկն ավելի է կատաղում, մի քիչ գիտեի նրա բնավորությունը (ՎՆ): Որքան կարելի է գրել ու կարդալ, այնքան կարդացի, որ հոգնեցի: Քիչ խոսիր, շատ լսիր: Ամենևին չէր հոգնում կարդալուց: Հինգ հոգու չափ աշխատել էր և բոլորովին չէր հոգնել: Չափազանց տարված էի նրանով: Ինքնաթիռը կարող է թռչել մինչև երկու հազար կիլոմետր: Գիրքն արժե մինչև հինգ հազար դրամ:

ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՊԱՐԱԳԱ

Միասնություն պարագան ցույց է տալիս, որ ենթական գործողությունը մենակ չի կատարում, այլ մեկ այլ անձի (անձերի) և առարկայի (առարկաների) հետ:

Այն արտահայտվում է՝

1. **Գոյականի գործիական հոլովով՝ Ընկերներով** որսի գնացինք: **Հարևաններով** այգի հիմնեցինք: **Մեր երգերով, մեր վերքերով** դար ու դարեր ապրենք պիտի (ՍԿ): **Զոհրակը առաջ սլացավ թիկնապահներով (ԴԴ):**

2. Զևավորվում է նաև **Հանդերձ, միասին, հետ կապերով՝ Ընտանյոք Հանդերձ** ներկայացանք եղբորս տղայի հարսանիքին: **Մխալներով Հանդերձ** ատենախոսությունը արժեքավոր է և կարելի է ներկայացնել պաշտպանություն:

Այս հմուտ, հանճարեղ լոռեցին **Հոմերի, Գյոթեի հետ** մի օր հավասար նստել է քեֆի (ԵՉ): **Ընկերների հետ միասին** գործը գլուխ բերին (ՊՂ):

Առաջադրանք: Ինքներդ նախադասություններ կազմե՛ք միասնություն պարագաներով:

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐ

Լեզվական ոչ բոլոր երևույթներն են, որ քերականորեն հնարավոր է կանոնակարգել, կաղապարել ու սահմանել: Լեզվում կան շատ իրողություններ, որ իրենց բազմազանություն պատճառով մնում են անսահմանելի: Այս բանը շատ լավ երևում է հատկապես **խնդիրների և պարագաների** տեսակները որոշելու, դասակարգելու և սահմանելու հարցերում, և այս բոլորը պայմանավորված են **բայերի բազմիմաստությունը**. Այսպես՝ ի՞նչ անուններ տալ Պարույր Սևակի հետևյալ նախադասության բայական լրացումներին՝

«Քո **Մասիս հորով**, քո **Արաքս մորով**, մեծանաս դարով, երևա՛ն»:
Թերևս **մեծանաս դարով** կապակցությունը կարելի է դիտել թե՛ **ձևի** (ինչպե՞ս) և թե՛ **չափ** ու **քանակի** (ինչքա՞ն) պարագա, իսկ **Մասիս հորով** և **Արաքս մորով** լրացումները կարելի է ընդունել և՛ **ձևի** և՛ **միասնություն** պարագաներ:

Կամ ի՞նչ անուն տալ հետևյալ նախադասության մեջ գործածված պարագային՝

«Երեխաները պարում էին **երաժշտության հնչյունների տակ**»:

Ինչպե՞ս էին պարում (պարելու ձև չկա),

Որտե՞ղ էին պարում (տեղը բոլորովին չի ընկալվում),

Ե՞րբ էին պարում (ժամանակի հարցը ևս բացառվում է),

Գուցե՞ երաժշտության հետ (միասնություն էլ չկա):

Ահա այս տեսակետից էլ երկիմաստ, եոիմաստ և բազմիմաստ խնդիրներն ու պարագաները նպատակահարմար է անվանել **ընդհանրական**:

Այս անվանման տակ կարելի է մի քանի իմաստներ համատեղել:

Կամ ի՞նչ անուններ տալ հետևյալ լրացումներին՝

**Դիրանը գլուխը հանեց դուան ձայնին: Շլացան խնդուն փառքիդ:
Պանինը վազում էր շների հետևից: Հազրոն անցավ բոլորից:
Զարմանում եմ քո միամտության վրա: Ծիծաղում էին ընկերոջ վրա:
Խնդրեց ընկերոջից: Հարցնում է հորից: Կառչում է նրանից:**

Ահա իմաստային նման բազմիմաստությունն է, որ նպատակա-
հարմար է կոչել **ընդհանրական** (խնդիրներ կամ պարագաներ):

Զմոռանանք, որ Մ. Աբեղյանը որպես մակբայների տեսակներ
նշում է նաև **ընդհանրական մակբայները** (ներքուստ, արտաքուստ,
տեղն ու տեղը, կրկին, իսկույն և այլն):

Սրանցով էլ կազմվում են **ընդհանրական պարագաները:**

Առաջադրանքներ.

1. Զեր ձեռքի տակ եղած գրականությունից կամ անգիր հիշվող
բանաստեղծություններից ընտրել **ընդհանրական լրացումներ:**

2. Ինքներդ կազմե՛ք նախադասություններ **ընդհանրական լրա-
ցումներով:**

Ամփոփիչ հարցեր

1. Բայական ո՞ր լրացումներն են պարագաներ անվանվում,
սահմանե՛ք դրանք:

2. Որո՞նք են բուն պարագաները և որո՞նք են պարագայական
խնդիրները, ցույց տվեք օրինակներով:

3. Անվանե՛ք պարագաները, բնութագրե՛ք դրանք առանձին-ա-
ռանձին և ասե՛ք, թե ո՞ր պարագան ինչո՞վ է արտահայտվում (մակ-
բայներ, գոյականների տարբեր հոլովներ և կապեր ու կապի
խնդիրներ):

4. Ամեն պարագայի վերաբերյալ բերեք երկուական օրինակներ:

Ամփոփիչ վարժություններ

1. **Առանձնացրե՛ք բուն պարագաները և պարագայական խնդիր-
ները:**

Վերջին անգամ Վահրամ Փափաղյանը բեմ բարձրացավ 1967
թվականի դեկտեմբերի 27-ին՝ Մեք Գրեգորի դերակատարությամբ:
Կենսական ուժերն այն աստիճան էին լքել արվեստագետին, որ
տանից դուրս գալն իսկ չափազանց վտանգավոր էր: Ազդագրերը
փակցված էին նախօրոք, բայց ներկայացման օրը՝ վաղորդային,
հայտնի դարձավ, որ Փափաղյանն անառողջ է: Թատրոնն այս լուրից

անակնկալի եկած՝ որոշում է ներկայացումը փոխել մեկ ուրիշով:

– Ո՛չ մի դեպքում,– աներկբայորեն ասաց արտիստը,– չէ՞ որ Հանդիսատեսը հոգեբանորեն պատրաստվել է ինձ տեսնելու, ինչ վիճակում էլ լինեմ, պիտի խաղամ՝ ուզում եմ բեմի վրա մեռնել:

Այդ օրը Հանդիսատեսը անսովոր հուզված էր. բեմ բարձրանալիս Հանդիսատեսը հոտնկայս, բուռն ծափահարություններով ու սրտաբուխ դիմավորեց նրան՝ գուցե իրոք համոզված, որ դա դերասանի վերջին ելույթն է: Ներկայացումից հետո պատմեցին, որ Փափազյանը հավատացրել էր իրենց՝ ասելով.


– Վճռել եմ մեռնել բեմում:

Փափազյանը խնդրելու պես պատվիրել էր Բարկեն Ներսիսյանին, որ նա իր մենախոսությունից հետո կոթնի սանդուղքի բազրիքին ու սովորականի նման ուժգին չցնցի իրեն, այլ մատի ծայրով թույլ հավի ուսին:

Արտիստը իսկապես դժվարություններ հասնելով ներկայացման ավարտին, շնչասպառ ավարտեց մենախոսությունն ու հանդարտ անշնչացավ ու թվաց, թե ուր որ է կրնկնի պատշգամբից ու այլև չի զարթնի (ԹՆԺ):

2. Բերված հատվածում առանձնացրե՛ք պարագաների տեսակները և բացատրե՛ք, թե որ պարագան ինչով է արտահայտվել:

Պարագաների գծապատկերը



**ԱՆՎԱՆԱԲԱՑԱԿԱՆ (ԲԱՂԱԴՐՑԱԼ) ՍՏՈՐՈԳՑԱԼԻ
ԽՆԴԻՐ ԵՎ ՊԱՐԱԳԱ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ**

Ինչպես ասվել է «Բառակապակցություն» բաժնում խնդիր և պարզա լրացումներ են ստանում ոչ միայն խոնարհված ու անդեմ բայերը, այլև գոյականները, ածականները, թվականները, մակբայները, մանավանդ երբ դրանք հանդես են գալիս որպես նախադասության անվանաբայական (բաղադրյալ) ստորոգյալի վերադիրներ:

Հիշենք, որ անվանաբայական ստորոգյալը կազմվում է երկու կամ ավելի մասերից՝ որևէ խոսքի մաս (ոչ բայ)՝ որը վերադիր է և հանգույց, որը կամ օժանդակ բայ է, կամ վերացական բայ (լինել, դառնալ, թվալ, համարվել, հանդիսանալ, կոչվել, մնալ, առաջադրվել, հռչակվել, կարծել, ձեռնադրվել, ձևանալ, նշանակել, վերածել):

Խնդիր լրացումներ՝

ա) Հանգման խնդիր՝ Ե՛րգ իմ, նման ես քո ստեղծողին (ՀՍ) – (նման ես ո՞ւմ): Հավատարիմ եղեք մեկտեղ կերած աղ ու հացին (ՀՍ) – (ինչի՞ն): Շատ մոտ է նա իմ հավատքին (ԳԹ) – (ինչի՞ն): Մտա եմ ձայնիդ: Կարոտ եմ տեսքիդ ու խոսքիդ և այլն:

բ) Անջատման խնդիր՝ Ժողովրդից երգն է անբաժան (ՍԳ): Վիշտն էլ ուրախությունից շատ հեռու չէ: Շատ գոհ ենք ձեր հյուրասիրությունից (ՊՂ):

գ) Միջոցի խնդիր՝

Ես հպարտ եմ իմ ճյուղերով ու սաղարթով,

Բայց առավել՝ իմ արմատով (ՊՍ):

Երեխան երջանիկ է իր խաղով: Մոր աչքը լի է արցունքով, որդունը՝ կարոտով: Խոսքը գործով է զորավոր, մարդը՝ խոսքով (ԳԹ):

դ) Սահմանափակման խնդիր՝ Մահով մանուկ եմ դառնում (ՀՍ):

Հոգով, սրտով ես հիմա խաղաղ եմ, որդիներով՝ երջանիկ (ԳԹ):

ե) Վերաբերություն խնդիր՝ Մեր վիճակին տեղյակ է աստված (ՀԹ): Նրա հանդեպ եղեք սիրալիր: Ընկերոջ նկատմամբ անտարբեր չէ:

զ) Շահի (օգուտի կամ վնասի) խնդիր՝ Դու միշտ արժանի ես գովեստի:

Սիրելի՛ Պարույր, դու հաց էիր ինձ համար,

Օդ էիր ու ջուր (ՀՍ):

Այստեղ Հաց, օդ, ջուր, գոյական վերադիրներն են ստացել շահի խնդիր՝ ինձ համար:

Պարագա լրացումներ

Անվանաբայական ստորոգյալի վերադիրները ստանում են նաև տարբեր տեսակի պարագայական լրացումներ, որոնք պատասխանում են համապատասխան պարագաներին տրվող հարցերին:

ա) Տեղի պարագա՝ Երկրային իմ կրծքին ծաղիկ դարձար լուսավոր (ՀՇ):

Հների մեջ դու ալեհեր, **նորերի մեջ՝** նոր ու ջահել (ՊՍ):

Եվ ծառերն են շատ այս լեռնակղզում,

Թե՞ վեր ծառացած խաչքարերը (ՊՍ):

Մի տեղ համեստ հովիվ, **մի տեղ** ճորտ եմ եղել (ՀՍ):

Խուլ արձագանք է խուլ ձորերի մեջ, խոր ծովերի մեջ ալիք է կյանքս (ՀՍ): Ծաղիկ ես ծաղկանց միջին, մի հատ ես բաղի միջին (Ժող. երգ):

բ) Ժամանակի պարագա՝ Մի ժամանակ, (ե՞րբ) մարդ եղել է կապիկ, Բայց կեղտոտ է միշտ եղել շապիկը (ՊՍ):

Ես այն չեմ արդեն, ինչ որ էի ես մի տարի առաջ և այն չեմ արդեն, ինչ որ էի ես այն մեծ թոփչբից մի վայրկյան առաջ (ՀՍ):

Ժամանակով կատուն ճոն էր (ՀԹ): **Հնում** մարդիկ խիստ սնահավատ էին (դաս.):

գ) Հիմունքի պարագա՝ Լոկ ձայնի համար համարվեց նա սան (ՊՍ): Համաձայն օրենքի դա քո պարտականությունն է (Ողնի): Նա միշտ էլ մեծ է եղել շնորհիվ իր ազնվությունն ու վայելուչ վարքագծի (Մամուլ): Իր անել-դնելով, նիստ ու կացով շնորհալի հարս է (ՍՍ):

դ) Հակառակ Հիմունքի պարագա՝ Չնայած տարիքն առած լինելուն դեռ աշխույժ էր: Հակառակ իրադարձություններին՝ նա բոլորովին անհանգիստ չէր (Մամուլ): **Չնայած ծանր հիվանդությանը,** հուսալքված չէր:

ե) Պատճառի պարագա՝ Շատ աշխատելուց և քիչ քնելուց ուժասպառ էր եղել: Ծեծվելու վախից խեղճ երեսան կծիկ էր դարձել: Տկար էր ծերություն պատճառով: Շտապելուց թև են առել, Դարձել թեթև թիթեռներ (ՀԹ):

զ) Հիմունքի պարագա՝ Հայ երգը Պոլսում տարածելու համար նրա 300 հոգանոց երգչախումբը կոչվեց «Գուսան» (ԳԹ): Ու Սողոմոնը Կոմիտաս դարձավ՝ ի խորը հարգանս տասներկու դար իրենից առաջ Հայոց երգը մշակող հոգեզվարթ Կոմիտաս կաթողիկոսի (ՊՍ): Այն

օրվանից դրա համար կղզին կոչվեց Ախթամար (ՀԹ):

Է) **Ձևի պարագա՝** Բերում են իրենց խելոք Նազարին, առքով ու փառքով թագավոր դնում (ՀԹ): **Կամաց-կամաց** դարձավ վիրավոր մեր հոգին ջահել ու բազմաերազ (ԵԶ):

ը) **Միասնության պարագա՝** Հաշտ ու համերաշխ են ընկերներով: Տխուր ենք ազգովի: Թերություններով հանդերձ ընկերդ դրական մարդ է:

Խնդիր և պարագա լարցումներ միատեղ

Հաճախ նույն նախադասության մեջ նույն վերադիրը կարող է ունենալ և՛ խնդիր և՛ պարագա լրացումներ: Բերենք մի քանի օրինակներ՝

Նա միշտ (ժամանակի պարագա) հնազանդ է եղել իր հավատքին (հանգման խնդիր): Դու ծաղիկ էիր իմ գրկում (տեղի պարագա) նորից (ժամանակի պարագա):

Այս պահին (ժամանակ) **աշխարհում** (տեղ) հարուստ եմ **բոլորից** (ՊՄ) – (համեմատության խնդիր): **Այժմ** (ժամ) **ամենուրեք** (տեղ) նա հարգված է **բոլորից** (ներգործման):

Վարժություն 9: Գտնել և անվանել վերադիրների խնդիր և պարագա լրացումները: Կոռ՛նկ, ուստի կուգաս, ծառա եմ ձայնիդ (Կոմիտաս): Սիրտս նման է էն փլած տներ (Կոմիտաս): Անտունի սիրտն է պղտոր, մոլոր (Կոմիտաս): ...Ոտքերդ շաղով թաց ա (Կոմիտաս): Իմ յարը սարում-ձորում... (Կոմիտաս): Ծաղիկ ես ծաղկանց միջին (Կոմիտաս): Գարնան սիրուն ծաղիկ ես, ինձ համար աղունակ ես (Կոմիտաս): ...Ղարիբներու սիրտը գունդ-գունդ արուն է (Կոմիտաս):

Միշտ էլ հարգված ես եղել շնորհիվ քո համեստության: Արքայի չմտած տեղը դոնադ է աշուղն իր սագի հետ: Արի համով դուլուդ արա: Վերջերս առաջադրվել էր պատգամավոր: Դրա համար կղզին կոչվեց Ախթամար: Ծատ մոտ է նա իմ պատգամին: Ծատ գոհ էին ձեր վերաբերմունքից: Հպարտ եմ իմ ընկերներով: Արցախի հերոսներն արժանի են փառքի: Ահավոր միության մեջ նա սարսափելի էր երևում: Միության մեջ ծառը նրան հրեշ թվաց: Հեռվից արջը մարդ երևաց: Այդ հարվածը համարվում էր երեսի գարդը: Իր գերազանց վարքով նա միշտ էլ օրինակելի է: Գրքի վերջը գրված է ուրիշի ձեռքով: Քո խելքով նա ազնի՞վ մարդ է:

Առաջադրանք: Ինքներդ բերեք նման նախադասություններ:

ԴԵՐԲԱՅԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾ ԵՎ ԿՈՂՄՆԱԿԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Ի՞նչ է դերբայական դարձվածը: Հայերենի 4 անկախ դերբայները (անորոշ, հարակատար, համակատար, ենթակայական) խոնարհման հարացույցին չեն մասնակցում, հետևաբար բայական ստորոգյալներ չեն դառնում. դրանք նախադասություն մեջ հանդես են գալիս շարահյուսական տարբեր անդամների պաշտոններով (ենթակա, վերագիր, գոյականական և բայական անդամների լրացումներ): Ավագը ցույց տանք թեկուզ միայն **անորոշ դերբայի** շարահյուսական կիրառությունը:

ենթակա – Դասական երաժշտություն **լսելը** զարգացնում է մարդուն:

Որոշիչ – **Նմելու** ջուրը պետք է խնայել:

Հատկացուցիչ – Բարձր **խոսելու** ցանկություն չունեմ:

Վերագիր – Դա **խոսել** չէր, որ **խոսեցիր**: Բա դա **խոսե՞լ** եղավ, որ **խոսեցիր**:

Բացահայտիչ – **Ոտսելը՝** մարդու համեստություն չափանիշը, պետք է չափավորված լինի:

Ոնդիրներ – Հետևիր երեխայի ճիշտ **խոսելուն**: Շատ **խոսելուց** օգուտ չկա:

Պարագաներ – Գնացի գործարան՝ **Կոմիտասի մասին խոսելու**: Շատ **խոսելուց** հոգնեցի:

Այդպիսի շարահյուսական կիրառություններ ունեն նաև **հարակատար** և **ենթակայական դերբայները**:

Համակատար դերբայը միայն պարագայական կիրառությամբ է հանդես գալիս. այն միշտ ժամանակի պարագայի դեր է կատարում և ցույց է տալիս ընթացքի մեջ գտնվող գործողությունը **հարակից գործողություն** (Ոտսելիս աշխատիր սխալներ թույլ չտալ: **Գրելիս** աշխատիր ուշադիր լինել: **Ուտելիս** չեն խոսում):

Նշված անկախ դերբայները նախադասությունների մեջ հանդես են գալիս ինչպես առանձին, այնպես էլ այլ բառերի հետ՝ գուցորդամբ, ինչպես վերևում բերված օրինակներում (**երաժշտություն լսելը**, **բարձր խոսելու ցանկություն**, **չատ կարդալուց**, **հետևիր երեխայի ճիշտ կարդալուն**): Ակներև է, որ **անորոշ** դերբայ գերադաս անդամն ունի իր լրացումները: Այդպես էլ **հարակատար** և **ենթակայական** դերբայները կարող են ունենալ իրենց լրացումները և իրենց լրացումների հետ դառնալ նախադասություն մեկ անդամ (**ծա-**

որ ճյուղին նստած թռչուն, բարձր սարից արագորեն իջնող գետակ): Ասենք նաև, որ անորոշ դերբայի հոլովված ձևերը ևս ունենում են իրենց լրացումները (**Մեղմ ու անուշ երգելով՝** բեմահարթակ բարձրացան դպրոցականները: **Համերգասրահում հաջող ելույթ ունենալուց հետո** նրանք վերադարձան դպրոց):

Այսպիսով՝ **անկախ դերբայները իրենց լրացումներով կոչվում են դերբայական դարձվածներ** (կրճատ՝ ԴԴ):

ԴԴ-ն կարող է լինել **երկանդամ և բազմանդամ**, ըստ որում նրա գերադաս անդամը անկախ դերբայն է՝ լինի այն ուղիղ ձևով, թե հոլովված: Երկանդամ ԴԴ-ն կազմված է լինում մեկ գերադաս անդամից և մեկ լրացումից, բազմանդամը՝ մեկ գերադաս անդամից և երկու կամ ավելի լրացումներից:

Պետք է հիշել, որ ԴԴ-ն նախադասության մեջ հանդես է գալիս մեկ անդամի պաշտոնով. այդ անդամի պաշտոն կատարողը հենց գերադաս անդամ-դերբայն է, որի կատարած պաշտոնի անունով էլ կոչվում է ամբողջ ԴԴ-ն: Յուրաքանչյուր ԴԴ շարահյուսորեն վերլուծելի է. դա կատարվում է նախադասության վերլուծության հաջորդ աստիճանում՝ նրա գլխավոր և երկրորդական անդամները նշելուց հետո:

Եթե նախադասության մեջ նշված անկախ դերբայները հանդես են գալիս միայնակ՝ առանց լրացումների, կոչվում են **դերբայական անդամներ**, իսկ այդ դերբայներին լրացնող անդամները, ի տարբերություն նախադասության սովորական անդամների, կոչվում են **կողմնակի անդամներ**:

Հիշի՛ր - Քանի որ **որոշիչը, հատկացուցիչն ու բացահայտիչը** դերբայների չեն լրացնում, այդ պատճառով էլ դրանք կողմնակի լինել չեն կարող: Կողմնակի են լինում միայն բայական անդամի լրացումները՝ **խնդիրներն ու պարագաները**, նաև **ենթական ու ստորոգելիական վերադիրը**, որոնք նույնպես կապվում են անկախ դերբայների հետ: Այս առումով քննարկենք վերևում բերված օրինակներից երկուսը՝ «Դասական երաժշտություն լսելը զարգացնում է մարդուն»: Այս նախադասության ենթական արտահայտված է ԴԴ-ով՝ **դասական երաժշտություն լսելը**, ստորոգյալն է **զարգացնում** է ներգործական սեռի բայը, իսկ **մարդուն** լրացումը ուղիղ խնդիր է: Սա կլինի նախադասության **առաջին աստիճանի** վերլուծություն: Երկրորդ աստիճանում վերլուծում ենք ԴԴ-ով արտահայտված ենթական, որի գերադաս անդամը՝ **լսելը անորոշ դերբայի** ուղղական

Հոլովն է, որին անմիջապես լրացնում է **երաժշտություն** կողմնակի ուղիղ խնդիրը (ի՞նչ լսելը), իսկ **դասական** անդամը լրացնում է ոչ թե **լսելը** դերբային, այլ **երաժշտություն** գոյականական անդամին, հետևաբար այն կլինի **սովորական** որոշիչ և ոչ **կողմնակի**:

«Հետևի՛ր երեխայի ճիշտ խոսելուն» նախադասությունն ենթական զեղչված է, **Հետևի՛ր**-ը նրա պարզ ստորոգյալն է, իսկ **երեխայի ճիշտ խոսելուն** եռանդամ ԴԴ-ն հանգման խնդիր է, որի զերադաս անդամը **խոսելուն** անորոշ դերբայի տրական Հոլովն է, որին անմիջապես լրացնում է **ճիշտ կողմնակի ձևի** պարագան (ինչպե՞ս խոսելուն), իսկ **երեխայի** բառը նորից կապված է **խոսել** դերբայի հետ, (Հետևի՛ր ո՞ւմ ճիշտ խոսելուն), բայց **երեխայի** բառը ոչ թե լրացման դեր է կատարում, այլ նշում է գործողության կատարողը, հետևաբար այն **ենթակա** է, բայց ոչ **բուն ենթական** է, այլ **դերբայի ենթական** է, ուրեմն՝ **կողմնակի ենթակա** է՝ դրված սեռական Հոլովով:

Հիշի՛ր՝ Կողմնակի անդամներ ստանալու լավագույն միջոցը դիմավոր բայով կազմված նախադասության բայական ստորոգյալը անկախ դերբայ դարձնելն է, և նրա հետ կապված ենթական ու լրացումները դառնում են **կողմնակի**. այսպես՝ կողմնակի ենթակա ստանալու համար սովորական նախադասության դիմավոր բայը դարձնում ենք դերբայ՝ «**Քամին** կտրեց ծառը» և «**քամու** (կողմնակի ենթակա) կտրած ծառը»: Լրացումների օրինակներ՝ «**Տեսա ընկերոջս**» և «**ընկերոջս տեսնելով**» (կողմնակի ուղիղ խնդիր): «**Հեռացանք Աշոտից**» և «**Աշոտից հեռանալով**» (կողմնակի անջատման խնդիր): «**Արագ վազեցի**» և «**արագ վազելով**» (կողմնակի ձևի պարագա) «**Տուն հասավ**» և «**տուն հասնելով**» (կողմնակի տեղի պարագա) և այլն:

Ասենք, սակայն, որ ԴԴ-ն մարդու ուղեղում չի առաջանում միայն երկրորդական նախադասություն պարզեցումից, ինչպես կարծում են շատերը, դրանք լեզվամտածողական առանձին երևույթներ են, որոնք առաջանում են մարդու ուղեղում հենց այդ ձևերով, մասնավանդ, որ շատ բարդ ստորադասական նախադասություններ կամ ԴԴ-ներ բոլորովին էլ փոխակերպելի չեն: Դրանք պարզապես **չարահյուսական համանիչներ են**, որոնց մասին խոսվելու է հաջորդ բաժնում:

Այժմ առանձին-առանձին ուսումնասիրենք նախադասություն **կողմնակի անդամները**:

Կողմնակի ենթակա

Սա տարբերվում է նախադասությունների իսկական ենթակայից. այն նախ ստորոգումային կապակցություն մեջ է, ապա հիմնականում դրվում է սեռական հոլովով (դրվում է նաև ուղղականով), նմանվում է հատկացուցչին, բայց հատկացուցիչ է, որովհետև գոյականի լրացում է, այլ դերբայի, մյուս կողմից՝ ենթակայի և ստորոգյալի միջև չկա նաև թվային համաձայնություն: Այսպես՝ «Անծանոթի ներս մտնելը զգաստացրեց բոլորիս» և «Անծանոթների ներս մտնելը զգաստացրեց բոլորիս», մինչդեռ դիմավոր բայ-ստորոգյալի ենթական թվով համաձայնում է ստորոգյալի հետ, և նրանց միջև ստորոգումային կապ գոյություն ունի, ինչպես՝ «Որ անծանոթը ներս մտավ...» և «Որ անծանոթները ներս մտան...»:

Ասվեց, որ կողմնակի ենթական սովորաբար դրվում է սեռական հոլովով և պատասխանում է **ո՞ւմ, ինչի՞** հարցերին: Օրինակներ՝ **Ջրի** շատ գալը կտրվելու նշան է (Առած): **Հյուրերի** հայտնվելը անսպասելի էր: Այս տարի **գարնան** գալը ուշացավ: **Հասմիկի՝** համալսարան ընդունվելը ուրախացրեց ծնողներին: **Իմ** գնալը չհաջողվեց:

Կողմնակի ենթական դրվում է նաև ուղղական հոլովով: Օրինակներ՝ **Գարունը** բացվելուն պես ծառերի չոր կեղևը մաշվում էր (ԱԲ): **Անձրևը** դադարելուց հետո վերսկսեցինք աշխատանքը: **Մեքենան** արգելակվելուն պես՝ ցած իջանք:

Թեև շատ սակավ, դերանուններով արտահայտված կողմնակի ենթակաները նույնպես կարող են ուղղականով դրվել՝ **Նրանք** քանդելով, **ես** տեղս փոխելով, հասանք վերջին գերանին (ՀԹ):

Բերված բոլոր օրինակներում կողմնակի ենթակաները դրվել են **անորոշ դերբայների** հետ: Բացի անորոշ դերբայներից կողմնակի ենթականեր կարող են ունենալ նաև **հարակատար դերբայները՝ Թրի** կտրածը կլավանա, **լեզվի** կտրածը չի լավանա (Առած): **Գիտնականի** գրածը անառարկելի փաստեր ուներ: **Ձեր** հավանածը ինձ դուր չեկավ: **Նրա** ղեկավարած հիմնարկը վնասով է աշխատում: **Քո** տեսած սերմը չի կանաչի (Ժող.):

Կողմնակի ենթական կարող է վերագրվել նաև **համակատար դերբային**, որն այնքան էլ խրախուսելի չէ. Օրինակ՝ **Հասմիկի** արտասանելիս բոլորս լուռ էինք: **Նրա** խոսելիս շատերը դուրս եկան դահլիճից:

Հ ա ր ց ե ր

1. Ի՞նչ է դերբայական դարձվածը:

2. Որո՞նք են կողմնակի անդամները:

3. Ինչո՞ւ որոշիչը, հատկացուցիչը և բացահայտիչը կողմնակի չեն լինում:

4. Ո՞ր հոլովներով է գրվում կողմնակի ենթական:

Վարժություն 1: Դո՛ւրս գրեք դերբայական դարձվածները, ցո՛ւյց տվեք կողմնակի ենթակաները և ասե՛ք, թե ինչո՞վ և ո՞ր հոլովներով են արտահայտված:

Անծանոթ մարդկանց դահլիճ մտնելը ուշադրություն գրավեց (Մամուլ): Տղայի համալսարան ընդունվելը ուրախացրեց ծնողներին, իսկ ծույլ աշակերտի ընդունվելը զարմացրեց շատերին: Ջրի շատ գալը կտրվելու նշան է (Ժող.): Վարպետի այդ օրվա շուտ զնալը զարմացրեց աշակերտներին (ԳԹ): Այս տարվա գարնան գալը ուշացավ: Եղբորս ներս մտնելը աշխուժություն առաջացրեց: Արևը ծագելուց առաջ դուրս եկանք գյուղից: Քո բարձրաձայն արտասանելը հաճելի էր: Ինքնաթիռը ուշանալու ժամանակ մարդիկ զբաղվում էին ընթերցանությունով: Գարունը բացվելուն պես շինականը գործի է անցնում: Ժառանգեցինք ձեր ունեցած երկիրն ու մեր պապերի հողը (ՍՍ): Իմ ընտրածը սրանից լավն էր: Լեզուն կտրած ծիտը որտե՞ղ է կենում (ՀԹ):

Կողմնակի ստորոգելի (վերադիր)

Կողմնակի վերադիրներ (ստորոգելիները) գրվում են վերացական բայերի (եմ, դառնալ, թվալ, կոչվել, համարվել, հանդիսանալ, հռչակվել, ձևանալ, մնալ, նշանակվել, առաջադրվել, վերագրվել...) պահանջով, որոնք սովորական վերադիր են դառնում, երբ դերբայը փոխարինվում է դիմավոր բայերով. այսպես՝ «Այգի կոչված մի փոքր հողակտոր էր» այստեղ այգի-ն կողմնակի վերադիր է, որովհետև գրված է կոչված վերացական բայի պահանջով. այն դառնում է սովորական վերադիր, եթե կոչված դերբայը փոխակերպվեք կոչվում էր դիմավոր բայով. այսպես՝ «Այն, ինչ կոչվում էր այգի, մի փոքր հողակտոր էր»: Այլ օրինակներ՝ Վարպետ անվանվող Կարոն անուն էր հանել Գյումրիում (Ավ. Իս.): Դպրոց համարվող շենքը մի փոքրիկ խրճիթ էր (ՍՍ): Զուր դարձող ձյունը փակել էր ճանապարհը (ՍՍ): Նրա ով լինելը պարզելու համար պետք է անցյալը քննել (ՎԲ):

Առաջադրանք: Ինքներդ բերեք կողմնակի վերադիրների 4-5 օրինակներ:

ԿՈՂՄՆԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐ

Ինչպես դիմավոր բայերի խնդիր լրացումները, այնպես կողմնակի խնդիրները լինում են **սեռի** և **բնության**: Սեռի խնդիրները պայմանավորված են ներգործական (ուղիղ խնդիր) և կրավորական (ներգործման խնդիր) սեռի բայերով:

Կողմնակի ուղիղ խնդիրների օրինակներ՝ Իրիկնաժամին **թփերն** օրորող հովի պես **թեթև** մի ուրու անցավ (ՎՏ): **Ձեզ** տանջող ցավը մեզ էլ է պատել (ՀԹ): **Ձու** գողացողը ձի էլ կգողանա (Առած): **Ճյուղերը** ջարդելով՝ եղնիկը դուրս եկավ բացատ (ՎԱ): **Հիվանդին** խնամելիս բավարարվածություն էր զգում: **Ընկերոջս** տեսնելիս ուրախացա:

Ներգործման կողմնակի խնդիրների օրինակներ՝ **Ձյունով** ծածկված արահետը լրիվ անհետացել էր (ՍՍ): **Քամուց** կտրված ծառը նորից չիվեր տվեց: **Ընկերոջից** վիրավորված Տիգրանը այլևս չհանդիպեց նրան: **Մեծերի կողմից** երես տված երեխան ամբարտապան կլինի:

ԿՈՂՄՆԱԿԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Ինչպես ասվել է սովորական բնության խնդիրների վերաբերյալ, սրանք նույնպես անտարբեր են բայի սեռի նկատմամբ. սրանք պայմանավորված են բայերի **բառային իմաստներով**: Լեզվում ինչքան որ սովորական բնության խնդիրներ կան, այդքան էլ կողմնակի բնության խնդիրներ կան:

ա) **Հանգաման** – Աչքերը **վրանին** հառած՝ առաջ գնաց: Հենվելով **պատին**՝ կոշիկների քուղերն էր կապում: Մտտենալով **անծանոթին**՝ սկսեց հարցուփորձ անել:

բ) **Մատուցման** – Մ. Նորենացու չքանչանը հանձնելով վաստակաշատ դասախոսին և շնորհավորելով նրան՝ ռեկտորը բարեմաղթանքի խոսքեր ասաց: Սուրճը մատուցելով հյուրերին՝ Սոնան աչքի պոչով գննեց անկյունում նստած երիտասարդին (ՎՊ):

գ) **Անջատման** – Թոկից փախած գոմեշը երկար ճանապարհ անցավ (ՀՄ): **Ընկերոջից** ստացած նամակը շատ հուսադրեց հայրենաբաղձ աղջկան:

դ) **Միջոցի** – Ինքնաթիռով թռչելիս ինչո՞վ ես տարբերվում թռչու-

նից: Ամեն անգամ կավիճով գրելիս դպրոցական տարիներս եմ հիշում: Ապտակով սնված տղեն առանց աստիճան չի լինի (Շիրին):

ե) **Վերաբերություն – Քաղաքականությունից** խոսելիս հաճախ զայրանում ես: Որսից պատմելիս Վ. Անանյանը շատ բաներ է հնարում: Վահրամ Փափազյանի մասին խոսելիս վերհիշում ես նրա դերակատարումները, տեղափոխվում ես նրա աշխարհը: **Չարենցի մասին դասախոսություն** կարգալիս միշտ մտահոգ ես լինում՝ թե ինչի՞ մասին չխոսեցիր:

զ) **Կապալին կառույցներ** – Կապալին խնդիրները ձևավորվում են մոտ, տակ, վրա, մեջ, կողմը, մասին, վերաբերյալ և նման կապերի ու որևէ գոյականի կամ դերանվան միասնություն, որոնք դրվում են որևէ անկախ դերբայի պահանջով (Բարկանալով երեխայի վրա՝ մայրը պարտադրեց դասերը պատրաստել: Թեքվելով հիվանդի կողմը՝ բժշկուհին ջերմաչափ դրեց: Ափսսի ջրի մեջ նայելով՝ գուշակություններ էր անում: Չմտածելով գալիք փորձանքի մասին՝ տնօրենը նոր կարգադրություններ էր անում):

Հ ա Ր Գ Ե ր

1. Ինչպե՞ս են կազմվում կողմնակի ստորոգելի (վերադիր) անդամները:
2. Քանի՞ տեսակ են լինում կողմնակի խնդիրները:
3. Թվարկել կողմնակի խնդիրների տեսակները:

Վարժություն 2: Ստորև բերված օրինակներից դո՛ւրս գրել դերբայական դարձվածները, ընդգծե՛լ կողմնակի խնդիրները և անվանել դրանք:

Զու գողացողը ձի էլ կգողանա (Ժող.): Համալսարանն ավարտելուց հետո անմիջապես գյուղ գնացի աշխատելու: Ունքը սարքելու փոխարեն աչքն էլ հանեց (Ժող.): Իրիկնաժամին թփերն օրորող հովի պես թեթև մի ուրու անցավ: Բարեկամներից լքված՝ ստիպված թողեց հայրենի գյուղը: Ես քեզից դառնացած հեռացա (ՎՏ): Քամուց կտորված ծառը սկսեց արմատից աճել: Սուրճը հյուրերին մատուցելով՝ Սոնան սպասում էր գովեստի խոսքերի: Մոտենալով դասղեկին՝ երեխան ծաղկեփունջը հանձնեց նրան: Զիպվորը շտապում էր ձիուն անջատել թուկից: Մանկությունս հիշելիս սիրտս լցվում է գինով (ԵԶ): Մեքենայով գյուղ գնալիս անցնում ենք մեր ամառանոցի կողքով: Անգլերենով խոսելիս կարող ես շատերի հետ հաղորդակցվել: Հեռվում տեսան մի զորամաս՝ նետերով, նիզակներով ու սրերով գին-

ված (ԱԶ): Մանկությունից խոսելիս հաճախ էլ ստեր էր դուրս տալիս (ՊՂ): Թեքվելով գյուղի կողմը՝ հիշեցի մանկությունս (ՊՂ): Բարկա-նալով ընկերոջ վրա՝ ցանկանում էր ուղղել նրան:

ԿՈՂՄՆԱԿԻ ՊԱՐԱԳԱՆՆԵՐ

Կողմնակի պարագաները նշում են անդեմ գործողության որա-կական ու քանակական հատկանիշները, ինչպես նաև տեղը, ժա-մանակը, նպատակը, պայմանը, պատճառը, հիմունքը և այլն:

ա) **Տեղի – Մթնաձոր** տանող միակ արահետն առաջին ձյան հետ փակվում էր (ԱԲ): **Գյուղից** եկած քեռի Ոնչանին դժվար էր խոսք հասկացնել: Նրան մեր տանը տեսնելով՝ շատ ուրախացա:

բ) **Ժամանակի – Վառի՛ր լույսդ, վաղ անցած լույսի ցնորք** իմ հո-գու (ՎՏ): **Երեկվանից քնած** հիվանդը աչքերը բացեց: **Անցյալ տար-վանից** պայմանավորված խոստումդ չմոռանաս:

գ) **Ձևի պարագա – Մի ստվեր անցավ՝ ծաղիկ ու կանաչ մեղմիվ շոյելով** (ՎՏ): **Մտքերը անշարժ ու հանդարտ էին**, ինչպես գլխի՝ **խնամքով սանրած դեղին մագերը** (ԱԲ):

դ) **Պատճառի – Իմ անվերջ ճամփի տանջանքից** հոգնած՝ ես ննջել էի (ՎՏ): **Տնօրենի պատասխանից** չբավարարված՝ դիմել էր նախա-րարին: **Անքնությունից** ձանձրացած՝ հիմար սերիալներ էի նայում:

ե) **Նպատակի – Սովորելու** գնալուց առաջ տան մասին մտածիր: **Հյուրախաղերի մեկնելու** պատրաստություն էինք տեսնում:

զ) **Հիմունքի – Կառավարության օրենքով սահմանված** նա-խագծով էին աշխատում: **Համաձայն վերադասի կարգադրածի՝** գնա-լու ժամկետը կրճատվեց: **Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ** բացակայող ուսանողներ չեղան:

է) **Հակառակ հիմունքի – Չնայած** նոր նախագծով կառուցված լինելուն՝ դարձյալ անհաջող էր: **Թեև սպասարկման բարձր որակին չհամապատասխանելուն՝** դժգոհելու առիթներ չկային:

ը) **Չափ ու քանակի – Տասն անգամ չափելու, մեկ անգամ ձևելու** հանձնարարականը միանգամայն ճիշտ է: **Մեկ թզաչափ կոանալով՝** նկատեց միջատին:

Վարժություն 3: Դերբայական դարձվածներում նշել կողմնակի պարագաները, անվանել դրանք և ասել, թե ինչո՞վ են արտա-հայտված:

Արտասահմանից վերադարձած հարևանս այնքան էլ լավ բան չէր

պատմում (ԳԹ): Ժայռից ժայռ թռչկոտող եղնիկները մեզնից չվա-
խենալով՝ մեկ-մեկ էլ իջնում էին ձորը (ՎԱ): Արագ քայլելիս ու տուն
գնալիս, մեկ-մեկ էլ խանութները մտնելով՝ պարեն էի տանում տուն:
... Իջնում էր Քարքե լեռան բարձրությունից՝ Արածանիի ալիքների
մեջ լողանալու (ՐաՖ.): Վազուց արդեն ուժը կորցրած պայմանագիրը
այլևս պետք չէր (ԳԹ): Վառիր լույսը վաղ անցած, Լուսե ցնորք իմ
հոգու (ՎՏ): Զրի գնալիս աման են վերցնում: Դրսում աշխատելու
գնացողը միշտ անհանգիստ է լինում: Տասն անգամ չափելու,
մեկ անգամ կտրելու խորհուրդը շատ կարևոր է: Իմ անվերջ ճամփի
տանջանքից հոգնած՝ ես ննջել էի (ՎՏ): Ձմռան երկար գիշեր-
ներից բեզարած՝ գյուղացիք արևկող էին անում (ՐաՖ.): Ուրիշի թեկադրանքով արված գործն էլ այդ կլինի (Ողնի): Հակառակ
քո ասելու՝ ես չհետևեցի նրան: Ճանապարհին քնած երեխան արդեն
արթնացել ու հոնգուր-հոնգուր լաց լինելով՝ մորն էր կանչում (ՄԳ):

ԴԵՐԱՑԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾԻ ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Տրոհվող ԴԴ-ների կետադրությունը շատ որոշակի է ու կանո-
նարկված՝ նախադաս և վերջադաս ԴԴ-ները տրոհվում են բուլթով,
միջադասները՝ ստորակետերով:

Տրոհվում են՝

1. Ժամանակի պարագայի պաշտոն կատարող ԴԴ-ներ՝ «Հասնե-
լով բերդի ավերակներին՝ ձիավորները ցած իջան»: «Զիավորները
ցած իջան՝ հասնելով բերդի ավերակներին» և «Զիավորները, հաս-
նելով բերդի ավերակներին, ցած իջան»:

2. Զևի պարագան՝ «Գլուխները թափահարելով և ձյունը ճեղ-
քելով՝ նոխազները իջնում էին գոմերը»: «Նոխազները իջնում էին
գոմերը՝ գլուխները թափահարելով և ձյունը ճեղքելով» և «Նո-
խազները, գլուխները թափահարելով և ձյունը ճեղքելով, իջնում էին
գոմերը»:

3. Զիջման պարագան՝ «Ձնայած տեղատարափ անձրև լինելուն՝
ոչխարները հանգիստ արածում էին»: «Ոչխարները հանգիստ արա-
ծում էին՝ չնայած տեղատարափ անձրև լինելուն» և «Ոչխարները,
չնայած տեղատարափ անձրև լինելուն, հանգիստ արածում էին»:

4. Նպատակի պարագան, եթե այն համար կապով չի արտահայտ-
ված կամ կարճ չէ՝ «Գյուղն էին իջել հովիվ պատանիք՝ աղջիկ
տեսնելու, պարի ու կոսի»: «Կամենալով ծարավը հագեցնել՝ հոգնած

ճամփորդը մոտեցավ աղբյուրին»։ «Հոգնած ճամփորդը մոտեցավ աղբյուրին կամենալով հագեցնել ծարավը»։ «Հոգնած ճամփորդը, կամենալով հագեցնել ծարավը, մոտեցավ աղբյուրին»։

5. Պատճառի պարագան՝ Աշխատանքից ազատել էին՝ պատճառաբանելով պարտքերը։ Պատճառաբանելով պարտքերը՝ ազատել էին աշխատանքից։

6. Տրոհվում է նաև որոշիչ ԴԴ-ն, եթե այն ետադաս է՝ «Աովակը՝ բարձր սարերից գահավիժող, կյանք է պարզևում բուսականությանը»։

Նախադասի դեպքում այս ԴԴ-ն չի տրոհվում՝ «Բարձր սարերից գահավիժող աովակը կյանք է պարզևում բուսականությանը»։

Դերբայական դարձվածը չի տրոհվում.

1. Եթե այն ենթակա է՝ «Մեր ժողովրդական երգը օտարաբանությունից գտողն ու մաքրողը Հայ երգի վեհափառ Կոմիտասն է»։ Հայ գրերի ստեղծողը Մեսրոպ Մաշտոցն է։

2. Եթե այն ստորոգելիական վերադիր է՝ Մեսրոպ Մաշտոցը Հայ գրերի ստեղծողն է։ Կոմիտասը Հայ երգի մաքրագործողը դարձավ։

3. Եթե այն հատկացուցիչ է՝ Մենք գիշերեցինք մեզ սիրով հյուրընկալողի տանը։ Բաժակ բարձրացնենք իրենց կյանքը Արցախի գոհաբերողների կենացը։

4. Եթե այն նախադաս որոշիչ է՝ Ամբողջ կյանքն իր ժողովրդի երգարվեստին նվիրած Կոմիտասը ապրեց 66 տարի, որից 20-ը՝ հիվանդ։ Շատ կարդացած երեխան բանիմաց կլինի։

5. Չի տրոհվում համակատար դերբայով (իս)–ով կազմված դարձվածը՝ Քաղհան անելիս աղջիկը մեկ-մեկ գայթում էր։ Որդուն ամուսնացնելիս Ջորոն գինին Արարատյան դաշտից բերեց (ՄԳ)։

6. Չեն տրոհվում խնդիրների պաշտոններ կատարող ԴԴ-ները՝ Բոլորն էին հասկանում առաջադրվող Հարցի դժվար լինելը։ Գյուղում խոսում էին Օհան ամու աշխարհաթող լինելու մասին։

7. Չեն տրոհվում հատկապես այն ԴԴ-ները, որոնք կազմվում են կապերով ու կապական բառով (համար, մասին, շնորհիվ, նպատակով, առանց, առաջ, հետո և այլն)։ Քաղաք էին գնացել իրենց չըջանավարտների հավաքին մասնակցելու համար։ Գրքեր պատվիրելու նպատակով գրադարան գնացի։ Պարզևատրության էր ներկայացել նոր նախագիծ ներկայացնելու հիմնավորումով։ Կուրսային աշխատանք գրելուց առաջ պետք է գրականությունը լավ ուսումնասիրել։ Քննությունները հաջող հանձնելուց հետո գյուղ կգնամ։

Ծանոթություն – Համար կապով կառույցները երբեմն էլ տրոհվում են (տե՛ս «նախադասություն տրոհվող անդամները» բաժինը):

Հ ա Ր Կ Ե Ր

1. Ի՞նչ կետադրական նշաններով են տրոհվում դերբայական դարձվածները. բերել օրինակներ, նշել դեպքերը:

2. Ո՞ր դերբայական դարձվածներն են տրոհվում, բերել օրինակներ:

3. Ո՞ր դերբայական դարձվածները չեն տրոհվում, բերել օրինակներ:

Վարժություն 4: Կետադրել ներքևում բերված դերբայական դարձվածները. հնարավորության դեպքում փոփոխել նախադասությունների շարադասությունը:

Դեռ արևը չծագած նրանք արդեն պատրաստ էին: Դառնալով շինարարության պետ նա ավելի ևս համոզվեց իր անպատժելիության մեջ: Ավարտելով դպրոցը անմիջապես ընդունվեց համալսարան: Ամբողջ կյանքը անց էր կացրել անդուլ գործունեությանը խիղճը հանձնած երկաթե սնդուկին, հոգին գրպանը դրած: Լեզուները կախ գցած չները վազում էին նրա հետևից: Վերադարձավ գյուղ ավարտելով քաղաքի աշխատանքները: Հովն ընկնելուն պես նախիրը տուն էր բերում: Թողնելով ծննդավայրը եկել, հաստատվել էր քաղաքում: Հասնելով երեկվա հերկին սկսեց քայլել փխրուն հողի մեջ: Նամակն ուղարկելով աղախնի միջոցով նա պատասխանի էր սպասում: Քրտնած հնձվորը մոտենալով աղբյուրին կոացավ ջուր խմելու: Ստեղծելով հայոց գրերը Մաշտոցը դրանք ուղարկեց ձևավորելու: Զբոսաշրջիկները հասնելով հինավուրց հուշարձանին ցած իջան մեքենայից: Հեռվից նկատեց աղվեսին աչքերին հով անելով: Ստիպված էի արագացնել քայլերս շուտ տեղ հասնելու համար:

Կրկնողական վարժություններ «Դերբայական դարձվածներ և նախադասություն կողմնակի անդամներ» թեմայի վերաբերյալ:

I

Իմանալով Որմիզդուխտի՝ ճաշին ներկա չլինելը՝ Սամվելի մոր դեմքը փայլեց նախկինում երբեք նմանը չունեցող անկեղծ ուրախությունամբ:

Կապուտակ բարձունքից գահավիժող առվակը՝ չրջապատին կենդանություն պարզևող միակ կենդանի էակը, քջքալով հոսում էր ցած ու կյանք պարզևում ծառերի ստվերներում մի կերպ քողարկված նորածիլ բուսականությունը:

Ակնդեստ նայում էր ծառերի վրա ուրախ ուստոստող թռչուններին, նրան հուզմունքից թրթռացող սիրտը լցվում էր բնության զարթոնքի հաճելի զգացումով:

Ամբողջ կյանքը ժողովրդի երգարվեստին սիրով նվիրած Կոմիտասը իր տաղանդի հզոր ուժով ապացուցեց հայ ժողովրդի ազգային երաժշտության՝ իր ստեղծողի չափ հին լինելը:

Վրաններից մի մարդ՝ մանգաղը գոտու մեջ խրած, գլուխը անլվա թաշկինակով փաթաթած, մահակին հենվելով, բարձրացավ բերդի քարափով:

Ֆետրե գլխարկով մարդուն օջախի մոտ նստած, կրակը ակիչով խոռնող կինը թվում էր՝ եռոտանու առաջ ծխի շարժումները գուշակող:

Հոր թերթի ուղղություն դեմ պայքարող ու նրա հետ չհամակերպվող Սուրենը երբեք չէր հասկանում իր հոր ով լինելը:

Փարիզում հրավիրված Միջազգային երաժշտական փառատոնին մասնակցելը Կոմիտասին պարտավորեցնում էր ավելի լավ նախապատրաստվել գալիք մրցույթին:

Նոխազները, գլուխները թափահարելով, գիշերվա եկած առատ ձյունը ճեղքելով, իրար հրմշտելով հպարտ իջնում էին ձյունով ծածկված գոմերը՝ իրենց հետևից բերելով ցրտից սառած ու հագիվ քայլող հոգնած հոտը:

Ֆրանսիացի մաթեմատիկոս ԱՆրի Պուանկարեն երկար ժամանակ գլուխ չհանելով մի խնդրից, երազում լուծեց այն և, արթնանալով քնից, լուծված խնդիրը գրի առավ՝ մանրամասնորեն հիշելով նրա մի քանի տարբերակները:

II

Խցերից մեկում, գլուխը հոգնած ձեռքերով ամուր պահած, արմունկները սեղմած փայտե սեղանին, արթուն էր Մեսրոպ Մաշտոցը՝ հայոց գրերի ստեղծողը:

Եկեղեցու գմբեթին թառած ձյունաճերմակ աղավնիները, վախենալով մոտեցողների բարձր ձայներից, միանգամից թռան նստած տեղերից՝ օդը լցնելով աղմուկով:

Հակառակ հորդառատ անձրևին, գյուղի ցեխոտ փողոցներով վազող երեխաները շնչակտուր հասնելով անտառին՝ պատսպարվեցին

վաղուց չորացած ծառի փչակում:

Առավոտ կանուխ ջրի գնալը, կովեր կթելը Մինա բիրուն ավելի հեշտ թվաց՝ գիշերը ավելի լավ հանգստացած լինելու հետևանքով:

Այնտեղ՝ ամառանոցում, բոլորը ճանաչում էին այդ բարձրահասակ, մեջքը մի քիչ կոացած, հարազատներից ոչ այնքան վաղուց բաժանված ծերուկին և գիտեին նրա՝ թոռան մոտ ապրելու և աշխարհաթող լինելու մասին:

Մի անգամ իր փոքրիկ սենյակում հագուստի կրծքին մեխակներ ամրացնող Զուլիետան դրսից իրեն խորապես հուզող թովիչ երաժշտություն ձայն լսեց:

Հայերենը աշխարհի 562 լեզուների հետ համեմատող, մեկ ինստիտուտի չափ աշխատանք կատարող, ահավոր դժվարություններ հաղթահարող, օրն ի բուն անդադրում աշխատող, քնով բավարարվող, մեծ համբավ վաստակած լեզվաբանը՝ Հրաչյա Աճառյանն ապրեց 77 տարի:

Հասմիկ Զուրաբյանը, օրվա տաղտուկից հոգնած, արմունկները սեղանին հենած, բոունցքները սեղմած ցրտից գունատված այտերին, ուշադրությունը լսում էր նախագահի՝ երբեք այդքան գրավիչ չթվացող զեկուցումը:

Կյանքիս մասին հուշագրություններ կարդացողին հայտնի չէր որտեղացի լինելս:

Եկել է ժողովրդի՝ ազատ ու անկախ ապրելու ժամանակը:

Բանաստեղծի՝ նոր գիրքը կարդալիս զգացվում էր աչքերի հանդարտ մշուշվելը:

Աշխարհին ու մարդուն ճշմարիտ խոսք ասելու համար հաճախ պետք է ետ նայել:

Տղան արդեն բավական մեծ էր սրահի մի անկյունում նստելու և փորձերի ժամանակ հիացական հայացքը մորը բևեռելու համար:

Իրիկնաժամին թփերն օրորող հովի պես թեթև անցնող ուրուն անհայտացավ: Ես քեզնից դառնացած հեռացա:

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱԿԻ (ՀԱՄԱԴԱՍ) ԱՆԴԱՄՆԵՐ

Հաճախ նախադասություն մեջ միևնույն անդամի պաշտոնով Հանդես են գալիս մեկից ավելի բառեր, որոնք կոչվում են **բազմակի անդամներ** կամ նախադասության **համադաս անդամներ**: Նախադասության համադաս անդամները շարահյուսական միևնույն գործառույթն ունեն և պատասխանում են միևնույն հարցերին. դրանք արտասանվում են թվարկման հնչերանգով, այսինքն՝ փոքր դադարներով: Գրավոր խոսքում բազմակի անդամները տրոհվում են ստորակետերով կամ միանում են համադասական շղկապներով:

Բազմակի կարող են լինել նախադասության թե՛ ենթական և թե՛ գոյականական ու բայական անդամների բոլոր լրացումները:

Հիշի՛ր՝ Բազմակի ստորոգյալներ ունեցող նախադասությունները ոչ թե պարզ, այլ բարդ նախադասություններ են, որովհետև, ինչպես ասվել է, նախադասության հիմնական քերականական կարգը ստորոգումն է, իսկ ստորոգումը իրականանում է ստորոգյալի միջոցով, հետևաբար՝ նախադասության մեջ քանի ստորոգում կա, այդքան էլ նախադասություն կա. ուրեմն՝ բազմակի ստորոգյալներով նախադասությունը դիտվում է բարդ համադասական նախադասություն: Այսպես՝

**Իմ պապը հողի հետ խորհել ու խոսել է,
Ամպի հետ արտասովել, ջրի հետ հոսել է (ՀՄ):**

Այստեղ կա 4 ստորոգյալ, ուրեմն կա և 4 ստորոգում. յուրաքանչյուր ստորոգյալ առանձին-առանձին տարբեր հատկանիշներ է վերագրում միևնույն ենթակային, ուրեմն գործ ունենք բարդ համադասական նախադասության հետ:

Վ. Տերյանի հետևյալ քառատողում նույնպես մեկ ենթակա կա, որին տարբեր ստորոգյալներով տարբեր հատկանիշներ են վերագրվում՝ **չըջելու, չըչելու, չչնջալու, անըջելու, սիրելու, հիչելու՝**

**Անտես ու հուշիկ իմ չուրջը չըջում
Եվ չչնջում ես, և անուշ չըչում,
Պայծառ տրտմությունք ինձ ես անըջում
Ու գաղտնի սիրով սիրում ու հիչում:**

Ուրեմն այս քառատողում կա մեկ բարդ համադասական նախադասություն՝ 6 ստորոգումներով:

Բերենք բազմակի **ենթականերով** նախադասությունների օրինակներ.

Թե աշխարհում արդարություն չկա վերուստ, Ու թե՛ դաշն են **Աստված, երկինք ու երկիր**, Պիտի փլվեն **ամեն պատնեշ, ամեն սուտ (ՍԿ): Անձրև, քամի, տրտունջ ու թախիծ, Լույսերս ոսկի ընկան ու հանգան...** (ՎՏ): Իմ գլխի վերև **չպետք է լինի Ոչ մի հովանի, ոչ մի իրավունք (Ավ. Իս.):**

Բազմակի որոշիչներ.— Անկախ այն բանից, թե որոշիչները ինչ խոսքի մասերով են արտահայտված, եթե դրանք համասեռ են, այսինքն՝ արտահայտված են միևնույն տեսակի ածականներով, գոյականներով, թվականներով, դերբայներով և այլն, և եթե դրանք առանձին-առանձին լրացնում են միևնույն գոյականական անդամին, ուրեմն՝ բազմակի, (համադաս) լրացումներ են. այսպես՝

Անհայտ, անորոշ, անձև տեսչերով

Ձգտում է հոգիս հեռու, շատ հեռու (Ավ. Իս.):

Օտար, ամայի ճամփեքի վրա Իմ քարավանս մեղմ կղողանջե (Ավ. Իս.):

Քարե, փայտե և նույնիսկ հողե տնակները ծառայում էին որպես մարդկանց կացարաններ (ԳՄ):

Առաջին երկու օրինակներում համադաս որոշիչներն արտահայտված են **որակական ածականներով**, երրորդում՝ **հարաբերականներով:**

Իսկ եթե որոշիչ դերում հանդես են գալիս որակական և հարաբերական ածականները միասնաբար, դրանք իրարից չեն տրոհվում՝ **Հին քարե կամուրջը** դեռ երկար կանգուն կմնա: **Երկաթե բարձր ցանկապատը** անհնար էր անցնել: **Լեռնային զուլալ առվակը** կյանք է պարզեում պապական թուսականությունը:

Ձեն տրոհվում նաև թվականներով ու ածականներով կամ, առհասարակ, տարբեր խոսքի մասերով իրար հետ հանդես եկող բազմակի որոշիչները (**Տասներկու փորձառու շինարարներ երկու ցրտաշունչ օրում** վերանորոգեցին երկաթուղին):

Օրինակներ բազմակի թվականներով և դերբայներով (Առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ կուրսերի պարապմունքներն ավարտվում են հունիսի 12-ին: Օղում ճախրող, երգող ու ծլվլացող թռչունները, զգալով արծվի մոտենալը, թաքնվեցին: **Դեղնած, դալկացած ու չորացած ծառերը** ջրի կարիք են զգում):

Տարբեր խոսքի մասերով արտահայտված բազմակի որոշիչները նույնպես տրոհվում են կամ կապակցվում են համադասական շաղկապներով՝

Իմ քաղցրանուն, իմ բարձրանուն, իմ տառապած, իմ փառապանծ...

Սրի պատյան, սիրո մատյան – Միշտ Հին ու նոր իմ Հայաստան (ՊՍ):

Բազմակի հատկացուցիչներ. Եվ հրաշքներով, վեհ լուսնի մեջ Տիեզերքն անծիր՝ դողանջում է խոր երգն **անմահության և՛ հավերժության, և՛ ճշմարտության, և՛ գեղեցկության** (Ավ. Իս.): Կարկուտից տուժել են **Գորիսի, Ղափանի և Սիսիանի** ցանքատարածությունները:

Բազմակի հատկացուցիչների հետ չպետք է շփոթել **աստիճանավորված հատկացուցիչները**, որտեղ մի հատկացուցիչը լրացնում է մյուսին՝ **ԵՊՀ-ի բանասիրական ֆակուլտետի երրորդ կուրսի ուսանողները հաջող հանձնեցին քննությունները:**

Բազմակի բացահայտիչներ. Ընկերներս՝ **Գեղամը, Տիգրանն ու Արշալույսը**, ավարտեցին համալսարանը:

Մասնավորեցնող՝ **պարազայական բացահայտիչները**, բազմակի չպետք է համարել՝ **Վտակի ափին՝ ուռենու տակ**, տխուր նստել էր Լիլիթը (Ավ. Իս.): 1999 թ. հոկտեմբերի 27-ին՝ ժամը 17/30-ին, Ազգային ժողովում տեղի ունեցավ մեծ աղետ:

Բազմակի ուղիղ (սեռի) խնդիրներ. Սրանք լրացնում են թե՛ դիմավոր և թե՛ անդեմ բայերին (վերջին դեպքում կոչվում են **կողմնակի**) և իրենց հետ կարող են ունենալ նաև լրացումներ՝

Սիրում եմ մեր երկիրքը մուգ, ջրերը ջինջ, լինճը լուսե,
Արևն ամռան ու ձմռվա վիշապաձայն բուքը վսեմ (ԵԶ):

Շինել ենք մենք կամուրջ, կապել ենք կամար...

Ամենքին տվել՝ միտք, առած, երգեր,...

Ամեն տեղ թողել մեր աչքից՝ ցոլանք,

Մեր հոգուց՝ մասունք ու նշխար՝ սրտից (ՊՍ):

Ինչպես թողնենք տունն ու ջաղացը՝ անտեր,
«Իմալ կեղնի, իմալ չերթանք մրր էրգիր» (ՍԿ):

Կողմնակի՝ Սիրելով քո երկիրը, հողն ու ջուրը, կսիրես նաև քո ժողովրդին (ԳԹ):

Բազմակի անուղղակի (բնության) խնդիրներ. Բազմակի կարող են լինել բոլոր տեսակի բնության խնդիրները, որոնք լինում են թե՛ սովորական և թե՛ կողմնակի. դրանք կարող են լինել ինչպես միաբառ, այնպես էլ՝ իրենց հետ ունենալ լրացումներ՝

Մեր սուրբ գոհերի, մեր սուրբ հողերի, մեր ցավի մասին

Այսքան տարիներ ո՞ւր էինք լուել (ՍԿ):

Ինձ չաղախեցիր մարդկային կավից:

Միրուց, զայրույթից, բերկրանքից, ցավից (ՍԿ):

Ինչպե՞ս եք ապրում, դու ձեզնից պատմի,

Ձեր օր ու կյանքից, ձեր ցավ ու դարդից (ՀԹ):

Ապրում էինք հույսով, սիրով ու հավատով: Անցյալում գյուղացին հողը մշակում էր արորով ու գութանով, բահով ու բրիչով, մաճով ու մաճկալով:

Բազմակի պարագաներ. Բազմակի են լինում նաև բոլոր տեսակի պարագաները՝ արտահայտված մեկական բառերով կամ բառակապակցություններով՝

Կանգնեցի խոժոռ, մենակ ու հաստատ Մասիսի նման,

Կանչեցի թշվառ էն հոգիներին՝ ցրված հավիտյան

Մինչև Միջագետք, մինչև Ասորիք, մինչև Ծովն Հայոց,

Մինչև Հելեսպոնոս, մինչև Պոնտոսի ափերն այեկոժ (ՀԹ):

Ախ, դու էլ ոլոր, մոլոր գնացիր, Ո՞ւմ հարցնենք՝ որն է ճամփան Բինգյոլի (ՍԿ):

Դու քայլում ես սարով, ձորով, աշխարհով,

«Քելե, լաո՛, քելե էրթանք մըր էրգիր» (ՍԿ):

Խեղճ մայրը սպասեց որդուն օրերով, ամիսներով ու տարիներով... Ամառ, ձմեռ, գիշեր, ցերեկ՝ նա իր գործն էր անում՝ աչքը ճամփին:

Կապի խնդիրներով արտահայտված պարագաները նույնպես կարող են բազմակի լինել (Հայրենիքի համար, այս աղջկա համար արժե կովել ու մեռնել – ԳՍ): Աշխատում էր՝ հանուն իր տան ու տեղի, հանուն երկրի ու հողի, հանուն իր ժողովրդի:

Ծանոթություն. Միևնույն բառի կրկնությունը արտահայտված լրացումները բազմակի անդամներ չպետք է համարել՝ Ու պայքար, պայքար, պայքար երգեցի (ԳՎ): ...Իմ հեռո՛ւ, հեռո՛ւ, հեռո՛ւ, նաիրյան դալար բարդի (ՀՍ): Իմ սիրելի, շահ սիրելի հանդիսատես, նորից տեսա քեզ (Վ. Փափազյան):

Հ ար ց ե ր

1. Բազմակի անդամներ ասելով ի՞նչ եք հասկանում:
2. Ինչո՞վ են տարբերվում բազմակի ենթականներ և բազմակի ստորոգյալներ ունեցող նախադասությունները (ցույց տվեք օրինակներով):
3. Ո՞ր դեպքում բազմակի որոշիչները չեն տրոհվում:
4. Բերե՛ք բազմակի տարբեր անդամներով նախադասություններ:

Վարժույթուն: Նչե՛ք, թե որոնք են բազմակի անդամները, անվանեցե՛ք դրանք և նչե՛ք կետադրույթունը:

Բացել ես իմ դեմ ոսկեղեն հեռուն,

Ծաղկել ես սարում, անտառում, արտում...

Ուրիշ երգեր են հնչում իմ սրտում -

Ողջո՞ւյն քեզ, ա՛րև, ողջո՞ւյն քեզ գարո՞ւն (ՎՏ):

Անհուն նիրհեցին ծով, անտառ ու լեռ,

Ննջեցին անուշ երկինք ու երկիր (ՎՏ):

...Լույսերը քնքուշ գրկեցին անուշ երկինք, ծով ու հող (ՎՏ):

Այդ մատյաններում թափվեցին հանճարեղ մի կյանքի ողջ արյունը, ժպիտը, նրա մոռյլ խոհերի լուսավոր կաթիլները (Թոթովենց): Լճակները միամիտ, ակնապիչ նայում էին գունատ երկնքին (ԴԴ): Անին, Դվինը, Մուշն ու Վանը հայկական հող են (Ժող.): Տե՛ր, տո՛ւր մեզ մեր Դվին, Վանն ու Արտաշան (Ժող.): Այդ երգի մեջ կար և՛ թախիծ, և՛ ուրախություն, և՛ կարոտ (ԵԶ): Դու ես միայն ինձ հետ կիսել թե՛ վիշտ, թե՛ վերք, թե՛ երգ, թե՛ վարդ (ԵԶ): Հեռանում էր անդարձ, ամփոփ ու լռին (ԵԶ):

Կոմիտասը Փարիզում, Շվեյցարիայում, Լոնդոնում, Բեռլինում ու Բուրգերի երկրում ցույց տվեց մեր ազգային երգը՝ մաքրված, անաղարտ ու ինքնուրույն (Ավ. Իս.):

Մեծ է Հրաչյա Աճառյանի կյանքի աշխարհագրությունը. նա աշխատել է էջմիածնում, Շուշիում, Նոր Բայազետում, Թեհրանում, Թավրիզում, Նոր Նախիջևանում ու Երևանում (ԽԲ): ... Երգեց խանդով, ավյունով, կրակով (Ավ. Իս.): Ձեզանից յուրաքանչյուրն ունի նվիրական երազանքներ, բաղձալի ցանկություններ, կյանքի որոշակի նպատակներ (ԹՆԺ): Կարմիր, դեղին, կապույտ ու վարդագույն ծաղիկներով զարդարեցին Եռաբլուրի հերոսամարտիկների շիրիմները: ...Ու գալիս էր դեպի տուն, դեպի իր նվիրական ու սիրասուն հայրենիքը (ԽԲ):

Շարահյուսական կառույցներում հաճախ նախադասություն որևէ անդամ արտաբերվում է որոշակի հնչերանգով, որը գրավոր խոսքում նշույթավորվում է կետադրական նշաններով՝ ստորակետով կամ բութով. դադարով առանձնացած այդ անդամին տրվում է **տրոհվող անդամ անվանումը**: Տրոհումով խոսողը նպատակ է դնում ընդգծել իր համար ավելի շատ կարևորություն ունեցող անդամը՝ հաղորդակցվողի ուշադրությունը հրավիրելով նրա վրա:

Նախադասություն տրոհվող անդամներից ամենաակնառուն կոչականն է:

Կ Ո Ջ Ա Կ Ա Ն *

Նախ՝ տեսնենք, թե ինչ է կոչականը, ինչ արժեք ունի նախադասության կազմում, նախադասության անդամ է, թե՞ ոչ, ապա՝ անդրադառնանք նրա տրոհմանը, հնչերանգին, շարահյուսականն ու ոճական արժեքին:

Կոչականը նախադասության այն անդամն է, որն արտահայտվում է մեկ բառով կամ բառակապակցությամբ և ցույց է տալիս այն անձը կամ առարկան, որին դիմում է խոսողը, որին հասցեագրվում, ուղղվում է խոսքը, արտահայտությունը:

Թե՛ գրավոր և թե՛ բանավոր խոսքում կոչականը վճռորոշ նշանակություն ունի. խոսքի մեջ կոչականը գործածվում է այն դեպքում, երբ խոսողը կամ գրողը ցանկանում է խոսքային փոխադարձ կապի մեջ մտնել, հաղորդակցվել խոսակցի, կամ անձնավորված առարկաների հետ, նրանց ուշադրությունը հրավիրել դեպի իր հաղորդումը, խոսակցին ընդգրկել խոսքային ոլորտ: Այսպիսի հաղորդակցումը կարող է տեղի ունենալ երես առ երես, այսինքն՝ որպես խոսքային հաղորդակցման ձև հանդես է գալիս երկխոսությունը (Պատասխան տուր, մատնի՛չ սևաչյա (ՀԹ), կամ խոսողը, գրողը մտովի է դիմում հաղորդակցման ոլորտ ընդգրկվող անձին կամ առարկային: Այս դեպքում խոսողը հիմնականում ինքն իր հետ է լինում, կամ խոսակցին պատկերում է մտովի (Ծերանում ենք, Պարո՛ւյր Սևակ, ծերանում ենք, սիրելի՛ս (ՊՍ): Գնա՛ Պեպո՛, գետինը լիղե...): Հասկա-

* Կոչականի մասին ավելի հանգամանորեն տե՛ս մեր «Կոչականը և նրա ուսուցումը» գրքում, Եր., 1982, «Լույս» հրատարակչություն:

նայի է, այս դեպքում գործ ունենք ներքին խոսքի՝ մենախոսության հետ:

Կոչականի վերաբերյալ լեզվաբանական գրականություն մեջ միասնական կարծիք չկա. որոշ լեզվաբաններ այն նախադասությունն անդամ չեն համարում:

Գուցե այս տեսակետը գալիս է ուսն նշանավոր շարահյուսագետ Ա. Պեչկովսկու այն թյուր կարծիքից, թե կոչականը իբրև նախադասության մարմնի մեջ խրված գնդակ է, այսինքն՝ նախադասության համար խորթ, օտար մարմին է:

Սակայն, իրականությունն այն է, որ ինչպես ապացուցում են ուսն և հայ մի քանի լեզվաբաններ, կոչականը նախադասության կարևորագույն անդամներից մեկն է, որովհետև նրա և ենթակայի ու ստորոգյալի միջև կա ինչպես իմաստային, այնպես էլ քերականական կապ:

Այսպես, ակադեմիկոս Վ. Վինոգրադովը, պրոֆեսորներ Ա. Գվոզդևը, Ա. Ռուդները, Վ. Պրոնիչևը, հայ լեզվաբաններ Ռ. Իշխանյանը, Մ. Ասատրյանը և էլի ուրիշներ կոչականը նախադասության անդամ են համարում:

Ա. Ռուդները գրում է. «Կոչականը նախադասության կառուցվածքում հանդես եկող առանձնահատուկ անդամ է, որն արտահայտվում է գոյականի, կամ գոյականացած այլ խոսքի մասի ուղղական հոլովով, ընդգծում է այն դեմքը կամ առարկան, որին ուղղված կամ հասցեագրված է խոսողի խոսքը»:

Ակադեմիկոս Վ. Վինոգրադովը կոչականը ոչ միայն համարում է նախադասության անդամ, այլև նրան վերագրում է ժամանակի, դեմքի, թվի և եղանակավորման քերականական կարգեր, երբեմն էլ ստորոգման հատկանիշ:

Վաստակաչատ հայագետ Մ. Արեղյանը թեև կոչականը նախադասության անդամ չի համարում, այնուհանդերձ գրում է. «Կոչական անունը, երբ բայը երկրորդ դեմքով է, բացահայտիչ է ենթակայի, արտահայտված լինի ենթական դերանունով, թե ոչ, օրինակ՝ Դու, կաթողիկոս, հորինե կոնդակ: Դու, հայ՝ զորապետ, գլխահայերուն: Լսիր, որոյա՛կ, հորջ խրատին»:

Եվ իսկապես, եթե կոչականը և ենթական նույն անձն են, այսինքն՝ արտահայտված են երկրորդ դեմքով, ուրեմն կոչականը ստորոգյալի հետ համաձայնում է նաև թվով (Այ վարդ, լսի՛ր աղաչանքս, և Այ վարդեր, լսե՛ք աղաչանքս):

Ճիշտ է, կոչականը մեծ մասամբ հանդես է գալիս երկրորդ դեմքի հետ և միշտ համաձայնում է ստորոգյալի թվին, բայց կոչականները հանդես են գալիս նաև բայերի առաջին և երրորդ դեմքերի հետ, այս դեպքում արդեն «խոսքի կապակցությունից դուրս է և ցույց է տալիս մի առարկա, որին դիմում է խոսողը: Այս դեպքում կոչականը մենակ մի տեսակ առանձին խոսք է կազմում: Օրինակ՝ **Տիգրան**, ո՞վ է գնացել (իրբև՝ ասա դու, Տիգրան)», - գրում է Աբեղյանը: Եվ իսկապես, այս դեպքում կոչականը առանձին նախադասություն արժեք է ստանում, արտաբերվում է առանձին հնչերանգով և դիտվում է **անվանական-կոչական նախադասություն**՝

- Մայրի՛կ, (ասա՛) ի՞նչ է պատահել:
- Անդո՛, (նայիր) այն մեկին էլ կարամ խփեմ (ԱԲ):

Ակադեմիկոս Գ. Զահուկյանը, թեև կոչականը նախադասություն անդամ չի համարում, բայց նրան վերագրում է **ուղղական հոլովի հատկանիշ**: Այդպես են վարվում նաև դպրոցական դասագրքերի հեղինակներ էդ. Աղայանը և Հ. Բարսեղյանը: Այս դեպքում ակնհայտ է բացահայտ հակասությունը, եթե որևէ բառի հոլովի քերականական կարգ է վերագրվում, ուրեմն՝ այն պետք է շարահյուսական որևէ անդամի պաշտոն կատարի նախադասության մեջ, հետևաբար, եթե կոչականին վերագրվում է հոլովի քերականական կարգ, ուրեմն այն նախադասության անդամ չլինել չի կարող:

Փորձենք մի երկու նախադասություններից հանել կոչականները, կտեսնենք, թե խոսքը ինչքան անորոշ ու տարտամ կլինի, և չի հասկացվի խոսողի, գրողի ասելիքի բուն էությունը: Օրինակ, ինչի՞ նման կլինի Սիլվա Կապուտիկյանի պատգամը, եթե այն հասցեագրված չլինի իր որդուն, որն այստեղ ընդհանրացված կերպար է.

Լսի՛ր, որդի՛ս, պատգամ որպես,
Սիրող քո մոր խոսքը սրտանց,
Այսօրվանից հանձնում եմ քեզ
Հայոց լեզուն հազարազանձ:

Կամ ինչի՞ նման կլինի Սարմենի հետևյալ սրտառուչ խոսքը, եթե այնտեղ **Կոմիտաս** կոչականը չլինի, ի՞նչ կլիմացվի, թե ո՞ւմ է կանչում կաքավը.

Գարուն է, անուշ գարուն, Գու ինչո՞ւ չկաս,
Կաքավն է երգում սիրով, Կանչում է՝ եկ, Կոմիտաս՛ս:

Կամ առանց կոտնակ կոչականի պանդուխտը ումից խապրիկ մը կաղերսեր (կոտնակ, մեր աշխարհեն խապրիկ մը չունի՞ս), առանց ծովակ կոչականի Բաֆֆին ո՞ւմ հետ կխոսեր (Ջայն տուր, ով ծովակ), առանց Արաքս կոչականի Պատկանյանն ո՞ւմ կղիմեր (Արա՛քս, ինչու ձկանց հետ պար չես բռնում մանկական...):

Տեղին ենք համարում նշել, որ որոշ կառույցներում կոչականներն ավելի կարևոր դեր են խաղում, քան ենթակաները, ավելի ակնառու են նշում գործողություն կատարողը, այն անձը կամ առարկան, որին ստորոգումով վերագրվում է որևէ հատկանիշ: Այսպիսի դեպքերում կոչականները ոչ միայն բացահայտում են ենթական, այլև, ավելի ակտիվանալով, իրենք են «ասանձնում» ենթակայի դերը, չվերածվելով սակայն քերականական ենթակայի. այս դեպքում կոչականները դառնում են ասույթի, դատողության տրամաբանական ենթակաները: Հայտնի է, որ կոչականների առկայության դեպքում շատ հաճախ նախադասությունների ենթակաները չեն կիրառվում (սա հատկապես այն դեպքում է լինում, երբ կոչականները հանդես են գալիս երկրորդ դեմքերի բայերի հետ): Ինչպես՝ «Ազնո՛, որ մեծանաս ի՞նչ ես դառնալու» (ԱԲ): «Մարդի՛կ, ինձ շատ եք շարչարել» (ՀՍ): «Երկնքի՛ աստղեր, հոգվույս մեջ ընկեք, Կայծ տվեք, կյանք ձեր սիրահարին հեզ» (ՊԳ):

Ազնո, մարդիկ, երկնքի աստղեր կոչականների հետ դու և դուք ենթակաների գործածությունը իսկապես ավելորդ կլինեն, որովհետև հենց այդ կոչականների մեջ է ամփոփված դերանվամբ արտահայտված ենթակաների բուն էությունը: Դեռ ավելին՝ եթե Ազնո, մարդիկ, երկնքի աստղեր կոչականների փոխարեն գործածված լինեին դու և դուք դերանուններով արտահայտված ենթակաները, ապա այդ նախադասությունների միտքը խիստ անորոշ կլիներ. բոլորովին Հայտնի չէր լինի, թե հեղինակները ում հետ են խոսում, ովքեր են ընկած գործողությունների ոլորտներում:

Բերված օրինակներն էլ, անշուշտ, ապացուցում են, որ կոչականը նախադասության կազմից դուրս մնալ չի կարող. այն վճռական դեր է խաղում նախադասության իմաստի ճիշտ ձևավորման գործում, հետևաբար, այն նախադասության «մարմնի մեջ խորթ, օտար մարմին» լինել չի կարող. ինչպես թյուրիմացաբար գրել է ռուս լեզվաբան Պեչկովսկին:

Քանի որ կոչականը նախադասության անդամ է, ուրեմն այն պետք է օժտված լինի իրեն հատուկ քերականական կարգերով. տեսնենք՝ որո՞նք են դրանք:

Կոչականի քերականական կարգերը

1. Ամենից առաջ՝ կոչականին վերագրվում է **Հոլովի քերականական կարգը**. այն դրվում է **ուղղական Հոլովով** և որոշիչ Հոգ չի ընդունում*:

2. Դիմավոր բայերի **երկրորդ դեմքի** հետ հանդես եկող կոչականները սերտորեն կապվում են բայերով արտահայտված ստորոգյալների հետ և ընկնում են բայերին հատուկ քերականական կարգերի՝ **եղանակավորման, դեմքի, թվի**, ինչպես նաև **ժամանակի** ոլորտներում: Այս մասին ակադեմիկոս Վ. Վինոգրադովը գրում է. «Ստորոգելիությունը հատուկ է նաև կոչականին՝ խոսքի հասցեատիրոջ անվանմանը: Այսինքն՝ այդ միջոցով նրա մասին հասկացությունը արտահայտումը հարաբերակցվում է օբյեկտիվ իրականությունից հետ և կոնկրետացնում է օբյեկտը՝ իրական կամ ենթադրյալ անձը, որին խոսքով դիմում է խոսողը: Հարաբերակցությունից հետևում է, որը քերականությունից հետևում է հասկացությունից կոնկրետացման մեջ, որը քերականությունից հետևում է եղանակավորման, դեմքի, թվի ու ժամանակի քերականական կարգերի միջոցով»**:

Ելնելով Վինոգրադովի այս նկատառումներից և կոչականի ընձեռած հնարավորություններից՝ քննենք այդ կարգերը:

Եղանակավորում – Ամենից առաջ ասենք, որ կոչականը առնչվում է բայի եղանակների հետ: Վիճակագրական պարզ հաշվումներն էլ հաստատում են այն փաստը, որ կոչականները ամենից շատ հանդես են գալիս հատկապես հրամայական և բացականչական նախադասություններում, որտեղ դրանք ավելի են կոնկրետացնում խոսքը՝ այն ուղղելով գործողությունից կատարողին և ուժեղացնում են բայստորոգյալի արտահայտած հրամանն ու կարգադրությունը, հանդիմանությունն ու խնդրանքը՝ «Թո՛ւ՛ք, բազենե՛ք, սուրացե՛ք, տանկե՛ք, դեպի թշնամին» (ՆԶ): «Զգուշացե՛ք, պարո՞ն, ապա թե ոչ՝ ձեզ հետ կկորչի նաև ձեր աղջիկը» (Շ): «Զա՛յն տուր, ով ծովակ» (ԲաՓ.): «Կանգնի՛ր, քարավա՛նս, Ինձի կի՛վա, թե հայրենիքես ինձ մարդ կկանչե» (Ավ. Իս.):

*Մի շարք հին լեզուներ (սանսկրիտ, լատիներեն, գրաբար, հին սլավոներեն) ունեցել են կոչական Հոլով: Այժմ էլ կոչական Հոլով ունեն հունարենը, վրացերենը, բրդերենը և այլ լեզուներ:

** Տե՛ս **В. Виноградов**, Основные вопросы синтаксиса предложения. В книге "Вопросы грамматического строя", М., 1955, ст. 405.

Կոչականները առատորեն են գործածվում նաև արգելական հրամայականներում՝ Մի՛ վազեք, ալի՛ք, կացե՛ք, կոհակնե՛ր (Հ. Հովհ.): - Արևի՛կ, դու ոչ մի՛ տեղ մի՛ գնա, մնա ինձ մոտ (ՎՊ): Մի՛ լար, որդի՛ս, որ չես լսում էլ մայրական քաղցր օրոր (Ծատ.):

Կոչականներն ավելի սակավ կիրառություն ունեն նաև բացականչական նախադասություններում՝ Թաղեմ քեզ, հատի՛կ, ու դարդս քեզ հետ (Հ. Հովհ.): Գնաս բարով, հայ՛ ուխտավոր, Երանի քեզ, հայ՛ ուխտավոր (ՀԹ): Մնաս բարով, Պարո՛ւյր (ՎԴ):

Կոչականները հանդես են գալիս նաև հարցական նախադասություններում, որոնց ստորոգյալներն արտահայտվում են սահմանական, պայմանական և հարկադրական եղանակների բայերով՝ Գովքդ ասող չմնաց, ո՞ւր ես գալիս, այ՛ գարուն (Հ. Հովհ.): - Կգա՞ս այսօր ինձ մոտ, սիրելի՛ Լիլիթ (ՎՊ):

Դեմքի և թվի քերականական կարգերը կոչականի ամենաբնորոշ հատկանիշներն են. կոչականը դեմքով և թվով համաձայնում է ստորոգյալին:

3. **Դեմքի քերականական կարգը.** Քանի որ կոչականը մեծ մասամբ հանդես է գալիս որպես խոսակից, ուրեմն այն հիմնականում կապվում է երկրորդ դեմքի հետ, և նրան վերագրվում է երկրորդ դեմքի քերականական կարգը՝ Թո՛ղ, Դիլան՛, գնա քեզ համար (ԱԲ): Անցո՛րդ, խոնարհիր գլուխը քո սեզ, Այստեղ հանգչում է մի բուռ տիեզերք (ՀԾ): Կանչե՛, կոո՛ւնկ, կանչե՛, քանի գարուն է (Ժող.):

Երբեմն էլ կոչականին վերագրվում է առաջին դեմքի հատկանիշ. այս դեպքում եզակի թվով գործածվող կոչականի հետ ստորոգյալը հանդես է գալիս հոգնակի թվով. պատճառն այն է, որ խոսողը իր խոսակցին ներառում է առաջին դեմքի ոլորտում, և գործողության կատարումը վերագրվում է թե՛ ենթակային և թե՛ կոչականին՝ միաժամանակ՝

- Կովենք, սպարապե՛տ, կովենք, սերունդ-սերունդ կովով գնանք (ԴԴ):

Կոչականը առաջին դեմքի հետ է համընկնում նաև, երբ խոսողը ինքն իր հետ է խոսում (ներքին խոսք)՝ «Մերանում ենք, Պարո՛ւյր Սևակ, ծերանում ենք, սիրելի՛ս»:

4. **Թվի քերականական կարգը.** Կոչականի թիվը համընկնում է ստորոգյալի թվին. բնականաբար, երբ խոսողը դիմում է մի անձի կամ առարկայի, և՛ կոչականը և՛ ստորոգյալը կրթվեն եզակի թվով, իսկ եթե դրանք մեկից ավելի են, երկուսի թիվն էլ կլինի հոգնակի՝ «Տղա՛ ջան, օգնի՛ր ինձ» և «Տղանե՛ր, օգնե՛ք ինձ»:

Եվ, որոտա՛, զահագ և արթնացրու
Դարավոր նիրհից Մասիս ու Կազրեկ,
Թա՛փ տուր թևերդ, արծի՛վ լեռներու,
Քնա՛ծ առյուծներ, բաշերդ թոթվեք (Ավ. Իս.):

Դուք էլ ինձ հետ ձեռն տվեք, Իմ դարդերին թա՛յ սարեր (ՀԹ):

5. Կոչականի համար կարևոր հանգամանք է նաև ուղղակի խոսքը անուղղակիի փոխակերպելիս. այս դեպքում ուղղակի խոսքի կոչականը անուղղակի խոսքում դառնում է **ենթակա** (կամ հանգաման խնդիր).

– **Երեխաններ՛, վաղը կգաք շաբաթօրյակի,**– ասաց դասղեկը:

Դասղեկն ասաց, որ երեխաները վաղը գան շաբաթօրյակի:

6. **Ժամանակի քերականական կարգը** նույնպես կարևոր հանգամանք է կոչականի համար. քանի որ կոչականը մեծ մասամբ հանդես է գալիս հրամայական և բացականչական նախադասություններում, իսկ դրանց ստորոգյալները արտահայտվում են հրամայական և ըզձական բայաձևերով, որոնք ունեն միայն **ապառնի ժամանակ**, հետևաբար կոչականն էլ հիմնականում հանդես է գալիս բայի **ապառնի ժամանակով** արտահայտված ստորոգյալների հետ՝

Հոգի կուտամ, Հոգի տուր ինձ,

Իմ նազելի՛ ա՛չազեղ (Ավ. Իս.):

Քնքո՛ւչ հովիկ, իմ նազելուց քաղցր բուրմունք հետդ բեր (Ավ. Իս.): Իսկապես, Մամբրե՛, դու պատասխանելու ես այդ երես առած Պարույրին (ՎՊ):

Ինչ խոսք, չի բացառվում նաև մյուս ժամանակների հետ հանդես գալը:

Կոչականի շաբաժնուսական կառուցվածքը և արտահայտությունը

Ինչպես երևաց բերված օրինակներից, կոչականները խոսքում հանդես են գալիս ինչպես մեկ բառով, այնպես էլ՝ իրենց լրացումներով: Լինելով նախադասություն՝ գոյականով (կամ գոյականաբար հանդես եկող այլ խոսքի մասերով) արտահայտված անդամ՝ կոչականն, անչուշտ, ստանում է գոյականին հատուկ լրացումներ և վերածվում է **բազմանդամ կոչականի**: Ըստ որում այդ լրացումները կարող են լրացնել ինչպես կոչականին, այնպես էլ իրար (վերջին դեպքում գործ կունենաք **երկրորդ աստիճանի** լրացումների հետ): Բազմանդամ կոչականներում բնականաբար գերադաս անդամը լինում է **բուն կոչականը**, ինչպես դերբայական դարձվածում գերադաս անդամը անկախ դերբայն է:

Բուն կոչականը (ծավալուն կոչականի գերադաս անդամը) կարող է ունենալ որոշիչ լրացումներ՝

Ածականներով (Արդյոք ո՞ւր ես դու իմ անո՛ւշ երազ: Սիրո՛ւն աղջիկ մոտ արի):

Թվականներով (Իններո՛րդ Համար, դաս պատասխանիր: Առաջի՛ն կանգնած, ետ գնա):

Դերբայներով (Դադարա՛ծ, բեզարա՛ծ յար ջան, Ամպերն ելան, տո՛ւն արի (Ավ. Իս.):

Գոյականի տարբեր հոլովներով (Աստվածամա՛յր, մա՛յր իմ դու Հեզ, Չունես չարի ոչ մի թեկ (ՀՇ): Այ Համո՛վ աղջիկ, այ ծամո՛վ աղջիկ...):

Հատկացուցիչ լրացումներ՝ **Երկնքի աստղե՛ր**, հոգվույս մեջ ընկեք, Կայծ տվեք, կյանք՝ ձեր սիրահարին հեզ (ՊԳ): Քո ունքերդ, իմ սիրեկա՛ն, կեռ են դահճի թրի նման (Ավ. Իս.): Շատ համեղ ես դու, **Երևանի՛ ջուր** (Ժող.):

Բացահայտիչ լրացումներ՝ Այս լրացումը ավելի է պարզաբանում այն անձը կամ առարկան, որին դիմում է խոսողը, գրողը՝

Մենավո՛ր իմ սիրտ՝ մոլորվա՛ծ թռչուն,

Կարոտիդ կանչը չի հասնի նրան (ՎՏ):

Հրա՛չք աղջիկ՝ գիշերների՛ թագուհի,

ձառագայթող քո աչքերով դու եկար (ՎՏ):

Հաճախ միևնույն կոչականը կարող է ունենալ և՛ որոշիչ, և՛ հատկացուցիչ և՛ բացահայտիչ լրացումներ՝

Մա՛յր իմ ժողովուրդ, դեպի քեզ կգամ,

Դեպի քեզ, հայրենի՛ աշխարհ (Ավ. Իս.):

Քեզ մոտ եմ գալիս, հայրենի՛ք իմ հեզ (ՀԹ):

Մեկամաղձո՛տ լճակ իմ, քեզ հետ ըլլանք մտերիմ (ՊԳ):

Կոչականի արտահայտությունը

Միաբառ կոչականը, կամ բազմանդամ կոչականի գերադաս անդամը կարող է արտահայտվել տարբեր խոսքի մասերով, ինչպես նաև բառակապակցություններով՝ այդ թվում նաև դարձվածային միավորներով՝ բոլորն էլ ուղղական հոլովով և առանց որոշիչ հոդերի (Ս և Գ հոդեր կարող են ստանալ):

Գոյականներով. Արի, իմ սոխա՛կ, թող պարտեզ մերին,

Տաղերով քուն բեր տղիս աչերին (ՌՊ):

Գիշեր ու զօր դու հնչում ես, իմ անո՛ւշ տավիղ, Ասես աղբյուր կարկաչում ես, իմ անո՛ւշ տավիղ (Վ. Հարությունյան): Ինչպես չսիրեմ քեզ, իմ անգի՛րն լեզու (Դև):

Ածականներով. Այս դեպքում կոչականը ածականների հետ մեծ մասամբ հանդես է գալիս նաև **Ջան բառը՝ Անո՛ւշիկ Ջան**, մի բաժակ ջուր տուր: **Փոքրի՛կ Ջան**, մոտ արի: **Ել, ազի՛զ Ջան**, գարունն եկավ, Ալ-բալ հագան սար ու ձոր (Ավ. Իս.):

Ջան բառին նման դեպքերում համարժեք է ս հոդը, որը փաղաքչականի իմաստ ունի (փոքրիկս, անուշիկս, թմբլիկս, սիրունիկս, լավիկս, ջանիկս, նագելիս):

Բարձր են երկնի ձեղունները, նագելի՛ս,
Բայց իմ սերը բարձրաբերձ է նրանցից (Ավ. Իս.):

Շատ մի՛ տխրիր, շատ մի՛ խնդա, սիրելի՛ս,
Այս աշխարհում ոչ մի բան հիմք չունի (Ավ. Իս.):

Ածականները կոչականի դեր են կատարում նաև այն դեպքում, երբ խոսողը խոսակցին դիմում է հանդիմանելու, վիրավորելու, անարգելու համար և գործածում է **դմբո, հիմար, անզգամ, դող, տգետ, տհաս, անճոռնի, ապաշնորհ, անգուլթ, անխիղճ**, ածականները, ինչպես նաև՝ **հայվան, անասուն, գազան, բորենի** և նման գոյականներ:

Թվականներով. **Առաջին**, արագացրու քայլերդ, **երկրորդ**, իսկ դու հասիր նրան: **Չորս հարյուր հինգ**, ջահը վաճառված է. մուծիր դրամը և ստացիր քո ապրանքը:

Դերանվամբ. Որպես կոչականներ կարող են գործածվել միայն անձնական դերանվան երկրորդ դեմքի եզակի և հոգնակի թվերը. պատճառն այն է, որ խոսողը կոչականին դիմում է որպես խոսակցի, որին էլ հատուկ է երկրորդ դեմքը:

Դո՛ւ հին, հնամյա, **դու** բիրլիական,
Դու նոր Երևան՝ պատմությամբ լի (ՍԿ):
Դո՛ւք, վե՛հ վկաներ մեր անմահ փառքի,
Մեր ստեղծագործ ոգու, հանճարի (Ավ. Իս.):

Բնականաբար, **դերանուն-կոչականները** տարբերվում են **դերանուն-ենթականներից**. Էնթականների դեպքում՝ նրանց ստորոգումով հատկանիշ է վերագրվում (Ես կգամ, երբ դու մենակ կմնաս - ՎՏ): (Դուք էլ ինձ հետ ձեն տվեք, իմ դարդերին թայ սարեր - ՀԹ), իսկ

ղերանուն-կոչականների դեպքում՝ խոսողը պարզապես դիմում է որևէ անձի կամ առարկայի, և չկա ստորոգում:

Քանի որ ղերանունն ունի ընդհանուր, չտարբերակված իմաստ, այդ պատճառով էլ խոսողը, գրողը իր խոսակցին ավելի որոշակի ու ճանաչելի դարձնելու համար հաճախ բացահայտում է, թե ով կամ ինչ է այդ ղերանուն-կոչականը՝

Իմ սո՛ւրբ մանկիկ, թող համբուրեմ թաթիկներդ ցեխոտած.

Դու՛ կյանք ու սեր, ծափ ու ծիծաղ,

Ուրախություն դու աստված (Ավ. Իս.):

Վառ ու հզոր քո ապագան կայծակում է իմ դեմ,

Դու՛ հավերժող իմ Հայաստան, անուն քաղցր ու վսեմ (Ավ. Իս.):

Ոոսակցին տեղանունով կոչելը նույնպես ընդունված դիմելաձև է, որն ավելի շատ բանավոր խոսքին է հատուկ և հիմնականում հասարակարանություն է՝

– *Տո մեղրաձո՛րցի, դու քանի՞ գլխանի ես, որ Հացավանի կանանց վրա ձեռ ես բարձրացնում (ՆՁ):* – *Այ գյու՛մրեցի, դու ասա:*

Արևն ելավ, գեյթունցի՛նե՛ր, Դե չուտ ելեք, թամբեք ձիեր...

Կոչականներ են դառնում նաև ազգություն, զբաղմունքի մասնագիտություն անվանումներ, ինչպես նաև ցանկացած բառեր, բառակապակցություններ ու դարձվածներ.

– *Ռո՛ւս, դրաստի, ոո՛ւս, դրաստի,*– վաղելով ոուս զինվորների հետևից բղավում էին գյուղի երեխաները (ՀՄ):

– *Չարչի՛ ախպեր, չարչի՛ ախպեր, ասեղ ունե՞ս, էս կողմը բեր (ՀԹ):* – *Վարո՛րդ, այստեղ պահեք մեքենան, խնդրում եմ:* – *Պաղպաղա՛կ, պաղպաղա՛կ, սպասիր մի քիչ: ... Դու օգտվեցիր, թվաբանություն՝ (ՊՍ):* – *Ախ, մանկավարժություն աստված, ի՞նչ դարձրինք մենք քո տաճարը (ՎՊ):* *Տո դարձանի տակի՛ ջուր, լո՛ի՛ր էլի: Ցամա՛ք ձորի աղվես, գոնե դու մի՛ խոսիր (ՈՒԴԲ):*

Կոչականի ոճական արժեքը

Կոչականը հատուկ է գրավոր և բանավոր խոսքի բոլոր ոճերին, այն դրանցում ունի տարբեր գործառույթներ ու բազմազան կիրառություններ: Այսպես՝ վարչա-գործառական ոճերում պաշտոնական բնույթ է կրում, և որպես կոչականներ գործածվում են ընկեր, պարոն, քաղաքացի, ամբաստանյալ և այլն, ինչպես նաև անուն և հայրանունով կոչելը:

Առօրյա-խոսակցական ոճերում շատ բազմազան կիրառություններ ունի՝ կապված ընկերական, ընտանեկան, բարեկամական, մարդկանց վարքագծի, զրաղմունքի, տեղայնացման, առավելությունների ու թերությունների և ուրիշ հատկանիշների ու հանգամանքների հետ:

Գրական ոճերում կոչականն ավելի լայն կիրառություններ ունի. հատկապես պոեզիայում այն երանգավորում է խոսքը, հուզականություն ու արտահայտչականություն է հաղորդում խոսքին, անձնավորում ու շնչավորում է առարկաներն ու երևույթները: Ոճական գեղեցիկ հնար է նաև կոչականների կրկնությունը՝

*Հեյ, ճամփանե՛ր, ճամփանե՛ր, Անդա՛րձ ու հի՛ն ճամփանե՛ր,
Ուվքե՞ր անցան ձեզանով, Ո՞ւր գնացին, ճամփանե՛ր (ՀԹ):*

Երբ կոչականը շարադասվում է տողերի վերջում (**էպիֆոր**) ավելի ուժգին է արտաբերվում և ավելի հանդիսավոր է դարձնում խոսքը:

*Բարև կուտամ, չես առնի, ոտքիդ կոխած հողն եմ, յա՛ր,
Սիրտս, անխիղճ, մի ճմլի, չէ՞ որ միջին դուն ես, յար (Ավ. Իս.):*

Կոչականի հնչերանգը, շարադասությունը և կետադրությունը

Կոչականը, որպես նախադասություն կազմի մեջ մտնող միավոր, որը միաժամանակ նաև խոսողի վերաբերմունքն է արտահայտում խոսակցի ու խոսքի նկատմամբ, օժտված է առանձին՝ սուր հնչերանգով: Բառը կոչական է դառնում **հնչերանգի միջոցով**: Հաճախ նույն բառերով կազմված նախադասությունը, տարբեր հնչերանգներով արտաբերելիս, փոխվում է ինչպես նախադասության իմաստը, այնպես էլ նրա որոշ անդամների պաշտոնը:

Օրինակ՝ բոլորովին տարբեր բաներ են՝

«Բժիշկ Արամը եկավ» և «Բժի՛շկ, Արամը եկավ»:

Եզրակացությունը պարզ է. բանավոր խոսքում բառը կոչական է դառնում միայն **հնչերանգի և տրոհման շնորհիվ**, իսկ գրավոր խոսքում այն առանձնանում է շեշտով և նախադասության մյուս անդամներից ստորակետի տրոհումով:

Կոչականների հնչերանգային ուժգնությունը կապված նաև նրանց՝ նախադասության մեջ գրաված դիրքից՝ **շարադասությունից**:

Ժամանակակից հայերենում կոչականն **ազատ շարադասություն ունի**. նրա տեղը նախադասության մեջ պայմանավորված է խոսողի ցանկությունը ու տրամադրությունը: Սակայն կան դեպքեր, որ կոչականը պարտադիր կարգով նախադասության սկզբում է դրվում. դա ավելի հաճախ լինում է պաշտոնական խոսքում՝ ելույթներում,

գեկուցումներում, գործնական գրություններում՝ նամակ, դիմում: Նախադաս է դրվում նաև Հանդիմանության, գայրույթի, սպառնալիքի, խնդրանքի, հարցման դեպքերում:

Որպես կանոն, կոչականները դրվում են հարցական, բացականչական բառերից ու ձայնարկություններից հետո, իսկ ողջույնի, հրաժեշտի բարենաղթություններում ավելի հաճախ վերջադաս են դրվում՝ Մնաք բարով, հարգելի՛ բարեկամներ: Գնաս բարով, սիրելի՛ եղբայր: Ողջո՛ւյն, ողջո՛ւյն ձեզ, հին ու նոր, արի, բարի ընկերներ (ՀԹ):

Կոչականի կետադրությունը բարդ է. ինչպես նկատվում է բերված բոլոր օրինակներում, այն միշտ իր վերջին վանկի ձայնավորի վրա շեշտ է կրում և նախադասության մյուս անդամներից տրոհվում է ստորակետերով:

Իսկ եթե կոչականն ունենում է նախադաս որոշիչ լրացում, շեշտն անցնում է այդ լրացման վերջին վանկի ձայնավորի վրա: Նախադաս հատկացուցիչը չի շեշտվում.

Սիրո՛ւն գարուն, կանա՛ջ գարուն, Քեզ ինչպես ողջունեմ (ԱԾ):

Քնքո՛ւչ հովիվ, իմ նազելուց Քաղցր բուրմունք հետդ բեր (Ավ. Իս.):

Եթե կոչականի որոշիչ լրացումից առաջ կա նաև հատկացուցիչ լրացում, այն շեշտ չի կրում՝ Հոգի կուտամ, հոգի տուր ինձ, Իմ նազելի՛ աչազեղ (Ավ. Իս.): Գիշեր ու գօր դու հնչում ես, իմ անո՛ւչ տավիղ (Վ. Հարությունյան):

Կոչականներից հետո դրվող լրացումները շեշտ չեն ստանում, շեշտը մնում է նախադաս կոչականի վրա՝

Մանկությո՛ւն իմ քնքչազի՛ն, քեզ ինչպե՞ս մոռանամ (Սարմեն):

Թափ տուր թևերդ, արծի՛վ լեռներու... (Ավ. Իս.):

Բազմել ես բարձրաբերձ լեռների գրկին, Ծաղկել ես, ծովացել, հայրենի՛ք անգին (ՇԹ):

Ամփոփիչ հարցեր և վարժություններ «Կոչականի» վերաբերյալ Հարցեր

1. Ի՞նչ է կոչականը, ինչո՞վ է արդարացվում նրա՝ նախադասության անդամ լինելը. նշեք կոչականի քերականական կարգերը:
2. Բերեք օրինակներ և ցույց տվեք, որ կոչականները նախադասության կազմից հանելիս, խաթարվում է նախադասության միտքը:
3. Ոճական ի՞նչ առանձնահատկություններ ունեն կոչականները:
4. Ինչպիսի՞ հնչերանգ և շարադասություն ունեն կոչականները:
5. Կետադրությունը. ո՞ր դեպքում կոչականի վրա շեշտ չի դրվում:

Վարժություններ: Ընդգծե՛ք կոչականները, բացատրե՛ք նրանց չարադասությունն ու կետադրությունը (կետադրեք ինքներդ):

I

Սիրելի Ջիվան ընկերդ իմ հոգու

Մարդկային սիրտը հասկանում ես դու (ՀԹ):

Վահան Տերյան ինչպես երգեմ հիշատակը քո (ԵԶ): Գարնան թռչուններ երկնքի մովում երգեցեք նրան իմ սիրո մասին (ԳՍ): Առուններ երբ նա անցնի ձեր մոտով, ասացեք նրան իմ սիրո մասին, Անտառներ երբ նա նստի ձեր զովում խշշացեք մեղմիկ իմ սիրո մասին (ԳՍ): Իմ նոր հայրենիք հզոր հայրենիք (ՀԹ):

Մի՞թե պիտի մեռնենք մի օր քեզնից անմաս Արարատ (ՍԿ):

Եվ որոտա զանգ և արթնացրու դարավոր նիրհից Մասիս ու Կազբեկ Թափ տուր թևերդ արծիվ լեռներու Քնած առյուծներ բաշերդ թոթվեք (Ավ. Իս.):

Անդրեաս էլիզբարով լսում ես տուր սուրդ թշնամուդ ձեռքը վիզդ ծոիր որ նա խփի (Շ): Գնա Պեպո գետինը լիզե... (ԳՍ):

Ծերանում ենք Պարույր Սևակ Ծերանում ենք սիրելիս

Հասակակից կանանց արդեն մենք նայում ենք եղբոր պես (ՊՍ):

Մնաք բարով իմ ընկերներ և հայր և մայր և տուն

Դաշտեր ու կանաչ հպարտ լեռներ հիշեցեք ձեր որդուն (ԳՍ):

– Մայրիկ ասա ինչ է պատահել: Տեր Մամիկոնեից մի՞թե մենք լուրջ կընդունենք զրադաշտական կրոնը (ԴԴ):

– Օ ամենասուրբ Տիրամայր քո պատվին Հոռմում երկու նոր տաճար եմ կառուցել: Ջենովա իմ Ջենովա խեցի արևային իրիկունը՝ ծիրանագույն (Շուլց, Քար և ցավ):

Կապույտ երկնքի ոսկեղեն աստղեր

Ձեր հեռվից դուք միշտ տեսնում եք նրան (ՎՏ):

Կամոնեմ, միայն թե դու դարերում ազատ խշչաս

Իմ հեռու հեռու հեռու Նաիրյան դալար բարդի (ՀՍ):

II

Իմ հայ ժողովուրդ իմ բազմաշնորհ

Աշխարհի այգու մի ծայրում բուսած

Ընկուզենի դարավոր ու նոր (ՍԿ):

Իմ սուրբ մանկիկ թող համբուրեմ թաթիկներդ ցեխոտած.
Դու կյանք ու սեր, ծափ ու ծիծաղ
Ուրախություն դու աստված (Ավ. Իս.):

Թանկագին բնիկներն բարեկամներ ու հայրենակիցներ այսօր լուսավոր տոն է մեր հինավուրց Հայաստանում (Մամուլ): Գիտություն և կրթության աշխատողներ ուսանողներ և դպրոցականներ չձուռանանք որ մեր քաղաքը մեր տունն է (Մամուլ):

Հեյ ազահ մարդ հեյ անգոհ մարդ միտքդ երկար կյանքդ կարճ... (ՀԹ):

Էյ ջան հայրենիք ինչքան սիրուն ես: Էյ դու ջահել հպարտ հասակ թոռար ոսկի ամպի պես (Ավ. Իս.):

Ախ Անուշ Անուշ էդ ինչ ես ասում ... Ափսոս Անուշ սարի ծաղիկ (ՀԹ):

Հեյ ջան հեյ ջան լանջեր մարջան (Վ. Աղասյան):

Հեյ ուր ես Դավիթ հայոց պահապան (ՀԹ):

Վայ մայրիկ ջան տես բակն ու դուռը լի ինչքան սպիտակ թիթեռ է գալի (ՀԹ):

Ջան հայրենի անտառներ Դուք եք կանչում ինձ ձեր քով (ՀԹ):

Էյ վիրավոր սիրտ դու մի գազազիր (Ավ. Իս.):

Ախ իմ մայր թանկագին Ետ կգամ ես կրկին... (ԳՍ):

Սիրելի բարեկամներ անպայման գնացեք Օշական և ուշադրությունամբ դիտեք 36 քարակերտ տառերը, որոնք հրաչքներ են: Ձեռքերդ դալարեն քարագործ վարպետ (ԽԲ):

Առաջադրանք. Հիշեցե՛ք այնպիսի բանաստեղծություններ, որտեղ կոչականներ կան:

ՆԱՆՍԿԻՄՈՒԹՅԱՆ ՏՐՈՂՎՈՂ ԱՅՆ ԱՆԴԱՄՆԵՐ

Կոչականներից բացի նախադասություն մեջ տրոհվում են նաև ինչպես նրա բաղմակի անդամները, որոնց մասին խոսվեց վերևում, այնպես էլ բաղմակիություն հետ կապ չունեցող և շարադասություն, լրացումների ծավալով, ինչպես նաև տարբեր խնդիրներով պայմանավորված անդամները:

Նախադասություն անդամների տրոհումը կատարվում է որոշակի հնչերանգով, որը գրավոր խոսքում նշույթավորվում է կետադրական նշաններով՝ բուծով կամ ստորակետով, կամ՝ թե՛ մեկով և թե՛ մյուսով:

Քննարկենք բաղմակիություն հետ կապ չունեցող տրոհման դեպքերը:

1. **Տրոհվում է կողմնակի ենթական,** եթե նրա ու դերբայի միջև ընկած են այլ անդամներ՝ ներկաներին հիացրեց 5 տարեկան երեխայի՝ այդքան հմայիչ նվազելը (ԳԹ): Սիմինդրի տերևների՝ իրիկվա հովից խշալը դառն հուշեր էր արթնացնում Դիլանի սրտում: **Սոնայի՝** միրհավի պես ձեռքից թռչելը անթեղված կրակ էր դարձել:

2. **Հատկացուցիչը** նույնպես տրոհվում է, եթե նրա և հատկացյալի արանքում այլ բառեր են ընկնում: Այս դեպքում հատկացուցիչը տրոհվում է բուժով, բայց հատկացյալից հետո ստորակետ չի դրվում՝ **Աղջկա՝** դիմացի պատշգամբին ուղղված հայացքում թախիծ կար: **Իմ՝** քո նկատմամբ ունեցած վերաբերմունքը միշտ էլ բարյացակամ է եղել: **Գրքի՝** բավականին ուշացած շնորհանդեսը վերջապես կատարվեց:

3. **Բացահայտիչ լրացումը** պարզաբանող բնույթ ունի, դրա համար էլ միշտ դրվում է բացահայտյալից հետո և տրոհվում է բուժ նշանով, իսկ նախադասության մյուս անդամներից անջատվում է ստորակետով. ըստ որում՝ կետադրական այս նշանները նույնն են բացահայտիչի 3 տեսակների համար՝ «Կիրեռնետիկայի հայրը՝ **Նուրբերտ Վինբերը,** մաթեմատիկայով լրջորեն սկսել է զբաղվել 5 տարեկանից»: «Մենք՝ **երիտասարդներս,** հետևում ենք մեր ավագներին»: «Հասմիկը՝ **իբրև կուրսի ավագ,** իրեն արդարացնում է»: «Այդպես մի անգամ էլ՝ **չատ տարիներ առաջ,** ճոնչաց այգու դուռը» (ԱԲ):

Շարադասությունը պայմանավորված տրոհում – Ինչպես ասվել է «Շարադասություն» բաժնում՝ նախադասության անդամների տրոհումը պայմանավորված է նաև նրա անդամների շարադասությամբ: Հիմնականում տրոհվում են ետադաս որոշիչը, հատկացուցիչը և պարագաների որոշ տեսակներ:

1. **Տրոհվող որոշիչ** – Տրոհվում են ետադաս բազմակի որոշիչները. որոշիչը որոշյալից տրոհվում է բուժով, իսկ նախադասության մյուս անդամներից՝ ստորակետերով՝

Մայրս ուներ բարակ ձեռներ, Մոմե մատներ՝ երկար ու նուրբ (ՎՏ):

Մանկական ձայնը՝ սկզբում կերկեր, Վայրկյաններ հետո ինքն իրեն գտավ (ՊՍ):

Մի ճերմակ ամպ՝ թափանցիկ ու տձև, հանդարտ լողում է լազուրի մեջ (ԱԲ): Բացվում են վայրի վարդերը՝ դեղին, սպիտակ (ԱԲ):

Տրոհվող ետադաս որոշիչները արտահայտվում են նաև բառակապակցություններով՝ այդ թվում նաև դերբայական դարձվածներով ու

դարձվածային միավորներով: Օրինակ՝ Տաքանում են Օրանջիայի քա-
րերը, և խլեզները՝ փորի մաշկը դեղին, պառկում են տաք քարերի
վրա (ԱԲ): Տերասաձև բարձրանում են ժայռերը՝ մեկը մյուսից խոժոռ
ու ահռելի (ԱԲ): Հետաքրքիր մարդ էր մեր Սիմոնը՝ կյանքին անհա-
ղորդ (ԲԹ): Մի հետաքրքիր գիրք կարդացի՝ բոլորովին վերջերս հրա-
տարակված: Երբեմն էլ տրոհվում է միաբառ ետադաս որոշիչը՝
Արևը՝ բորբ, մայր էր մտնում արևմուտքում (ԵԶ):

2. Տրոհվում է նաև ետադաս հատկացուցիչը՝ Նրանք պատմում
էին մահացած սերը՝ Թիթեոնների ու ծաղիկների (ԳՄ): Վար նետեմ
ցուպն այս մաշված՝ Թափառական պանդուխտի (Գ. էմին): Զեռքս
ընկավ մի դալար ճյուղ՝ նորատունկ ծառի (ՍԳ):

3. Տրոհվող պարագաներ – Բայական անդամի լրացումներից
տրոհվում են միայն պարագաները (այն էլ ոչ բոլորը): Տրոհվում են
հատկապես ԴԴ-ներով արտահայտված պարագաները: Ձի բացառ-
վում նաև կապային կառույցներով, կամ ածականներով ու մակ-
բայներով արտահայտված պարագաների տրոհումը: Սրանց տրո-
հումը կետադրական ընդունված կանոններից չի շեղվում. նախա-
դասի և վերջադասի դեպքում տրոհվում են բուլժով, միջադասի դեպ-
քում՝ ստորակետերով:

Ձևի պարագա՝ արտահայտված ԴԴ-ներով՝ Գալիս է հեովից՝
բարձր գոռալով (ՀԹ):

Հագած, կապած զենք ու զրահ, Ձիեր հեծած ամեհի՝

Ահա եկել, հավաքվել են կտրիճները կովկասի (ՀԹ):

Ունում են գայլերը՝ դնչները լուսնյակին մեկնած (ԱԲ):

Տրոհվում են նաև որոշ կապային կառույցներով արտահայտված
ձևի պարագաները. Մթնածորում արջերը պար են բռնում՝ սուլելով
չոքանի պես (ԱԲ): Գնում էր տուն՝ դատարկ պայուսակը Թևի տակ:
Հարցերը լուծում էր առանց մտածելու՝ ոտքի վրա:

Տրոհվում են նաև ածականներով, մակբայներով ու գոյականներով
արտահայտված ծավալուն ձևի պարագաները՝ Շատ հերոսներ մահը
գրկեցին՝ արիաբար ու հաղթական: Վրնջում էին ձիերը՝ մետաղաձայն
ու երկարածոր (ԵԶ): Լիպոն արչավում էր ռազմի շապիկով: Հոգնած
ժամանակ անկողին էր մտնում՝ գուլպաներով ու շորերով (ԵԶ):

Տրոհվող նպատակի պարագան մեծ մասամբ արտահայտվում է
ետադաս ԴԴ-ներով, երբեմն էլ՝ կապային կառույցներով՝ Վարազ-
ները ժանիքով փորում են հողը՝ աշունքվա փթած կաղիններ որո-

նելու (ԱԲ): Բարձրացան վանքի կտուրը՝ կտուրին բուսած թփերը կրծելու (ԱԲ): Նա միանում էր ժողովրդին՝ աշխարհը կործանումից փրկելու համար (ԴԴ): Կինը, աչքերը մուխից պահելու համար, ձեռքը բռնում էր ճակատին (ԱԲ):

Ժամանակի պարագան նույնպես տրոհվում է, եթե արտահայտված է անորոշ դերբայի գործիական հոլովով, հարակատար դերբայով կազմված ԴԴ-ներով, ինչպես նաև կապերով. **Եվ հանձնելով կյանքը հերոսական կամքիդ՝** Ես այրեցի երգերս մի երեկո (ԵԶ): **Հասնելով բերդի ավերակներին՝** ձիավորները ցած թռան ձիերից (ԹՆԺ): **Դեռ ժայռերին չհասած՝** դիմացից լավեց հրացանի պայթյուն (ԱԲ): **Ջուրը չտեսած՝** մի՛ բորիկանա (Ժող.): **Որսատեղ հասնելուն պես՝** նստեցինք հանգստանալու (ՎԱ):

Սովորաբար համակատար դերբայով կառույցները չեն տրոհվում, բայց ժամանակի պարագայի դեպքում՝ հաճախ տրոհվում են՝

Մանկությունը հիշելիս՝ սիրտս դառնում է զինով.

Ես մի ընկեր ունեի Լիպո անունով (ԵԶ):

... **Մենք էլ օրհնելիս մեր զավակներին՝** Ձեր խոսքն ենք ասում... (ՀԹ):

Պատճառի պարագան ևս տրոհվում է, երբ ծավալուն է կամ արտահայտված է ԴԴ-ով՝ **Կամենալով փարատել** դիմացինի անձկությունը՝ ինքն էլ էր հիվանդացել (ԴԴ): **Դու, Մուսայի խելքով ընկած,** վեր ես կենում, մեզ հայհոյում (ՀԹ):

Հիմունքի և հակառակ հիմունքի պարագաները ծավալուն լինելու դեպքում, ինչպես նաև կապական կառույցներով, նույնպես տրոհվում են՝ **Ձանազան հիմնավորումներով էլ՝** աշխատում էր դուրս գալ իրավիճակներից (Ոզնի): **Չնայած անտանելի շոգին ու թեժ աղմուկին՝** Բաղդադի փողոցները լիքն էին ժողովրդով (ՀԹ): **Չնայած եղանակի ցրտությանը՝** հովիվները չէին ուզում տուն վերադառնալ (Գար.):

Հ ա ր ց ե ր

1. Որո՞նք են նախադասության տրոհվող անդամները:
2. Բանավոր խոսքում ինչո՞վ է պայմանավորված տրոհումը:
3. Դերբայական դարձվածները ո՞ր դեպքում չեն տրոհվում:

Վարժություն: **Կետադրե՛ք տրոհվող անդամները և անվանեցե՛ք դրանք:**

Արդեն իջնում էր մթնշաղը խորհրդավոր ու ծանրացած: Տղայի համալսարան ընդունվելը շատ ուրախացրեց մորը վաղուց այդ օր-

վան սպասող այրուն (ՊՂ): Տղայի աղջկան ուղղված հայացքը անչեղ էր: Ընկերոջն ինձ խոստացած գիրքը վաղուց տպագրված վերջնական նվեր ստացա: Թշնամին քանդեց քո քաղաքների պարիսպները ամրակուռ ու քարաշեն, ավերեց քո վանքերը խաչքարերով դարդարված, քո մանուկներին թխաչյա ու սևահեր տրորեց սմբակների տակ, բայց քո ոգին մնաց կանգուն քո Մասիսի պես (Ավ. Իս.):

Վաղը մայիսի 1-ին ինձ կսպասես Հանրապետության հրապարակում շատրվանների մոտ, մտնելու ենք պատմության թանգարան մեր պատմական մայրաքաղաքի Անիի մանրակերտը նայելու (ԽԲ):

Թույն էր ասես բորբ արևի սրտից քամած (ԵՁ): Հետո նա հաջորդ բուռն ավելի լիքն էր վերցնում խիղճը հանգստացնելու համար (ՆՁ): Արունն ամաչելով իր ներկայությունից ձայնը կտրում է (ՆՁ): Եկել էին նրանք նորից հուսահատված ու կրակոտ (ԵՁ): Մի մարդաբոյ արջ էր կանգնել մի քիչ հեռու ճյուղն ուսին չոբանի մահակի պես (ԱԲ): Հայրը գնում էր առջևից չոր ցախի կապը ձեռքին, աղջիկը նրա ետևից ջրամանն ու հացի շորը թևի տակ (ԱԲ): Սպիտակ ձին վազում էր խայտալով կանաչ մարգագետնի խոտերի վրա (ԱԲ): Հաջորդ օրը ընկերներով հավաքվեցինք նույն տեղում համաձայն երեկվա պայմանավորվածությունը: Չնայած խոստացել էի գիրքը ժամանակին վերադարձնել այնուամենայնիվ խոստումս դրժեցի:

ՆԱՆԱԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԿԻՑ ՄԻԱՎՈՐՆԵՐ

Ինչպես ասվել է, նախադասությունը քերականական օրենքներով ու կանոններով կազմված շարահյուսական կառույց է, որն իր մեջ ներառում է լեզվի ամբողջ բառապաշարը: Այդ բառապաշարի նյութական իմաստ ունեցող բառերը հանդես են գալիս նախադասության գլխավոր և երկրորդական անդամների պաշտոններով, այսինքն՝ արտահայտում են առարկայական աշխարհի իրերն ու երևույթները՝ իրենց բազմազան հատկանիշներով: Իսկ նյութական իմաստից զուրկ բառերը (չթեքվող խոսքի մասերը) նախադասության մեջ երկու դեր են կատարում՝ քերականական (սրանք կապերն ու շաղկապներն են) և վերաբերմունքային (սրանք վերաբերականներն ու ձայնարկություններն են): Վերջին երկու կարգի բառերը թեև նախադասության անդամներ չեն լինում, սակայն վճռական դեր են խաղում նախադասությունների մեջ ինչպես կառուցվածքային, այնպես էլ բովանդակային տեսակետից՝ արտահայտելով խոսողի մտային կամ հուզական վերաբերմունքը:

Նախադասությունների հարակից միավորներից շարահյուսական մակարդակի քննությունների միավորներ պետք է համարել նաև վերաբերականները, ձայնարկությունները, ինչպես նաև ներդրյալ բառերը, բառակապակցություններն ու նախադասությունները:

ՎԵՐԱԲԵՐԱԿԱՆՆԵՐ, ՄԻՋԱՆԿՑԱԼ ԲԱՌԵՐ*

Լեզուների պատմական զարգացման ընթացքում զգալի իմաստափոխությունների են ենթարկվում նաև բառերը, որի հետևանքով էլ տեղաշարժեր են առաջանում նաև խոսքի մասերի համակարգում. ըստ որում նյութական իմաստ ունեցող որոշ բառեր կարող են զրկվել իրենց նյութական իմաստից և վերածվել սպասարկու խոսքի մասերի. այդպես է կատարվել նաև վերաբերականների հետ, որոնց մեծ մասը առաջացել է **գոյականներից** (արդյոք, իհարկե, իրավ, հիրավի, իրավամբ, ցավոք, մի խոսքով, ինչ խոսք), **ածականներից** (անկասկած, անպատճառ, լոկ, սոսկ, պարզապես, ճշմարիտ, դժվար թե), **դերանուններից** (ինչևէ, ինչևիցե, ուր է թե), **բայերից** (խնդրեմ, կարծեմ, կարծես, կեցցես, թող, համմե, տեսես...), **մակբայներից** (ամենևին, բնավ, վերջապես, դժբախտաբար, ի վերջո, արդ, էլի...), **չաղկապներից** (նույնիսկ, անգամ, գեթ, գոնե, համենայն դեպս, իսկ որ...): Որոշ միակազմ նախադասություններ ու դարձվածներ նույնպես ձեռք են բերել վերաբերականների իմաստ (ինչ խոսք, այ քեզ բան, աստված չանի, արևս վկա, տա աստված, ձայն բարբառո հանապատի և այլն):

Այսպիսով՝ վերաբերականները, լինելով չթեքվող խոսքի մասեր, շարահյուսական մակարդակում հանդես են գալիս նախադասություն մեջ որպես նրա հարաբերակից միավորներ և արտահայտում են խոսողի **գնահատողական-դատողական վերաբերմունքը** ամբողջ նախադասության կամ նրա որևէ անդամի վերաբերյալ: Որոշող մի դեպքում հաստատում է իր ասածը կամ լսածը, մյուս դեպքում կասկածի տակ է առնում զրանք, երբեմն էլ ժխտում, կամ ավելի է սաստկացնում, և ըստ այդմ էլ՝ վերաբերականները լինում են՝

Հաստատական (անչուշտ, անտարակույս, բնականաբար, իսկապես, իհարկե, հարկավ): Այս անգամ ընտրությունները **անչուշտ**, արդարացի կլինեն: Իհարկե, դու ճիշտ ես: Հաստատական է նաև **այո** վերաբերականը՝ Կոմիտասը, այո՛, մեր երգի վեհափառն է:

Երկրայական (գուցե, գրեթե, թերևս, դժվար թե, իբրև թե, միգու-

* Ռուս մի քանի լեզվաբանների նման պրոֆ. Մ. Ասատրյանը **վերաբերականները** (եղանակավորող բառեր) համարում է նախադասության անդամներ:

ցե, Հագիվ թե)՝ **Հագիվ թե** կարողանանք արդարացի ընտրություն կատարել: **Կարծես** Հավք էր թառել անտառի մթին խորքում (ԱԲ): **Թերևս** Հաջողացնեմ աշխատանքը ժամանակին ավարտել:

Ձգացական՝ Երենկ նրան, ով Հայրենական տուն ունի Հիմի (Սարմեն): **Դժբախտաբար** չեմ կարող Հավաքին մասնակցել: **Ցավոք սրտի**, ասածդ չկարողացա կատարել:

Սահմանափակման՝ Դուք միայն ասում եք ...: **Գոնե** մեկ անգամ ընկերոջդ այցելիր: **Սոսկ** Հայրենիքի սերն էր նրան տանջում: **Լոկ** մեկ խնդիր ունեմ՝ տուն գնալ:

Ձիջական՝ Ի դեպ, այդ մասին արդեն խոսվել է: **Ի միջի այլոց**, այս տարի ավելի մեղմ ձմեռ եղավ: **Այնուամենայնիվ**, Համաձայնությունս տվեցի:

Սաստկական՝ Մինչև իսկ ոչ մասնագետներն էին սխալները նկատում: **Անգամ** երեխան չէր Համաձայնի: **Հենց** այդ էլ ուսանողների պահանջն էր՝ թոչակ տալ:

Վերաբերականները լինում են նաև **Հարցական, ցուցական, գիջական** և այլն:

Ինչպես երևում է բերված օրինակներից, վերաբերականները որոշ դեպքերում տրոհվել են նախադասութայն անդամներից, որոշ դեպքերում՝ ոչ: Ինչ խոսք, որ տրոհումը պայմանավորված է խոսողի վերաբերմունքով ու հնչերանգով: Տրոհվում են Հատկապես Հաստատական, երկբայական, ժխտական, գիջական վերաբերականները:

Վերաբերականները զրվում են Հատկապես բայ-ստորոգյալների ու նրանց լրացումների վրա (չեն բացառվում նաև անվանական ստորոգյալները), ոչ մի Հարցադրում չեն ընդունում և նախադասութայն ոչ մի անդամի դեր չեն կատարում, որովհետև քերականորեն չեն կապվում նախադասութայն հետ և հիմնականում **միջանկյալ բառերի դեր են կատարում**: Շարահյուսական մակարդակում սրանք կարող են լինել նաև բառ-նախադասութայններ, անվանական ու անդեմ նախադասութայններ:

Ինչպես տեսանք, վերաբերականների մի զգալի մասը նախադասութայնների հետ քերականորեն չի կապվում, որևէ լրացման պաշտոն չի կատարում, այլ պարզապես խոսողի գնահատողական վերաբերմունքն է արտահայտում խոսքի վերաբերյալ. այդպիսի բառերը լեզվաբանութայն մեջ կոչվում են **միջանկյալ բառեր** (տե՛ս վերևի օրինակները): Ասվել է նաև, որ միջանկյալ բառերը արտաբերվում են առանձին հնչերանգով և նախադասութայն անդամներից տրոհվում են ստորակետերով:

Նշենք, սակայն, որ միջանկյալ բառերը երբեմն էլ դառնում են նախադասությունների անդամներ (այս դեպքում բնականաբար չեն տրոհվում): Դրանց՝ նախադասության անդամ դառնալը պայմանավորված է նաև շարադասությամբ ու հնչերանգով:

Օրինակ՝ քննենք ի միջի այլոց և մատնությամբ բառերի կիրառությունները՝ պայմանավորված դրանց շարադասությամբ. «Ի միջի այլոց, գիտնականը այդ մասին վաղուց էր խոսել» և «Գիտնականը այդ մասին վաղուց ի միջի այլոց էր խոսել»: Առաջին նախադասության մեջ ընդգծված բառը քերականորեն նախադասության հետ չի կապվում և միայն խոսողի վերաբերմունքն է արտահայտում, մինչդեռ երկրորդ նախադասության մեջ այն դրվել է բայ-ստորոգյալից առաջ և ընդգծել է խոսելու եղանակը, նպատակը, հետևաբար դարձել է նախադասության անդամ՝ ձևի կամ ընդհանրական պարագա (խոսել է՝ հարցին կարևորություն չտալով):

Նույնն է նաև հետևյալ դեպքը՝ «Մի օր էլ, մատնությամբ, մի գյուղում բռնվեց նա (Ավ. Իս.) և «Մի օր էլ մի գյուղում մատնությամբ բռնվեց նա»: Առաջին դեպքում մատնությամբ բառը միջանկյալ բառ է, երկրորդ դեպքում՝ հիմունքի պարագա:

Այսպիսով, միջանկյալ են համարվում այն բառերը, որոնք շարահյուսորեն չեն կապակցվում նախադասության հետ, բայց որոշ երանգ են տալիս նրան, ռճավորում են խոսքը, արտահայտում են հեղինակի վերաբերմունքը:

Բացի վերաբերականներից միջանկյալ բառեր են դառնում գոյականների տարբեր հոլովաձևեր – սիրով, հաճույքով, ուրախությամբ, ներողություն, մատնությամբ՝ (Ես լավ չլսեցի, ներողություն, եթե կարելի է՝ նորից կրկնեք: Կկատարեմ, ինչու չէ, սիրով ու հաճույքով): Բերված օրինակներում, բացի ներողություն և սիրով ու հաճույքով գոյականներից կան նաև եթե կարելի է և ինչու չէ նախադասությունների արժեք ունեցող միջանկյալ բառակապակցություններ:

Միջանկյալ բառեր կարող են դառնալ նաև ածականներ (գեղեցիկ, լսում եմ, շարունակեք... լավ, շատ լավ, բավարարված եմ. «գերազանց» եք ստանում), թվականներ (Առաջինը, ես դերձակ չէի ուզում լինել, երկրորդ, Սուսան, հորդ մասին մի խոսիր), մակբայներ («Ես էլ, անգիտակցաբար, մի պահ կանգ առա» և «Ես էլ մի պահ կանգ առա անգիտակցաբար»: «Անտարակույս, նա դիմեց այդ քայլին» և «Նա այդ քայլին դիմեց անտարակույս»):

Միջանկյալ բառեր կարող են դառնալ նաև որոշ շաղկապներ

(Թեև կուզ, սակայն, էլ, ուրեմն, ապա...) **դերանուններ** (մի, ոչ մի, այսպես), **բայեր** (ասես, կարծես, կարծես, թող, խնդրես, կեցցես, ապրես...):

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ են վերաբերականները, խոսողի ինչպիսի՞ վերաբերմունքներ են արտահայտում (բերե՛ք օրինակներ):
2. Ի՞նչ են միջանկյալ բառերը, դրանք կարո՞ղ են նախադասության անդամ դառնալ (բերե՛ք օրինակներ):
3. Հետևյալ բառերը գործածե՛ք մի դեպքում որպես միջանկյալ բառեր, մյուս դեպքում՝ որպես նախադասության անդամներ՝

Իմիջիայոց, անտարակույս, անկասկած, սակայն, ի դեպ, ցավոք, մատնությունք, անշուշտ:

Վարժություն: Ընդգծել վերաբերականներն ու միջանկյալ բառերը, բացատրել դրանց իմաստները, շարադասությունը, կետադրությունն ու հնչերանգը:

Էն տեսակ կին, ես իմ հոգին, թե աշուղն էլ ունենար,
Առանց զենքի, առանց զորքի շահերի դեմ կզնար (ՀԹ):
Լուսինը, իհարկե, չունի սեփական լույս, նա իր լույսը, անշուշտ,
ստանում է արևից:

Հրաչյա Աճառյանը, այո, աշխարհահռչակ լեզվարան է:
Ինչ խոսք, Գոհար Գասպարյանն ու Լուսինե Զաքարյանը մեր դասական երգարվեստի, անշուշտ, անգնահատելի եզակիություններ են:
Ցավոք սրտի, այժմ մեր ժողովուրդը քիչ է հիշում նրանց:

Հազիվ թե, այս անգամ էլ կարողանանք արդարացի ընտրություններ կատարել: Գոնե, այս ընտրություններին արդարացի լինենք. տա աստված, այդպես լինի:

Այդ մասին նա գիտեր, իհարկե, գիտենալով հանդերձ, ընդհակառակը, լավ չվարվեց մեզ հետ: Լավ, թող նա իր կարծիքին էլ մնա, հոգ չէ:

...Վաղն այնտեղ ենք, անշուշտ, մերն է հաղթանակ (ՀՀ):

Ծնողները, հարկավ, ընդդիմացել էին ամուսնությունը, Սմբատը, սակայն, իր խոսքի տերը եղավ (Շիրվ.): Ըստ երևույթին, ուղեկիցս գաղտնապահ մարդ էր (Մուր.): ... Մինչև իմ հասնելը, տե՛ր իմ, ամեն ինչ կատարված էր ... Բայց, դժբախտաբար, նա ինքն էր արել մեծ սխալը՝ ուչացնելով նամակը ... Այդ միջոցին, կարծես, փրկության հրեշտակը բռնեց նրա ձեռքը ... Ո՛չ, նա չարժե, որ ես մեռնեմ նրա

Համար... Նա, այո՛, դավաճանեց յուր Հայրենիքին... Ո՛չ, ո՛չ, չարժե մեռնել նրա Համար» (ԲաՖ.): Ափսոս՛ս, որ իմ տվածից ավելին տալ չեմ կարող (ՍԿ):

ՁԱՅՆԱՐԿՈՒՔՑՈՒՆՆԵՐ

Նախադասություն անդամներ չլինելով Հանդերձ ձայնարկությունները նույնպես մտնում են նախադասություն կազմի մեջ և արտահայտում են խոսողի սուբյեկտիվ, զգացական ու կամային վերաբերմունքը խոսքի նկատմամբ, մինչդեռ վերաբերականները դատողական-գնահատողական վերաբերմունք են արտահայտում: Ձայնարկություններով խոսողը մի դեպքում զգացական վերաբերմունք է արտահայտում, մի այլ դեպքում՝ կամային, ըստ այդմ էլ ձայնարկությունները երկու տեսակ են լինում՝ բացականչական և կոչական: Ձայնարկությունների մի տեսակ էլ կա, որը կապ չունի մարդու ոչ զգացմունքների և ոչ էլ կամքի հետ. դրանք այսպես կոչված, բնաձայնական ձայնարկություններն են, որոնք կենդանիների, առարկաների կամ բնություն երևույթների կողմից արտաբերվող ձայներն են (խըչ, թըչ, շըրխկ, թըրխկ, դա՛, դո՛ւ, միաո՛ւ, հա՛Ֆ-հա՛Ֆ, կըրուկը՛, բոո՛, վուո՛ւ, բուո՛ւ և այլն):

Բացականչական ձայնարկություններն արտահայտում են խոսողի զգացմունքները անձի, առարկայի կամ երևույթի նկատմամբ. դրանցով խոսողն արտահայտում է վիշտ, ցավ, ուրախություն, հիացմունք, զարմանք, զգվանք, տրտունջ և նման զգացմունքներ: Ինչպես այս, այնպես էլ մյուս տեսակի ձայնարկությունների համար բնորոշ է սակավահնչյունությունը՝ միաձևույթ լինելը. նույնիսկ բոլոր ձայնավորները հատուկ առոգանությունը արտաբերելիս դառնում են ձայնարկություններ (ա՛, ի՛, ո՛ւ, ժ՛, է՛, ը՛):

Բացականչական ձայնարկությունները կոչականների և բնաձայնականների նկատմամբ ավելի մեծ թիվ են կազմում և իմաստային տեսակետից ավելի բազմիմաստ են. նույն ձայնարկությունը, նայած խոսողի զգացմունքայնությունը, կարող է մի քանի իմաստներ հաղորդել խոսքին: Օրինակ, վայ ձայնարկության համար էղուարդ Աղայանը իր բառարանում բերում է 12 իմաստ (ցավ, վիշտ, կարեկցություն, տագնապ, ողբ, զարմանք, ուրախություն, երկյուղ, հեգնանք, հանդիմանություն, բոթ և այլն): Ախ-ի համար՝ վշտի, ցավի, հանդիմանություն, փսոսանքի և այլն: Միանգամայն ճիշտ է նշում

Մ. Ասատրյանը, որ երբեմն անհնար է այս կամ այն ձայնարկությունը մտցնել այս կամ այն իմաստային դաշտի մեջ: Դրանց մի մասը շարահյուսական տարրեր միջավայրերում հանդես են գալիս ամենատարրեր, երբեմն էլ՝ հակադիր իմաստներով:

Կոչական ձայնարկությունները գործածվում են ուրիշի ուշադրությունը գրավելու, նրան մի բան հաղորդելու, մի բանի մղելու նպատակով. սրանք թվով ավելի քիչ են և համեմատաբար՝ մենիմաստ (էյ, ծո, ա՛րա, հե՛յ, դե՛, դե՛հ, ա՛յ, տո՛, քա՛) և այլն:

Կոչական ձայնարկությունների մեջ են մտնում նաև կենդանիներին կանչելու կամ վանելու՝ մարդու կողմից արձակվող ձայները (փսի՛-փսի՛, ջո՛ւ-ջո՛ւ, բիժո՛-բիժո՛, հո՛-հո՛, քշա՛-քշա՛, փիչա՛-փիչա՛):

Բանավոր խոսքում ձայնարկություններն արտաբերվում են առանձնահատուկ հնչերանգով, որը գրավոր խոսքում նշույթավորվում է ստորակետերով ու շեշտով կամ երկարացման նշանով: Դրանք սովորաբար շարադասվում են նախադասություն սկզբում: Եթե նախադասության մեջ կոչականներ են լինում, շարադասվում են կոչականներից էլ առաջ՝

Ախ, իմ ճամփես մոյրո գնաց, Անտակ ծովին դեմ առա,

Վա՛խ, իմ սերս անցավ գնաց, Ետ կանչելու ճար չկա (Ավ. Իս.):

Ջա՛ն, իմ յարն է, ջանին մեռնեմ (ՀԹ):

Ախ, սիրելի՛ս, դաշտ ու անտառ Գարնան գրկում նոր ծաղկան (Ավ. Իս.):

Եթե կոչականների հետ կոչական ձայնարկություններ են հանդես գալիս, այդ դեպքում սովորաբար ձայնարկությունը կոչականից չի տրոհվում՝

Այ պա՛ղ ջրեր, գուլալ ջրեր, Որ գալիս եք սարերից... (ՀԹ):

էյ Մանթաչի երազ հովիտ ... է՛յ դու ջահե՛լ, հպարտ հասակ ... (Ավ. Իս.):

էյ հին ծանոթներ, է՛յ կանա՛չ սարեր, Ահա ձեզ տեսա, ու միտս ընկան, Առաջս եկան երջանիկ օրեր, Սիրելի դեմքեր, որ հիմա չկան (ՀԹ):

Գրականության մեջ, թեև սակավ, հանդիպում են նաև միջադաս ու վերջադաս ձայնարկություններ՝ Մարդիկ մեկ էլ տեսան, վա՛հ, քաջ Նազարը, վագրին նստած, քշում է (ՀԹ): Կարծես արձագանքը ետ է գալիս՝ հո՛ւ, հո՛ւ (ԱԲ): Թոնդրակ սարի սրտի մեջ, ալա՛ղ, բոց ու կրակ է (ՎԳ): Հենց անտառ են մտնում թե չէ, կի՛նր ծառի վրայից կանչում է՝ կո՛ւ-կո՛ւ, կո՛ւ-կո՛ւ (ՀԹ):

Ջան կոչական ձայնարկությունը առատորեն է գործածվում կոչականի հետ և մեծ մասամբ լինում է ետադաս ու չի տրոհվում (**Գրիգոր Չան, յար Չան**): Երբեմն էլ այն հանդես է գալիս որպես բացականչական ձայնարկություն, այս դեպքում լինում է նախադաս և տրոհվում է (**Ջան, հայրենիք անտառներ, Դուք եք կանչում ինձ ձեր քով (ՀԹ) : – Ջան, Մարա՛լ, սոված ես մնացել,- ասաց Պետին (ԱԲ) :**

Երբեմն էլ **Չան**-ը միանում է այլ ձայնարկությունների հետ և չի տրոհվում՝

– **Այ Չան տղա, չորա՛ն տղա՛, ո՞ւմն ես դու (ՀԹ) :**

Հեյ Չան, հեյ Չան, լանջե՛ր մարջան,

Մատաղ լինի հոգիս ձեզ,

Ինձ էլ տարեք, ձեր գիրկն առեք՝

Ծով դարդերս պատմեմ ձեզ (Վ. Աղասյան) :

Վարժություն: Ընդգծել ձայնարկությունները, որոշել չարադասությունը և կետադրել:

Արի Չան իգիթ, Արի անիրավ (ՀԹ) :

Հեյ պարոններ, ականջ արեք թափառական աշուղին (ՀԹ) :

Ջան հայրենի ծղրիղներ, Ո՞վ է արդյոք լսում ձեզ (ՀԹ) :

Օ մի արտասվիր, խորտակված մարդու

Արտասուքները այստեղ գին չունեն (ՀԹ) :

է է ժողովուրդ, հավաքվեք, որ պատասխան տանք (ԳԳ) :

– **Վախ վախ իմ անմե՛ղ ոչխար,- մղկտաց Հասոն (ՎՓ) :**

– **Վույ վույ նանի՛, պոչը ծաղիկ ա,- կանչեց Սաքանի տղան (ԱԲ) :**

– **Հեյ հեյ Եգո՛ր հեյ դմբդմբալով պատեպատ գնում է նրա կանչի արձագանքը (ԱԲ) :**

էյ նավավա՛ր, ո՞ւր ես նստում դու նավակ (Ալ. Ծատ.) :

էյ Չան-հայրենի՛ք, ինչքան սիրուն ես (Ավ. Իս.) :

– **Լո լո լո Սև ջրի չորա՛ն... Քար ու ծառ հուզող չորա՛ն (ՎՓ) :**

Ողջույն քեզ ա՛րև, ողջույն քեզ, գարուն (ՎՏ) :

Ախ իմ մա՛յր թանկագին, տուն կգամ ես կրկին (ԳՍ) :

Ախ ինչքան, ինչքան կարոտել եմ ձեզ... լեռներ հայրենի (Վ. Արամունի) :

Ասա ինչո՞ւ դու լուռ ես սիրուն Չան

Ղարիբի պես տխուր ես սիրուն Չան (գուսան Աշոտ) :

է՛հ տղա ջան, դարդ մի արա, Ծովափին եմ ծնվել ես (Ալ. Մատ.):
է՛հ մնաք բարով, Աստված և արև (ՊԳ):

Օ մայր Ռուսաստան, Օ անդորր իմ անկյուն (Եսենին):

Հա Հա Հա Ծապուհ, արքայից արքա, Այդ ո՞ւր ես այդպես սուրում
քաջաձի (ՎԳ):

Այ Համո՛վ աղջիկ, Այ ծամո՛վ աղջիկ (Ժող. երգ):

Ողջույն ողջույն ձեզ հին ու նոր, Արի, բարի ընկերներ (ՀԹ):

Ախ քո տեսքին, անուշ լեզվին Կարոտցել եմ, մայրի՛կ ջան (Ավ.
Իս.):

Հեյ վախ կոտորան իմ թևերս, ընկա գիրկդ, Ալազյա՛ղ (Ավ. Իս.):

Նանիկ էրա, նանիկ դար-դար Ղարիբ ունիմ, քանց ծով ու սար
(Ավ. Իս.):

Ավազ ոչ երբեք հանդիպել ենք կարող, Ոչ հեռանալ (ՀՍ):

Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ (ՀՍ):

ՆԵՐԴՐՑԱԼ ԲԱՌԵՐ, ԲԱՌԱՎԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՆԱՆԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախադասությունների մեջ, միջանկյալ բառերի նման, որոշ դեպքերում գործածվում են այնպիսի բառեր, բառակապակցություններ ու նախադասություններ, որոնք ամբողջ նախադասության կամ նրա որևէ անդամի համար տեղեկանքային բնույթ ունեն, այսինքն՝ լրացուցիչ բացատրություն են տալիս կամ մեկնաբանում են նախադասության մեջ գործածված, անծանոթ կամ անհասկանալի թվացող, որևէ բառ կամ արտահայտություն, կամ երբեմն էլ թարգմանում են օտար կամ բարբառային բառը: Այդպիսի բառերը, բառակապակցությունները կամ նախադասությունները արտաբերվում են մի տեսակ տարբերակվող **հնչերանգով** և զրավոր խոսքում անպայման տրոհվում են փակագծերով (երբեմն էլ՝ ստորակետերով), դրա համար էլ **ներդրյալ** անվանումն են ստացել: Դրանք, թեև քերականորեն նախադասության ու նրա անդամների հետ չեն կապվում, բայց տրամաբանորեն նրա շղթայից դուրս չեն մնում, որովհետև հաճախ ավելի կարևոր տեղեկություններ են հաղորդում: Այսպես, մի՞թե հետևյալ նախադասության մեջ պակաս նշանակություն ունեն ներդրյալ՝ տեղեկատու բառերն ու բառակապակցությունները՝ «Հայ գրողների համաժողովում ելույթներ ունեցան՝ Ս. Սարինյանը (**գրաքննադատ**)»,

Լ. Մկրտչյանը (Թարգմանիչ), Սամվել Կոսյանը, («Գրական թերթի» խմբագիր): Երիտասարդուժյան դաստիարակության խնդիրների մասին խոսեց Տ. էլոյանը (դպրոցի տնօրեն): Մի քանի տարի առաջ Վարդան Սարգսյանը (Կոմիտասի սան) Ֆրանսիայից նամակ է ուղարկում Երևան (ՍԱ): Նաիրիտը, ինչպես և Երևանիտը, Հայտնաբերել են Հայաստանի երիտասարդ գիտնականները (Գիտ. Տեխ.):

Ասվեց նաև, որ ներդրյալները նաև Թարգմանում, բացատրում են օտար, բարբառային կամ անհասկանալի բառեր ու արտահայտություններ: Օրինակ՝ Կառավարական բարձրաստիճան ղեկավարների իմփիչմենթը (քրեական պատասխանատվություն) հետո չէ: Ծովից բիկինիներով (չատ կարճ լողազգեստ) գեղեցիկ կանայք գրավեցին տղամարդկանց ուշադրությունը (Եթեր): Երեխայի «Ուզունդարա» (երկար կիրճ) պարը շատ գեղեցիկ էր (Հեռ.): Նրան գյուղում «ուզուն ախմախ» (երկարահասակ տխմար) էին կանչում (ՎՓ): –Ղազարոսի մոտ եղե՞լ եք (այսինքն՝ Աղայանի),– Հարցրեց Թումանյանը (ԳԼ):

Ներդրյալ նախադասություններն ավելի որոշակի են արտահայտում հիմնական նախադասության կամ նրա որևէ անդամի մեկնությունը. դրանք իրենց ստորոգման հականիշով հնարավորություն են ընձեռում ավելի հստակ ձևավորել միտքը՝ ասելիքը: Ներդրյալ նախադասությունները շարադասավում են այն անդամից կամ անդամկապակցությունից հետո, որին վերաբերում են: Պարզ է՝ դրանք նախադաս լինել չեն կարող: Օրինակներ՝ Կոմիտասը Զիվանու և նրա խմբի համար ձեմարանում մի հրաշալի համերգ-դասախոսություն կազմակերպեց (դա 1903 թվականին էր), որից գոհ մնացին թե՛ հանդիսականները և թե՛ աշուղները (ԳԼ): Սուսերամարտերն արված են այնքան լավ (սա սպորտի վարպետ Ս. Հարությունյանի ծառայությունն է), հոգեբանորեն այնքան ճշմարիտ (սա էլ թատրոնի երիտասարդուժյան շնորհքն է), որ երբեմն մոռանում ես վաղածանոթ դերասանին և աչքերիդ առաջ տեսնում միմյանց խողխողող վերոնացի պատանիներին (ՍԱ): Նրա ստեղծած կերպարը շատ հարուստ է գույներով (այդ գույների մեջ ավելորդ են գուտ գեղջկական երանգները (ն. տ.):

Անցյալի գրականություն մեջ նման նախադասությունները հաճախ տրոհվել են նաև ստորակետ-գծով, որը հիմա ընդունելի չէ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ են կոչվում ներդրյալ բառեր ու բառակապակցություններ, ինչո՞վ են դրանք տարբերվում միջանկյալ բառերից:
2. Ինչո՞վ են տարբերվում ներդրյալ նախադասություններից:
3. Դրանց ամեն տեսակով կազմել 3-ական նախադասություններ:
4. Գեղարվեստական գրականությունից ու մամուլից դուրս գրեք ամեն տեսակից 3-ական նախադասություններ:

Վարժություն 1: Արտագրել ներդրյալ բառերն ու բառակապակցությունները, բացատրել, թե ինչ խոսքի մասերով են արտահայտված. նշել կետադրությունը:

Արտիստ է, այո՛, հոգով, սրտով, արյունով, ամբողջ էությունը (Շիրվ.): Ավ. Իսահակյանը ծնվել է Ղազարապատ (այժմ Իսահակյան) գյուղում 1875 թ.: ԵՊՀ բանասիրական ֆակուլտետը (ղեկան Ա. Ավագյան) ակտիվորեն մասնակցեց շաբաթօրյակին: Մոսկվայի Լազարյան ձեմարանը (առաջին տեսուչ Հարություն Ալամդարյան) համալրեց էջմիածնի Գևորգյան ձեմարանը (հիմնադիր Գևորգ Գ): Դեպքի մասին կարող էին տեղյակ պահել, փառք աստծո, կա բջջային հեռախոս: Հանրապետության նախագահի արժանի թեկնածու է, ինչ խոսք, նաև Արթուր Բաղդասարյանը: Երևանի Հյուսիսային պոլիտան, ճիշտն ասած, ինձ շատ է դուր գալիս, իսկ քաղաքապետարանի շենքը, ինչ մեղքս թաքցնեմ, դուրս չի գալիս:

Վարժություն 2: Ընդգծել ներդրյալ նախադասությունները, բացատրել, թե դրանք նախադասության ո՞ր անդամների վերաբերյալ են բացատրություններ տալիս:

Ուրիմյան Հայրիկը (նա մեր 125-րդ կաթողիկոսն է) շատ ազգանվեր մարդ էր: Նրա մահվան 100-ամյա տարելիցը (ծնվել է 1807 թ.) նշվեց անցյալ տարի: Կոմիտաս վարդապետը (այս անունը նրան շնորհել է Ուրիմյան Հայրիկը) Ուրիմյանի եղբոր թոռնիկների համար դաշնամուր բերեց (Բեռլինից): Մոսկվայի Լազարյան ձեմարանը (այն հիմնադրվել է 1815-ի մայիսի 15-ին) հայ մշակույթի համար հսկայական դեր է խաղացել: Ձեմարանի հիմնադիրները եղել են մեծահարուստ Լազարյանները (նրանք այստեղ էին եկել Նոր Նախիջևանից): Կոմիտասը (մեծ երգահան) և Հրաչյա Աճառյանը (մեծ լեզվաբան) Գևորգյան ձեմարանում հաճախ էին ներկայացումներ կազմակերպում (երկուսն էլ սիրում էին հումորը), որոնք սիրով էր դիտում նաև Ուրիմյան Հայրիկը: Կոմիտաս վարդապետը մեր հայ երգը

տարածեց ամբողջ աշխարհում (նա եղել է նաև Բուրգերի երկրում), իսկ Հրաչյա Աճառյանը (նա գիտեր բազմաթիվ լեզուներ) Հայերենը համեմատել է աշխարհի 562 լեզուների հետ (նման փորձ դեռ ոչ ոք չի կատարել):

ՀՈՒՈՎՆԵՐԻ ԾԱՐԱՀՑՈՒՄԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Հոլովը գոյականի, առարկայանիչ դերանվան և գոյականաբար առնված այլ խոսքի մասի քերականական կարգ է. այսինքն հոլովներով արտահայտվում են բառերի միջև եղած զանազան հարաբերություններ, հոլովներով է որոշվում վերոհիշյալ բառերի՝ նախադասություն ինչ անդամ լինելը: **Հոլովը բառի իմաստի և ձևի միասնական դրսևորումն է: Առանց բառաձևի հոլով չկա.** նկատի է առնվում ոչ միայն բառերի հոլովակազմիչ ձևույթները, այլև բառերի ներքին թեքումը (տուն-տան, հայր-հոր):

Ըստ այն բանի, թե բառը տվյալ լեզվում ձևաիմաստային քանի տեսակի փոփոխություն է ենթարկվում, տվյալ լեզուն այդքան էլ հոլով ունի: Օրինակ, մեզ ծանոթ լեզուներից ֆրանսերենն ու իտալերենը հոլովներ չունեն, որովհետև այդ լեզուներում բառերը ձևային փոփոխություններ չեն ստանում, անգլերենում կա միայն մեկ սեռական հոլով, որը կազմվում է ապոստրոֆ նշանով և Տ-ով: Լատիներենում և գերմաներենում բառը ձևափոխություն է ենթարկվում 4 ձևով, ուրեմն դրանք ունեն 4 հոլով, ռուսերենում բառը իմաստաձևաին 6 տեսակ փոփոխություններ է ստանում, ուրեմն ռուսերենն էլ ունի 6 հոլով (չունեն բացառական հոլով):

Այն լեզուները, որոնցում բառը իմաստա-ձևային փոփոխությունների չի ենթարկվում, դրանցում նախադասության անդամների պաշտոնները որոշվում են նախդիրների (articl) միջոցով:

Աշխարհում կան նաև շատ լեզուներ, որոնցում բառը ավելի շատ ձևափոխությունների է ենթարկվում, ուրեմն դրանց հոլովների քանակը ավելի շատ է, օրինակ՝ սանսկրիտոն ունի 8 հոլով, էստոներենը՝ 11, ֆիններենը՝ 16, հունգարերենը՝ 21, լեզուներ էլ կան, որոնց հոլովների թիվը անցնում է 50-ից:

Իսկ քանի՞ հոլով ունի Հայերենը:

Անվանի գրաբարագետ Միքայել Չամչյանը գրաբարում նշում է 10 հոլով՝ ներառյալ պառառական, պատմական, կոչական, Արսեն Բագրատունին դիտարկում է 6 հոլով. նշված 3-ի հետ հանում է նաև

ներգոյականը, քանի որ նշված 4 հոլովները կազմվում են նախդիրների միջոցով: Այժմ էլ գրաբարում դիտարկվում է 6 հոլով:

Արևմտահայերենում նույնպես 6 հոլով կա (չունեն ներգոյականը):

Գրական արևելահայերենի հոլովների քանակի վերաբերյալ այժմ 3 տարբեր կարծիքներ կան. այն լեզվաբանները, որոնք հոլովները տարբերում են **բառի ձևի** (ձևաբանական) և **իմաստի** (չարահայուսական) սկզբունքներով, ընդունում են 7 հոլով՝ **ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական և ներգոյական** (այս տեսութայան հիմնադիրներն են Արսեն Այտընյանը և Ստեփանոս Պալասանյանը - 19-րդ դար):

Այն լեզվաբանները, ովքեր առաջնորդվում են զուտ **ձևաբանական** սկզբունքով՝ միայն հոլովակերտ ձևույթներն են համարում հոլովատարբերակիչ հատկանիշներ՝ առանց որոշիչ հոդի հոլովատարբերակիչ դերի, ընդունում են 5 հոլով՝ **ուղղական, տրական, բացառական, գործիական, ներգոյական** (սրանք նույնացնում են **ուղղական-հայցական** և **սեռական-տրական** հոլովները՝ անտեսելով որոշիչ հոդի դերը): Այս տեսութայան հիմնադիրը Մանուկ Աբեղյանն է (20-րդ դարի սկիզբ). նա ասում է. «Մի գոյական հոլովել, նշանակում է ասել այն բոլոր ձևերը, որ կարող է ունենալ գոյականը» (Աշխարհաբարի քերականություն, Վաղարշապատ, 1906, էջ 134): Այս տեսութայան վերաբերյալ տարիներ շարունակ բանավիճեցին մտավորականները, հատկապես լեզվաբանները, և միայն 1930-ական թվականներին Արարատ Ղարիբյանն ու Գուրգեն Սևակը հիմնավորեցին 7 հոլովի համակարգը, և դպրոցներում ու բուհերում դասավանդվեց 7 հոլով, որը շարունակվեց մինչև 1967 թ. հայտնի բանավեճը, որից հետո՝ առ այսօր, մասնագետները միասնական կարծիքի չեկան, և դպրոցներում ու գրեթե բոլոր բուհերում, բացի պետական համալսարանից, դասավանդվում է 7 հոլով: Այս նկատառումով էլ զբքում հետևում ենք 7 հոլովի համակարգին:

Լեզվաբանների երրորդ խումբը (էդուարդ Աղայան, Ռաֆայել Իշխանյան և ուրիշներ) որոշիչ հոդը համարելով որպես **սեռական և տրական** հոլովները սահմանազատող ձևույթ, ընդունեցին 6 հոլով, մանավանդ, որ 8 անձնական դերանուններ (**ես, դու, նա, ինքը, մենք, դուք, սա, դա**) ձևափոխություն 8 ձև ունեն:

Ուղղական Հոլովի կիրառությունը

Ուղղական Հոլովով դրվում են նախադասությունն ենթական և այլ անդամներ.

1. **Ենթակա** – Ենթական կարող է գործածվել ինչպես առանց հոդի՝ Անուշ նիրհեցին ծով, անտառ ու լեռ (ՎՏ)։ Խոտերի մեջ արածում է մի սպիտակ գառ (ՍԽ), այնպես էլ՝ որոշիչ, ստացական և դիմորոշ հոդերով՝ Մեկ ազգի պահողը, իրար միացնողը լեզուն է ու հավատը (ԽԱ)։ Ճոխ է հայոց լեզուն, և առատորեն կվարձատրվի նա, ով կուսումնասիրի այն (Բայրոն)։ Պիտի դառնա տղես կովեն հաղթական (ԳՎ)։ Տղադ ավարտեց համալսարանը։ Ուսուցիչներս աշխատում ենք լավ կրթել աշակերտներին (Գպր.)։

2. **Կողմնակի ենթակա** – Հեքիաթը ավարտվելով՝ ավարտվեց նաև պատմությունը։ Մեքենան վթարվելու պատճառով մեր ուղևորությունը հետաձգվեց։

3. **Գոյական որոշիչ** – Պտույտ է գայիս ծաղիկ տիրուհին (ՀԹ)։ Արծաթ խոսքերով աղբյուրն է խոսում (ՎՏ)։ Գյուղացի Համբոյի տունը կոխվ էր ընկել (ՀԹ)։ Ճարտարապետ որդի ունեմ, մատաղ լինեմ ջինջ հոգուն (ԳՄ)։

4. **Ստորոգելիական վերադիր** – Մեր լեզուն մեր խիղճն է դա... Մեր հոգու կանչն է արդար ու համը մեր բերանի (ՀՍ)։ Կոմիտասը ինձ համար չքնաղ լեզենդ է (Իս.)։ Աշխարհում նա եղել է դպիր վարդապետ (ԵԶ)։

5. **Կոչական** – Արի՛, եղբայր, փառաբանենք մեր քաղցրաբառ հայոց լեզուն (ՆԶ)։ Քեզ, իմ հայ լեզու, կսիրեմ մրգաստանի մը նման (Թոթովենց)։ Որսկան ախպեր, սարեն կուգաս, սարի մարալ կփնտրես (Ավ. Իս.)։

6. **Բացահայտիչ** – Հրաչյա Աճառյանը՝ այդ բազմաբեղուն լեզվաբանը, թողել է 30 հազար էջից ավելի տպագիր, դրա կեսի չափ էլ ձեռագիր աշխատություններ։ Հայաստանի Մայր բուհը՝ Երևանի պետական համալսարանը, բոլորեց իր 80 տարին։

Սեռական Հոլովի կիրառությունը

Սեռականի հիմնական կիրառությունը հատկացուցչի շարահյուսական պաշտոն կատարելն է. այս հոլովով դրվում են նաև նախադասությունն այլ անդամներ, որոնք կապվում են գոյականների հետ։

1. **Հատկացուցիչ** – Ի՞նչ իմանաս ստեղծողի գաղտնիքներն անհամար (ՀԹ): Ընդունիր դու՝ մեր ցաք ու ցիր մասունքների հավաքարար, Դու՝ խազերի մեր քերական (ՊՍ): ...Ես երգիչ հրի, սրի... (ՀՍ): **Հասմիկի** եղբայրը ուսանող է:

2. **Գոյական որոշիչ** – Ծագում է մանուկ արևը գարնան (ՎՄ): Աչնան արևը մարդ չի տաքացնի: Երևանի արտադրած **ձեռքի** և պատի ժամացույցները ժամանակին մեծ պահանջարկ ունեին: Երևսան կոտրեց **թեյի** բաժակը:

3. **Անորոշ դերբայով որոշիչ** – **Ոմելու** ջուրը պետք է խնայել: **Գրելու** թուղթ հիմա շատ կա: Գրածդ, իսկապես, **կարդալու** գիրք է:

4. **Ստորոգելիական վերադիր** – Այն այս դեպքում պատկանելություն է ցույց տալիս, ստանում է կրկնակի հոգ և կոչվում է **փոխանուն սեռական՝** Այս գիրքը **Գեղամինն** է: «Իններորդ ալիքը» **Այվագովսկունն** է: Հիմա խոսքը քոնն է:

5. **Կողմնակի ենթակա** – Մեծ **հայրենասերի՝** հայրենիք վերադառնալը ոգևորեց բոլորիս (ԳԼ): **Իմ՝** համալսարան ընդունվելը շատ ուրախացրեց մայրիկիս (ՊՂ): **Արջերի** պար բռնելը մի անպատմելի երևույթ է (ՎԱ): **Աստու** պահած գառը գայլը չի ուտի (Ժող.): **Քամու** բերածը քամին էլ կտանի (Ժող.):

6. **Բացահայտիչ** – Արամ **Սաչատրյանի՝** աշխարհահռչակ **կոմպոզիտորի** համբավը տարածված է ամենուր: Գեղամի՝ **ընկերոջս** գիրքը հաճույքով կարդացի:

Տրական հոլովի կիրառությունը

Տրական հոլովը կապվում է բայական անդամի լրացումների հետ, այս հոլովով զրվող խնդիրներն ու պարագաները կարող են լինել հոգերով և առանց հոգերի:

Տրական հոլովով են դրվում՝

1. **Հանգման խնդիր** – ... Կնատեր իր տեղը, կկոթներ հոնի կարմիր մահակին (ԱԲ): Թու ձեր գեղի միջի մարդին, ձեր նամուսին, ձեր աղաթին (ՀԹ): Հավատում եմ **ասածիդ:** Դեռ մինչև երբ չսեղմեմ հեզ գլուխս լանջիդ տաք (ԴՎ):

2. **Կողմնակի հանգման խնդիր** – Ձեռքը դնելով **կրծքին՝** երգվեց, որ չի արել: Մոտենալով **չատրվանին՝** նկատեցի հայացքը կառավարական **չենքին** հառած օտարին (ԳԹ):

3. **Մատուցման խնդիր** –

Լույսի հրճվանքը տվեց երկնքին...
Ճերմակ ժպիտը տվեց ծովերին,
Վեհության խինդը լեռներին տվեց,
Դաշտերին՝ կանաչ ժպիտը գարնան (ՀՇ):

Հյուրերին մատուցեցին նաև թարմ մրգեր ու խմորեղեն:

4. **Կողմնակի մատուցման խնդիր – Հյուրերին միայն սուրճ մատուցելով ճանապարհեցին: Երեխաներին մեկական խաղալիք տալով՝ տուն ուղարկեցին: Գիրքը հանձնելով տիրոջը՝ խիղճս հանգստացավ:**

5. **Տեղի պարագա – Արարատի ձեր կատարին դար է եկել վայրկյանի պես ու անցել (Իս): Իջավ սարյակը դաշտում – ծիլ էր կտուցին (ՀՄ): Ծառերի ղեղին խշխշոցը թափվում է մայթերին (ՎԳ):**

6. **Կողմնակի տեղի պարագա – Լեռան բարձունքին նստելիս՝ մանկությունս եմ հիշում (ՀՄ): Ժայռի ստվերը գետափին չոքելով՝ ջուր է խմում (ՀՄ):**

7. **Ժամանակի պարագա – Կեսգիշերին առատ ձյուն էր տեղացել (ՍՍ): Լուսաբացին նա բարձրացավ կախաղան (ՎՏ): Դասերն ավարտվում են հունիսին:**

8. **Կողմնակի ժամանակի պարագա – Կեսգիշերին գյուղ հասնելուն պես՝ Սիմոնը ձիու մասին հարցրեց (ԱԲ): Յրեկվա ժամը 2-ին, հոգնածություն զգալով, պառկեցի:**

9. **Նպատակի պարագա – Վարադները իջնում են ջուր խմելու (ԱԲ): Մարդը գնում է առևտրի, հավաքվում են՝ քաշում սրի (ՀԹ): Երեխան գնաց հացի:**

10. **Կողմնակի նպատակի պարագա – Հյուրախաղերի գնալով՝ ավելի մեծ սպասելիքներ ուներ: Դուրս եկավ տանից՝ ընկերոջը որոնելու: Պատրաստվում է ջրի գնալու:**

11. **Ձևի պարագա – Ուսապարկը ուսին՝ շարունակում էր վերելքը (ՍՍ): Սպասում էր տարեց կինը՝ աչքը ճանապարհի, ականջը՝ ձայնի: Կարողում էր մեջքին պառկած:**

12. **Կողմնակի ձևի պարագա – Մեջքիդ պառկելով՝ գործը առաջ չի գնա: Պարկը ուսին, շարունակելով ճանապարհը, մտածում էր գալիքի մասին:**

13. **Ստորոգելիական վերադիր – Գարեգին, ես էլ քո կարծիքին եմ, բայց կկարողանանք մյուսներին էլ համոզել (ՍԳ): Գիտեմ՝ դու էլ այդ մտքին ես (ՍԳ): Թեև բարձր էր խոսում, բայց ուշադրությունը մեքենայի ձայնին էր (ԳԹ):**

14. **Քացահայտիչ** – վերջապես դրոսաշրջիկները հասան հինավուրց բերդի ավերակներին՝ իրենց վերջնական նպատակակետին (ԳԹ): Պապս միշտ նստում էր ծառի տակ անշարժ ամրացված աթոռին՝ իր սիրած տեղը: Գիրքը հանձնեցի Արամին՝ ընկերոջս:

Հայցական հոլովի կիրառությունը

Հայցական հոլովը նույնպես կապվում է բայական անդամի լրացումների հետ, որոնք գործածվում են թե՛ հոդերով և թե՛ առանց դրանց: Այս հոլովում է, որ հանդես են գալիս **անձի** և **իրի** առումները:

Քանի որ աշխարհաբարում հայցականը չունի իր առանձին ձևը, այսինքն՝ չունի հոլովակերտիչ ձևույթներ (գրաբարում ունենք՝ սիրել Ջմիրմանա), այդ պատճառով էլ այն **իրի** և **իրի առման դեպքում** նման է ուղղականին, իսկ **անձի** և **անձի առման դեպքում** նման է տրականին:

Հայցական հոլովով դրվում են՝

1. **Իրի ուղիղ խնդիրը** – Ոստիան իր որսը խորովել դեռ չգիտեր, Մենք աստվածներ էինք ձուլում Ու վայելում գինի (ՆԶ):

Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսե (ԵԶ):

Անձը իրի առումով՝ Հիվանդի համար բժիշկ կանչեցին: Ով Կոմիտաս չի սիրում, Սևակ ու Շիրազ չի կարդում, էլ ի՞նչ հայ է (ԳԹ):

Անձի ուղիղ խնդիր՝ Ես սիրում եմ մայրիկին, Ես չեմ ուզում լինել կին (ՀԹ):

Աշակերտը հարգում է ուսուցչին: Ուսուցիչը գնահատեց աշակերտին:

Իրը անձի առումով՝ Տղան փաղաքում է չնիկին: Երեխան գուրգուրում է տիկնիկին, կերակրում է նրան:

2. **Կողմնակի ուղիղ խնդիր** – Սիրելով հայրենիքը և հարգելով մեծերին՝ քո արժանապատվությունն ես բարձրացնում: Զուրը չտեսած՝ մի՛ բորիկանա (Ժող.): Զու գողացողը ձի էլ կգողանա (ԽԱ): Հումոր չսիրողը ի՞նչ մարդ է (Գյումրի):

3. **Տեղի պարագա** – Տունը վեր ընկիր, իլիկ պտտիր (ՀԹ): Դպրոց գնացի:

4. **Կողմնակի տեղի պարագա** – Տունը նստելով գործը առաջ չի գնա: Քաղաք գնալով՝ նպատակ ունենք փող աշխատել, տունը պահել: Զեռքը գրպանը տանելով, հիչեց, որ դրամապանակը մոռացել է տանը:

5. **Ժամանակի պարագա – Գիշերը** անձրև եկավ, **ցերեկը՝** արև արեց: **Ամեն երեկո** այցելում եմ հիվանդ ընկերոջս:

6. **Կողմնակի ժամանակի պարագա – Ցերեկը** երկար աշխատելով, **գիշերը** ուշ քնելով՝ Աճառյանն ստեղծեց կոթողային աշխատություններ: **Այս տարի** լավ աշխատելով լավ բերք ստացանք (Մամուլ):

7. **Չափ ու քանակի պարագա – Ավտոմեքենան** մի ժամում կարող է անցնել երկու հարյուր կիլոմետր: Այժմ լավ գիրքն արժե մինչև հինգ հազար դրամ:

8. **Կողմնակի չափ ու քանակի պարագա – Տասը ժամ** աշխատելով՝ ավարտեցինք հանձնարարությունը: **Հինգ հազար** դրամ վճարելով՝ լավ գիրք գնեցի:

9. **Բացահայտիչ – Սիրում** եմ իմ հայրենիքը՝ **իմ հողն ու ջուրը:** Վերջապես նա եկավ գյուղ՝ **իր ծննդավայրը:** Կրծեց մի կտոր չոր հաց՝ օրվա վերջին պաշարը (Սև):

Բացառական հոլովի կիրառությունը

Բացառական հոլովը ցույց է տալիս ինչ-որ բանի սկզբնապատճառը, աղբյուրը՝ քերականական անջատման խնդիրը: Այս հոլովով դրվում են նաև բազմաթիվ այլ անդամներ.

1. **Անջատման խնդիր – Հովն ամպի թևից** մի փետուր պոկել. Ինքն էլ չգիտի, թե ուր է տանում (ՀՍ): ... Հոգիս չի դարձնի վսեմ երազից (Ավ. Իս.): Ասում են՝ իբրև մոխիրը նրա **Ոտարույկից** հանել ու մորն են տարել (ՀՇ):

2. **Կողմնակի անջատման խնդիր – Պոկվելով** դալկացած **ծառերից՝** դեղնած տերևները պար էին բռնում օդում (ԳԹ): **Անջատվելով** իր արմատներից՝ մարդ դառնում է անբուն թռչուն (Ժող.): **Ոույս տալով** հասարակությունից՝ Ծահյանը միշտ մենակ էր զգում (Ն-Գ):

3. **Ներգործման խնդիր – Հայ ժողովուրդը** բազմիցս է հալածվել օտար **նվաճողներից** (ՀԺՊ): Մարդիկ այնքան էլ չէին քաշվում օտար **միջավայրից** (ՍԳ): **Անդրանիկը** միշտ էլ սիրվել է ժողովրդի կողմից (ԳԹ): Ծառը չորացավ **արևից** ու կտրվեց **քամուց:**

4. **Կողմնակի ներգործման խնդիր – Եվ քո տաքուկ շնչից** ներշնչված՝ Աղբյուրներն են երգում նման քաղցր լացի (ՊՍ): **Քամուց** ոչ մի թուփ ու խոտ չչարժվելով՝ քարացել էր կարծես բնությունը (ԳԹ):

5. **Վերաբերություն խնդիր** – ... Դո՛ւք **ձեզնից** պատմեք, **ձեր օր ու կյանքից**, **ձեր ցավ ու դարդից** (ՀԹ): **Խոսում էին Լուսյա Հին-Հին քաջերից** (ՀԹ): Ավին անընդհատ **որսից** էր պատմում ու իր **հնարամտություններից**:

6. **Կողմնակի վերաբերություն խնդիր** – Իր **որսից** պատմելիս Ավին շատ բաներ էլ ավելացնում էր: Թումանյանը, **ընկերներից** խոսելիս, **Նեսոյին երբեք** չէր մոռանում (Հուշ.):

7. **Սահմանափակման խնդիր** – Փոքրիկս ավելի ուժեղ է **երաժշտությունից**, մեծս՝ **մաթեմատիկայից** (ՀԱ): Պապիկը խեղճացել էր **տեսողությունից**, տատիկը՝ **լսողությունից**:

8. **Կողմնակի սահմանափակման խնդիր** – **Տեսողությունից ու լսողությունից** խեղճանալով՝ տատիկս տանից քիչ էր դուրս գալիս (ՊՂ): Հատկապես **անգլերենից** ուժեղ լինելով՝ նախընտրեցի ոտմանագերմանական բաժինը և չսխալվեցի. ապագան դրանն է:

Այս հոլովով են դրվում նաև տեղի, ժամանակի, պատճառի, հիմունքի, ձևի պարագաները:

9. **Տեղի պարագա** – **Գյուղից** սլացան մի խումբ կտրիճներ (ՀԹ): Եվ հանկարծ **այգուց** դու ելար իմ դեմ՝ Ուքերով բորիկ ու ցողաչաղախ (ՎԴ): **Սարեն** կուգաք, նխշո՛ւն հավքեր, ... **Ծովեն** կուգաք, մարմանդ հովեր, Ախր բարև բերել չե՞ք (Ավ. Իս.): –**Գալիս եմ, գալիս, Գալիս եմ նանի՛, Զորից** աղջկա ձենն է դողանջում (ՀԹ):

10. **Կողմնակի տեղի պարագա** – Սևանը **երկնքից** ընկած մի կտոր է (Ավ. Իս.): Հնձած խոտի բույր է բերում **Սարից** փախած քամին (ՀՍ):

Ու եկած **Խուժից** ամայաբնակ, Ապա՝ ամայի **Ռչտունիքից**,
Ելած **Իզմիրից** դեռ դիակուտակ, Ապա՝ **Բիթլիսից** դեռ մահակնիք,
Ելած **Բաղեչից** հայաթափված, Եվ ապա՝ **Մուշից** շամփրի քաշած...
Լուռ անցնում էինք այժմ **Խոլական** Եփրատի մոտով (ՀՇ):

11. **Ժամանակի պարագա** – Պանդուխտ եմ, քույրի՛կ, **մանուկ օրերից** (ՀԹ): **Գիշերվանից** տեղատարափ անձրև է գալիս: **Ճաշից** հետո ընկերիս տանը պառկել էինք կողք-կողքի (Ավ. Իս.): Ես, **մանկուց** միշտ սովոր հյուսիսին, Մի ժամ էլ չեմ կարող համբերել (Վ. Զվիգենցևա):

12. **Կողմնակի ժամանակի պարագա** – **Կոիվներից** մնացած մի սայլ էր ընկած խոհանոցի մոտ (ԲՀ): **Երեկվանից** սկսած անձրևը դեռ չի դադարում: **Հնից** մնացած բան է:

13. **Պատճառի պարագա** – **Շտապելուց** թև են առել՝ Դարձել թեթև

Թիթեոններ (ՀԹ): Խեղճը դողալով՝ Անհույս կոացավ, **Դարդից** չորացավ, Ուռենի դարձավ (ՀԹ): **Վշտից** կոացել, մի բուռ էր դարձել (ՊՂ): Մարդիկ արթնացան մոշահավի ծղրտոցից (ՍԽ):

14. **Կողմնակի պատճառի պարագա – Ցրտից** վախենալով՝ Հաստ քուրք էր հագել (ԳՄ): **Հուզմունքից** դողալով՝ հազիվ էր խոսում: **Անթից** կարմրած՝ մի կողմ էր քաշվել (ԳՄ):

15. **Հիմունքի պարագա – Աճառյանը** իր ուսանողներին **ձայնից** էր ճանաչում (Հուշ.): Նրա **նամակներից** արդեն ամեն ինչ գիտեի իր մասին (Հուշ.): **Աղոթքից** հիշեցի այդ փոքրահասակ տատիկին:

16. **Կողմնակի հիմունքի պարագա – Աճառյանը** **ձայնից** ճանաչելով 40 տարի չտեսած ընկերոջը, բացում է դուռը (Հուշ.): **Աղոթքից** հիշելով տատիկին՝ գրկեցի նրան:

Բացառական հոլովով են դրվում նաև մասնական ենթական, մասնական կրող խնդիրը, գոյական որոշիչը, ստորոգելիական վերադիրը և բացահայտիչը: Օրինակներ.

1. **Մասնական ենթակա – Մթուլթյան մեջ** հազիվ նշարվեցին **աքսորյալներից** (Հուշ.): Ճանաչելի դարձան **հանցադործներից**: Ցերեկույթի ժամանակ կարդացվեցին Սևակի **բանաստեղծություններից** և Հնչեցին **Կոմիտասի երգերից** (ԳԹ):

18. **Մասնական ուղիղ խնդիր – Հաճույքով** լսեցինք Սևակի **բանաստեղծություններից** և **Կոմիտասի երգերից**: Ընկերներս վայելեցին իմ այգու **մրգերից**: Յարս էլ խմե՞ց էն **ջրից** (ՀԹ):

19. **Գոյական որոշիչ – Մղտոցից** գլխարկն ու **մետաքսից** հովանոցը պաշտպանում էին չոզից (ՍԳ): Հատկապես հիսուն-վաթսունական թվականներին Երևանում մասսայաբար քանդվեցին **աղյուսից** ու **փայտից** տնակները և կառուցվեցին **քարից** ու **երկաթբետոնից** հինգից-տասնչորսհարկանի բազմաթիվ գեղեցիկ շենքեր (Հայաստանի կոմունիստ):

20. **Ստորոգելիական վերադիր – Այս բարձրահարկը** **երկաթբետոնից** է: Խեղճ գյուղացու հագուստը **ոչխարի** ու **այծի բրդից** էր, ոտնամանը՝ **եղան կաշվից** (ՀԿ):

21. **Բացահայտիչ – Յավով** էի հեռանում **Գյումրիից՝ իմ մանկություն** **օրրանից**: Միշտ գոհ եմ եղել իմ սիրելի ուսուցչից՝ **Հրայր Քալաչյանից՝ իմ մեջ մայրենիի նկատմամբ մեծ սեր ներարկողից**:

Գործիական հոլովի կիրառությունը

Գործիական հոլովը հիմնականում միջոցի խնդրի հոլովն է: Այս հոլովով դրվում են նաև տարբեր խնդիրներ ու պարագաներ, ինչպես նաև այլ անդամներ:

1. **Միջոցի խնդիր** – Մեր հոգին լիքն է խոհերով ու զաղտնիքներով, Ահա թե ինչու մենք շատ բան ունենք ասելու աշխարհին (Ավ. Իս.): Եվ ծաղիկները այդ սուրբ շշուկով իմ հոգին լցրին (ՎՏ): Հաճախ նամակները մատխտով էին գրում (ԳԹ): Եկել էին հրով ու սրով՝ երկիրը քանդելու (ՍԳ):

2. **Կողմնակի միջոցի խնդիր** – Բահով հողը փորելիս մի կարաս ոսկի է գտնում (ՀԹ): Մեքենայով ծովափ գնալիս վայելում էինք նաև բնության գեղեցկությունները (Հուշ.): Ծաղիկներով զարդարված լուսանկարը հերոսի հուշարձանի կողքին դրեցին (Հայ զինվոր):

3. **Ներգործման խնդիր** – Հայոց պատմությունն տառերը հայոց արյունով են գրված (Ավ. Իս.): ...Գիտենք նոր խնդրությամբ սիրել ու սիրվել (ՊՍ):

4. **Կողմնակի ներգործման խնդիր** – Լեոնե՛ր, ներշնչված դարձյալ ձեզանով՝ թնդում է հոգիս աշխուժով լցված (ՀԹ): Քո երջանկությամբ տարված բանաստեղծ դարձա (ԳԹ):

5. **Տեղի պարագա** – Մայր Արաքսի ափերով քայլամուտը գնում եմ (ՌՊ): Գոհար աստղերի քարավանները թափառում էին երկնի ճամփեքով (Ավ. Իս.): Ծիածան անցավ երկնքով՝ ամպ էր կտուցին (ՀՍ):

6. **Կողմնակի տեղի պարագա** – Ճանապարհով անցնելիս հանդիպեց բարեկամին: Միջանցքով քայլելիս ուշադիր եղիր:

7. **Ժամանակի պարագա** – Մեծարենցը ժամերով նստում էր ջրի ափին ու զմայլվում բնություն գեղեցկությամբ (Դաս.): Եթե ցերեկով չէր հասցնում, աշխատանքի մեծ մասը կատարում էր գիշերով (ՊՂ): Օրերով անկողին չէր մտնում:

8. **Կողմնակի ժամանակի պարագա** – Ժամերով նստելով ջրի ափին՝ չէր հագնում: Երկու տարով տան երես չտեսնելով՝ անչափ կարոտել էր հարազատներին (ԳԹ): «Գիշերով արած գործը գտնված է», – միշտ ասում է մայրս:

9. **Հիմունքի պարագա** – Հայոց դպրոցները փակվել էին ոուս թագավորի հրամանով (ՍՁ): ՀՀ նախագահի կարգադրությամբ կոնյակի գործարանը հանձնվեց Փրանսիացիներին (Իրավունք): Ազգային ժողովի որոշմամբ բյուջետային հիմնարկների աշխատողների աշ-

խատավարձը բարձրացավ միայն 20 տոկոսով (ն. տ.):

10. **Կողմնակի Հիմունքի պարագա – Դատարանի վճռով կայացած որոշումը ուժ չունեցավ:** Անհայտ օրենքի չգրված կետով՝ Լոկ ձայնի համար համարվեց նա սան (ՊՍ):

11. **Նպատակի պարագա – Գործով Մոսկվա էի գնացել:** Գործուղումով Փարիզ գնացի:

12. **Կողմնակի նպատակի պարագա – Անձնական գործով** գյուղ գնալիս փորձանքի հանդիպեցի: **Հատուկ նպատակով** այդ գնալիս Հին ընկերներին տեսա:

13. **Ձևի պարագա – Ու խենթացած, ծափ տվեց Փարիզն ինչպես ձեռքերով,** Այնպես նաև բաց ու խուփ թարթիչներով՝ զարմացած (ՊՍ): Լիլիթը հուզմունքով դիտում էր գեղանի կարապներին (Ավ. Իս.): Աստղերն են ժպտում լուսեղեն նազով... Սիրտս կարոտով կանչում է քեզ՝ եկ (ՎՏ):

14. **Կողմնակի ձևի պարագա – Սահուն քայլերով անցնելիս** չնկատեց ինձ (ԳԹ): **Ուրախություն** իմանալով հաճելի լուրը՝ անմիջապես գյուղ մեկնեցի (ԳՔ):

15. **Չափ ու քանակի պարագա – Ընկերս ինձանից փոքր է երկու տարով:** Հողերը հարյուրավոր հեկտարներով մնացել են անմշակ (ՀՀ):

16. **Կողմնակի չափ ու քանակի պարագա – Մի անգամ կարդալով՝ չես հասկանա (ԳԹ): Քսան տոկոսով** բարձրացրած աշխատավարձը ուսուցչին ոչինչ չտվեց (Դպ.):

17. **Միասնությունից պարագա – Երկուսով** նստում են վարունգի թաղերի մոտ (ԱԲ): Քո ընկերներով պետք է գործը կատարես:

18. **Կողմնակի միասնությունից պարագա – Ընկերներով** կատարած գործը հաճելի է:

19. **Գոյական որոշիչ – ... Ա՛յ սև աչքերով, Ա՛յ թով աչքերով,** Ունքերդ կամար, Աղջի՛կ, քեզ համար (ՀԹ): Մի ուրու անցավ, մի գունատ աղջիկ՝ ճերմակ շորերով (ՎՏ): Սոնան միշտ համով կերակուրներ էր պատրաստում: Նելքով տղա է՝ շուտ ըմբռնող:

20. **Ստորոգելիական վերադիր – Ամառ-ձմեռ խեղճ մարդը նույն զգեստով էր (ՍԳ): Այսօրվա նախաճաշը շատ համով էր,** որովհետև արևածաղկի յուղով էր: Հարևանի աղջիկը ավելի տեսքով էր:

21. **Բացահայտիչ – Աշխատավարձով՝ ապրուստի միակ միջոցով** էր յուր գնում: Իր փոքրիկ բալիկներով՝ իր սիրասուն երեխաներով էր միայն կապված այս աշխարհի հետ: Միշտ պայուսակով էր լինում՝ իր անբաժան ուղեկցով:

Ներգոյական հոլովի կիրառութիւնը

Ներգոյականով տարածական և պարունակութեան իմաստ արտահայտող անդամներն են դրվում.

1. **Տեղի պարագա** – Ոսղադութիւն կար Կաքավաբերդի **ավերակներում** (ԱԲ); Լուսթիւն կա իմ **հոգում**; Դու քնած ես տաքուկ **անկողնում** և արև բախտի երազ ես տեսնում (ՎՏ); Ծաղիկ էի նորաբողբոջ՝ **սարի լանջում**՝ երկնի տակ (Ավ. Իս.):

2. **Կողմնակի տեղի պարագա** – Շիրակի դաշտերում **անցկացնելով մանկութիւնս**՝ ճաշակեցի հայրենիքի քաղցրութիւնը (Ավ. Իս.): **Անկողնում** քնած երեխան արթնացավ ու սկսեց մորը կանչել: **Ջրում** ծնվածը օդում չի թռչի (Ժող.):

3. **Ժամանակի պարագա** – Մի գիշերում դու ձայնով նվաճեցիր Վիեննան (ՊՍ): **Ներկա օրերում** այլ ինչ սև քնար, Սուր է հարկավոր կտրիճի ձեռքին (ՄՆ): **Մոտիկ ապագայում** լուծվելու է Երևանի խմելու ջրի հարցը (ՀՀ): Դ. Դեմիրճյանը «Վարդանանքը» գրել է **վեց ամսում**՝ հիվանդանոցում (Դաս.): Ռեկտորը **սկզբում** խոսեց առաջադիմութեան մասին, **վերջում**՝ կարգապահութեան (ԵՀ):

4. **Կողմնակի ժամանակի պարագա** – Իր ապրած յոթանասունյոթ տարիներից **վաթսունհինգում** Աճառյանը միայն ազգօգուտ գործ կատարեց: **Երեք ժամում** մեր կատարած գործը նա **մեկ ժամում** էր անում: **Մեկ ամսում** կատարած աշխատանքը ջուրը լցվեց:

5. **Սահմանափակման խնդիր** – Այդպիսի **գործերում** նա շատ հմուտ է: Հատկապես **վիճաբանութիւնում** ոչ ոքի չէր զիջում: Իրեն լավ էր դրսևորում միայն **մրցումներում**: Համոզված չէր հատկապես **դրանում**: **Թղթախաղում** միշտ բախտը բերում էր (Շ):

6. **Կողմնակի սահմանափակման խնդիր** – Դրանում համոզված չլինելով՝ իր համաձայնութիւնը չտվեց: **Վիճաբանութիւնում** տանուլ տալով՝ իրեն վատ էր զգում: **Աշխատանքում** չփայլելով՝ հեղինակութիւն չէր վայելում (ՀԱ):

7. **Ձևի պարագա** – Բորը արևին իմ բորը **սրտում** ասում եմ ես՝ մնաք բարով (ՎՏ): **Ձկնորսը մտքում** անիծում էր իր բախտը (ՍԳ): Երեխան **քթում** է խոսում: **Մտքում** հաշվում էր ոչխարները, ու մեկը միշտ պակասում էր (ՍԳ):

8. **Կողմնակի ձևի պարագա** – **Մտքում** անիծելով իր բախտը՝ Օրվա որսից գոհ էր մնում: **Սրտում** սիրելով աղջկան՝ աշխատում էր շատ երես չտալ (ՊՂ): **Քթում** խոսելիս՝ մեկ-մեկ էլ՝ հայհոյում էր (ՊՂ):

9. **Գոյական որոշիչ** – Ներգոյական հոլովով գոյական որոշիչները հազվադեպ են, որոշիչի պաշտոնով հանդես եկող գոյականները սովորաբար միաբառ չեն լինում, և որոշչային կապակցություն մեջ արտահայտված չի լինում **անկախ դերբայը**. փաստորեն առանց դերբայի զեղչման այդ որոշչային բառակապակցությունը կլիներ դերբայական դարձվածով արտահայտված որոշիչ. այսպես՝ «Մեր պատգամավորներին դիմավորեց Մոսկվայում (եղած) Հայաստանի դեսպանը» (ՀՀ): Հայաստանի դեսպանը **Փարիզում** (եղած, գտնվող) հայոց ցեղասպանության հարցն է բարձրացրել (Ազգ): Հիշում եմ մորս ձայնը **սարերում** (հնչող, կանչող), **Ոչխարի մակաղելը փարախում** (ՄԳ):

Նման կառույցներում, անշուշտ, մեծ կարևորություն ունեն շարադասությունն ու հնչերանգը. եթե ներգոյականով զբաղվող գոյական որոշիչներն արտաբերվեն բայ-ստորոգյալների հետ, կլինեն **տեղի պարագաներ** (Մոսկվայում **դիմավորեց, Փարիզում բարձրացրեց**), իսկ եթե արտաբերվեն գոյականների հետ, կլինեն **որոշիչներ** (դեսպանը Մոսկվայում, դեսպանը Փարիզում):

10. **Ստորոգելիական վերադիր** – Հիվանդը **նույն վիճակում է: Տնօրենը տեղում չէ:**

11. **Բացահայտիչ** – Վերջապես իմ ծննդավայրում եմ՝ իմ սիրելի օրրանում (Ավ. Իս.): Կոմիտասը իր վերջին համերգը տվեց Փարիզում՝ **Ֆրանսիայի մայրաքաղաքում** (ԳԹ):

Վարժություններ: Առանձին-առանձին դո՛ւրս գրել տարբեր հոլովներով զբաղված բառերը և որոշե՛լ, թե նախադասության ի՞նչ անդամներ են և ինչո՞վ են արտահայտված՝ նշելով նաև որոշյալ, անորոշ և անձի ու իրի առումները:

I

Խորենացու վկայությամբ՝ Արաքսի ձախ ափին գտնվող Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի երկրագործ Հայերը անհիշելի ժամանակներից հայտնի են եղել իրենց երգ ու երաժշտությամբ: Անցյալ դարերից ամբողջ Հայոց աշխարհում և նրա սահմաններից դուրս ամենուրեք հայտնի են Գողթան գավառի գուսաններն ու երգիչները: Այս նշանավոր գավառի երգասեր ու երգաստեղծ, հեթանոս պապերի ավանդույթները սրբությունը պահպանող ժողովրդից են սերվել հայ մեծ երգահան Կոմիտասի նախնիները:

17-րդ դարի վերջերին Հայերի նկատմամբ հալածանքները

սաստկացնելու պատճառով Կոմիտասի նախնիները Յդնա գյուղի մի խումբ գաղթականների հետ իրենց երգ ու երաժշտությունները արտագաղթել են Իզմիրին մոտիկ գտնվող Կուտինիա քաղաքը:

Այս քաղաքում հայերն ունեին իրենց դպրոցն ու եկեղեցին, բայց հայերին արգելված էր մայրենի լեզվով խոսել. հայերեն խոսողների լեզուն թուրքերը կտրում էին, նրանք նպատակ ունեին հայերին ձուլել իրենց՝ նրանց արհեստներն ու մշակույթը սեփականացնելու նպատակով: Ստեղծագործ հայերը Տավրոսի լեռներից սայլերով հատուկ տեսակի ապարներ էին բերում, դրանք շաղախելով խմոր էին դարձնում և ապակու պես հարթ ու ողորկ սկահակներ, սափորներ, սկուտեղեր, պերճանքի իրեր էին պատրաստում, կանայք ու աղջիկները դրանք ծաղկազարդում ու նախշում էին աչք շլացնող ներկերով և դրանք վաճառելով հոգում էին իրենց ընտանիքների հոգսերը:

Հանրությունն աչքերին թող փչելու և հասարակության կարծիքից խուսափելու նպատակով հայերին թույլ էր տրվում իրենց լեզվով խոսել միայն եկեղեցում: Այս եկեղեցու երգչախմբի դասում աչքի էր ընկնում անուշ ձայն ունեցող կոչկակար Գևորգ Սողոմոնյանը՝ Կոմիտասի ապագա հայրը: Նա ամուսնանում է 15-ամյա գորգագործ Թագուհու հետ, և մեկ տարի հետո՝ 1869-ի սեպտեմբերի 26-ին ծնվում է նրանց անդրանիկ և միակ զավակը՝ Սողոմոնը, որը հետո պիտի դառնար այր իմաստուն և հայոց երգի վեհափառը:

Ս. Բաղդկյան
«Կոմիտասը՝ ինչպիսին եղել է», Եր., 2002:

II

Աճառյանի հայրական պապը՝ կոչկակար Հարությունը, Մարմարա ծովի ափին գտնվող Ռոդոսթո հայաչափ քաղաքից 18-րդ դարի վերջին իր ընտանիքով տեղափոխվել է Կոստանդնուպոլիս և բնակություն հաստատել Սամաթիա թաղամասում՝ հայոց եկեղեցու հարևանությունում: Աճառյանի հայրը նույնպես կոչկակար էր, սովորել էր Սամաթիա թաղի տարրական դպրոցում, որտեղ հայերենը սովորել էր Չամչյանի քերականությունով: Թողնելով դպրոցը՝ դարձել էր կոչկակար: Աճառյանի մայրը՝ Ընծան, անգրագետ էր: Նա իր ազգական քահանայից մի ժառանգություն էր ստացել՝ «հայոց պատմություն» դասագիրքը՝ տպված Վենետիկում:

Հրաչյան ընտանիքի երրորդ երեխան էր. ընտանիքում ունեցել են վեց երեխա՝ չորս աղջիկ, երկու տղա:

Աճառոյանը ծնվել է 1876 թ. մարտի 8-ին Կոստանդնուպոլսի Սամաթիա թաղամասում: Մոր պատմելով՝ երեխան մեկ տարեկան հասակում գրկվել է մեկ աչքի տեսողութիւնից. այդպէս էլ մնացել է ամբողջ կյանքում: Ուսման նկատմամբ մեծ սեր ունեցող հայրը 7 տարեկան տղային ընդունել է տալիս Սամաթիայի Արամյան մասնավոր վարժարանը, որտեղ Հրաչյան սովորում է 3 լեզու՝ հայերեն, ֆրանսերեն և թուրքերեն: Երկու տարի հետո տեղափոխում է Սամաթիայի Ազգային վարժարանը, որտեղ պատանու հայացքն ընկնում է դիմացի պատին գրված նախադասութեանը՝ «Մանիր զքեզ», և նա ճանաչեց իրեն՝ իր կոչումը գտնելով գիտութեան մեջ. այստեղ նա սովորեց բազմաթիվ լեզուներ և իր ժողովրդի պատմութիւնը: Ավարտելով Կեդրոնական (միջնակարգ դպրոց) վարժարանը՝ նույն դպրոցում մեկ տարի դասավանդում է հայոց լեզու և ֆրանսերեն, ապա՝ աշխատանքի է հրավիրվում Կարինի Սանասարյան վարժարանում: 1895 թ. հոկտեմբերին ընկերոջ հետ Մարսելից գնացքով հասնում է Փարիզ, ընդունվում է Սորբոնի համալսարան, աշակերտում է պրոֆեսոր Անտուան Մեյեին, խորանում բազմաթիվ լեզուների ուսումնասիրութեան մեջ, կարդում է մի քանի ղեկուցումներ, ընտրվում է Փարիզի Լեզվաբանական ընկերութեան անդամ, մեկ կիսամյակ էլ սովորում է Գերմանիայում՝ լեզվաբան Հյուբշմանի մոտ և 22 տարեկան պատանին գալիս է էջմիածին. նրան ուրախութեամբ ընդունում է Ամենայն Հայոց կաթողիկոս Որբոյան Հայրիկը և նշանակում Գևորգյան ճեմարանի դասախոս:

Ո. Բաղիկյան
«Հրաչյա Աճառոյան մարդը և գիտնականը»

ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Բարդ նախադասությունների մարդիկ դիմում են ավելի տարողունակ մտքերով հաղորդակցվելու նպատակով: Բարդ նախադասությունները կազմվում են պարզ նախադասություններից, այսինքն՝ եթե պարզում կա մեկ ստորոգում՝ մեկ ստորոգյալ, բարդում կան մեկից ավելի ստորոգումներ, հետևաբար՝ բարդ նախադասությունն արտահայտում է մտքերի ամբողջություն, պարզաբանում, լրացնում, բացահայտում է մեկ պարզ նախադասությամբ արտահայտվածի միտքը: Օրինակ, Թումանյանի հետևյալ քառատողը բաղկացած է 3 պարզ նախադասություններից, որոնցից ամեն մեկը միտք է արտահայտում, բայց ամբողջության մեջ Թումանյանը այդ 3 մտքերը կապել է իրար հետ և ավելի ամբողջական միտք է արտահայտել, որտեղ մի նախադասությունը տրամաբանորեն կապված է մյուսի հետ՝

Ձմռան մի գիշեր կար մի հարսանիք,
Հրճվում էր անզուսպ ամբոխը գյուղի,
Գյուղն էին իջել հովիվ պատանիք՝
Աղջիկ տեսնելու, պարի ու կոխի:

Այս 3 նախադասություններն ունեն իրենց առանձին ստորոգումները, հետևաբար դրանք կարելի է արտաբերել առանձին-առանձին և ստանալ 3 պարզ նախադասություն: Սակայն դրանցում ամեն մտքի համալրման անհրաժեշտություն է զգացվում, և այդ պակասը լրացնում են մյուս նախադասությունները: Բարդ նախադասությունը փաստորեն պարզ նախադասությունների գումար է:

Ինչպես պարզ, այնպես էլ բարդ նախադասություններն ունենում են հնչերանգային ավարտվածություն, այսպես՝ Ձանգը հնչեց: Աչակերտները մտան դասարան: և Ձանգը հնչեց ու աչակերտները մտան դասարան: Իջավ վերջին վարագույրը: Ներկայացումն ավարտվեց: և Իջավ վերջին վարագույրը, և ներկայացումն ավարտվեց:

Բարդ նախադասության կազմում հանդես եկող պարզ նախադասությունները իրար նկատմամբ լինում են երկու կարգի հարաբերության մեջ. մի դեպքում բարդ նախադասության կազմի մեջ մտնող պարզ նախադասությունները իրար միտք չեն լրացնում, քերականորեն թեև իրարից կախված չեն, բայց տրամաբանորեն կապված են: Այդպես են բերված նախադասությունները: Բարդության այս տեսակը կոչվում է համադասություն:

Մի այլ դեպքում բարդության մեջ մտնող պարզ նախադասությունները ոչ միայն տրամաբանորեն, այլև քերականորեն էլ կախ-

ված են լինում իրարից, դրանցից մեկը պայմանավորված է լինում մյուսով. դրանցից մեկը (կամ կամ մի քանիսը), մյուսի համար լրացման դեր է կատարում. բարդությունն այս տեսակն էլ կոչվում է ստորադասություն:

Բերված համադասական նախադասությունները կարելի է արտահայտել ստորադասությամբ, այսինքն՝ երբ մի նախադասություն ստորոգյալը պայմանավորված լինի մյուսով. նրա համար լրացման դեր կատարի: Այսպես՝

Երբ զանգը հնչեց, աշակերտները մտան դասարան:

Իջավ վերջին վարագույրը, որովհետև ներկայացումն ավարտվեց:

Ակնհայտ է, որ աշակերտների դասարան մտնելը պայմանավորված է զանգի հնչելով, իսկ վարագույրի իջնելը՝ ներկայացման ավարտումով:

Բարդ նախադասությունների կապակցություն եղանակներն ու միջոցները

Թե՛ համադասական և թե՛ ստորադասական նախադասությունների մեջ մտնող պարզ նախադասություններն իրար հետ կապակցվում են երկու եղանակով՝ շաղկապներով և առանց դրանց. վերջինս կոչվում է շարահարություն:

Բերենք ամեն տեսակից երկուական օրինակներ.

Համադասականներ՝ շարահարությամբ՝

Ջուրը տանում է հայացքը նրա,

Գանգուրների հետ խաղում է քամին (ՀՄ):

Ձմեռն անցավ, եկավ գարուն,

Հալվեց բարձրիկ սարերու ձյուն,

Ճամփա բացվավ դարիբներուն (Ավ. Իս.):

Համադասականներ՝ շաղկապներով՝

Արևը սուզվեց ծովում լազուր,

Եվ ծովը դարձավ հուր-հրեղեն (Գևորգ Էմին):

Դեռ մարտի վերջերին ամենուրեք սպիտակին էր տալիս ձյունը, իսկ ապրիլի սկզբներին տեղ-տեղ երևացին ծաղիկները (ԳԹ):

Ստորադասական նախադասություններ՝ շարահարությամբ՝

Ջուրն ու ծաղիկ աստղունք դրել,

Խնդիրք արել աստղերին,

Փափագ սրտով խնդիրք արել՝

Բարի ժպտան իր սերին (ՀԹ):

Սև աչերեն շատ վախեցիր՝

էն մութ, անծեր գիշեր է,

Մութն ահ է, չարքեր շատ կան,-

Սև աչերը մի՛ սիրե (Ավ. Իս.):

Շարահարական ստորադասականները հեշտությամբ իմացվում են հնչերանգից, իսկ գրավոր խոսքում դրանք տրոհվում են բութով, որը դրվում է բաց թողնված շողկապների փոխարեն: Օրինակ.

«Սև աչերեն շատ վախեցիր» նախադասությունից հետո բութ է դրված. այստեղ Իսահակյանը չի գործածել որովհետև շողկապը. այն կխախտեր բանաստեղծության ուղիղը և տաղաչափությունը:

Շարահարական ստորադասական նախադասությունները ներհատուկ են հատկապես բանաստեղծական խոսքին և ունեն ոճական մեծ արժեք: Դրանք հատուկ են նաև խոսակցական լեզվին:

Արձակում շարահարական նախադասությունների թիվը հասնում է նվազագույնի՝

«Գիտեմ՝ բան ունես ասելու»:

«Ձեռ գա՛ նախապես չենք պայմանավորվել»:

Շողկապներով կապակցվող ստորադասական նախադասությունները անհամեմատ ավելի շատ են: Ստորադասական շողկապները լինում են մենադիր (որ, թե, եթե, որովհետև...) և զուգադիր (եթե ... ապա, քանի որ... ուստի, չնայած ... բայց և այլն):

Շողկապավոր համադասական նախադասությունները բնականաբար կապակցվում են համադասական շողկապներով (և, ու, կամ, բայց, սակայն, իսկ, այլ, էլ, նաև, այլև, ապա, այսինքն, ուրեմն, ինչպես նաև՝ բայց և, բայց և այնպես, մինչև իսկ, կամ թե, ապա թե ոչ, և՛...և՛, թե՛...թե՛, ո՛չ...ո՛չ և այլն):

Շողկապավոր ստորադասական նախադասությունները կապակցվում են ստորադասական շողկապներով (որ, թե, եթե, որպեսզի, որովհետև, թեև, թեկուզ, թեպետ, թեպետև, մինչ, մինչև, մինչդեռ, քան, ինչպես նաև՝ թե որ, թեկուզ և, քան թե, մինչև որ, հենց որ, եթե ոչ, քանի որ, քանի դեռ, չնայած որ) և հարաբերական դերանուններով:

Հիշի՛ր Ստորադասական շողկապների հետ չպետք է չփոթել հարաբերական դերանունները՝ ով, որ(ը), ինչ(ը), երբ, ուր, որտեղ, ինչպես, ինչպիսի, որքան, ինչքան և այլն: Սրանք, ի տարբերություն շողկապների, դառնում են նախադասություն անդամներ և դրանցից մի քանիսը հղովվում են, ունենում են

Հոգնակի թիվ, հոգ են ստանում*:

Օրինակ՝ ով(ովքեր) → ում → ումից → ումով,

որ(ը) → որի → որից → որով,

ինչ(ը) → ինչի → ինչից → ինչով,

երբ → երբվա → երբվանից,

որտեղ → որտեղի → որտեղից → որտեղով և այլն:

Բարդ նախադասությունները բաժանվում են 4 խմբի՝

1. Բարդ համադասական նախադասություններ,
2. Բարդ ստորադասական նախադասություններ,
3. Բազմաբարդ նախադասություններ,
4. Ուսուր տիպի բազմաբարդ նախադասություններ:

Վարժուիթյուն 1: Առանձնացրե՛ք համադասական և ստորադասական նախադասությունները և որոշե՛ք կապակցություն եղանակները (չարահարուժյա՞մբ են կապակցված, թե՞ չաղկապներով):

Բարդիները խչչացին, աղբյուրները լաց եղան,

Տխուր իրար նայեցին ջահել աղջիկն ու տղան (ԳՍ):

Ինձ թաղեք, երբ կարմիր վերջալույսն է մարում,

Երբ տխուր գգվանքով արեգակը մեռնող

Սարերի արծաթե կատարներն է վառում,

Երբ մթնում կորչում են ծով ու հող (ՎՏ):

Կաքավաբերդի քարերն ասես կենդանացել ու խոսում էին հնագետի հետ: Նա մոտենում էր այս ու այն քարին, կռանում, նայում, չափում, ինչ-որ բան գրում, ոտքով փորում հողի փլվածքը, բաց անում հողի տակ թաղված քարի ծայրը... Հնագետը բարձրացավ քարի վրա ու բարձր կանչեց, երբ քարի վրա տեսավ փորագիր խոսքեր (ԱԲ):

Նրանց ծիծաղուն կյանքն է կարկաչում,

Գարունն է կանչում անափ կարոտով (ԵԶ):

Եղնիկները տեղափոխվում են լեռների արևահայաց ու խոտավետ լանջերը, շտապում են կշտանալ, որ լուսադեմին գնան անտառի աննատչելի թավուտներում թաքնվեն (ՎԱ):

Կյանքում կան բաներ, որոնք չեն քերվում...

Կյանքում կան բաներ, որոնք չեն ներվում (ՊՍ):

* Բոլոր հարաբերական դերանունները (ինչպես նաև այլ բաներ) կարող են միանալ որ ստորադասական չաղկապին և դառնալ թարմատար չաղկապ:

Վարժություն 2: Բերված համադասական նախադասությունները դարձրե՛ք ստորադասական:

Քամին դադարեց, ու մենք շարունակեցինք վերելքը:

Բոլորս էլ լավ ենք սովորում, ուզում ենք համալսարան ընդունվել:

Տնօրենը ներս մտավ, և բոլորս ոտքի կանգնեցինք:

Մեղձ քամի էր փչում, բայց օդը տաք էր:

Այդ օրը հիվանդ էի, մայրս թույլ չտվեց դասի գնալ:

Վարժություն 3: Բերված ստորադասական նախադասությունները դարձրե՛ք համադասական (հարկ եղած դեպքում կարող եք շաղկապները կամ դերանունները հանել և դնել համադասական շաղկապներ):

Երբ արևը դուրս եկավ, մենք շարունակեցինք ճանապարհը:

Բոլորս էլ լավ ենք սովորում, որպեսզի համալսարան ընդունվենք:

Կարդում եմ «Գևորգ Մարգպետունի» վեպը. եկող շաբաթ պետք է շարադրություն գրենք:

Թեև մեղձ քամի էր փչում, բայց օդը տաք էր:

Կոմիտասին բոլորս ենք սիրում. նա մեր ազգի պարծանքն է:

Վարժություն 4: Շարահարական նախադասությունները դարձրե՛ք շաղկապավոր:

Նա կարծում էր՝ երկիրը հենվում է օվկիանոսում լողացող երեք հսկա կետերի վրա:

Նրա սիրտը փոթորկվում էր՝ հիշում էր առաջին սերը:

Վասակն արդեն դողում էր գայրույթից. լրաբերն ուշանում էր:

Մեզ թվում էր՝ տնօրենը նկատել էր մեր անկարգությունը, դրա համար էլ աշխատում էինք աչքին չերևալ:

Շրջապատում ոչինչ չէր երևում. օրը սաստիկ ամպամած էր ու մռայլ:

ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴՐԱՆՑ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Համադասությունը բարդ նախադասության այն տեսակն է, որի կազմի մեջ մտնող պարզ նախադասությունները քերականորեն իրարից կախվածություն մեջ չեն, համազոր են իրար. մեկը մյուսի լրացումը չէ, սակայն դրանցում կա ներքին՝ տրամաբանական կապ: Դրա կազմում եղած առանձին պարզ նախադասությունները կարելի է անջատել իրարից, արտաբերել ավարտուն հնչերանգով և դնել վերջակետ:

Օրինակ՝

Նապոտեյի Նելսոնը, Ռուսվելդի Նելսոնը, մասրելի ու ճարտար ծաղիկների հուսարան:

Սա ավարտուն հնչերանգով բարդ համադասական նախադասություն է, որը կազմված է 3 առանձին պարզ նախադասություններից, որոնցից ամեն մեկն ունի իր ստորոգումը, և բարդության հնչերանգը երկու տեղ կորանում ու ավարտվում է **ծաղիկներ հագան** ստորոգյալի վրա: Մինչդեռ բարդության կազմում եղած 3 պարզ նախադասությունները կարելի է արտաբերել 3 ավարտուն հնչերանգով. այսպես՝

Գտրամը եկավ: Հավրերը եկան: Սաքեր ու ձորեր ծաղիկներ հագան:

Համադասական նախադասություններն ունեն կառուցվածքային տարբեր տեսակներ.

ա) Համադասական նախադասության ամենատարածված տեսակն այն է, որ ամեն մի նախադասություն ունենում է իր ենթական, որին ստորոգվում է իր գործողությունը կամ հատկանիշը, օրինակ՝

Սարի հեռվում շողերը մեռան,
Անուշ դաշտերը պատեց կապույտ մեզ.
Տխուր երեկոն գարկել է վրան.
Միրտս կարտոով կանչում է քեզ՝ եկ (ՎՏ):

ձ. Թումանյանի հետևյալ քառյակում կա երկու նախադասություն.

Հին աշխարհը ամեն օր
Հազար մարդ է մտնում նոր,
Հազար տարվան փորձն ու գործ
Ըսկավում է ամեն օր:

բ) Համադաս նախադասություն ենթակաները կարող են արտահայտվել միևնույն բառով՝

Գարունը այնքան ծաղիկ է վառել,
Գարունը այնպես պայծառ է կրկին (ՎՏ):
Մեր հույսի դուռն է մայրս, Մեր տան կտուրն է մայրս,
Մեր օրորոցն է մայրս, Մեր տան ամրոցն է մայրս (ՀԾ):

գ) Ավելի հաճախ, նույն համադասություն մեջ, ենթական չկրկնելու համար այն գործածվում է մեկ անգամ և կոչվում է **ընդհանուր ենթակա**, բնականաբար այդ նույն ենթակային են ստորոգվում մի քանի գործողություններ կամ հատկանիշներ. այս դեպքում ստորոգյալներից մեկը կարող է կապակցվել և կամ ու համադասական շաղկապներով:

Օրինակ՝ Կոմիտասը մշակեց հայ երգը, այն դտեց օտարաբանություններից, հղկեց ու մշակեց և տարածեց ամբողջ Եվրոպայում:

Եվ մոռաց քամին, գալարվեց, դայրացավ, Նեղոսի անշարժ ջրերը վայրագ խանդով խառնեց, պղտորեց, դուրս թափեց ափերից (Ավ. Իս.):

դ) Համադասական նախադասություններն ունենում են նաև **անվանաբայական ստորոգյալներ**՝ արտահայտված ստորոգելիով ու հանգույցով (Մեր հույսի դուռն է մայրս...):

Բերենք ևս երկու օրինակ՝

Ես երգիչ եմ, երկնի թիթեռ (Ավ. Իս.):

Մերը բանաստեղծություն է, կիրքը՝ պրոզա (Ավ. Իս.):

Վարժություն 5: Որոշե՛ք բերված համադասական նախադասությունների ստորոգյալների տեսակները (բայակա՞ն են թե՞ անվանաբայական): Որոշե՛ք ենթակաների արտահայտություն տեսակները:

I

Մեր լեզուն այբուբենն է մեր՝

Արյունից ավելի թանկ,

Մեր բուրմունքն ու գույնն է մեր

Մեր լեզուն մենք ենք ու կանք (ՀՄ)

Դու հպարտ չես, իմ հայրենիք,

Տրտում ես դու և իմաստուն.

Կիզում է քեզ մի հուր կնիք,

Մի հմայող ու հին խոստում:

Եվ մի՞թե այդ վշտիդ համար

Ձեմ սիրում քեզ այսպես քնքուշ

Եվ խոնարհվում քեզ պես համառ

Օ, հայրենի՛ք՝ դառն ու անուշ (ՎՏ):

II

Ձմեռն ինչպես անցավ, ինքս էլ չիմացա: Օգոստոսի վերջն էր արդեն, և ես պատրաստվում էի քաղաք գնալու: Մի քանի օրից հետո

դասերը պիտի սկսվեին, ու ես պետք է ներկա լինեի դասերին:

– Ներս արի որդի,– ասաց պապս ու տուն մտավ, դուռը կամաց ծածկեց, մոտեցավ ինձ, չիբուխը մի անգամ էլ պինդ քաշեց, ատամ-ներով պաշեց ու ծոցից հանեց ահագին մեծ թաչկինակը, միջից հանեց, թղթադրամը ու մեկնեց ինձ:

– Գնաս բարով, որդի՛, գարունը կգաս, իսկ ինձ, ով գիտե, կտես-նես, թե էլ չես տեսնի, իմ օրերը հաշված են, քո կյանքը նոր է սկսվում: Երկու բան պահիր միտքդ, լավ սովորիր, որ պետքական մարդ դառնաս, մեկն էլ՝ լավ աշխատիր, որ լավ ապրես, ուրիշի ձեռքին չնայես:

Կարծես՝ երեկ լինեի, այնպես պարզ հիշում եմ նրա ազնիվ ու բարի դեմքը, նրա զողզոջուն ձեռքերը, նրա խրոխտ ձայնը («Լուսարեր» հանդեսից):

Ջեղչումը համադասական նախադասութուններում

Հաճախ համադասական նախադասության մեջ զեղչվում են թե՛ ենթական և թե՛ ստորոգյալը:

Ենթակայի զեղչման օրինակներ՝

Նորից կթողնեմ քաղաքն աղմկոտ

Ու ճամփա կրնկնեմ հավետ միայնակ (ՎՏ):

Պայծառ աղբյուրից ջուր կխմեմ,

Քնքուչ ծաղկանց հետ խաղաղ կքնեմ (ՎՏ):

Այստեղ զեղչված են անձնական դերանվան առաջին դեմքի, եզակի թվի ենթակաները՝ **ես**: Հետևյալ նախադասութուններում զեղչված է **դու** ենթական՝

Արդյոք հիշում ես, անտառ էր առու...

Տխուր թևերդ անձայն կփռես,

Կգրկես հողը՝ կանացի նազով (ՎՏ):

Այդպես էլ կարող են զեղչվել համադասական նախադասության **ստորոգյալները**, ըստ որում ստորոգյալի զեղչումը կատարվում է **լրիվ** օրինակ՝ Ես սովորում եմ դպրոցում, իսկ եղբայրս՝ համալսարանում: Հայրս ինձ համար ֆոտոապարատ գնեց, իսկ եղբորս համար՝ համակարգիչ: Սարերում ձյուն է տեղում, իսկ քաղաքում՝ անձրև:

Ստորոգյալը կարող է զեղչվել նաև **մասամբ**, այսինքն՝ զեղչվում է օժանդակ բայը (Ես սովորում եմ, իսկ եղբայրս՝ աշխատում: Ես ուս-

ման առաջավոր են, իսկ դու՝ ծուլլիկ: Մայրս ուսուցչուհի է, իսկ հայրս՝ ինժեներ):

Երբ զեղչվող ստորոգյալը կազմությամբ **ժխտական է**, նրա փոխարեն հաճախ գործածվում է **ոչ բառը**: Օրինակ՝ Մեր հայոց լեզվի ուսուցչուհին պահանջկոտ է, իսկ աշխարհագրության ուսուցիչը՝ ոչ (պահանջկոտ չէ): Կիրակի օրը ես մասնակցեցի շաբաթօրյակին, եղբայրս՝ ոչ (չմասնակցեց):

Ինչպես նկատելի է, զեղչված ստորոգյալների փոխարեն **բութ է** դրվում, ըստ որում, **բութ** նշան կրող բառի արտաբերումը, մյուս բառերի համեմատությամբ մի թեթև ուժգին է: Ժխտականի փոխարեն դրված **ոչ բառն է** շեշտվում ու ուժգին արտաբերվում:

ՀԱՄԱԳԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԳՐԻՉՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՑԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ըստ ներքին տրամաբանության և իմաստային կախվածության համադասական նախադասության բաղադրիչները իրար հետ կապվում են 4 կարգի հարաբերությամբ՝ **միավորական, հակադրական (ներհակական), տրոհական և հավելական (մեկնական)**:

Միավորական հարաբերություն

Այս տիպի համադասության բաղադրիչ նախադասություններում թվարկվում, միավորվում են իրար չհակադրվող կամ չբացառող փաստեր, իրողություններ: Սրանք իրար հետ կապակցվում են **միավորիչ շաղկապներով** (և, ու, նաև, ևս, նույնպես, և՛ ... և՛, թե՛... թե՛, ո՛չ ... ո՛չ, է՛լ ... է՛լ) և թվարկման հնչերանգով: Կապակցվում են նաև **չարահարություններ**:

Համադասության այս տիպում ամենից առաջ առկա է **ժամանակային հարաբերությունը**, այսինքն՝ սրանցում գործողությունները կարող են տեղի ունենալ միաժամանակ կամ հաջորդել իրար:

Ա. Համաժամանակյա – Աղբյուրները հնչում են ու անց կենում,

Ծարավները տենչում են ու անց կենում,

Ու երջանիկ ակունքներին երազուն՝

Պոետները կանչում են ու անց կենում (ՀԹ):

Դիլան դային ճմլում էր խաղողը, ինքն իրեն ղնդնում կայտառ մի երգ, և քրտինքի կաթիլները գլորվում էին, ընկնում շիրայի մեջ (ԱԲ): Հնձվորը իր հունձն էր անում, ջրվորը ջրում էր արտը, աղջիկները ծաղիկ էին քաղում, փնջեր կապում:

Այս տիպի համադասությունն ստորոգյալները կարող են լինել նաև **անվանաբայական՝ բաղադրյալ՝**

Ես ուրախություն գործակատար եմ

Եվ խոր խնդություն վաճառող եմ ես (ՊՍ):

Հողն անուշ է, երգն անուշ է, կյանքը՝ ուրախ էս տարի,

Հողի մարդու աչքը կուշտ է՝ Ահ չունի նա էս տարի (ԳՍ):

Բ. Տարածամանակյա – Բնականաբար այս տիպի համադասականներում գործողությունները պետք է պայմանավորված լինեն իրարով՝ հաջորդեն իրար.

էլի գարուն կգա, կբացվի վարդը,

Սիրեկանը էլի յարին կմնա.

Կփոխվեն տարիքը, կփոխվի մարդը,

Բլբուլի երգը էլի սարին կմնա (ԵԶ):

Գարունը եկավ, հավքերը եկան, Սարեր ու ձորեր ծաղիկներ հագան (ՀԹ):

Ակնհայտ է, որ մինչև գարունը չգա, հավքեր չեն գա, կամ վարդը չի բացվի, ինչպես նաև մարդու փոխվելն էլ կապված է տարիների անցման հետ:

Գ. Միավորական հարաբերությունն արտահայտող համադասականների մի երրորդ տեսակում էլ պատճառահետևանքային իմաստն է, երբ մի նախադասության ենթակայի կատարած գործողությունը պայմանավորված է մյուս նախադասության ենթակայի գործողությամբ: Օրինակ՝ «Երգում է Սարոն, ու չի կարենում աղջիկը հանգիստ նստի վրանում» (ՀԹ) նախադասության մեջ աղջկա՝ վրանում հանգիստ նստել չկարողանալու պատճառը Սարոյի երգելն է:

Բերենք ուրիշ օրինակներ:

Անցյալի քաղցր հիշողությունները հուզեցին հոգիս, և ես նորից կարդացի դրանք (Վ. Փափազյան):

Ջահել չես, հագի՛ր վերարկուդ, Ծուտ հագի՛ր – ձմեռ է գալիս...

Ձթողնես բերքերդ ձյան տակ, Հավաքի՛ր – ձմեռ է գալիս (ՍԿ):

Դու գնացիր – ես մնացի բյուր մարդկանց մեջ մեն-մենակ,

Սրտիս խորքով դառն լացի – խավարն իջավ կրծքիս տակ (Ավ. Իս.):

Ինչպես դժվար չէ կռահել, այս տիպի նախադասությունները հեշտությամբ կարելի է փոխակերպել բարդ ստորադասականների՝ «Քանի որ երգում է Սարոն, այդ պատճառով էլ չի կարենում աղջիկը հանգիստ նստել վրանում»:

Հակադրական Հարաբերություն

Համադասական նախադասությունների այս տեսակը կոչվում է նաև **ներհակական**. սրանց բաղադրիչները իրենց ներքին տրամաբանությունը ու իմաստներով հակադրվում են իրար: Դրանք կապակցվում են **ներհակական շաղկապներով** (**իսկ, բայց, սակայն, մինչդեռ, միայն, այնինչ, ապա, բայց և այնպես, այնուամենայնիվ, թե չէ, եթե ոչ, ոչ թե, այլ և այլն**):

Օրոր է ասում աշունն անտառին,

Բայց դեռ անտառի քունը չի տանում (ՀՍ):

Համադասականի այս տեսակը նույնպես ունի իմաստային տարբերություններ. սրանց մի մասում փաստերն ու իրողությունները զուգադրվում են իրար ու **հակադրվում**, մյուս տեսակում նկարագրվող փաստերը **ժխտում են** իրար, մի այլ դեպքում պայմանահակադրական հարաբերություն են ցույց տալիս: Դրանք ցույց տանք օրինակներով.

Ա. Զուգադրահակադրական – ձեմարան գնալու բախտը վիճակվեց Սողոմոնին, սակայն փող չուներ: Անթեղի վրա կատուն է ննջում, իսկ անթեղի տակ՝ հոգնած կրակը (ԱԲ): Խոստացար օգնել, մինչդեռ մոտ չեկար:

Բ. Ժխտական – Ոչ թե երեխան է անընդունակ, այլ ուսուցիչը լավ չի բացատրում: Բայց դա սովորական պսակ չէր, այլ արտակարգ մի ծես (ԳԹ): Ես նրա կինը չեմ, այլ նրա երեխաները մայրը (Շիրվ.): Նա մարդկանց չի սատարում, այլ սիրում է նրանց (ՊՍ):

Գ. Պայմանահակադրական – Խաչատուր Աբովյանը բջջային հեռախոս չուներ, այլապես չէր կորչի (Ոգնի): Բարեբախտաբար այդ գիշեր սաստիկ բուք չեղավ, հակառակ դեպքում բոլորս կորած էինք (ՎԱ):

Դ. Մահճանափակման – Հանկարծ տեսավ նրան, ցնցվեց, ուստի ուստի զեպի նա, բայց մի կրակված ձեռք փակեց հնձանի դռնակը (ԱԲ):

Տարիներ հետո քեզ տեսա նորից,

Սիրոս արտասովեց, բայց ժպտացի ես (Ավ. Իս.):

Տրոհական Հարաբերություն

Տրոհական հարաբերություն արտահայտող համադաս նախադասությունների գործողություններից, իրողություններից մեկն է իրական կամ հնարավոր: Սրանք կապակցվում են տրոհական շաղկապներով (**կամ, կամ թե, կամ թե չէ, կամ ... կամ, ոչ այն է**):

Կուչ էր գալիս խղճալի օջախի շուրջն օտարի,

Կամ թափառում մեն-մենակ մեր հանդերում շարունակ (ՀԹ):

Կամ դեսպանին կրերես նրա մոտ, կամ թե չէ նրա հետ կզնաս հոնների թագավորի մոտ (ՍԶ): Մայրը ոչ այն է նիրհում էր, ոչ այն է տխրում: Կամ դպրոց կզնաս, կամ այգին կմշակես:

Հավելական հարաբերություն

Այս տեսակը կոչվում է նաև **մեկնական** և ցույց է տալիս, որ նախադասության հիմնական մասին ավելանում է մի նոր իրողություն, բացատրվում կամ ճշգրտվում է առաջինի իմաստը. կապակցվում են այսինքն՝ ուրեմն, հետևաբար, իմա՛, ասել է... ըստ որում, ընդ որում և նման բառերով:

Այս տիպի համադասականները թեև գործածվում են ոճերի բոլոր տեսակներում, բայց դրանք ավելի հատուկ են գիտական և վարչագործառական ոճերին: Օրինակներ՝ Բոլոր ձկները շնչում են խոփկներով. իշխանը ձուկ է, հետևաբար իշխանը շնչում է խոփկներով: Հասմիկը բոլոր քննությունները հանձնել է «գերազանց»-ներով, ուրեմն նրան պետք է գերազանցիկի թոշակ տալ: Մեր լեզուն մեր խիղճն է, ուրեմն եկեք մաքուր ու անաղարտ պահենք այն:

Ամփոփիչ հարցեր և առաջադրանքներ

1. Համադասական նախադասությունների կազմի մեջ մտնող առանձին նախադասությունները իմաստային կախվածության ի՞նչ տեսակներ ունեն:

2. Առանձին տեսակների մեջ ի՞նչ ենթատեսակներ կան:

3. Բերել համաժամանակյա, տարաժամանակյա և պատճառահետևանքային հարաբերությամբ կապված համադասականի օրինակներ:

4. Բերել հակադրական, տրոհական և մեկնական (հավելական) նախադասությունների 2-ական օրինակներ:

Վարժություն 6: Նշել ստորև բերված համադասական նախադասությունների իմաստային տեսակներն ու ենթատեսակները:

I

Հազար չեփոր հնչեն թող այս առավոտ,

Հազար թմբուկ խփեն թող այս առավոտ՝

Լույսի հեղեղ, լույսի տոն է՝ խնդություն (ԳՍ):

Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ, Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ՝

Ուրիշ տեղ հայրեններ չկան, Ուրիշ տեղ հորովել չկա (ՀՄ):

Սենեկապետը հեռացավ, և Վասակը իջավ այգի (ԳԳ): Կոմիտասը մեր երգի վեհափառն է, հետևաբար կապրի իր ժողովրդի հետ ընդմիջտ (Ավ. Իս.): Կամ պետք է հաշտվեի նրա հետ կամ վճիռս փոխեի: Ոչ այն է հանրապետությունից դուրս գնամ, ոչ այն է՝ մնամ: Ծնվում ենք ականա, ապրում ենք զարմացած, մեռնում՝ կարոտով (Ավ. Իս.): Դիլան դային էլ կին առավ, բայց Սոնան միշտ մնաց հիշողության մեջ (ԱԲ): Արևի տակ ժպտում էր վերջին արևածաղիկը և օրորում դեղին գլուխը (ԱԲ):

Մենք փող զարկինք, և արձագանքն ահավոր
Երկրից երկիր որոտաձայն շառաչեց (ԵԶ):

II

Կոմիտասը Եվրոպան հաղթանակած վերադարձավ հայրենիք, սակայն Գևորգ Ե կաթողիկոսը նրան բարեհամբույր չընդունեց: Հրաչյա Աճառյանը մեր ազգի հպարտությունն է, ուրեմն կապրի իր ժողովրդի հետ ընդմիջտ:

Եթե գինին հնությունից թնդանում է,
Ապա պոեզիան հնությունից քաղցրանում է (ՊՍ):

Գետակի կա՞նչն է արձագանք տալիս,
Թե՞ մանկությունս է ձորերում լալիս (ՀՄ):

Ինչո՞ւ եկավ Սոնան այգի, արդյոք մանկությունս առվակի ջրերի՞ն էր կարոտել, թե՞ պատահամբ մոտեցավ հնձանի դռանը (ԱԲ):

Ինձ հարկավոր է մի վերջին գաղտնիք ևս բանալ, այն է՝ թե ինչը դրդեց Յլիկ Ամրամին ապստամբել արքայի՝ իր բարերարի դեմ (Մ):

Բոլոր մետաղները տաքանալիս ընդարձակվում են, ոսկին մետաղ է, ուրեմն՝ ոսկին տաքանալիս ընդարձակվում է:

Կոմիտասը հայտնագործեց ու մաքրեց մեր ազգային երգը, այսինքն՝ նա մեր ազգային երգի մելոսն է:

Ավելի լավ է ոչինչ չասել, քան ասել ոչինչ (Ավ. Իս.):

Համադասական նախադասությունների շարադասությունն ու կետադրությունը

Շարադասությունը կարևոր նշանակություն ունի ոչ միայն պարզ նախադասություն կազմող միավորների ճիշտ դասավորության գործում, այլև վճռական դեր ունի նաև բարդ նախադասությունների համակարգում: Այսպես, օրինակ, եթե մի դեպքում բարդ համադասական նախադասություններում այն ազատ է, և հեշտությամբ կարելի է բարդության մեջ մտնող պարզ նախադասությունների տեղերը փոխել, ու դրանից մտքի խաթարում տեղի չունենա, ապա մեկ ուրիշ դեպքում շարադասությունը կայուն է, և նախադասությունների տեղափոխությունից խաթարվում է նախադասության միտքը, առաջանում է տրամաբանական հակասություն: Ասվածը ցույց տանք օրինակներով:

Բակունցի արձակից բերված հետևյալ նախադասության շարադասությունն ազատ է, որովհետև երկու նախադասությունների միջև իմաստային կախվածություն չկա՝ «Արդեն մի կաքավ կանաչ սաղմոս է կարդում քարափի մեջ, և լուսաբացի հովը բերում է իրենց դեզի բույրը»: Նախադասությունների տեղերը փոխելիս, ոչինչ, չի փոխվում, կամ հակադրություն չի առաջանում:

Նույնն է նաև Չարենցից բերված հետևյալ երկտողում՝

Դաշտից սուրում է գով մարմանդ քամին առավոտի,

Ու վառվում է վերջին լույսով կրակը այն կարմիր կետի:

Մինչդեռ բոլորովին տարբեր է հետևյալ համադասության բաղադրիչների շարադասությունը՝ «Վարորդը մտավ խցիկը, մեքենայի շարժիչն սկսեց աշխատել, ուղևորները բարձրացան մեքենա, և մեքենան սլացավ ասֆալտապատ ճանապարհով»:

Այս բարդության 4 բաղադրիչ նախադասությունների տեղերը խիստ կայուն են, որովհետև պայմանավորված են միմյանցով. բնական է, որ վարորդի՝ խցիկ մտնելուց առաջ մեքենայի շարժիչը չէր կարող աշխատել, և ոչ էլ շարժիչն աշխատելուց առաջ ավտոմեքենան տեղից կշարժվեր:

Համադասական նախադասության բաղադրիչների տեղերը ազատ են, եթե դրանցում չկան ժամանակային հաջորդականության կամ պատճառահետևանքային ու հավելական հարաբերության կախվածություն: Օրինակ, մի՞թե կարելի է տեղափոխություն կատարել հետևյալ նախադասության կառուցվածքում՝

«Գարունը եկավ, հավքերը եկան, սարեր ու ձորեր ծաղիկներ հագան»:

Երբեմն էլ շարադասության փոփոխությունից փոխվում է նաև ամբողջ բարդ նախադասության իմաստը. ահա այդպիսի մի օրինակ՝

«Ես նորից կարդացի այն, և անցյալի քաղցր հիշողությունները հուզեցին հոգիս»: Այստեղ կա և՛ պատճառահետևանքային հարաբերություն, և՛ ժամանակային հաջորդականություն, սակայն երբ փոխում ենք նախադասությունների տեղերը, փոխվում է և ամբողջ նախադասության իմաստը՝

«Անցյալի քաղցր հիշողությունները հուզեցին հոգիս, և ես նորից կարդացի այն»:

Համադասական նախադասության բաղադրիչների շարադասությունը պայմանավորված է նաև շաղկապներով. Օրինակ **իսկ, կամ** շաղկապներով կապակցվածների շարադասությունը համեմատաբար ազատ է (Ես տուն կգնամ, **իսկ** դու՝ դպրոց: Արամը համալսարան գնացած կլինի կամ գրադարան), **իսկ, բայց, սակայն, մինչդեռ, ուստի, ոչ թե...այլ, ոչ միայն... այլև** և նման շաղկապներով կապակցված նախադասությունների շարադասությունը գրեթե բացարձակապես կայուն է:

Կետադրությունը համադասական նախադասություններում կանոնավոր է.

ա) Շարահարական նախադասությունները տրոհվում են ստորակետով՝

Կռունկների երամն անցավ, ձերմակ փետուրը ընկավ գետին,
Առուն լոեց ու համրացավ, տերևը լուռ ընկավ հողին (ՆՄ):

Դահլիճում հանգան լույսերը, բացվեց վարագույրը, բեմում երևաց սիրված երգչուհին:

բ) Բոլոր համադասական շաղկապներից առաջ ստորակետ է դրվում. ստորակետ դրվում է նաև **ու, և, կամ** շաղկապներից առաջ, եթե համադասական նախադասությունների ենթական ընդհանուր չէ. այսինքն՝ դրանք կապակցում են տարբեր նախադասություններ:

Օրինակներ՝ Դահլիճում հանգան լույսերը, և սկսվեց ներկայացումը: Ունկնդիրները հոտնկայս ծափահարում էին, ու բեմում նորից երևաց սիրված երգչուհին: Միրհամին էր կանչում անտառում, կամ կաքավի ձայնն էր հասնում Դիլան դայու ականջին:

Հիշի՛ր – Եթե ու, ևս, կամ, համադասական շաղկապներ

կապակցվում են ընդհանուր ենթականերով համադասներ, դրանցից առաջ ստորակետ չի դրվում:

Օրինակներ՝

Կախվել է ժայռը անդունդի վրա

Եվ դարեր այդպես կախված է մնում (ՀՄ):

– Կգնաս գյուղ, կփորես մարգերը, կէտես ծառերը կամ կմնաս քաղաքում ու եղբորդ հետ կվերանորոգես բնակարանը,– կարգադրեց Հայրս (ՊՂ):

գ) Ստորակետ է դրվում նաև կրկնվող **և...և, կամ...կամ, ու...ու** շաղկապներից առաջ (եթե դրանք չեչտվում են): Այս դեպքում նշանակություն չունի ենթական **ընդհանրական է, թե՛ ոչ:**

Ըստ որում կրկնվող առաջին շաղկապներից առաջ ստորակետ չի դրվում:

Օրինակներ՝ Աշոտը և՛ կաշխատի, և՛ կսովորի: Դու կա՛մ գյուղ կգնաս, կա՛մ կօգնես եղբորդ:

դ) Համադասական նախադասությունները երբեմն էլ տրոհվում են **միջակետով**, եթե դրանք ավելի ինքնուրույն են, և երկրորդ նախադասությունը մի տեսակ բացատրություն իմաստ ունի:

Այսպիսի որոշ համադասականներ, նայած հնչերանգային արտաբերման, կարելի է դիտարկել նաև որպես ստորադասական:

Դահլիճը կախարդված էր. Վերդիի «Տրուբադուր» օպերայի բեմադրությունն էր: Ամպերն աստիճանաբար ցրվեցին. սկսեց շողշողալ ոչ այնքան պայծառ արևը: Հայրը շատ էր վրդովված. տղան ուշ էր տուն եկել:

ե) Համադասական նախադասություններում, ինչպես ասվել է, զեղչված ստորոգյալների փոխարեն **բուժ** է դրվում (օրինակները բերվել են նախորդ էջերում): Բուժը դրվում է նաև զեղչված ստորոգյալի փոխարեն դրված **ոչ-ից** առաջ՝

Հայրս համաձայն էր, որ ես գնայի քաղաք՝ սովորելու, մայրս՝ ոչ: Մայրս շատ է սիրում համերգներ ու ներկայացումներ գնալ, հայրս՝ ոչ:

Վարժություն 7: Բացատրե՛ք բերված համադասական նախադասությունների կետադրությունը:

Երկնքում շատ աստղեր կան,

Բոլորն էլ փայլուն, սիրուն,

Բայց ամենքից վերև միայն

Արուսյակն է փայլփլում (Հր. Աճառյան):

Սիրույս անգիտակ կանցնիս առջևես,
Մանրիկ քայլերով քնքույշ կքայլես,
Քնքույշ քայլերով սրտիկս կկոխտես,
Իսկի չգիտես (Հր. Աճառյան):

«Ես անվերջ սիրում եմ բնությունն իր ամբողջ փառահեղություն ու վիթխարիություն մեջ, և այն միասնական է՝ ատոմից մինչև տիեզերք» (Մ. Սարյան):

«Եվ ամենքը կամենում են ապրել, և՛ յուրաքանչյուրը կամենում է ապրել, մարդը՝ երկրի վրա, և՛ որդը տիղմի մեջ, և՛ ձուկը՝ ջրի մեջ, և՛ հունդը՝ հողի տակ» (Ավ. Իս.):

**Վարժություն 8: Վերականգնել համադասական նախադասու-
թյունների զեղչված անդամները, նշանակել կետադրությունը:**

Մեր լեզուն ծուխն է մեր տան

Մեր կշիռն աշխարհի մեջ

Նա աղն է մեր ինքնություն

էություն խորհուրդը մեծ:

Մեր լեզուն մեր խիղճն է դա

Սուրբ հացը մեր սեղանի

Մեր հոգու կանչն է արդար

Ու համը մեր բերանի (ՀՄ):

Մեծ էր քեռի Թոմի ընտանիքը ապրուստը պակաս: Նա ծխնելույզ-
ներ էր մաքրում Ջիմը փողոցները: Քիչ էին վաստակում ու շատ չար-
չարվում:

Որպեսզի թուզը չփչանա ու հոնը համը չփոխի հանեց խուրջինից
չարեց պատուհանի գոգին ու սպասեց տղային:

Տղան նստեց դաշնամուրի մոտ մի ձեռքով վստահ սկսեց նվագել
խակ մյուս ձեռքով չափ տալ: Ապշել էին բոլորը ապշել էր նաև մանատ-
րոն: Նա մոտեցավ տղային շոյեց գլուխն ու հարցրեց.

– Ով ես դու առաջին անգամ եմ քեզ տեսնում:

Տղան ցույց տվեց անձնագիրը «Ջուզեպպե Վերդի ծնված 1813-ին
Ռոնկոլե գյուղում»:

Երբ հաջորդ օրը մարտի 15-ին Վերդին դուրս եկավ փողոց քա-
րացավ անակնկալից ինչ-որ նարնջավաճառ սուլում էր «Հերցոգի
արիան» ու ինքը լսում էր զարմացած: Բոլոր պատուհաններից լսվում
էր իր գաղտնի պահած մոտիվը այ քեզ հրաչք:


Վերդիի շիկացած երաժշտությունը պայքարի մթնոլորտի շիկա-
ցումն է դա մարդն է ցասումով լեցուն:

Վերջին պրեմիերիայից հետո ասաց Ես ինձանից գոհ եմ կարծում եմ այլևս դրանից լավ չեմ կարող գրել:

Հարցեր

1. Ի՞նչ է բարդ նախադասությունը. ինչո՞վ է այն տարբերվում պարզից:
2. Ի՞նչ է Համադասությունը, և ի՞նչ է ստորադասությունը:
3. Որո՞նք են բարդ նախադասությունների կապակցման եղանակները:
4. Որո՞նք են Համադասական նախադասությունների կառուցվածքային տեսակները:
5. Համադասական նախադասության բաղադրիչների իմաստների ի՞նչ տեսակներ գիտեք:
6. Համադասական նախադասության ո՞ր անդամներն են ղեղչվում:
7. Ինչպիսի՞ շարահասություն ունեն Համադասական նախադասության կազմում եղած պարզ նախադասությունները:

Բարդ Համադասական նախադասության իմաստային տեսակների գծապատկերը



Ստորադասությունը բարդությունն այն տեսակն է, որի կազմում հանդես եկող պարզ նախադասությունները քերականորեն կախված են իրարից, պայմանավորված են իրարով, և դրանցից մեկը կամ մի քանիսը լրացման դեր է կատարում: Այսինքն՝ ստորադասական կառուցում նախադասություններից մեկը լինում է գերադաս (գլխավոր), իսկ մյուսը կամ մյուսները լինում են ստորադաս (երկրորդական): Կապակցություն մեջ գերադասը այն նախադասությունն է, որի որևէ անդամի պաշտոնը արտահայտված է մեկ այլ՝ ստորադաս նախադասությամբ. այստեղից էլ ինքնին բխում է, որ ստորադասն էլ կլինի այն նախադասությունը, որը կատարում է գերադաս նախադասության որևէ անդամի պաշտոնը (այն կարող է լրացնել նաև ամբողջ գերադաս նախադասության միտքը): Գերադասը կարող է արտահայտված լինել նաև մեկ բառով (Պարզվեց, որ սխալվել եմ):

Շատ հաճախ միևնույն գերադաս նախադասության մի քանի անդամներն են փոխարինվում ստորադասներով. այս դեպքում գործ կունենանք բազմաբարդ նախադասությունների հետ:

Գերադաս և ստորադաս նախադասությունները իրար հետ կապակցվում են ստորադասական շաղկապներով, ինչպես նաև հարաբերական դերանուններով (տե՛ս «Բարդ նախադասության» սկզբում՝ էջ 238), կարող են կապակցվել նաև առանց դրանց, այսինքն՝ շարահարությունը (տե՛ս նույն տեղում):

Հիշի՛ր – Ստորադասական շաղկապները և հարաբերական դերանունները գրեթե միշտ գործածվում են ստորադաս նախադասությունների սկզբում, ըստ որում՝ հարաբերականները ստորադաս նախադասությունների անդամ են լինում, շաղկապները՝ ոչ:

Շաղկապներն ու հարաբերականները ոչ միայն կապակցում են ստորադաս նախադասությունները գերադասի հետ, այլև ձևավորում են ստորադասների շարահյուսական պաշտոնները՝ ենթակա, ստորագելի և լրացումներ:

Ստորադաս նախադասությունները գերադասի հետ կապակցող հարաբերականները գերադասում սովորաբար ունենում են իրենց համապատասխան հարաբերյալները, որոնք կոչվում են ձևական անդամներ. դրանք կատարում են այն պաշտոնը, որը կատարում է ստորադաս նախադասությունը: Հարաբերյալների դերում գերա-

զանցապես հանդես են գալիս ցուցական դերանունները՝ **այն, այնպիսի, այնպես, այնքան, այնչափ, այնտեղ, և այլն, ինչպես նաև նա, նրանք** անձնականները:

Գերադասի մեջ գործածվող հարաբերյալը և ստորադասի հարաբերականը կազմում են կապակցվող զույգեր՝ **նա...ով, այն...որը, այն...ինչ, այնպիսի...ինչպիսի, այնպես...ինչպես, այնքան...որքան, այնտեղ...որտեղ (ուր)** և այլն:

Օրինակներ՝ **Ով աշխատի, նա կուտի (Ժող.): Ասա այն, ինչ գիտես: Արա այնպես, ինչպես հարմար է: Այնպիսի թեմա եմ ընտրել, ինչպիսին ոչ ոք դեռ չի գրել: Աշխատեք այնքան, որքան կարող եք:**

Քիչ չեն նաև ստորադասական կապակցությունն այնպիսի դեպքերը, երբ կամ գերադասի մեջ չի լինում հարաբերյալը, կամ ստորադասում չի լինում հարաբերական ու չաղկապ, կամ երկուսում էլ չեն լինում կապակցությունն միջոցներ: Օրինակներ՝ **Ով Արարատ ունի սրտում, իր մայր լեզուն չի մոռանա (ՀՇ): Ասա, ինչ գիտես: Արա, ինչպես ցանկանում ես: Գրիր, ինչքան ուզում ես:**

Բերենք մի քանի օրինակներ, որոնցում բացակայում են կապակցությունն միջոցները. սրանք մեծ մասամբ հատուկ են բանավոր խոսքին: Այս դեպքում շատ կարևոր նշանակություն ունի **հնչերանգը: Հնչերանգը** այն գործող միջոցն է, որով պայմանավորված է ստորադասականների բնույթը: Դա լավ է երևում հետևյալ նախադասություններում՝

Մարդավարի խոսիր՝ հասկանանք (նպատակի պարագա):

Հրավիրիր՝ գամ (նույնպես նպատակի պարագա):

Հրավիրես՝ կգամ (պայմանի պարագա):

Հրավիրես էլ՝ չեմ գա (հակառակ հիմունքի պարագա):

Երբեմն էլ միայն **հնչերանգի** շնորհիվ միևնույն բառերով կազմված նախադասությունը կարելի է արտաբերել մի դեպքում **համադասական՝** Ծատ էինք հոգնել, տուն գնացինք: Ծատ էինք հոգնել և տուն գնացինք: Իսկ մյուս դեպքում՝ որպես **ստորադասական՝** Քանի որ շատ էինք հոգնել, տուն գնացինք → **հիմունք**. կամ **Որովհետև** շատ էինք հոգնել, տուն գնացինք → **պատճառ**:

Վարժություն 1: Գտնել գերադաս և ստորադաս նախադասությունները, ցույց տալ դրանց կապակցման միջոցները, ընդգծել հարաբերյալները, հարաբերական բառերն ու չաղկապները (դրանք նշել առանձին-առանձին):

Ինչ ցանես, այն կհնձես (Ժող.): Ով ալարի, ոչ դալարի (Ժող.): Ում սայլին նատի, նրա հորովելը կկանչի (Ժող.): Որ գյուղը գնաս, էն տեղի գդակը դիր (Ժող.): Ում բախտը ծովեց, նրա ձին ախոռում էչ կդառնա (Ժող.): Որտեղ տանձ՝ պոչը վրան: Ով ուտի յուղն ու ճմուռ, ով զարկի գլուխն ի դուռ (Ժող.): Քանի լեզու գիտես, էնքան մարդ ես (Ժող.): Ով կամենում է հանգիստ ապրել, նա պետք է ապավինի սեփական ուժերին (Շեք.): Ասում են՝ ուռին աղջիկ էր ինձ պես (ՀԹ): Թվում է՝ մի բան է պակաս: Մինա բիրուն թվաց, թե փուլ եկան մատուռի պատերը (ԱԲ): Ում շատ է տրված, նրանից շատ է պահանջվում (Ժող.): Ուր էլ լինեմ, չեմ մոռանա ես ողբաձայն երգերը մեր (ԵԶ): Սևանը այնքան գեղեցիկ է, որ մարդ ուզում է խեղդվել մեջը (Ավ. Իս.): Որքան հեռացա հայրենիքից, այնքան մոտեցա նրան (Ավ. Իս.): Երբ մարդ իր հայրենակցի հետ հայերեն չի խոսում, կարծում է, թե սուտ է խոսում (Ավ. Իս.): Սրտին գյուլլա դիպչի, ով քեզ սիրի, աղջիկ (ՀԹ): Եթե ես երաժիշտ լինեի, Հայաստանին ու հայ ժողովրդին ձոնված մի փառահեղ պատարագ կգրեի: Ինչքան ավելի է նա մեզ մոտենում, այնքան ավելի շիտակ է դառնում (Գ. էմին): Հպարտ եմ, որ ունեցել եմ պարոն Աճառյանին երկար տարիներ իմ աշակերտների թվում: Նա մեկն է նրանցից, որոնք պատիվ են բերում այն դպրոցին, որից անցել են: Պարտք եմ համարում ասել, թե ինչ հիացմունք ունեմ Աճառյանի հանդեպ (Մեյն): Մառը ապացուցում է, որ վրացիները Աստվածաշունչը թարգմանել են ոչ թե հունարենից, այլ հայերենից (Մշակ):

Սերում են նրանք այն վայրենուց:

Որ էլ չէր կարող ապրել քարայրում (ՊՍ):

Առաջադրանք 1: Գործածելով տրված հարաբերյալներն ու հարաբերականները՝ կազմել ստորադասական նախադասություններ և որոշել հարաբերյալի պաշտոնը:

Նա...ով, նրանք...որոնք, այն...ինչ(ը), այն...որ(ը), նրանք...ովքեր, այնպես...ինչպես, այնքան...որքան, այնտեղ...որտեղ, այնտեղ...ուր, այնպես...որ, այնքան...որ, այնպիսի...ինչպիսի, եթե...միայն, երբ...այն ժամանակ:

Առաջադրանք 2: Գործածելով տրված ստորադասական շաղկապները՝ կազմել բարդ նախադասություններ՝ ընդգծելով գերադասները:

Որ, թե, եթե, որովհետև, որպեսզի, թեև, չնայած, մինչդեռ, քանի որ, հենց որ, մինչև որ, երբ որ, քանի դեռ, չնայած որ, եթե ոչ:

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ,
ՀՆՁԵՐԱՆԳՆ ՈՒ ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Որպես շարահայուսական կապակցման միջոցներ շարադասու-
թյունն ու հնչերանգը ինչպես պարզ, այնպես էլ բարդ նախադասու-
թյուններում (համադասական և ստորադասական) վճռական գոր-
ծոններ են: Ստորադասական նախադասություններում, հատկապես
դրանց որոշ տեսակներում գոյություն ունի կայուն շարադասություն.
ավելի հաճախ ստորադաս նախադասությունը միայն վերջադաս
դիրքում է հանդես գալիս՝ «Ես այն եմ, որ եկել եմ դարերի խորքից»,
կամ «Անհնար է առանց հուզմունքի դիտել Մատենադարանի հնա-
գույն ձեռագրերը, որոնք հայ մշակույթի ինքնատիպ վկայությունն
են» կամ «Դու ինձ այնպես ես սիրում, որ կարծես չես սիրում» (Ավ.
Իս.): Ստորադասը պարտադիր վերջադաս է դրվում ստորոգելիական
(Իմ երկիրն այն է, որ գտնվում է Արարատի ստորոտում), հետևան-
քային (Այդ մասին խոսվել է, այնպես որ կարող ես չխոսել) նախա-
դասություններում, ինչպես նաև ամբողջ գերադասին լրացնող կա-
ռույցներում (Դու քանի գլուխ ունես քո ուսին, որ վեր ես կենում,
փախչում նրա հետ) (ՀԹ):

Սակայն ասվածից չի կարելի ենթադրել, թե հայերենում շարա-
դասությունը խիստ կայուն է:

Ստորադասական կառույցներում գրեթե հավասարապես գործում
են ստորադաս նախադասության՝ գերադասից նախադաս, միջադաս
և վերջադաս գործածության դեպքերը: Ասենք նաև, որ շատ հաճախ
հնարավոր է դրանց ազատ տեղափոխությունը: Ասվածը ցույց տանք
թեևուզ մեկ օրինակով՝ «Երբ հասան հինավուրց բերդի ավերակ-
ներին, դրոսաշրջիկները ցած իջան մեքենայից» (նախադաս): «Զրո-
սաշրջիկները, երբ հասան հինավուրց բերդի ավերակներին, ցած
իջան մեքենայից» (միջադաս) և «Զրոսաշրջիկները ցած իջան մեքե-
նայից, երբ հասան հինավուրց բերդի ավերակներին» (վերջադաս):

Քանի որ ստորադասականների շարադասության մասին խոսվելու
է դրանց տեսակների՝ ընույթների հետ կապված, այդ պատճառով էլ
այստեղ դրանց չենք անդրադառնա:

Ստորադասական նախադասությունների կետադրությունը,
երկրորդականը գերադասից տրոհվում է ստորակետով, ստորադա-
սական շաղկապներից ու հարաբերականներից առաջ միշտ դրվում
է ստորակետ: Իսկ եթե երկրորդականում բացակայում են շաղկապ-

ներն ու հարաբերականները, այդ դեպքում գերադաս նախադասու-
թյան վերջում դրվում է բուժ. կապակցությունը շարահարական է.

Նետ աղեղ շինեց ու տվավ իրեն՝
Գնա որս անի սարերի վրեն (ՀԹ):

Թվում է՝ ոչինչ չի եղել: Հասկանալի է՝ ընկերդ է մեղավոր: Բոլորս
Հուզված ենք՝ անսպասելի որոշում կայացվեց: Զիմացանք՝ ինչու
այդպես վարվեցին:

Արթնացավ իմ մեջ մի պայծառ երազ,
Թվաց՝ նստել եմ մեր հին պարտեզում (ԳՍ):

Երբեմն էլ գերադասի ու ստորադասի արանքում դրվում է մի-
ջակետ. սա լինում է այն դեպքում, երբ ստորադասն ունենում է
պատճառի, հիմունքի, մեկնություն և նման իմաստներ:

«Նրա մեծ իղձը կատարվեց. ազատվեց սիրելի Իտալիան» (Ավ.
Իս.): Այսօր թոռնիկս շատ ուրախ էր. երեք առարկայից «5» էր ստա-
ցել: «Այս տարի դաժան ձմեռ եղավ. շատ հողագործներ տուժեցին
(Մամուլ):

Բերված 3 նախադասություններից որն էլ որ բարձրաձայն արտա-
սանենք, կզգանք, որ գլխավոր նախադասությունների արտաբերման
վերջում՝ միջակետից առաջ, ձայնը զգալիորեն բարձրանում է. ձայնի
տոնի բարձրացմանը հաջորդում է զգալի դադար. հենց դա էլ
հնչերանգն է, որով ձևավորվել են անշաղկապ նախադասություն-
ները: Ինչպես ասվել է վերևում, հնչերանգը նշույթավորված չէ և
միշտ հանդես է գալիս բանավոր խոսքում: Հաճախ հնչերանգով է
որոշվում անշաղկապ նախադասության բնույթը կամ նրա համա-
դասական ու ստորադասական լինելը (օրինակները բերվել են
վերևում):

Վարժություն 2: Ընդգծել՝ ստորադաս նախադասությունները,
որոշել նրանց շարահարությունը և բացատրել՝ կետադրությունը:

I

Երբ առաջին անգամ տեսա Հրաչյա Աճառյանին, հետո էլ ծանո-
թացա հետը, մտածում էի՝ այդպիսի մեծություն և այդպիսի պարզ,
հասարակ պահվածք: Նա մատչելի էր բոլորին. կարող էր ամեն մեկը
մոտենալ, իրեն հետաքրքրող հարցը տալ և պատասխան ստանալ:

Նա տպագրությունն առաջարկեց իր «Հայոց լեզվի պատմություն» առաջին հատորը, պատճառաբանեցի, թե լավ թուղթ չունենք:

– Ինչ թղթի վրա ուզում եք տպագրեք, թեկուզ շաքար փաթաթելու թղթի վրա: Եթե գիրքը լավն է, թուղթը ոչ մի նշանակություն չունի,– ասաց նա:

Իմ սխալը եղավ այն, որ խորհրդակցեցի համալսարանի այն լեզվաբանների հետ, որոնք Մատի երկրպագուն էին: Զգիտե՛ր՝ ինչ անել, ինչ պատասխանել: Առաջարկեցին, որ գիրքը համալսարանը տպագրի:

– Ինձ համար միևնույն է, թե ով է տպագրում, միայն թե լույս տեսնի:

Մի անգամ էլ հանդիպեցի փողոցում, բարևեցի և հարցրի, թե ինչպես է:

– Ինչպես մինչև հիմա չեք ասել, թե ով է ձեր աները,– ասաց նա ու շարունակեց... Թանկագին մարդ էր, իսկ եթե իմանայիք, թե ինչպես էր սիրում Կոմիտասը նրան... ... Մի անգամ էլ բացատրեց իմ անունը, ասաց, որ Ռուբենը երբայերեն է և նշանակում է՝ տես որդի: (Ռ. Զարյան)

II

Հաջորդ օրը, որպեսզի ժամանակ չկորցնեի, ինքս գնացի մոտը, հայտնեցի, որ հոգվածը կարդացել եմ. այն կտպագրվի ամսագրի երրորդ համարում: Շատ ուշ էր՝ չէի կարող որևէ հոգված հանել և Աճառյանին դնել: Դժգոհեց. երևի մարդիկ կան, որոնց նախազգացումն ուժեղ է: Ըստ երևույթին դրանցից էր Աճառյանը՝ այդպես էլ երրորդ համարը չտպագրվեց:

Մի առիթով էլ՝ պարսկերենի հետևյալ արտահայտությունը մեկնեց. «Մարդ կա՝ գիտի և գիտի, որ գիտի. մարդ կա գիտի և չգիտի որ գիտի, մարդ կա չգիտի և գիտի որ չգիտի, մարդ էլ կա՝ չգիտի և չգիտի որ չգիտի» և ավելացրեց, որ վատը հենց դա է, որ չգիտեցող մարդը չգիտի, որ ինքը չգիտի:

Ես չեմ հիշում, որ Աճառյանը սխալվեք: Ինչ որ ասում էր՝ ճիշտ այդպես էլ լինում էր: Նրան կյանքը օժտել էր մի հիշողությունամբ, որը առասպելական էր, մի աշխատասիրությունամբ, որ բոլոր համեմատություններից դուրս էր, ինչպես նաև գիտական մտքի այնպիսի հզացումներով, որ արժանի է բարձր գնահատություն: Աճառյանի արածը մի մարդու գործ չէ, այլ մի ամբողջ հաստատություն: Միայն վերջին հանդիպմանը, երբ խնդրեցի մի բան թարգմանել գրաբարից, իմացա,

որ մի աչքը չէր տեսնում բոլորովին, իսկ մյուսը՝ մի քառորդով միայն: Եվ այդ վիճակում նա շարունակում էր կատարել այնպիսի գործեր, որոնք վեր էին մի մարդու ուժերից:

**Ռուբեն Զարյան «Հուշապատում»,
գիրք առաջին, Եր., 1975:**

Առաջադրանք: Գեղարվեստական գրականությունից դուրս գրե՛լ երկուական բարդ ստորադասական նախադասություն՝ նախադաս, միջադաս և վերջադաս ստորադաս նախադասություններով, որոնց մեջ լինեն նաև բուժի կամ միջակետի գործածություն ղեպքեր:

**ԲԱՐԴ ՍՏՈՐԱԿԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ
ՊԱՇՏՈՆՆԵՐԸ (ԲՆՈՒՑԹՆԵՐԸ)**

Բարդ ստորադասականի կազմի մեջ մտնող ստորադաս նախադասությունները դասակարգվում են ըստ այն հատկանիչի, թե դրանք նախադասություն շարահյուսական ինչ անդամների պաշտոն են կատարում, գերադասի որ անդամին են փոխարինում, որ անդամներին են լրացնում: Ստորադաս նախադասությունները իրենց շարահյուսական դերով հիմնականում համապատասխանում են պարզ նախադասությունների, փաստորեն դրանք իմաստային ծավալումներն են: Եթե պարզ նախադասություն որևէ անդամ արտահայտվում է մեկ բառով կամ բառակապակցությամբ, ապա դրան փոխարինող ստորադաս նախադասությամբ արտահայտվող անդամը ավելի հարուստ ու որոշակի իմաստ է արտահայտում:

Ստորադաս նախադասությունների մի որոշակի խումբ փոխարինում է գերադաս նախադասության գլխավոր անդամներին՝ ենթակային ու ստորոգելիական վերադրին (ոչ պարզ-բայական ստորոգյալին) և հենց դրանց անուններով էլ կոչվում է՝ **ենթակա և ստորոգելի:**

Ստորադասականների մյուս խումբը փոխարինում կամ լրացնում է գերադասի ենթակային կամ գոյականաբար արտահայտված այլ անդամին և հենց այդ լրացումների անուններով էլ կոչվում է՝ **որոշիչ, հատկացուցիչ և բացահայտիչ:**

Ստորադասականների մի երրորդ տեսակն էլ լրացնում է գերադասի բայական անդամին և կոչվում է **խնդիր կամ պարագա:**

Կան ստորադաս նախադասություններ էլ, որոնք լրացնում են **ամբողջ գերադաս նախադասություն միտքը:**

Եթե բարդության կազմում կա մեկ գերադաս (գլխավոր) և մեկ ստորադաս (երկրորդական) նախադասություն, կառույցը կկոչվի երկբաղադրիչ, իսկ եթե ստորադասականները մեկից ավելի են՝ բազմաբաղադրիչ:

Կան բարդություններ էլ, որոնցում թե՛ գլխավորները կարող են լինել բազմակի և թե՛ ստորադասները, սրանք էլ կոչվում են խառը տիպի բազմաբարդ նախադասություններ:

Ստորադաս նախադասություն չարահայտական պաշտոնը (բնույթը) որոշելու համար պետք է մտովի փոխակերպել ստորադասականը՝ բարդ նախադասությունը վերածել պարզի և տեսնել, թե ստորադասը գերադասի որ անդամին է փոխարինել կամ ինչ լրացման դեր է կատարել (իհարկե այդ փոխակերպումը որոշ դեպքերում հնարավոր չէ). ինչ անդամի որ փոխարինում է, նրա անունով էլ կոչվում է:

Փոխակերպելիս առաջանում են **դերբայական դարձվածներ և կողմնակի անդամներ**՝ ոչ բոլոր դեպքերում (տե՛ս էջ 175): Բարդ ստորադասականների փոխակերպման մասին հանգամանորեն խոսվում է «Բազմաբարդ նախադասություններից» ու «Պարբերույթից» հետո (տե՛ս էջ 322–329):

Ստորադասի պաշտոնը որոշելու լավագույն միջոցը հարցն է, որը տրվում է գերադասի համապատասխան անդամին. նույն հարցն էլ տրվում է **ստորադաս նախադասությանը** և նրա փոխակերպված տարբերակին (տե՛ս բերված օրինակները):

Կարևոր միջոց է նաև գերադասի կազմում եղած **հարաբերյալ ձևական անդամը** (եթե կա): Այս **հարաբերյալը** իրեն համապատասխանող **հարաբերականի** հետ պարզեցումից հետո դուրս են գալիս, և դրանց պաշտոնում հանդես են գալիս **դերբայական դարձվածը, բառակապակցությունը** կամ **բառը** (տե՛ս բերված օրինակները):

Ստորադաս նախադասության պաշտոնը որոշելիս որոշակի դեր ունեն նաև **չաղկապները**: Կան ստորադասական չաղկապներ, որոնք կապակցում են միայն որոշակի պաշտոնը կատարող ստորադաս նախադասություններ: Օրինակ՝ **որպեսզի** չաղկապը գրեթե միշտ չաղկապում է **նպատակի** պարագա ստորադասականը, **որովհետև**, **քանզի**, **քանի** որ չաղկապները կապակցում են հիմնականում **պատճառի** և **հիմունքի** պարագա ստորադասներ, **թեպետ**, **թեկուզ**, **թեև**,

չնայած չաղկապները կապակցում են **գիջման** պարագա ստորագասներ, **եթե-ն՝ պայմանի** ինչ խոսք, հատկապես բանավոր խոսքում շեղումներ լինում են: **Որ, թե, մինչ, թեպես** և էլի ուրիշ չաղկապներ **բազմիմաստ են:**

Ասվածները ցույց տանք օրինակներով.

«Ով շատ է կարգում, նա շատ բան է իմանում» ստորագաս նախադասությունն մեջ ստորագասի շարահյուսական պաշտոնը որոշելու նպատակով նախ տալիս ենք **ով** հարցը՝ **ո՞վ** է շատ բան իմանում (ով շատ է կարգում): **Ով**-ը ենթակայի հարցն է, ուրեմն՝ ստորագաս նախադասությունն բնույթը՝ պաշտոնը, **ենթակա է:**

Մյուս դեպքում մեզ օգնում է նաև գերադասի **նա** հարաբերյալը, որը **ձևական անդամ** է և ստորագասում ունի իրեն զուգադիր **ով** հարաբերականը, որը ենթակա է, բայց անորոշ է. այն ավելի որոշակի է դառնում, երբ բարդ նախադասությունը փոխակերպում ենք պարզի, որի դեպքում դուրս են գալիս հարաբերականն ու հարաբերյալը, և ստորագաս նախադասությունն **կարգում է** բայական ստորոգյալը վերածվում է **ենթակայական անկախ դերբայի**, և արդյունքում կստանանք՝ «Շատ կարգացողը շատ բան է իմանում» դերբայական դարձվածով նախադասությունը, որտեղ **շատ կարգացող**-ը ենթակայի շարահյուսական պաշտոն է կատարում:

Մեկ այլ օրինակ՝ «**Պատմիր, ինչ ցանկանում ես**»: Գերադասն է **պատմիր**, որին բնականաբար հաջորդում է **ինչ** հարցը, որը **ուղիղ խնդրի** հարցն է, որի պաշտոնը ստորագասում կատարել է **ինչ** հարաբերականը, որը փոխակերպելիս դուրս է գալիս:

«Որպեսզի հասնես բարձունքներին անհաս, պետք է թռչելու թևեր ունենաս» (ՀԾ): Այստեղ **որպեսզի** չաղկապը **թե՛ նպատակի և թե՛ պայմանի** իմաստներ ունի:

«Ինձ թաղեք, երբ կարմիր վերջալույսն է մարում» (ՎՏ): Գերադասից հետո տրվում է **երբ** հարցը, մանավանդ, որ դա հուշում է նաև ստորագաս նախադասությունը:

Իսկ հետևյալ նախադասություններում **որ** չաղկապը տարբեր բնույթի նախադասություններ է կապակցել՝ «Երևում է, որ ճիշտ չես ասում» – **ենթակա:**

«Ցավն այն է, որ բարձրագույն կրթություն չեմ ստացել» – **ստորոգողի:**

«Դու, որ Կոմիտաս ես սիրում, ուրիշ չես լսում» – **բացահայտիչ:**

«Գիտեմ, որ ասածս չես անի» – **ուղիղ խնդիր:**

«Գնաց գյուղ, որ աշխատի» – նպատակի պարագա:
«Հավատում եմ, որ կգաս» – Հանգման:
«Վախենում եմ, որ պատժեն» – ներգործող և այլն:

ԵՆԹԱԿԱ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Ենթակա ստորադաս նախադասությունը գերադաս նախադասությունն ենթակայի շարահյուսական պաշտոն է կատարում, այսինքն՝ գերադասի այն անդամն է, որին հատկանիչ է ստորոգվում:

Ենթակա ստորադաս նախադասությունն արտահայտվում է 2 ձևով՝

1. Երբ գլխավոր նախադասությունը չունի ենթակա, և ենթակայի պաշտոնը կատարում է ստորադաս նախադասությունը՝

Ով Արարատ ունի սրտում, Իր մայր լեզուն չի մոռանա (ՀՇ):

Ով եկել էր, թողած հեռուն անծայրածիր մուխը գյուղի,

Բերել էր իր մկաններում բեղմնավորված ուժը հողի (ԵԶ):

Ինչ մի ժամանակ երազ էր թվում, այժմ իրականություն է դարձել:

2. Գլխավոր նախադասության կազմում կարող է լինել հարաբերյալով արտահայտված ենթակա, որը չունի նյութական բովանդակություն և ձևական անդամ է, որին էլ հենց փոխարինում է ստորադասականը՝

Ծիծաղում է նա լիաթոք, ով վերջում է ծիծաղում (ՊՍ):

Ինչ ցանկալի էր, այն կատարվեց: Ով պատմություն ունի, նա չի կարող ետ չնայել: Ովքեր գրքերը տարել էին, նրանք էլ ետ բերեցին:

Ենթակա ստորադասականները գերադասի հետ կապակցվում են որ, թե, եթե, որպեսզի, շողկապներով, ինչպես նաև ով, որ(ը), ինչ(ը), երբ հարաբերական բառերով, որոնց հետ կարող է հանդես գալ նաև որ թարմատար շողկապը (ով որ, ինչ որ, երբ որ, ովքեր որ): Սրանցով բերենք թեկուզ մեկական օրինակներ.

Պարզվեց, որ նա գնացել է: Հայտնի դարձավ, թե ուր է գնացել: Ցանկալի կլինի, որպեսզի նոր հանձնաժողով կազմվի: Այլ բան է, եթե դու նրան խոսք տված չլինեիր (ԳԹ): Շատ վատ է, երբ մարդ իր անցյալը մոռանում է: Ով ցանկանում է գլուխ պահել, պատճառ կգտնի: Այն, ինչ որ պիտի ասեմ, թող հեքիաթ չլիմա: Ով որ քաջություն չունի, թող հեռանա: Ճշմարիտ է այն, ինչ որ ասացի: Ուղղակի տհաճ էր, երբ որ նա հեռացավ:

Ենթակա ստորադաս նախադասություն արտահայտման դեպքերը

1. Երբ գերադաս նախադասություն ստորոգյալը միադիմի բայերով է արտահայտված (թվալ, դառնալ, երևալ, պատահել, համարվել, հանդիսանալ...): Օրինակներ՝

Կոմիտասին **թվում էր**, թե հոգևոր խորհուրդը թույլ կտա իրեն ճեմարանի երգչախումբը Թիֆլիս համերգի տանել: **Հայտնի դարձավ**, որ խորհուրդը դեմ է դրան: **Պատահում է**, որ խելոք մարդիկ էլ են սխալվում: **Վարմունքիցդ երևում է**, որ այնքան էլ քաղաքակիրթ մարդ չես: **Հնարավոր է**, որ հարցը ժամանակից շուտ լուծվի: Այն, որ միայն աղմուկ էր դեռ, **ցանկանում էր դառնալ նվազ (ՊՄ)**:

2. Երբ գերադաս նախադասություն ստորոգյալը կրավորական բայ է՝ Պատմություն մեջ **հիշատակվում է**, որ հինավուրց Նաիրիի հայերը եղել են կապուտաչ ու խարտյաչ (Մանանդյան): Գյուղում **տարածվեց**, որ Օհան-ամին որդեգրել է մի որբ երեխա: **Ուսմանվեց** այն, ինչ ցանկանում էր մեծ երգիչը: Ինչ որ **գրված է**, չի ջնջվի: **Պարզվում է**, որ Կոմիտասի ծնոդներն էլ լավ ձայն են ունեցել: Պատմության էջերում **նշված է**, որ հայկական առաջին դպրոցներից մեկը բացվել է Ամարասում: Միշտ էլ **սիրվում ու հարգվում է** նա, ով իրեն համեստ է պահում:

3. Երբ գերադաս նախադասություն ստորոգյալը պատճառական բայն է՝ Կոմիտասին **անհանգստացնում էր**, որ իր «Գուսան» երգչախումբը շատ բազմամարդ է՝ 300 հոգի: **Աճառյանին շատ էր ուրախացնում**, որ իր մտերիմ ընկերը՝ Կոմիտասը, իր նման կատակասեր մարդ է: **Խրիմյան Հայրիկին շատ էր վշտացնում**, որ Կոմիտասը Բեռլինում սոված օրեր է անցկացրել:

4. Երբ գերադաս նախադասություն ստորոգյալը անվանաբայական է կամ անվանական միակազմ նախադասություն է: Օրինակներ՝ **Լավ է**, երբ մարդ ամենուրեք ընկերներ է ունենում: **Բոլորովին այլ բան էր**, եթե ինքը հրաժարվեր իր թեկնածությունը դնելուց: Որքան **գեղեցիկ է**, երբ մարդ կատարում է խոստումը: **Ցավալի է**, որ Երևանում գրեթե ամենուրեք հայտազբերն ու ցուցապատառները միայն անգլերեն են գրված: Ում **հայտնի չէ**, որ Կոմիտասը հայ երգը գտեց օտարաբանություններից: Շատ **անհասկանալի է**, թե ինչո՞ւ ես դեմ ճշմարտությանը:

2. Ենթակա ստորադաս նախադասությունները կարող են լինել

նաև շարահարական: Այս տեսակի կառույցներում, ինչպես նաև նախորդ տեսակում ստորադաս նախադասություններն ունեն կայուն շարադասություն՝ միշտ ետադաս են: Օրինակներ՝ **Եվ պատահական չէ՝ հայկական թատրոնը ևս իր մեջ «թատրոն» է որոնում** (Ս. արվ.): Նախագահին թվում էր՝ ամեն ինչ կարգին կընթանա (ՆԶ):

Եվ բավական է՝ անարգ լծի տակ

Մենք ստրուկ մնանք՝ ձեռներս շղթա (Ավ. Իս.):

Վարժություն 3: Բերված ենթակա ստորադաս նախադասություններում գտնել գերադաս նախադասությունները, որոշել ստորոգյալների տեսակները (բայական, անվանաբայական) և նշել բայական ստորոգյալների բայերի սեռը:

Թվաց, թե շոգը հանկարծ կոտրվեց,

Թվաց, թե մի հին երգում կատարվեց (ՊՍ):

Ովքեր ինքնուրույն էին գրել կուրսային աշխատանքները, ստացան բարձր գնահատականներ: Ով անցյալ ունի, չի կարող հիշողություն չունենալ (ՊՍ): Նա, ով համաձայն չէ իմ առաջարկին, կարող է իրենը անել: Ենթադրվում է, որ Մարսի վրա կյանք կա: Երջանիկ է նա, ով ներկան հյուսում է պայծառ գալիքին: Ում հայտնի չէ, որ Հրաչյա Աճառյանը ոչ միայն մեծ լեզվաբան է, այլև հայտնի պատմաբան ու գրականագետ: Դեռ փոքրուց էր երևում, որ Աճառյանը մեծ լեզվաբան է դառնալու:

Ինձ թվում էր՝ մորս ոչ մի մահ չկար,

Ծով հավատին ոչ մի կաթիլ ահ չկար (ՀՇ):

Պոլսում անմիջապես տարածվեց, որ Կոմիտասի համերգին ներկա են եղել նաև Թալիաթին ու Էնվերը (ՊԶ): Ծնողներին շատ էր վշտացնում, որ տղան գնաց Միացյալ Նահանգներ և «Նոյի ագռավ» դարձավ: Բակի երեխաներին շատ էր անհանգստացնում, որ իրենց խաղահրապարակի տեղում ավտոտնակներ են կառուցելու:

Ով ցանկանում է որևէ բան անել, միջոց կգտնի,

Ով չի ցանկանում որևէ բան անել, պատճառ կգտնի (Արաբական):

Լավ է, երբ մարդ բարեխիղճ ու պարտաճանաչ է լինում: Ավելի վատ է, երբ մարդ իր մանկությունն է մոռանում: Իմացվեց՝ մեկնելու ևս արտասահման: Հետաքրքիր է՝ ինչ է լինելու սրա վերջը: Հասկանալի է՝ հայերը Մաշտոցից առաջ էլ ունեցել են իրենց այբուբենը (Գիտ. և տեխ.):

Առաջադրանք: Կազմեցե՛ք երկուական ենթակա ստորադաս նախադասություններ, որոնց գերադաս նախադասությունների ստորոգյալներն արտահայտված լինեն միադիմի և չեզոք, կրավորական, պատճառական բայերով, ինչպես նաև անվանաբայական ստորոգյալներով: Նշե՛ք կապակցություն միջոցները և շարադասությունը:

ՍՏՈՐՈԳԵԼԻ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Այս տիպի ստորադասները կատարում են գերադաս նախադասության ստորոգելիական վերադրի շարահյուսական պաշտոն. ցույց են տալիս գործողություն, դրություն, վիճակ, որոնք իբրև հատկանիշ վերագրվում են գերադաս նախադասության ենթակային՝ փոխարինելով նրա ձևական (դերանվամբ արտահայտված) վերադրին:

Այս տիպի նախադասությունները գերադասի մեջ պարտադիր կարգով ունենում են իրենց հարաբերյալները, որոնք հանգույցների հետ անվանաբայական ստորոգյալներ են կազմում (այս է, այն է, դա է, այսպես է, այնտեղ է և այլն) և գլխավորի հետ միանում են, որ, թե շաղկապներով և ինչ, ով, ուր, որտեղ հարաբերականներով:

Ստորոգելի ստորադաս նախադասությունների շարադասությունը խիստ կայուն է. այն միայն վերջադաս կիրառություն ունի, որովհետև գլխավորի ձևականորեն արտահայտված ստորոգելիական վերադիրը իր նյութական իմաստն ստանում է անմիջապես իրեն հաջորդող երկրորդական նախադասության փոխակերպումից՝ «Կոմիտասի նպատակն այն էր, որ Եվրոպայում ապացուցեր, որ հայ ժողովրդը սեփական երգարվեստ ունի»: «Ես նա եմ, ով միշտ մահվան մեջ է ապրել, բայց մահ չունի» (Գէ): «Այս հոբելյանների նպատակն այն չէ, որ մարդիկ հավաքվեն և ազատ ժամանակ անցկացնեն» (ԳԹ): «Ես նա եմ, ով տարբերում է պագր համբույրից» (ՊՍ): «Եվ կինն ի՞նչ է որ... խորամանկ, խարոզ, առնախանձ մի սարդ, հավերժ նանրամիտ» (Ավ. Իս.): «Բայց ճշմարտությունն այն է, սիրո՛ւն ընթերցող, թե աղբյուրի ճանապարհին է կուժը կոտրվում» (Վ. Փափազյան):

Ստորոգելի ստորադասական նախադասություններն ունենում են նաև այլ իմաստային տեսակներ: Օրինակներ՝

Հետևանքի → Քո անհաջողությունը նաև նրանից է, որ անհաշտ բնավորություն ունես: Այժմ իրադրությունն այնպիսին է, որ մարդ ուզում է քաղաքականությունից հեռու մնալ (Մամուլ):

Պատճառի → Այդ օրվա նրա անհաջողությունը նրանից էր, որ վատ էր զգում:

Տեղի → Նա միշտ այնտեղ է, ուր (որտեղ) իր կարիքը կա:

Չափ ու քանակի → Աշխատավարձը այնքան է, որ հազիվ 10 օր է բավարարում:

Վարժություն 4: Ստորոգելի ստորադաս նախադասություններում բացատրել հարաբերյալներով արտահայտված ստորոգելիների դերն ու իմաստը:

Ասա մեզ, ճամփորդ, թե ո՞վ ես դու: Ես նա եմ, ով դարեր շարունակ տառապել է պատերազմներից ու նախճիրներից: Այն արդար ցորենի արտն էմ ես, որ դարեր շարունակ տրորվել է օտար այրուձիհների սմբակների տակ: Իմ երկիրն այն է, որը դարեր շարունակ պատերազմ ու աղետ է ներմուծել և արտահանել որը ու գաղթական: Մի ձայն կհարցնե, թե որտեղից է գալիս, ճամփորդը: Որտեղ ասես, որ չեմ եղել, որտեղից ասես, որ չեմ գալիս: Մի ուրիշ ձայն էլ կհարցնի, թե ինչ է ճամփորդի անունը: Ես էի, որ կտակեցի իմ ազատատենչ ոգին իմ ժողովրդին, Ես էի, որ առաջինը ցույց տվի իմ ժողովրդին աշխարհի քարտեզը: Կոմիտասն եմ ես – հայոց երգի տաճարի հավերժական զանգակահարը... Ես էի, որ մաքրեցի հայոց երգի մշտակարկաչ առուն օտար տիղմից ու պղտորությունից և նրա կարկաչը լսելի դարձրի արար աշխարհում: (Գևորգ էմին, «Հավերժի ճամփորդը», Եր., 1985):

Մամուլի վկայությունները երգչուհու ամենացնցող տպավորությունն այն էր, որ նա երգում էր ինչպես Ստրադելվարիուսի ջութակը (Ս. արվեստ): Ես միշտ այնտեղ եմ, ուր իմ կարիքը կա (Գէ): Այդ օրվա իմ ելույթի վատ տպավորությունը նրանից էր, որ նախօրոք չէի նախապատրաստվել (ՊՂ):

ԳՈՑԱԿԱՆԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բարդ ստորադասական նախադասության համակարգում գերադաս նախադասության գոյականով արտահայտված կամ գոյականաբար գործածված որևէ անդամ կարող է ունենալ ոչ միայն մեկ բառով կամ բառակապակցություններ, այլև ամբողջ ստորադաս նախադասությամբ արտահայտված անդամ-լրացում. դրանք կատարում են որոշչի, հատկացուցչի և բացահայտչի շարահյուսական պաշտոններ, որոնք պարզ նախադասության նույնանուն լրացումներից տարբերվում են ստորոգման հատկանիշ ունենալով: Այս տիպի ստոր-

րադաս նախադասութիւններից յուրաքանչյուրն ունի իմաստային ու շարադասական իր առանձնահատկութիւնները:

Որոշիչ ստորադաս նախադասութիւն

Որոշիչ ստորադաս նախադասութիւնը ավելի պարզ ու որոշակի է դարձնում գերադաս նախադասութեան գոյականով արտահայտված կամ գոյականաբար գործածված որևէ անդամի որակական, քանակական, տարածական, ժամանակային, նպատակային, հետևանքային և իմաստային այլ հարաբերութիւններ: Որոշիչ ստորադասները գերադասի հետ միանում են որ(ը), ինչ(ը), ուր, որտեղ, ինչպիսի, որպիսի, երբ, որքան, ինչքան հարաբերականներով, ինչպես նաև՝ որ, թե, որպեսզի շաղկապներով: Նշված հարաբերականները հաճախ գերադասի մեջ ունենում են իրենց համապատասխան հարաբերյալներ՝ արտահայտված ցուցական դերանուններով՝ այն, այնպիսի, այնքան, նույն, այնտեղ, նույնքան ձևական որոշիչները, որոնց բովանդակութիւնն արտահայտվում է ստորադաս նախադասութեամբ: Այդ ձևական որոշիչները կապակցման դեր են կատարում՝ դրվելով գերադաս նախադասութեան այն անդամից առաջ, որին լրացնում, պարզաբանում է ստորադաս նախադասութիւնը: Հենց սրանով էլ պայմանավորված է որոշիչ ստորադաս նախադասութեան շարադասութիւնը. այն գրեթե միշտ վերջադաս է (Ահա, եղբայր, քեզ մի դրոշ, որ իմ ձեռքով գործեցի - ՌՊ). կամ միջադաս (Սենյակը, ուր նստած էր Սառա Բերնարը, չքեղ էր կահավորված - Վ. Փափազյան): Հազվադեպ լինում են նաև առաջադաս (Որ աղբյուրից ջուր ես խմում, այն աղբյուրը մի՛ պղտորիր):

Պարզ նախադասութեան շարադասութեան նկատմամբ այստեղ հակասութիւն չկա. պարզում, սովորական շարադասութեամբ, որոշիչը որոշյալից առաջ է դրվում, սակայն բարդում այդպես չէ, որովհետև որոշիչ ստորադաս նախադասութիւնը գլխավոր նախադասութեան հարաբերյալի թելադրանքով դրվում է այդ հարաբերյալին մոտ գտնվող որոշյալից հետո (հարաբերյալ չլինելու դեպքում էլ ստորադասը միշտ ձգտում է դրվել այն լրացյալից հետո, որին վերաբերում է): Ստորադասը փոխակերպելիս, ստացված դերբայական դարձվածք (բառը կամ բառակապակցութիւնը) դարձյալ դրվում է այն որոշյալից առաջ, որին վերաբերում է. փաստորեն այստեղ էլ գործում է նույն պարզ նախադասութեան անդամների շարադասութեան օրենքը՝ նախադաս որոշիչ:

Այժմ տեսնենք, թե որոշչային ստորադաս նախադասությունները իմաստային ինչ երանգավորումներ ունեն:

1. Բու՛ն որոշչային իմաստ. որոշչի շարահյուսական պաշտոն կատարող ստորադաս նախադասությունները այս դեպքում ցույց են տալիս գերադաս նախադասության գոյականով արտահայտված որևէ անդամի որակը, քանակը, ինչպիսին լինելը, որպիսությունը: Օրինակներ՝

Ձի մեռնի այն ժողովուրդը, ով քեզ նման սիրել գիտե (ՍԿ):

Թալիչ գյուղի բաղիլիկան, որ կառուցվել է 4-րդ դարում, դեռ հեռվից ձգում է իր վեհությամբ (ՎՊ): Կոմիտասը հեռվից մի աղոտ լույս նկատեց, որ հագիվ էր լուսավորում Օրմանյանի սենյակը (ՊԶ): Առաջին մարդը, որին հաջողվել է եվրոպայում հիմնել տպարան և Հայերեն գիրք տպել, Հակոբ Մեղապարտն էր (ԳԹ):

Այն այլքը, որ հիմա փշրվում է քո ձեռքին,

Մի օր ծաղկունք է եղել Վանա ծովի ափին (ՀՍ):

Գովերգում եմ այն լուսե գաղափարը,

Որ չի դառնում նեղ կաղապար... (ՊՍ):

Այն տունը տուն չէ, որ աղմուկ չունի,

Ուր դեռ չի հնչել ծիծաղը մանկան,

Այն տունը, սի՛րտ իմ, որ մանուկ չունի,

Լեզվակը պոկած զանգի է նման (ՀՇ):

2. Ժամանակային իմաստ. այս տիպի կառույցները կապակցվում են երբ հարաբերականով, գերադասում կարող է լինել կամ չլինել այն հարաբերյալը.

Անիծված լինի այն օրն ու տարին,

Երբ գերի դառա ես քո քնարին (ՀԹ):

Միչտ հաճույքով եմ հիշում այն օրերը, երբ չըջում էի Բուրգերի երկրում ու ծանոթանում այդ առասպելական երկրին: Աշխարհը նրա աչքին փոխվեց այն ընկերին, երբ զգաց ընկերոջ թույլ տված սխալը:

3. Տարածական (տեղի) իմաստ. այս տիպի կառույցները կապակցվում են ուր, որտեղ հարաբերականներով և ավելի որոշակի են դարձնում դրանց մատնանշած տեղը, վայրը՝

Այն տունը տուն չէ, ուր չի հնչել ծիծաղը մանկան (ՀՇ):

Ես գիտեմ մի թովիչ առասպել, ուր ողջ կյանքը երազ է դառնում (ՎՏ):

Այն թատրոնը, ուր տալիս էինք մեր ներկայացումները, հարակից էր այն տանը, որտեղ գիշերում էինք (Վ. Փափազյան): Սենյակը, որտեղ գիշերում էր Աճառյանը, ձեռնահարկում էր գտնվում:

4. Ն պատակային իմաստ. այս տիպի կառույցները կապակցվում են որ, որպեսզի չաղկապաներով՝

Արթնանալիս այն զգացումն ունեի, որ այսօր գյուղ կգնամ ու մերոնց կտեսնեմ (ՊՂ): Հասել է պահը, որպեսզի ժողովուրդը նոր ուղիներ որոնի:

5. Հետևանքային իմաստ. սրանք ավելի սակավադեպ են և կապակցվում են որ, երբեմն էլ թե չաղկապաներով՝ Պատմի՛ր ինձ մի հեքիաթ, որ հիշեցնել տա անցյալս: Դեպքերի բերումով ընկել էր մի տեղ, որ փոխել էր կյանքը:

Որոշիչ ստորադաս նախադասությունները կապակցվում են նաև շարահարույթամբ՝

Մարդ կա՝ ելել է չալակն աշխարհի,

Մարդ կա՝ աշխարհն է չալակած տանում (ՊՍ):

Մի օր անտառից դուրս գալիս տեսա մի պախրա՝ ձագի հետ արածում էր դաշտում (ՀԹ):

Տեսնում եմ քո դեմքը մշուշում ես՝

Մերթ փայլում է, մերթ՝ աղոտանում (ԳՍ):

Հարցեր և առաջադրանքներ

1. Իմաստային ինչպիսի՞ հարաբերություններ ունեն որոշչային ստորադաս նախադասությունները (բերել երկուական օրինակներ):

2. Ինչպիսի՞ շարահարույթուն ունեն որոշչային ստորադասները (օրինակներ):

3. Գերադաս նախադասության ո՞ր անդամներին են լրացնում որոշիչ ստորադաս նախադասությունները (բերել մեկական օրինակ ենթակային, ստորոգելիին, ուղիղ և անուղղակի խնդիրներին ու պարզաներին լրացնող ստորադասներ):

Վարժություն 5: Որոշել, թե որոշիչ ստորադաս նախադասությունները գերադասի որ անդամներին են լրացնում, ինչպիսի հարաբերականներով ու հարաբերյալներով են կապակցված և ինչպիսի շարահարույթուն ունեն:

Ետ հրիր այդ ձևովը սիրուն, որ քեզ կարող է կործանել (ԳԷ): Դա

մի հրաշք էր, որի մեջ կար և՛ սեր, և՛ հարգանք (ՔԹ): Աչքի մեջ շողում էր այն քնքուշ փայլը, որով գարնան օրն է բացվում (ԶԳ): Ամենից շատ նա վախենում էր այն մտքից, թե մի օր զաղտնիքը կբացվի: Այն դեպքից հետո, երբ մենք հանդիպեցինք, ես միշտ մտածում էի այդ հարցի մասին: Նա բերում էր այնպիսի փաստեր, երբ անհնար էր դրանք հերքելը: Տասը տարի հետո գնացի այն գյուղը, որտեղ աշխատել էի: Նստեցինք մի բացատում, ուր ջուր չկար: Սենյակը, ուր ապրում էր Կոմիտասը, այնքան էլ հարմարավետ չէր: Հինգերորդ անգամ Կոմիտասը Փարիզ գնաց այն մտքով, որպեսզի բուժվի: Գնեցի այնպիսի հագուստ, ինչպիսին այստեղ դեռ չկար: Իշխանին մնում էր մի նվազ հույս, այն է, որ պիտի դիմեր անվատահեղի մարդու: Երիտասարդնե՛ր, իմացե՛ք՝ ամենից առաջ պետք է ուսումնասիրել այն լեզուն, որը մեզ դարեր շարունակ հայ է պահել:

Ճամփա կա՝ ծով է տանում, ճամփա կա՝ այգի,
Ճամփա կա՝ ափ է հանում նավակն իմ կյանքի (ՀՇ):

Նա չէր լսում աղմուկը՝ դպրոցից տուն վերադարձող երեխաների: Կա՞ այնպիսի գյուղ, որ շուն չունենա: Զին, որին մարդ վաղուց է ընտելացրել, մարդու ամենահավատարիմ բարեկամն է: Զգուշացիր այն մարդկանցից, որոնք երեսիդ միշտ ժպտում են: Լսելով Կոմիտասի այն խոսքերը, թե «երեկ եկել է վաղն էլ կգնա», Գևորգ Ե կաթողիկոսը անտարբեր մնաց:

Այն պահին, երբ դասախոսը խոսքը չի ավարտել, հարց տալը հարմար չէ:

Մարդ կա՝ սուրբ է մոր կաթի պես, մարդ կա՝ կաթն էլ կպղծի,
Մարդ կա՝ մարդու ամենն ունի, մարդ կա՝ ստվեր է մարդու,
Մարդ կա՝ հազիվ մի վայրկյան է, մարդ կա՝ դարեր կստեղծի (ՀՇ):

Հատկացուցիչ ստորադաս նախադասություն

Հատկացուցիչ ստորադաս նախադասությունները թե՛ գրավոր և թե՛ բանավոր խոսքում ավելի սակավ են հանդիպում. դրանք լրացնում են գերադասի գոյականով, կամ գոյականաբար հանդես եկող որևէ անդամի պատկանելությունը, վերաբերությունը կամ սերունն ու ծագումը: Սրանք հաճախ շփոթվում են որոշիչ ստորադասների հետ: Օրինակ՝ «Նա հույս ունի, որ ամեն ինչ բարեհաջող կավարտվի» և «Նա հույս ունի, որ բոլորը դեռ կորած չէ» երկու նախա-

դասություններն էլ հավասարաչափ կարելի է դիտել թե՛ որոշիչ և թե՛ հատկացուցիչ՝ **ինչի՞** հույս ունի և **ինչպիսի՞** հույս ունի: Այս դեպքում տարբերելու լավագույն միջոցը **հարցադրումն** է: Խնդիրը ավելի է հեշտանում, երբ գերադաս նախադասութան մեջ կան սեռականով դրված հարաբերյալներ՝ **նրա, նրանց, ում, ինչի:** Օրինակ՝ «Ելույթի համար գրեցին **նրա** անունը, ով լավ է արտասանում»: Այստեղ անշուշտ կտրվի **ում** հարցը. նախադասութան բնույթը ոչ թե որոշիչ է, այլ **հատկացուցիչ**, կամ «Տաղանդավոր երգչուհին կատարում էր **նրանց** ստեղծագործությունները, ովքեր համաշխարհային ճանաչում ունեն»: Այստեղ կա նաև **սերման, ծաղման** իմաստ: Սրան որոշիչ հարց չի տրվում: Բայց «Դա առիթ էր, որ ես կտեսնեի Փարիզը»: Այստեղ երկվությունը բացահայտ է՝ **ինչի՞** առիթ և **ինչպիսի՞** առիթ:

Հատկացուցիչ ստորադասները ցույց են տալիս երկու կարգի հարաբերություններ՝

1. Պատկանելություն. (այս դեպքում առկա է անձը) և գերադասում մեծ մասամբ հանդես են գալիս **նրա, նրանց** ձևական անդամները՝ հարաբերյալները և կապակցվում են **ով, որ** հարաբերականներով.

Զիգյարին գյուլլա դիպչի, քեզ սիրի ով որ, աղջիկ (ՀԹ):

Ոտքը կոտրվի, ով չար մտքով իմ տունը կմտնի (ՊՂ):

Օրինակներ հարաբերյալներով և հարաբերականներով՝

Ծաղիկնե՛ր, բացվեք **նրա** ճանապարհին, **ով** ոչ մի անմեղ ծաղիկ չի քաղել (ՀԾ): **Նրա** անունն է միշտ հիշվում, **ով** ազգանվեր գործ է անում: **Նրանց** ջանքերը, **ովքեր** Կոմիտասին փրկել էին կամենում, իզուր անցան:

Երբ հատկացուցիչը կապված է **անձի** հետ, այսինքն՝ պատկանելության իմաստ ունի, որոշչայինի հետ չի չփոթվում:

2. Վերաբերություն. այս տիպի ստորադաս կառույցներում **անձ չկա**, կան իրեր կամ **երևույթներ**, որոնց վերաբերում է գերադասի գոյականով արտահայտված առարկան: Սրանք կապակցվում են՝

ա) այն բանի + գոյական ... որ, թե,

բ) այն բանի (նրա) + գոյական ... ինչ:

Սրանք միշտ վերջադաս են: Օրինակ, Սա այն բանի հետևանքն է, ինչի մասին խոսում էր ժողովուրդը: Դա նշան է այն բանի, որ զորքը արդեն պատրաստ է: Դա նրա շչակն է, որ հաճախ է հնչում: Ահա մի

ապացույց այն բանի, թե ինչ մակարդակ ունեն դու: Այս խառնաշփոթությունը այն բանի հետևանք է, որ իրար չեք հասկանում:

Առաջադրանք: Ինքներդ կազմե՛ք կամ գրականությունից դուրս գրե՛ք հատկացուցիչ ստորադաս նախադասություններ:

Բացահայտիչ ստորադաս նախադասություն

Բացահայտիչ ստորադաս նախադասությունը ցույց է տալիս, բացահայտում է գերադաս նախադասություն **գոյականով** կամ **դերանվամբ** արտահայտված որևէ անդամի ով կամ ինչ լինելը. այն ավելի կոնկրետ ու որոշակի է դարձնում գերադասի այն անդամը՝ բացահայտյալը, որից հետո զրվում է: Սրանք գերադասի հետ կապակցվում են **ով, ովքեր, որ, որոնք, ուր, երբ, հարաբերական դերանուններով, և որ, թե** ստորադասական շղկապներով: Սրանք գերադասի մեջ գրեթե հարաբերյալներ **չեն ունենում:**

Ի տարբերություն **որոշիչ և հատկացուցիչ** ստորադասների, որոնք գերադասի դերանվամբ արտահայտված որևէ անդամի **չեն լրացնում** (որովհետև դերանունը լրացում չի ընդունում), **բացահայտիչ** ստորադասները հավասարապես լրացնում են գերադասի **թե՛ գոյականներով և թե՛ դերանուններով** արտահայտված անդամների. այս տեսակետից էլ բաժանվում են երկու խմբի՝ **գոյականական և դերանվանական** որևէ անդամի լրացնող, դրա **ով կամ ինչ լինելը** բացահայտող ստորադասների:

1. **Գոյականական** անդամներին լրացնող ստորադաս բացահայտիչներ.

Արմենակ Շահմուրադյանը, որ Կոմիտասի սիրելի սաներից մեկն էր, հրավիրվել էր Գրանդ օպերայում երգելու: **Լուսինե Զաքարյանը**, որը Կոմիտասի երգերի անզուգական կատարողն էր, ճանաչված էր աշխարհում: **Երևանը**, որը մեր հինավուրց մայրաքաղաքն է, անձանաչելի է դարձել:

Գոյականներին լրացնող ստորադաս բացահայտիչները կարելի է դիտել նաև որպես **որոշիչ** ստորադասական. բերված երեք նախադասություններն էլ կարելի է դիտել **թե՛ որոշիչ և թե՛ բացահայտիչ՝**

Մեր հինավուրց մայրաքաղաք **Երևանը** անձանաչելի է դարձել (**Ո՞ր Երևանը** - որոշիչ) և Մեր հինավուրց մայրաքաղաքը՝ **Երևանը**, անձանաչելի է դարձել (**բացահայտիչ**):

Որպեսզի նման տիպի նախադասությունները փոխակերպենք

որպես բացահայտիչներ, անպայման պետք է ղնենք բուժ և ստորակետ կետադրականները:

Դժվար չէ նկատել, որ այսպիսի կառույցներում գերադասի ստորոգյալները գրեթե միշտ լինում են անվանաբայական՝ բաղադրյալ:

2. **Դերանվանական** անդամներին լրացնող ստորադաս բացահայտիչներ:

Սրանք անվերապահորեն բացահայտիչ ստորադասներ են, և երբեք չի կարելի պարզեցնել, փոխակերպել որպես որոշիչ ստորադասներ: Ասվեց, որ սրանք պարզաբանում, բացահայտում են գերադաս նախադասութան դերանվամբ արտահայտված ոչ միայն ենթակայի ով կամ ինչ լինելը, այլև ցանկացած անդամի:

Ես (դու, նա, մենք, դուք, նրանք), որ միշտ Կոմիտաս եմ (ես, է, ենք, եք, են) լսել, չեմ (չես, չի, չենք, չեք, չեն) համակերպվում ուրիշին. բացահայտել է **ենթական**՝ «Ես՝ միշտ Կոմիտաս լսողս, չեմ համակերպվում ուրիշին»:

Էն ժամանակ, աստված գիտի՝ Ով մեզանից կլինի փոշման, Մենք, որ ձեր դեմ կելնենք ահեղ մարտի, Թե՞ դուք, որ մեզ արիք դուշման (ՀԹ):

Ես սիրում եմ քեզ, իմ հայ ժողովուրդ,
Քեզ, որ կերտող ես դարերում եղել (ՎԴ):

Այստեղ էլ բացահայտել է ուղիղ խնդրի ով լինելը՝

Ես սիրում եմ քեզ, իմ հայ ժողովուրդ,
Քեզ՝ դարերում կերտող եղողիդ (լինողիդ):

Այստեղ պետք է ուշադրություն դարձնել մի կարևոր հանգամանքի վրա. եթե ստորադասը գերադասի հետ կապակցվում է ով հարաբերական դերանվամբ, ուրեմն գերադասում նա դերանվան ներկայությունը պարտադիր չէ. այն ձևական անդամ է՝ հարաբերյալ, իսկ եթե կա, փոխակերպման ժամանակ դուրս է գալիս: Օրինակ՝ «Նա, ով Կոմիտաս է սիրում, ուրիշին չի համակերպվում». Փոխակերպելիս լինում է՝ «Կոմիտաս սիրողը ուրիշին չի համակերպվում», ուրեմն ստորադասականի տեսակը՝ բնույթը, ոչ թե բացահայտիչ է, այլ ենթակա:

Իսկ եթե գերադասը ստորադասականի հետ կապակցվում է որ շաղկապով, այս դեպքում գերադասում պարտադիր պետք է լինի նա դերանունը, որը հարաբերյալ չէ, այլ ենթակա, որի նյութական բո-

վանդակուծյունը արտահայտվում ստորադաս նախադասությամբ, որի տեսակի՝ բնույթ, բացահայտիչն է՝ «Նա, որ Կոմիտաս է սիրում, չի համակերպվում ռաբխին»։ փոխակերպման դեպքում նա-ն մնում է որպես բացահայտյալ՝ «Նա՝ Կոմիտաս սիրողը, ռաբխը չի հանդուրժում»:

Սակայն, ինչպես նշում է Գրիգոր Գարեգինյանը, կան նաև երկվության դեպքեր՝ «Նա, ով վաղուց չէր երևացել, հայտնվեց» և «Նա, որ վաղուց չէր երևացել, հայտնվեց»: Երկուսն էլ հավասարապես կարելի է փոխակերպել՝ «Հայտնվեց վաղուց չերևացողը» – ենթակա և «Հայտնվեց նա՝ վաղուց չերևացողը» – բացահայտիչ*:

Բացահայտիչ ստորադաս նախադասությունները պարզաբանում են նաև գերադաս նախադասության կոչական անդամի ով կամ ինչ լինելը՝ «Դուք, Արցախի ազատամարտիկներ՛ր, որ մարտնչեցիք հայրենիքի համար, հավերժ կապրեք մեր ժողովրդի սրտերում»։ փոխակերպված՝ «Դուք, Արցախի ազատամարտիկներ՛ր՝ հայրենիքի համար մարտնչողներդ, հավերժ կապրեք մեր ժողովրդի սրտերում»։ «Դու, սիրելի՛ ընթերցող, որ ինձ միշտ կարդում ես, էլի կկարդաս»։ Փոխակերպված՝ «Դու, սիրելի՛ ընթերցող՝ ինձ միշտ կարդացողդ, էլի կկարդաս» (ԳԹ):

Ավելի տարածված են մասնավորեցնող (պարագայական) բացահայտիչ ստորադասները, որոնք պարզաբանում են գերադասի գործողության տեղը կամ ժամանակը: Օրինակներ՝ Բայց նորից գնալ այնտեղ, ուր թողել եմ իմ տխուր մանկությունը, չեմ կարող: Ու նայում ես դեպի ցած, ուր դաշտերն են մրափում (ՎՏ): Երեկոյան, երբ հանգան վերջին ճրագները, միայնակյացը գյուղ իջավ: Իրիկնադեմին, երբ անցնում էինք սարերը, մի անգամ էլ երևաց գյուղը (ԱԲ):

Ինչպես դժվար չէ նկատել, բացահայտիչ ստորադաս նախադասությունների շարադասությունը պարտադիր միջադաս է կամ վերջադաս: Սրանք շարահարուծյամբ չեն կապակցվում:

Վարժություն 6: Ընդգծե՛ք բացահայտիչ ստորադաս նախադասությունները, որոշե՛ք թե գերադասի ո՞ր անդամներին են լրացնում և փոխակերպեք:

Մենք, որ մարդ ենք ծնվել մորից, Ո՛չ, չենք ուզում դառնալ նորից ինչ որ ընձուղտ երկարավիզ (ՊՍ):

* Գ. Գարեգինյան, Ժամանակակից հայոց լեզու (բարդ նախադասություն), Եր., 1984, էջ 176-177:

Գու, որ միշտ հանդուրժող ես եղել, ինչպե՞ս եղավ, որ ըմբոստա-
ցար:

Բայց նորից սիրել նրան, ով տարբերություն է դնում վերևի և
ներքևի միջև, ավանդ, տիկի՞ն, ես չեմ կարող (Ն-Գ): Նա հետը վերց-
նում է իր քաջ ծառային՝ Վաղինակին, որը մի պնդակազմ ու քաջա-
ռողջ տղամարդ էր (Աղայան): Գու, Վարդա՞ն, որ քաջ ես ու անվախ,
կարող ես արչավախսումըրը ղեկավարել: Հրաչյա Աճառյանը, որ համաչ-
խարհային լեզվաբան է, հավերժ կապրի ժողովրդի սրտում: Նրանք
ստիպված հրավիրեցին նաև մեզ, մեզ, որ մի ժամանակ չէին սիրում:

Հաջորդ օրը, երբ արևը նոր էր ծագել, ասպախումըրը դուրս եկավ
թաքստոցներից ու շարունակեց ճանապարհը: Երեկոյան, երբ վերա-
դարձանք տուն, հանդիպեցինք արտասահմանից վերադարձած մեր
բարեկամին:

Նորից գնացի Փարիզ, որտեղ եղել էի տարիներ առաջ: Գյումրին,
ուր անցկացրել եմ իմ մանկությունը, միշտ ձգում է ինձ: Հաճախ եմ
լինում էջմիածնում, ուր աշխատել եմ տասներկու տարի:

ԲԱՅԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՑՈՒՄ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս տիպի կառույցների առանձնահատկությունն այն է, որ ստո-
րադաս նախադասությունները լրացական հարաբերությունըր կա-
պակցվում են բայական ստորոգյալի կամ անկախ դերբայներով
արտահայտված որևէ անդամի հետ՝ արտահայտելով **խնդրային կամ
պարագայական** հարաբերություններ. սրանք գերադասի հետ կա-
պակցվում են ստորադասական շաղկապներով, ինչպես նաև հարա-
բերականներով, կամ առանց դրանց՝ **չարահարությունըր**: Գերադա-
սում կարող են ունենալ և չունենալ հարաբերյալներ:

ՈՆԴՐԱՑԻՆ ԿԱՌՈՒՑՑՆԵՐ

Ինչպես պարզ նախադասությունների կազմում եղած խնդիրները,
այնպես էլ խնդիր ստորադաս նախադասությունները, պայմանավոր-
ված բայերի սեռով, կամ բայիմաստներով, բաժանվում են երկու
խմբի՝ **սեռային խնդիրներ** և **բնություն խնդիրներ**: Սեռային խնդիր
ստորադասները պայմանավորված են բայերի **ներգործական ու կրա-
վորական** սեռով և լինում են **ուղիղ խնդիր** և **ներգործող խնդիր**, իսկ
բայիմաստով պայմանավորվածները լինում են մյուս բոլոր անուղ-
ղակի խնդիրները:

ՍԵՌԻ ԽՆԴԻՐ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուղիղ խնդիր ստորադաս նախադասություն

Ուղիղ խնդիր ստորադաս նախադասությունը պայմանավորված է գերադասի **ներգործական** սեռի բայով արտահայտված ստորոգյալի պահանջով և գերադասի հետ կապակցվում է **որ, թե** շաղկապներով, ինչպես նաև **ով, որ(ը), ինչ** հարաբերականներով: Գերադասում սովորաբար հարաբերյալներ գրեթե չեն լինում, իսկ եթե անհրաժեշտ է լինում չեչտեչ ստորադասի հաղորդածը, օգտագործվում են **այն, ինչ, նրան, ամենը, նույնը** և նման գերանուն-հարաբերյալներ:

Ստորադասի համար տրվում են **ո՞ւմ կամ ի՞նչ(ը)** հարցերը:

Ուղիղ խնդիր ստորադասները լինում են **իրի** ուղիղ խնդիր և պատասխանում են **ի՞նչ** հարցին, **անձի** ուղիղ խնդիր սա էլ պատասխանում է **ո՞ւմ** հարցին:

Ես չգիտեմ, թե ուր են տանում

Ուղիների ժապավեններն անհամար (ՎՏ):

Անմիջապես հաջորդում է՝ **ի՞նչ** չգիտեմ (ուղիների ժապավենների ուր տանելը):

Ում որ հաղթել էք կարողանում, շողոմելով կանչում էք նա (ՀԹ):

Սրան էլ հաջորդում է **ո՞ւմ** հարցը (հաղթել չկարողացածին):

Ուղիղ խնդիր ստորադասները պայմանավորվում են գերադասի ներգործական սեռի բայ-ստորոգյալի հետևյալ իմաստային տեսակներով.

1. **Ասացական** բայերով (ասել, պատմել, հավաստել, պնդել, հայտնել, հաղորդել, ակնարկել, գրել, զեկուցել, ապացուցել, հարցնել, բացատրել և այլն):

Ուրիշ բլբուլ կզա, կմտնի բաղը

Ուրիշ աշուղ կասի աշխարհի խաղը.

Ինչ որ ես չեմ ասել, նա կասի վաղը,

Օրերը ծուխ կլինին, տարին կմնա (ԵՁ):

Կոմիտասը Փարիզում ապացուցեց, որ հայ ժողովուրդն ունի իր սեփական երգը: Դեկանը հայտնեց, որ ֆակուլտետում կատարվածը իրողությունն է:

Նման բայերով կազմված ստորադասները կարելի է փոխակերպել նաև որպես **վերաբերության** խնդիրներ (պատմել **ինչ** և **ինչի մասին**):

2. **Մտածական և իմացական բայերով** (մտածել, խորհել, հաղորդել, երևակայել, պատկերացնել, իմանալ, հասկանալ, կոահել, գիտենալ, ըմբռնել, ընկալել, զգալ, գլխի ընկնել...):

Բոլորն էլ զգում էին այն, ինչ տեսնում էր նկարիչը (ԱԲ): Հասկանում էինք, թե քաղաքական դաշտում ինչ է կատարվում (Մամուլ): Խորհիր, թե ինչ ես ասում: Չգիտենք, թե վաղը ինչ է լինելու: Վերջում միայն գլխի ընկան, թե ով ինչ էր պլանավորել: Իհարկե, սրանց մի մասն էլ կարելի է փոխակերպել որպես վերաբերություն խնդիրներ:

3. **Հրաման, խնդիր, ցանկություն** արտահայտող բայերով՝ Արքա՛ կարգադրիր, որ ձկնորսը ձկան սեռը որոշի (Աճառյան): Տե՛ր արքա, հրամայիր այն, ինչ կամենում ես. մենք պատրաստ ենք հրամանիդ (Մ.): Պահանջիր միայն այն, ինչ հնարավոր է:

Ինչ որ ցանկաս, կուզես լինիմ,
Լինիմ երկինք ու երկիր,
Լինիմ ծով, ժայռ, արև, լուսին,
Միայն, միայն ինձ սիրիր (Ավ. Իս.):

4. **Մեջբերվող խոսքը** նույնպես ուղիղ խնդիր ստորադաս նախադասություն է՝ Ավ. Իսահակյանն ասել է. «Յուրաքանչյուր զրագետ մարդ պարտական է ուսուցչին»: – Մենք շատ սիրեցինք ձեր պոեզիայի ժողովրդային տարերքը,– պատասխանեցի ես (Ավ. Իս.):

Մեջբերվող խոսքին կտրվի ի՞նչ հարցը (Ավ. Իսահակյանն ի՞նչ է ասել):

5. **Անուղղակի խոսքը** նույնպես ուղիղ խնդիր ստորադաս է՝ Ասում են, թե այնպես, մոռացել ես ինձ այնպես... (Ավ. Իս.):

Ասում են իբրև խարույկի վրա ջահել ըմբոստի մի սիրտ են վառել (ՀԾ):

6. **Ուղիղ խնդիր ստորադասականները կարող են լինել նաև շարահարական՝**

Գիտեք, վճռել եմ դառնալ խաղալիք սարքող (ՊՍ):

Ես կարծում եմ՝ պաղն ավելի լավ ես զգում ամառվա շոգին (ՊՍ):

Ասում են՝ ուռին աղջիկ էր ինձ պես... (ՀԹ):

Չգիտեմ՝ մեզնից խոռվ Աստված մեզ ո՞ւր է տանում (ԼՍ):

Բերված օրինակներից էլ երևում է, որ ուղիղ խնդիր ստորադասը շարահարասություն է ավելի հաճախ վերջադաս, այդպես էլ՝

միջադասս և ավելի սակավ՝ նախադասս: Բերենք երկուական օրինակ՝
Վերջադասս – Պատմիր, ինչ որ գիտես: Ընկերս հարցրեց, թե ո՞վ էր անծանոթը:

Միջադասս – Ասել, թե նա այդ օրը մտածված էր ուշացել, ճիշտ չի լինի: Այն, որ դու ներկայացնում ես որպես նորություն, վաղուց է հայտնի:

Նախադասս – Թե ինչ էր տեղի ունեցել Ազատություն հրապարակում, գիտեն միայն ներկա եղողները:

Ինչ որ ցանկաս, կուզես լինիմ... (Ավ. Իս.):

Վարժություն 7: Ընդգծել ուղիղ խնդիր ստորադասս նախադասու-թյունները, որոշել կապակցություն միջոցները, շարադասությունը և կետադրությունը:

Միշտ զգում եմ, որ մի հեռավոր,

Օտար աշխարհում ինձ պես վշտահար

Մի սիրտ է այրվում՝ անհայտ, մենավոր (Ավ. Իս.):

Չպիտի մոռանաս, որ եթե գինին հնությունից թնդանում է, ապա պոեզիան հնությունից քաղցրանում է:

Շուռ է եկել աշխարհն էլի իր պատյանում՝ չգիտեմ,

Ո՞վ է քանդում հիմքը երկրի, մահ սերմանում՝ չգիտեմ,

Ճարպիկները պղտոր ջրում ձուկ են որսում ապահով,

Մեզնից խոռով Աստվածը մեզ ո՞ւր է տանում՝ չգիտեմ (ԼՍ):

Շատերս գիտեինք, որ սաղրիչ դեպքերը շինծու են: Որ դու չէիր գալու, ես դա գիտեի: Ով չգիտեր այն, ինչ հաղորդել է մամուլը՝ ուշացումով: Հավաստիացնում էին, թե այդ ամենը կատարել էին ըմբոստները: Նա միավորել էր բոլոր նրանց, ովքեր պատրաստակամություն էին հայտնել: Անահիտը չէր սիրում միայն նրանց, ովքեր ստախոս էին ու բանասարկու:

Սակայն ես այսօր և ամեն օր

Մշտական վշտով նրանց եմ ողբում,

Ովքեր չունեցան չիրմաքար-չիրիմ (ՊՍ):

Խրիմյան Հայրիկը հարցուփորձ էր անում, թե հասկանալի են իր ասածները: Պատվականը մոռացել էր, թե ինչ էր կատարվել հիսուն տարի առաջ: Ասա՛ ինչ գիտես: – Կիրակի օրը կզար շարաթօրյակի, հայտարարեց դասղեկը: Դասղեկը հայտարարեց, որ կիրակի օրը գանք շարաթօրյակի: Դու ինձ ասա՛ մարդուն քանի ուրբի ես տվել:

իմացա՝ չես տվել, ստում ես: Կարծում էի՝ ճիշտ կասես, բայց նորից թաքցնում ես:

Ներգործող խնդիր ստորադաս նախադասություն

Ներգործման խնդիր ստորադաս կառույցները նույնպես պայմանավորված են բայի սեռով: Եթե ուղիղ խնդիր ստորադասները պայմանավորված են **ներգործական** սեռի բայերով, ապա սրանք՝ **կրավորական** սեռի բայերով:

Ներգործող խնդիր ստորադաս նախադասությունները գերադասի հետ կապակցվում են **ով, ինչ, ում** հարաբերականներով, իսկ գերադասի մեջ սովորաբար ունենում են **նրանից, նրանցից** հարաբերյալները, որոնց փոխարեն դրվում է փոխակերպված ստորադասի կազմում **բացառական հոլովով** ձևավորված բառը կամ բառակապակցությունը, կամ հանդես է գալիս **կողմից** կապը՝ իր կապվող բառի հետ: **Կողմից** կապը դրվում է նաև գերադաս նախադասության մեջ եղած **նրա** կամ **նրանց** հարաբերյալների հետ:

Ներգործող ստորադաս կառույցները ձևավորվում են հետևյալ դեպքերում՝

1. Երբ գերադաս նախադասության բայական ստորոգյալը **կրավորական սեռի** բայ է՝ «Ձի կարելի վիրավորվել նրանից, ով քեզ չի հասկանում» → Ձի կարելի վիրավորվել քեզ չհասկացողից: «Սաճմանադրական օրենքները հիմնվում են նրանց կողմից, ովքեր ճանաչված օրենսգետներ են» → Սաճմանադրական օրենքները հիմնվում են ճանաչված օրենսգետների կողմից:

2. Պայմանավորված են նաև որոշ չեղոք սեռի բայերով (**ամաչել, սարսափել, գոհանալ, նեղանալ, վախենալ, սոսկալ, հիասթափվել**)*, որոնք պահանջում են **բացառականով** ներգործող խնդիրներ. օրինակներ՝

Մի նեղանա նրանից, ով քեզ չի հասկանում: Երբեք մի ամաչիր նրանից, ով քեզ սովորեցնում է: Երեխան սարսափեց նրանից, ով կրակ ցույց տվեց: Հիասթափվեցինք նույնիսկ նրանցից, ումից չէինք սպասում:

Ճիշտ է սրանց բայ-ստորոգյալները չեն փոխակերպվում կրա-

* Տե՛ս Ս. Գ. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, «Լույս», Եր., 1975, էջ 391:

վորականով, բայց խմաստով և տրամաբանորեն ներգործությունը բացահայտ է:

3. Սրանց ստորոգյալները տրամաբանական հիմնավորումով կարող են լինել նաև բաղադրյալ (անվանաբայական)¹ կազմված գոհ, դժգոհ, տեղյակ, անտեղյակ և նման ածականներով՝

Բոլորն էլ գոհ էին, որ հարցը այդպես լուծվեց (Գոհ էին հարցի այդպես լուծվելուց): Տիգրանը շատ դժգոհ էր, որ իր հետ այդպես վարվեցին (դժգոհ էր իր հետ այդպես վարվելուց): Նահապետը անտեղյակ էր, թե ինչ էր կատարվել և այլն:

Ներգործող խնդիր ստորադասները ինչպես երևում է բերված օրինակներից, գրեթե միշտ վերջադաս են լինում, թեև կարելի է նաև նախադաս գործածել՝ «Ով քեզ չի հասկանում, մի նեղանա նրանից»: «Ով խորամանկ է, զգուշացիր նրանից»:

Առաջադրանք 1: Կազմե՛լ կրավորական, չեզոք բայ-ստորոգյալներով և անվանաբայական ստորոգյալներով երկուական նախադասություններ:

Առաջադրանք 2: Բերված գերադաս նախադասությունները լրացնել ներգործող խնդիր ստորադասներով:

Առաջարկը ընդունվեց նրանց կողմից...: Լավ մասնագետը սիրվում ու գնահատվում է նրանց կողմից...: Երբեք մի ամաչիր նրանից...: Բոլորը սարսափում էին նրանցից...: Բոլորս ենք դժգոհ...: Անտեղյակ էինք...:

ԲՆՈՒՓՑԱՆ ԽՆԴԻՐ ՍՏՈՐԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒՔՑՈՒՆՆԵՐ

Բնության խնդիր ստորադասականները հիմնականում պայմանավորված են գերադաս նախադասությունների բայ-ստորոգյալի բառային խմաստով. այս դեպքում բայի սեռը կարող է լինել ինչպես ներգործական, այնպես էլ կրավորական ու չեզոք: Բնության խնդիր ստորադասները, որ դպրոցական քերականության մեջ կոչվում են անուղղակի խնդիր երկրորդականներ, ավելի բազմազան են ու բազմաբնույթ: Դրանք են՝

Հանգման խնդիր ստորադաս նախադասություն

Հանգման խնդիր ստորադասները նշում են այն անձը, առարկան, իրողությունը, ինչին հանգում, մոտենում, կաչում, առնչվում է գերադասի գործողությունը: Սրանք կապակցվում են որ, թե շաղկապ-

ներով, ինչպես նաև ով, ինչ, որ(ը) հարաբերականներով, իսկ գերադասի մեջ կարող են լինել նրան, ում, այն բանին հարաբերյալները:

Այս տիպի ստորադասները պայմանավորված են գերադասում եղած հանդիպել, բախվել, մոտենալ, դիպչել ձուլվել, փաթաթվել, այցելել, ինչպես նաև՝ դիմել, դիմադրել, հակառակվել, սպասել, վարժվել, համակերպվել, սիրահարվել, օգնել և նման բայերով: Ինչպես նկատելի է, ոչ մի ներգործական սեռի բայ չկա նշվածներում, հետևաբար սրանք կարող են մեկ խնդիր պահանջել, այն է՝ հանգման:

Ահա այդպիսի մի քանի օրինակներ՝

Ջերմ կարոտով սպասում եմ անհամբեր,

Որ մեկը իմ փակ դռները կբանա (ՎՏ):

Վերջապես հանդիպեցի նրան, ում սպասում էի: Չպետք է հավատալ ու դիմել նրանց, ովքեր կորցրել են վստահությունը: Պետք է նպաստել, որ բարին կատարվի: Ստիպված ես համակերպվել այն բանին, ինչ կատարվել է:

Փոխակերպելիս առաջացած բառը, բառակապակցությունը դրվում է տրական հոլովով:

Մատուցման խնդիր ստորադաս նախադասություն

Ի տարբերություն նախորդ տիպի, մատուցման խնդիր ստորադասները պայմանավորված են ներգործական սեռի բայերով և անպայման երկու տարբեր խնդիրներ են պահանջում՝ ուղիղ և մատուցման: (Սուրճը մատուցեցին նրանց, ովքեր ցանկանում էին): Ստորադասի այս ենթատեսակը գրեթե միշտ կապվում է անձերի հետ և գերադասին միանում է ով, որ, ովքեր դերանուններով, գերադասում էլ գրեթե միշտ առկա են լինում նրան, նրանց հարաբերյալները: Սրանք պայմանավորված են գերադասի կազմում եղած տալ, հանձնել, մատուցել, պարգևել, հանձնարարել, ասել, պատմել, վստահել և նման ներգործական բայերով:

Փոխակերպելիս ստորադասից առաջացած բառը, բառակապակցությունը, դերբայական դարձվածը նույնպես դրվում է տրական հոլովով՝ Գիրքը հանձնեցի նրան, ով տերն է → Գիրքը հանձնեցի տիրոջը: Պատվոգրեր հանձնեցին նրանց, ովքեր ծառայություն էին մատուցել այդ կարևոր գործում → Պատվոգրեր հանձնեցին այդ կարևոր գործում ծառայություն մատուցողներին: Գործը հանձնարարի՛ր նրանց, ովքեր աշխատանքային փորձ ունեն → Գործը հանձնարարի՛ր աշխատանքային փորձ ունեցողներին:

Օգուտի (չաֆի) կամ վնասի ստորադաս նախադասություններ

Սրանք ցույց են տալիս անձ կամ առարկա, որոնց օգտին կամ վնասին կատարվում է գերադաս նախադասություն գործողությունը. փոխակերպելիս ստորադասին փոխարինող բառը, բառակապակցությունը կամ դերբայական դարձվածքը դրվում է **տրական** հոլովով՝ Երենեկ նրան, ով մարդ կգա ու մարդ կերթա անարատ (ՀԹ) → Երենեկ անարատ մարդ եկող ու գնացողին: Փառք ու պատիվ տանք նրանց, ովքեր զոհվեցին Արցախի ազատագրման համար: → Փառք ու պատիվ տանք Արցախի ազատագրման համար զոհվածներին: Այս գովեստով էլ դիմենք նրանց, ովքեր հայրենանվեր գործ են կատարում: ... → հայրենանվեր գործ կատարողներին: Թող ամոթ լինի նրան, ով մեր այսօրվա լավը չի տեսնում: ... → մեր այսօրվա լավը չտեսնողին:

Հարցեր

1. Ի՞նչ են ցույց տալիս **հանգման** խնդիր ստորադաս նախադասությունները, ի՞նչ սեռի բայերով են դրանք պայմանավորված:
2. Ի՞նչ են ցույց տալիս **մատուցման** խնդիր ստորադասները, ի՞նչ սեռի բայերով են պայմանավորված և ինչպիսի լրացումներ ունեն:
3. Ի՞նչ են **չաֆի** (օգուտի) կամ վնասի ստորադաս նախադասությունները:

Վարժություն 8: Առանձնացնել հանգման, մատուցման և օգուտի ստորադաս նախադասությունները, բացատրել, թե ինչ սեռի բայերի հետ են կապակցված:

Խեղճ մայրը սպասում էր՝ ականջը ձայնի, թե երբ միակ որդին դուռը կբանա (ՊՂ): Գործը վստահիր նրան, ով գործից հասկանում է: Օգնիր նրան, ով արժանի է:

Երանի նրան, ով հայրենական

Ողբալ հարկի տակ հանգչում է հիմա (ՎՏ):

Մի հավատա նրան, ով քեզ մի անգամ արդեն խաբել է: Գործի ուղարկիր նրանց, ովքեր կյանքի փորձ ունեն: Դիմիր միայն նրան, ում վստահում ես: Գործ ենք անում նրանց համար, ովքեր գնահատել գիտեն: Փառք տանք նրանց, ովքեր մարտնչեցին Հայրենիքի համար: Ով էնպիսի սուտ ասի, որ ասեմ սուտ է, թագավորության կեսը կտամ նրան (Ժող. հեքիաթ): Ափրոն Նահապետի մոտ ուղարկեց նրան, ով ցանկանում էր ինքնակամ գնալ: Հարցը վճովեց ի վնաս այն

Թիմի, որ լավ չէր մարդվել: Հյուրասիրութեան ժամանակ ուտելիքներ մատուցվեցին նրանց, ովքեր քաղցած էին, իսկ սուրճը տվեցին նրանց, ովքեր չէին ցանկանում բան ուտել: Ուսանողները սպասում էին, որ քննութիւնը սկսվի: Վարպետը ջանասիրաբար գործը սովորեցնում է նրանց, ովքեր նոր էին վերադարձել ծառայութիւնից: Ուսանողները մտտեցան դասախոսներին, որոնց էլ բաժանեցին թարմ լրագրեր:

Անջատման խնդիր ստորադաս նախադասութիւն

Այս տիպի ստորադասականը նշում է այն անձը, իրը, փաստն ու իրողութիւնը, որից որպէս **ելակետ** սկսվում, ծագում, առաջանում է գերադասի բայ-ստորոգյալի գործողութիւնը: Այն գերադասի հետ կապակցվում է **որ, թե** շարժականերով, **ով, ինչ** հարաբերականներով, գերադասի մեջ կարող է ունենալ բացառականով դրված հարաբերյալներ՝ **նրանից, այն բանից, ինչից**: Փոխակերպվելիս գոյականը դրվում է **բացառական** հոլովով՝ **Նուսափիր** նրանից, **ով** ստախոս է: → **Նուսափիր** ստախոսից:

Անջատման խնդիր ստորադասները հիմնականում կապակցվում են **չարժում** արտահայտող բայերի հետ (**հեռանալ, մեկուսանալ, անջատվել, բաժանվել, փախչել, պոկվել, ինչպէս նաև՝ ծագել, առաջանալ, գոյանալ, առաջ գալ** և այլն): Օրինակներ՝

Վերջապես բաժանվեցինք նրանցից, ովքեր ուղեկցում էին մեզ: Երեխային կարողացանք անջատել նրանցից, ովքեր լավ ուղու վրա չէին:

Այս տիպի նախադասութիւնների ստորոգյալները կարող են լինել նաև **անվանաբայական**, որոնց վերադիրները կարող են լինել **գոհ, դժգոհ, տեղյակ, անտեղյակ** ածականները՝

Բոլորս էլ գոհ ենք, որ հարցը այդպէս լուծվեց: Տնօրենը դժգոհ էր հատկապէս այն բանից, որ վերևներից իրեն չեն օգնում:

Միջոցի խնդիր ստորադաս նախադասութիւն

Միջոցի խնդիր ստորադասները ցույց են տալիս այն անձը կամ առարկան, որը միջոց, գործիք է դառնում գերադասի գործողութիւնը կատարելու համար: Պարզեցնելիս դերբայական դարձվածի գերադաս անդամը դրվում է գործիական հոլովով՝ **Նա** հպարտանում է այն բանով, որ ինքն ուժեղ է ու ջլապինդ → **Նա** հպարտանում է իր ուժեղ

և ջրապինդ լինելով: Հարցը լուծվեց այն բանով, որ ազատեցին աշխատանքից → Հարցը լուծվեց աշխատանքից ազատելով:

Միջոցի խնդիր ստորադասը գերադասի հետ կապակցվում է որ, թե շաղկապներով, որ(ը), ով, ովքեր, ինչ(եք) հարաբերականներով, գերադասում կարող է լինել նրանով, ինչպես նաև միջոցով կապական բառը (Գործը կատարեցինք նրանց միջոցով...):

Միջոցի խնդիր ստորադասը գերադասում ունենում է **ներգործական, կրավորական և չեզոք** սեռի բայեր:

Ներգործական – Փայտերը ջարդեցինք նրանով, ինչ ընկավ ձեռքներս: Նահապետը տունը շինեց նրանցով, ինչ ճարում էր: Երեխան ներկաներին հիացնում էր այն ամենով, ինչ սովորեցրել էին մանկապարտեզում:

Կրավորական – Չարագործը հովանավորվում է այն բանով, որ լավ թիկունք ունի: Դա բացատրվում է նրանով, թե ովքեր են առաջնորդում ժողովրդին:

Չեզոք – Հպարտանում ենք նրանով, որ անկախութուն ենք ձեռք բերել: Բոլորիս հուսադրում են նրանով, որ ապագայում լավ կլինի:

Առաջադրանք: Կազմել երկուական նախադասություններ, որոնք լրացնեն գերադասի նշված սեռի բայերով արտահայտված ստորոգյալներին:

Վերաբերություն խնդիր ստորադաս նախադասություն

Այս բնույթի ստորադասների մեծ մասը մոտ է ուղիղ խնդիր ստորադասներին, մանավանդ, որ երկու տեսակում էլ հիմնականում գերադասի ստորոգյալները **ասացական, մտածական**, բայեր են (ասել, խոսել, պատմել, հաղորդել, հարցնել, գրել, մտածել, զեկուցել, տեղեկացնել...) և երկու տիպերն էլ գերադասին միանում են որ, թե շաղկապներով, ով, որ, ինչպես հարաբերական դերանուններով: Ստորադասականների այս տեսակի տարբերությունն այն է, որ վերաբերության երկրորդականներում գերադասի մեջ հաճախ լինում է **մասին** կապը (ուղիղ խնդիրը այն չունի), որը փոխակերպելիս մնում է դերբայական դարձվածի մեջ, իսկ գերադասում, եթե այն չկա, կարող է հանդես գալ, կամ էլ փոխակերպելիս **անորոշ դերբայը** դրվել **բացառական** հոլովով: Ասվածը ցույց տանք օրինակներով. «Օհանամին պատմում էր այն, ինչ անցել էր գլխով» (Օհանամին պատմում էր գլխով անցածը) → ուղիղ խնդիր, և «Օհանամին պատմում էր այն

մասին, ինչ անցել էր գլխով» (Օհան-ամին պատմում էր գլխով անցածի մասին, կամ գլխով անցածից) → վերաբերություն խնդիր: Կամ՝ Հուսիկին հայտնեցին այն, ինչ եղել էր (ուղիղ խնդիր), և Հուսիկին հայտնեցին այն մասին, ինչ եղել էր → եղածի մասին (վերաբերություն խնդիր):

Իսկ եթե վերաբերություն խնդիր ստորադասները պայմանավորված են գերադասի կրավորական կամ չեզոք սեռի բայերով, բնականաբար ուղիղ խնդրի հետ չփոթ լինել չի կարող՝ Հայտարարվեց, որ ընտրությունները հետաձգվում են → հետաձգվելու մասին: Հաճախ էր խոսվում այն մասին, թե ինչպես էին ապրում Սիրիրում → Սիրիրում ապրելու մասին:

Այսպիսի նախադասությունների կապակցությունը լինում է նաև շարահարություն՝ Պատմիր՝ ինչի մասին ուզում ես: Ինչպես եք ապրում, դու ձեզնից պատմիր...

Ամփոփիչ հարցեր խնդիր ստորադաս նախադասությունների վերաբերյալ:

1. Ինչի՞ հետ են կապված և ի՞նչ են ցույց տալիս խնդիր ստորադասները:
2. Ինչո՞վ են պայմանավորված սեռի և բնություն խնդիր ստորադասները:
3. Թվարկել նշված ստորադասների տեսակները (օրինակներ):
4. Ինչպե՞ս տարբերակել հանգման և մատուցման ստորադասները:

Ամփոփիչ վարժություններ խնդիր ստորադաս նախադասությունների վերաբերյալ: Գտնե՛լ բոլոր տեսակի խնդիր ստորադասները, անվանել դրանք, բացատրել, թե ինչ են ցույց տալիս և ինչպես են կապակցվել գերադասների հետ:

I


Պարտք եմ համարում ասել, թե ինչպիսի հիացմունք ունեմ Աճառյանի մասին: Ես լավ գիտեմ, թե ինչ կամք ու գիտելիքներ ունեք նա: Նրա մասին ասել՝ մեծ լեզվաբան է՝ քիչ է: Նա ներկաներին հիացնում էր նրանով, որ հրաշալի հիշողություն և գիտողականություն ունեք: Աճառյանը չէր նեղանում նրանցից, ովքեր իրեն լավ չէին հասկանում: Նա իր գիտելիքները հաղորդում էր նրանց, ովքեր հասկանում էին իրեն: Բոլորս էինք զգում, թե նա ինչ սեր ուներ իր

երկրի նկատմամբ: Ասում են՝ նա Փարիզում սոված օրեր է անցկացրել, վաճառել է նույնիսկ իր անկողինը: Նա հաճախ էր սպասում, որ ընկերները իր դուռը կբանան ու իրեն կհանձնեն լեզվաբանական նոր գրքեր: Սորբոնի համալսարանն ավարտելիս Աճառյանն իր շնորհակալությունը հայտնեց բոլոր նրանց, ովքեր դասավանդել էին իրեն. նա դժգոհեց միայն այն բանից, որ չուտ է թողնում Փարիզը (Անտուան Մեյե):

II

Մրցույթն ավարտվեց հօգուտ նրանց, ովքեր լավ էին նախապատրաստվել: Վարդանը հոգու պայծառությամբ ըմբռնեց, որ ժողովուրդը հավատում է իրեն (ԳԳ): Ես չգիտեմ՝ որքան եմ ապրելու: Բոլորս ենք հպարտանում նրանցով, ովքեր բարիք են ստեղծում իրենց աշխատանքով: Ես պատրաստ եմ գրել նաև նրանց մասին, ովքեր թեկուզ մի քար են դրել մեր երկրի կառուցման շենքին: Այս հոյակապ պողոտան կառուցվեց նրանց կողմից, ովքեր սիրում են մեր քաղաքը: Նա սպասում էր, որ իր ընկերները կդիմավորեն իրեն: – Մի պարծենա, թե շատ ծառ ես տնկել կյանքում, – հողն ասաց (ՀԾ): Մի հավատա, թե այս կյանքի ծիածանը սև չունի (ՀՇ): Նոր լույս տեսած գիրքը հանձնեցի նրան, ով վաղուց էր դրան սպասում: Աշխատի՛ր խուսափել նրանից, ով խոսք է տալիս ու չի կատարում խոստումը: Լառ-Մարգարը ոչ ոքի չասաց, թե ինչու արցունքներ երևացին աչքերին (ԱԲ):

Գծապատկեր



ՊԱՐԱԳԱՑԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՑՆԵՐ

Ի տարբերություն խնդիր ստորադաս նախադասությունների, որոնք առարկայական զանազան հարաբերություններ են արտահայտում, **պարագա** ստորադասները նկարագրում են գերադասի գործողության հետ կապված զանազան հանգամանքներ՝ **տեղ, ժամանակ, նպատակ, պատճառ, պայման, հիմունք, հակառակ հիմունք, ինչպես նաև հատկանիշներ՝ ձև, չափ ու քանակ**:

ՀԱՆԳԱՄԱՆՔԱՑԻՆ ՊԱՐԱԳԱ ՍՏՈՐԱԴԱՍ ԿԱՌՈՒՑՑՆԵՐ

Այս տիպի ստորադասները արտահայտում են գերադասի ստորոգյալի գործողության **տարածական, ժամանակային, պատճառահիմունքային, զիջական և այլ հարաբերություններ**:

Տեղի պարագա

Տեղի պարագա ստորադաս նախադասություններն արտահայտում են տարածական այլևայլ հարաբերություններ, բացահայտում, պարզաբանում են գերադաս նախադասության ստորոգյալի գործողության կատարման տեղը՝ մի քանի հարաբերությամբ. ցույց են տալիս՝

1. **Այն տեղը, որտեղ կատարվում, տեղի է ունենում գործողությունը.** սրանք կոչվում են բուն տեղի պարագաներ և գերադասի հետ կապակցվում են ուր, որտեղ հարաբերականներով.

Ուր ահեղ կռվով չի մտնիլ արքան,

Ղոնաղ է աչուղն իր սազի հետ (ՀԹ):

Ուր էլ լինեմ, չեմ մոռանա ես ողբաձայն երգերը մեր (ԵԶ):

Որտեղ կհոգնիս, գլուխս վար դիր

Ժեռ քարերի մեջ, փշերի վրա (Ավ. Իս.):

2. **Այն տեղը, դեպի ուր ուղղված է գործողությունը.** տեղի պարագայի այս տեսակը կոչվում է ուղևորման պարագա. գերադասի հետ կապակցվում են նույն հարաբերականներով, որոշ դեպքերում կարող է հանդես գալ նաև դեպի կապը:

Գնում էր այնտեղ, ուր երգն էր հնչում (ՊՍ): Այդ ճանապարհը տանում էր ոչ այնտեղ, ուր նա ուզում էր հասնել (ՆԶ):

Ուր էլ որ գնամ, աչքերիս առաջ
Քո քարափներն են շիկնելու նորից (ՀՄ):

Մեքենան սլանում էր դեպի այնտեղ, որտեղ շինարարներն էին:

3. Այն տեղը, որտեղից սկսվում է կամ որտեղով ընթանում է գործողությունը. սա էլ կոչվում է **եյման տեղի պարագա**. այս դեպքում հարաբերյալը դրվում է բացառական հոլովով՝ **այնտեղից կամ գործիականով՝ այնտեղով**:

Դե բարիքը գալիս է **այնտեղից, որտեղից** չէինք սպասում (ԳԳ): Վերադարձանք **այնտեղով, որտեղով** մեկ օր առաջ անցել էին թշնամու գորբերը:

Ինչպես երևում է բերված օրինակներից, տեղի պարագա ստորադասներն ունեն **ազատ** շարադասություն (բերվածները նախադասի և վերջադասի օրինակներ են): Միջադասի դեպքում գերադասի հարաբերյալը դրվում է նախադասության սկզբում, ապա դրվում է միջադաս ստորադասը և շարունակվում է գերադասը՝

Այնտեղ, որտեղ չէինք եղել, այս անգամ եղանք: Այնտեղ, ուր պետք է հասնեինք, դեռ հեռու էր: Միջադասի դեպքերը շատ սակավ են:

Պետք է հատուկ ուշադրություն դարձնել մի կարևոր հանգամանքի վրա. **տեղի պարագա ստորադասները** հաճախ չփոթվում են **որոշիչ ստորադասների հետ** և հաճախ փոխակերպվում են որպես **որոշիչ ստորադասներ**: Չփոթելու համար կա երկու միջոց՝ **որոշչային իմաստ ունեցող հարաբերյալների առկայությունը** և **հարցերը**:

Եթե գերադաս նախադասության մեջ առկա է գոյականով արտահայտված տեղի պարագա և նրանից առաջ կան **այն կամ մի** հարաբերյալները, ուրեմն ստորադասների տեսակը՝ **բնույթը, որոշիչ է**. որովհետև այդ հարաբերյալները ձևական անդամներ են, որոնց փոխարինում են ստորադասները: Ահա մեկական օրինակ՝ «Հյուրերը եղան այն տեղերում, որտեղ խաչքարեր կային» – տրվում է ոչ թե **որտեղ** հարցը, այլ՝ **ո՞ր տեղերում**: Կամ «Նրանք եղան նաև մի տեղում, ուր մենք չէինք եղել» – նորից տրվում է **ո՞ր տեղում** հարցը, ուրեմն ստորադասների բնույթը **որոշիչ է**:

Իսկ եթե գերադասի մեջ չկա **այն** հարաբերյալը, կա հարաբերյալով արտահայտված տեղի պարագա՝ **այնտեղ**, այդ ձևական անդամը իր նյութական իմաստն ստանում է ստորադաս նախադասությունից, ուրեմն՝ ստորադասի բնույթը **տեղի պարագա է** (Ուր էլ

գնամ, այնտեղ աչքիս առաջ քո քարափններն են շիկնելու նորից – ՀՍ) կամ Նրանք եղան այնտեղ, որտեղ մենք չէինք եղել: Երկու նախադասությունների ղեպքում էլ կտրվի որտե՞ղ հարցը:

Ժամանակի պարագա

Ժամանակի պարագա ստորադաս նախադասություններն ավելի պարզ ու որոշակի են դարձնում գերադասի ստորոգյալի ժամանակային տարբեր հարաբերությունները. դրանք գերադասի հետ կապակցվում են երբ, մինչև, քանի, քանի դեռ, հենց, հենց որ ժամանակային իմաստ ունեցող հարաբերականներով ու շաղկապներով: Գերադասի մեջ գրեթե հարաբերյալներ չեն լինում. սակավ ղեպքերում, հատկապես բանավոր խոսքում գործածվում է այն ժամանակ կապական կապակցությունը (Այն ժամանակ տեղ հասանք, երբ արդեն հյուրերը մեկնել էին):

Գերադաս և ստորադաս նախադասությունների բայական ժամանակներն իրար նկատմամբ երկու կարգի հարաբերությունների մեջ են լինում. մի ղեպքում երկու նախադասություններում էլ գործողությունը կատարվում է միաժամանակ. սա կոչվում է համաժամանակություն: Մյուս ղեպքում գերադասի և ստորադասի գործողությունները չեն համընկնում. դրանք հաջորդում կամ նախորդում են իրար. սա էլ կոչվում է տարաժամանակություն:

1. Համաժամանակություն.

Երբ բաց եղան գարնան կանաչ դոները,
Քնար դարձան աղբյուրները Բինգյուլի (Ավ. Իս.):

Երբ որ նայում էր աչքերիս մեջ, հուզվում էր, ինչ որ բան էր հիշում (ԳԹ): Քանի դեռ չենք հոգնել, պետք է աշխատենք:

Այս տիպի նախադասությունները փոխակերպելիս ստորադասի բայ-ստորոգյալը հաճախ վերածվում է համակատար ղերբայի՝

Երբ նայում եմ ծաղիկներին,
Քնքչանում եմ ծաղկի նման (ՀՇ) – ծաղիկներին նայելիս:
Հենց որ ժպտում էր, աչքերը պայծառանում էին (ժպտալիս):

2. Տարաժամանակություն.

Հենց որ իմացավ էլ Մհեր չկա, Վեր կացավ կովով Սասունի վրա (ՀԹ):

Երբ կհոգնես, կգազազես աշխարհից,
Դարձիր ինձ մոտ, վերադարձիր դու կրկին (ՎՏ):

Ժամանակի պարագա ստորադասները կարող են կապակցվել

նաև որ չադկապով՝ – Որ մեծանամ, բանակ կզնամ, պապի՛կ,- ասում է թոռնիկա:

Ինչպես տեսնում ենք, ժամանակի պարագա ստորադասների շարադասութունը մեծ մասամբ նախադաս է, բայց դրանք լինում են նաև ետադաս՝ կգամ, երբ տանը լինես: Նվերդ կատանաս, հենց որ խոստումդ կատարես:

Դրանք լինում են նաև միջադաս՝

Ախ, ամեն անգամ, երբ հայրենիքի մասին են խոսում,

Իմ միտն է գալիս առուն մեր դռան (ՀԾ):

Ես կգամ, երբ դու կլինես մենակ, կափոփեմ քո հոգին: Ամեն անգամ, երբ խոսք էր բացվում էրգրի մասին, մորս աչքերը արցունքակալվում էին (ՄԳ):

Ստորադասը երբեմն էլ միջադաս է լինում, երբ գերադասի կազմում հանդես են գալիս այժմ, հիմա, արդեն, միշտ, ամեն անգամ ժամանակի մակերայները՝ Հիմա, երբ ամեն բան մոռացվել է, Լառ-Մարգարն էլ է խաղաղվել (ԱԲ): Այժմ, որ քաղաքականությունից ենք խոսում, միշտ հիշում ենք անցյալը:

Ժամանակի ստորադասները, թեև սակավ, բայց կապակցվում են նաև շարահարությունք (սա նույնպես հատուկ է բանավոր խոսքին)՝

Նոր տնօրենը եկավ-չեկավ, սկսեց գլուխներին քարոզ կարդալ: Տնօրենն էր խոսում, բան չէինք հասկանում, դասդեկն էր խոսում, հասկանում էինք:

Փոխակերպվելիս այս տիպի նախադասություններում կարող են հանդես գալ նաև առաջ կամ հետո կապական բառերը, որոնց հետ անորոշ դերբայը դրվում է բացառական հոլովով: Օրինակ՝ «Երբ զանգը տվեց, ուսանողները մտան լսարան» նախադասությունը կարելի է փոխակերպել՝ «զանգը տալուց հետո», «զանգը տալուց առաջ», ինչպես նաև ստորոգյալը դարձնել համակատար դերբայ (զանգը տալիս...), կամ նույն ստորոգյալը դնել տրական հոլովով և հավելել ժամանակ կամ պես բառերը («զանգը տալու ժամանակ» կամ «զանգը տալուն պես»):

Նման դեպքերում պետք է նկատի ունենալ խոսելու պահը. եթե գործողությունը համընկնում է խոսքի պահին, պետք է ստորոգյալը դարձնել համակատար դերբայ՝ (Չանգը տալիս լրջացանք) կամ այն դնել տրական հոլովով՝ պես կապի հետ (Չանգը տալուն պես Գիբորը վեր թռավ), իսկ եթե գործողությունը ավելի տևական է, կարելի

է գործածել ժամանակ բառը (Զանգը տալու ժամանակ խնդիր էի լուծում):

Վարժուիթյուն 9: Առանձնացնել տեղի և ժամանակի պարագա ստորադաս նախադասութիւնները, որոշել նրանց իմաստային տարբերութիւնները, ցույց տալ կապակցութեան միջոցները, շարադասութիւնը և փոխակերպել:

I Ես կգամ, երբ դու կլինես տրտում,
Երբ երազներդ հավետ կմեռնեն (ՎՏ):

Նա նույնիսկ չկար մեկ տարեկան, երբ մայրը գնաց (ՊՍ): Սողոմոնը 12 տարեկան էր, որ դուրս եկավ հայրական տանից: Մեծագործ Կաթողիկոս Գևորգ Գ-ն Սողոմոնին ընդունեց հենց այնտեղ, ուր նա ցանկանում էր՝ Գևորգյան ճեմարան: Երբ հայրը մահացավ, Սողոմոնը բոլորովին որբ մնաց:

Բայց հայրն էլ գնաց, երբ որդին չկար տասը տարեկան (ՊՍ): Ճեմարանը միակ կրթօջախն էր, ուր սովորելու էին գալիս Վանից, Տարոնից, Պոլսից, Կիլիկիայից, Սուրմալուից, Գողթան գավառից... Այստեղ էր, որ Սողոմոնն ստացավ երաժշտական գիտելիքներ, սովորեց հայերեն: Այստեղից 23 տարեկան Կոմիտասը ուղևորվեց այնտեղ, որտեղ ծնվել էր, որտեղ պետք է այցելել ծնողների չիրմին: Երբ նա մոտենում էր ընկերներին, սիրալիր ողջագուրվում էր նրանց հետ: Երբ հեռանում էր հարազատ գյուղից, նորից ու նորից էր նայում իրեն ծանոթ տներին ու այգիներին: Երբ որ արդեն շատ էր հեռացել, մեկ անգամ ետ դարձավ ու նայեց այն սարերին, որտեղ թափառել էր ընկերների հետ:

II Մանթաշովի հովանավորութեամբ Կոմիտասը մեկնեց այնտեղ, ուր պետք է երաժշտական բարձրագույն կրթութիւն ստանար: Եվ հենց այստեղ՝ Բեռլինի Արքայական համալսարանում, նա ստացավ այդ կրթութիւնը: Այստեղից էլ Կոմիտասը, մերժելով Բեռլինի օպերայում մեներզիչ դառնալուն, վերադարձավ հենց այնտեղ, ուր իր սիրելի սաներն էին ու իր ժողովուրդը: Եվ նա վերադարձավ, երբ 27 տարեկան էր: Այստեղ նրան սիրով ընդունեց Խրիմյան Հայրիկը և նշանակեց ճեմարանի երգ-երաժշտութեան ուսուցիչ ու խմբավար: Բայց այստեղ՝ իր սիրած տեղում, Կոմիտասը երկար չձառայեց. դեպքերի բերումով նա գնաց Պոլիս: Այստեղ՝ այս քաղաքում էր, որ նա կազմեց 300 հոգանոց «Գուսան» երգչախումբը և համերգներ տվեց մի քանի տեղերում, ուր չէր հնչել հայոց երգը: Ու որտեղ Կոմիտասն

էր, այնտեղ հայոց երգն էր: Երբ սկսվեց Հայոց մեծ եղեռնը, Կոմիտասը նույնպես արքայուհի: Ու երբ տեսավ եղեռնի ահապոր ահապոր վիրքները, կորցրեց հոգեկան հավասարակշռությունը և քսան տարի մնաց հիվանդ: Նա կնքեց իր մահկանացուն, երբ 66 տարեկան էր:

Կոմիտասի դին հուղարկավորվեց այնտեղ, որտեղ ինքն էր ցանկանում՝ Մասիաների և Արազածի հովանու ներքո՝ իր անունը կրող պանթեոնում: (Պ. Բաղդիկյան, «Կոմիտասը, ինչպիսին եղել է», Եր., 2002):

Նպատակի պարագա

Նպատակի պարագա ստորագրած նախադասությունները պարզաբանում են գերադաս նախադասության գործողությունն նպատակը: Սրանք գերադասին միանում են որպեսզի, որ, երբեմն էլ թե ստորագրածական շաղկապներով, գերադասի մեջ կարող են ունենալ նրա համար, այն նպատակով հարաբերյալները:

Ստորագրած ստորոգյալը անպայման լինում է ըղձական եղանակի բայ:

Հաճախ այս տիպի նախադասությունները լրացնում են ամբողջ գերադաս նախադասությանը: Գերադասի ենթական հիմնականում անձ է լինում, որպեսզի թելադրի գործողությունն նպատակը, դրա համար էլ փոխակերպելիս հաճախ դերբայական դարձվածի մեջ հանդես է գալիս համար կապը, կամ դերբայը՝ դրված տրական հոլովով՝

Քո գիրկն եմ եկել, որ զրույց անեմ

Ապ ու պապերիս աճյունների հետ (ՀՍ):

Համո Սահյանի այս նախադասությունը կարելի է փոխակերպել երկու կերպ՝ «Քո գիրկն եմ եկել՝ ապ ու պապերիս հետ զրույց անելու» կամ զրույցելու և «Քո գիրկն եմ եկել ապ ու պապերիս հետ զրույց անելու համար»:

Նպատակի պարագա ստորագրածների շարադասությունը ազատ է. միայն որ և թե շաղկապներով կապակցվելիս դրանք լինում են վերջադաս (տե՛ս բերված օրինակը) և

Եկան քաչեցին, թե զոռով տանեն,

Թափ տվավ մարդկանց, գցեց դես ու դեն (ՀԹ):

Վերջադասի ևս երկու օրինակ՝

Ես քեզ սիրեցի, որ ինձ յար ըլնիս,

էրված-վառված սրտիս զեզ ու ճար ըլնիս (Ավ. Իս.):

Ոոսում էր Մամիկոնեից տիկինը, որպեսզի խաղաղեցնեն իր սրտի տազնապը (Րաֆ.): **Նախադասի օրինակներ՝**

Որպեսզի հասնես բարձունքներին անհաս,

Պետք է թռչելու թևեր ունենաս (ՀՇ):

Որպեսզի առաջարկությունդ անցնի, պետք է փաստարկներ ունենաս:

Միջադասի օրինակներ՝ «Մամիկոնեից տիկինը, որպեսզի խլացնեն իր սրտի տազնապը, խորասուզվեց ընթերցանություն մեջ»:

Հիշի՛ր Պետք է զգուշանալ որ և **որպեսզի** շաղկապների գործածություն չփոխությունից (Նման դեպքերի հաճախ ենք հանդիպում մեր պատգամավորների խոսքում)։

«Ես առաջարկում եմ, որպեսզի այդ հարցը տեղափոխվի հաջորդ նիստին»։ «Մնղրում եմ, որպեսզի իմ առաջարկը զրվի քննարկման» (Իրավունք)։ Երկու նախադասություններում էլ **որպեսզի**-ի փոխարեն պետք է գործածել **որ** շաղկապը:

Նպատակի պարագա ստորադասները կարող են ունենալ նաև **չարահարական կապակցություն**: Օրինակներ՝

Բոլորը տամ ու նվիրեմ, ինձ ոչ մի հուր թող չմնա՝

Գու չմրսես ձմռան ցրտում, - բոլորը քեզ (ԵԶ):

...Փափագ սրտով խնդիրք արել՝

Բարի ժպտան իր սերին (ՀԹ):

Այս տվեք ինձ քաղցր մի քուն՝

Կյանքից հեռու սլանամ (Հ. Հովհ.):

Պատճառի պարագա

Պատճառի պարագա ստորադասը պարզարանում է գերադասի ստորոգյալի գործողություն պատճառը, երբեմն էլ հիմնավորումը: Այն գերադասի հետ կապակցվում է միայն ստորադասական շաղկապներով (**որովհետև**, **քանի որ**, **որ**, **մանավանդ որ**), շատ սակավ դեպքերում նաև **թե**: Գրաբարյան ոճերում երբեմն էլ գործածում են **քանզի** շաղկապը՝

Քեզ արևը պիտի լինի հաղթանակի չքանչան,

Քանզի կուրծքդ մի երկինք է՝

Բո մեծ սրտովն իմաստություն (ՀՇ):

Թերևս այս ստորադասը կարելի է դիտել նաև որպես **Հիմունքի** պարագա:

Սակավ դեպքերում միայն գերադասի մեջ հանդես են գալիս այն պատճառով, շնորհիվ այն քանի, դրա հետևանքով հարաբերյալները, որոնք փոխակերպվելիս դուրս են գալիս, և դերբայական դարձվածում հանդես է գալիս պատճառով կապական բառը՝ «Այս ամռանը գյուղ չեմ գնալու, քանի որ շինարարությունը եմ զբաղված»։ փոխ. «Այս ամռանը գյուղ չեմ գնալու շինարարությունը զբաղված լինելու պատճառով»:

Պատճառի պարագա ստորադասները գերադասի հետ կարող են կապակցվել նաև չէ որ, մանավանդ որ, ինչ է թե, թե չէ շողկապներով՝ «Վարորդը վառեց մեքենայի լույսը, չէ որ արդեն մթնշաղ էր»։ «Այդպես էլ ուշ տեղ հասանք, մանավանդ որ ուշ էինք դուրս եկել»։ «Ինձ չես հանդիպել, ինչ է թե խոստումս չեմ կատարել»:

Այս բնույթի նախադասությունների գերադասի ստորոգյալը երբեմն էլ լինում է անվանաբայական՝ Նա լավ մարդ է, որովհետև լավ ընտանիքի զավակ է: Նա խիստ դժգոհ էր քեզանից, քանի որ չբարևեցիր իրեն: Այս տարի բերքը առատ է, քանի որ եղանակը բարենպաստ եղավ:

Սրանք կարող են կապակցվել նաև շարահարությունը՝

Արի՛, ջահն իգիթ,	էլ մի ուշացնի,
Արի, անիրավ՝	ես շատ եմ կացել,
Կարոտած յարիդ	էլ մի լացացնի՛
Աչքը ջուր դառավ:	ես շատ եմ լացել (ՀԹ):

Մի՛ տրտնջա ցավիդ համար – սիրո առատ աղբյուր է նա,

Մի՛ ափսոսա մեղքիդ համար – սիրտը մաքրող սուրբ հուր է նա (ՎՏ):

Սև աչերեն շատ վախեցիր՝ էն մութ, անծիր գիշեր է (Ավ. Իս.):

Որովհետև և քանի որ շողկապներով կապակցվելիս ստորադասները կարող են և՛ նախադաս դրվել և՛ վերջադաս (թեև նախընտրելին վերջադասն է):

«Դասի չգնացի, որովհետև հիվանդ էի» և «Որովհետև հիվանդ էի, դասի չգնացի»: Այդպես էլ՝ «Բերքը անհաջող եղավ, քանի որ եղանակը անբարենպաստ էր այս տարի» և «Քանի որ եղանակը այս տարի անբարենպաստ էր, բերքը անհաջող եղավ»:

Որ, թե և մյուս շաղկապների դեպքում շարադասությունը գրեթե միայն վերջադաս է՝ «Նա հետևում է քեզ միայն այն պատճառով, որ դու խույս ես տալիս իրենից»: «Դու զարմանում ես, թե ինչպիսի եղանակով էի գրել նամակս» (Ն-Դ):

Պայմանի պարագա

Այս բնույթի ստորադասները ցույց են տալիս այն հնարավոր պայմանը, որի հետևանքով կատարվում է գերադասի գործողությունը. հետևաբար գերադաս և ստորադաս նախադասությունների միջև առաջանում է **պայմանահետևանքային** իմաստային հարաբերություն: Այս տիպի ստորադասները գերադասի հետ կապակցվում են **եթե, թե, որ, քանի որ, քանի դեռ, միայն թե, նայած թե, քանի դեռ շաղկապներով, իսկ գերադասի մեջ երբեմն հանդես են գալիս այն դեպքում, այն ժամանակ** հարաբերյալները: Այս բնույթի ստորադասներում ավելի լայն տարածում ունի **նախադաս շարադասությունը**, որովհետև հետևանքը, որն արտահայտվում է գերադաս նախադասությամբ, բխում է պայմանից՝ ստորադաս նախադասությունից:

Ստորադասը գերադասի հետ կապակցող շաղկապներից ամենաչափահաս հաճախականությունն ունի **եթե շաղկապը՝**

Եթե ես մի օր աշխարհից գնամ,

Ում ես անդադար ահարեկելու (ՀՄ):

Նրանց ձգված մկաններում ուժն է նստել խոնավ հողի,

Եթե ուզեն՝ արևներին նոր տեմպ կտան ու նոր ուղի (ԵԶ) :

Իսկ եթե տեղից վեր կենա հանկարծ՝

Գլուխը մեխած մահակը ձեռքի՞ն... (ՀԹ):

Եթե շաղկապին համարժեք է նաև թե շաղկապը՝

Թե ուզում ես երգը լսեն, ժամանակիդ չունչը դարձիր (ԵԶ):

Թե տիրես, մե՛ծ շահ, դու նրա սրտին,

Թաթուլն էլ անգոր կընկնի ոտքիդ տակ (ՀԹ):

Քանի որ խոստացել ես, խոստումդ պիտի կատարես: **Քանի դեռ** ուրիշ միջոցների չեմ դիմել, ճշմարտությունն ասա (Իրավունք):

Որ շաղկապով կապակցության ավելի քիչ դեպքեր կան՝

Մի մարդ որ նրա երեսը պահի,

Նրա ապրուստը ի՞նչ պետք է լինի (ՀԹ):

Մեքենա որ լիներ, կգնայի գյուղ:

Ինչպես տեսնում ենք, նման դեպքերում որ-ից առաջ ստորակետ չի դրվում:

Պայմանի ստորադասները երբեմն էլ ունենում են շարահարական կապակցություն՝

Մեկը մեր գյուղում մի թիղ հող ունի,
Թճես՝ մի ծերից մյուս ծերը կընկնի (ՀԹ):

Զլիններ Յլիկ-Ամրամը՝ Գուգարքն ու Տայքը չէին բաժանվի հայոց թագավորից (Մուրացան): Լեզուդ չլինի՝ ազոավները աչքերդ կհանեն (Ժող.):

Վարժություն 10: Առանձնացնել նպատակի, պատճառի և պայմանի ստորադաս նախադասությունները, որոշել դրանց իմաստային տեսակները, ցույց տալ կապակցության միջոցները, շարադասությունը և փոխակերպել:

Եկա, որ այստեղ ձեզ համար այսօր,
Հրեղեն խոսքեր կոես և խնդում (ՎՏ):
Տոկա՛, համբերի՛ր, իմ վիրավո՛ր սիրտ ՝
Աշխարհը իրեն ճամփով կընթանա (Ավ. Իս.):

Կոխվ ունես՝ իր հետ արա (ՀԹ): Եթե գիրքդ չհավանեի, գրախոսական չէի գրի:

Քո հերն ու մերը, թե որ քեզ չտան,
Արին կթափես ես գետի նման (ՀԹ):

Եթե նախատեսված սկզբունքները ճշտությամբ կիրառվեն, հոյակապ կոթող կստացվի: Եթե ես մի օր աշխարհից գնամ, ո՞ւմ ես գցելու բերանն աշխարհի (ՀՍ): «Սիրելի՛ Վիզեն և Սոֆի ջան, այս նամակը ձեզ ուչ կհասնի, որովհետև ուղարկում եմ Իտալիայից (Ավ. Իս.)»: Որովհետև գիշերվա ժամը տասներկուան էր, այդ պատճառով էլ բոլորը սեղմեցին տանտիրոջ ձեռքը և դուրս եկան (Ն-Գ): Քանի որ աշխատանքները ձգձգվում էին, դրա համար էլ լրացուցիչ ուժեր բերեցին:

Եթե արևը չխոնարհվեր դեպի մայրամուտ, նա առանց հոգնություն երկար կմնար այդ դիրքով (ԱԲ): Որպեսզի հանգիստ զգար իրեն, երեսային հետը վերցրեց:

Նորից էի ուզում մեր լեռներում լինել, որպեսզի գոնե վերջին անգամ վայելի իմ հայրենի երկրի հմայքը: Հայրը մի մտացածին նամակ գրեց, որ տղան չուտ տուն վերադառնա:

Կոմիտասը հայրենիք վերադարձավ, քանի որ օտար երկրում չէր կարող մնալ: Նա Բուրգերի երկիր գնաց, որ հայ երգը այնտեղ էլ հնչեցնի: Եթե Գևորգ Հինգերորդ կաթողիկոսը Կոմիտասին լավ ընդունեք, նա Պոլիս չէր գնա:

Հրաչյա Աճառյանն էլ Փարիզում չմնաց ու Սորբոնի համալսարանի պրոֆեսորը չդարձավ, որովհետև սիրում էր իր երկիրն ու ժողովրդին: Եթե նրան երկու տարի չբանտարկեին, նրա որոշ աշխատանքներ կիսատ չէին մնա:

Բեզարած էր մարդը՝ ամբողջ օրը հնձել էր կարճ ցողունով կորեկ (ԱԲ): Բոլորը պատահեցին՝ բոլորն էլ մորթեցի (ՀԹ): Սա էլ խարո՞ւյկ է, փչես՝ կհանգչի: Մեզ համար քայլել չկար՝ երամով թռչում էինք (ՀՄ):

Առաջադրանք: Գրել շարադրություն «Ինչ եմ ուզում դառնալ և ինչո՞ւ» թեմայով՝ գործածելով նպատակի, պատճառի և պայմանի ստորադասական նախադասություններ:

Հիմունքի պարագա

Որոշ լեզվաբաններ Հիմունքի պարագա ստորադաս նախադասությունները որպես առանձին տեսակ չեն ընդունում, ոմանք էլ այն միացնում են պատճառի պարագա ստորադասների հետ, մանավանդ որ դրանք կապակցվում են նույն չաղկապներով՝ որ, որովհետև, քանի որ, չէ որ, մանավանդ որ: Իրականում Հիմունքի պարագա ստորադասները տրամաբանորեն տարբերվում են պատճառի պարագա ստորադասներից. դա լավ է երևում հատկապես փոխակերպման դեպքում: Եթե փոխակերպելիս պատճառի պարագայի համար տրվում են ինչո՞ւ, ի՞նչ պատճառով հարցերը, ապա Հիմունքի պարագայի դեպքում տրվում են ի՞նչ Հիմունքով, ի՞նչ հիմնավորումով, ըստ ի՞նչի հարցերը: Օրինակ՝ «Ոոսակցությունն ընդհատվեց, որովհետև դռան զանգը տվին» (ինչո՞ւ ընդհատվեց), «Քանի որ ցուրտ էր, տաք էինք հագնվել» (ինչո՞ւ էինք տաք հագնվել). սրանցում ակնհայտ է պատճառի հանգամանքը, սակայն հետևյալ նախադասություններում ոչ թե պատճառն է գերադասի գործողություն կատարման հետևանքը, այլ Հիմունքը՝ «Աճառյանը բանտից շուտ ազատվեց, որովհետև հանցակազմի բացակայություն կար» կամ՝ «Աճառյանը համաշխարհային ճանաչում ունի, քանի որ բազմաթիվ կոթողային աշխատություններ է գրել»: Երկու դեպքում էլ կտրվեն ոչ

Թե ինչո՞ւ, ի՞նչ պատճառով, այլ՝ ի՞նչ հիմնավորումով, ինչի՞՞ հիման վրա հարցերը: Ակնհայտ է, որ Աճառյանի՝ բանտից շուտ ազատվելը հիմնավորված է հանցակազմի բացակայությունը և ոչ թե դրա պատճառով: Այդպես էլ՝ ինչո՞վ է հիմնավորված Աճառյանի համաշխարհային ճանաչումը:

Հիմունքի պարագա ստորադասների այլ օրինակներ՝

Այս հոդամասը կարելի է այգեստան դարձնել, քանի որ ջուրը շատ մոտիկ է: Կարգադրությունը չէինք կարող չկատարել, մանավանդ որ ռեկտորն էր հրամայել: Ուրեմն մի բան կա, որ քեզ կաշկանդում է ազատ խոսել:

Ինչպես երևում է բերված օրինակներից, պատճառի և հիմունքի միջև կա տրամաբանական զգալի տարբերություն:

Հակառակ հիմունքի (զիջման) պարագա

Ի տարբերություն նախորդ տեսակի, հակառակ հիմունքի պարագա ստորադասները **ներհակ են** գերադաս նախադասություն գործողությունը, այսինքն՝ ցույց են տալիս այնպիսի գործողություն, իրողություն, հանգամանք, հակառակ որի կամ որի փոխարեն կատարվում է գերադասի գործողությունը: Սրանց կապակցություն միջոցները զիջական շաղկապներն են՝ **թեև, թեկուզ, թեպետ, փոխանակ, չնայած (որ)**: Այս տիպի ստորադասներում կարող են հանդես գալ նաև **բայց և սակայն** համադասական շաղկապները, որոնք ստորադաս շաղկապների հետ կազմում են **զուգադիր շաղկապներ՝ թեև...բայց, թեպետ...սակայն, չնայած որ...բայց, թեպետև...սակայն**:

Հակառակ հիմունքի կամ զիջման ստորադասները զիջականությունը հակադրվում են ոչ միայն **հիմունքի** պարագա ստորադասներին, այլև **պատճառի** ու **պայմանի** պարագա ստորադասականներին. **ինչպես՝**

Հիմունք – Թեև կարգադրությունը վերևից էր, այնուամենայնիվ չընդունվեց ժողովրդի կողմից: Չնայած խոստացել էր, բայց խոստումը չկատարեց:

Պատճառ – Թեպետ հոգնել էի, սակայն շարունակեցի աշխատել:

Պայման – Թեև պայմանավորվել էինք, նա այդպես էլ չեկավ:

Թեկուզ և մենակ լինի փարախում,

Աժդահա Սաքոն ընչի՞ց է վախում (ՀԹ):

Այս տիպի ստորադասների շարադասությունը հիմնականում ազատ է.

Նախադաս – Ինչքան էլ սուր սիրտս խոցեն արյունաքամ վերքերը մեր – էլի ես որը ու արնավառ իմ Հայաստան – յարն եմ սիրում (ԵԶ);
Թեև հրապարակում մեծ բազմություն էր հավաքվել, այնուամենայնիվ միտինգը չկայացավ (Իրավունք):

Վերջադաս – էլ մի՛ խոսեցնի, աստված կսիրես,
Թե չէ մի դաչաղ կղառնամ ես էլ (ՀԹ):

Անշուշտ կգնայինք Մատենադարան, եթե տևական անձրև չտեղար: **Միջադաս** – Մենակ Դավիթը ինչ արին-չարին,

Մոտ չեկավ դուշման Մելիքի թրին (ՀԹ):

Հազկերտը խելագար վազը է, թեև առաջը երեք ոչխար էլ գցես, միևնույն է՝ քեզ պիտի հոշոտի (ԴԴ):

Հակառակ հիմունքի ստորադասներն ունեն նաև **չարահարական** կապակցություն, որի դեպքում ստորադասները գրեթե միշտ նախադաս են լինում՝

Չասեիր էլ՝ գլխի կրնկներ: Չզանգահարեիր էլ՝ կգայի:

Առաջադրանք 1: Որովհետև, որ, քանի որ, մանավանդ որ շաղկապներով կազմել երեքական պատճառի և հիմունքի պարագա բարդ ստորադասական նախադասություններ, նշելով դրանց իմաստային տարբերությունները և փոխակերպել:

Առաջադրանք 2: Կազմել մի քանի հիմունքի պարագա ստորադասական նախադասություններ և դրանք դարձնել հակառակ հիմունքի (գիջման):

ՀԱՏԿԱՆՇԱՑԻՆ (ՈՐԱԿԱԿԱՆ) ՊԱՐԱԳԱ ՍՏՈՐԱԴԱՍ ԿԱՌՈՒՑՑՆԵՐ

Բարդ ստորադասական պարագայական նախադասություններում լայն կիրառություն ունեն գերադասի ստորոգյալի **որակական** և **քանակական** հարաբերություններ ցույց տվող ստորադաս նախադասություններ, որոնք անվանվում են **ձևի** պարագա և **չափ** ու **քանակի** պարագա ստորադաս նախադասություններ: Հասկանալի է, որ նման անվանումները պայմանական են, որովհետև **ձևն** ու **քանակը** հատուկ են թանձրացական առարկաների, և ոչ մի գործողություն այդ հատկանիշներն ունենալ չի կարող. այս առումով էլ Ստեփանոս Պալասանյանը* իրավացիորեն այդ երկու տեսակը անվանում է

* Տե՛ս Ստ. Պալասանյան, Քերականություն հայերէն լեզուի, հտ. 2-րդ, Թիֆլիս, 1869, էջ 91:

որակական նախադասություններ և քննում է նույն անվան տակ: Ճիշտ է վարվում նաև պրոֆ. Ա. Պապոյանը, որ այդ երկու տեսակները քննում է որպես **Հատկանշային Հարաբերություններ** դրսևորող ստորադաս կառույցներ*:

Ձևի և չափ ու քանակի տերմինները լեզվաբանություն մեջ մտցրել է Մանուկ Աբեղյանը**, և ավանդաբար դրանք մտել են բուհական ու դպրոցական դասագրքեր, որոնց էլ ստիպված հետևում ենք մենք, որովհետև լեզվաբանություն մեջ տերմինների փոփոխությունը խրախուսելի չէ:

Ձևի պարագա

Ձևի պարագա ստորադաս նախադասությունը նկարագրական միջոցով ցույց է տալիս, թե ինչպես, ինչ եղանակով է կատարվում գերադասի գործողությունը, ինչ հատկանիշ ունի այդ գործողությունը: Այն գերադասի հետ կապակցվում է հետևյալ շաղկապներով ու հարաբերական դերանուններով՝ **որ, ինչպես, ինչպես որ, որպես, ոնց որ, կարծես թե, ասես թե, քան, քան թե**, իսկ գերադասում կարող է ունենալ **այնպես** հարաբերյալը, երբեմն՝ **այնպիսի ձևով, այն ձևով** կապակցությունները:

Փոխակերպվելիս դերբայական դարձվածում կարող են հանդես գալ **պես և նման** կապերը՝ Արևը մայր է մտնում, ինչպես մեռնող դյուցազնը (ԱԲ): → Արևը մայր է մտնում մեռնող դյուցազնի նման (պես):

Այս տիպի ստորադասները՝ մեծ մասամբ ունեն **Համեմատություն** իմաստային երանգներ՝

Ինչպես մի հեղեղ վեր կենար հանկարծ
Երկնքի մթնած ամպերից իջներ,
Ինչպես փոթորիկ՝ սաստիկ սրընթաց,
Գյուղից սլացան մի խումբ կտրիճներ (ՀԹ):

Երբեմն գետն այնպես էր փրփրում, հոխորտում, ասես ուզում էր ժայռերը ետ մղել (ՍԽ): «Աղջի՛կ ջան, այնպես ես երգում, ինչպես սոխակը կերգեր», - ասում է Ավետիք Իսահակյանը Գոհար Գասպարյանին (Հուշ.):

*Տե՛ս Ա. Պապոյան, **Ու Բաղիկյան**, Ժամանակակից Հայոց լեզվի շարահյուսություն, Եր., 2003, էջ 360:

**Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 639:

Կարող են ունենալ նաև հետևանքի իմաստային երանգ՝

Ախ, ասում են, թե այնպես, մոռացել ես ինձ այնպես,

Որ երբ անունս են տալիս, հազիվ միտքդ եմ գալիս (Ավ. Իս.):

Գործը այնպես աղավաղեցիք, որ հետո էլ ուղղել չի լինի:

Կարող են ունենալ նաև նպատակի իմաստային երանգներ՝

Քողարկել էին այնպես, որ յուրայիններն էլ մտտիկ տարածություն վրա դժվար նկատեին (ՀՔ): Այնպես էին թաքնվել, որ ոչ ոք չտեսներ:

Ձևի պարագա ստորադասների շարադասությունը նույնպես աղատ է, բայց ավելի շատ հանդիպում են առաջադասի օրինակներ՝ «Ոնց գործը սկսել ես, այնպես էլ պիտի ավարտես»: Առաջադասությունը գրեթե պարտադիր է շարահարական կապակցություն դեպքում՝ Այնպես ես խոսում՝ մարդ բան չի հասկանում: Ոնց որ ասես, այնպես էլ կանենք:

Չափի պարագա

Եթե ձևի պարագա ստորադասները ցույց են տալիս գերադասի գործողություն որակական հատկանիշ, ապա չափի պարագա ստորադասները քանակական հատկանիշ են մատնանշում: Սրանք գերադասի հետ կապակցվում են որ, մինչև, որքան, ինչքան, ինչ չափ, քանի չաղկապներով ու հարաբերական դերանուններով և գերադասի մեջ կարող են ունենալ այնքան, այնքանով, այն աստիճան և այլ հարաբերյալներ: Սրանք մեծ մասամբ ետադաս դիրքով են հանդես գալիս, որովհետև միշտ դրվում են հարաբերյալներից հետո՝ Այս անսպասելի դիմումը այն աստիճան հուզեց իշխանին, որ նրա քարեղեն աչքերում արցունքներ ցուցանին (Մ.): Նա այնքան էր հուսահատվել, որ բարեն էլ մոռացավ: Նա այնքան ուրախացավ ընկերոջ հաջողության համար, որքան կուրախանար իր համար: Այնքան կվճարես, որքան ուժդ պատի: Մենք էլ էինք նստում այնքան, մինչև քունը հաղթեր (ԱԲ):

Չափի պարագա ստորադասները կարող են լրացնել նաև գերադասի անվանաբայական ստորոգյալին, որի վերադիրը որևէ ածական է. այս դեպքում արտահայտվում է նաև հատկանշային իմաստ՝ Ներսում այնքան մութ էր, որ հազիվ էինք իրար տեսնում: Վերջերս փոթորիկներն այնքան սաստիկ են լինում, որ մարդիկ են քշում, տանում: Երեխան այնքան սրամիտ է, որ կարելի էր նրանից բան սովորել:

Այս տիպի նախադասությունները փոխակերպելիս մեծ մասամբ Հանդես է գալիս **չափ կապը**՝ Այնքան վճարիր, որքան ունես: → Վճարիր ունեցածիդ չափ:

**ԱՄԲՈՂՋ ԳԵՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆԸ ԼՐԱՑՆՈՂ ՍՏՈՐԱԴԱՍ
ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Մեր լեզվում քիչ չեն նաև այնպիսի բարդ ստորադասական կառույցներ, որոնցում ստորադաս նախադասությունները լրացնում են գերադասի ոչ թե մի անդամին, այլև պարզաբանում, բացահայտում են ամբողջ գերադաս նախադասությունը և արտահայտում են լրացական տարրեր իմաստային հարաբերություններ: Դրանք հիմնականում լինում են՝ **Հետևանքի և բաղդատություն (Համեմատություն)** ստորադաս նախադասություններ:

1. **Հետևանքի** ստորադաս նախադասությունը ցույց է տալիս այնպիսի գործողություն, եղելություն, որը չի կապվում գերադասի որևէ անդամի հետ, այլ բխում է ամբողջ գերադաս նախադասության արտահայտած իմաստից: Սրանք գերադասի հետ կապակցվում են **ուստի, երբեմն, հետևաբար, որ** շաղկապներով և որ հարաբերական դերանվան թեքված ձևերով: Այս տիպի ստորադասները մեծ մասամբ ունենում են **պատճառահետևանքային** հարաբերություն, դրա համար էլ Մ. Արեղյանը դրանք համարում է համադասական նախադասություններ, բայց սրանցում առկա է նաև ստորադասությունը: Ստորադասները գրեթե միշտ վերջադաս են: Բերենք օրինակներ կապակցական նշված միջոցներով՝ Նա իմ ազնվություն վրա չէր կասկածում, **ուստի և հայտնեց իր գաղտնիքը**: Մուշեղը բավականին խելոք ու առաջադեմ աշակերտ է, **հետևաբար պետք է ուշադիր լինել նրա նկատմամբ**: Ամբողջ ժողովուրդն է ոտքի կանգնել, **ուրեմն մի բան կա**: Պարենային ծրագիրը երաշխավորում է մթերքների առատություն, **այնպես որ պետք է անչեղորեն կենսագործել այն**: Այս տարի ձմեռը սաստիկ ու երկարատև եղավ, **որի պատճառով էլ անասունների գլխաքանակի անկում եղավ**: Երեխան այդ օրը «2»-ներ էր ստացել, **որի համար էլ պատժվեց**:

Դու քա՞նի գլուխ ունիս քո ուսին,

Որ վեր ես կենում, փախչում նրա հետ (ՀԹ):

2. Բաղդատական (համեմատություն) ստորադաս նախադասությունները լրացնում, պարզաբանում են ամբողջ գերադաս նախադասության միտքը՝ նրա գործողությունն ու եղելությունը համեմ-

մատելով մեկ այլ գործողություն ու եղելություն հետ: Սրանց կապակցություն հիմնական միջոցը **ինչպես** հարաբերական դերանունն է: Փոխակերպելիս կարող են հանդես գալ **պես** կամ **նման** կապերը:

– Իմ ժողովրդի արվեստը հզոր է ու հոյակապ, **ինչպես** Հայաստանի լեռները, այն վեհ է ու պարզ, **ինչպես** նրա արևաշող հովիտների դաշտավայրերը (Մ. Սարյան): Ինչպես բոլոր հայ ուսանողները, այնպես էլ Դերենիկ Դեմիրճյանը Շվեյցարիայում մասնակցեց Կոմիտասի երգչախմբին: Նա այնպես սեղմեց Անուշի ձեռքը, որ խեղճ կինը ցավից ճչաց (Շ.):

Ամբողջ գերադաս նախադասությունը լրացնող ստորադաս նախադասությունները ունեն նաև իմաստային տարբեր կիրառություններ (ձևի, չափի, որոշչային և այլն):

Ամփոփիչ վարժություններ պարագաների վերաբերյալ:

Առանձնացնել պարագա ստորադասները, դասակարգել, որոշել տեսակները և ցույց տալ իմաստային նրբերանգներն ու կապակցություն միջոցները:

Կոմիտասը գնաց Բեռլին, որպեսզի երաժշտական բարձրագույն կրթություն ստանար: Նա հաճախ սոված օրեր էր անցկացնում, որովհետև փողերի մեծ մասը տալիս էր նոտաների և երաժշտական գրականության: Այնտեղ, որտեղ առանց գրքի ու առանց գիտություն կարող են ապրել, այնտեղ գրողն ու գիտնականը չեն կարող ապրել (ՀԹ):

Հենց որ թագավորը բժշկվում է, նույն րոպեին ընկնում է կախարդանքը (ՀԹ): Մի հատիկ ծաղիկ է շոյում դեմքս, երբ մոտենում եմ գետնին (ԳԹ):

Թե պարտք եմ միայն, այս հողին եմ պարտք (ՀՍ): Եթե դու կամենում ես, Մերուժա՛ն, կրկին վայելել քո ընտանիքի և աշխարհի սերը, պետք է դառնաս չար ճանապարհից (ՐաՓ.): Բոլորը սիրում ու լսում էին նրան, թեև փշեր ունեցող խիստ մարդ էր:

Բախտի խորհրդով թողինք-հեռացանք,

Եվ հեռանալով այնքան մոտեցանք,

Որ բաժանվելու հնար չմնաց (ՀՍ):

Նա այնքան անգուլթ չէր, որ ոտնակոխ աներ յուր հայրենիքի բախտը (ՐաՓ.): Թեև նախապես չէինք պայմանավորվել, այնուամենայնիվ, հանդիպեցինք նույն տեղում:


Իսահակյանի հետ ծանոթացա մոտ 12 տարի անց, երբ նա թողեց արտասահմանը: Դա այն ժամանակ էր, երբ վարում էի Պետհրատի

գեղարվեստական գրականությունը բաժինը: Զանգահարների մեծ գրողին ու ասացի, թե ինչի համար եմ եկել: Ու մնացի... որովհետև ես էլ շատ բաներ էի ուզում իմանալ:

Մի օր էլ վարպետին հանդիպեցի փողոցում, հարցրեց, թե ինչո՞ւ չեմ երևում: Հետո այնքան զնացի-եկա, որ տանուտղա դարձա, ինչպես ասում էր տիկին Սոֆիկը: ... Եթե մի երեք-չորս ժամ մարդ մնար մոտը, այնքան բան կիմանար, որքան չէր իմացել ողջ կյանքում: Որքան մոտիկից ճանաչեցի նրան, ավելի լավ հասկացա բանաստեղծին, մարդուն, քաղաքացուն: Որտեղ էլ լինեք, նստում էր սեղանի գլխին, ավելի ճիշտ՝ որտեղ էլ նստեք, դառնում էր սեղանի գլուխը:

Մի օր էլ հարցրի, թե Կանտ կարդացել է: Ձեր կարդացել, որովհետև օտար լեզուներ չգիտեք: ... Վարպետի ազդեցությունը վրաս այնքան ուժեղ էր, որ ես ավելի մատչելի լեզվով սկսեցի գրել: (Ռ. Զարյան, «Հուշապատում», գիրք առաջին, Եր., 1975):

Գծապատկեր



**ԳԵՐԱԴԱՍԻ ԴԵՐԲԱՑԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՑՆՈՂ՝ ԿՈՂՄՆԱԿԻ
ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Թեև սակավ, բայց հանդիպում են նաև այնպիսի նախադասու-
թյուններ, որոնք լրացնում են ոչ թե գերադաս նախադասության
որևէ սովորական անդամի, այլ գերադասի կազմում եղած **ղերբայով**
արտահայտված որևէ անդամի: Օրինակ՝

1. Նա ինձ մոտ եկավ, իմանալով, որ շուտով հեռանալու եմ քա-
ղաքից:

2. Հարևանս եկավ ինձ խնդրելու, որ իր ծառերն էլ պատվաստեմ:

Այսպիսի նախադասությունները փոխակերպելիս առաջացած
ղերբայական դարձվածք գերադասում եղած լրացյալ ղերբայի հետ
կազմում է մի նոր ղերբայական դարձված՝ ավելի ծավալուն: Օրի-
նակ՝ առաջին նախադասության ստորադասը փոխակերպվում է վե-
րաբերմունքի խնդիր ղերբայական դարձվածի և միանում է
գերադասի **իմանալով ղերբային**, ստանում է հետևյալ տեսքը՝ «Նա
ինձ մոտ եկավ՝ իմանալով քաղաքից շուտով հեռանալուս մասին»:
Երկրորդ նախադասության ստորադաս մասը դառնում է նպատակի
պարագա ղերբայական դարձված և միանում է գերադասի **խնդրելու
ղերբային**՝ «Հարևանս եկավ ինձ խնդրելու իր ծառերը նույնպես
պատվաստելու համար»:

Բնականաբար, նման տիպի ստորադասները իրենց բնույթով են-
թակա, որոշիչ, հատկացուցիչ և բացահայտիչ լինել չեն կարող,
որովհետև լրացնում են միայն ղերբայների:

Սրանք բնույթով լինում են **խնդիրներ ու պարագաներ**: Բերենք
օրինակներ՝ Հավատացած լինելով, որ լրիվ ծանոթացել են գործին,
որոշեցի ստորագրությունս դնել (հանգման խնդիր): Զաքարը ծիծա-
ղելով նայեց կնոջը, ըստ երևույթին սպասելով, թե կհաստատի իր
ասածը (հանգում): Հավատացած լինելով, որ ընկերը իրեն կպաշտ-
պանի, որոշեց ստել (հիմունքի): Շամս Ազադին լավ իմանալով, որ
Ղորանին մենակ չէ, որոշեց հանդես գալ հրապարակային դասա-
խոսութեամբ (ԳՍ) → ուղիղ խնդիր: Նրա մի հայացքը բավական էր
գիտենալու համար, թե որտեղ ինչն էր պակաս (նպատ.): Եվ ես
հեռանում եմ, մտածելով, որ տեսուչը ճիշտ էր ասում: Ուրախ-ուրախ
վազում ենք առաջ, էլ չմտածելով, որ ժամանակից շուտ է գալիս
(վերաբերություն):

Հանդիպում են նաև այնպիսի կառույցներ, որտեղ նման տիպի ստորադասները լրացնում են գերադասում եղած ցույց տալ Հարադիր բային՝ Կառավարությունը վախեցավ բաց դատից, դրանով ցույց տալով, որ վախենում է բանակցություններից: Երեխան ցույց տալով, որ չի վախենում, մոտեցավ կրակին:

Հաճախ էլ գերադասի անորոշ դերբայի Հետ կարող է Հանդես գալ Համար կապը՝ Առնվազն տգետ պետք է լինել Հավատարու Համար, որ նրանց բոլոր ասածները ճիշտ են: Մարդուն լավ Հասկանալու Համար պետք է, որ Հետը մի քանի անգամ աղ ու Հաց կիսած լինես (Ժող.):

Առաջադրանք: Ինքներդ կազմեք, կամ գրականությունից ընտրեք նման տիպի մի քանի նախադասություններ:

ԲԱԶՄԱԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հատկապես գրավոր խոսքում, ոչ պակաս նաև բանավորում, ավելի լայն տարածում ունեն Յ և ավելի բազադրիչ նախադասություններից կազմված բարդությունները, որոնք Մ. Աբեղյանը անվանել է բ ա զ մ ա բ ար դ : Սրանք լինում են թե՛ Համադասական և թե՛ ստորադասական:

ՀԱՄԱԴԱՍ ԲԱԶՄԱԲԱՐԴ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

Համադասական բազմաբարդ նախադասությունները Հանդես են գալիս իրենց իմաստային բոլոր տեսակներով (միավորական, Հակադրական, տրոհական և մեկնական). դրանց կապակցություն միջոցներն էլ բազմազան են՝ շաղկապական, շարահարական և խառը տիպի: Պետք է ասել սակայն, որ ավելի տարածված են շարահարականները, որովհետև նույնիմաստ շաղկապների Համատեղ գործածությունը, եթե դրանք Հեղինակների կողմից վարպետորեն չեն գործածվում, խոսքը, Հատկապես բանաստեղծությունը, զրկում են գեղագիտական Հմայքից. այդ պատճառով էլ, Հատկապես բանաստեղծները, իրենց խոսքը մեծ մասամբ կառուցում են անշաղկապ կապակցություններով՝

Ուրիշ սրտի Համար կհավի խունկը,
Կբացվի շուշանը, վարդերի տունկը.
Գոգալը լաց կլինի, կընկնի արցունքը -
Գերեզմանիս մարմար քարին կմնա (ԵԶ):

Ու նատուտեցիւնք իրար դեմ առ դեմ
Սաստկութեամբ վառվող կրակի շուրջը,
Մեր առջև ձորն էր թշուած խավարչտին,
Մեր դեմ խաղում ձորերի շունչը (ՀԹ):

Հուրհրում է արևն ուրախ,
Գետն էր գնում քաղցրակակաչ,
Զորս դին՝ գարնան կարմիր ծիծաղ,
Վարդեր կարմիր, կարմիր կարկաչ (Ավ. Իս.):

Բանաստեղծները դիմում են կրկնադիր շաղկապների, երբ ցանկանում են հատուկ ընդգծել իրենց ասելիքը, ընթերցողի ուշադրությունը հրավիրել ինչ-որ վիճակի, իրադրություն վրա՝

Մի կապույտ-կապույտ գլխապտույտից
Օրորվում եմ ես...

Եվ շուռ է գալիս տիեզերքն աչքիս,

Եվ գլխիս վերև լեռներ են ննջում,

Եվ աստվածներ են ննջում ոտքիս տակ (ՀՍ):

Եվ պիտի ծեծեմ կուրծքս քարերին,

Եվ պիտի հեծեմ ցնորքս անրիծ,

Եվ պիտի գտնեմ սերը երկնային (Ավ. Իս.):

Ինչ խոսք, բազմաբարդ համադասականներում ամենատարածված կապակցությունը խառը տեսակն է, երբ անշաղկապ կառույցների հետ գործածվում են նաև համադասական շաղկապներ՝ «Սոնայի գերեզմանաքարի վրա մամուռ կա, գրերը վաղուց լցվել են հողով, քարը թեքվել է մի կողքի վրա և թաղվել հողի մեջ» (ԱԲ):

Առավոտս անցավ. առաջ եմ նայում -

Պարզ է հորիզոն, և արևն ոսկի,

Ինձ յուր անուշիկ ժպիտն է նվիրում (Հ. Հովհ.):

Բնականաբար, բարդ համադասականների կազմում եղած առանձին նախադասությունները կարող են ունենալ նաև իրենց ստորադաս նախադասություն(ներ), այս տեսակների մասին խոսելու ենք բազմաբարդ խառը տիպի կառույցներում:

ՍՏՈՐԱԴԱՍ ԲԱԶՄԱԲԱՐԴ ԿԱՌՈՒՑՑՆԵՐ

Բարդ ստորադասականների համակարգում պակաս հաճախադեպ չեն այնպիսի կառույցները, որոնցում առկա են ոչ թե երկու, այլ երեք և ավելի պարզ նախադասություններից կազմված բարդությունները,

սրանցում բաղադրիչ նախադասություններից մեկը անպայման լինում է **գերադաս**, իսկ մյուսները՝ **ստորադաս**, որոնք գերադասի նկատմամբ լինում են տարբեր հարաբերությունների մեջ՝ կատարելով նրա որևէ անդամի պաշտոնը. դրանք կարող են լրացնել գերադասի նույն անդամին և լինել **նույնաբնույթ**, կարող են լրացնել տարբեր անդամների և լինել **տարաբնույթ**, ինչպես նաև աստիճանական կարգով լրացնել իրար՝ լինելով ինչպես **նույնաբնույթ**, այնպես էլ **տարաբնույթ**: Այս առումով էլ նման կառույցները լինում են **համաստորադաս**, **տարաստորադաս** և **ենթաստորադաս**: Այս երեք տեսակներից բացի կան նաև **խառը տիպի բազմաբարդ** նախադասություններ, որոնցում կարող են լինել մեկից ավելի **գերադաս** և մի քանի տարբեր բնույթների **ստորադաս** նախադասություններ:

ՀԱՄԱՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սա բազմաբարդի այն տեսակն է, որի կազմում միևնույն **գերադաս** նախադասությունը ստորադասվում են երկու կամ ավելի **նույնաբնույթ**՝ նույն անդամի դեր կատարող, բայց իրար համադաս ստորադաս նախադասություններ, որոնք գերադասի հետ կապակցվում են միևնույն շաղկապներով կամ հարաբերական բառերով (կամ առանց դրանց՝ **չարահարուխյամբ**):

Համաստորադասի կազմությունն մեջ մտնող ստորադասները կարող են գերադասի ցանկացած անդամի դերը կատարել կամ լրացնել ցանկացած անդամի. ցույց տանք օրինակներով՝

Ենթակայի պաշտոն կատարող ստորադասների օրինակներ՝

Ամենից առաջ պետք է իմանալ, որ **էպիկուրը շատ սակավապես մարդ էր, որ գործ էր ածում ամենահասարակ կերակուր և խմում էր միայն ջուր (Փիլ. դաս.)**:

Թվում էր, որ **մինչև մահ կապրի այդ ժայռերի վրա, կցանի կորեկ, աչնանը կիջնի ձորերը, կհավաքի միրգ և ցախ (ԱԲ)**:

Ստորոգելի – Բախտավորությունն այն է կյանքում,

Որ դու պոկում ես մի հին մացառ,

Մի մարգ ես ջրում, տնկում մի ծառ

Եվ մի չար հողմի ուղին փակում (ՀՍ):

Որ ոչիչ – Նա ցույց տվեց մի առանձնատուն, որի պայծառ լույսերը կանչում էին մարդկանց, որը ավելի մարդաշատ էր լինում գիշերները (ԳԹ):

Հատկացուցիչ – Լրագրողը պատասխանում էր նրանց հարցերին, ովքեր քաղաքականությամբ էին զբաղվում, և ովքեր տնտեսական հարցեր էին տալիս:

Քացահայտիչ – Կոմիտասը մեկ անգամ էլ զնաց այնտեղ, ուր թողել էր իր մանկությունը, և ուր հանգչում էին իր ծնողները (տեղի պարագայի բացահայտիչ):

**Ուղիղ խնդիր – Ես ուզում եմ, որ կարապը ոչ թե մեռնի,
Որ կարապը ապրի երգով (ՀՄ):**

**Արդյոք գիտե՞ս դու, որ չեմ մոռացել,
Ամեն, ամեն օր կարոտում եմ ես,
Հոգիս թևավոր թռչուն է դարձել
Եվ հեռուներում որոնում է քեզ (ԳՄ):**

**Նաև՝ վերաբերություն – Նրանք ասում են, որ ես հոգնել եմ,
Որ ես չեղել եմ իմ ուղիղ ուղին,
Որ մեր պայքարը հոգիս լքել է,
Եվ ես ընտրել եմ ուրիշ ուղի (ԵԶ):**

Նպատակի պարագա –

**Շատ եմ թափառել ես ծանծաղուտներում,
Որ ամրանա հոգիս, որ թևերս մարզեմ,
Որ աննկուն մնամ գայլիք փորձանքներում
Եվ հողմերի դիմաց առազաստս պարզեմ (ԳԹ):**

Ժամանակի պարագա –

**Ինձ թաղեք, երբ տխուր մթնաշողն է իջնում,
Երբ լուռ եմ օրվա աղմուկները զվարթ,
Երբ շողերն են մեռնում, ծաղիկները՝ ննջում,
Երբ մթնում կորչում են լեռ ու արտ (ՎՏ):**

Եվ այսպես, կարելի է բերել նաև այլ բնույթի ստորադասներ:

Ինչպես երևում է բերված օրինակներից, համաստորադաս կառույցի մեջ մտնող ստորադաս նախադասությունները իրար հետ կարող են կապակցվել նաև համադասական շաղկապներով (բացի առաջինից): Բերված օրինակներում կան և համադասական շաղկապով կապակցման դեպքեր: Ասենք, որ և-ից բացի կարող են կապակցվել նաև իսկ, կամ, բայց, սակայն և այլ համադասական շաղկապներով. բերենք մեկական օրինակ. Ուսուցիչն հայտարարեց, որ շաբաթ օրը դաս ենք անելու, իսկ կիրակի օրը մասնակցելու ենք շաբաթօրյակին: Դասողեկն ասել էր, որ կամ դասի պիտի գնամ, կամ

Հիվանդութեան թուղթ ներկայացնեմ: Երեխան ասաց, որ Հիվանդ է, բայց պետք է զնա դպրոց:

Ինչպես ասվել է, այս տիպի ստորադասները կարող են կապակցվել նաև շարահարությունք, բացի առաջին ստորադասից՝

Իմ սիրտն այնտեղ է,

Ուր եղջերուն է ոստնում քերծից քերծ,

Արծիվը ճախրում վիթերի վրա (Ա.վ. Իս.):

Զբոսաշրջիկները դուրս եկան պատմական հուշարձանից, երբ անձրևն արդեն դադարել էր, օդը լցվել էր անուշ բուրմունքով, արևն արդեն փայլում էր:

Ձեն բացատվում նաև առաջին ստորադասի անշաղկապ կապակցության դեպքեր՝

Մենք չգիտեինք՝ այդ օրը ինչ պետք է անեինք, ինչ էր մեզ հանձնարարված:

Համաստորադաս կառույցներում ստորադասը գրեթե միշտ վերջադաս է՝ «Ես երջանիկ եմ, որ Դուք գոյություն ունեք աշխարհում, որ կա մեր նահապետական ազգանունը կրող զորավար Հովհաննեսը» (ՀՔ):

Քիչ չեն նաև միջադասի և նախադասի դեպքերը: Բերենք մեկական օրինակ.


Վաղ գարնանը, երբ անտառում դեռ ձյուն կա, բայց արևն արդեն տաքացնում է, հաճախ լսվում է փայտփորիկի ճարճատյունը (Դասագրքից):

Երբ որ բացվեն դռներն հուտո,


Երբ մեր երկրեն փախ տա ձմեռ...

Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա... (Ն. Ռուսինյան) – նախադաս:

Համաստորադասական կառույցների գծապատկերը.



Առաջադրանք: Կազմել նախադասություններ ըստ հետևյալ պահանջների:



ՏԱՐԱՏՏՈՐԱԴԱՍ (ԱՆՀԱՄԱՍԵՌ) ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եթե համաստորադասի ղեկքում ստորադաս նախադասությունները նույնաբնույթ են և լրացնում են գերադասի մի անդամին, ապա տարաբնույթ ստորադասություն մեջ միևնույն գերադաս նախադասությունը ստորադասվում են տարբեր ստորադասական նախադասություններ, որոնք սակայն լրացնում են գերադասի տարբեր անդամների կամ միևնույն անդամին, բայց տարբեր իմաստներով, այսինքն՝ տարաբնույթ են. դա լավ է երևում հետևյալ օրինակում՝ «Բեչիրը, որ ձգված էր յուր զարդարուն վրանում, երբ Աշոտ Երկաթի գալուստն իմացավ, հրամայեց, որ չբաղկի խմբեր զան և վրանը պատեն» (Մ.):

Այստեղ ունենք հինգ նախադասություն, որտեղ գերադասն է «Բեչիրը հրամայեց» մյուս նախադասությունը՝ «որ ձգված էր յուր զարդարուն վրանում» լրացնում է գերադասի ենթակային և բնույթով որ ոչ իչ է (ո՞ր Բեչիրը), հաջորդ երկու նախադասությունները լրացնում են հրամայեց ստորոգյալի միտքը՝ ե՞րբ հրամայեց և ի՞նչ հրամայեց (ժամանակի պարագա և ուղիղ խնդիր): Փոխակերպված կլինի՝

Յուր զարդարուն վրանում ձգված Բեչիրը, Աշոտ Երկաթի գա-


լուստն իմանալով, հրամայեց չբաղիր խմբերի գալն ու վրան պատելը (կամ պատելու մասին):

Իսկ հետևյալ նախադասության մեջ երկու ստորադասներն էլ որոշիչ են՝ «Հայ կանայք, որ համեստության մարմնացում են, պատերազմի դաշտում կռվում էին այն մոր նման, որ որդուն փրկելու համար պատրաստ էր կուրծքը դեմ անել սրին»:

Այստեղ գերադասն է՝ «Հայ կանայք պատերազմի դաշտում կռվում էին այն մոր նման», որին լրացնում են երկու որոշիչ ստորադասներ. դրանցից մեկը լրացնում է Հայ կանայք ենթակային, իսկ մյուսը՝ մոր համեմատության խնդրին:

Փոխակերպված՝ Համեստության մարմնացում Հայ կանայք պատերազմի դաշտում կռվում էին որդուն փրկելու համար կուրծքը սրին դեմ անելու պատրաստ մոր նման:

Տարաստորադաս նախադասության զծապատկերը հետևյալն է՝



Առաջադրանք: Ինքներդ որոշեք հետևյալ նախադասությունների բնույթները և կազմեք դրանց գծապատկերները:

1. Երբ անտառը շատ մեղմ փսփսում էր իր հեքիաթը, թվում էր, թե նրա հաստաբեստ սյուների տակ շրջում է անտառների մայրը (ԴԴ):

2. Երբ պապս պատվիրեց պոչը ծաղիկ երինջին գիչերը կուշտ խոտ տալ, մենք հասկացանք, որ նա յուղ ու պանրի հետ քաղաք է տանելու նաև պոչը ծաղիկ երինջին (ԱԲ):

3. Կապույտ ծուխը, որ բարձրանում էր խորքից, նշան էր, որ այնտեղ տուն կա, ուր բնակիչներ են ապրում (ՍԶ):

4. Առաջին բանը, որ տարօրինակ թվաց նրան այն էր, որ դեռևս վառվում էր լամպը:

5. Իսկ մյուս առավոտ, երբ այդ քարին հասան, և ինքն առաջարկեց նորից ձի նստել, Սոնան հայտնեց, որ մայրը հանդիմանել է իրեն և խստիվ պատվիրել՝ առանձին նստել (ԱԲ):

6. Եվ երբ Մթնածոր անունն են տալիս, երևում է, որ ատամներն ափելի է դուրս գցում (ԱԲ):

7. Նա, ով թեկուզ մեկ անգամ թերթել է հայ ժողովրդի պատմության էջերը, կիմանա, թե ինչու՞մն է այդ հեքիաթի գաղտնիքը (ՀՔ):


8. Եթե հարցնելու լինեք, թե ինձ ամենից շատ ի՞նչն է դուր եկել ձեր արևավառ մայրաքաղաքում, ես կասեմ՝ ձեր ժողովրդի ժպիտն ու ջերմ ընդունելությունը (Ռոքուել Քենտ):

9. Երբ Լաո-Մարգարը պառկում էր գերեզմանների մոտ՝ բարդիների տակ, այնպես էր թվում, թե ինքն էլ փչակում մի գերան է՝ չորացած բարդի (ԱԲ):

ԵՆԹԱՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սա բազմաբաղադրիչ բարդություն այն տեսակն է, որն ունի մեկ գերադաս նախադասություն, որին հաջորդաբար ստորադասվում էր մի քանի երկրորդականներ, որոնք կարող են լինել ինչպես միաբնույթ, այնպես էլ տարաբնույթ: Ահա միաբնույթի մի օրինակ՝ «Կարդացի՞նք այն գիրքը, որը գրել է մեր դասախոսը, որն աշխատում է մեր համալսարանում, որը հիմնադրվել է 1919 թվականին Գյումրիում, որը մշակույթի ու արհեստների հնագույն օրրան է»: Ինչպես տեսնում ենք, ստացվեց բարդություն մի շղթա, որտեղ միայն առաջին ստորադասն է անմիջապես լրացնում գերադասին, սրան էլ՝ երկրորդ ստորադասը, սրան էլ՝ երրորդը, որին էլ՝ չորրորդը, և ստացվում է

այնպես, որ յուրաքանչյուր հաջորդի համար իր նախորդը դառնում է նրա համար գերադաս: Բերված բարդություն մեջ բոլոր ստորադասները նույնաբնույթ են՝ որոշիչ: Սակայն քիչ չեն նաև այն կառույցները, որոնցում ստորադասները տարբեր լրացումների դեր են կատարում, ուրեմն՝ տարաբնույթ են: Ահա այդպիսի օրինակներից մեկը՝ «Եվ Իսահակը տեսնում էր, որ կինը թաշկինակի տակից գաղտուկ դիտում էր բոլորին, որ իմանա, թե ինչ ազդեցություն կունենա իր ողբը շրջապատողների ու մանավանդ այն եղբոր վրա, որի ձեռքում էր հոր կտակը» (Շ.): Ահա այս նախադասությունների գծապատկերը և ստորադասների բնույթը՝



Ենթաստորադաս բարդությունների փոխակերպումը պարզի այնքան էլ հեշտ չէ, դրա համար էլ խորհուրդ է տրվում փոխակերպումը սկսել վերջից՝ ոչ միշտ:

Պետք է խուսափել ամեն կարգի բարդությունները փոխակերպելուց, որովհետև դրանից հաճախ ստացվում է ճապաղ ու անհարթ, հայերենին անհարազատ նախադասություն: Կան շատ բարդություններ էլ, որոնք չեն փոխակերպվում (այս մասին՝ հետո):

Այնուամենայնիվ, փոխակերպենք վերևում բերված նախադաս-

սուժյունը՝ «Եվ Իսահակը տեսնում էր կնոջ՝ Թաշկինակի տակից գաղտուկ բոլորին դիտելը իր ողբի՝ շրջապատողների ու մանավանդ Հոր կտակը ձեռքում ունեցող եղբոր վրա ունեցած ազդեցությունը իմանալու համար»:

Առաջադրանք: Որոշել ստորադասների բնույթը և փոխակերպել՝

1. Նոր էր Վարդանը նախարարների հետ սենյակից դուրս եկել, երբ միջանցքում նկատեց, որ դեմը ելավ մի գառամյալ կին, որը իր մայրն էր՝ Մեծ Տիկինը (ԳԳ):

2. Շուտով նա լսեց, որ վերադառնում են իր սպասավորները, որոնք ինչ-որ եռանդով վիճում էին, որոնց ձայնը թնդում էր Մոնտ-րեի քառուղու վրա (Բալզակ):

3. Երբ հնագետը բուրգի վրայից կանչեց, թե ինքը գտել է Բակուր իշխանի դամբարանը, նկարիչը չհասկացավ նրա խոսքը (ԱԲ):

4. Ու մենք հասկանում էինք, որ կա մի մարդ, որ եթե մտքին դնի, ստույգ լուր կբերի մեր Եզոբ քեռուց, որի տեղը հայտնի չէր (ԱԲ):

5. Գյուղացուն թվաց, թե ձիու թամբին կապած պայուսակներում հենց այն գանձերն են, որոնք հարյուր տարիներ մնացել են քարի տակ, որի վրա ինքը շարունակ նստել է, երբ բերդի ավերակներում պահել է այժ ու ոչխար (ԱԲ):

6. Սամվելի մոր դեմքը փայլեց ուրախությունից, երբ իմացավ, որ Որմիզգուլստը, որին ինքը տանել չէր կարող, ճաչին ներկա չի լինի, որովհետև ուրիշ գործերով է զբաղված (Բաֆ.):

7. Սամվելը նստած էր մի գեղեցիկ նծույզի վրա, որը այդ առավոտ էր ստացել հորից, որը վերջերս էր սիրալիբ դարձել, որովհետև որդու հետ խորհրդակցելու նպատակ ուներ (Բաֆ.):

8. Ամառանոցում բոլորը ճանաչում էին այդ բարակ, բարձրահասակ և փոքրիկ ճերմակ մորուքով ծերունուն, գիտեին, որ նա ապրում է դպրոցի մոտ՝ կնոջ ու փոքրիկ մի աղջկա հետ, որը իր թոռն էր (Ավ. Իս.):

9. Լառ-Մարգարը չասաց, թե ինչու արցունքներ երևացին աչքերին, երբ առաջին անգամ գնացքի պատուհանից Արարատի ձյունոտ գագաթը տեսավ, որին վաղուց էր փափագել (ԱԲ):

10. Գովերգում եմ այն խարույկը,

Որ բնավ չի մտահոգվում,

Թե իր մահն է իր իսկ բոցը (ՊՍ):

11. Երբ լսես, որ մի լավ բան եմ արել, իմացիր, որ դա կլինի հավերժացումը մեր այս բարեկամության ուխտի (ՀՔ):

Փոխակերպենք վերջին երկու նախադասությունները՝

Գովերգում են իր իսկ բոցի իր մահով բնավ չմտահոգվող խա-
րույկը:

Մի լավ բան անելս լսելիս իմացիր դրա՝ մեր այս բարեկամություն
ուխտի հավերժացում լինելը:


ԽԱՌՆ ՏԻՊԻ ԲԱԶՄԱԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բազմաբարդ նախադասությունների համակարգում, հանդիպում են նաև այնպիսի կառույցներ, որտեղ մեկ գերադասի փոխարեն կարող են հանդես գալ երկու կամ ավելի գերադասներ, ինչպես նաև նույն բարդություն մեջ խառը ձևով հանդես գալ և՛ համաստորադաս և՛ տարաստորադաս, և՛ ենթաստորադաս, կապակցու-
թյուններ, ինչպես նաև երկու կամ ավելի գերադասներին լրացնեն թե՛ նույնաբնույթ և թե՛ տարաբնույթ ստորադասներ. դրա համար էլ նման կառույցները կոչվում են խառը տիպի բազմաբարդ նախա-
դասություններ:

Քննենք այս բազմաթիվ տեսակներից մի քանիսը.


1. Երբ երկու կամ ավելի գերադաս համադաս նախադասու-
թյունների լրացնում են մեկ կամ մի քանի ստորադասներ: Բազ-
մաբարդի այս տեսակը Ա. Պապոյանը անվանում է հանրաստորա-
դասությունմբ կապակցություններ*:

Ոչխարը մնացել էր հանդում, հո-
վիվները սաստիկ մրսել էին, որով-
հետև գիշերը սաստիկ ձյուն էր եկել:



Երբ որ պապից պատասխան չէր ստանում, Թաթոսիկը խոռովկան էր դառնում, չրթունքը կախում, նայում սայլի վրայից գլխիվայր կախված հավերին (ԱԲ):


(Այստեղ ստորադասը նախադաս գիրքում է):




* Տե՛ս Ա. Պապոյան, Ս. Բաղդկյան, Ժամանակակից Հայոց լեզվի շարահյուսու-
թյուն, Եր., 2003, էջ 396:

2. Բերենք խառը տիպի բազմաբարդի այլ օրինակներ.


Հաճախ էինք կուսնում թամբից, գրկում ձիու վիզը, որպեսզի կախ ընկած ճյուղերը չքերծեին մեր դեմքը, և փչերը չծակծկեին (ԱԲ):



Ինչպես չի սիրում անտառը նրան, ինչպես է ծաղրում, քրքջում վրան, ինչ է թե չի կարողանում թզուկին իրեն ենթարկել, ինչ է թե չեն կարողանում սրան բանտարկել:



Առաջադրանք: Գրել նախադասություններ հետևյալ գծապատկերներով.



ՊԱՐԲԵՐՈՒՅԹ*

Պարբերույթը բազմաբաղադրիչ բարդ նախադասութեան յուրահատուկ կառույց է, որը հատուկ է հանդիսավոր ու ավելի բարձր ոճերին, հատկապես չափածոյին. այն արտաբերվում է հանդիսավոր հնչերանգով և առանձնահատուկ շեշտադրութեամբ: Այն կազմված է հանդիպակադիր 2 զուգադիր կամ հակադիր մասերից. երկու մասերն էլ փոխալայմանավորվածութեան մեջ են և ներկայացնում են մի կուռ ամբողջութուն: Կառույցի առաջին մասը պայմանավորված է երկրորդ մասով, որը հանդես է գալիս որպես առաջինի լրացում՝ պարզաբանում, և արտաբերվում է դադարով:

Պարբերույթի առաջին մասը, որը նրա հիմնամասն է, բարդ կառույց է՝ բարդութունը բարդութեան մեջ: Հիմնամասի մեջ մտնում են հիմնականում նույնաբնույթ բաղադրիչ նախադասութունները՝ հետզհետե լրացնելով ու սրելով մտային լարվածությունը: Երկրորդ մասը, որը սովորաբար պարզ կառույց է (կարող է լինել նաև բարդ), եզրափակում է պարբերույթը, բացատրում, մեկնաբանում է հեղինակի միտքը, նպատակը: Դա շատ լավ է երևում Նահապետ Ռուսինյանի «Կիլիկիա» բանաստեղծութեան մեջ (երաժշտ. Գ. Երանյան), որտեղ երկրորդ՝ եզրափակիչ մասում շատ որոշակիորեն երևում է, թե երբ է բանաստեղծը ցանկանում տեսնել իր Կիլիկիան՝

Երբ որ բացվեն դռներն հուսո,
Երբ մեր երկրեն փախ տա ձմեռ,
Չքնաղ երկիրն մեր Արմենիո
Երբ փայլե յուր քաղցրիկ օրեր,
Երբ որ ծիծառն յուր բույն դառնա,
Երբ որ ծառերն հագնին տերև, ||
Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա՝
Աշխարհ, որ ինձ ետուր արև:

* Պարբերույթը չպետք է շփոթել պարբերութեան հետ, որը նշանակում է տողագլուխ, նոր տողի սկիզբ:

Բանաստեղծության առաջին մասից շատ լավ երևում է Ռուսինյանի՝ իր հայրենիքը տեսնել ցանկանալու ժամանակը՝ երբ որ..., երբ որ..., երբ որ...: Ինչպես հստակորեն երևում է, պարբերությի առաջին մասը կառուցված է իրար համադր ժամանակի պարագաներից կազմված ստորադաս նախադասություններով:

Պարբերությի առաջին և երկրորդ մասերի միջև եղած հնչերանգային դադարը գրավոր խոսքում նշվում է երկու ուղղահայաց զուգահեռ գծերով՝ ||

Պարբերությի լինում է թե՛ համադասական և թե՛ ստորադասական կառույց:

Վերևում բերեցինք ստորադասականի դասական օրինակներից մեկը:

Ստորադասականի տիպիկ օրինակ է նաև Հ. Շիրազի քնարերգությունից բերված հետևյալ հատվածը, որտեղ եզրափակիչ մասը հիմնամասից առաջ է դրված, իսկ հիմնամասը նպատակի պարագաների մի ամբողջ շղթա է՝ թե ինչո՞ւ է բանաստեղծը մի խիստ հրովարտակ արձակում՝

... Եվ հրովարտակ արձակեմ մի խիստ, ||
Որ աղբյուրները հավերժ կարկաչեն,
Որ ծաղկեն լեռներն իմ արևահար,
Որ ծով դաշտերը հավերժ կանաչեն,
Որ գարունները գան ու չգնան,
Որ հավերժական զմրուխտ դրախտով,
Որ բեկվի իմ դեմ խորհուրդը մահվան,
Որ մարդը ցնծա հավերժի բախտով:

Ահա մի հատված Շիրազի մի այլ բանաստեղծությունից, որտեղ հիմնամասը կազմված է հակառակ հիմունքի պարագա ստորադասների շղթայից՝

...Թեկուզ ընկնեմ ճանկը դահճի,
Թեկուզ հասնեմ մղձավանջի,
Թեկուզ Հուդան ինձ էլ խաչի,
Թեկուզ դժոխքն ինքը կանչի,
Թեկուզ ցերբերն էլ ինձ տանջի,
Թեկուզ ինձ մահն հող հորջորջի,
Թեկուզ միտքս անհետ կորչի,
Թեկուզ մի՞նում չիրմաքունջի

Դառնամ փոշի մահամունջի,
Թեկուզ ճանկում օձ-կարիճի
Վերջին փոշուս շունչն էլ թռչի,
Ցնդեմ նման մի անշունչի,- ||
Ես Մասիսից չեմ նահանջի...

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ թե՛ գրավոր և թե՛ բանավոր խոսքում, հատկապես պոեզիայում, ավելի մեծ տարածում ունեն պարբերությի ստորադասական տեսակները, թեև քիչ չեն համադասականները, հանդիպում են նաև այս երկուսի խոտր տեսակները, որոնց մասին խոսվելու է ստորև:

Համադասական պարբերությիներ – Պարբերությի այս տեսակում նույն օրենքներն են գործում, միայն թե այստեղ հիմնամասի շղթայի մեջ մտնող նախադասությունները համարժեք են իրար, դրանք իրար հետ կարող են կապակցվել ինչպես համադասական շաղկապներով, այնպես էլ՝ շարահարությամբ: Օրինակներ՝

Եվ հնչում է երգը, և գնում է երթը,
Եվ ձուլվում են բազում ձայներ, ||
Ու թվում է՝ օդում խնդություն է հորդում (ԳՍ):
Դու էլ, սի՛րտ իմ, քո երգերով
Բարձր եղիր և իմաստուն,
Բարձր մնա երազներով՝ ||
Ինչքան բարձր, այնքան սիրուն (ՀԾ):

Համադասականի ևս երկու օրինակ՝

Եվ թնդում է երգը, և՛ հորդում է գինին, և՛ ճախրում են զույգերը,
և՛ զվարճանում են մարդիկ, և՛ ջերմ է մթնոլորտը՝ || Հարսանիք է չքեղ դահլիճում:

– Ո՞րն է, բարո՛, մեր հայրենիք. ||
էն, որ ունի բարձր երկինք,
էն, որ ունի ամպ ու արև՝
Յուր թագարժան գլխու վերև,
էն, որն ունի լեռն Արագած՝
Հայ թագուհու գմբուխտ հագած... (ՀԾ):

Որպես տարաբնույթի օրինակ բերվում են նաև այնպիսի պարզ նախադասություններ, որոնցում առկա են համազոր բառակապակցություններ, օրինակ՝

Մանուշակներ ոտքերիս ու շուշաններ ձեռքերիս,
Ու վարդերը այտերիս, ու գարունը կրծքիս տակ,

Ու երկիրնքը հոգուս մեջ, ու արևը աչքերիս,
Ուր աղբյուրները լեզվիս՝ || սարից իջա ես քաղաք (ՀԾ):

Ինչպես սովորական խառը տիպի բազմաբարդ նախադասու-
թյուններում, այնպես էլ պարբերույթի հիմնամասը կարող է
կազմված լինել մեկից ավելի գերադաս նախադասություններից:
Ահա մի օրինակ՝

Եվ երբ հուշ դառնա այսօրվա ներկան,
Ու դարը այն մեծ փոխվի երազի,
Եվ դու, իմ հեռու, գալի՛ք բարեկամ,
Կարդալու լինես իմ կյանքի մասին,- ||
Իմացիր, որ մեր օրերի խորքում
Ես էլ եմ եղել կրքերի գերի,-
Հասկացի՛ր սրտիս հույզերը հորդուն
Եվ պայծառ նայիր անցած պատկերիս... (ԵԶ):

Առաջադրանք 1: Գեղարվեստական գրականությունից, հատկա-
պես պոեզիայից ընտրել պարբերույթներ:

Առաջադրանք 2: Ցույց տվեք պարբերույթի և պարբերության
տարբերությունը:

ԲԱՐԴ ՄՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱՍԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՓՈՆԱԿԵՐՊՈՒՄԸ ՊԱՐՁԻ

Լեզվի հնարավորություններն այնպիսին են, որ միևնույն միտքը
կարելի է արտահայտել թե՛ բարդ և թե՛ պարզ նախադասություն-
ներով: Օրինակ, Գևորգ էմինի հետևյալ բարդ նախադասությունը՝
«Ես այն թափառական պանդուխտն եմ, որը իր տունն է չինել ու
կորցրել աշխարհի բոլոր երկրներում», կարելի է արտահայտել նաև
պարզ նախադասությամբ՝ «Աշխարհի բոլոր երկրներում իր տունը
չինած և կորցրած թափառական պանդուխտն եմ ես»: Բացի ոճական
տարբերությունից նույն միտքն արտահայտող այս երկու նախադա-
սություններում նկատելի են նաև մի քանի տարբերություններ. նախ
որ բարդի մեջ ունենք երկու ստորոգում, իսկ փոխակերպվածում՝
մեկը, ապա՝ բարդի կազմում կան այն հարաբերյալը և որը հա-
րաբերականը, որոնք պարզում չկան, ինչպես նաև բարդ նախա-
դասության ստորադաս բաղադրիչի չինել է ու կորցրել բայական՝
պարզ, ստորոգյալները պարզի մեջ վերածվել են չինած և կորցրած
դերբայների: Ուրեմն կարելի է ասել, որ բարդ նախադասություն-
ներից շատերը կարելի է փոխակերպել պարզի, իհարկե կան նաև

չփոխակերպվող բարդություններ, որոնց մասին խոսվելու է փոխակերպվողներից հետո:

Նշենք, թե հիմնականում ինչ փոփոխություններ են կատարվում բարդ ստորադասական նախադասությունը պարզի փոխակերպելու դեպքում:

1. Բարդի կազմից դուրս են գալիս կապակցություն միջոցները՝ **չաղկապներն ու հարաբերական դերանունները**՝ ստորադաս նախադասություն միջից, իսկ գերադաս նախադասություն միջից դուրս են գալիս հարաբերյալները. դա շատ լավ նկատելի է վերևում բերված փոխակերպված նախադասության մեջ:

Փոխակերպենք չաղկապներով կապակցված բարդության օրինակներ՝

Զիմացանք, թե ինչ էր տեղի ունեցել: → Զիմացանք տեղի ունեցածը: Որպեսզի չուշանայինք համերգից, տանից շուտ դուրս եկանք: → Համերգից չուշանալու համար... Հենց որ տեղ հասանք, անմիջապես սկսեցինք նկարահանումները: → Տեղ հասնելուն պես... Մտածում էինք, թե ինչով պետք է ետ գնանք: → Մտածում էինք ետ գնալու մասին:

Ինչպես դժվար չէ նկատել, փոխակերպելիս պարզ նախադասություն մեջ հաճախ հանդես են գալիս են համապատասխան իմաստներ ունեցող կապեր կամ կապական բառեր: Բերված նախադասություններում ավելացել են **համար, պես, մասին** կապերը:

2. Փոխակերպելիս ստորադաս նախադասություն **պարզ՝ բայական, ստորոգյալը** վերածվում է որևէ **անկախ դերբայի**, իսկ եթե այդ դերբայն ունի իրեն լրացնող անդամներ, առաջանում է **դերբայական դարձված**, որը նախադասություն մեկ անդամի դեր է կատարում. դրա կազմում եղած դերբայը կոչվում է **գերադաս** անդամ, իսկ դերբային լրացնողները, այդ թվում նաև ենթականու ստորոգելին կոչվում են **կողմնակի** անդամներ (Այս մասին ավելի մանրամասն տե՛ս «Դերբայական դարձված և կողմնակի անդամներ» վերնագրի տակ, էջ 175): Այստեղ բավարարվենք մեկ օրինակով՝

«Որ իրենց երիտասարդ տղան արտասահմանից շուտ վերադարձավ տուն, շատ ուրախացրեց տարեց ծնողներին»: Փոխակերպված՝ «Իրենց երիտասարդ տղայի՝ արտասահմանից շուտ տուն վերադառնալը շատ ուրախացրեց տարեց ծնողներին»: Շատ որոշակի երևում է, որ նախադասության կազմից դուրս է եկել որ չաղկապը և ստորադաս նախադասություն **վերադարձավ** պարզ ստորոգյալը

վերածվել է **անորոշ դերբայի՝** դրված ուղղական հոլովով: Ամբողջ դերբայական դարձվածը՝ «իրենց երիտասարդ տղայի՝ արտասահմանից շուտ տուն վերադառնալը» ենթակայի դեր է կատարել, որի գերադաս անդամը **վերադառնալն է**, իսկ սրա հետ կապված անդամները կոչվում են կողմնակի: Այսպես՝ **տղայի** կողմնակի ենթական է, **արտասահմանից** և **տուն** լրացումները կողմնակի տեղի պարագաներ են, իսկ **շուտ**–ը կողմնակի ժամանակի պարագա է. **իրենց** և **երիտասարդ** լրացումները կողմնակի լինել չեն կարող, որովհետև կապված են ոչ թե **դերբայի**, այլ **տղա** գոյականի հետ. հայտնի է, որ գոյականական անդամների լրացումները՝ **որոշիչ, հատկացուցիչ և բացահայտիչ**, կողմնակի չեն լինում:

3. Փոխակերպման երրորդ առանձնահատկությունն այն է, որ եթե ստորադաս նախադասության ստորոգյալը ոչ թե խոնարհված բայով է արտահայտված, այլ **անվանաբայական է՝** կազմված որևէ այլ խոսքի մասից՝ **ստորոգելից և հանգույցից՝** (օժանդակ բայ կամ վերացական բայ), ստորոգելին մնում է, իսկ հանգույցը կամ լրիվ դուրս է գալիս կամ էլ վերածվում է նույն բայի համապատասխան դերբայի՝ Փոքրիկ Շուբերտը, որ հռչակավոր դաշնակահար էր, զարմացրել էր բոլորին: → Հռչակավոր դաշնակահար փոքրիկ Շուբերտը զարմացրել էր բոլորին: Որ որդին հայտնի դաշնակահար կդառնա, հայրը հավատում էր դրան: → Հայրը հավատում էր որդու՝ հայտնի դաշնակահար դառնալուն: Բոլորը գիտեին, որ նա հայտնի դաշնակահար է: → Բոլորը գիտեին նրա՝ հայտնի դաշնակահար լինելը:

Ինչպես որ բարդ ստորադասական նախադասությունները կարելի է վերածել պարզի, այնպես էլ պարզերը կարելի է փոխակերպել բարդի. այս դեպքում կատարվում են վերը նշվածի հակառակ փոփոխությունները: Օրինակ՝ «Մի օր էլ վարպետ Մարգարը տեսավ զինկոմի ու գյուղապետի իրենց տուն գալը» → Մի օր էլ վարպետ Մարգարը տեսավ, որ զինկոմն ու գյուղապետը իրենց տուն են գալիս:

Գյուղը ջրի տակ մնալու մասին գիտեին գյուղացիները: → Գյուղացիները գիտեին, որ գյուղը ջրի տակ է մնալու:

Գարնան կանաչ դոները բացվելուց հետո յարս էլ գնաց յայլանները Բինգյոլի: → Երբ բաց եղան գարնան կանաչ դոները, յարս էլ գնաց յայլանները Բինգյոլի (Ավ. Իս.):

Թեև բարդ ստորադասական նախադասության փոխակերպումը պարզի և հակառակը հաճախ ենք կատարում շարահյուսական մակարդակում, բայց դա չի նշանակում, թե մեկը մյուսի արդյունքն է.

պարզապես, դրանք չարահյուսական համանիշներ են և լեզվում գործածվում են ոճական նպատակներով: Օրինակ՝ «Ով ցանկանում է, թող նա էլ նվագի»: և «Թող նվագի ցանկացողը»: Պարզ և բարդ նախադասությունները մարդու ուղեղում առաջանում են իրարից անկախ, մանավանդ, որ լեզվում կան նաև այնպիսի նախադասություններ, որոնք չեն փոխակերպվում:

ԶՓՈՆԱԿԵՐՊՎՈՂ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լեզվում կան զգալի թվով բարդ ստորադասական նախադասություններ, որոնք չեն փոխակերպվում պարզի, ինչպես նաև՝ պարզ նախադասություններ ու բառակապակցություններ, որոնք չեն փոխակերպվում բարդի: Մի-մի օրինակ դրանցից.

«Մայրը հանդիմանում է աղջկան՝ ինչու չես լվացել կերածդ ամանները»: կերածը ամանները բառակապակցությունը եթե փոխարինենք բարդով, կստացվի այն ամանները, որ կերել ես, կառաջանա տրամաբանական սխալ, կստացվի, որ աղջիկը ամաններն է կերել: Ուրեմն՝ անփոխակերպելի է:

Այդպես էլ՝ հնարավոր չէ փոխակերպել հետևյալ նախադասությունը՝

«Սա այն դասախոսն է, որից շատ բան ենք սովորել». ստորադասի բնույթը որոշիչ է, բայց հնարավոր չէ այն փոխակերպել դերբայական դարձվածով՝ **որոշիչ:**

Բարդ ստորադասականները չեն փոխակերպվում հետևյալ դեպքերում՝

1. Երբ ստորադասը գերադասի հետ կապակցվում է որ, ինչ, ով հարաբերական դերանունների **թեքված** ձևերով (բացի ուղիղ խնդիր բնույթի ստորադասներից՝ **Հետո վերցրու նրան, ում(որին) վստահում ես** → **Հետո վերցրու վստահվածին**):

Չփոխակերպվողներ՝ Սա այն գրիչն է, որով միշտ գրում եմ (որից չեմ հրաժարվում):

Վիկտոր Համբարձումյանը այն գիտնականն է, որով հպարտանում է աշխարհը, (որից շատ բան են սովորել աստղագետները):

Աշխատիր, ինչով ուզում ես (ինչից չես ձանձրացել, ինչում հաճույք ես գտնում):

2. Երբ գերադասի մեջ կան որոշ կապեր ու կապի խնդիրներ, ինչպես՝

Վերադարձիր նրա հետ, ում հետ գնացել ես:

Որոնածղ փնտրիր նրա մեջ, որտեղ թողել ես:

Իհարկե, սա պարտադիր պայման չէ, որովհետև դրանց մի մասը փոխակերպելի է. Օրինակ՝ Խոսիր նրա մասին, ում հավանում ես: → Խոսիր հավանածիդ մասին:

Աշխատիր նրա համար, ով քեզ գնահատում է: → Աշխատիր քեզ գնահատողի համար:

3. Փոխակերպելի չեն նաև գոյական և ածական վերադիրներ ունեցող ստորադասները, ինչպես՝ Քալաչյանը այն ուսուցիչն է, որի տղան ճարտարապետ է: Քալաչյանը այն ուսուցիչն է, որի տղան թիկնեղ է ու բարձրահասակ:

4. Սովորաբար չեն փոխակերպվում նաև այն ստորադասականները, որոնք լրացնում են ամբողջ գերադաս նախադասություն միտքը և հետևանքի պարագա ստորադասները՝ «Ֆրանսերը ծնվել է երաժշտության համար, ուրեմն պետք է հոգ տանել նրա մասին, - ասաց ուսուցիչը»: «Ես ոչինչ չունեմ նրան սովորեցնելու, քանի որ աստված է նրան սովորեցրել, - չարունակեց Շուբերտի ուսուցիչը» (ՎԲ):

Վարժություններ: Փոխակերպել ստորադաս նախադասությունները, որոշել նրանց բնույթները և կազմել բազմաբարդների գծապատկերները:

Եվ հրճվում է նա, ով իր սիրած մեղեդին միշտ կրում է իր մեջ: Եվ պատահական չէր, որ համերգին ներկա էին նաև պալատականները, որոնք համերգից առաջ էին եկել: Ինձ այնպիսի հնար տուր, որ մարդու կրծքի տակի քարը իսկական սիրտ դարձնեմ: Նրա գեղեցիկ գանգուրները ծածանվում էին մեզմ քամուց, որ փչում էր ծովից: Երբ իջավ վարագույրն ու լոցին ծափերը, բեմում երևաց նույն երիտասարդը: Երբ դուրս եկանք Աճեմյանի տնից, հանդիպեցինք Գուրգեն Զանիրեկյանին: Այդ փոքրիկ վեճը չխանգարեց անշուշտ, որ մենք բարեկամաբար բաժանվեինք: Շեքսպիրից կարդացել էին այն գործերը, որոնք թարգմանված են հայերեն և, որոնք ես ունեմ իմ գրադարանում:

Այդ նույն օրը, երբ մոտեցա Կոմիտասի դռանը, նոր մեղեդու ձայն լսեցի: Կոմիտասն ու Մաչատոցը, որոնք մեր սրբություններն են, կապրեն ժողովրդի հետ հավիտենից հավիտյան: Սրանք այն մեծություններն են, որոնք այդպես մեծ էլ կմնան, քանի որ պաշտամունք են դարձել:

Հայրը վաղուց էր զգացել, որ երաժշտությունը տղայի կուռքն է:

Եթե Սարոյանը հայերեն գրեր, բնականաբար շատ կհարստացնե՞ր մեր լեզուն, որը չգիտեր: Մենք, որ դասական երաժշտություն սիրողներ ենք, չենք համակերպվում ուրբաին: Այդ օրվա համերգի նպատակն այն էր, որ Կոմիտասը ապացուցեր, որ հայն ունի իր դարավոր ու սեփական երգն ու մեղեդին:

Նրան, ով ձեզ չի հավատում, ցույց տվեք, որ դուք սուր միտք ունեք: Փորձի արդյունքը ստացվեց այնպես, ինչպես կանխատեսել էր գիտնականը: Անհավատալի էր ուղղակի, որ ես այդ տաղանդավոր մարդու կողքին էի: Նրա ասածները ինձ չհամոզեցին, որովհետև անհիմն էին: Նրա խոսքը արժեք չունի, ով աննպատակ է խոսում, ով նոր բան չի ասում: Գաղթականներից նրանց, ովքեր կարողանում էին քայլել, խմբեցին ու ոտքով ուղարկեցին Կարս, ուր բաղձաթիվ հայերի էին բերել: Ինչ որ քեզ ասում են՝ հալած յուզի տեղ մի՛ ընդունիր, քանի որ շատերը սուտ են ասում:

Հրաչյա Աճառյանը, որ աշխարհահռչակ լեզվաբան էր, հաստատեց, որ հայերենը հնդեվրոպական լեզու է, որը բառապաշարային և քերականական բազմաթիվ նմանություններ ունի այդ ընտանիքի շատ լեզուների հետ:

Երևանի նորակառույց Հյուսիսային պողոտայով անցնողը նկատում է, որ այն կառուցված է ազգային ճարտարապետություն, որը դարերի խորքից է գալիս:

Ես եղա բազմաթիվ գրադարաններում ու արխիվներում, որպեսզի գրեի ազգային այդ երկու մեծությունների մասին, որպեսզի նրանք հավերժ ապրեն իրենց սիրելի ժողովրդի սրտում, որտեղ բնակվում են շատերը:

Շատերը, որոնք ծանոթ են մեր դարավոր մշակույթին, գիտեն, որ մեր արվեստի ու գրականության մասին շատ օտարերկրացիներ են գրել, որոնք ծանոթ են մեր մշակույթին:

Վարժություններ: Պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունները փոխակերպել բարդ ստորադասականների, որոշել ստորադասների բնույթները:

Անդրանիկի հանձնարարությունը ամեն օր, դեռ արևը չծագած, երվանդը գնում էր կայազորի պետի մոտ՝ ձիերի վիճակը տեսնելու:

Անդրանիկի մոտ բանախոսելու եկածները ահից դողում էին: Անցյալի ավանդույթներից հրաժարվելը հաճախ մահացու է լինում արվեստի մեջ:

Հետագայում գյուղի վերածված այդ բնագավառը Բագրատունիների նախարարական ոստանն է եղել:

Կոմիտասի Հավաքած ու մշակած երգերը ընդմիջտ կապրեն Հայ ժողովրդի Հետ: Զի կարող լինել ձյնարիտ Հայրենասիրություն առանց սեփական լեզվի հանդեպ մարդու տաճած սիրո:

Դեպի լույսի աղբյուրն ընթերցողների ոգին անհնար է սպանել: Իր հոբեյանի նախօրյակին Բաղրամյանը տուն էր հրավիրել նավատորմի տարբեր միավորներում ծառայող բոլոր Հայ ծովակալներին:

Ամեն անգամ դասի գնալիս, անցնում եմ Կոմիտասի անունը կրող կամերային երաժշտության տան մոտով:

Չնայած ձմռան սաստիկ ցուրտ լինելուն՝ Համալսարանի նոր շենքը տաք էր: Կարգադրությունը հասարակ լինելու դեպքում էլ Անդրանիկը պահանջում էր ժամանակին կատարել այն:

Այդպես հաճույքով վրնջում էին ձիերը՝ ախոռում զարի տեսնելիս: Նրան ճանաչողները բոլորովին չէին զարմացել նրա այդ արարքից: Եվ բոլորովին պատահական չէր նրա համերգին օտարների ներկա լինելը: Բոլորիս փափազը ժողովրդի հանգիստ ու խաղաղ ապրելն է: Արվեստի մեջ լուրջ բան ստեղծելու համար միայն տաղանդը քիչ է:

Հ ա Ր Գ Ե Ր Լ Ե Ա Ռ Ա Չ Կ Ե Ր Ա Ն Ք Ն Ե Ր

1. Որո՞նք են բազմաբարդ նախադասությունները:
2. Որո՞նք են համաստորադաս նախադասությունները (բերել օրինակներ):
3. Որո՞նք են տարաստորադաս նախադասություններ. ինչով են տարբերվում նախորդներից (բերել օրինակներ):
4. Որո՞նք են ենթաստորադաս նախադասությունները (բերել օրինակներ):
5. Ի՞նչ է նշանակում խառը տիպի բազմաբարդ նախադասություն (օրինակ):
6. Ի՞նչ է պարբերությունը. այն քանի տեսակ է լինում (օրինակ):
7. Ի՞նչ է նշանակում բարդ ստորադասականների փոխակերպում. դրանք նույնանուն են դերբայական դարձվածներով նախադասությունների Հետ:
8. Կա՞ն չփոխակերպվող նախադասություններ (բերել օրինակներ):
9. Ինչպե՞ս և ո՞ր դեպքերում ենք դերբայական դարձվածով նախադասությունը փոխակերպում բարդ ստորադասական նախադասության (օրինակներ):

Գրավոր, ինչպես նաև բանավոր խոսքում հաճախ գրողը, խոսողը, պատմողը անհրաժեշտություն է գգում իր խոսքում մեջ բերել ուրիշի կամ իր գրածը, ասածը, պատմածը, դրանք կարող է կրկնել նույնությունամբ՝ **բառացի**, կամ էլ վերարտադրել ոչ ուղղակի կերպով՝ **պատմողաբար**: Առաջին դեպքում մեջբերվող խոսքը կոչվում է ուղղակի, իսկ երկրորդ դեպքում՝ անուղղակի:

Եթե մեջբերվող խոսքը բանավոր է, այն արտաբերվում է առանձին հնչերանգով ու տոնայնությունամբ, իսկ եթե գրավոր է, ապա հեղինակի խոսքից առանձնանում է կետադրական նշաններով ու շարադասությունամբ:

Ուրիշի խոսքում պարտադիր է **հեղինակի** խոսքի առկայությունը. հեղինակն է, որ ուրիշների կամ իր ասածը, գրածը պատմում, վերարտադրվում է, հաճախ էլ ակնարկում է, թե ո՞ւմ է պատկանում խոսքը, կամ ո՞վ է իր խոսակիցը: Հեղինակի խոսքի բացակայությունամբ ուրիշի խոսքը կարող է գործառություն ունենալ միայն **երկխոսություններում**, երբ հայտնի է, թե ով է խոսողը կամ խոսակիցը: Սա հատուկ է ինչպես առերես խոսակցություն ժամանակ, այնպես էլ թատերգություններին, որտեղ հայտնի են գործող անձինք՝ երկխոսության մեջ եղողները:

Դրաստամատ – Դու մենակ մնացիր արքա՛, դու ընտրեցիր քո մենակությունը: Ինչո՞ւ:

Արչակ – Որ իմանամ, թե ով եմ ես և ինչ արժեմ: Ինձ դուր է գալիս մենակությունը:

Գնել – Ձեռ գտնի պարզագույն ելքը, որովհետև ես ստորաբար դժվարացրի դրան հասնելու ճանապարհը (Պ. Զելթունցյան):

Ուրիշի խոսքը ավելի առատորեն գործածվում է գեղարվեստական գրականության մեջ, ուր միշտ հարկ է լինում դիմել գործող անձանց խոսակցություններ, լսել նրանց հարց ու պատասխանները, դատողությունները:

Ուրիշի խոսքը թեկուզ ավելի սակավ, գործածվում է նաև գիտական ու հրապարակախոսական ոճերում, երբ հեղինակը մեջբերումներ է կատարում նրանց մտքերից:

– Գտա,- գոչեց Արքիմեդն ու դուրս թռավ լողավազանից:

«Լուսինը ոչ թե իր սեփական լույսն ունի, այլ անդրադարձնում է Արեգակի լույսը»,– դեռ 7-րդ դարում գրել է Անանիա Շիրակացին:

Ուղղակի խոսք

Ուրիշի կամ սեփական խոսքը, որ մեջ է բերվում **նույնությամբ**, առանց փոփոխությունների, կոչվում է ուղղակի խոսք: Այն հեղինակի խոսքի հետ մեծ մասամբ կապվում է **ասացական** (ասել, արտասանել, հարցնել, հայտնել, կանչել, հաղորդել, պատասխանել...), **մտածական** (մտածել, խորհել, պատճառաբանել, հրամայել, կոահել, դիմել և բազմաթիվ նման բայերով):

Ուրիշի խոսքը ըստ կազմության կարող է լինել և՛ պարզ նախադասություն (միակազմ կամ երկկազմ) և՛ բարդ համադասական, ստորադասական ու բազմաբարդ: Ըստ հաղորդման նպատակի այն լինում է պատմողական, հարցական, հրամայական, ըղձական ու բացականչական: Նրա կազմում կարող են լինել **կոչականներ, վերաբերականներ, ձայնարկություններ**, որոնք փոխակերպման ժամանակ դուրս են գալիս նախադասության կազմից:

Ուղղակի խոսքի շարադասությունն ու կետադրությունը

Ուղղակի խոսքի շարադասությունը շատ հստակ է. այն կարող է դրվել հեղինակի խոսքից կամ առաջ կամ հետո, ինչպես նաև հեղինակի խոսքը կարող է ընկնել ուղղակի խոսքի արանքում:

– Այգիներում շատ եղեք, թափառեք աննպատակ,– խորհուրդ էր տալիս անվանի մեթոդիստ Գուրգեն Էդիլյանը:

Անվանի մեթոդիստ Գուրգեն Էդիլյանը խորհուրդ էր տալիս. «Այգիներում շատ եղեք, թափառեք աննպատակ»:

«Այգիներում շատ եղեք,– խորհուրդ էր տալիս անվանի մեթոդիստ Գուրգեն Էդիլյանը,– թափառեք աննպատակ»: (Ռուբեն Զարյան):

Ավելի բազմազան է ուղղակի խոսքի կետադրությունը.

1. Ուղղակի խոսքը սովորաբար առնվում է **չակերտների մեջ**, հատկապես գեղարվեստական խոսքում չակերտների փոխարենն ուղղակի խոսքի սկզբում մեծ մասամբ դրվում է **անջատման գծիկ** (–) (հատկապես երկխոսություններում):

– Ուսանողական տարիները լավագույնն են մարդու կյանքում,– ասում էր նա:

2. Երբ ուղղակի խոսքը վերջադաս է, հեղինակի խոսքից հետո դրվում է **միջակետ**, և ուղղակի խոսքն առնվում է **չակերտների մեջ**.

Գարեգին Հովսեփյանը հարցրեց. «Ճի՞շտ է, արդյոք, որ մարդ–

կային զգացումներից բարձրագույնը սերն է»:

3. Երբ ուղղակի խոսքը նախադաս է, Հեղինակի խոսքից առաջ դրվում է ստորակետ-գիծ (-): Ուղղակի խոսքը կարող է դրվել **չա-կերտների մեջ կամ գրվել գծիկով:**

– Ճի՞շտ է, արդյոք, որ մարդկային զգացումներից բարձրագույնը սերն է,- հարցրեց Գարեգին Հովսեփյանը: «Կարելի՞ է Ձեզ մի հարց տալ», - դասախոսին դիմեցի ես:

4. Երբ Հեղինակի խոսքն ընկնում է ուղղակի խոսքի մեջ, տրոհման 3 ձև կա.

ա) **ստորակետ-գծով՝**

– Ճի՞շտ է արդյոք,- հարցրեց Գարեգին Հովսեփյանը,- որ մարդ-կային զգացումներից բարձրագույնը սերն է:

բ) Ուղղակի խոսքից հետո դրվում է **վերջակետ-գծիկ (: -)**, եթե ուղղակի խոսքը կազմված է ավարտուն նախադասություններից՝

– Առանց հումորի ապրել չի կարելի: – Մի օր ասաց էդիլյանը:- Հումորի զգացումից զուրկ մարդը դժբախտ է:

գ) Ուղղակի խոսքից հետո **միջակետ-գծիկ (.-)** է դրվում, եթե ուղղակի խոսքի նախադասություններն ունեն զգալի ինքնուրույ-նություն՝

– Ո՛ղջ լեռուք.- վերջին օրը ասաց նա.- չգիտեմ, էլ կհանդիպե՞մք, թե՞ չէ:

(Սա 1937 թիվն էր, երբ էդիլյանին արտրեցին Սիբիր):

5. Երբ ուղղակի խոսքը կարճ է, Հեղինակային խոսքից անջատվում է **բուլթով.**

– Բոլորս միաբերան գոչեցինք՝ **հաջողությունն Ձեզ:**

– Նրա պատասխանը եղավ՝ **ո՛ղջ լեռուք** (Ռուբեն Զարյան):

Ես այդպես էլ չկարողացա համոզել ընկերոջս, և նա կրկնեց՝ **ոչ:**

Վերջապես համոզեցի, և ասաց՝ կգամ:

Առաջադրանք: Ինքներդ կազմե՛ք մեջբերվող խոսքի տարբեր դրսևորումներով նմանատիպ նախադասություններ:

Անուղղակի խոսք և ուղղակի խոսքի փոխակերպումը

Ասվեց, որ անուղղակի խոսքը ուրիշի ուղղակի խոսքի՝ Հեղի-նակի կողմից վերաշարադրված տարբերակն է. այն ուղղակի խոսքի պատմողաբար մեջբերումն է՝ արտահայտված **ստորադաս** նախա-դասությամբ, իսկ Հեղինակի խոսքը մնում է որպես **գերադաս** նախա-

դասություն. այսինքն՝ անուղղակի խոսքում գործ ունենք բարդ ստորադասական նախադասություն հետ:

Թեև ոչ բոլոր դեպքերում, հնարավոր է ուղղակի խոսքի փոխակերպումը անուղղակի խոսքի. այս դեպքում տեղի են ունենում կառուցվածքային և քերականական փոփոխություններ: Արդ, տեսնենք, թե որո՞նք են այդ փոփոխությունները:

1. Ուղղակի խոսքը վերածվում է ստորադաս նախադասության. պատմողական, հրամայական և բացականչական նախադասությունների դեպքում գերադասի հետ կապակցվում են որ շաղկապով, իսկ հարցական նախադասությունների դեպքում՝ **Թե-ով**՝

– Կամք ունեցողը հաղթահարում է անասելի դժվարություններ, – ասում էր էդիլյանը: → էդիլյանն ասում էր, որ կամք ունեցողը հաղթահարում է անասելի դժվարություններ:

– Գրադարաններից ուշ դուրս եկե՛ք, մնացե՛ք մինչև փակվելը, – խորհուրդ էր տալիս նա: → Նա խորհուրդ էր տալիս, որ գրադարաններից ուշ դուրս գանք և մնանք մինչև փակվելը:

– Դասերից հետո ո՞ւր եք գնում և ինչո՞վ եք զբաղվում, – հարցնում էր մեծ մանկավարժը: → Մեծ մանկավարժը հարցնում էր, թե դասերից հետո ո՞ւր ենք գնում և ինչո՞վ ենք զբաղվում:

– Ի՞նչ նորություն կա, տղանե՛ր, – կհարցնեք նա: → Նա տղաներին կհարցնեք, **Թե** ի՞նչ նորություն կա:

Փոխակերպման ժամանակ բայական բոլոր եղանակները պահպանվում են, բացի **հրամայականից**, որ վերածվում է **ըղձականի** (տե՛ս վերևի՝ գրադարանի, օրինակը):

Հարցական նախադասությունն էլ վերածվում է **պատմողականի** (տե՛ս օրինակներ):

2. **Բացականչական նախադասությունները** ոչ միայն զրկվում են իրենց յուրահատուկ հնչերանգից, այլև նրանց կազմից դուրս են գալիս **ձայնարկություններն** ու որոշ զգացական բառեր, փոխվում է նաև նախադասության կառուցվածքը՝

– Ախ, ինչքան կուզեի նորից Մոսկվայում լինել. այս թոհուրոհից կազատվեի, – վերջին դասին ասաց նա: → Վերջին դասին նա ասաց, որ շատ կուզեի Մոսկվայում լինել և այս թոհուրոհից ազատվեի:

3. Ուղղակի խոսքի **կոչականները** կա՛մ դուրս են ընկնում, կա՛մ վերածվում են **ենթակայի** կա՛մ **հանգման անուղղակի խնդրի**. օրինակներ՝

– **Միրելի՛ս**, ես քեզ միշտ բարձր եմ գնահատել, – ասացի ընկերոջս:

→ Ընկերոջն ասացի, որ ես իրեն միշտ բարձր եմ գնահատել (**սիրելիս** կոչականը դուրս է եկել):

– **Տղանե՛ր**, դասերից հետո կմնաք, ձեզ բան ունեմ ասելու,– ասաց ղեկանը: Դեկանն ասաց, որ **տղաները** դասերից հետո մնան, իրենց բան ունի ասելու (**տղանե՛ր** կոչականը դարձել է ստորադաս նախադասություն **ենթական**):

Նույն նախադասությունը կարելի է փոխակերպել նաև այսպես՝ «Դեկանը տղաներին ասաց, որ դասերից հետո մնան, նրանց բան ունի ասելու» (այստեղ էլ **տղանե՛ր** կոչականը մնացել է գերադասի մեջ և դարձել է **Հանգման խնդիր**):

4. Քանի որ անուղղակի խոսքում խոսող անձանց ասածները վերաշարադրվում են հեղինակի կողմից, այդ պատճառով էլ փոխակերպման դեպքում նախադասություններում կատարվում են ենթակաների և ստորոգյալների դիմադրին որոշ փոփոխություններ՝ կախված այն Հանգամանքից, թե հեղինակը և ուղղակի խոսքում նշված անձնավորությունները դիմադրին և ժամանակային ինչ Հարաբերությունների մեջ են, այսպես՝

1. Ուղղակի խոսքի բոլոր երեք դեմքերը վերածվում են **1-ին** դեմքի, եթե այն անձը, որի մասին խոսվում է, հենց ինքը՝ **հեղինակն է**: Օրինակ՝

– Բայց դու պետք է ներողություն խնդրես նրանից,–հանդիմանեց ինձ ընկերս: → Ընկերս ինձ հանդիմանեց, որ **ես** պետք է ներողություն խնդրեմ նրանից:

Մի թավ ձայն ինձ ասաց. «Եթե դու երաժիշտ լինեիր, մի համանվագ կգրեիր Հայաստանի համար»:→ Մի թավ ձայն ինձ ասաց, որ եթե **ես** երաժիշտ լինեի, մի համանվագ կգրեի Հայաստանի համար:

2. Եթե գործողություն կատարողը **խոսակիցն է**, ուղղակի խոսքի ենթական գրվում է **2-րդ** դեմքով՝ Դու ինձ ասացիր. «Ես միշտ քեզ հետ կլինեմ»: → Դու ինձ ասացիր, որ **դու** միշտ ինձ հետ կլինես: Քո մասին չատ եմ լսել. «Նա լավ մասնագետ է»:→ Քո մասին չատ եմ լսել, որ **դու** լավ մասնագետ ես:

3. Ուղղակի խոսքի բոլոր դեմքերը վերածվում են **3-րդ** դեմքի, եթե անձը, որի մասին խոսվում է, հեղինակը չէ և խոսակցությունը ներկա չէ:

– Իսկ դու ինչու ես հեռանում քո երկրից,– Հարցրեց իշխանը սեպուհին (Մուր.): → Իշխանը սեպուհին հարցրեց, թե ինչու է **նա** հեռանում իր երկրից:

– Ես հեռանում եմ այս ղեպքերին չմասնակցելու համար,- ասում էր Մուշեղը: → Մուշեղն ասում էր, որ **ինքը** կհեռանա այս ղեպքերին չմասնակցելու համար:

Ինչ խոսք, ուղղակի խոսքի փոխակերպման ուրիշ շատ ղեպքեր էլ կան, որոնք այս դասագրքի նպատակներից դուրս են: Դրանց մասին ավելի հանգամանորեն կարելի է կարդալ Մ. Աբեղյանի «Հայոց լեզվի տեսություն», Վ. Առաքելյանի «Հայերենի շարահյուսություն» Բ հատորում, Գ. Գարեգինյանի «Ժամանակակից հայոց լեզու» և Ա. Պապոյանի ու Խ. Բաղդկյանի «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն» գրքերում:

Վարժություն: Ուղղակի խոսքերը փոխակերպեք անուղղակի.

Կոմիտասը նայեց խոնված մարդկանց ու մտածեց. «Ովքե՞ր են դրանք, ո՞ւր են գնում»: Շատերը մոտեցան ու հարցրին՝ Ինչպես եք, Վարդապետ:

– Հա՛յր սուրբ, ես եմ, այս կողմը նայեք,- ձայն տվեց մի հայ մտավորական:

– Զոհրա՛պ, սիրելի՛ս, հերթը քե՞զ էլ հասավ,- մրմնջաց Կոմիտասը:

– Հայր սուրբ, փա՛ռք Աստծո, Դուք ազատվեցիք, Դուք ղեռ շատ բան ունեք անելու, Դուք պետք է ազգը պահեք,- փաթաթվելով նրան՝ ասաց Զոհրապը:

– Հա՛յր սուրբ, ինչպե՞ս են մեր ընկերները, ե՞րբ եք նրանցից բաժանվել,- շարունակեց իր խոսքը Զոհրապը:

– Նրանք ղեռ այնտեղ են, Զոհրա՛պ, սիրելի՛ս, այնտեղ՝ աքսորում, հազարավոր մարդկանցից միայն ութ հոգու ազատեցին,- հազիվ շշնջաց Կոմիտասը:

– Զոհրա՛պ, ահա նրանք՝ Սևակին ու Վարուժանին խցկեցին քո վագոնը,- ասաց նա:

Ընկերներից բաժանվելիս Կոմիտասը բարձրաձայն գոչեց. «Օ՛, սիրելիներ՛ս, ձեր պատիժը մահը կլինի, իմը՝ ապրելը»:

Քիչ հետո նրան է մոտենում տեր Հուսիկն ու ասում. «Հա՛յր Կոմիտաս, ուրախ լուր ունեմ տալու. մերոնք Վանը գրավել են: «էլի լավ լուր,- շարունակում է Հուսիկը,- Անդրանիկը իր կամավորներով գնում է Վան՝ միանալու ռուսական զորքին»:

Նույն ուրախ լուրը Կոմիտասը հաղորդեց սրբազանին. «Մեր փրկությունը գալու է Հյուսիսից, սրբազա՛ն, ռուսական զորքերը մեզ օգնություն են հասնում»:

– Ո՛չ, ո՛չ, մենք չենք մահանա... մենք հարույթյուն կառնենք, որովհետև մեր ազգը միայն մարմին չէ, այլև անպարտելի ոգի,- ասաց Ջավեն պատրիարքը:

ՇԱՐԱՀՑՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱՆԻՇՆԵՐ

Համանիշույթյունը լեզվական այն երևույթն է, երբ բառային կամ քերականական միևնույն կամ մոտիկ իմաստն արտահայտվում է տարբեր ձևերով: Մեր լեզուն չափազանց հարուստ է թե՛ բառային և թե՛ քերականական բազմաթիվ համանիշներով:

Համանիշույթյունն առկա է լեզվի 3 մակարդակներում:

ա) **բառային** – առաքինի (պարկեշտ, ազնիվ, բարոյական, պատվասեր):

գեղեցիկ (գեղանի, սիրուն, չքնաղ, աննման...),

բարունակ (ճյուղ, ընձյուղ, չիվ, ուռ, շառավիղ...),

բ) **ձևաբանական** – **Գյումրի** (Գյումրու-Գյումրվա), **Լոռի** (Լոռվա-Լոռու), **տարի** (տարվա-տարու), **ամիս** (ամսի-ամսվա), **ձյուն** (ձյան-ձյունի), **սար** (սարեն-սարից), **արյուն** (արյամբ-արյունով), **ձուկ** (ձկան-ձկի)...

գ) **չարահյուսական** – Մթնեց (մութն ընկավ), Անձրևում է (անձրև է գալիս): Պոսել որսի մասին (խոսել որսից), Նկարը կախված է պատին (պատից): Գործը կատարվեց նախազահի հրամանով (ըստ հրամանի, հրամանի համաձայն): Կամուրջը վերանորոգեցին մասնագետները (վերանորոգվեց մասնագետների կողմից): Ես անպայման պետք է գնամ գյուղ (չեմ կարող չգնալ): Երբ հնչեցին զանգերը, սկսվեց պատարագը (զանգերը հնչելուն պես...): Ծնողների համար կարևորը տղայի՝ տուն վերադառնալն է (... այն է, որ տղան տուն վերադառնա):

– Գու շատ առաջ կգնաս,- ականջիս հնչում են հորս խոսքերը (Ականջիս հնչում են հորս խոսքերը, թե ես շատ առաջ կգնամ):

Գիտեմ՝ ինձ բան ունես ասելու (Գիտեմ, որ ինձ բան ունես ասելու):

Ինչպես երևում է բերված օրինակներից, չարահյուսական համանիշները լեզվում ավելի շատ են ու բազմաբնույթ, որոնք հանդես են գալիս թե՛ պարզ և թե՛ բարդ նախադասություններում ու բառակապակցություններում և խոսքին ռճական ու իմաստային բազմազան հնարավորություններ են հաղորդում:

Քննենք շարահյուսական համանիշության մի քանի կարևոր դեպքերը (Ն. Պառնասյանը իր «Շարահյուսական համանիշները ժամանակակից Հայերենում» գրքում՝ 1970, քննել է միայն պարզ նախադասությունների համանիշությունը):

Ի՞նչ են շարահյուսական համանիշները. դրանք այն բառակապակցություններն ու նախադասություններն են (պարզ և բարդ), որոնք իմաստով մոտ են, բայց նույնը չեն. ունեն նուրբ տարբերություններ, շարահյուսական տարբեր կառուցվածքներ ու ոճական տարբեր արժեքներ:

Շարահյուսական համանիշներ են կազմվում.

1. **Միակազմ և երկկազմ նախադասություններով.** միակազմները լինում են դիմավոր և անդեմ և ավելի շատ հատուկ են գեղարվեստական խոսքին, հատկապես պոեզիային. դրանք ասելիքը դարձնում են ավելի դիպուկ ու պատկերավոր. երկկազմի դեպքում նույն հմայքն ու հնչեղությունը չեն ունենա:

Համեմատենք հետևյալ կառույցները՝

Միակազմ նախադասություններ
Մի փոշոտ փափուկ ճամփա,
Ու փշատի սաղափ ծառեր... (ՎԳ):

Երկկազմ նախադասություններ
Դա մի փոշոտ փափուկ ճամփա էր,
ու փշոտ սաղափ ծառեր էին...

Կամ՝

Ութսունմեկ թիվ, Վաղարշապատ:
էջմիածին: Միրգ ու փոշի: Անխիղճ
արև... (ՊՍ):

Ութսունմեկ թիվն էր: Սա էլ Վաղարշապատն էր՝ էջմիածինը: Ամենուրեք միրգ ու փոշի էր: Անխիղճ արևը վառում էր:

Կամ՝

Երեկվանից անձրևում էր:

Երեկվանից անձրև էր գալիս:

2. **Տարբեր բնույթի նախադասություններով.** սրանք կարող են լինել՝

ա) **դրական և ժխտական** – Պիտի ասեմ:- (Չեմ կարող չասել): Նա այդ մասին անպայման պիտի խոսեր:- (Նա այդ մասին չէր կարող չխոսել):

բ) **պատմողական և հարցական** –

Ոչինչ չի հաղթի կյանքում հերոսին,
թե չլինեն կինն ու գինին:

Ի՞նչը կհաղթի կյանքում հերոսին,
թե չլինեին կինն ու գինին (ՀԹ):

Ոչինչ չեմ տեսել, որ ասեմ:

Ի՞նչ եմ տեսել, որ ի՞նչ ասեմ:

գ) Հարցական և հրամայական –

Ձեի՞ր կարող դասերից հետո գալ:

Գասերից հետո արի՛:

Արթո՛ւր, չէ՞իր կարող խանութ
գնալ:

Արթո՛ւր, գնա՛ խանութ:

3. Կրավորական և ներգործական բայերով կազմված նախադասություններով.

Ես շատ հուզվել էի այդ սրտագին
ընդունելությունից

Այդ սրտագին ընդունելությունը
ինձ շատ էր հուզել (Ավ. Իս.):

Սիրտս ճնշվում էր մի անծանոթ
ծանրությունից (ՍՁ):

Սիրտս ճնշում էր մի անծանոթ
ծանրություն:

Ապակին կոտրվեց քամուց:

Քամին կոտրեց ապակին:

4. Պատճառական և չեզոք բայերի կառույցներով.

Ահա հենց այդ բանն էր վախեց-
նում բոլորիս (ՎԱ):

Ահա հենց այդ բանից էինք վա-
խենում բոլորս:

Քամին հանգրեց կրակը:

Կրակը հանգավ քամուց:

5. Կապային կապակցություններով և տարբեր հոլովներով.

Օհան ամին պատմում էր իր կյանքի մասին (իր կյանքից): Գիրքը դրված է սեղանի վրա (սեղանին): Բաժակի մեջ գինի կա (բաժակում): Կվերադառնամ մի ժամից հետո (մի ժամից): Անդրանիկ զորավարը սիրված է բոլորի կողմից (բոլորից): Համալսարանում տեղափոխու- թյուններ կատարվեցին ըստ ռեկտորի կարգադրության (կար- գադրության համաձայն, կամ կարգադրությամբ):

6. Ծարահյուսական համանիչության ամենաչափ տարբերակներ կարելի է կազմել միևնույն նախադասության անդամների (և ոչ անդամների) չարադասություններով.

Օրինակ՝ «Ես սիրում եմ քեզ» նախադասությունն չարադասական 6 տարբերակ կա, իսկ «Լուսաբացին նա բարձրացավ կախաղան» նախադասությունն համար՝ 24:

7. Շարահյուսական համանիշներ են նաև մեջբերվող (ուղղակի և անուղղակի) խոսքի փոխակերպումները.

Ուղղակի խոսք

Բեթհովենը Հպարտորեն հայտարարեց. «Ես գիտեմ, որ Աստված ինձ ավելի մոտ է, քան ուրիշներին. մեզ կապող օդակը իմ արվեստն է» (ՎԲ):

Մի առիթով Պարույր Սևակը գրել է, որ իր «Վերնագիրը վերջում»-ը ինքը համարում է իր բոլոր գրածների մեջ հազվագյուտներից մեկը:

Անուղղակի խոսք

Բեթհովենը Հպարտություն հայտարարեց, որ ինքը գիտե, որ Աստված իրեն ավելի մոտ է, քան ուրիշներին, որ իրենց կապող օդակը իր արվեստն է:

«Իմ Վերնագիրը վերջում»-ը ես համարում եմ իմ բոլոր գրածների մեջ հազվագյուտներից մեկը», - մի առիթով գրել է Պարույր Սևակը:

8. Բարդ ստորադասական նախադասությունների փոխակերպումը և դրա հակադարձ գործողությունը թերևս չարահյուսական համանիշության ամենատարածված երևույթն է.

Բարդ ստորադասական

Մենք, որ մարդ ենք ծնվել մորից, Ո՛չ, չենք ուզում դառնալ նորից ինչ-որ ընձուղտ երկարավիղ (ՊՍ):
Հպարտանում ենք նրանցով, ովքեր աշխատասեր են:

Փոխակերպված

Մենք՝ մորից ծնվածներս, ո՛չ, չենք ուզում դառնալ նորից ինչ-որ ընձուղտ երկարավիղ:
Հպարտանում ենք աշխատասերներով:

Փոխակերպված (պարզ)

Հայ ժողովրդի պատմության էջերը թերթողը կիմանա այս հեքիաթի գաղտնիքը (ԳԹ):

Ձու գողացողը ձի էլ կգողանա:

Բարդ ստորադասական

Նա, ով թերթել է Հայ ժողովրդի պատմության էջերը, կիմանա այս հեքիաթի գաղտնիքը:

Ով ձու է գողանում, ձի էլ կգողանա:

9. Շաղկապավոր և անշաղկապ (չարահարական) կառույցները նույնպես չարահյուսական համանիշներ են՝

Մարդ կա՝ ելել է շալակն աշխարհի,

Մարդ էլ կա՝ աշխարհն է շալակած տանում (ՊՍ):

էլ մի ուշացնի՝ ես շատ եմ կացել, էլ մի լացացնի՝ ես շատ եմ լացել (ՀԹ):

Ես չգիտեմ՝ ո՞ւր են տանում հեռավոր ուղիների ժապավեններն անհամար (ՎՏ):

Մարդ կա, որ ելել է շալակն աշխարհի,

Մարդ կա, որ աշխարհն է շալակած տանում:

էլ մի ուշացնի, որովհետև ես շատ եմ կացել, էլ մի լացացնի, որովհետև ես շատ եմ լացել:

Ես չգիտեմ, թե ո՞ւր են տանում հեռավոր ուղիների ժապավեններն անհամար:

Ինչ խոսք, շարահյուսական համանիշների այլ դեպքեր էլ շատ կան:

Հ ա Ր Գ Ե Ր

1. Ի՞նչ են լեզվական համանիշները. լեզվի որ մակարդակներում են հանդես գալիս:

2. Ծարահյուսական համանիշների ի՞նչ դեպքեր գիտեք. բերեք օրինակներ:

Վարժություններ: Գտնե՛լ շարահյուսական համանիշները: Կազմե՛լ բերված նախադասությունների հնարավոր համանիշային տարբերակները:

Լուսացավ: Անընդհատ ձյուն է գալիս: Պար է գալիս Թմկա տիրուհին: 1915 թ.: Ապրիլի 24: Եվ Մայր Արաքս, և Մայր Տաճար: Տաճարի շուրջ սուրբ, սուրբ քարեր, Հնչող, շնչող, կանչող զանգեր... Եվ ճեմարան՝ մտքի կաճառ (ՊՍ):

Նա անպայման պետք է գնար գյուղ: Ես չեմ կարող ճիշտը չասել: Ի՞նչ ես կարողացել, որ ի՞նչ պատմես: Գու ե՞րբ ես ճիշտ ասել, որ հիմա ասես: Կարո՞ղ ես երկու օրից հետո աշխատանքդ ներկայացնել: Աշխատանքդ ներկայացրու երկու օրից:

Հյուսիսային Հոյակապ պողոտան կառուցվեց լավ մասնագետների կողմից: Գյումրին ու Սպիտակը ավերվեցին երկրաշարժից: Տունը կառուցեց հայրս: Սպասվելիք բուքն էր վախեցնում սարում մնացած հովիվներին: Գնա՛ գյուղ և օգնի՛ր ծնողներիդ: Եթե գյուղ չգնաս, ձմեռը սոված կմնաս: Ձի մեռնի այն ժողովուրդը, ով քեզ նման սիրել

գիտի (ՍԿ): Ինչ որ ցանես, այն կհնձես: Գործ բռնիր միայն նրա հետ, ով քեզ լավ է հասկանում: Աշխատողը սոված չի մնա: Չնայած շատ էինք հոգնել, բայց շարունակում էինք աշխատել: Փնտրածս գտա:

– Դու շատ առաջ կգնաս,– ականջիս հնչում էին հորս խոսքերը (ՊՂ):

Ինձ թվում էր՝ մորս ոչ մի մահ չկար (ՀԾ): Ճամփա կա՝ ծով է տանում, ճամփա կա՝ այգի, Ճամփա կա՝ ափ է հանում նավակն իմ կյանքի (ՀԾ):

ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հայտնի ճշմարտություն է, որ լեզվի բնական՝ կենդանի վիճակը, բանավոր խոսքն է, գրավոր խոսքը ածանցյալ է նրան: Մարդիկ իրենց ասելիքը, հույզերն ու զգացմունքները նախ արտահայտել են բանավոր կերպով՝ ձայնի տոնի բարձրացմամբ կամ իջեցմամբ, տարբեր տևողություն զաղարներով, առանձին բառերի ու հնչյունների շեղումով արտասանությունամբ, այսինքն՝ հնչերանգի տարբեր դրսևորումներով. առանց սրանց խոսքը կլիներ չոր ու միապաղաղ: Ահա թե ինչու Լոմոնոսովը, խոսելով կետադրություն մասին, ասել է. «Սառը տառերով դժվար է զգացմունքներ արտահայտել»: Իսկ բանավոր խոսքի ձայնային այդ նրբերանգները գրավոր խոսքում ստացել են հատուկ նշույթավորումներ, որոնք կոչվում են կետադրական նշաններ: Այստեղ էլ շատ տեղին է հիշել Անտոն Չեխովի հետևյալ պատկերավոր արտահայտությունը. «Կետադրական նշանները գրավոր խոսքի նոտաներն են»:

Հնչերանգի շնորհիվ է, որ բանավոր խոսքն անհամեմատ ավելի կենդանի ու արտահայտիչ է, քան գրավորը: Հայտնի փաստ է, որ բանավոր արտաբերված նույն բառը, բառակապակցությունը կամ նախադասությունը կարելի է արտաբերել տարբեր հնչերանգներով և դրանով նույն բառին (նախադասությանը) հաղորդել մի դեպքում աղերսանք ու խնդրանք, մյուս դեպքում՝ արհամարհանք ու արգահատանք, մի այլ դեպքում՝ հարցում, զարմանք ու հեզմանք, հրաման ու կարգադրություն, հաստատում կամ ժխտում և այլն: Հնչերանգի այս գործը դերը նկատի ունենալով է, որ անգլիացի հայտնի դրամատուրգ Բեռնարդ Շոուն ասել է. «Այո և ոչ բառերը կարելի է արտաբերել 50 եղանակով»:

Փորձենք ապրե՛ս բառը արտաբերել տարբեր հնչերանգներով՝ մի դեպքում արտահայտելով գովեստ ու գոհունակություն, մյուս դեպք-

քում՝ նախատինք ու պարսավանք, երրորդ դեպքում՝ խնդրանք ու աղերսանք և այլն: Գրանք գրավոր խոսքում արտահայտվում են շեշտով, բացականչական նշանով, հարցական նշանով, չակերտներով և այլ նշաններով: Ահա թե ինչու գրավոր խոսքում գործող 15 կետադրական նշանները չեն կարող համարժեք լինել բանավոր խոսքի բազմազան դրսևորումներին:

Կետադրական նշաններն ունեն ազգային առանձնահատկություններ. եթե տարբեր լեզուներում բանավոր խոսքում **առողջանությունն նշաններն** արտաբերվում են միակերպ, ապա գրավոր խոսքում դրանք տարբեր նշաններ ունեն: Օրինակ, **հարցական** և **բացականչական** նշանները ուսներենում և բազմաթիվ այլ լեզուներում դրվում են նախադասություն վերջում, հայերենում դրանք դրվում են հենց այն բառերի վրա, որոնք հարցում են արտահայտում կամ շեշտվում են, կամ հայերենի բուժ նշանի փոխարեն շատ լեզուներում **գծիկ** է դրվում կամ **երկու կետ** (:):

Ընդունված է կետադրության նշանները բաժանել 3 խմբի՝ **տրոհուկային, առողջանուկային և բացահայտուկային**: Այս դասակարգումը ներկայացրել է Գուրգեն Սևակը դեռ 1936 թվին, որը մտել է դպրոցական և բուհական դասագրքեր և գոյատևում է առ այսօր: 1990-ական թվականներին լեզվաբաններ Ս. Աբրահամյանի, Հ. Բարսեղյանի և Գ. Զահուկյանի կողմից վերանայվել են որոշ մոտեցումներ և ներկայացվել են Տերմինաբանական կոմիտեի հաստատման: Այս գրքում առաջնորդվում ենք դրանցով:

ՏՐՈՒՑԱՆ ԵՆԱՆՆԵՐ

«Տրոհել նշանակում է բաժանել, կտրատել» (Գ. Սևակ):

Տրոհության նշաններն են՝ **վերջակետը** (:), **միջակետը** (.), **ստորակետը** (,), **բուժը** (‘) և **փակագծերը** [()]: Այս նշաններով գրավոր խոսքում նշույթավորվում են բանավոր խոսքի տարբեր տևողության դադարները, ինչպես նաև ձայնի տոնի բարձրացման կամ իջեցման տարբեր աստիճանները:

Վ երջակետը դրվում է՝

1. **նախադասության վերջում՝** անկախ նրա կառուցվածքից, բնույթից ու տեսակներից՝

Մթնեց: Ծերունին լուռ չարչարանքով մի քանի կոճղեր դրեց կրակին,

Նորից բարևեց իր երկրի կարգով ու բարի մաղթեց ջահել ղոնադին (ՀԹ): Խենթանում է գետը, երբ ջրերն են վարարում (ՀՍ): Ո՞վ ունի այսօր կամքը մեր հրե: Վանեցե՛ք հեռու թշնամուն վայրագ (Ավ. Իս.): Ախ, ինչքան, ինչքան կարոտել եմ ձեզ:

2. Վերջակետ է դրվում նաև տողասկզբում գործածվող վերնազրից, ծանոթություն, վարժություն, առաջադրանք, խնդիր և նման բառերից կամ նրանց թվահամարներից հետո (սա այնքան էլ տրամաբանական չէ, և մենք գրքում հաճախ շեղվել ենք դրանից):

Օրինակ՝ **Շարադասություն:** Նախադասություն կազմող միավորների՝ տվյալ լեզվում ընդունված դասավորություն կարգը կոչվում է **շարադասություն:**

Ծանոթություն: Հարցական նշանը միջին հայերենում կոչվում էր **պարույկ:**

Առաջադրանք: Տեքստից դուրս գրել անկախ դերբայները:

Վարժություն 25: Փոխակերպել բերված նախադասությունները:

3. Վերջակետ է դրվում նաև մատենագիտական հղումներից հետո՝

Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965:

Հ. Մխիթարյան, Հայերենի կետադրության համառոտ պատմություն, Եր., 1972:

Մ Ի Զ Ա Կ Ե Տ Ը դրվում է*՝

1. Ուրիշ ուղղակի (մեջբերվող) խոսքում՝ հեղինակի խոսքից հետո՝ Վերջապես հավերժի ճամփորդն ասաց. «Հայաստանն եմ ես, Հայ ժողովուրդն եմ ես, որ գալիս եմ դարերի խորքից ու վախճան չունեմ»:

2. Կրճատ գրվող բառերից հետո՝

Շատ էինք հարգում պրոֆ. Զահուկյանին: Մեր դասղեկն է ընկ. Ս. Ասոյանը:

3. Թվարկում նշող թվերից և տառերից հետո, որի դեպքում քանակական թվականներն ու տառերը կարդացվում են որպես դասականներ՝

Ամբիոնի նիստին դրված էին հետևյալ հարցերը՝

1. Առաջին կիսամյակի ստուգարք-քննությունների արդյունքները.

2. Ավարտաճառերի թեմաների հաստատում.

3. Ատենախոսության նախնական պաշտպանություն.

4. Ընթացիկ հարցեր:

* Միջակետը դրվում է այնտեղ, ուր ձայնը իջնում է անմիջապես ցած և հանկարծ դադարում (Հ. Աճառյան):

Յուրաքանչյուր ուսանող պարտավոր է՝

Ա. Չուշանալ և չբացակայել դասերից.

Բ. Ժամանակին ներկայանալ ստուգարքներին ու քննություններին.

Գ. Ենթարկվել Համալսարանի ներքին կարգ ու կանոնին:

Մանթություն: Միջակետերի փոխարեն հաճախ դրվում է փակագիծ՝ 1), 2), ա), բ):

4. Անչաղկապ Համադասական նախադասությունների միջև, որոնք ունեն զգալի ինքնուրույնություն և արտաբերվում են զգալի դադարով՝

Աշնանային խաղաղ երեկո էր. մարդիկ շրջում ու զրուցում էին զբոսայգում. ամենուրեք մշակված ու խնամված ծաղիկներ ու ծառուղիներ էին:

5. Այնպիսի Համադասական նախադասությունների միջև, որտեղ երկրորդը բացատրում, մեկնաբանում է առաջինի միտքը՝ պատճառի, հիմունքի, հետևության իմաստով՝

Հումորը փրկություն է. առանց Հումորի ապրել չի կարելի (ՌԶ):

Աճառյանը դուրս հետևից հնչող ձայնով ճանաչեց ընկերոջը. լավ լսողություն ուներ: «Արևը կծում է. անձրև գալու նշան է», - ասում է Ժողովուրդը:

6. Անվանում, կոչ, հարցադրում բառերից, բառակապակցություններից ու նախադասություններից հետո, որոնց հաջորդում են ահա, այս, սրանք բառերով սկսվող նախադասություն, կարծիք, միտք՝

Համախմբվածություն. ահա այսօրվա մեր միակ խնդիրը:

Գնալ, թե մնալ. այս խնդիրն է այժմ դրված իմ առաջ:

Իսրայել Օրի, Աբովյան, Անդրանիկ, Կոմիտաս, Թումանյան. սրանք են հայերիս փրկության հույսը ողու Ժողովրդի մեջ տեսել:

7. Միջակետերով են տրոհվում նաև պլանների, նախագծերի, զեկուցումների, պարտավորությունների, առաջադրանքների թվարկվող թեմաները, ենթաթեմաները՝

Բեռլինում Կոմիտասը զեկուցում կարդաց՝ անդրադառնալով հետևյալ հիմնահարցերին՝

Ա. Հայոց եկեղեցական և Ժողովրդական երաժշտության պատմական ծագումը.

Բ. Հայոց երաժշտությունն իրրև անկախ և ինքնուրույն երաժշտություն.

Գ. Համադրություն արևելյան մյուս ազգերի եղանակների հետ.

Դ. Հայոց երաժշտություն արդի դրությունը.

Ե. Մի քանի խոսք Հայոց հին երաժշտական խաղերի մասին:

Բ Ո Ւ Թ Ի գործածություն հետևյալ դեպքերն են նշվում*:

1. **Բացահայտիչի Յ տեսակներն էլ (բուն, մասնական և պարագայական) բացահայտյալներից տրոհվում են բուլթով՝**

Աստղիկը՝ Տարոն աշխարհի դիցուհին, հաճախ էր իջնում գետը՝ լողանք ընդունելու (սովորական՝ բուն բացահայտիչ):

Խրիմյան Հայրիկը՝ որպես սրբազան մարդ, հարգվում էր բոլորի կողմից:

Որպես սրբազան մարդ՝ Խրիմյան Հայրիկը, հարգվում էր բոլորի կողմից (մասնական բացահայտիչ):

Պառկեցինք գետակի ափին՝ խոտերի վրա: Մի անգամ էլ՝ շատ տարիներ առաջ, ճոնչաց այգու դուռը (ԱԲ): – մասնավորող՝ պարագայական բացահայտիչներ:

2. **Նախադաս և ետադաս դերբայական դարձվածների վրա՝**

Վերցնելով պայուսակը՝ երեխան դպրոց գնաց: Երեխան դպրոց գնաց՝ վերցնելով պայուսակը:

3. **Թվարկմանը նախորդող բառի վրա, եթե թվարկվողները համարակալված են՝ (տե՛ս միջակետի համար բերված 7-րդ կետը):**

4. **Ըստ, նայած, չնայած, համապատասխան, համաձայն, հակառակ, հանդերձ և նման կապերով ձևավորված նախադաս և ետադաս հիմունքի, գիջման, պարագաները տրոհելու համար՝**

ա) **Ըստ Ազգային ժողովի որոշման՝** ավանդները վերադարձվելու են:

բ) Այդ հարցին կանդաղադոնանք՝ **նայած հանգամանքների:**

գ) **Չնայած** նախնական պայմանավորվածությանը՝ չհավաքվեցինք:

դ) Աշխատանքս վերանայեցի՝ **համապատասխան կատարված դիտողությունների:**

ե) Աշխատանքս կատարեցի՝ **համաձայն տրված պլանի:**

զ) **Հակառակ** իմ սովորության՝ դասերից հետո գրադարան չգնացի:

է) Դասերով ծանրաբեռնված լինելով **հանդերձ՝** պրոֆ. Գ. Զահուկյանը բազմաթիվ գիտական աշխատություններ գրեց:

* **Բուլթը** դրվում է այնտեղ, ուր ձայնը վեր է բարձրանում և հանկարծ դադար առնում (չ. Աճառյան):

5. **ԹՎարկում արտահայտող նախ, ապա, առաջին, երկրորդ, երրորդ, այնուհետև բառերի վրա՝**

Շարաթօրյակին դասդեկը հրահանգեց.

– Երեխանե՛ր, նախ՝ մեր դասարանը պետք է լավ մաքրենք, ապա՝ բակը կարգի բերենք, այնուհետև՝ ամեն մեկս երկուական ծառ տնկենք:

Ամեն ուսանող պետք է լավ իմանա իր պարտականությունները. առաջին՝ չբացակայել և չուշանալ դասերից, երկրորդ՝ ժամանակին հանձնել ստուգարքներն ու քննությունները և երրորդ՝ ենթարկվել համալսարանի ներքին կարգ ու կանոնին:

6. **Մեկնական իմաստ ունեցող շաղկապների, գոյականների, դերանունների, մակբայների վրա՝ այսպես, այն է, որոնք են, այսպիսով, ավելին, օրինակ, նմուշ...**

Դասախոսը իր խոսքն ավարտեց այսպես՝ «Այսպիսով՝ իմացանք, որ Զարենցը հեղափոխության երգիչ է, և որ բացի դրանից նաև լիրիկական մեծ բանաստեղծ է»:

Մնում է միայն մի ճանապարհ, այն է՝ գնալ և գյուղում աշխատել:

7. **Նախադասություն մեջ իրար հետ չկապվող, բայց իրար հաջորդող բառերից առաջինի վրա** (սրանք մեծ մասամբ լինում են սեռականով դրված կողմնակի ենթականեր, կամ հատկացուցիչներ՝

Հասմիկի՝ համալսարան ընդունվելը ուրախացրեց ծնողներին (կողմնակի ենթակա):

Նրա՝ աղվան ուղղված հայացքը բազմանշանակ էր (հատկացուցիչ):

8. **Ետադաս բազմակի որոշիչներից առաջ՝**

Դահլիճում հնչում էին երգեր՝ ուրախ ու զվարթ: Պարում էին երեխաները՝ մեծ ու փոքր, տղա, թե աղջիկ:

9. **Լրիվ կամ մասնակիորեն զեղչված ստորոգյալի դեպքում՝**

Տղաս սովորում է համալսարանում, թոռնիկս՝ դպրոցում:

Մեր տունը համր է ու դատարկ,

Մեր տունը որբ է՝ ավեր (ՎՏ),

10. **Ուղղակի խոսքից առաջ, երբ այն հակիրճ է՝**

Զկարողացա ընկերոջս մոտ երկար մնալ, ասացի՝ ինձ մարդ է սպասում: Ընկերս պատասխանեց՝ զնա: Ես ասացի՝ նորից կգամ: Նա ասաց՝ շատ չուշանաս:

11. **Շարահարական նախադասություններում՝ զեղչված որ, թե,**

որովհետև, որպեսզի, շաղկապների փոխարեն՝

Նստեց մի քարի՝ մի քիչ շունչ առնի (ԱԲ): ...Ձարկեցե՛ք կոանը՝ շղթայքն ամրանան (Հ. Հովհ.): Չպատասխանեց հարցերին՝ **չգիտեր: ...Կասեա՛ չեմ տեսել:**

12. Դիմումների, արձանագրությունների վերջում՝ դիմողի կամ արձանագրողի անուններից առաջ, երբ դրվում են ստորագրություններ՝

Դիմող՝

Վ. Տոնոյան

Նիստի նախագահ՝

Հ. Սահակյան

Իսկականի հետ ճիշտ է: Նիստի քարտուղար՝ Դ. Հարությունյան

Ս Տ Ո Ր Ա Կ Ե Տ Ի* գործածություն հետևյալ դեպքերն են նշվում՝

1. Նախադասության համազոր անդամների միջև, երբ դրանք կապակցված չեն և, ու, կամ շաղկապներով՝

Ծաղկել ես սարում, անտառում, արտում... (ՎՏ): Հերոսների շիրիմներին դրվեցին կարմիր, կապույտ, դեղին ծաղիկներ (ԳԹ): Երկրաչարժից տուժեցին հատկապես Սպիտակ, Գյումրի, Վանաձոր քաղաքները:

2. Կոչականների և նախադասության մյուս անդամների միջև՝

Հրա՛ջք աղջիկ, գիտեմ, չես մոռացել ինձ (ԳԹ): Չես մոռացել ինձ, հրա՛ջք աղջիկ: Երբեք, երբեք, հրա՛ջք աղջիկ, չեմ մոռանա ես քեզ:

3. Տրոհվող ձայնարկություններից հետո՝

Վա՛յ, վա՛յ, Մոսի՛ ջան, ինձ մի սպանիր (ՀԹ): Ախ, իմ բախտը կանչում է ինձ (ՀԹ): Է՛յ, ջան–հայրենիք, ինչքա՛ն սիրուն ես (Ավ. Իս.), – ՄՓ, ինչ դժվար է, հորեղբա՛յր Օհան...: – Վա՛հ, էս քաղքցիք ինչ վաղ են քնում (ՀԹ):

4. Միջանկյալ բառերից հետո կամ առաջ, կամ և՛ առաջ և՛ հետո՝ Իհարկե, բերածդ փաստերը համոզիչ են: Բերածդ փաստերը, իհարկե, համոզիչ են:

Բերածդ փաստերը համոզիչ են, իհարկե: Անշուշտ, ասածներիդ համաձայն եմ:

Համաձայն եմ ասածներիդ, անշուշտ: Ասածներիդ, անշուշտ, համաձայն եմ:

5. Ենչտվող կրկնադիր շաղկապներից առաջ (ո՛չ...ո՛չ, և՛...և՛, կա՛մ... կա՛մ, թե՛...թե՛):

* Ստորակետը դրվում է, երբ ձայնը կամաց–կամաց բարձրանում է, բայց ոչ բովի չափ և մի տեսակ քարշ է գալիս, երկարում (Հ. Աճառյան):

Ո՛չ դիր ու լաց, ո՛չ առ ու փախիր (Ժող.): Թե՛ Մուշեղը, թե՛ Արամը արժանի են պարգևատրման: Ե՛վ մեկը, և՛ մյուսը լավ են աշխատում: Լավ իմացեք՝ ավարտելուց հետո կա՛մ կզնաք գյուղում կաշխատեք, կա՛մ քաղաքում պարապ կթափառեք, ուրիշ ելք չունեք:

6. Համադաս նախադասությունների միջև, որոնք կապակցվում են իսկ, սակայն, բայց, միայն, մինչդեռ, մանավանդ, այլև, ուրեմն, այսինքն՝ ապա համադասական շղկապներից առաջ՝

Ես աշխատում եմ համալսարանում, իսկ քույրս՝ դպրոցում: Աշխատում ենք, սակայն ծայրը ծայրին չենք հասցնում: Ոտսում եմ, մինչդեռ լսող չկա:

7. Երբ համադաս նախադասությունները կապակցվում են և, ու, կամ շղկապներով և չունեն ընդհանուր ենթակա:

Գարունը եկավ, և թռչունները վերադարձան: Գիրքը կարդացի, ու սիրտս լցվեց անցյալի դառնություններով: Հարցդ լավ չհասկացա, կամ վատ մեկնաբանեցիր:

8. Շարահարական բարդ համադասական նախադասությունների միջև՝

Գարունը եկավ, հավքերը եկան,

Սարեր ու ձորեր ծաղիկներ հագան (ՀԹ):

9. Միջադաս տրոհվող դերբայական դարձվածներից առաջ ու հետո՝

Նոխազները, գլուխները թափահարելով ու ձյունը ճեղքելով, իջնում էին գյուղ:

10. Բացահայտիչից հետո՝

Այն ժամանակ Գյոթենն՝ խոսքի արքան, ճանապարհից ելավ ականածանքով: «Անլուելի զանգակատունը»՝ որպես հանճարեղ Կոմիտասի մեծությունն արժանի բանաստեղծական կտավ, նշանակալի երևույթ է:

11. Բարդ ստորադասական նախադասություններում՝ գերադասից հետո՝ ստորադասական շղկապներից կամ հարբերական դերանուններից առաջ (օրինակները տե՛ս «Բարդ նախադասությունների» բաժնում):

12. Մատենագիտական աղբյուրների տվյալների միջև՝

Ռուբեն Զարյան, Հուշապատում, գիրք 3-րդ, Երևան, 1981:

13. Ուղղական հոլովով դրվող ժամանակ և տեղ նշող բառերից հետո՝

Հազար ինը հարյուր տասնհինգ թիվ, Պոլիս, քսանչորս, ապրիլ՝ մեծ կոտորած:

Փ ա կ ա գ ծ եր ի մեջ են առնվում՝

1. **Տեղեկատու, մեկնական իմաստ արտահայտող բառերը, բառա-կապակցություններն ու նախադասությունները:** Սրանք լրացուցիչ տեղեկություններ, դիտողություններ, բացատրություններ են տալիս Հեղինակի խոսքին՝

Ժողովում ելույթ ունեցավ նաև Ս. Դավթյանը (դպրոցի տնօրեն), նա նչեց բազմաթիվ թերություններ, չխոսեց սակայն (ցավոք սրտի) իր դպրոցում եղած թերությունների մասին:

Եվ անկարող եմ նաև քրքջալ (քրքիջի համար ուժ է հարկավոր) – ՊՍ:

2. **Ձևավոր փակագծով են նշվում սյունակով դրված բառերն ու բառակապակցությունները, որոնց տրվում է մեկ ընդհանուր բացատրություն՝**

պատին դեմ անել	} դարձվածային հոմանիշներ:
հոգին բուռը հավաքել	
հոգին ջուրը դնել	
հոգին հանել	
բկին չոքել	
դռանը կացին կախել	

3. **Տառադարձությունների և գրադարձությունների դեպքում գործածվում են նաև [] փակագծերը:**

ԱՌՈԳԱՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Առողջանությունն նշաններն են՝ չեչտը (՝), հարցական նշանը (°), բացականչական նշանը (˘): Այս 3 նշաններն էլ սերտորեն կապված են ձայնի առողջանությունն ու հնչերանգի հետ:

Ծ Ե Ծ Տ: Հայերենի չեչտը կայուն-չարժական է և նշույթավորված չէ, ինչպես ռուսերենում (до́ро-га-до́рога): Այն միշտ դրվում է բառի վերջին վանկի ձայնավորի վրա (կան մասնակի բացառություններ): Բառի աճման դեպքում չեչտը տեղափոխվում է աջից ավելացած վանկի վրա (քաղա՛ք→քաղաքի՛→քաղաքայի՛ն→քաղաքաչինություն՛ն):

Հայերենի բառային չեչտը վերջնաթեր (նախավերջին) վանկի վրա է դրվում սակավաթիվ բառերում՝

ա) երբ բառը վերջանում է Ը-ով (գի'րբը, սեղա'նը, ուսանողնե'րը):
բ) երբ բառի վերջին վանկը գաղտնավանկ Ը-է (կա'յա(ը)ր, գի'րք(ը)ս):

գ) **գրե'թե, մի'թե, գո'ւցե, գո'նե, ի'հարկե, բա'ցի** բառերում:

դ) որ, քանի, նույն բաղադրիչներով սկսվող բառերում (**ո'րևէ, ո'րևիցե, ո'րտեղ, ո'րերորդ, քա'նիքերորդ, նո'ւյնպես, նո'ւյնքան**):

ե) Դասական թվականներում շեշտվում են ոչ թե ըորդ, երորդ ածանցները, այլ դրանց նախորդող վանկերը՝ չորրորդ, ի'ններորդ, տասներե'քերորդ, քսանհինգերորդ...

զ) **մա'նավանդ, նա'մանավանդ**, բառերում շեշտը դրվում է առաջին վանկի վրա՝ հատկապես խոսքի ուժգնությունը շեշտելու նպատակով (Այդ գործը կանեմ, մա'նավանդ, որ դու ես ցանկանում):

Շեշտը դրվում է՝

1. **Հրամայական եղանակով արտահայտված ստորոգյալի վերջին վանկի ձայնավորի վրա**, իսկ ժխտականի դեպքում շեշտն անցնում է Մի արգելականի վրա (վազի'ր→մի' վազի'ր, խաղացե'ք→ մի' խաղացե'ք):

Երբ հրամայականի ստորոգյալը հարադիր բայ է, շեշտը դրվում է անվանական բաղադրիչի վրա՝ նե'րս մտեք, դո'ւրս եկեք, մո'տ գնացեք, թո'ւյլ տվեք անցնել և այլն:

2. **Կոչականների վրա**, եթե կոչականն ունի նախադաս լրացում, շեշտն անցնում է նրա վրա (բացի դերանունից)։

Սարե'ր, ձեզ ի'նչ ասեմ: Ցավո'տ սարեք, ձեզ ի'նչ ասեմ (ՀՄ):

3. **Հրամայական անդեմ նախադասություններում՝ Ոտքի'**, դատարանն է գալիս: Դադարեցնե'լ խոսակցությունը: Լուռ թյո'ւն: Դեպի' առաջ: Զգա'ստ:

4. **Ժխտական խոնարհման դեպքում շեշտը դրվում է ժխտական օժանդակ բայի և ժխտական եղանակիչի վրա՝**

Ես չե'մ ամաչում իմ սիրո համար (ՊՄ): Ինձ լավ չե'ս ճանաչում: Դու այդպես չպիտի' վարվիր: Ես չպիտի' եղածը թաքցնեմ:

5. **Նախադասության մեջ բառային շեշտը համընկնում է տրամաբանական շեշտի հետ**, երբ խոսողը ցանկանում է հատկապես ընդգծել այն բառը, որին կարևորություն է տալիս: Օրինակ՝ «Այսօր ընկերս վերադարձավ Փարիզից» նախադասության մեջ 4 անդամներն էլ կարելի է շեշտել՝ մի դեպքում ընդգծելով ենթական, մյուս դեպքում՝ ստորոգյալը, երրորդ դեպքում՝ տեղի պարագան, չոր-

րորդում՝ ժամանակի պարագան (**Ընկե՛րս** վերադարձավ. **այսօ՛ր** վերադարձավ. **Փարիզի՛ց** վերադարձավ. **Վերադարձավ** և ոչ թե մնաց):

6. **Շեշտվում են նաև կամային և բնաձայնական ձայնարկությունները՝ է՛յ դու, ջահել, հպա՛րտ հասակ, թոար ոսկի աստղի պես (Ավ. Իս.):**

– **Քչա՛, քչա՛, –**օտար հավերին քշում էր տատս (**ՊՂ**):

7. **Շեշտվում են նաև կրկնադիր շաղկապները** (օրինակները տե՛ս ստորակետի գործածություն 5–րդ կետում):

Հ Ա Ր Յ Ա Կ Ա Ն նշանը դրվում է՝

1. **Հարցական հնչերանգով արտաբերվող բառերի վերջին վանկի ձայնավորի վրա: Շեշտի նման հարցական նշանն էլ նախադասություն մեջ համընկնում է տրամաբանական շեշտի հետ և դրվում է այն բառի վրա, որի վերաբերյալ խոսողը հարցում է կատարում: Բերում ենք Աճառյանի օրինակները՝**

Դո՞ւ այսօր համալսարան գնացիր: Դու այսօ՞ր համալսարան գնացիր: Դու այսօր համալսարա՞ն գնացիր: Դու այսօր համալսարան գնացի՞ր:

2. **Մի քանի բառերում հարցական նշանը վերջին վանկի ձայնավորի վրա չի դրվում (տե՛ս նախորդ էջում բերված վերջնթեր շեշտակիր բառերը (մի՞թե, ո՞րերորդ, քանի՞րորդ, տասնի՞ններորդ, թե՞ քսա՞ններորդ դարում է կատարվել դեպքը):**

3. **Դրական խոնարհման դեպքում հարցական նշանը դրվում է ոչ թե օժանդակ բայի կամ հանգույցի, այլ դերբայի կամ ստորոգելիական վերադիրի վրա, իսկ ժխտական խոնարհման դեպքում՝ ընդհակառակը՝**

Դու կարողացե՞լ ես գիրքը, գրե՞լ ես շարադրությունը: Նա ուսանո՞ղ է: Դու չե՞ս կարդացել գիրքը, չե՞ս գրել շարադրությունը: Նա ուսանող չէ՞:

4. **Հարցական նշանը կարող է դրվել հարադրական բայերի ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ բաղադրիչի վրա՝**

Նա նե՞րս մտավ: Նա ներս մտա՞վ: Նա դո՞ւրս գնաց: Նա դուրս գնա՞ց:

5. **Հարցական դերանունները միշտ արտաբերվում են հարցական նշանով՝**

Ի՞նչ կա քաղաքում... Ո՞ւր գնացին ծաղիկները (ՀԹ):

6. **Թե՛-ի հարցականով գործածման դեպքում հարցական նշանը**

դրվում է հարցումով արտաբերվող **Թե**-ին նախորդող բառի վրա՝ Կգա՞ս, Թե՞ չես գա:

Այսօր գնալու ես գրադարա՞ն, Թե՞ մատենադարան:

Թե-երի կրկնություն դեպքում առաջին **Թե**-ի վրա հարցական նշան չի դրում՝

Ձգիտեմ, Թե ի՞նչ անեմ, գնամ գրադարա՞ն, Թե՞ մատենադարան:

Բ Ա Ց Ա Կ Ա Ն Ձ Ա Կ Ա Ն նշանը դրվում է բացականչական նախադասությունների այն բառերի վերջին վանկի ձայնավորի վրա, որոնցով արտահայտվում է հույզ, զարմանք, ուրախություն, տարակուսանք, կոչ, երբեմն էլ՝ հրաման, կարգադրություն՝ Ողջո՛ւյն արխաղաչ Ալուն (եՁ): Բռավո՛ր, մանետրո՛: Կեցցե՛ ազատությունը: Շոգա՛մ, չոգա՛մ, բարի՛ արև, հիվանդ եմ (Մեծարենց): Լո՛ւյս, լո՛ւյս զվարթ (Սևակ): Ողջո՛ւյն, ողջո՛ւյն ձեզ, հին ու նոր, Արի, բարի՛ ընկերներ (Թումանյան):

Բացականչական նշաններ ստանում են նաև բացականչական ձայնարկությունները՝

Ափսո՛ս, Անո՛ւշ, սարի՛ ծաղիկ, Ափսո՛ս իգիթ քո յարին (ՀԹ):

– Ախ, Անո՛ւշ, Անո՛ւշ, էդ ի՞նչ ես ասում ... (ՀԹ):

– Ցուրտը տարա՞վ, վա՛հ, տնաչե՛ն, Ձես թող անում մի չունչ քաչեմ (ՀԹ):

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՑՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Բացահայտություն նշաններն են՝ չակերտները («» կամ “ ”), կախման կետերը (...), բազմակետը (.....), անջատման գծիկը (–), միություն գծիկը (–), ենթամասնական (–) և ապաթարցը (’): Այս նշանները նպաստում են նախադասությունների, բառերի իմաստների ճիշտ ընկալմանը:

Չ ա կ ե ր տ ն ե ր ի մեջ են առնվում՝

1. Մեջբերվող ուղղակի խոսքը՝

«Երաժշտությունն էլ լեզվի պես ունի իր քերականական օրենքներն ու տարբեր ոճերը»,– ասում էր Կոմիտասը: Կոմիտասը ավանդում էր. «Սիրեցե՛ք զիրար, չա՛տ սիրեցեք, որպեսզի ապրեք»:

2. Գեղարվեստական, գիտական աշխատությունների, հոդվածների վերնագրերը, արվեստի ստեղծագործությունների, թերթերի, հանդեսների անվանումները՝

Թումանյանի «Անուշը» անմահ ստեղծագործությունն է: Այվագովսկու «Իններորդ ալիքը» գլուխգործոց է: «Գրական թերթը» չաբաթաթերթ է:

3. Հիմնարկներին, ձեռնարկություններին, ընկերություններին տրվող պայմանական անունները, մականիշները՝

Երևանի «Հրաչյա Աճառյան» համալսարանն ունի 14 ֆակուլտետ: «Հորիզոն» ալիքը համեմատաբար հետաքրքիր է: «Աչտարակ կաթը» որակյալ կաթնամթերք է արտադրում: «Վոլգա» ավտոմեքենա հիմա չկա:

Ծանոթություն: Տերմինաբանական կոմիտեի որոշմամբ «Չակերտներում առնվող անունների հոլովական վերջավորություններն ու հոգերը զրվում են չակերտների մեջ» («Անուշի» առաջին տարբերակը, «Շունն ու կատվի» բարբառային լեզուն, «Փարիզը», «Մասյաց աղավնու») հակառակորդն էր և այլն):

4. Հեզնական կամ ժխտական իմաստով գործածված բառը, բառակապակցությունը՝ Արմանը դասարանի «գերազանցիկն է», միայն «2»-ներ է ստանում:

5. Այն բառերը, բառակապակցություններն ու նախադասությունները, որոնք հեղինակի խոսքերը չեն՝ «Մթնեցը», միակազմ նախադասություն է: «Ապրեք, երեսե՛ք, բայց մեզ պես չապրեքը» շատ բան է ասում մեր պապերի մասին:

Կ ա խ մ ա ն կ ե տ եր ը (երեք կետ) գործածվում են, երբ որևէ տեղ խոսքը կիսատ է թողնվում. դրանք զրվում են ինչպես նախադասության վերջում, այնպես էլ մեջտեղում և սկզբում՝

Հեռավոր մի գանգ է զնգում... Ականջս կանչում է (ՀՄ):

Ու նայում ենք իրար ... ոչ հիշել ենք կարող, ոչ մոռանալ (ՀՄ):

... Եվ գնում էին ... Սասնա Դավթի պես խակ պատանիներ... (ՍԿ):

Բ ա զ մ ա կ ե տ ր (երեք կետից ավելի) օգտագործվում է, երբ մի ամբողջ միտք, հատված դուրս է թողնվում: Օրինակ, Նար-Դոսի հերոսներից մեկը իր սիրուհուն գրած նամակում երկու տող կետեր է նշում և գրում է, որ սիրուհին դրանց տեղը դնի իր սերն ու զգացումները:

Մ ի ու թ յ ա ն գ ծ ի կ ը զրվում է՝

1. Կրկնվող բառերի արանքում (մեծ-մեծ, շատ-շատ, մանր-մունր):

Ծանոթություն 1: Եթե բաղադրիչներից մեկը քարացած քերականական ձև է, զրվում միասին (տարեցտարի, բերնեբերան, օրեցօր,

տնետուն, ամսեամիս, գյուղեգյուղ):

Ծանոթություն 2: Եթե թեքված բաղադրիչի հոլովական իմաստը գիտակցվում է, գրվում է առանց գծիկի (գյուղից գյուղ, երկրից երկիր, ուս ուսի, ձեռք ձեռքի):

2. Միևնույն խոսքի մասին պատկանող և քերականական նույն ձևն ունեցող բացաղորիչների միջև (տուն-թանգարան, վագոն-ոնետորան, հարավ-արևմուտք, սսել-խոսել, գնալ-գալ, հասարակական-բաղաքական, աշակերտ-աշակերտուհի...):

3. Բաղադրյալ հատուկ անուններում (Գուրյան-Արմենյան, Էլզաս-Լոթարինգիա):

4. Տարբեր երկրների, ժողովուրդների, լեզուների անուններից բաղկացած բարդություններում (Հայ-ուսներեն բառարան, ուսեներեն-անգլերեն-հայերեն բառարան, չին-տիբեթյան, թաթար-մոնղոլական, Ֆրանս-պրուսական):

Ծանոթություն 1: Ա հոդակապ ունեցող բարդությունները սովորաբար գրվում են միասին (պատմալեզվագրական, ռազմածովային, դրամաիրային, աղեստամոքսային, ռոմանագերմանական):

Ծանոթություն 2: Գոյականով կամ ածականով արտահայտված որոշիչ բաղադրիչը գրվում է առանձին (Վերին Թալին, Նոր Նախիջևան, բաց կարմիր, մուգ կարմիր, տիեզերագնաց օդաչու, թղթակից անդամ):

Ծանոթություն 3: Անձի անվան և նրա գործուներությունը անվանող բառերի համատեղ գործածությունը նույնպես գրվում է առանց գծիկի (Թումանյան քննադատ, Բաֆֆի վիպասան):

Ծանոթություն 4: Տարբեր հասկացություններ արտահայտող դոկտոր և պրոֆեսոր բառերը համատեղ գործածվելիս գրվում են անջատ, տրոհվում են ստորակետով:

5. Ինչ դերանունով բարդված, անորոշ իմաստ արտահայտող բառերում (ինչ-որ, ինչ-ինչ, փոքր-ինչ, դուզն-ինչ):

6. Ավանդաբար գծիկով գրվող հատուկ անուններում (Նար-Դոս, Սայաթ-Նովա, Գամառ-Քաթիպա, Խնկո-Ապեր):

7. Արաբական թվանշանների և հոլովական վերջավորությունների ու ածանցների միջև (2-րորդ, 3-րդ, 12-ամյա, 5-ական, 5-ով, 5-ից, 5-ում և այլն):

8. Հապավումների և հոլովական վերջավորությունների միջև (ՄԱԿ-ի, ՀՀ-ում, ԱՄՆ-ում, ՆԱՏՕ-ից, ԱՊՀ-ի...):

9. Մոտավորության իմաստ արտահայտող թվականների միջև

(Հինգ-վեց, քսան-քսանհինգ):

10. **Սոսքի մեջ ինքնանվանողաբար բերվող լեզվական միավորների միջև** (վազել-ը, անորոշ դերբայ է, ներ-ը հոգնակերտ մասնիկ է, գրում եմ-ը խոնարհված բայ է):

11. **Մականիչների համարների միջև**, եթե դրանք ցույց են տալիս տեսակ կամ թողարկման համար (ՏՈՒ-104, Ա-93, ԻԼ-24, ԳԱՁ-24):

12. **Համառոտագրություններում**, եթե պահպանված է կրճատվող բառի վերջին տառը դ-ր (դոկտոր), պ-ն (պարոն), գ-ն (գործարան), տ-ր (տրանսֆորմատոր):

Ա ն ջ ա տ մ ա ն գ ծ ի կ ր դրվում է՝

1. **Նոր տողերից սկսվող երկխոսությունների սկզբում** (օրինակներ տես՝ «Ուրիշի ուղղակի խոսքի» բաժնում):

2. **Բառի և նրա բացատրության միջև** (փակեղ-գլխի փաթեթոց, չալմա, փաղանգ-խումբ, միավորում, սեզ-բարձր...):

3. **Պիեսներում՝ գործող անձանց և նրանց խոսքի միջև**

(Դանիել-Պինդ կաց, վարդապետ, Ի՞նչ եղեր է քեզի, Դուն դեռ անելիքներ չատ ունիս) (ՊՁ):

4. **Սկիզբ և վերջ նշանակող անվանումների, ինչպես նաև թվանշանների միջև՝** Երևան-Սևան, Գյումրի-Երևան, 10-15 աշակերտ, 1-4-րդ դասարաններ...

5. **Հոմանշային, հականշային նույնություն կամ հակադրություն նշանակող բառերի միջև՝**

(պարզ-մաքուր-հստակ-ջինջ-անապական),

(արագ-դանդաղ, մեծ-փոքր, ուժեղ-թույլ)..

6. **Հեղինակի և նրա ստեղծագործության անվան միջև** (Շիրվան-գաղե- «Քառոս», Դուրյան - «Տրտունջը»...):

7. **Հեռախոսային համարների թվային կապակցությունների միջև** (26-14-08):

8. **Պարբերությունների (երկարաչունչ նախադասությունների) հիմնական բաղադրիչների միջև**, անջատման գծի հետ սովորաբար դրվում է նաև ստորակետ՝

Անսպառ բարություն և մարդասիրություն, զգայուն սիրտ և բարյացակամություն, լայնախոհ հայրենասիրություն, բնական պարզություն և համեստություն, հումորի երբեք չթուլացող զգացում և կենսուրախություն, բոլոր իրավիճակներում իր մարդկային արժանիքները պահպանելու կարողություն, մերձավորների նկատմամբ

ծայրահեղ հոգատարութիւն, աշակերտներին իր բոլոր գիտելիքները մինչև վերջ նվիրելու և բոլորին օգնելու պատրաստակամութիւն,-
այսպիսին էր Աճառյան մարդը:

Ակադեմիկոս Գևորգ Զահուկյան

Ե ն թ ա մ ն ա ն տողադարձի գծիկն է (գրա-կանութիւն):

Ա պ ա թ ա ր ց ր արեւելահայերենին հատուկ չէ: Արեւմտահայ գրական լեզվում բառի զեղչված ձայնավորի փոխարեն դրվում է ապաթարց. հատկապես կը, մը մասնիկների Ը-ի սղման դեպքում՝

Բույլ մ'նայվածք, Փունջ մ'ժպիտ,

Քուրա մ'խոսք դյութեց իմ սիրտ (Պ. Դուրյան):

Կ'անցնեին հովերն ողբազին

Դիակներուն վրայնն և վրայնն փլատակին (Դ. Վարուժան):

Վարժութիւններ: Կետադրել հետևյալ համը տեքստերը:

I

Լսում եք... սպասեցեք մի փոքր ես ձեզ կպատմեմ բոլորն սկզբից
Գնում եք լավ ես կպատմեմ ծաղիկներին ու խոտերին:

Սիրուն կակաչներ լավ լսեցեք արևի պատմութիւնը

Աղջիկս հիվանդ էր

Գիտեք նա էլ ձեզ նման մի ծաղիկ էր նախշունիկ դեմքով ոսկե-
զանգուր մազերով

Աղջիկս հիվանդ էր

Բժիշկը եկավ իջավ մեր բնակարանը նա տխուր էր ինչու

Հա հիշում եմ նա չէր սիրում ներքևի հարկերը

Նա իջավ ներքև նայեց իմ աղջկան նայեց սենյակի պատերին

Խոնավ է ասաց պիտի փոխեք բնակարանը պիտի արևկող սենյակ
ճարեք

Քանի երեխա ունեք հարցրեց

Երեքն էին երկուսը մեռան մնաց այս մեկը ազատեցեք իմ աղջկան
նա մեր տան հոգին է

Նա ինչ որ դեղ գրեց ու տխուր դուրս գնաց

Հայրիկ ինչ գրեց բժիշկը հարցրեց աղջիկս

Արև գրեց սիրելիս արև գրեց որ փայլի քեզ վրա ու ազատի
ցավից... Ու այն օրը գնացի արև փնտրելու գնացի շատ հեռու քա-

դաքի ծայրը ու գտա արևևող մի բնակարան

Միրուն կակաչներ արևի դավակներ ավելի լավ է՛ր ձեզ մոտ բերելի
իմ ոսկեծամիկ աղջկան դուք նրան կգուզեիք կարմիր ու կանաչ...

Բայց գիտե՞մ դուք նրան հաց չէիք տա դուք սնվում եք վաղորդյան
ցողով...

Լսեցեք ես դեռ չեմ վերջացրել

Մյուս առավոտ պիտի տանելի աղջկանս արևոտ տուն բայց երբ
լուսացավ նա ինձ կանչեց ձեռքս բռնեց ու աչքերը փակեց

Հետո եկան մարդիկ ու տարան նրան

Երբ ոսկեծամիկ աղջիկս հեռացավ մեզնից ու մենք բոլորս
այրվեցինք լալուց իսկ ես դարձա արևի հիվանդ

Բայց երբ պատմում էի արևի մասին կինս ու մայրս չէին
հավատում նրանք կարծում էին թե ես խելագար եմ և ողբում էին
այրված ցամաքած աչքերով

Ու մի օր էլ դիմեցի արևին

Հղոր արև ասացի մի մեծ գանգատ ունե՞մ քեզանից ինչու դու մի
չողք խնայեցիր իմ աղջկան ինչու սպանեցիր ու տարար նրան

Նա տխրեց ու մթնեց

Գնա ասաց հայտնիր աշխարհին ասա վերևի հարկը արևի չողերը
լալեց ստվեր ձգեց ներքևի հարկին ու սպանեց այն ոսկեհեր աղջկան

Ըստ Մ. Արագու

II

Իսկ ինչու այս վերնագիրը Թումանյանի հետ

Այն լուրջ պատճառով որ Թումանյանը հենց նա է ում հետ ենք
մենք ամենքս կամա թե ակամա գիտու[թյամբ թե անգիտու[թյամբ

Հետն ենք ամբողջ կյանքներումս տակավին գրածանաչ չդարձած
և մինչև մահվան մահի՞՞՞՞ հետն ենք առավել քան որևէ մեկ այլ գրողի

Ես գիտակցաբար եմ գործածում գրող բառը փոխանակ բանաս-
տեղծի այն նկատառումով որ ամեն բանաստեղծ դեռ գրող չէ ինչպես
որ ամեն կին դեռ մայր չէ իսկ Թումանյանը ոչ միայն բանաստեղծ է
այլև արձակագիր:

Ավելին Թումանյանը մեր այն միակ բանաստեղծն է որ գրել է
համարյա թե գրական բոլոր ժանրերով ու տեսակներով ըստ որում ոչ
սոսկ գրելու փաստով այլ այն իրողու[թյամբ որ ամենուրեք հանդես է
եկել իբրև դասական իբրև օրինակելի իբրև չափանիչ:

Եվ ավելին Թումանյանը որ գերազանցապես գրել է չափածո իր չափածոյի մեջ էլ մնում է արձակագիր այս բառի գերադրական իմաստով

Ինքներդ մտածեք չէ որ Անուշը կարող էր գրվել արձակ ինչպես որ Գիքորն էլ չափածո տարբերությունը կլիներ երևութական և ոչ էական և այս թերևս այն պատճառով որ Թումանյանն իր թե արձակ և թե չափածո երկերում միշտ էլ թաքնված դրամատուրգ է իր իսկ խոստովանությունք

Ահա թե ինչու իմ ըմբռնումով բանաստեղծ բառը Թումանյանի համար քիչ է և նեղ շատ ավելի հարմար ու վայելուչ է գրողը

Եվ Թումանյանն է այն հազվագյուտ բանաստեղծը որ եթե ոչ մի տող արձակ էլ գրած չլիներ դարձյալ պիտի կոչվեր գրող այնքան լեցուն է նրա պոեզիան պատմողական տարրերով հոգեբանական վերլուծություններով կերպարային ու տիպային կերտվածքներով և ամեն ազգ ունենում է այսպիսի միայն մեկ բանաստեղծ:

Եվ այս միայն մեկ բանաստեղծն է ում հետ լինում է ամբողջ ազգը ամբողջ կյանքում դեռ գրաճանաչ չդարձած և մինչև մահվան մահիճ Այս պատճառով էլ Թումանյանի հետ:

Ըստ Պ. Սևակի

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԱԲ** - Ակսել Բակունց
Ազգ - լրագիր
ԱՆ - Աթաբեկ Խնկոյան
ԱՄ - Ալեքսանդր Մատուրյան
Ավ. Իս. - Ավետիք Իսահակյան
ԲՆ - Բանավոր խոսքից
ԲՀ - Բաղիչ Հովսեփյան
Գար - Գարուն (Հանդես)
ԳԷ - Գևորգ Էմին
ԳԼ - Գարեգին Լևոնյան
ԳԹ - Գրական թերթ (լրագիր)
ԳՄ - Գուրգեն Մահարի
ԳՏ - Գիտություն և տեխնիկա (Հանդես)
ԳՍ - Գեղամ Սարյան
ԳՍ - Գարեգին Սևունց
Գ. Սունդ - Գարրիել Սունդուկյան
ԳՔ - Գևորգ Քրիստինյան
Դաս - Դասագիրք
ԴԴ - Դերենիկ Դեմիրճյան
ԴՎ - Դանիել Վարուժան
Դպր - Դպրություն (լրագիր)
ԵԵ - Երեկոյան Երևան (լրագիր)
ԵՀ - Երևանի Համալսարան (լրագիր)
ԵԶ - Եղիշե Զարենց
Երկիր - (լրագիր)
ԶԴ - Զարգանդ Դարյան
Էջմ. - Էջմիածին (Հանդես)
ԹՆԺ - Թեկադր. նյութ. ժողովածու
Ժող. - Ժողովրդական
Թոթ. - Թոթովենց
Իրավ. - Իրավունք (լրագիր)
ԼՍ - Լիպարիտ Սարգսյան
ԽԱ - Խաչատուր Աբովյան
ԽԴ - Խաչիկ Դաշտենց
ԿԲ - Կիմ Բակլի
ՀԱ - Հայաստանի աշխատավորուհի
ՀԹ - Հովհաննես Թումանյան
ՀԺՊ - Հայ ժողովրդի պատմություն
ՀՆ - Հայկ Խաչատրյան
Հեռ. - Հեռուստատեսությունից
ՀԿ - Հայաստանի կոմունիստ (լրագիր)
ՀՀ - Հայաստանի Հանրապետություն
Հ. Հովհ. - Հովհաննես Հովհաննիսյան
ՀԶ - Հայրենիքի ձայն (լրագիր)
ՀՄ - Հրանտ Մաթևոսյան
ՀԾ - Հովհաննես Ծիրազ
ՀՍ - Համո Սահյան
Հուշ. - Հուշագրություններից
Հր. Աճառյան - Հրաչյա Աճառյան
ՀՔ - Հրաչյա Քոչար
Մ - Մուրացյան
ՄՆ - Միքայել Նալբանդյան
ՄՊ - Մկրտիչ Պեչիկթալյան
ՆԶ - Նաիրի Զարյան
ՆՄ - Նանսեն Միքայելյան
Շ. - Շիրվանզադե
Շեք. - Շեքսպիր

ՇԹ - Շմավոն Թորոսյան
Ոգնի - (Հանդես)
ՊԴ - Պետրոս Դուրյան
ՊԶ - Պերճ Զեյթունցյան
ՊՂ - Պատվական Ղուկասյան
ՊՍ - Պարույր Սևակ
Զ - Զիվանի
ՌՊ - Ռաֆայել Պատկանյան
Ս - Սարմեն
ՍԱ - Սովետական արվեստ (Հանդես)
ՍԳ - Սովետական գրականություն (Հանդես)
ՍԶ - Ստեփան Զորյան
ՍԽ - Սերո Խանդաղյան
ՍԿ - Սիրվա Կապուտիկյան
Ս-Ն - Սայաթ-Նովա
Ստ. Կուրտիկյան - Ստեփան Կուրտիկյան

ՎԱ - Վախթանգ Անանյան
ՎԲ - Վիկտոր Բալայան
ՎԲ - Վալերի Բրյուսով
ՎԴ - Վահագն Դավթյան
ՎԹ - Վահան Թոթովենց
ՎԶ - Վերա Զվեգենցևա
ՎՀ - Վաչագան Հովհաննիսյան
ՎՀար. - Վաղարշակ Հարությունյան
ՎՄ - Վահան Միրաքյան
ՎՊ - Վարդգես Պետրոսյան
ՎՍ - Վիլյամ Սարոյան
ՎՏ - Վահան Տերյան
ՎՓ - Վրթանես Փափաղյան
Վ. Փափաղ. - Վահրամ Փափաղյան
Րաֆ. - Րաֆֆի
ՈՒԴԲ - Ուսումնական դարձվածարանական բառարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ	3
ԼԵԶՎԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐ ԵՎ ԿԱՂԱՊԱՐՆԵՐ	4
ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՊԱԿՅՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ	7
ԲԱՌԱԿԱՊԱԿՅՈՒԹՅՈՒՆ	8
Բառակապակցությունների դասակարգումը	11
Ոչ վերախմաստավորված՝ սովորական բառակապակցություններ	17
Վերախմաստավորված կայուն բառակապակցություններ՝ Դարձվածներ	20
ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ	30
Նախադասությունների կառուցվածքային տեսակները	33
Երկկազմ և միակազմ նախադասություններ	33
Պարզ և բարդ նախադասություններ	35
Նախադասության տեսակներն ըստ հնչերանգի	37
Պատմողական նախադասություններ	38
Հարցական նախադասություններ	41
Հրամայական (հորդորական) նախադասություններ	48
Ըղձական նախադասություններ	54
Բացականչական նախադասություններ	58
Միակազմ նախադասություններ	63
Դիմավոր միակազմ (անենթակա) նախադասություններ	63
Անդեմ միակազմ նախադասություններ	67
Բառ-նախադասություններ	73
Պարզ նախադասության կառուցվածքը	75
Ե ն թ ա կ ա	76
Ս տ ո ռ ո զ յ ա լ	83
Ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը	93
Ենթակայի և ստորոգյալի շարահասությունը	99
ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ	105
Գոյականական անդամի լրացումներ	107
Ո ռ ո չ ի չ	108
Հ ա տ կ ա ց ու ց ի չ	119
Բ ա ց ա հ ա յ տ ի չ	124

Բայական անդամի լրացումներ	130
Ս ե ո ի խ ն դ ի Ր ն ե ր	131
Ուղիղ խնդիր	131
Ներգործող խնդիր	135
Բ ն ու թ յ ա ն խ ն դ ի Ր ն ե ր	137
Հանգման խնդիր	137
Մատուցման խնդիր	139
Անջատման խնդիր	142
Միջոցի խնդիր	145
Վերաբերություն խնդիր	146
Սահմանափակման խնդիր	148
Բաղկացություն խնդիր	149
Համեմատություն (բաղդատություն) խնդիր	149
Պ ա ր ա գ ա ն ե ր	153
Տեղի պարագա	155
Ժամանակի պարագա	157
Ձևի պարագա	160
Նպատակի պարագա	163
Պատճառի պարագա	164
Հիմունքի պարագա	165
Զիջման (հակառակ հիմունքի) պարագա	166
Պայմանի պարագա	167
Զափ ու քանակի պարագա	167
Անվանաբայական (բաղադրյալ) ստորոգյալի խնդիր և պարագա լրացումներ	172
Դ Ե Ր Բ Ա Յ Ա Կ Ա Ն Դ Ա Ր Զ Վ Ա Մ Ծ Ե Վ Կ Ո Ղ Մ Ն Ա Կ Ի Ա Ն Դ Ա Մ Ն Ե Ր	175
Նախադասություն բազմակի (համադաս) անդամներ	188
Նախադասություն տրոհվող անդամներ	193
Կ Ո Ջ Ա Կ Ա Ն	193
Նախադասություն տրոհվող այլ անդամներ	206
Նախադասություն հարակից միավորներ	210
Վերաբերականներ, միջանկյալ բառեր	211
Ձայնարկություններ	215
Ներդրյալ բառեր, բառակապակցություններ, նախադասություններ	218
Հ Ո Ղ Վ Ն Ե Ր Ի Շ Ա Ր Ա Հ Յ ՈՒ Ս Ա Կ Ա Ն Կ Ի Ր Ա Ռ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ը	221
Ուղղական հոլովի կիրառությունը	223

Սեռական հոլովի կիրառությունը	223
Տրական հոլովի կիրառությունը	224
Հայցական հոլովի կիրառությունը	226
Բացառական հոլովի կիրառությունը	227
Գործիական հոլովի կիրառությունը	230
Ներգոյական հոլովի կիրառությունը	232
ԲԱՐԳ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ	235
Բարդ համադասական նախադասություններ, դրանց կառուցվածքը	240
Համադասական նախադասության բաղադրիչների իմաստային տեսակները	244
ԲԱՐԳ ՍՏՈՐԱԳԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ	254
Ստորադասական նախադասության շարա- դասությունը, հնչերանգն ու կետադրությունը	257
Բարդ ստորադասական նախադասությունների շարահյուսական պաշտոնները (բնույթները)	260
Ենթակա ստորադաս նախադասություն	263
Ստորոգելի ստորադաս նախադասություն	266
Գոյականական անդամի լրացում ստորադաս նախադասություններ.	267
Որոշիչ ստորադաս նախադասություն	268
Հատկացուցիչ ստորադաս նախադասություն	271
Բացահայտիչ ստորադաս նախադասություն	273
Բայական անդամի լրացում ստորադաս նա- խադասություններ	276
Սեռի խնդիր ստորադաս նախադասություններ	277
Ուղիղ խնդիր ստորադաս նախադասություն	277
Ներգործող խնդիր ստորադաս նախադասություն	280
Բնության խնդիր ստորադաս նախադասություններ	281
Հանգման խնդիր ստորադաս նախադասություն	281
Մատուցման խնդիր ստորադաս նախադասություն	282
Օգուտի (չահի) կամ վնասի ստորադաս նախադասություն	283
Անջատման խնդիր ստորադաս նախադասություն	284
Միջոցի խնդիր ստորադաս նախադասություն	284
Վերաբերության խնդիր ստորադաս նախադասություն	285
Պարագայական կառույցներ.	288
Հանգամանքային պարագա ստորադաս կառույցներ	288
Տեղի պարագա	288

Ժամանակի պարագա	290
Նպատակի պարագա	293
Պատճառի պարագա	294
Պայմանի պարագա	296
Հիմունքի պարագա	298
Հակառակ հիմունքի (զիջման) պարագա	299
Հատկանշային (որակական) պարագա ստորադաս կառույցներ	300
Ձևի պարագա	301
Չափի պարագա	302
Ամբողջ գերադաս նախադասությունը լրացնող	
ստորադաս նախադասություններ	303
Գերադասի դերբայական անդամի լրացնող՝	
կողմնակի ստորադաս նախադասություններ	306
ԲԱԶՄԱԲԱՐԳ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ	307
Համաստորադաս բազմաբարդ կառույցներ	307
Ստորադաս բազմաբարդ կառույցներ	308
Համաստորադաս նախադասություններ	309
Տարաստորադաս (անհամասեռ) նախադասություններ	312
Ենթաստորադաս նախադասություններ	314
Ուսուցիչ տիպի բազմաբարդ նախադասություններ	317
Պ Ա Ր Բ Ե Ր ՈՒ Յ Թ	319
Բարդ ստորադասական նախադասության	
փոխակերպումը պարզի	322
Չփոխակերպվող նախադասություններ	325
ՈՒՐԻՇԻ (ՄԵԶԲԵՐՎՈՂ) ԽՈՍՔ	329
ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱՆԻՇՆԵՐ	335
ԿԵՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ	340
Տրոհություն նշաններ	341
Առողանություն նշաններ	348
Բացահայտություն նշաններ	351
ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	358

ԽԱԶԻԿ ԲԱԴԻԿՅԱՆ

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ
ՇԱՐԱՀՅՈՒՄՈՒԹՅԱՆ**

**ՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ**

Սրբազրիչ

Վ. Դերձյան

Համակարգչային շարվածքը

և ձևավորումը

Ս. Գասպարյանի

Ստորագրված է տպագրություն՝ 20.05.2008 թ.:

Չափսը՝ 60x84 1/16: Թուղթ՝ օֆսետ: Տպագրություն՝ օֆսետ:

Տպագր. 22.75 մամուլ: Պատվեր՝ 28: Տպաքանակ՝ 500:

ԵՊՀ տպագրատուն, Երևան, Արուսյան 52